

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**Ա. ԱՔԱԶՅԱՆ, Ն. ԳԻԼԲԱՐՅԱՆ,
Ա. ՅՈՒԶԲԱՇՅԱՆ**

**ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**

*(դասագիրք բանասիրական ֆակուլտետների
ուսանողների համար)*

**ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ**

2017

ՀՏԴ 811.19(091)

ԳՄԴ 81.2Հ-03

Ա 126

*Կրթության և գիտության նախարարության կողմից
երաշխավորվել է որպես դասագիրք բուհերի
մասնագիտական ֆակուլտետների ուսանողների համար:*

*Դասագիրքը հրատարակության են երաշխավորել
ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի գիտական խորհուրդը և
հայոց լեզվի պատմության ամբիոնը*

Խմբագիր՝ Վազգեն Համբարձումյան (բ.գ.դ., պրոֆ.)

Գրախոսներ՝ Թերեզա Շահվերդյան (բ.գ.դ., պրոֆ.)

Լալիկ Խաչատրյան (բ.գ.դ., պրոֆ.)

Հեղինակներ՝

Նարինե Դիբարյան – Ներածական բաժին, պատմական բառա-
գիտություն, պատմական քերականություն

Աննա Աբաջյան – Պատմական հնչյունաբանություն

Անահիտ Յուզբաշյան – Ակնարկներ պատմական շարահյուսու-
թյան

Ա. Աբաջյան, Ն. Դիբարյան, Ա. Յուզբաշյան

Ա 126 Հայոց լեզվի պատմություն: Դասագիրք բանասիրական ֆակուլտետ-
ների ուսանողների համար/ Ա. Աբաջյան, Ն. Դիբարյան, Ա. Յուզ-
բաշյան.- Եր.: ԵՊՀ հրատ., 2017, 444 էջ:

Հայոց լեզվի պատմության այս դասագրքում ներկայացված են հայոց լեզվի պատմության՝
իբրև ինքնուրույն գիտակարգի, ուսումնասիրության առարկան, մեթոդները, աղբյուրները, կապն այլ
գիտությունների հետ, հայերենի գիտական շրջանափառումը, հնդեվրոպական նախահայերենի
տեղակայմանը վերաբերող այդի ըմբռնումները, հայոց ժողովրդագրության ստուգաբանությունը, նա-
խամաշտոցյան հայ մատենագրության գոյության վարկածները, գրերի գյուտի քննական-բանասի-
րական վերլուծությունը, հայերենի բառապաշարի ծագումնաբանական դասակարգումը, ինչպես
նաև պատմական հնչյունաբանության, ձևաբանության և շարահյուսության հիմունքները՝ հին հայե-
րեն, միջին հայերեն, աշխարհաբար՝ գրական արևելահայերեն և արևմտահայերեն, տարբերակների
գուգադրահամեմատական քննությամբ: Դասագիրքը նախատեսված է բանասիրության ֆակուլտետ-
ների ուսանողների համար, բացի այդ՝ կարող է օգտակար լինել բոլոր նրանց համար, ովքեր հե-
տաքրքրվում են հայ բանասիրության և հայագիտության հիմնախնդիրներով:

ՀՏԴ 811.19(091)

ԳՄԴ 81.2Հ-03

ISBN 978-5-8084-2199-8

© ԵՊՀ հրատ., 2017

© Հեղ. խումբ, 2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք.....	8
Ներածություն	10
Հայոց լեզվի պատմությունը որպես գիտակարգ, նրա ուսումնասիրության առարկան	10
Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության մեթոդները	15
Հայերենի գիտական շրջանաբաժանումը.....	19
Հայերի անվանումները և նրանց ստուգաբանության փորձերը.....	22
Հնդեվրոպական միասնության տրոհումը և մախահայերենի քի տեղակայման վարկածները	29
Հայոց լեզվի ծագման և բնույթի վերաբերյալ տեսությունները	32
Հ. Հյուբշմանը հայերենի ծագման և բնույթի մասին.....	35
Նախամաշտոցյան հայ գրերի գոյության վարկածները	38
Մեսրոպ Մաշտոցը և գրերի գյուտը	43
Դասական գրաբարի լեզվաճական դասերը.....	49
Հունարան հայերեն	52
Լատինարան հայերեն	59
Միջին հայերենի կազմավորումը	65
Աշխարհաբարի ձևավորումը.....	73

Մաս I

ՊԱՏՄԱԿԱՆ ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ.....	83
1. Գրաբարի ձայնավորները, երկբարբառները և եռաբարբառները	88
Միջին հայերենի ձայնավորները, երկբարբառները, եռաբարբառները.....	96
Չայնավորները և երկհնչյունները նոր գրական հայերենում.....	102
2. Բաղաձայնական համակարգը գրաբարում.....	107

Մաս II

ՊԱՏՄԱԿԱՆ ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	120
Ներածություն	120
Հարցի պատմությունից	121
Հայերենի բնիկ բառապաշարը.....	133
Հին հայկական անձնանուններ	148
Իրանական փոխառություններ	153

Իրանական փոխառյալ դիցանուններ և անձնանուններ.....	166
Իրանական փոխառյալ տեղանուններ.....	168
Իրանական փոխառությունների հնչյունական առանձնահատկությունները.....	169
Հունական փոխառություններ	170
Հունական փոխառյալ անձնանուններ.....	176
Հունական փոխառությունների հնչյունական և ձևաբանական առանձնահատկությունները.....	179
Լատինական փոխառություններ	180
Ատորական փոխառություններ	184
Ատորական փոխառությունների հնչյունական առանձնահատկությունները.....	191
Ատորական փոխառյալ հատուկ անունները	193
Եբրայական փոխառություններ.....	193
Եբրայական փոխառյալ անձնանուններ	196
Կովկասյան փոխառություններ.....	197
Հայերենը և քարթվելական լեզուները	198
Հայերենը և արխազ-աղդեական լեզուները.....	201
Հայերենը և նախյան-դաղստանյան լեզուները.....	202
Փոխառյալ կովկասյան տեղանուններ	205
Արաբական փոխառություններ.....	205
Փոխառություններ բուրբերենից.....	211
Եվրոպական փոխառություններ	217
Նոր և նորագույն փոխառություններ	220
Վիճակագրություն	224

Մաս III

ՊԱՏՄԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	227
Հայերենի խոնարհման համակարգի պատմական զարգացումը.....	227
Անորոշ դերբայի պատմական զարգացումը.....	229
Ենթակայական դերբայի ծագումը.....	232
Կու/կոյ մասնիկի ծագումը	235
Պիտի եղանակիչի ծագումը.....	237
Սահմանական եղանակի ներկա և անցյալ անկատար ժամանակների պատմական զարգացումը	239

Կատարյալի հիմքը	244
Սահմանական անցյալ կատարյալ	248
Ե/է աճական	252
Բուն կամ ներկա հրամայական	254
Խոնարհման հարացույցներ	256
Հորոդորական կամ ապառնի հրամայական	257
Արգելական հրամայական	258
Ստորադասական եղանակի պատմական զարգացումը	260
Առաջին ապառնի	260
Երկրորդ ապառնի	262
Ըղծական եղանակի ձևավորումը	263
Պայմանական եղանակի ձևավորումը	264
Ժխտական դերբայի ծագումը	265
Հարկադրական եղանակի ձևավորումը	267
Բաղադրյալ ժամանակներ	269
Անցյալ, վաղակատար և հարակատար դերբայներով կազմվող ժամանակները հայերենում	269
Հարակատար դերբայով կազմվող ժամանակներ	273
Ապառնի դերբայով կազմված բայաձևերը հայերենում	276
Ժխտական խոնարհում	278
Կրավորականի կերպասեռային դրսևորումները հայերենում	282
Անկանոն բայերի պատմական զարգացումը	286
Տարարմատ անկանոն բայեր	286
Նույնարմատ անկանոն բայեր	289
Պակասավոր բայեր	294
Հոլովման համակարգի պատմական զարգացումը	297
Հոլովակազմությունը հայերենում	300
Անկանոն հոլովումների պատմական զարգացումը	306
Ա հոլովման պատմական զարգացումը	311
Ա արտաքին հոլովում	311
Ա ներքին հոլովում	312
Ո հոլովման պատմական զարգացումը	315
Ու հոլովման պատմական զարգացումը	318
Ի հոլովման պատմական զարգացումը	320

Ե ներդրական հոլովման պատմական զարգացումը	323
Խառն հոլովումների պատմական զարգացումը.....	325
Ի-Ա խառն արտաքին հոլովում	325
Ի-Ա ներդրական հոլովում	327
Ո-Ա խառն հոլովում	328
Վա/ուան հոլովում.....	330
Ան հոլովում	331
Ոջ հոլովում.....	334
Ո/Օ ներքին հոլովում	335
Հոգնակիականությունը հայերենում.....	336
Միջին հայերենի եզակի և հոգնակի հոլովման հարացույցներ.....	340
Առկայացման կարգը հայերենում.....	343
Ածականի պատմական զարգացումը.....	347
Թվականի պատմական զարգացումը	353
Դասական թվականներ	357
Անձնական թվականներ	360
Բաշխական թվականներ	361
Կոտորակային թվականներ	361
Դերանունների պատմական զարգացումը	362
Անձնական դերանունների պատմական զարգացումը.....	362
Հոլովման հարացույցը գրաբարում.....	363
Հոլովման հարացույցը միջին հայերենում.....	365
Հոլովման հարացույցները արևելահայերենում և արևմտահայերենում.....	368
Ստացական դերանունների պատմական զարգացումը.....	370
Ցուցական դերանունների պատմական զարգացումը	372
Անորոշ դերանունների պատմական զարգացումը.....	377
Հարցահարաբերական դերանունների պատմական զարգացումը.....	379
Որոշյալ դերանունների պատմական զարգացումը	384
Փոխադարձ դերանունների պատմական զարգացումը.....	386
Ժխտական դերանուններ	388
Զբեքվող խոսքի մասեր, մակբայների պատմական զարգացումը.....	389
Գրաբարի նախդիրների և նախադրությունների պատմական զարգացումը	393
Շաղկապների պատմական զարգացումը.....	399

Մաս IV

Ակնարկներ պատմական շարահյուսության	407
Որոշիչ-որոշյալ կապակցությունը գրաբարում և նրա հետագա փոփոխությունները	416
Ածական որոշչի առանձնահատկությունները գրաբարում.....	416
Վերացականը թանձրացականի փոխարեն	417
Դերանուն որոշչի առանձնահատկությունները գրաբարում	418
Թվական որոշչի առանձնահատկությունները գրաբարում	422
Հատկացուցիչ-հատկացյալ կապակցությունը գրաբարում և նրա հետագա փոփոխությունները	425
Բացահայտիչ- բացահայտյալ կապակցությունը գրաբարում և նրա հետագա փոփոխությունները	428
Ենթակայի և ստորոգյալի համաձայնությունը գրաբարում և նրա հետագա փոփոխությունները	430
Շարադասությունը գրաբարում և նրա հետագա փոփոխությունները	435

Երկու խոսք

Հայոց լեզվի պատմությունը հայագիտական լեզվաբանական գիտակարգերից ամենածավալունն է և իր կարևորությամբ առաջնայիններից մեկը, քանզի միայն տարածամանակյա, այսինքն՝ պատմական զարգացման հենակետից է հնարավոր գնահատել հայոց լեզվի և նրա տարատեսակների կազմավորման ու տեղաշարժերի բնույթը, քանակական փոփոխություններից նոր որակի անցման տրամաբանությունը: Ինչպես փաստում է Գ. Ջահուկյանը, հայոց լեզվի պատմությունն իբրև գիտակարգ պետք է ներառի և համադրի մեր գրական լեզուների պատմության, պատմական բարբառագիտության, համեմատական և պատմական քերականության (լայն առումով նաև հնչյունաբանության) տվյալները, ինչպես նաև պատմական հանրալեզվաբանության և պատմական ոճաբանության ընձեռած փաստերը¹:

Այսօր գիտական շրջանառության մեջ են գտնվում մեր լեզվի պատմության թե՛ գրային, թե՛ նախագրային շրջանների ամենատարբեր հարցերի վերաբերյալ գիտական, տեսական մենագրություններ, ուսումնական ձեռնարկներ, սակայն շուրջ հինգհազարամյա պատմություն ունեցող մեր լեզվի ողջ ընթացքը ամբողջականորեն, համահավաք, մեկ աշխատության մեջ դեռևս ներկայացված չէ, և դա բնական է՝ հաշվի առնելով փաստական նյութի հարստությունը: Գ. Ջահուկյանը հասցրեց ամբողջացնել հայոց լեզվի նախագրային շրջանի պատմությունն իր կոթողային աշխատությամբ՝ «Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան»: Գրային շրջանի առավել ամբողջական բնութագրությանն էր միտված Ս. Ղազարյանի «Հայոց լեզվի համառոտ պատմությունը», որը երեք հրատարկություն է ունեցել, և, իհարկե, այս բնագավառում առանձնահատուկ տեղ ունի Հ. Աճառյանի «Հայոց լեզվի պատմություն» երկմասնյա մենագրությունը, որն առաջինն է իր տեսակի մեջ: Փաստորեն, հայոց լեզվի պատմությունն իբրև առանձին գիտակարգ սկզբնավորվել է Հ. Աճառյանի այս աշխատության հիման վրա:

¹ Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987, էջ 7:

Սույն դասագրքի նպատակը հույժ հասցեական է. այն նախատեսված է բանասիրության ֆակուլտետների ուսանողների համար: Աշխատանքի կառուցվածքը և բովանդակությունը պայմանավորված են հայոց լեզվի պատմությունն առարկայի բուհական ծրագրի պահանջներով: Հետևաբար լեզվի պատմության բաղկացուցիչ որոշ հարցեր շրջանցել ենք, որոշ հարցերի անդրադարձել ծանոթագրական կարգով: Այս ձեռնարկը ծնունդ է շուրջ տասը տարիների դասախոսական աշխատանքի, որի ընթացքում ճշգրտվել է այն թեմաների շրջանակը, որոնք կարոտ են առավել ամբողջական ներկայացման: Մինչ տպագրությունը դասագրքի ներածական, բառագիտական և համեմատական քերականության հատվածները հարուստ փորձաշրջան են անցել ուսանողության մեջ: Հայերենի պատմական քերականության նկարագրության համար իբրև հիմնարար սկզբունք ընտրել ենք զուգադրահամեմատությունը, որովհետև այդ սկզբունքի շնորհիվ ուսանողները կարողանում են ըստ կարելվոյն ըմբռնել հայերենի քերականական այս կամ այն իրողության ծագումն ու փոփոխությունները, տիպաբանությունը: Հետևաբար լեզվական փաստերը բնութագրվում են նախ գրաբարում, ապա՝ միջին հայերենում, հավարտ՝ գրական արևելահայերենում և արևմտահայերենում: Պատմական բառակազմության, իմաստաբանության բարբառագիտության, ոճաբանության և հանրալեզվաբանության տվյալների նկարագրության խնդիրները դուրս են մեր այս քննության նպատակներից: Մեր լեզվի հազարամյակների պատմության խնդիրների և իրակությունների նկարագրության ընթացքում նախապատվությունը հիմնականում տվել ենք ավանդաբար ընդունված տեսակետներին՝ ելնելով այն ճշմարտությունից, որ վիճահարույց մոտեցումների ներկայացման տեղը բուհական ձեռնարկներն ու դասագրքերը չեն, այլ առանձին տեսական մեագրությունները:

Համոզված ենք, որ տպագրությունից հետո կարող են ծագել նոր առաջարկություններ և հավելումներ, սիրով ու շնորհակալությամբ կընդունենք այդ ամենը:

Հեղինակներ

Ներածություն

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԳԻՏԱԿԱՐԳ, ՆՐԱ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

Հայոց լեզվի պատմությունը՝ որպես ինքնուրույն գիտակարգ, ձևավորվել է XIX դարի կեսերին: Այս գործի նախակարապետը Արսեն Այտընյանն էր, որը 1866 թվականին հրապարակում է իր շուրջ քսան տարիների հետազոտությունների արդյունքը «Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի» աշխատությունը: «Քննական քերականության» առաջաբանում և Նախաշավիղ կոչվող հատվածում Ա. Այտընյանն ապացուցում է, որ գրաբարը՝ իբրև գրական-խոսակցական լեզու, վաղուց արդեն իր դերակատարումն ավարտել է և իր տեղը պետք է զիջի աշխարհաբարին: Ինչպես նշում է Է. Աղայանը, «Նախաշավիղը, ըստ էության, ընդհանուր լեզվաբանական ուսմունք է մարդկային լեզվի մասին, ապա և՛ հայոց լեզվի պատմություն, սկսած 5-րդ դարից մինչև 19-րդ դարի 50-60-ական թվականները»²: Ա. Այտընյանից հետո Հ. Աճառյանը մի նոր մակարդակի է բարձրացնում հայոց լեզվի պատմության գիտական ուսումնասիրությունը: Մեծանուն գիտնականի երկհատոր մենագրությունը հենց այդպես էլ կոչվում է՝ «Հայոց լեզվի պատմություն», որտեղ իր ժամանակի հնդեվրոպաբանության և ընդհանուր լեզվաբանության դիրքերից Հ. Աճառյանը բացահայտում է հայոց լեզվի կազմավորման ընթացքը, վերլուծում հայերենի բառապաշարը՝ առանձնացնելով բնիկ հնդեվրոպական բառաշերտը և տարբեր փոխառությունները՝ ըստ իմաստային դաշտերի, կատարում է հայոց լեզվի պատմության առաջին շրջանաբաժանումը, բնութագրում է հայոց առաջին գրական լեզվի՝ գրաբարի դասերը, հայոց բարբառների և գրաբարի հարաբերությունները, հունաբան հայերենը, միջին հայերենը և աշխարհաբարը³: Հայերենի պատմական քերականությունը Հ. Աճառյանը ման-

² Ա. Այտընյան, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզուի, Վիեննա, 1866, էջ 7:

³ Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս I-II, Եր., 2013:

րամասն քննել է «Լիակատար քերականություն հայոց լեզվի» բազմահատոր աշխատության մեջ⁴:

Հայոց լեզվի պատմության հին շրջանին և հատկապես նրա բնույթին ու կազմավորման ընթացքին է անդրադարձել նաև նշանավոր լեզվաբան Գ. Ղափանցյանը, որն իր «Հայոց լեզվի պատմություն. Հին շրջան» աշխատության մեջ քննել է հայերենի և խեթերենի, ինչպես նաև Հայաստանի լեզվի փոխազդեցությունները, բացի բառապաշարից՝ տարածամասնակյա քննության է ենթարկել հայերենի հնչյունաբանական, քերականական համակարգերը⁵: Հայոց լեզվի պատմության հարցերով հետևողականորեն զբաղվել է Սերոբ Ղազարյանը, որի աշխատություններից հատկապես նշենք «Հայոց լեզվի համառոտ պատմությունը», ինչպես նաև «Հայոց գրական լեզվի պատմությունը»⁶:

Հայոց լեզվի պատմական քերականության բնագավառում լուրջ ներդրում է կատարել ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը, որի տաղանդաշատ գիտնականների ջանքերով լույս են տեսել «Հայոց լեզվի պատմական քերականության» երկու հատորները, միջին գրական հայերենին նվիրված առանձին աշխատանքները⁷: Օտար հայագետներից հատկապես նշելի է Հ. Հյուբշմանի, Ա. Մեյեի և Յ. Կարստի ներդրումը հայոց լեզվի պատմության ամբողջացման, նրա առանձին շրջանների հնչյունաբանական, բառագիտական, ձևաբանական և շարահյուսական իրողությունների գիտական նկարագրության և վերլուծության գործում⁸: Հայոց լեզվի պատմության արդեն առանձին բնագավառների և ոլորտների հարցերով զբաղվել են հայ բազմաթիվ լեզվաբաններ՝ Մ. Աբեղյանը, Է. Աղայանը, Ռ. Իշխանյանը, Ռ. Ղազարյանը, Լ. Հովսեփյանը, Լ. Հովհաննիսյանը, Վ. Համբարձումյանը և այլք:

⁴ Տե՛ս Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. I-VI, Եր., 1952-1971, Լիակատար քերականություն հայոց լեզվի, Եր., 2005:

⁵ Տե՛ս Գ. Ղափանցյան, Հայոց լեզվի պատմություն. Հին շրջան, Եր., 1961:

⁶ Տե՛ս Ս. Ղազարյան, Հայոց լեզվի համառոտ պատմություն, Եր., 2006 և Հայոց գրական լեզվի պատմություն, Եր., 1961:

⁷ Տե՛ս Հայոց լեզվի պատմական քերականություն, Եր., հ. 1-2, 1982-1975, Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, Ա, Բ, Եր., 1972, 1975:

⁸ Տե՛ս Հ. Հյուբշման, Հայերենի քերականություն, Եր., 2003 և Հայագիտական ուսումնասիրություններ, Եր., 2004, Ա. Մեյե, Հայագիտական ուսումնասիրություններ, Եր., 1978, Յ. Կարստ, Կիլիկյան հայերենի պատմական քերականություն, Եր., 2002:

Հայոց լեզվի պատմությունը 20-րդ դարում զարգացման որակական մի նոր մակարդակի է բարձրացնում մեծավաստակ գիտնական Գևորգ Ջահուկյանը, ով արդի լեզվաբանական մեթոդների կիրառմամբ վերականգնում և բնութագրում է հայերենի նախագրային շրջանը, հստակեցնում է լեզուների պատմության գիտական շրջանաբաժանման սկզբունքները, որոնց հիման վրա կատարում է հայերենի պատմության ամբողջական շրջանաբաժանում՝ և՛ նախագրային, և՛ գրային ժամանակաշրջանների: Այդ հետազոտությունների ամփոփումը «Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան» ստվարածավալ աշխատությունն է⁹:

Ըստ լեզվաբանական գիտակարգերի ընդհանուր դասակարգման՝ լեզվի պատմությունը պատկանում է տարածական առումով առանձնական և ժամանակային առումով պատմական կամ տարածամասնակյա գիտակարգերի թվին: Որպես առանձնական գիտակարգ՝ հայոց լեզվի պատմությունն ուսումնասիրում է հայ ժողովրդի տարբեր շերտերի հաղորդակցման լեզուն իր ձևավորման պահից մինչև գործածության ներկա պահը: Հայոց լեզվի պատմության քննության առարկան ինչպես նախագրային հայերենն է, այնպես էլ՝ գրավոր շրջանում վկայված մեր գրական լեզուներն են, բարբառային տարբերակները, ինչպես նաև հայ ժողովրդի պատմության հետ կապված լեզվական բոլոր իրողությունները, բառապաշարը, մեր լեզվի հասարակական, գործառական և անհատական տարբերակները: Հայոց լեզվի պատմությունն ընդգրկում է գրական լեզվի պատմությունը, պատմական բարբառագիտությունը, համեմատական ու պատմական բառագիտությունը և համեմատական ու պատմական քերականությունը, պատմական հանրալեզվաբանությունը և պատմական ոճաբանությունը¹⁰:

Հայոց լեզվի պատմությունը սերտորեն կապված է լեզվաբանական և պատմական տարբեր գիտակարգերի հետ, նախ՝ ընդհանուր հնդեվրոպաբանության, որովհետև հայերենը պատկանում է հնդեվրոպական

⁹ Տե՛ս **Գ. Ջահուկյան**, Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987:

¹⁰ Հմմտ. **Գ. Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 7-8:

լեզվաընտանիքին, այնուհետև՝ այն լեզուների պատմության հետ, որոնց հետ շփվել է, որոնցից ազդվել և որոնց վրա ազդեցություն է գործել, ինչպես օրինակ՝ խեթագիտությունը, կովկասագիտությունը, արաբագիտությունը, բուրբագիտությունը և այլն: Բացի այդ՝ հայոց լեզվի պատմությունն ուղղակի կապված է այնպիսի նեղ լեզվաբանական գիտակարգերի հետ, ինչպիսիք են՝ պատմական բարբառագիտությունը, պատմական ռճաբանությունը, քերականագիտությունը:

Որպես տարածամանակյա գիտակարգ՝ հայոց լեզվի պատմությունը նկարագրում և հետազոտում է իր քննության առարկան՝ մեր լեզուն, զարգացման ընթացքի, փոփոխությունների մեջ: Բնութագրելով լեզվի զարգացման որևէ շրջափուլ՝ լեզվի պատմությունն անցում է կատարում դեպի պատմության խորքերը՝ վեր հանելով կատարված փոփոխությունների պատճառները, ներքին հակասությունների հիմքերը, բացատրելով շեղումներն ու անկանոնությունները:

Հայոց լեզվի գրավոր շրջանի համար որպես սկզբնաձև ընդունվում է գրաբարն իր քերականական համակարգով, բառապաշարով, իսկ նախագրային շրջանի համար ելակետը հնդեվրոպական նախալեզուն է, որը վերականգնվում է հայերենի և ցեղակից լեզուների համեմատության միջոցով:

Լեզվի պատմությունը՝ իբրև տարածամանակյա գիտակարգ, տարբերվում է լեզվի համաժամանակյա նկարագրություններից, ի մասնավորի՝ նորմատիվ քերականություններից, որոնց նպատակը լեզվի բնութագրումն է իբրև հստակ կանոններով գործող, ընդունված նորմերին ենթակա կայուն կառուցվածք: Նորմատիվ քերականությունների նպատակը լեզվի հարակա ընթացքի որոշակի հատվածի գիտակցված, նպատակային առանձնացումն է՝ լեզվավիճակի կայունության ամրագրումը, որպեսզի ապահովվի լիարժեք հաղորդակցումը տվյալ լեզվով խոսող ազգի տարբեր շերտերի միջև: Սակայն լեզուն ինքնակատարելագործվող փոփոխական համակարգ է. այդ փոփոխությունները, տեղաշարժերը տարբեր ժամանակներում կարող են տարբեր արագություն ունենալ, բայց դրանք ընդգրկում են լեզվական բոլոր ոլորտները՝ հնչյունաբանությունը, բառագիտությունը, բառակազմությունն ու իմաստաբանությունը, ձևա-

բանությունը, շարահյուսությունը, ոճաբանությունը: Հենց այս տեղաշարժերն էլ փոխադարձ կապի մեջ դառնում են լեզվի պատմության բնության անմիջական առարկան:

Լեզվի պատմության կարևորությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով: Նախ՝ այն սերտ կապված է ժողովրդի պատմության հետ: Լեզվի պատմության միջոցով առավել ամբողջական է բացահայտվում տվյալ լեզուն կրող հանրության պատմությունը, աշխարհընկալումը: Լեզվի պատմության տվյալները մեծ դեր ունեն նաև պատմաբանասիրական հետազոտությունների տեսանկյունից: Լեզվի տարածամասկյա ընկալման դեպքում է հնարավոր միայն բացահայտել ժողովուրդների կազմավորման, նրանց փոխհարաբերությունների, քաղաքակրթության, նյութական և հոգևոր մշակույթի զարգացման ընթացքն ու տրամաբանությունը:

Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության աղբյուրները տարբեր են. նախագրային շրջանի հայերենի ուսումնասիրության հիմնական աղբյուրը հնդեվրոպաբանության վերականգնված և համադրված տվյալներն են, ինչպես նաև գիր ունեցող հնագույն հնդեվրոպական և ոչ հնդեվրոպական այն ժողովուրդների պահպանված տարաբնույթ արձանագրությունները, որոնցում հիշատակված են Հայաստանն ու հայերը՝ իրենց անձնանուններով և տեղանուններով: Այս տեսանկյունից սկզբունքորեն կարևոր են դրացի այն ժողովուրդների լեզուների պատմության սկզբնաղբյուրները, որոնք մեզանից ավելի վաղ զարգացած գրավոր մշակույթ են ունեցել, օրինակ՝ խեթերը, ակկադներն ու շումերները, սեմական ազգերը, հույներն ու պարսիկները, ինչպես նաև հինգերորդ դարում գրի առնված հայոց բանահյուսական նյութերը, վիպասանքը, առասպելներն ու ավանդությունները, որոնք արտացոլում են գրաբարի առավել վաղ լեզվավիճակները:

Գրային շրջանի հետազոտության աղբյուրներն ավելի բազմազան են՝ տվյալ լեզվով ստեղծված մատենագրությունը, վիմագրությունը, գեղարվեստական, գիտական ինքնուրույն և թարգմանական գրականությունը:

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Լեզուների պատմության ուսումնասիրության հիմնական մեթոդները հետևյալներն են:

ա) **Համեմատություն.** լեզվի տարածամասնակյա քննության հիմնական հնագույն մեթոդներից է, որի հիմքի վրա էլ ձևավորվել է պատմահամեմատական լեզվաբանությունը: Առանց համեմատության անհնար է լիարժեք բնութագրել և դասակարգել լեզվական իրողությունները, ինչպես նաև լեզուները: Լեզվի պատմության համար ելակետային է նախ՝ տվյալ լեզվի զարգացման տարբեր փուլերում առկա լեզվական փաստերի համեմատությունը, ապա՝ այդ փաստերի համադրումը այլ՝ ցեղակից կամ հարևան լեզուների նույնական իրողությունների հետ: Հայերենի պարագայում սա նշանակում է լեզվական փաստերի քննություն երեք գրական հայերենների տվյալների հիման վրա՝ գրաբար, միջին հայերեն, աշխարհաբար: Վերջինս իր հերթին բաժանվում է գրական արևելահայերենի և գրական արևմտահայերենի: Այնուհետև մեր լեզվական կարգերի կամ բառապաշարային միավորների համեմատությունը ցեղակից և հարևան լեզուների նույն իրողությունների հետ. այս ամենը հնարավոր է դարձնում բացահայտել քերականական և բառապաշարային միավորների ծագումը, փոփոխությունների տրամաբանությունը:

Ըստ ընտրված միավորների՝ համեմատությունը կարող է լինել ներքին և արտաքին: Ներքին համեմատության դեպքում զուգադրվում են մի լեզվի տարբեր փուլերի իրողությունները, իսկ արտաքինի դեպքում՝ քննվող լեզվի և այլ լեզուների հնարավոր ընդհանրություններն ու տարբերությունները: Յուրաքանչյուր համեմատություն կարող է հանգել երեք արդյունքի՝ 1. համեմատվող ժամանակագրական մակարդակներում տվյալ միավորի առկայություն՝ a-a, օրինակ՝ թվի քերականական կարգի երկանդամ հակադրությունը՝ եզակի-հոգնակի, առկա է մեր լեզվի զարգացման շրջանի բոլոր փուլերում, ճիշտ է՝ տարբեր եղանակներով, 2. ժամանակագրական մակարդակներից որևէ մեկում դրա բացակայությունը՝ a-ā, այսպես՝ կրավորական սեռի արտահայտության հատուկ

ածանց գրաբարում չի եղել. **Վ** Ժամանցն առաջացել է միջին հայերենի աշխարհաբարացման ենթաշրջանում, 3. Ժամանակագրական մակարդակներից որևէ մեկում դրա փոխարեն այլ փաստի առաջացումը՝ a-b: Եթե անդրադառնանք նույն կրավորական կառույցներին, ապա կարձանագրենք, որ գրաբարում չկար հատուկ Ժամանց, բայց կար խոնարհման տիպերի հակադրություն կատարյալի հիմքից կազմվող ժամանակներում՝ ներգործակերպ և կրավորակերպ վերջավորություններով, իսկ հետագայում դրանց փոխարեն առաջանում է **Վ** Ժամանցը:

Նշենք նաև, որ լեզվական միավորները հիմնականում երկպլանային են. ունեն բովանդակության և արտահայտության պլաններ, ուստի համեմատության ընթացքում հնարավոր է արձանագրել նաև այդ պլաններից որևէ մեկի կամ երկուսի փոփոխությունները կամ պահպանումը: Ինչպես վերը նշեցինք, եզակի և հոգնակի թվերի քերականական կարգերը առկա են հայերենի զարգացման բոլոր փուլերում, բայց դրանց արտահայտության եղանակները բավական տարբեր են: Բերենք այլ օրինակ. *ք* ձևությոն վկայված է ինչպես գրաբարում, միջին հայերենում, այնպես էլ երկճյուղ աշխարհաբարում, բայց աշխարհաբարում այն արդեն հոգնակերտ չէ, այլ բառակազմական ձևությոն՝ Ժամանց, այսինքն՝ արտահայտության պլանը պահպանվել է, բովանդակությամբ՝ փոխվել: Այսպիսով՝ համեմատության մեթոդի օգնությամբ հնարավոր է բացահայտել և նկարագրել լեզվական առանձին միավորների և համակարգերի գրեթե բոլոր փոփոխությունները, ամենակարևորը՝ լեզվի զարգացման միտումները:

բ) **Վերականգնում.** լեզվի պատմության ուսումնասիրության հիմնական մեթոդներից է, որը կիրառվում է համեմատական լեզվաբանության մեջ՝ թույլ տալով վերականգնել ոչ միայն լեզվի առանձին բացակայող միավորները, այլև վերացած լեզուներն ամբողջությամբ կամ դրանց ջնջված լեզվափուլերը: Այսպես՝ վերականգնման մեթոդի օգնությամբ Գ. Ջահուկյանը բացահայտում և նկարագրում է հայերենի մախազային շրջանի բառապաշարային, հնչյունական ու քերականական համակարգերը¹¹: Մինչև Գ. Ջահուկյանը այս վերականգնումների հիմքը

¹¹ Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 235-382:

դրել է Հ. Աճառյանը: Հայոց լեզվի պատմության համար վերականգնման մեթոդի կարևորությունը հատկապես մեծ է, քանի որ հայոց գրավոր հուշարձանները մեր թվարկության հինգերորդ դարից են, այնինչ հայոց լեզուն հնդեվրոպական նախալեզվից առանձնացել և հաղորդակցման գործուն միջոց է եղել Ք.ա. 4-3-րդ հազարամյակներից:

Ըստ համեմատելի միավորների ծագման՝ վերականգնումը լինում է արտաքին և ներքին: Արտաքին վերականգնման դեպքում, դիցուք, հայերենի կորսված լեզվական օղակները վերականգնվում են ցեղակից այլ լեզուների տվյալների հիման վրա: Օրինակ՝ հայերենը չի պահպանել *ծուլ*-ի հնդեվրոպական անվանումը, որը կա Եվրոպայի հնդեվրոպական լեզուներում. **tori*-. հայերենում այն պետք է ունենար **մոր* կամ **մուր* ձևերը, որոնց հետքերը կարող ենք տեսնել *Մուրց* գետանվան մեջ: Ներքին վերականգնման դեպքում համեմատության մեջ են դրվում հայերենի ժամանակագրական տարբեր մակարդակների միավորները, և վերականգնվում է դրանց նախնական տարբերակը. այսպես՝ *լրասն*, *քասն*, *երեսուն*, *քառասուն*, *յիսուն* և համանման մույն շարքի քանակական թվականների մեջ վերականգնվում է *սն/սուն/ սան* արմատը, որը վաղնջահայերենում նշանակել է *լրասնյակ*:

գ) **Տարածամանակավորում** կամ **Ժամանակաբաշխում**. լեզվի պատմության համեմատաբար նոր մեթոդներից է: Տարածամանակավորման շնորհիվ վկայված լեզվական փաստերը բաշխվում են ըստ ժամանակագրական փուլերի, այսինքն՝ որոշվում է յուրաքանչյուր լեզվական միավորի առաջացման, կիրառության և վերացման ժամանակագրությունը: Գոյություն ունի բացարձակ և հարաբերական ժամանակագրություն. բացարձակ ժամանակագրության դեպքում լեզվական փաստերը համապատասխանեցվում են արտալեզվական փաստերին, պատմության ընդունված ժամանակագրությունը կիրառվում է լեզվական փաստերի վերաբերմամբ: Այս առումով բնութագրական է Մ. Սվոդեշի կիրառած լեզվաժամանակագրական կամ բառափճակագրական մեթոդը, որի միջոցով որոշվում է ցեղակից լեզուների տրոհման ժամանակը կամ էլ լեզվական որևէ փաստի առաջացման ժամանակը:

Նշված մեթոդը հայերենի վերաբերմամբ կիրառել է Գ. Ջահուկյանը՝ որոշելով հայերենի անկախ գոյության ժամանակը¹²։ Մեթոդի էությունը հետևյալն է. առանձնացվում է լեզվի համեմատաբար դանդաղ փոփոխվող հիմնական բառաֆոնդը, սահմանվում է այդ բառաֆոնդի փոփոխության ցուցիչը, և դրա միջոցով որոշվում է ցեղակից լեզուների՝ միասնությունից տրոհվելու ժամանակը։ Մ. Սվողեշը սկզբում առանձնացրել էր 215 բառ, ապա 200՝ վերջում ընտրելով 100 բառ։ Այնուհետև համեմատելով մի շարք լեզուների փոփոխության արդյունքները՝ ճշտել է, որ 100 տարվա ընթացքում միջին հաշվով դուրս է մղվում այդ հիմնական բառաֆոնդի 15%-ը (100 բառի դեպքում 15 բառ է գործածությունից դուրս գալիս), պահպանվում է 85%-ը (100 բառից 85-ը մնում է կիրառության մեջ)։ Ըստ հիմնական բառաֆոնդի պահպանվածության աստիճանի՝ որոշվում է այս կամ այն լեզվի՝ միասնությունից տրոհվելու ժամանակը և ինքնուրույն լեզու դառնալու պահը։

Լեզվական փաստերի ժամանակագրավորման տարբեր եղանակներ կան, որոնցից Գ. Ջահուկյանն առանձնացնում է հետադարձ հաշվարկման սկզբունքը։ Ըստ այդմ՝ հիմնվելով որևէ լեզվի զարգացման գրավոր շրջանի ժամանակագրության վրա՝ առանձնացվում են համարժեք փուլեր նախագրային շրջանում, որովհետև լեզուն փոփոխվում է կայուն արագությամբ, այսինքն՝ լեզվի զարգացմանը միշտ բնորոշ է հարաբերական հավասարաչափությունը։ Հետադարձ հաշվարկման սկզբունքի համաձայն՝ արդի հայերենը տարբերվում է դասական գրաբարից մոտավորապես այն չափով, որ չափով գրաբարը տարբերվում է Ք.ա. 2-րդ հազարամյակի լեզվից, որը Գ. Ջահուկյանը կոչում է ուշ վաղմջահայերեն, և այդպես շարունակ։ Հայոց լեզվի՝ Գ. Ջահուկյանի առաջարկած գիտական շրջանաբաժանումը հիմնված է հենց այս համաչափ փոփոխությունների վարկածի վրա¹³։

¹² Հմմտ. Գ. Джаукян, Очерки по истории дописьменного периода армянского языка, Ер., 1967, էջ 318-320։

¹³ Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն։ Նախագրային ժամանակաշրջան, էջ 15-26։

դ) **Համաժամանակավորում.** Գ. Ջահուկյանի առաջարկած այս անվանումը նշանակում է համարժեք լեզվական փաստերի առաջացման և կիրառության տեղի՝ տարածքի որոշում, այսինքն՝ լեզվական միավորների տարածական, հասարակական-ոճական տարաբաշխում կամ դասակարգում: Համաժամանակավորման միջոցով բացահայտվում է, թե լեզվի մեջ վկայված զուգաձևությունները որ տարածքներում են կիրառվել, հասարակական որ խմբերի լեզուներին կամ գործառական ոճերին են պատկանել:

ե) **Արտահարաբերում** կամ **լեզվահնէաբանական քննության մեթոդ.** այս մեթոդի միջոցով արտալեզվական փաստերն օգտագործվում են բառերի սկզբնական իմաստների, դրանց փոփոխության պարզաբանման համար: Արտահարաբերումը թույլ է տալիս տեքստերի բանասիրական քննությունն ավելի արդյունավետ դարձնել, խմբավորել լեզվի պատմության համար օգտագործվող աղբյուրները, դրանց լեզվական որակները, դասերը՝ հավաստիության բավական բարձր աստիճանով:

ՀԱՅԵՐԵՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԲԱԺԱՆՈՒՄԸ

Լեզվի պատմության գիտական շրջանաբաժանումը պետք է հիմնված լինի հստակ սկզբունքների վրա: Գ. Ջահուկյանն իր «Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան» աշխատության մեջ առանձնացնում է հետևյալ չորս հիմնական սկզբունքները¹⁴.

ա) **լիակատար ընդգրկման սկզբունք.** լեզվի պատմությունը պետք է ընդգրկի լեզվի բոլոր տարատեսակները՝ չսահմանափակվելով գրական լեզուներով, վերաբերի և՛ գրային, և՛ նախագրային շրջաններին, և՛ բարբառներին, և՛ խոսվածքներին, և՛ ժարգոններին ու հանրության տարբեր շերտերի լեզուներին, բ) **լեզվի պատմության դիալեկտիկայի բացահայտման սկզբունք.** լեզվի պատմությունը այնպիսի քանակական փոփոխությունների պատմություն է, որը, ի վերջո, հանգեցնում է որակա-

¹⁴ Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 20-26:

կան անցումների, գ) **լեզվի և այն կրող ժողովրդի պատմության սերտ փոխկապակցվածության սկզբունք**. լեզուն հասարակական հաղորդակցման միջոց է, ուստի ենթակա է լեզվակիրների կյանքի զարգացման օրինաչափություններին. ազգային լեզուն մեծ կախման մեջ է այդ ազգի քաղաքական, տնտեսական և հոգևոր պատմությունից, դ) **լեզվական փաստերի առաջնայնության սկզբունք**. ըստ այդմ՝ լեզվի պատմությունը չի կարող լինել ժողովրդի պատմության պարզ վերարտադրությունը: Լեզվի պատմության նկարագրությունը և շրջանաբաժանումը պետք է հիմնվեն բազմահատկանիշ դասակարգումների վրա, արտացոլեն լեզվի կառուցվածքի և բառապաշարի հիմնական բոլոր փոփոխությունները, համակարգային տեղաշարժերը:

Հայոց լեզվի ինքնուրույն զարգացումը սկսվում է Ք.ա. 3-րդ հազարամյակի սկզբներից: Գ. Ջահուկյանը հնդեվրոպական միասնության շրջանում հայերենի բարբառային վիճակը բնութագրելու համար օգտագործում է *նախահայերեն* եզրույթը: Իսկ նախագրային հայերենի համար կատարում է հետևյալ շրջանաբաժանումը.

Վաղնջական շրջան՝ վաղնջահայերեն՝ Ք.ա. 3-րդ հազարամյակի սկզբներից մինչև Ք.ա. 13-րդ դար: Այս շրջանում առանձնացնում է 2 ենթաշրջան՝

- ա) սկզբնային վաղնջական՝ Ք.ա. 3-րդ հազարամյակ,
- բ) ուշ վաղնջական՝ Ք.ա. 2-րդ հազարամյակի սկզբներից մինչև Ք.ա. 13-րդ դար:

Հնագույն շրջան՝ հնագույն հայերեն՝ Ք.ա. 12-րդ դարից մինչև Ք.հ. 4-րդ դար. այստեղ տարբերակվում են 2 ենթաշրջան.

- ա) վաղ հնագույն՝ Ք.ա. 12-րդ դարից մինչև Ք.ա. 4-րդ դար,
- բ) ուշ հնագույն՝ Ք.ա. 3-րդ դարից մինչև Ք.հ. 4-րդ դար:

Գրական լեզվի շրջանաբաժանումը.

Հին շրջան՝ հին հայերեն՝ 5-րդ դարից մինչև 11-րդ դար: Այս շրջանի գրական լեզուն կոչվում է *գրաբար*: Այն ձևավորվել է Տուրուբերանի (Տարոնի աշխարհի) և Բարձր Հայքի ու Այրարատի՝ Տուրուբերանին հարող տարածքների խոսվածքների հիման վրա: Թեև Գ. Ջահուկյանը հին հայերենի շրջանը սկսում է 5-րդ դարից, բայց հիմնվելով Հ. Հյուբշ-

մանի հնչյունաբանական բնութագրիչների վրա՝ գրաբարի՝ որպես ինքնուրույն լեզվի սկիզբ համարում է 3-րդ դարասկիզբը, իսկ 5-րդ դարասկզբին այն գրավոր է դարձել: Հին շրջանը բաժանվում է 3 ենթաշրջանի.

- ա) վաղ, հին կամ դասական գրաբար՝ 5-րդ դար,
- բ) ուշ հին կամ հետդասական գրաբար՝ 6-7-րդ դարեր,
- գ) նախամիջին՝ 8-11-րդ դարեր:

Միջին շրջան՝ 12-16-րդ դարեր: Այս շրջանում հայոց գրական լեզուն դառնում է միջին հայերենը, որը ձևավորվել էր ժողովրդախոսակցական լեզվի, գրաբարյան բարբառների հիմքի վրա, բայց նրան զուգահեռ՝ դեռ բավական երկար շարունակվում է գրաբարի կիրառությունը՝ հատկապես իբրև գրավոր լեզու: Միջին շրջանում առանձնացվում է 2 ենթաշրջան.

- ա) վաղ կամ կիլիկյան նորմավորման՝ 12-14-րդ դարեր,
- բ) ուշ միջին կամ աշխարհաբարացման՝ 15- 16-րդ դարեր:

Նոր կամ աշխարհաբարի շրջան՝ 17-20-րդ դարեր: Այս շրջանում հանդես է գալիս նոր գրական հայերենը կամ աշխարհաբարը, թեև աշխարհաբարի առաջին ենթաշրջանում գրաբարը դեռ պահպանում էր իր դիրքերը՝ որպես գրավոր հաղորդակցման միջոց: Այս իրավիճակը տևում է մինչև գրապայքարի ավարտը: Նոր շրջանում տարբերակվում է 3 ենթաշրջան.

- ա) վաղ աշխարհաբարի՝ 17-րդ դարի սկզբներից մինչև 19-րդ դարի կեսը,
- բ) ուշ կամ երկնյուղ աշխարհաբարի՝ 19-րդ դարի կեսից մինչև 1920 թվականը,
- գ) արդի կամ ժամանակակից՝ 20-րդ դարից ցայսօր:

ՀԱՅԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՍՏՈՒԳԱՔԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԵՐԸ

Հայերին աշխարհում անվանում են հետևյալ կերպ՝ *հայ, արմեն, նաիրյան, քորզոմյան, ասքանազյան ազգ, սումեխի* և *ֆլա*: Հայ-ը ինքնանվանում է. *արմեն* մեզ կոչում է աշխարհի ժողովուրդների մեծամասնությունը, *սումեխ* անունը մեզ տվել են վրացիները, իսկ *ֆլա*՝ քրդերը: Հին շրջանի պատմագրությունից և գրականությունից մենք հայտնի ենք նաև որպես «*Նաիրյան*», «*Ասքանազյան*» և «*Թորզոմյան*» ազգ: Այս անվանումներն ունեն իրենց ծագումնաբանությունը, որի շնորհիվ հնարավոր է որոշել հայերի՝ իբրև հնդեվրոպական միասնությունից անկախ, ինքնուրույն ժողովրդի առանձնացման ընթացքը, այն ցեղերին, որոնք մասնակցել են մեր էթնիկական կազմավորմանը, ինչպես նաև հայերի սկզբնական բնակության վայրն ու հետագա տեղաշարժի ուղղությունները, մեր լեզվում պահպանված ենթաշերտային իրողությունները:

Պատմագիտական և ազգաբանական տեսանկյունից *ֆլա* (հողագործ-գեղջյուկ) անվանումը արժեք չունի, որովհետև այն ուշ ժամանակների ծնունդ է, ուստի քննությունը սկսենք *Հայ* հիմնական ինքնանվանումից: Հայերի ինքնանվանումների և օտարների կողմից մեզ տրվող անունների ստուգաբանությունը հարուստ պատմություն ունի, բայց դեռևս չենք կարող արձանագրել, որ գիտության զարգացման արդի մակարդակում ձևավորվել են բոլորի կողմից ընդունելի և վերջնական տարբերակներ:

Հայ անվանումը բխեցվում է *Հայկ* անձնանունից: Այս բառի նախնական իմաստների պարզաբանման համար Գ. Ջահուկյանն առանձնացնում է վեց ելակետ, որ կարող են վճռորոշ լինել ազգի անվանակոչման համար. ա) Հայկը քաջ որսորդ էր՝ «գեղապատշաճ, անձնեայ, քաջագանգուր, խայտակն, հաստաբազուկ», բ) Աստվածաշնչի թարգմանության մեջ Օրիոնի համաստեղության անունը փոխարինված է Հայկի անունով, գ) *Հայկ* անունը որպես հասարակ գոյական գործածվում է «հսկա» իմաստով, «Բառգիրք Հայոց»-ում *հայք*-ը բացատրվում է որպես «հսկայք», դ) նույն «Բառգիրք Հայոց»-ում *Հայկ* նշանակում է նաև

«փոքր»¹⁵, ե) Արցախի բարբառում *հայ* նշանակում է «դժվարություն», «նեղություն», «ջանք», գ) *հայ* բառը մեր իրականության մեջ գործածվում է «հարազատ» և, ընդհանրապես, «մարդ» իմաստներով¹⁶:

Հայ անվանումը պատմագիտության և լեզվաբանության մեջ փորձել են գուգադրել հետևյալ երեք անվանումների հետ՝ **Ħate/i**, **Haiaša** և **Παίονες (Payones)**: Դեռևս 19-րդ դարի վերջում Պ. Եմսենն իր «Խեթերը և հայերը» աշխատության մեջ, հենվելով *h'ate/ h'atti/h'ati> hai* հնչյունական մնացորդների վրա, պնդում է, որ խեթերը հայերի նախնիներն են եղել: Հայ անվան այս մեկնաբանությունից գիտնականները չեն հրաժարվում նաև խեթական արձանագրությունների հայտնաբերումից հետո, քեն հաստատվել է, որ խեթերները հայերենից տարբերվող հնդեվրոպական լեզու է: Ի. Դյակոնովը կարծում է, որ *hate* անվանումը եղել է Փոքր Ասիայի և Սիրիայի ժողովուրդների ընդհանուր անունը, և ուրարտացիները հատկապես այդ անվամբ են կոչել Փոքր Հայքի բնակչությանը:

Haiaša - հայ անվանումների կապն առաջին անգամ հիմնավորել է Ն. Մարտիրոսյանը (1924), ապա այս դրույթին տարբեր կողմերից անդրադարձել են Կ. Ռոտը (1927), Գ. Ղափանցյանը (1931), Պ. Կրեչմերը (1932): Նրանց տեսակետները ներկայումս էլ քննարկումների և նոր մեկնաբանությունների տեղիք են տալիս¹⁷: Եթե հայերի անվանումը բխում է *Haiaša* տեղանունից, ապա հնարավոր է երկու վարկած: 1. Հայ անվանումը չունի հնդեվրոպական ծագում. այս տեսակետի կողմնակիցն էր հատկապես Գ. Ղափանցյանը, որը հայերենը համարում էր խառնածին լեզու՝ հնդեվրոպական և փոքրասիական շերտերով: 2. Հայ բառը ծագմամբ հնդեվրոպական է. *Haiaša*-ի մեջ առանձնացվում է *Ħaia-Haio* հիմքը, իսկ *-aša*-ն համարվում է լուծական սեռականի վերջավորություն, որն ուներ տեղանիշ, ստացական նշանակություն: Ինչպես նշում է Գ. Ջահուկյանը, խեթալուվական, քրական լեզուներում, ուրարտերենում *հայ* արմատը կարող է առանց սկզբնային *h*¹-ի գուգադրվել որոշ արմատների

¹⁵ Տե՛ս *Բաղդիրք Հայոց*, Եր., 1975, էջ 179:

¹⁶ Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, էջ 279-281:

¹⁷ Տե՛ս Ա. Պետրոսյան, Հայոց ազգածագման հարցի շուրջ //Հայոց ազգածագման հարցեր, Եր., 2006, էջ 18-20:

հետ՝ հետևյալ նշանակություններով՝ *afas - *պարիսի* կամ *afos - *մե-
րադ, ուժեղ, ամուր* կամ *հարձակվել, գրավել, տանել*: Այսինքն՝ **հայ**
անունով կոչվող ժողովուրդը անվանակոչվել է պատվախնդիր, մետաղի
պես ամուր և նախահարձակ լինելու հատկանիշների միջոցով:

Հայագիտության մեջ տարածված է նաև այն վարկածը, թե **հայ** ան-
վանումը բխում է *poti* հիմքից, որ նշանակում է *տեր-տանտեր*: Ինչ վե-
րաբերում է **Παίονες** երկրանվանը, ապա դրա հետ **հայ** անվանումը կա-
պելու բազմաթիվ փորձերը հանգում են հետևյալին. **Payones**-ի հիմքում
թծս/թսն-իծն արմատն են վերականգնում, որ նշանակում է «փոքր»:
Միաժամանակ նշվում է, որ Հայաստանի տարածքը մոտավորապես հա-
մընկել է Փոքր Հայքի տարածքի հետ, և փոքր լինելու հատկանիշը մեր
մատենագրության մեջ հաճախ զուգակցվում է **հայ** բառի հետ՝ *փոքր
ածու*: Տեղին է հիշել, որ Երեմիա Մեղրեցու «Բառգիրք Հայոց»-ում **հայ**
բառի համար բերվում է «փոքր» բացատրությունը:

Հայ բառը կապվում է նաև Կողբիսի հին **Աֆ** անվան և թեսալական
համանուն քաղաքի հետ. **Աֆ** նշանակում է «մեծ մայր» կամ «երկիր».
այս իմաստները միավորվում են որպես *մայր երկիր*: Այստեղ տեղին է
հիշել արգոնավորողների առասպելը և նրա հերոսներից *Արմենիոն Թե-
սալացուն*: Ըստ առասպելի տարբերակներից մեկի՝ արգոնավորողները
նավում են ոչ թե դեպի Կողբիս/Կոլխիդա, այլ *Այա* երկիր, որտեղ պահ-
վում էր հաջողության և բարգավաճման գրավական Ոսկե գեղը: **Աֆ**/
Այա անվանումը շատերը կապում են **Այա>Հայա>Հայասա** տեղանվան
հետ: Այս համընկնումը ամրակայվում է նաև տեղագրական փաստարկ-
ներով, և, փաստորեն, ուղղակի կապ է ստեղծվում **հայ** և *արմեն* անվա-
նումների միջև, որոնք ի սկզբանե հոմանիշ էին: Գ. Ջահուկյանը հավա-
նական է համարում **հայ** արմատի բխեցումը հնդեվրոպական *pōi/pei
արածեցնել պահել արմատից՝ հիմնվելով Հերոդոտոսի այն վկայության
վրա, որ հայերը շատ ոչխար ունեցող են, այսինքն՝ հովիվներ¹⁸:

Արմեն - Ավանդաբար նշվում է, որ այս անունն առաջին անգամ որ-
պես հայերի անվանում հիշատակվել է Պարսից Դարեհ թագավորի Բի-

¹⁸ Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, էջ
284-285:

հիստունյան արձանագրության մեջ Ք.ա. 522-513 թվականներին՝ Armina - Հայաստան, arminiya- հայեր ձևերով: Բայց մինչ այդ էլ այս անունը վկայված էր հունական աղբյուրներում: ա) Հերոդոտոսը *արմեններին* հիշատակում է Եփրոպայից Փոքր Ասիա փոյուզացիների տեղափոխվելու առնչությամբ, մեզ կոչում է փոյուզական վերաբնակներ: բ) Այնուհետև Քսենոփոնը «Կյուրոպեդիայում» հիշատակում է արմեններին Կյուրոսի հետ կապված իրադարձություններում՝ Ք.ա. 6-րդ դար: գ) Ստրաբոնը հայերին հիշատակում է արգոնավորդների առասպելում, որն ընդգրկում էր Ք.ա. 8- 6-րդ դարերի դեպքերը, հունական տարբեր աղբյուրներում *Արմեն* անունը համարվում էր արգոնավորդների արշավանքի մասնակից, Թեսալիայի Արմենիոն քաղաքից եկած *Արմենոսի* տարբերակ¹⁹: դ) Հոմերոսի «Իլիականում» ևս կա հիշատակություն *αῤῥίοι* ցեղերի մասին, որոնք ևս կապվում են *արմենների* հետ:

Այնուհետև *արմեն* բառը զուգադրվում է Սրմե երկրանվան հետ, որը վկայված է ուրարտական թագավոր Մենուայի (Ք.ա. 810-778 թթ.) արձանագրություններից մեկում, Սալդուրի թագավորի (Ք.ա. 764-735 թթ.) արձանագրություններում վկայված է Arme երկրանունը, Ասորեստանի թագավոր Թիգլաթպալասար I-ը (Ք.ա. 1116-1090) արդեն հիշատակում է Urume ժողովրդանունը: Շատ ավելի խոր հնություն ունեն Ք.ա. 2200-1250 թվականներին խեթական և ակկադական աղբյուրներում վկայված Armana-Armanu-Armani երկրանունները, որոնց թագավորի անունն անգամ հիշատակվում է՝ *Մադակինա* կամ *Ռեդ-Ադադ*:

Արմեն անվան ստուգաբանությունը առկա է ամենից առաջ հայ մատենագրության մեջ. Խորենացին այն կապում է Հայկի հաջորդներից *Արամ*-ի անվան հետ՝ մեզ կոչելով *Արամեան ազն*: Սեբեոսը *Արմեն*-ը բխեցնում է *Արամանեակ* անունից, որն էլ հանգեցնում են ուրարտական մեկ այլ թագավորի անվանը՝ *Erimena* (Ք.ա. 625-605 թթ.): Այս անունը հետազոտողները փորձել են կապել ուրատական Aramu թագավորի անվան հետ:

¹⁹ Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 285-287:

Հայոց ազգածագման վերաբերյալ իր աշխատանքներով հայտնի Յոզեֆ Մարկվարտը *արմեն* ժողովրդական հիմքում տեսնում էր *arm- *arim- կամ *arum- արմատը, որին կցվել էր ուրարտական -ini վերջավորությունը, ինչպես օրինակ՝ ուրարտական Urmeni ձևը: *Arm արմատը նա զուգադրում է «Իլիականում» հիշատակված Ջևի և Տիփոնի մենամարտի վայրի անվան հետ՝ εἶν Ἀρίμοις: *Արիմո ցեղանունը Մարկվարտը կապում է Ասովածաշնչի Արամի և ուրարտական առաջին արքա Արամոյի անունների հետ, իսկ **հայ** ինքնանվանումը համարում է ավելի ուշ առաջացած ձև: *Արամ*-ը, փաստորեն, դիտարկվում է որպես հայ ժողովրդի բուն ցեղանուն:

Արմեն անվան հնդեվրոպական ստուգաբանությունները հանգում են երկու տարբերակի՝ ա) *ար-մեն*. այս երկու բաղադրիչներից առաջինը նշանակում է «արի», իսկ երկրորդը՝ «մարդ», բ) երկրորդ տարբերակով, որ առաջարկում է Գ. Ջահուկյանը, *արմ*-ը արմատն է, իսկ *են*-ը՝ ածանցյալ, և այդ *արմ*-ը նշանակում է «արմատ», «գ-արմ», «ցեղ», «սերունդ»²⁰:

Սոմեխ - այս անվամբ մեզ կոչում են վրացիները, ժողովրդական ստուգաբանության երեք արժանահավատ վարկած կա: 1) Ն. Մառը և Գ. Ղափանցյանը կարծում էին, որ այն կազմված է so- mex - mesxi բաղադրիչներից, որտեղ so-ն հավաքական նախամասնիկ է, իսկ mesxi-ն՝ մուշկերի քարթվելական անունը: 2) Բ. Պիոտրովսկին, Գ. Մելիքիշվիլին և Ի. Դյակոնովը այս անունը կապում են խեթական և ակկադական աղբյուրներում հիշատակված Zuhma/Šuhma/ Suhmu երկրանվան հետ: 3) Գ. Ջահուկյանն առավել հավանական է համարում somex-ի զուգադրումը Հայաստ երկրին հարևան Samuha քաղաքի անվան հետ:

Նաիրի - Հայտնի է, որ ասուրական արձանագրություններում Ասորեստանից արևելք և Կաշիարի (Մասիուս) լեռներից հյուսիս ընկած երկրների ընդհանրական անվանումը եղել է *Նաիրի* (Na'iri), որն առաջին անգամ վկայվել է Ասորեստանի Թուրբուլի-Նիմուրտա թագավորի (Ք.ա. XIII դ. երկրորդ կես) արձանագրություններից մեկում: Ընդունված է երկրանունը մեկնաբանել որպես *Գեդեհրի երկիր* (ակկադ. naru -

²⁰ Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 287-288:

«գետ» բառից»)։ Առաջարկվել է նաև *Կրակի երկիր* ստուգաբանությունը, ինչպես նաև «լեռնաշխարհ» բացատրությունը։ Վ. Խաչատրյանը վերջին վարկածը հիմնավորում է հետևյալ կերպ. «Ա. Դայմելի բառարանում շումերերենի NA₄ «քար, լեռ» և IRI₁₁ «բնակավայր» բառերի դիմաց համապատասխանաբար դրված են ասորերենի na-a և i-ri-i մույնիմաստ արմատները։ Ըստ այդմ՝ ասորեստանցիները դրանք փոխ են առել շումերերենից, որոնցով էլ կազմված է *Նաիրի* տեղանունը։ Այն նշանակում է «լեռնային բնակավայր» կամ «լեռնաշխարհ»²¹։ Բայց այս՝ ժողովրդանուն-տեղանվան մեջ փորձել են գտնել նաև հայկական տարրեր։ Na- առաջին բաղադրիչը համարվում է «բնիկ հայ. բառ՝ հնխ. no - «այն» դերանունից» ծագած։ Ստուգաբանվում է նաև iri/ire բաղադրիչը։ Այն համարվում է աշխարհագրական անուններում արտացոլված Ar/Ara դիցանվան տարբերակներից մեկը։

Տեղանվան մեջ Արև աստծո անվան առկայությունը Na տարրի մեջ ի հայտ է բերում արեգակին բնորոշ՝ երևան եկող, ծագող, հայտնվող, հառնող բովանդակությունը։ Հետևաբար *Նաիրի* երկրանունը նշանակել է *Արևի երկիր* (բուն իմաստով՝ ծագող (եկնող, բարձրացող լուսատու), որը պայմանավորված է եղել տեղաբնակների դիցաբանական պատկերացումներով՝ արևի գերակա պաշտամունքով։ *Նաիրի* ընդհանրական անունը հատուկ է եղել նաև Հայկական լեռնաշխարհի արևելյան և հարավային հատվածներին։

Թորգոմյան ազգ, տուն - Աստվածաշունչն ասում է, որ Հայկը տղան է Թորգոմի, Թորգոմը՝ Թիրասի, Թիրասը՝ Համերի, Համերը՝ Հաբեթի, Հաբեթը զավակն է նախահայր Նոյի։ Որոշ հայագետների կարծիքով՝ Հին կտակարանի Թոգարմա անվան մեջ առկա է հնագույն ցեղանուն-տեղանուն։ Թորգոմը Աստվածաշնչի Բեթ Թոգարման է (Twgrmh, Tgrmh, Trgmh, հունարեն՝ Թորգամά, Թարգամά, Թերգամά), որը համապատասխանում է ասորական Tegarama, իսթական Te/akarama, լուվական Lakarama տեղանվանը Կապադովկիայում՝ Գամիրքում։ Հովսեփոս Փլավիոսը (I դար) Թորգոմին համարում է փոյուզիացիների նախահայր, իսկ

²¹ Հմմտ. Վ. Խաչատրյան, Հայկական տեղանունները սեպագիր աղբյուրներում, Եր., 2012, էջ 61։

հայերի և փռյուգիացիների կապը հունական աղբյուրներում պարբերաբար նշվել է: Ա. Պետրոսյանն այս կապակցությամբ գրում է, որ Թորգոմը՝ որպես հայերի նախահայր, հատկապես քրիստոնյա հեղինակների գործերում է հանդես գալիս՝ Հիպոլիտես, Եվսեբիոս: Այստեղից էլ այդ ծննդաբանությունն անցել է հայ առաջին մատենագիրներին. Ագաթանգեղոսը, Բուզանդը և Խորենացին մեզ բնորոշել են իբրև թորգոմյան ազգ: Սրա հաջորդ քայլն էլ հայերի՝ Թորգոմի եղբայր Ասքանազից սերված լինելու տարբերակն է, որն առաջին անգամ հանդիպում է Կորյունի մոտ²²:

Օտար հեղինակները Թորգոմին, իրոք, համարել են հայ ժողովրդի նախահայր, ինչպես եպիսկոպոս Հիպոլիտես Հռոմեացու (Փորթացու) ժամանակագրության մեջ է նշվում (235 թ.)՝ «Thogarma, ex quo Armenii» («Թոգարմա, որից (են) հայերը»): Խորենացին, հետևելով Աստվածաշնչին, Թորգոմին համարում է հայերի նախնի Հայկի հայրը, Գամերի թոռը և Թիրասի որդին: Եզեկիելի մարգարեության մեջ եբրայերեն *phēp* *Թոգարմա* ասելով (տուն Թորգոմայ) ավանդաբար հասկացվել է Հայաստանը, մասնավորապես Փոքր Հայքը: V դարի ողջ հայ մատենագրության մեջ *ազգ Թորգոմայ, յուն Թորգոմայ, Թորգոմական աշխարհ* արտահայտությունները լայնորեն կիրառվում էին «հայոց ազգ» և «Հայոց աշխարհ» նշանակությամբ: Կա մաս վրացական ավանդազրույց, որ պահպանվել է 9-11-րդ դարերի վրաց մատենագիրների գործերում: Այն աղերսվում է հայկական ավանդազրույցի հետ, ծագումով հնագույն է, բայց վերամշակվել է քրիստոնեության ազդեցությամբ: Ըստ այդմ՝ Թարգամոս նահապետը ուներ 8 որդի, որոնցից ավագի անունը *Հայոս* էր:

Ինչ վերաբերում է *Ասքանազեան* անվանը, ապա այն հանդես է գալիս որպես «հայոց» բառին հոմանիշ: Ինչպես վերը նշեցինք, Ասքանազը Թորգոմի եղբայրն էր, և Ասքանազին՝ որպես հայոց նախահայր, առաջինը հիշատակում է Կորյունն իր «Վարքում», երբ խոսում է «Ասքանազյան ազգի և Հայաստանյան աշխարհի գրի մասին»: Այնուհետև այս բնորոշումը հանդիպում է այլ աղբյուրներում: Ե՛վ *Ասքանազ*, և՛ *Թոր-*

²² Հմմտ. Ա. Պետրոսյան, Հայոց ազգածագման հարցի շուրջ, էջ 24-25:

գում անունները կապվում են հնագույն ցեղանունների և նրանց նախնական բնակավայրերի անունների հետ: Այդ ժողովրդանուններն ու տեղանունները, վկայվելով մեր և մեզ հետ կապված տարբեր ժողովուրդների առասպելներում ու ավանդություններում, սուրբ գրքերում, տարեգրություններում, բացահայտում են հայոց ազգաբանությունը:

ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻԱՄՆՈՒԹՅԱՆ ՏՐՈՀՈՒՄԸ ԵՎ ՆԱԽԱՀԱՅՐԵՆԻՔԻ ՏԵՂԱԿԱՅՄԱՆ ՎԱՐԿԱԾՆԵՐԸ

Հնդեվրոպական ժողովուրդների առանձնացումը եղել է տևական գործընթաց: Եթե առաջ ընդունված էր այն տեսակետը, թե հնդեվրոպական միասնությունը տրոհվել է Ք.ա. 3-րդ հազարամյակից, ապա այսօր ապացուցված է, որ Ք.ա. 3-րդ հազարամյակում հնդեվրոպական մի շարք լեզուներ, այդ թվում՝ խեթալուսական, արիական, հայկական և հունական, առանձնացած են եղել: Արդի գիտական ըմբռնմամբ՝ միասնության ժամանակաշրջանը համարվում է Ք.ա. 5-4-րդ հազարամյակների միջև ընկած հատվածը: Միասնության տրոհումը տևել է մի քանի հազարամյակ:

Հնդեվրոպական նախահայրենիքի տեղակայման վայրը 19-րդ դարի առաջին կեսին համարվում էր Ասիան՝ Հիմալայների հյուսիսային լանջերից դեպի Կասպից ծով ընկած տարածքը: 19-րդ դարի երկրորդ կեսին առավել հիմնավորված է դառնում հնդեվրոպական նախահայրենիքի տեղակայման եվրոպական վարկածը: Այս վարկածի համար հիմք են ծառայում ոչ միայն լեզվաբանական տվյալները՝ ֆիզիկական աշխարհի, բնական պայմանների, բույսերի և կենդանիների անվանումների վերլուծությունը, այլև հնդեվրոպական ժողովուրդների ավանդությունները, արիացիների և սլավոնների մերձավոր կապերն ապացուցող պատմագրական փաստերը, նրանց վերաբերյալ հնագիտական և մարդաբանական տվյալները: Հնդեվրոպացիների նախնական բնակավայրը, ըստ այս վարկածի, գտնվել է Բալթիկ և Սև ծովերի միջև ընկած տարածքում: Որոշ գիտնականներ այս տարածքն ընդլայնում են՝ ներառե-

լով կենտրոնական Եվրոպան՝ հասցնելով անգամ մինչև Ռուսլյան լեռներ:

1972 թվականին Թ. Գամկրելիձեն և Վ. Իվանովը ասալարեզ են բերում դեռևս Չ. Ֆայստի կողմից հիմնավորվող այն կարծիքը, թե հնդեվրոպական նախահայրենիքը գտնվել է Առաջավոր Ասիայում՝ հատկապես Հայկական բարձրավանդակում, որը նրանք կոչում են Արևելյան Անատոլիա, Հարավային Կովկաս: Այստեղից էլ հնդեվրոպացիները գաղթել են դեպի Եվրոպա և իրենց հետագա բնակավայրերը: 1984 թվականին լույս է տեսնում նրանց ստվարածավալ աշխատությունը՝ «Հնդեվրոպական լեզուն և հնդեվրոպացիները: Նախալեզվի և նախամշակույթի վերականգնում և պատմա-տիպաբանական վերլուծություն»:

Հայկական բարձրավանդակում հնդեվրոպացիների առաջացման վարկածը նրանք հիմնավորում են հետևյալ վեց հիմնադրույթներով: 1. Հնդեվրոպական և հին արևելյան ժողովուրդները սերտ կապ են ունեցել: 2. Մայր լեզվում կան այնպիսի կենդանիների և բույսերի անուններ, որոնք եվրոպական հյուսիսում չէին կայրող գոյություն ունենալ՝ *առյուծ-ինչ, վարդ, որթ, խաղող, գինի, բրինձ*: 3. Հնդեվրոպացիները Հին Արևելքի երկրներից, հատկապես սեմական ժողովուրդներից մեծաթիվ փոխառություններ են կատարել: 4. Հնդեվրոպացիները անվավոր կառք են ունեցել, որը կապված է Առաջավոր Ասիայում մետաղի մշակության հետ և վկայում է հնդեվրոպական նախահայրենիքի՝ Կուր-Արաքսյան մշակույթի շրջանի հետ համընկնելու մասին. հիշենք Լճաշենում հայտնաբերված մարտակառքի տիպը, որը համարվում է հին հնդեվրոպական մշակույթի դրսևորում: 5. Գիր ունեցող հնագույն հնդեվրոպական ժողովուրդները բնակվել են հենց Հայկական բարձրավանդակին հարող տարածքներում (խեթեր, արիացիներ, հույներ): 6. Անատոլիական ջրանունների (գետանուններ, լճանուններ) մեծ մասն ունի հնդեվրոպական ծագում²³: Այսպիսով՝ ենթադրվում է, որ հայերը գրեթե տեղաշարժ չեն կատարել, իսկ խեթերը, հույները, արիացիները փոքր տեղաշարժ են գործել: Սույն

²³ См.у Т. В. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов, Индоевропейский язык и индоевропейцы. Реконструкция и историко-типологический анализ праязыка и протокультуры, Тбилиси, 1984, т.2 890-894:

վարկածը, սակայն, դեռևս լայն ընդունելություն չի գտել որոշ խոցելի կետերի պատճառով:

Ըստ Գ. Ջահուկյանի՝ պետք է գուգադդել հնդեվրոպական նախահայրենիքի եվրոպական և ասիական վարկածները: Պետք է դիտարկել հնդեվրոպացիների բնակության երկու հմարավոր վայրեր. 1) նախնական, երբ նրանք նոր էին բաժանվել նոստրատիկ ընդհանրությունից և սերտ շփման մեջ էին սեմական և քարթվելական ժողովուրդների հետ, և 2) ավելի ուշ, երբ նրանք ինտենսիվ տրոհման՝ հնդեվրոպական առանձին ժողովուրդների առաջացման նախօրեին էին:

Առաջին դեպքում հավանական է հնդեվրոպացիների՝ Ասիայում գտնվելու տարբերակը, երկրորդ դեպքում՝ դեպի Եվրոպա տեղաշարժվելու վարկածը: Գ. Ջահուկյանը դեռևս չլուծված է համարում այն հարցը, թե հայերը, խեթերը և արիացիները բաժանվել են հենց Ասիայում գտնված լինելու ժամանակ և Եվրոպայում ընդհանրապես չեն եղել, թե՞ հայերն ու արիացիները եղել են Եվրոպայում, բայց վերադարձել Ասիա՝ իրենց բնակության նախնական վայրերը²⁴, դարձ ի շրջանս յուր սկզբունքով:

Ըստ Ջ. Մելորիի և Դ. Ադամսի, որոնք կազմել են հնդեվրոպական մշակույթի հանրագիտարանը, ներկայումս առավել տարածված են նախահայրենիքի տեղակայման չորս վարկածներ՝ 1) բալթյան-պոնտական, 2) անատոլիական, 3) կենտրոնաեվրոպական-բալկանյան և 4) պոնտ-կասպյան (Կովկասից հյուսիս)²⁵: Այսպիսով՝ թեև Հայկական լեռնաշխարհը՝ իբրև հնդեվրոպացիների նախահայրենիք, դեռևս առավել ճանաչված վայրերից չէ, սակայն անատոլիական և պոնտ-կասպյան տարբերակները կարելի է համարել «հայաստանամերձ»²⁶:

Հարկ է մշել, որ հնդեվրոպական նախահայրենիքի ներկայիս տեղայնացումները չափազանց կասկածելի են, հիմնված երբեմն իրար հակասող ենթադրությունների և վերականգնումների վրա, ուստի ինչպես

²⁴ Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, էջ 75:

²⁵ Տե՛ս J. Mallory, D. Adams, Encyclopedia of Indo-European culture, London, Chicago, 1997, էջ 290-299:

²⁶ Մանրամասն տե՛ս Ա. Պետրոսյան, Հայոց ազգածագման հարցի շուրջ // Հայոց ազգածագման հարցեր, Եր., 2006, 89-144:

իրավացիորեն նշում է Ա. Պետրոսյանը. «Ժամանակակից գիտությունը դեռևս հնարավորություն չունի միարժեքորեն տեղայնացնելու հնդեվրոպական նախահայրենիքը: Դա գիտնականների հաջորդ սերունդների խնդիրն է»²⁷:

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՆԱԳՄԱՆ ԵՎ ԲՆՈՒՅԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայերենի կապն այլ լեզուների հետ և նրա ցեղակցական բնույթի հարցը 16-րդ դարից հայտնվում է օտար, ապա հայ ուսումնասիրողների ուշադրության կիզակետում: 1538 թվականին նորմանդացի Գ. Պոստելիոսը գրում է «Լեզուների մերձակցություն» աշխատությունը, որտեղ, համեմատելով 12 լեզուներով գրված Տերունական աղոթքի տեքստերը, որոնց թվում նաև գրաբար տարբերակն էր, հանգում է այն եզրակացության, որ հնագույն լեզուն եբրայերենն է, հայերենն էլ որոշակի ընդհանրություններ ունի ինչպես եբրայերենի, այնպես էլ լատիներենի հետ:

Հայերի շրջանում կաթոլիկ եկեղեցու գործունեության ընդլայնման հետ կապված՝ 17-րդ դարում սկսում են տպագրվել հայերեն-լատիներեն, լատիներեն-հայերեն բառարաններ, քերականական աշխատություններ: Այսպես՝ 1621 թվականին, ապա 1633 թվականին հրատարակվում են Միլանի Ամբրոսյան դպրոցի հայագետ Ֆրանցիսկոս Ռիվոլայի «Հայ-լատիներեն», իսկ 1714 թվականին՝ Հռոմի Հիսուսյան դպրոցի վարդապետ Հակոբ Վիլլոտի «Լատիներեն-հայերեն» բառարանները: Հ. Վիլլոտի բառարանն ունի «Հայոց լեզվի ներածություն» հավելվածը, որտեղ ընդհանուր տեղեկություններ են տրված հայերենի հնչյունաբանության, ուղղագրության և ձևաբանության վերաբերյալ: Ավելի վաղ՝ 1645 թվականին, Հռոմում տպագրվել էր Կոնստն Գալանուսի «Քերական եւ տրամաբանական ներածութիւն» աշխատանքը, որը հայերենի լատինատիպ գործնական քերականության առաջին օրինակներից էր: Գրա-

²⁷ Տե՛ս Ա. Պետրոսյան, Հայոց ազգածագման հարցի շուրջ // Հայոց ազգածագման հարցեր, էջ 6:

բարի հետ մեկտեղ՝ օտար հայագետների քննության առարկա են դառնում ոչ միայն միջին հայերենը, այլև վաղ աշխարհաբարը՝ *քաղաքացիական հայերեն* անվամբ: 1711 թվականին Անստերդամում Յոհան Յոահիմ Շրյոդերը գրում է «Արամեան լեզուի գանձ» գիրքը, որը հայոց լեզվի տարածամասկյա նկարագրության առաջին փորձն է:

18-րդ դարում՝ 1769 թվականին, հայագիտության մեջ իր անգնահատելի վաստակով հայտնի Մխիթար Սեբաստացին «Բառգիրք հայկազեան լեզուի» աշխատության մեջ մատնանշում է հայերենի և լատիներենի քերականական համակարգերի, ինչպես նաև բառապաշարի ընդհանրությունները: Հայերենի և պարսկերենի ընդհանրություններին անդրադառնում է Գևորգ Դպիր Պալատացին, որը պարսկերեն-հայերեն իր բառարանում քննում է այս 2 լեզուների համար ընդհանուր 433 բառ, որոնց զգալի մասը համարում է ոչ թե փոխառություն, այլ մի հնագույն սկզբնաղբյուրից եկող ընդհանուր բառաշերտ: Այսպիսով՝ լեզուների զուգադրման և նկարագրության առաջին փորձերը հանգում են նախալեզվի վերականգնմանը: Գ. Լայքնիցը զարգացնում է լեզուների ծագման պատմության տեսությունը՝ կատարելով ծագումնաբանական դասակարգում. ըստ նրա տեսության՝ հայերենը խառը լեզու է, որը պարսկերենի և վրացերենի հետ գտնվում է սկյութական և արամեական լեզուների միջև:

19-րդ դարում պատմահամեմատական լեզվաբանության սկզբնավորման և զարգացման ընթացքում հայերենի ծագման և ցեղակցության հարցերը դառնում են կարևոր քննարկումների նյութ գերմանական արևելագիտական դպրոցի համար, որտեղ արդեն ձևավորվում էր զուտ հայագիտական մասնագիտացումը: 1837 թվականին Հ. Պետերմանը հրապարակում է «Հայոց լեզվի քերականություն» աշխատությունը, որտեղ շուրջ 100 հայերեն բառ համեմատում է հնդեվրոպական մի շարք լեզուների բառերի հետ: Լ. Դիֆենբախը այս քննության գրախոսականում, ելնելով Հ. Պետերմանի համեմատության արդյունքներից, եզրակացնում է, որ հայերենը պատկանում է հնդեվրոպական լեզվաընտանիքի իրանական ճյուղին: Նույն եզրակացությանն է հանգում գերմանացի մեկ այլ լեզվաբան՝ Ֆ. Վինդիշմանը, 1846 թվականին տպագրված

«Հայերենի տեղը արիական լեզվաբանի մեջ» խորհրդանշական անունը կրող հոդվածում, որը, գիտնականի պնդմամբ, պատրաստ է եղել տպագրությունից տասը տարի ավելի վաղ՝ 1836-ին: Նա պնդում է, որ հայերենի բնույթը որոշելու համար պետք է վերականգնել ավելի հին մի հայ բարբառ, որը միջանկյալ դիրք է գրավում զեմդի և սեպագիր արձանագրություններով վկայված հին պարսկերենի միջև: Միաժամանակ, սակայն, Վինդիշմանը փաստում է, որ ամենավաղ շրջանից իսկ հայերենի վրա մեծ է եղել այլ լեզուների, ի մասնավորի՝ սեմական և կովկասյան տարբեր լեզուների ազդեցությունը, որոնց տարրերը նա հայտնաբերում է ինչպես բառապաշարում, այնպես էլ քերականության մեջ:

Հայերենի բնույթի խնդիրը առանձին քննության է ենթարկում նաև Ռ. Գոշեն իր «Նախագիտելիք արիական լեզվի և հայկական ցեղի մասին» աշխատության մեջ (Բեռլին, 1847): Գոշեն հայերենը համարում է իրանական լեզու, բայց այն կապում է նաև փոյուզերենի հետ:

Պատմահամեմատական դպրոցի հեղինակավոր ներկայացուցիչ Ֆ. Բոպպը հնդեվրոպական հիմնական լեզուների համեմատական քերականության իր եռահատոր աշխատանքի առաջին հրատարակության մեջ (1833-1852) հայերենին չի անդրադառնում, բայց երկրորդ՝ լրամշակված տարբերակում (1857-1861) Բոպպն արդեն, որպես հայտնի փաստ, հայերենը համարում է հնդեվրոպական իրանյան ճյուղի լեզու՝ տեղադրելով այն զեմդից հետո:

Պետերմանի, Վինդիշմանի, Դիֆենբախի, Գոշեի և Բոպպի հիշյալ աշխատանքները սկիզբ դրեցին հայերենի ծագման և բնույթի վերաբերյալ պատմահամեմատական հետազոտությունների մի ամբողջ ուղղության, որը հետագայում ճշգրտվեց և ամբողջացավ՝ բացահայտելով հայերենի կապը ոչ միայն արևելյան, այլև արևմտյան լեզուների հետ, նրա միջանկյալ անկախ դիրքը, փոխկապակցվածությունը ոչ հնդեվրոպական տարբեր լեզվաընտանիքների հետ:

1877 թվականին լույս է ընծայվում Պոլ Լագարդի «Հայկական ուսումնասիրություններ» ստուգաբանական-բառագիտական հետազոտությունը, որտեղ հեղինակը, հավաստելով հայերենում իրանական մեծ թվով բառերի առկայությունը, միաժամանակ նշում է, որ բառապաշարի

շատ այլ տարրերով հայերենը մերձենում է հունական և քաղթյան ու սլավոնական բարբառներին՝ տարբերվելով իրանական լեզուներից:

Այսպիսով՝ մինչև 19-րդ դարը տարածված էր այն տեսակետը, ըստ որի՝ հայերենը իրանյան այնպիսի մի յուրահատուկ լեզու է, որն առաջացել է հին պարսկերենի դեռևս չվերականգնված մի տարբերակից, որն առավել մոտ է հունարենին, սլավոնական լեզուներին ու լիտվերենին:

Հ. ՀՅՈՒԲՇՄԱՆԸ ՀԱՅԵՐԵՆԻ ՃԱԳՄԱՆ ԵՎ ԲՆՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

Հայերի խ Հյուբշմանը ծնվել է 1848 թվականին Պրուսիայում: Մասնագիտացել է համեմատական լեզվաբանության և արևելյան լեզուների ուսումնասիրության մեջ՝ տարբեր դասընթացներ լսելով Եմայի, Լայպցիգի, Թյուրինգենի և Մյունխենի համալսարաններում: Հայերենի վերաբերյալ առաջին գիտելիքները ստացել է Եմայի համալսարանում: Առաջին հայագիտական աշխատանքը վերաբերում էր հայերենի հոլովումներին՝ «Հայերենի հոլովումների ուսմունքի շուրջ», որտեղ ավեստայի լեզվի հոլովման համակարգը համեմատում է հայերենի հոլովման համակարգի հետ:

1875 թվականին Հյուբշմանը Լայպցիգի համալսարանում արիական լեզուների դասախոսի պաշտոն է ստանձնում, որի համար Մեքենսի եկեղեցական պատմության վերջին հատվածների հետազոտություն է կատարում: Դասախոսություններ է կարդում պարսկերենի, ավեստայի և հայերենի հոլովման համակարգերի համեմատական ուսումնասիրությունների վերաբերյալ:

1877 թվականից մինչև կյանքի վերջը՝ 1908 թվականը, նա աշխատում է Ստրասբուրգի համալսարանում: Դասախոսական աշխատանքին զուգահեռ՝ զբաղվում է գիտական գործունեությամբ: Լայպցիգում դասավանդելու առաջին իսկ տարում՝ 1875 թվականին, նա հրապարակում է իր հայտնի աշխատությունը՝ «Հայերենի դիրքը հնդեվրոպական լեզուների մեջ», որն ամբողջացնում է և ավարտին է հասցնում հայերենի բնույթի վերաբերյալ գիտական հետազոտությունները՝ վերջնականա-

պես հաստատելով այն իրողությունը, որ հայերենը իրանյան լեզու չէ, այլ արևելյան և արևմտյան հնդեվրոպական լեզուների միջև գտնվող ինքնուրույն լեզվաճյուղ: Գիտնականն այս կարծիքին է համաձայն՝ համեմատելով հայերենի բնիկ և փոխառյալ բառաշերտերը, սահմանելով հնչյունական և ձևաբանական այն օրինաչափությունները, որոնց միջոցով հնարավոր դարձավ հստակ տարանջատել բնիկ շերտը փոխառյալից:

Իր մշակած հնչյունական օրենքների համաձայն՝ նա քննում է իր ուսուցչի՝ Ֆ. Մյուլլերի առանձնացրած այն բառացանկը, որը մինչ այդ բոլոր ուսումնասիրողների կողմից համարվել էր բավարար հիմք հայերենը արիական՝ հնդիրանական լեզուների շարքում ընդգրկելու համար: Բնիկ համարվող բառերի մեջ նա առանձնացնում է բուն պարսկերեն փոխառությունները՝ որպես «օտար ունեցվածք»: Հյուբշմանը կենտրոնանում է նաև հատուկ անունների վրա՝ խստիվ սահմանազատելով բնիկ հայկական անունները պարսկական մեծաթիվ փոխառյալ անուններից: Հայագետը, ելնելով հատկապես հատուկ անուններից, նշում է, որ սխալ է պարսիկներին հարևան և երկար ժամանակ հզոր ու զարգացած այդ ազգի ազդեցությամբ ապրած որևէ ժողովրդի անվերապահ իրանական ծագում վերագրելը:

Որևէ լեզվի ծագումնաբանությունը որոշելու համար չպետք է բավարարվել նրա բառապաշարի ուսումնասիրությամբ, որովհետև այն մեծապես ենթակա է օտար ազդեցությունների: Ծագումնաբանության բացահայտման համար սկզբունքային կարևորություն ունի տվյալ լեզվի քերականությունը, որն իր բնույթով առավել պահպանողական է, քան բառապաշարը: Հայերենի քերականությունը, սակայն, էապես շեղվել է մայր լեզվի օրինաչափություններից, համարվել բոլորովին նոր ձևերով: Հյուբշմանն այն կարծիքին էր, որ հայերենի թե՛ հին, թե՛ նոր քերականական օրինաչափությունները իրանական չեն, այլ մի կարևոր կետում տարանջատվում են իրանականից և համաձայնում սլավոնալիտական լեզուների հետ: Իրանական օրինաչափություններից տարբերվող այդ քերականական իրողություններն են՝ 1) գործիական հոլովի **բ** ցուցիչը, 2) հոգնակերտ **ք**-ն, 3) եզակի տրականի և նրանից կազմվող ներգոյա-

կանի **ձ**-ն, 4) կատարյալի հիմքի **ց**-ն, 5) ստորադասական առաջին և երկրորդ ապառնիների **ց**-ն, 6) սահմանական ներկայի մի շարք դիմային վերջավորություններ՝ **-ձ, -յք** և այլն: Սրանցից ոչ մեկը իրանական բնույթ չունի, բայց վճռորոշ են հայոց լեզվի քերականական համակարգը բնութագրելու համար: Քանի որ հնդեվրոպական նախալեզվից տարբերվող հայերենի քերականական շատ իրողությունների ծագումնաբանությունը մթին է, Հյուբշմանը որոշում է լեզվի բնույթի հարցը վերջնականապես պարզաբանելու համար դիմել հնչյունական համակարգերի համեմատությանը:

Համեմատելով հնդեվրոպական մայր լեզվի, իրաներենի և հայերենի հնչյունական համակարգերը՝ Հյուբշմանը տեսնում է, որ պարսկերենում համընկել են հիմք լեզվի պարզ և շնչեղ ձայնեղները, այնինչ հայերենում դրանք չեն համընկնում: Այսպես՝ մայր լեզվի **բ, ց, ժ**-ի դիմաց պարսկերենն ունի **բ, ց, ժ**, իսկ հայերենը մերթ ունի **բ, ց, դ**, մերթ՝ **պ, կ, տ**: Ելնելով այս հակասությունից՝ Հյուբշմանը եզրակացնում է, որ հայերենում այն բառերը, որոնք հիմք լեզվի **բ, ց, ժ**-ի դիմաց ունեն **բ, ց, դ**, փոխառություն են պարսկերենից, իսկ որոնք ունեն **պ, կ, տ**, ժառանգվել են ուղղակի մայր լեզվից, այսինքն՝ բնիկ են: Հետևաբար Հյուբշմանի մեծագույն գյուտն այն էր, որ նա բացահայտեց հնչյունական, քերականական այն օրենքները, որոնց միջոցով հնարավոր է գատել հայերենի բնիկ տարրը փոխառյալից:

Հյուբշմանը հիմնավորում է, որ նախնական ժամանակաշրջանում արիացիները, հայերը և սլավոնալիտվացիները միմյանց հետ առանձնապես սերտ հարաբերությունների մեջ են եղել: Հայերենն իր լեզվական համակարգով միջանկյալ դիրք է գրավում արիական և սլավոնալիտվական լեզուների միջև, ուստի այն որպես ինքնուրույն լեզվաճյուղ պետք է տեղադրել իրանականի և սլավոնալիտվականի միջև: Հյուբշմանի եզրահանգմամբ՝ հայերենի բնույթը երկակի բնորոշման է ենթակա: Հայերենը վաղնջական ժամանակներում կապող օղակ է եղել արիական, սլավոնալիտվական և եվրոպական լեզուների միջև: Համեմատելով հայերենը եվրոպական լեզուների հետ հնչյունական օրինաչափությունների առումով (a-ի ճեղքումը e-ի, r-ի ճեղքումը r-ի կամ l-ի)՝ Հյուբշմանը տեսնում է,

որ հայերենում, հակառակ արիականի, որոշ սահմանափակումներով է գործում $a > a$ կամ $a > e$ -ի, $r > r$ կամ $r > l$ -ի ճեղքման եվրոպական օրենքը:

Հյուբշմանի տեսությունը սկզբում առաջ է բերում մեծ բանավեճեր: Ֆ. Մյուլլերը նույնանուն հոդված է գրում՝ «Հայերենի դիրքը հնդեվրոպական լեզուների շարքում», որտեղ պնդում է, որ թեև հայերենը կոկորդայինների պահպանմամբ և **r, l** հնչյունների տրոհումով մոտենում է սլավոնալիտական լեզուներին, սակայն ինքը մնում է իր կարծիքին, որ հայերենը արիական լեզու է, ոչ թե ինքնուրույն լեզվաճյուղ: Բայց կարճ ժամանակ անց Հյուբշմանի տեսությունը լայն ճանաչում է գտնում և խորացվում է այլ հետազոտողների, հատկապես Անտուան Մեյեի կողմից:

ՆԱԽԱՄԱՀՏՈՅՅԱՆ ՀԱՅ ԳՐԵՐԻ ԳՈՅՈՒԹՅԱՆ ՎԱՐԿԱԾՆԵՐԸ

Նախամաշտոցյան հայ գրերի և նրանցով ստեղծված մատենագրության գոյության հարցը հայագիտության ամենակարևոր, միաժամանակ և դեռ վիճահարույց խնդիրներից է: Նշանավոր հայագետների մի մասն ապացույցներ և ծանրակշիռ հիմնավորումներ է բերել նախամաշտոցյան գրերի գոյության օգտին, իսկ մյուսները հակառակ կարծիքին են՝ Մ. Մաշտոցին և նրա աշակերտներին համարելով հայոց մատենագրության հիմնադիրը: Նախամաշտոցյան գրերի կողմնակիցների թվում են այնպիսի խոշոր հայագետներ, ինչպիսիք են՝ Դ. Ալիշանը, Ն. Մառը, Մ. Բրոսեն, Հ. Մանանդյանը, Հ. Հյուբշմանը, Ք. Պատկանյանը, Հ. Օրբելին, Լեոն, Գ. Սևակը, Ա. Աբրահամյանը և ուրիշներ:

Ա. Աբրահամյանն իր «Հայոց գիր և գրչություն» աշխատության մեջ ի մի է բերել տեսական և աղբյուրագիտական այն բազմաթիվ հիմնավորումները, որոնք ապացուցում են Մ. Մաշտոցից դարեր առաջ Հայաստանում գրի և գրականության առկայությունը²⁸: Այսպես, Բ. Հրոզնու աշակերտ Հ. Մարտիրոսյանը, հիմնվելով մի շարք վիմագիր հիերոգլիֆների վրա, եզրակացնում է. «Բերված հիերոգլիֆները, տասնյակ վեր-

²⁸ Ա. Աբրահամյան, Հայոց գիր և գրչություն, Եր., 1973, էջ 13-26:

ծանված և չվերծանված այլ նշանագրերի հետ միասին, ցույց են տալիս, որ նախնադարյան Հայաստանում, սկսած երրորդ հազարամյակից մեր թվարկությունից առաջ, կիրառվում էին հիերոգլիֆ նշաններ, իսկ հետագայում նաև՝ գրություն»²⁹:

Հայաստանը Առաջավոր Արևելքի հզորագույն պետություններից մեկն էր, որը մրցակցում էր աշխարհակալ Հռոմի հետ: Բարձր կազմակերպվածություն ունեցող պետությունը, որը պետք է կարգավորեր տնտեսությունը, առևտուրը, հարկեր հավաքեր, մարտունակ բանակ պահեր, դիվանագիտական հարաբերություններ զարգացնել հարևան պետությունների հետ, չէր կարող իրականացնել այդ կարևորագույն նպատակներն առանց իր ժողովրդի համար հասկանալի գրի և գրչության: Բացի այդ՝ հայ թագավորները հայտնի են եղել գիտության, արվեստի և գրականության հանդեպ իրենց մեծ հովանավորությամբ: Պլուտարքոսի վկայությամբ՝ Արտավազդ թագավորը գրել է ողբերգություններ, ճառեր, պատմական երկեր, որոնց հիման վրա թատերգություններ են բեմադրվել: Ճիշտ է, որ Արտաշիսյան շրջանում հայ թագավորները դրամները հատել են հունարեն, ոչ թե հայերեն, բայց այդ ժամանակներում հունարենը միջազգային լեզու էր, և այդ դրամները շրջանառության մեջ էին ոչ միայն Հայաստանում, այլև հարևան պետություններում: Ընդ որում, հելլենիստական ազդեցության երկրներում հունարեն դրամներ էին հատում նաև Պարսկաստանում, Եգիպտոսում և ամբողջ Փոքր Ասիայում:

Հեթանոսական Հայաստանում գրի և գրչության գոյության հարցը սերտորեն առնչվում է քրմական դասի գործունեությանը (քրմերն այն ժամանակ հոգևոր մշակույթի հիմնական կրողներն էին): Զրմերը մշակել էին հեթանոսական հավատի արարողակարգը, կազմել տոմարական աշխատություններ, օրենսգրքեր, պատմաաշխարհագրական երկեր, գուշակությունների մատյաններ և ստեղծել դավանաբանական, գիտական և անգամ գեղարվեստական հարուստ գրականություն:

²⁹ Տե՛ս **А. Мартиросян**, Первобыттные иероглифы Армении и их урарто-армянские двойники // Լրաբեր հասարակական գիտությունների, 1971, N 9, էջ 74:

Միջնադարյան հայ պատմիչների գործերում պահպանվել են տարաբնույթ տեղեկություններ հեթանոսական գրականության վերաբերյալ: Այս շրջանում առանձին հայկական գրի գոյության անուղղակի ապացույցներից է նաև բուն հեթանոսական դիցարանը, որտեղ վճռական դերակատարում ունեն դպրության և արվեստի աստվածը՝ Տիրը: Նրա անունը ժողովրդական ընկալման մեջ ուղղակի կապվում էր գիր անող, գրող աստծո հետ: Ըստ բանահյուսական աղբյուրների՝ Տիրը տոմարագիր էր: Նա ուներ հատուկ մատյաններ, որտեղ գրանցում էր բոլոր ծնվածներին, իսկ երբ նրանք մեռնում էին, դուրս էր գրում նրանց անունները: Այն մարդը, որի անունը նա դուրս էր գրում, գալիս էր Տիրի մոտ, հոգին առնում և ծոցը դրած՝ տանում երկինք: Այս հիմքի վրա առաջացել են ժողովրդական հայտնի անեծքները՝ *գրողի ծոցը գնաս, գրողը քեզ տանի, գրողի տարած, գրողի բաժին դառնաս* և այլն: Գրի հանդեպ պաշտամունքը հայոց մեջ եղել է դեռ վաղմջական ժամանակներում. դրա ապացույցները պահպանվել են մեր բառապաշարում. *գիր* և *կարդալ* բառերն ունեցել են «կախարդել», «հմայել» իմաստները: Ինչպես նշում է Ա. Աբրահամյանը, Կեսարիայում կախարդներին կոչում էին *կարդացող*, իսկ *գիր* բառը հայերենում ուղղակի կապվում է կախարդության հետ, այստեղից էլ՝ *գրքաց*-կախարդ, *գիր անել*- կախարդել և համանման արտահայտությունները³⁰:

Մովսես Խորենացին հիշատակում է Դարանդյաց Հանին, որտեղ եղել է մեհենական պահոց: Այնտեղ է գտնվել Ողյունյա քուրմի պատմական աշխատությունը, որից անձամբ օգտվել է Խորենացին: Անիի մեհենական գրադարանից է օգտվել Բարդաժանը, որը եկել էր Հայաստան՝ քրիստոնեություն քարոզելու: Հաջողության չհասնելով՝ նա մեհենական գրադարանում հայոց թագավորների վերաբերյալ մի պատմություն է թարգմանում ասորերեն, ապա՝ հունարեն: Խորենացին, իր իսկ վկայությամբ, օգտվել է Բարդաժանի այդ հայտնի թարգմանությունից: Ինչպես եզրակացնում է Ա. Աբրահամյանը, «չորրորդ դարում օտար լեզուներից Հայաստանում քաղաքացիություն ունեին հունարենը և ասորերենը: Եթե

³⁰ Տե՛ս Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 17:

հեթանոսական արխիվից Բարդաճանի վերցրածը ո՛չ հունարեն էր և ո՛չ ասորերեն, ապա մնում է ենթադրել, որ նա պետք է գրված լիներ տեղական լեզվով՝ հայերեն³¹»:

Հեթանոսական Հայաստանում տեղական գրերի և մատենագրության գոյության վառ ապացույցներից է այն մշակված, կանոնավոր հայոց գրական լեզուն, որը ժառանգություն ստացավ Մ. Մաշտոցն իր աշակերտների հետ: 5-րդ դարում արդեն հայերենն ուներ հարուստ բառապաշար՝ ոճական բազմազան շերտերով, կանոնակարգված քերականություն: Այդ ամենի շնորհիվ բավականին կարճ ժամանակաշրջանում Մաշտոցը և իր հետևորդները կարողացան թարգմանել Աստվածաշունչը, գիտական, դավանաբանական հսկայածավալ գրականություն և ստեղծել ինքնուրույն մատենագիտական երկեր: Աստվածաշնչի թարգմանությունն այնքան կատարյալ էր իր լեզվական որակով, որ եվրոպական հայագետներն այն կոչեցին «թագուհի թարգմանությամբ»³²: Ըստ այսմ, եթե հայոց գրական լեզուն սկզբնավորված լիներ զուտ Մաշտոցի ժամանակներում և ջանքերով, ապա. 1) Հայքի տարբեր գավառներում ապրող և ստեղծագործող հեղինակների երկերը չէին կարող այդքան միասնական և կանոնակարգված քերականական, ոճական կառուցվածք ունենալ, 2) թարգմանությունների ընթացքում ստիպված կլինեին բնագրի լեզվից մեծաքանակ փոխառություններ կատարել, օտարաբան կառույցներ գործածել, այնինչ 5-րդ դարի դասական գրաբարն աչքի է ընկնում լեզվական անաղարտությամբ, մշակված տերմինային համակարգով, հոմանիշների, դարձվածքների առատությամբ, շարահյուսական բազմաբարդ կառույցներով, որոնց շնորհիվ հնարավոր էր ծավալել դավանաբանական, փիլիսոփայական բանավեճեր, բարձր ոճի ճարտասանական քննարկումներ:

Նախամաշտոցյան գրերի գոյության վերաբերյալ կան նաև տարբեր հիշատակումներ օտար սկզբնաղբյուրներում, որոնցից նշենք կարևորագույնները:

³¹ Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 20:

³² Տե՛ս Մ. Թեր-Մовсесян, История перевода Библии на армянский язык, СПб., 1902, էջ 25:

Ա. Մեր թվարկության 3-րդ դարի հույն հեղինակ Փիլիստրատոսը իր «Վարք Ապոդոնիոս Տիւանացոյ» երկում նշում է, որ Տավրոսի լեռներում մի հովազ են բռնել, որի վզին եղել է ոսկյա մանյակ, իսկ մանյակի վրա հայերեն տառանշաններով գրված է եղել՝ «Թագավոր Արշակ Նյուսիա աստուծո»։ Հ. Աճառյանը, որը համոզված էր, թե մինչ Մաշտոցը Հայաստանի գրավոր մշակույթը եղել է պարսկերեն, հունարեն և ասորերեն, այս վկայության վերաբերյալ ենթադրում է, թե այդ Արշակը պարթև թագավոր է եղել, և մակագրությունն էլ ավելի շուտ պահլավերեն է եղել, քան հայերեն, Փիլիստրատոսն էլ շփոթել է պահլավերենը հայերենի հետ։ Ա. Աբրահամյանը հակադարձում է բավական համոզիչ՝ նշելով, որ եթե անգամ Փիլիստրատոսն իրոք շփոթել է հայերենը և պարսկերենը, ապա պետք է ենթադրել, որ 3-րդ դարում հայկական գրերն այնքան հանրաձանոթ էին և տարածված, որ այլալեզու գրությունը շփոթում և հայերեն էին կարծում³³։

Բ. Դարձյալ 3-րդ դարի հույն մատենագիր Հիպոդիտես Հռոմեացին իր «Ժամանակագրության» մեջ (234-235 թթ.) թվարկում է հայերին այն ժողովուրդների շարքում, որոնք գիր և գրականություն ունեին. դրանք են եբրայեցիները, լատինները, որ նույն հռոմեացիներն էին, սպանացիները, հույները և մարերը։

Գ. Հայ մատենագրության մեջ հիշատակումներ կան այն մասին, որ արդեն 4-րդ դարում եղել է Աստվածաշնչի հայերեն թարգմանության առաջին տարբերակը, որի հեղինակն է համարվել Գրիգոր Լուսավորիչը։ 7-րդ դարի հեղինակ Հովհ. Քոթենավորը Մայրագոմեցու դեմ գրած մի ճառում մեղադրում է նրան և նրա հետևորդներին առաքելաբարոգ Լուսավորչի թարգմանած ավետարանը հերքելու և անտեսելու մեջ։

Դ. Ղազար Փարպեցին ևս անդրադառնում է հայոց նշանագրերի գոյությանը մինչ Մաշտոցը։ Մեղադրելով հայ հոգևորականներին եկեղեցում ասորերեն արարողություններ կատարելու համար՝ Փարպեցին գրում է. «... Մանաւանդ որ գոն նշանագիրք հայերէն լեզուոյս, որով

³³ Տե՛ս **Ա. Աբրահամյան**, նշվ. աշխ., էջ 18։

հմար է՝ ինքեան ձայնիւ, եւ ոչ մութածոյ բարբառով, շահել զոգիս արանց եւ կանանց առհասարակ յամենայն եկեղեցիս բազմութեան»³⁴:

Ե. Հայ մատենագրութեան գոյությունն ապացուցվում է մասնատմա-րագիտական աշխատությունների շնորհիվ: Այսպես, Անդրեաս Բյու-զանդացին, որը 353 թվականին կազմել է իր նշանավոր 200-ամյա գատ-կացանկը, նշում է, թե հայերը 4-րդ դարում ունեցել են հունականից և ասորականից տարբերվող շարժական տոմար:

Նախամաշտոցյան կամ հեթանոսական մատենագրությունից որևէ պատահիկ մեզ չի հասել, այս փաստի բացատրություններից ամենահա-մոզիչը կարելի է համարել քրիստոնեության անհանդուրժողական, աչա-ռու ազդեցությունը: Հավարտ բերենք Ա. Աբրահամյանի գնահատակա-նը. «Նախամաշտոցյան, այսինքն՝ հեթանոսական դպրությանը կործա-նարար հարված հասցրեց քրիստոնեությունը... Հին հայ պատմագիրնե-րը, պիտի կարծել, նախամեսրոպյան դպրության փաստը լուրջյան են տալիս, որովհետև նրանք, որպես քրիստոնյա մատենագիրներ, նպա-տակ ունեն հեթանոսական շրջանը ներկայացնել բարբարոսական շրջան: Նրանք հակված են վկայելու, թե Հայաստանում հեթանոսական շրջանում տիրում էին անգիտությունն ու խավարը, և քրիստոնեությունն էր, որ եկավ լուսավորելու մեր ժողովրդին»³⁵:

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅԸ ԵՎ ԳՐԵՐԻ ԳՅՈՒՏԸ

Մեսրոպ Մաշտոցի աշակերտ Կորյունի վարքագրությունը իր ու-սուցչի կյանքի և հայոց գրերի գյուտի գլխավոր աղբյուրն է, մասամբ այն լրացնում են Մովսես Խորենացու և Ղազար Փարպեցու պատմություննե-րը, որոնց մանրակրկիտ քննությունն ակնհայտ է դարձնում այն փաս-տը, որ ժամանակին եղել են Մաշտոցին և գրերի գյուտին վերաբերող մասնաշխատություններ, որոնցից օգտվել են պատմիչները, սակայն դրանք առ այսօր անհայտ են:

³⁴ **Ղ. Փարպեցի**, Պատմություն Հայոց, Եր., 1982, էջ 30:

³⁵ **Ա. Աբրահամյան**, նշվ. աշխ., էջ 20-21:

Կորյունի՝ 5-րդ դարում գրված վարքագրության մեզ հասած տարբերակն աչքի է ընկնում որոշ հակասություններով, պատմական անճշտություններով և թերասացությամբ: Ժամանակին Ն. Արմենը նշել է, որ Կորյունի աշխատության մեզ հասած տարբերակը չի կարելի համարել նախնական, քանի որ հետագա դարերի ընթացքում այն ենթարկվել է լուրջ խմբագրումների: Այդուհանդերձ Մաշտոցի կենսագրության մասին հիմնական տեղեկությունները հնարավոր է քաղել միայն Կորյունի երկից: Կորյունը Մաշտոցին չի կոչում Մեսրոպ. Հ. Մանանդյանն այս անունը համարում է կասկածահարույց, որովհետև այն վկայված է հին աղբյուրներից միայն Մ. Խորենացու պատմության մեջ:

Ըստ Կորյունի՝ Մաշտոցը Տարոնի նահանգի Հացեկաց գյուղից էր, երանելի Վարդանի որդին: 7-րդ դարի «Անանուն ժամանակագրության» մեջ Վարդանը կոչվում է ազատ, բայց այլ վկայություններ Մաշտոցի հոր ազնվական լինելու մասին չկան, ուստի հետազոտողների մեծ մասն իրավամբ նշում է, որ նա շինականի որդի էր: Ըստ Խորենացու՝ նա կրթություն է ստացել Ներսես կաթողիկոսի մոտ, սովորել հունարեն:

Ապա եկել է Այրարատի նահանգ՝ Վաղարշապատ մայրաքաղաք, և աշխատել որպես դպիր Խոսրով III-ի արքունի դիվանում Առավանի հազարապետության ժամանակ: Ջինվորական արվեստում ևս փորձել է իր ուժերը, սակայն որոշ ժամանակ անց նա դարձել է կուսակրոն հոգևորական, ուսումնասիրել Աստվածաշունչը և սուրբ գրքերը, գնացել Գողթն գավառ՝ քարոզելու և լուսավորելու հեթանոս բարբերով հայտնի տեղի բնակչությանը: Իր գործունեության այս ասպարեզում Մաշտոցը հանդիպել է բազմաթիվ դժվարությունների, որովհետև ժողովրդին խորթ էին քրիստոնեությունը, ասորերեն և հունարեն կատարվող անհասկանալի ժամերգությունները: Աստվածաշնչի և սուրբ գրքերի հայերեն թարգմանությունների բացակայությունը պատճառ էր դառնում հեթանոսական հին հավատքի արմատավորմանը և պարսից կրոնի տարածմանը:

Գողթնում Մաշտոցը հասկանում է, որ հեթանոսության և մագդեգականության դեմ պայքարելու միակ հաստատուն զենքը կարող են լինել հայերեն գիրն ու քրիստոնեական արժեքների հայերեն թարգմանությունները: Վերադառնալով Այրարատ՝ Մաշտոցն իր մտադրությունները

հայտնում է Սահակ Պարթև կաթողիկոսին, որը ևս համակվում է հայոց գրերի ստեղծման գաղափարով: Նրանք այս մասին հայտնում են Վռամշապուհ թագավորին, որն արդեն մտահոգված էր հայերեն գիր ու գրականություն ստեղծելու խնդրով: Նա տեղեկացել էր, որ ասորի եպիսկոպոս Դանիելի մոտ պահվում են հայկական նշանագրեր: Թագավորը ոմն Վահրիճի ուղարկում է Դանիել եպիսկոպոսի ազգական Աբել քահանայի մոտ, որը, ստանալով թագավորի հրովարտակը, գնում է Դանիելի մոտ, ծանոթանում նրա մոտ պահված գրերին, ապա ուղարկում դրանք հայոց թագավորին:

Դանիելյան նշանագրերի մասին մատենագրական տարբեր աղբյուրներում կան բազմաթիվ, հաճախ իրար հակասող վկայություններ թե՛ դրանց քանակի, թե՛ բնույթի վերաբերյալ: 7-րդ դարի «Ամանուն ժամանակագրության» մեջ նշվում է, որ դանիելյան այբուբենն ուներ 29 կամ 24 տառ: Այս կապակցությամբ Հ. Մանանդյանը գրում է. «Աղբյուրներից մեջքերված վկայությունները հաստատում են, որ դեռևս Մ. Մաշտոցից առաջ գոյություն են ունեցել այսպես կոչված դանիելյան նշանագրեր, որոնք, հավանաբար, Մաշտոցն օգտագործել է հայերեն լեզվի հնչյունային առանձնահատկություններին համապատասխանող հայերեն լիակատար այբուբեն ստեղծելիս»³⁶:

Ստանալով հանկարծագյուտ նշանագրերը՝ Սահակն ու Մաշտոցը, ըստ Կորյունի վարքագրության, երկու տարի հայ մանուկներին Հայաստանի երկու մասերում կրթում են դրանցով, բայց երկու տարի անց համոզվում են, որ դրանք բավական չեն հայերենի վանկերն ու կապերն ամբողջությամբ արտահայտելու համար: Մաշտոցը, հավաքելով աշակերտների մի խումբ, նրանց հետ ուղևորվում է Ասորիք: Եղեսիա և Ամիդ քաղաքներում նրան սիրահոծար ընդունում են տեղի Ակակիոս և Բաբիլյաս եպիսկոպոսները: Իր աշակերտներին նա բաժանում է երկու խմբի, որպեսզի մի խումբը խորամուխ լիներ ասորական դպրության մեջ, մյուսը՝ հելլենական: Աստվածային հզոր աջն ուղղորդում է Մաշտոցին, և նա հղանում է հայոց նշանագրերը, անուններ տալիս տառերին, դասավո-

³⁶ Հ. Մանանդյան, Երկեր, Բ, Եր., 1978, էջ 454-455:

րում, վանկեր կազմում: Այբուբենի ստեղծումից հետո Մաշտոցը գնում է Սամոսատ և հույն գրագիր Հռովանոսի օգնությամբ վերջնականապես ճշտորեն որոշում հայոց տառերի գծագրությունը, կապակցելիությունը:

Այնուհետև իր աշակերտներ Հովհան Եկեղեցացու և Հովսեփ Պաղ-նացու հետ Մաշտոցը թարգմանում է Սողոմոնի «Առակաց» գիրքը: Հայոց նորագյուտ այբուբենով և «Առակաց» գրքի թարգմանությամբ Ասորիքից նրանք վերադառնում են Վաղարշապատ, որտեղ նրանց մեծ ոգևորությամբ դիմավորում են ժողովուրդը, թագավորը և կաթողիկոսը: Վերադառնալով Հայաստան՝ Մաշտոցն իր համախոհների հետ դպրոց-ներ է բացում, կրթում, թարգմանում:

Հիմնվելով տոմարական հավաստի հաշվումների վրա՝ ֆրանսիացի գիտնական Է. Դյուլոբիեն որոշել է Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտո-ցի մահվան թվականները: Ըստ այդմ, Մաշտոցը վախճանվել է 440 թվականի փետրվարի 17-ին՝ շաբաթ, իսկ Սահակ կաթողիկոսը՝ 439 թվականի սեպտեմբերի 7-ին՝ հինգշաբթի: Կորյունի վարքի վերջաբա-նում այս կապակցությամբ նշված է, որ այբուբենի գյուտը կատարվել է Մաշտոցի մահվանից 35 տարի առաջ, ուրեմն, ենթադրաբար, 406 թվականին: Այս թվականի ճշտությունը հաստատվում է նաև Կորյունի վերջաբանի մեկ այլ վկայությամբ, որը հայոց դպրության սկիզբ համա-րում է Հազկերտ Ա-ի (399-420) թագավորության 8-րդ տարին, այսինքն՝ դարձյալ մոտավորապես 406-ը:

Հայոց գրերի գյուտի տարեթվի որոշման խնդիրը ժամանակին բա-նասիրական լուրջ վեճերի տեղիք է տվել: Կորյունի «Վարք Մաշտոցի» բնագրի մեջ եղած մի շարք հակասություններ վեր են հանվել Գ. Տեր-Սկրտչյանի, Ն. Ադոնցի և Հ. Մանանդյանի աշխատանքներում: Գ. Տեր-Սկրտչյանը 1912 թվականին «Արարատ» հանդեսում տպագրում է մի հոդված՝ «Հայ գրերի 1500-ամյակի առթիվ», որտեղ կարևոր բացահայ-տումներ է կատարում՝ ժամանակագրական և փաստական անճշտու-թյուններ գտնելով Կորյունի բնագրում: Կորյունի կողմից հիշատակված՝ Ամիդի և Եդեսիայի եպիսկոպոսները չէին կարող 405-406 թվականներին օժանդակել Մաշտոցին, որովհետև Ամիդում Ակակիոսը եպիսկոպոս է եղել սկսած 420 թվականից, իսկ Բաբիլաս անունով եպիսկոպոս ընդ-

հանրապետ չի եղել, Եղեճիայում եղել է Բաբուլաս եպիսկոպոս, որը քահանայապետ է եղել 412-435 թվականներին: Ելնելով այս փաստերից՝ Գ. Տեր-Սկրտչյանը կարծում է, որ Կորյունի երկի վերջաբանում նշված 406 թվականին ոչ թե մաշտոցյան գրերի գյուտի տարեթիվն է, այլ դանիելյան նշանագրերի՝ Վաղարշապատ բերվելու տարեթիվը, իսկ գրերի գյուտը կատարվել է 412-416 թվականներին, երբ Մաշտոցը կարող էր հանդիպել Ակակիոսին և Ռաբուլասին և արժանանալ նրանց աջակցությանը: Ըստ այդմ, Մաշտոցն Ատրիքից Վաղարշապատ վերադարձել է ոչ թե Վռամշապուհի թագավորության Ջ տարում, այլ ԺՋ տարում: Կորյունի բնագրի Ջ թիվը նա առաջարկում է կարդալ ԺԶ: Այս ուղղումները ոչ միայն կասկածելի են, այլև հերքելի, բայց անհերքելի են ասորի եպիսկոպոսների պաշտոնավարության տարեթվերը. մի փաստ, որի համար, անշուշտ, բացատրություն պետք է լիներ:

Նշված խնդրին անդրադառնում է նաև Ն. Ադոնցը: Վերջինս «Հանդէս ամսօրեայ»-ում 1925 թվականին հրապարակում է «Անժամօթ էջեր Մաշթոցի եւ նրա աշակերտների կեանքից ըստ օտար աղբիւրների» աշխատանքը, որտեղ ի հայտ է բերում քրիստոնեության պատմության վերաբերող ոչ հայկական աղբյուրներում հիշատակվող նոր փաստեր Մաշտոցի կենսագրությունից, որոնք կամա թե ակամա զանց է առել նրա կենսագիր Կորյունը: Օտար աղբյուրներում վկայված է, որ Մաշտոցը ծանոթ է եղել Նեստորի ուսուցիչ Թեոդորոս Մոպսուեստացու հետ, որին խնդրել է պարսից մոգության դեմ աշխատություն գրել: Այս փաստը հիշատակված է Փոտ կամ Փոտիոս պատրիարքի հռչակավոր «Գրադարան» աշխատության մեջ: Ադոնցը եզրակացնում է, որ Մաշտոցին աջակցել են ոչ թե Ակակիոսը և Բաբուլասը, այլ Թ. Մոպսուեստացին, որի հերձվածողական գրվածքները խստորեն դատապարտվել են Եփեսոսի 431 թվականի տիեզերական ժողովում: Կորյունը հասարակ կենսագիր չէր, այլ եկեղեցական գործիչ և պետք է զերծ պահեր Մաշտոցին մատորականության հետ աղերսներից, որոնք խորշելի էին: Դավանաբանական նկատառումներով Կորյունը խմբագրել է Մաշտոցի ողջ կենսագրությունը: Ն. Ադոնցը հավանական է համարում, որ Մաշտոցը հայոց գրերը հորինած լինել 4-րդ դարի վերջում Թեոդորոս Մոպ-

սունեստացու աշակցությամբ: Թ՝ Մոպսունեստացին այդ շրջանի ամենահեղինակավոր և գիտնական եկեղեցական հայրերից մեկն էր, որը հայտնի էր Polyhistor - Բազմավեպ անունով³⁷: Այնուհետև Մաշտոցին նորաստեղծ նշանագրերի հնչագրական և գեղագրական պատկերն ամբողջացնելու համար օժանդակել է Կորյունի կողմից ևս հիշատակվող Հռոփանոս, իրականում՝ Ռուփինոս անունով քահանան, որը Մոպսունեստացու աշակերտն էր: Ռուփինոսը 399 թվականին Ասորիքից մեկնել էր Հռոմ և Պելագիոս քահանայի հետ դարձել պելագիական վարդապետության հիմնադիր: Այսինքն, ինչպես իր ուսուցիչը, շեղվել էր ուղղափառ դավանաբանությունից: Ինչպես գրում է Ն. Ադոնցը, «Կորինը հասարակ կենսագիր չէ, նա եւ եկեղեցական գործիչ է եւ իբր այդպիսին պետք է և իր գրիչը համակերպէր յետ-եփեսոսական տրամադրութեան: Հայոց կապերը Ասորիքի հետ այժմ պիտի խորշելի թուէր»³⁸: Իր քննության ավարտին նշանավոր հայագետ և աղբյուրագետ Ադոնցն առավել խիստ բնութագրում է տալիս Կորյունի «Վարք Մաշտոցի» երկին՝ իբրև սկզբնաղբյուրի. «Մաշթոցի կենսագիրը շատ հեռու է բաւարարելու այն պահանջներին, որ կարելի է առաջադրել մի աշակերտի, որ գրում է իր ուսուցչի կեանքը: Կորինը, որքան ճոռոմաբան, նոյնքան սակաւագէտ է: Գուցէ եւ ատելի գիտէ, քան յայտնում է մեզ: Խոստումնալից յառաջաբանը, ուր ուզում է նաւել «գիամատարած ալեօքն վարդապետական ծովուն», նման է շքեղ մուտքի, որ տանում է մի խեղճ տնակ: Ուստի եւ վերջաբանութիւնը, ուր յայտարարում է, որ «ոչ եթէ ի հին համբաւուց տեղեկացեալ» մատենագրում է, այլ «որոց մեր իսկ ականատես եղեալ», թողնում է բոլորովին հակառակ տպաւորութիւն»³⁹:

Ըստ Ղազար Փարպեցու՝ Վռամշապուհին թագավոր էր կարգել Շապուհ Գ-ն, որն իշխել է 383/4-388/9 թվականներին, ուստի Ն. Ադոնցը եզրակացնում է, որ Մաշտոցի կողմից գրերի գյուտը կատարվել է չորրորդ դարի վերջում՝ Շապուհ Գ-ին հաջորդած Վռամ Դ-ի թագավորու-

³⁷ Տե՛ս Ն. Ադոնց, Անժամօք էջեր Մաշթոցի եւ նրա աշակերտների կեանքից ըստ օտար աղբիւրների, «Հանդէս ամսօրեայ», թիւ 7-8, 1925, էջ 440-441:

³⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 439:

³⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 328:

թյան օրոք՝ 388/9-399 թվականներին: Ավելի որոշակի՝ գրերի գյուտը պետք է կատարված լիներ 383-392 թվականների միջև ընկած տասնամյակում:

1952 թվականին Հ. Մանանդյանը, ելնելով այս ակներև հակասություններից և հայ մատենագիտական աղբյուրների տարբեր վկայություններից, հատկապես Ղազար Փարպեցու և Ստեփանոս Տարոնացի Ասողիկի և Սամվել Անեցի քահանայի պատմություններից, իր «Հայոց գրերի գյուտի տարեթվի հարցի շուրջ» աշխատանքում կարծիք է հայտնում, ըստ որի՝ հայոց դպրությունը սկսվել է Վռամ Դ Կրմանի 4-րդ տարում, այսինքն՝ 391/2 թվականին, ոչ թե 405-406 թվականներին: Վռամ-շապուիը թագավոր է դարձել իր եղբայր Խոսրով Դ-ից հետո՝ 387/8 թվականին, և թագավորել է երկար 25-26 տարի⁴⁰: Այսուհանդերձ, այսօր բանասիրության մեջ ավանդապահորեն գրերի գյուտի համար ընդունելի է համարվում 405 թվականը:

ԴԱՍԱԿԱՆ ԳՐԱԲԱՐԻ ԼԵԶՎԱՌՃԱԿԱՆ ԴԱՍԵՐԸ

Գրերի գյուտի ժամանակից մինչ 460 թվականը հայոց լեզվի պատմության մեջ հայտնի է *մեսրոպյան հայերեն* կամ *դասական գրաբար* անվամբ, որը համարվում է գրական հին հայերենի ամենակատարյալ շրջանը՝ ոսկեդեմիկ, ոսկեդարյան գրաբարի շրջանը: Այդուհանդերձ, այս շրջանում գրված երկերը ևս տարբերվում են իրենց լեզվաոճական որակներով, որոնց դասակարգմամբ առաջինը զբաղվել է Նորայր Բյուզանդացին իր «Կորին վարդապետ եւ նորին թարգմանութիւնք» հայտնի աշխատության մեջ, ապա՝ Հ. Աճառյանը, Վ. Առաքելյանը և այլք: Ոսկեդարյան շրջանից մեզ հասած գործերի թիվը չորս տասնյակից փոքրինչ ավելի է, և դրանք բաժանվում են չորս դասի:

Ա դասը կոչվում է **Եզնիկյան** և ներառում է հետևյալ գործերը՝ Աստվածաշունչ, Ոսկեբերանի՝ թվով ինը գործերի թարգմանությունները՝

⁴⁰ Տե՛ս Հ. Մանանդյան, Երկեր, Բ, Եր., 1978, էջ 503-507:

Մեկնութիւն Եսայեայ, Սաղմոսաց, Մատթէի, Պօղոսի, Եւսեբեայ Եմեսացոյ «Ճառքը», Եւսեբիոսի «Քրոնիկոնը», Արրահամ Խոստովանողի «Վկայք Արեւելիցը» և դավանաբանական մի շարք այլ թարգմանություններ: Այս դասի միակ ինքնուրույն երկը Եզնիկի «Եղծ աղանդոցն» է:

Բ դասը՝ **Եփրեմյան**, ընդգրկում է հետևյալ երկերը՝ Եփրեմ Ասորոյ «Մեկնութիւնք Հին կտակարանի», «Մեկնութիւն գործոց առաքելոց եւ թղթոցն Պօղոսի» գործերը, Իգնատիոս Հայրապետի «Թուղթքը», Եւսեբիոս Կեսարացոյ «Պատմութիւն եկեղեցականը», ընդամենը 11 գործ. բոլորը թարգմանություններ են ասորերենից:

Գ դասը՝ **Կյուրեղյան**, ներառում է հետևյալ գործերը՝ Կիւրեղ Երուսաղեմացոյ «Կոչումն ընծայութեան», Բարսեղ Կեսարացոյ «Վեցօրեայքը» և իր «Պատարագամատոյցը», Ոսկեբերանի մնացյալ մեկնությունները և Ճառերը, «Թուղթք Սահակայ եւ Մաշտոցի», «Պատմութիւն Հարանց Եզիպտացոց», ընդհանուր թվով 7 կտոր՝ բոլորը թարգմանված հունարենից և ասորերենից:

Դ դասը՝ **Ագաթանգեղյան**, ընդգրկում է հիմնականում հայերեն բնագրեր և սակավաթիվ թարգմանություններ, փոքր դաս է՝ ընդամենը հինգ երկ՝ Ագաթանգեղոսի, Կորյունի, Բուզանդի, Եվթաղի գործերը և Մակարայեցիի:

Այս չորս դասերի ընդունված բնորոշումները հետևյալներն են. Եզնիկյանը՝ ամենականոնավոր, ճիշտ, հստակ, արվեստավոր և գեղեցիկ, Եփրեմյանը ամենապարզն է և ամենահասարակը, Կյուրեղյանը համարվում է միջանկյալ բարեխառն ոճ՝ առաջին երկուսի մեջտեղում, իսկ Ագաթանգեղյանը պերճ է, բազմաբարդ, մթին ու հաճախ անկանոն⁴¹: Հ. Աճառյանը այս դասերի տարբերությունը չի համարում տեղի (յմա՝ բարբառայնության) և ժամանակի արդյունք, քանզի բոլորի հեղինակներն էլ Մեսրոպի և Պարթևի աշակերտներն էին, այլ հեղինակների կրթության, անհատական ոգու և հայացքների արգասիք:

Ընդհանուր առմամբ, մեսրոպյան հայերենի համար Հ. Աճառյանն առանձնացնում է հետևյալ կարևոր տարբերակիչ գծերը:

⁴¹ Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս II, Եր., 2013, էջ 76-78:

Մեսրոպյան հայերենում չկան մի շարք բառեր՝ հիմնականում հունարան և բարբառային, որոնք սովորական են հետդասական հայերենում՝ **արփի, հրաշք, փեթակ, կենցաղ, քանակ, որակ, տեսակ, բայ, բառ, սեռ, տառ**: Այս բառերի փոխարեն կիրառվում էին այլ արմատներ, օրինակ՝ **հրաշք** բառի փոխարեն՝ **գօրութիւն, արուեստ, նշան, սքանչելիք, փեթակ**-ի փոխարեն՝ **մեղուանոց, տեսակ** բառի փոխարեն՝ **ազգ** և այլն:

Մի քանի բառեր հնչյունական այլ ձևեր ունեն՝ **արծուի, հիւսիսի, պատասխանի, արուեստ**, իսկ հետին շրջանում դառնում են **արծիւ, հիւսիս, պատասխան, արիւեստ**:

Չկան հունարան նախածանցներով բառեր՝ *սպա-, առ-, բաղ-, գեր-, դեր-, ենթ-, հու-, մակ-, յար-, ներ-, շաղ-, շար-, պար-, վեր-, տար-, տրամ-, սյոր-, փար-*:

Ամեն բառը դրվում է միայն բայարմատների վրա և որոշյալ դերանուն է՝ **ամենագետ** - ամեն ինչ իմացող, **ամենատես** - ամեն ինչ տեսնող, իսկ ուշ շրջանում սկսում է դրվել նաև ածականների վրա՝ *ամենաքարի, ամենամեծ* և այլն:

-Ուի ածանցով իգական բառեր չկան. միակ վկայությունը՝ *թագուհի*, այն էլ՝ սակավ և հիմնականում *ղշխոյ* բառի հետ:

Չան, ճեմ ձևությներով բառեր չկան, այնինչ դրանք ուշ շրջանում շատ տարածված են՝ **բազմազան, այլազան, սրբազան, լուսաճեմ, վեհաճեմ, երկնաճեմ** և այլն:

-Ային ածանցն օգտագործվում է միայն տեղ ցույց տվող բառերի հետ՝ **լեռնային, դաշտային, քաղաքային** և այլն, իսկ **երկնային, աստվածային, մարդկային, հրեշտակային** բառերը ուշ շրջանի ձևեր են: Դրանց փոխարեն վկայված էին՝ **երկնաւոր, աստուածեղէն, մարդկեղէն** կազմությունները:

-Ող ձևությով դերբայները տարածված չեն, փոխարենը **որ** հարաբերականով և երկրորդական նախադասությամբ կառույցներ են՝ **որ շարժի՝ շարժող-ի, որ մտին՝ մտանող-ի** փոխարեն: **-Ող**-ի փոխարեն հաճախ ունենք **-իչ** մասնիկը՝ **արարիչ, փրկիչ, փոփոխիչ** և այլն:

Իլ-ով անորոշ դերբայ չի գործածվում, քեև սահմանական եղանակի ներկա ժամանակից սկսած՝ ի հայտ է գալիս **ի խոնարհիչը՝ -իմ, -իս, -ի,**

-իմք, -իք, -ին, ինչպես՝ հայել - հայիմ, մոլորել - մոլորիմ և այլն: Ուշ շրջանում արդեն վկայված են **իլ**-ով անորոշ դերբայները՝ **հայիլ, մոլորիլ**:

Ան- ժխտականի փոխարեն մեպոպյան հայերենում ընդունված էր գործածել *առանց* նախադրությամբ ձևը՝ *առանց շիջանելոյ, առանց հասանելոյ, առանց տեսանելոյ*, փոխանակ՝ *անչէջ, անհաս, անտես*:

Քաղաքների և երկրների անունները կազմվում էին հատկացուցչով՝ **աշխարհ Պաղեստինացոց, աշխարհ Հայոց, քաղաք Սամոսատացոց**:

Մաշտոցյան շրջանում ընդունված էր պարզ բայերի փոխարեն դարձվածներ կամ բայական հարադրություններ կիրառել՝ **աղօթս առնել**, փոխանակ **աղոթել, երկիր պագանել - երկրպագել, պատասխանի տալ- պատասխանել**:

Բայական կառույցներից գերիշխում էին նույն բայարմատից բաղադրված լրացումներով ձևերը՝ **գոյանալոյ գոյացեալսն գոյարար, մեծապատիւ մեծաբեայ, շահ մեծաշահ է մեծատանց** և այլն:

ՀՈՒՆԱԲԱՆ ՀԱՅԵՐԵՆ

Հինգերորդ դարավերջին գրավոր դարձած հայոց լեզուն մեծ փոփոխությունների էր ենթարկվում: Արդեն խորանում և ծավալվում էր թարգմանչական հզոր շարժումը՝ ասորերենից, վերջին շրջանում, հատկապես հունարենից, հսկայածավալ դավանաբանական, գիտական գրականություն էր թարգմանվում Մաշտոցի և Սահակ Պարթևի աշակերտների կողմից: Հայաստանում ձևավորվել էր Հունաստանում աշխարհիկ բարձր կրթություն ստացած շնորհալի և մեծ հավակնությունների տեր երիտասարդների մի սերունդ, որն ամեն ինչում կատարելության էր ձգտում: Գիտությունների և մշակույթի հայրենիք համարվող Հունաստանում ձևավորված աշխարհայացքը հելլենասեր մտավորականների մի մեծ բանակ էր ձևավորում, որը, տոգորված հայրենասիրությամբ և մրցակցային խանդավառությամբ, փորձում էր ապացուցել, որ հայոց լեզուն ոչնչով չի զիջում հունարենին՝ ո՛չ իր բառակազմությամբ, իմաստա-

բանությամբ, ո՛չ էլ քերականական կամ ոճական բազմազանությամբ: Հունարենը համարվում էր կատարյալ լեզու, ուստի հայերենում բացակայող լեզվական այն իրողությունները և կառույցները, որ վկայված էին հունարենում, սկսում էին գործուն փոխառվել: Հունաբանությունն ամենից առաջ դրսևորվում էր բառապաշարում, բայց քանի որ մեր մտավորականությունը ստեղծարար էր, նա չէր կարող բավարարվել պարզ փոխառություններով: Հելլենամետ թարգմանիչները և մտավորականները, հենվելով հայերենի բարբառների և ներքին աղբյուրների ընձեռած նյութի վրա, ստեղծում են մեզ այնքան անհրաժեշտ երկու տասնյակից ավելի նախածանցներ, բառակազմական նոր կաղապարներ, բառապատճենումներ են կատարում, ձևավորում են հայոց գիտական եզրաբանությունը: Փոփոխությունների ալիքն աստիճանաբար բառապաշարից անցնում է ձևաբանությանը և շարահյուսությանը: Հայերենը հնդեվրոպական մայր լեզվից չէր ժառանգել քերականական սեռի, երկակի թվի կարգերը, որոնք, սակայն, պահպանվել էին հունարենում, բացի այդ՝ հունարենում բայն ուներ գերակատար և հարակատար ժամանակներ, նույնիմաստ դերբայներ: Հունաբան հեղինակները ստեղծում են հայերենի նոր քերականություն, որտեղ ճգնում են լրացնել այս բացակայող օղակները: Ինչպես վկայում է Ս. Ղազարյանը, «հունաբան հայերենը եղել է հելլենասեր ուղղության ձեռքին ամենաուժեղ մի գործիք և օգտագործվել է հայ լուսավորչական եկեղեցու և պարսկական կողմնորոշում ունեցող հայ հոգևորականության դեմ այդ շրջանում մղված պայքարում: Եվ չնայած իր արհեստական շատ կողմերին՝ նա դրական մեծ դեր է կատարել հայ ժողովրդի մշակութային կյանքում՝ օժանդակելով աշխարհիկ գրականության զարգացմանը և հայ գիտական քերականության մշակմանը»⁴²: Հ. Աճառյանը, անդրադառնալով հունաբանությանը, նշում է, որ Ե դարից հետո, երբ հայերը ձեռնամուխ եղան հույների փիլիսոփայական, գիտական գործերի թարգմանությանը, տեսան, որ «հայերենը բավական չէ փիլիսոփայական, արվեստական մշակված լեզվի բոլոր նրբությունները պատկերացնելու: Այդ բոլորից պահանջ

⁴² Ս. Ղազարեան, Հայոց լեզուի պատմություն, Անթիլիաս-Լիբանան, 2007, էջ 218:

զգացվեց հայերենի այս տկար կողմը գորացնելու, պակասությունը լրացնելու»⁴³:

Հունաբան հայերենի հիմնադրի անունը մեզ չի հասել, Հ. Աճառյանը հիշատակում է պահպանված ավանդությունը, որտեղ այս դպրոցի հիմնադիր է համարվում ոմն Դավիթ Անհաղթ Հարքացին կամ Ներգյունացին, որն ապրել է V դարի երկրորդ կեսում, սովորել է Աթենքում, կայսեր ներկայությամբ մրցել հույն փիլիսոփաների հետ, հաղթել բոլորին: Գ. Ջահուկյանի ենթադրությամբ, այս Դավթի անվան հետ է կապվում Դիոնիսոս Թրակացու «Քերականական արվեստ» երկի հայերեն փոխադրությունը⁴⁴:

Հունաբան դպրոցի գործունեությունը, ըստ Հ. Աճառյանի, ընդգրկում է Ե դարավերջից մինչև Ը դար ընկած ժամանակահատվածը⁴⁵: Ս. Ղազարյանը, հետևելով Հակոբ Մանանդյանին, հունաբան դպրոցի գործունեությունը սահմանափակում է երկու դարով՝ 5-րդ դարի վերջից մինչև 7-րդ դարի վերջը⁴⁶: Հակոբ Մանանդյանը հունաբան թարգմանությունների երեք շերտ է տարբերում. Ա) առաջին խմբի մեջ են Դիոնիսիոս Թրակացու «Արուեստ քերականի», «Գիրք Պիտոլից» և Փիլոն Եբրայեցու որոշ երկերի թարգմանությունները, որոնք իրենց բառապաշարով և քերականությամբ գրեթե չեն տարբերվում միմյանցից և ստեղծվել են ոչ ուշ, քան VI դարի առաջին կեսը: Վաղ հունաբան այս գործերում դեռ չկան այն բոլոր նախաձևացները, որոնք լայն կիրառություն են ստացել հետագա շրջանի թարգմանություններում: Այսպես՝ *հակ-* նախաձանցի փոխարեն հանդիպում է *հակառակ* բառը, գործօրինակ՝ *հակառակամարտ*, *հակառակակիր*, *հակառակամէտ*, *հակառակադրութիւն*, *հակառակադիր*: Յունարեն *αντι-*, *δια-*, *μετα-* նախդիրները չեն թարգմանվում *հակ-*, *դար-*, *փոխ-* նախաձանցներով, դրանց փոխարեն *խուն*, *քոդ*, *հասարար*, *ջոկ* բառերն են գործածվում: Բ) Թարգմանությունների երկրորդ շերտի մեջ Տիմոթեոս Կուզի «Հակաճառութիւնք»-ն է,

⁴³ Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս II, Եր., 2013, էջ 142:

⁴⁴ Տե՛ս Գ. Ջահուկյան, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում (V-XV դդ.), Եր., 1954, էջ 61-63:

⁴⁵ Տե՛ս Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 142:

⁴⁶ Տե՛ս Ս. Ղազարեան, նշվ. աշխ., էջ 222-223:

Արխատտեյի «Յաղագս մեկնութեան եւ ստորոգութեանց» թարգմանությունները և Յամբոլիքոսի մեկնությունները, որտեղ արդեն վկայված են *հակ-, փար-, փաղ-, ներ-, շաղ-, փար-, մակ-* նախածանցներով կազմությունները և Գ) վերջին շրջանի թարգմանություններում՝ «Սահմանք իմաստասիրութեան», «Վերլուծութիւն ներածութեան Պորփիրի», «Վասն բաժանման», «Մեկնութիւն ստորոգութեանցն Արխատտեյի», բացի բառապաշարից, էապես փոփոխված են նաև ձևաբանական և շարահյուսական կառույցները, որի պատճառով դրանք հույժ դժվարըմբռնելի են և հասկանալու համար հաճախ անհրաժեշտ է դիմել հունարեն բնագրերին⁴⁷:

Հունարան հայերենի բնութագրության համար, նախ՝ առանձնացնենք բառապաշարում կատարված հիմնական փոփոխությունները, ապա՝ ձևաբանության մեջ արված նորամուծությունները: Հունարանները հայերենի բառապաշարը հարստացրին նախածանցներով, այսպես՝ *սպ-, առ-, արուր-, բաղ-, բաց-, գեր-, դեր-, ենթ-, հակ-, համ-, հու-, մակ-, յար-, ներ-, շաղ-, շար-, պար-, սրոր-, վեր-, փար-, փրամ-, փաղ-, փար-, փող-*: Այս մասնիկների ստեղծման համար հունարանները օգտագործել են հայերենի նախդիրները, մակբայները և տարբեր այլ արմատներ: Հիշյալ նախածանցների մեծ մասն այսօր էլ գործածական է հայերենում, և առանց դրանց անհնար է պատկերացնել արդի հայերենի գիտական բառապաշարը: Բայց հունարանության երկրորդ և երրորդ շրջաններում հայ թարգմանիչները սկսեցին կուրորեն թարգմանել այն բոլոր հունարեն բառերը, որոնք կազմված էին նախամասնիկներից՝ առանց հաշվի առնելու այն հանգամանքը, որ մեսրոպյան հայերենում արդեն կային դրանց համագոր և համարժեք կազմություններ: Այս երևույթն ունեցավ և՛ բացասական, և՛ դրական հետևանքներ. արհեստական կառույցների մի մասն անհասկանալի էր, ուստի չմերվեց մեր բառապաշարին, բայց որոշ կազմություններ հարստացրին հայերենի հոմանշային շարքերը՝ որոշ իմաստափոխությունների շնորհիվ դառնալով համագործածական: Բերենք հունարան նորակազմությունների օրինակներ մեսրոպյան հա-

⁴⁷ Հմմտ. **Հ. Մանանդյան**, Հունարան դպրոցը և նրա զարգացման շրջանները, Վիեննա, 1925, էջ 107-174:

յերենում առկա համարժեքներով՝ *սպաքանութիւն - ջարագովութիւն, սպուսել / սպասոցել-ժիւրել, ուրանալ, մերժել, առանկանիլ - պարահել, արորոնութիւն-իրաւունք, առաւելութիւն, բաղդարութիւն - համեմարութիւն, բացաղրել-մեկնել, հակակայութիւն - խորի, հոմանուն - անուանակից, մակերեսութիւն-երեսք, յարաղրել - կցել, ներկայ - առաջիկայ, ներգործել-ազդել, շաղկապ - զօր, շարունակ - հանապազ, պարունակութիւն- բովանդակութիւն, վերծանել - ընթեռնուլ, տարացոյց - տարինակ, տարբերել - որոշել, զանազանել, տարբեր - ընդհատ, տարալսութիւն - անհնազանդութիւն, տրամադրութիւն - զգածումն, յօժարութիւն, փաղառութիւն - վանկ, փոխարկել-փոխել* և այլն:

Փիլիսոփայական երկերի հումարենում կային նաև բարդ նախամասնիկավոր կառույցներ, որոնք ևս նույնությամբ թարգմանվեցին հայերեն՝ *առարագործել - յաւելուլ ինչ, տարբաղմատ - յօդուածոյ (մասնիկ), մակշաղկապել - կապել երկիցս, բաղարորադրութիւն - հաւանութիւն, ներպարունակել - բովանդակել* և այլն:

Բացի նախամասնիկներից՝ հումաբանները հայերենում ստեղծեցին նաև բարդությունների հումատիպ կաղապարներ, կատարեցին արհեստական բառապատճենումներ, բառացի թարգմանում էին ամեն ինչ, թեև այդ բառերի դիմաց հայերենում կային համապատասխան արմատներ կամ բարդություններ, այսպես՝ *արուսեսկ* բառի համար բառացի թարգմանությամբ ստեղծվեց *վաղորդայնագեցիկ*, Հ. Աճառյանի բնորոշմամբ, *անճոռնի* բառը, *յաղթասիրել - վիճել, հպարտանալ - պարտասիրել*: Որոշ բարդություններում հումարենի նմանողությամբ փոխվեց արմատների դասավորությունը՝ բանասեր - *սիրաբան*, գործատեր - *սիրագործ*, քաղաքամայր - *մայրաքաղաք*: Այնուհետև հայերենում առկա արմատներով սկսեցին կազմել տարբեր նոր բարդություններ՝ *դժուարաշեն, դժուարապարսի, դժոխաշենարկելի, դժոխաբանել, դժոխակենդան, դժոխելանելի, դժոխորսալի*: Մաշտոցյան *երեք* արմատին համարժեք՝ ստեղծեցին *եռ* արմատը՝ *եռօրեայ, եռանկիւն, եռամսեայ* և այլն:

Ձևաբանության մեջ հումաբաններն արհեստականորեն ստեղծեցին արական, իգական, չեզոք սեռերի տարբեր բառաձևեր: Հայերենի

գոյականների, ածականների պարագայում դա անհնար եղավ, ուստի հունաբանները բավարարվեցին որոշ թվականներով և դերանուններով: Օրինակ՝ *մի* - իգական, *եզ* - արական, *մու* - չեզոք, *սա*, *դա*, *նա* դերանունների դեպքում ունենք՝ *սէ*, *դէ*, *նէ* իգական սեռի տարբերակները, թեք հոլովածների համար ևս հնարեցին տարբերակներ՝ *սեթա-սարա*, *սեմա*, *սէք-սայք*, *սացա-սոցա*, *նոցա-նոջա* և այլն: Եզակի - հոգնակի թվերի հետ մեկտեղ փորձեցին տարբերակել երկակի թիվը, Դիոնիսիոս Թրակացու քերականության մեջ երկակի թվի ցուցիչը *ու*-ն է՝ *Պեյրրու*, *Պեյրրու*, *Պեյրրոսք* եռանդամ հակադրությամբ: Կամ *այսու-այդու-այնու*, որ նշանակում են *այս երկուսը*, *այդ երկուսը*, *այն երկուսը*, *մոնք-դոնք-նոնք*, որ նշանակում են՝ *մենք երկուսով*, *դուք երկուսով*, *նրանք երկուսով*: Հոլովական նորամուծություններից նշենք սեռական հոլովի *ոջ*, *ոյր*, տրականի *ոււ* մասնիկները, բացառականի համաի *ի/յ* նախդրի փոխարեն *ըն/ն* մասնիկները (*ըն*-ը բաղաձայնով, *ն*-ն ձայնավորով սկսվող բառերի համար): Այսպես՝ *նորա*, *նմա*, *նովա* գրաբարյան ձևերի փոխարեն ստեղծեցին *նոյր*, *նում*, *նով* տարբերակները, գոյականների հոլովման հարացույցում սեռականի և բացառականի նոր ձևեր՝ *մարդոյ* > *մարդոյր*, *ձիոյ* > *ձիոյր*, *ի րեղըռջէ* > *ընրեղոյր*:

Հունաբանները ստեղծեցին դասական թվականների նոր կառույցներ՝ *իր* կամ *երիր* ածանցներով՝ *երկիր*, *երիր*, *չորիր*, *հնգերիր*, *վեցերիր*: Կազմվեցին նոր բառածներ՝ *որզոն*, *որզան*, *ոքար*, *հիզան*, *հիքար* = որպես, ինչպես, *հայո* = այո, *թարց* = առանց, *սերկ*, *սերկեան* = այսօր և այլն:

Ամենագգալի փոփոխությունները կատարվում են բայական համակարգում, որտեղ հունաբանները ստեղծում են երկակի թվով խոնարհում, կրավորականի նոր ձև, նոր դերբայներ և ժամանակներ: Իբրև օրինակ՝ սովորաբար բերում են Դիոնիսիոսի քերականության հայերեն փոխադրությունից քաղված *կոփել* բայի հարացույցը: Հունարենի նմանողությամբ հայերենում բայի համար տարբերակվում են ներկա և անկատար, հարակատար և գերակատար, կատարյալ և ապառնի վեց ժամանակները չորս եղանակների համար՝ սահմանական, հրամայական, ըղձական, ստորադասական: Բոլոր եղանակների բայածներն անխտիր

ունեին ներգործակերպ և կրավորակերպ խոնարհումներ, եզակի, երկակի և հոգնակի թվեր, ներկա, անկատար, հարակատար, գերակատար, կատարյալ և ապառնի ժամանակներ: Իբրև հարակատարի և գերակատարի ցուցիչ՝ բերվում է ածականը՝ *կոփել-էկոփել, էկոփոցել, էկոփիլ, էկոփիցիլ*: Կրավորականի ցուցիչը *ի-ն* էր, երկակի թվինը՝ *ո-ն, ու-ն* կամ *ուլ-ը*: Չորօրինակ՝ ներգործակերպ խոնարհման սահմանական ներկան եզակի թվում ուներ այս պատկերը՝ *կոփեմ, կոփես, կոփէ*, երկակին՝ *կոփում, կոփոս, կոփոյ*, հոգնակին՝ *կոփեմք, կոփէք, կոփենք*: Կրավորակերպ խոնարհման դեպքում եզակին՝ *կոփիմ, կոփիս, կոփի*, երկակին՝ *կոփումս, կոփուս, կոփուլ*, հոգնակին՝ *կոփիմք, կոփիք, կոփինք*⁴⁸: Ստեղծվում է աներևույթ եղանակը՝ ներգործական և կրավորական տիպերով, այսպես՝ ներգործական ներկան և անկատարը՝ *կոփեմ*, կրավորականը՝ *կոփիլ*, ներգործական հարակատարը և գերակատարը՝ *էկոփեմ, էկոփոցեմ*, կրավորականը՝ *էկոփիլ, էկոփիցիլ*, անորոշը՝ *կոփոցել/ կոփոցիլ*, ապառնին՝ *կոփոցոցեմ, կոփոյոցել/ կոփոցոցիլ, կոփոյոցիլ*: Մյուս եղանակների ժամանակաձևերն առավել աղավաղված և գրաբարի խոնարհման հարացույցից շեղվող ձևեր ունեին, մման նորակազմություններն ի հայտ եկան հունաբանության ուշ շրջանում և բավական արագ վերացան՝ ոչ մի ազդեցություն և հետք չթողնելով մեր լեզվի հետագա զարգացման վրա:

Շարահյուսական մակարդակում հունաբանների նորամուծությունները դարձյալ արհեստական էին. նրանք խոսքը կառուցում էին հունարենի շարադասությամբ և համաձայնության կանոններով: Ըստ այդմ՝ ածականները և դերբայները միշտ համաձայնեցվում էին իրենց որոշյալ գոյականների հետ, թեև հայերենը դեռևս հնագույն շրջանից միտում ուներ որոշիչների շարադասությունը դարձնել նախադաս, իսկ նախադաս որոշիչներն էլ չհամաձայնեցնել որոշյալների հետ ո՛չ թվով, ո՛չ հոլովով:

Այսպիսով՝ ակնհայտ է, որ հունաբան հայերենը գրական մշակվածության ենթարկված գրաբարի տարբերակներից մեկն է: Հունաբանության ներկայացուցիչների լեզվաշինական գործունեության հիմքում ըն-

⁴⁸ Խոնարհման ամբողջ հարացույցը տե՛ս Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 149-154:

կած էին ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ գործոններ: V դարավերջին պարզ դարձավ, որ հայերենն իր բառապաշարով և բառակազմական կաղապարներով չի բավարարում լեզվի զարգացման պահանջները, ուստի ստեղծվեցին բազմաթիվ նոր բառ-անվանումներ, ածանցներ, անգամ արմատներ, բարդություններ և պատճենումներ, որոնց շնորհիվ զարգացավ հայոց գիտական եզրաբանությունը, համալրվեց մեր բառաֆոնդը: Ինչ վերաբերում է քերականության մեջ կատարված փոփոխություններին, ապա դրանք բոլորը արհեստական էին, չէին բխում մեր լեզվի բնույթից, այդ պատճառով էլ մնացին իբրև գրքային եզակի տարբերակներ՝ չամրակայվելով կենդանի խոսքում:

ԼԱՏԻՆԱԲԱՆ ՀԱՅԵՐԵՆ

Լատինաբան հայերենը ստեղծվեց կաթոլիկ եկեղեցու և կաթոլիկ հայրերի թարգմանական, գրահրատարակչական և քարոզչական եռանդուն գործունեության շնորհիվ: Պապական իշխանությունը 15-16-րդ դարերից սկսյալ՝ նյութական, գիտամշակութային, ինչպես նաև մարդկային հզոր ներուժ է ներդնում մեր հայրենիքում կաթոլիկ դավանանքի տարածման և ամրակայման ուղղությամբ, որի հետևանքով բազմաթիվ գրագետ, հայրենասեր մարդիկ սկսում են բառարաններ կազմել, հայագիտությամբ զբաղվել, գրական երկեր ստեղծել, նրանց աշխատանքները սկսում են տպագրվել և տարածվել Հռոմի գործուն աջակցությամբ, և, ինչպես Հ. Աճառյանն է բնորոշում, աստիճանաբար ձևավորվում է այն մտայնությունը, թե «լատինաբան հայերենն է բարձր և գիտական լեզու», որին պետք է ձգտեն բոլոր մեծ գրողները և հայ գրագետները⁴⁹: Լատինաբան հայերենի գործածության համար առանձնացվում է երկու դար՝ 1580-ական թվականներից մինչև 18-րդ դարի վերջը: Հ. Աճառյանն այն կոչում է ոչ թե ունիթոռական, այլ քոլեջյան հայերեն, քանզի դրա ստեղծողներն ու կրողները Հռոմի դպրոցում ուսա-

⁴⁹ Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս II, Եր., 2013, էջ 323:

նած և ձևավորված հայ կաթոլիկ վարդապետներն էին⁵⁰։ Սակայն լատինաբանության ծագման և տարածման ժամանակագրական սահմանների ճշգրտման առումով վճռորոշ է Վ. Համբարձումյանի տեսակետը, որը, ուսումնասիրելով լատինաբանության դրսևորումները 14-17-րդ դարերի ինքնուրույն և թարգմանական երկերում, նշում է. «Այն տեսակետը, թե բուն լատինաբանությունը երևան է գալիս 17-րդ դ., ճիշտ է միայն այն նկատառումով, որ 14-րդ դ. սկիզբ առած երևույթը թուլանում և գրեթե դադարում է գոյություն ունենալուց՝ ընդհանուր մտավոր կյանքի անբարենպաստ պայմանների հետևանքով, վերելք է ապրում հետագայում՝ համեմատաբար տանելի կամ նպաստավոր պայմաններում»⁵¹։ Այսինքն՝ լատինաբանությունը ծագել է 14-րդ դարում, ապա առժամանակ անկում ապրել։ Լատինաբանության ծաղկման շրջանը 17-րդ դարն էր, իսկ մայրամուտը սկսվեց Վենետիկի Մխիթարյան հայրերի գործունեության շնորհիվ, որովհետև թե՛ Մխիթար աբբան, թե՛ նրա հետևորդները, լինելով կաթոլիկներ, հայկաբան գրաբարի ջատագովներ էին և լատինաբան հայերենը համարում էին գրաբարին խորթ և արհեստական լեզու։ Վ. Համբարձումյանի ձևակերպմամբ՝ «Մխիթար Մեթաստացին և նրա ներհուն աշակերտները հետևողական ու անդադրում հակառակություն» էին ձեռնարկել լատինաբանության դեմ, որը պսակվում է լիակատար հաջողությամբ⁵²։ Վենետիկում 1779 թվականին Մ. Չամչյանի «Քերականութիւն հայկազեան լեզուի» աշխատության հրատարակումը Հ. Աճառյանը և Գ. Ջախուկյանը գնահատում են իբրև լատինաբան հայերենի մահը, գոյության դադարումը։

Վ. Համբարձումյանն այս կապակցությամբ գրում է, որ թեև լատինաբանությունը հաղթահարվում է 18-րդ դարի 80-ական թվականների սկզբին՝ շնորհիվ Մխիթարյանների գործադրած ջանքերի, այնուամենայնիվ հետագայում ևս գրավոր աղբյուրներում հանդիպում են լատինաբան ձևերի կիրառություններ, բայց դրանք ինքնաբերաբար էին կի-

⁵⁰ Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս II, էջ 311։

⁵¹ Վ. Համբարձումյան, Լատինաբան հայերենի պատմություն, Եր., էջ 27։

⁵² Տե՛ս նույն տեղում, էջ 115։

րառված, ավանդույթի ուժով⁵³: Հետագոտողը լատինաբանության շրջանը համարում է հայոց լեզվի պատմության ուրույն մի վիճակ, որը տևել է 460-ից ավելի տարի: Նա տարբերում է 3 ենթաշրջան՝ 1. լատինաբան հայերենի սկզբնավորման և թուլացման ենթաշրջան (14-15 թդ դդ.), 2. լատինաբան հայերենի անկման և վերականգնման ենթաշրջան (16-17-րդ դդ.), 3. լատինաբանության հաղթահարման շրջան (18-րդ դ.)⁵⁴:

Լատինաբան հայերենի սկզբնավորումը կապվում է 1584 թվականին Հռոմում ստեղծված Հավատո տարածման միաբանության հետ, որին հաջորդում է առանձին հայկական տպարանի հիմնումը, այս տպարանը մինչև 1728 թվականը տպագրում է հայերեն բազմաթիվ կարևոր գրքեր՝ Աստվածատուր Ներսեսովիչի «Բառգիրք լատինացոց եւ հայոց», մի շարք քերականություններ՝ Կղեմես Գալանոսի, Հովհաննես Հոլով Կոստանդնուպոլսեցու, աստվածաբանական թարգմանություններ՝ Թովմա Աբվինացու, Ալբերտ Մեծի, Բարդուղիմեոս Մարաղացու, Պետրոս Արագոնացու երկերի և այլն:

Լատինաբան հայերենի հիմնադիրները Հռոմում կրթություն ստացած և լատիներենը կատարյալ, բարձր լեզու համարող հայ կաթոլիկ վարդապետներն էին, հար և նման 5-րդ դարավերջին Հունաստանում բարձր կրթություն ստացած այն հայ երիտասարդներին, որոնք տպավորված հունարենով ստեղծված հարուստ գրականությամբ և գիտությամբ, սկսեցին թարգմանություններ կատարել ու գրքեր գրել՝ հունարենի լեզվական առանձնահատկությունները փոխանցելով հայերենին: Սակայն եթե հունաբանների նորարարությունների որոշ մասը ձուլվեց հայերենին և հարստացրեց մեր բառակազմական կաղապարները, հիմնադրեց հայոց գիտական տերմինաբանությունը, բառապաշարը, ապա լատինաբանների ազդեցությունն աննշան եղավ:

Լատինաբան հայերենի ազդեցիկ ներկայացուցիչներից են Հովհաննես Հոլով Կոստանդնուպոլսեցին և Բարսեղ Հոլով Կոստանդնուպոլսեցին: Հովհաննես Հոլովի գրած քերականությունը բավական հավակնոտ անվանում ուներ՝ «Զտոթիւն հայկաբանութեան» (Հռոմ, 1674):

⁵³ Տե՛ս Վ. Համբարձումյան, նշվ. աշխ., էջ 102-103:

⁵⁴ Հմմտ. նշվ. աշխ., էջ 103-118:

Լատինաբանները բառակազմության մեջ ընդունում են հունաբանների ստեղծած բոլոր նախամասնիկները՝ դրանցով կազմելով տարբեր նոր բառեր, որոնք, սակայն, չարմատավորվեցին իրենց արիեստականության և ավելորդության պատճառով, որովհետև այդ եզրույթների հայերեն համարժեքներն հիմնականում արդեն կային, օրինակ՝ *հոլովախնդրու (հոլովասառու)*, *կարարունակել (եզրափակել)*, *սրորակցական (սրորադասական)*, *պարբեր* (այս կազմությունը կիրառվում էր *շուրջ* բառի փոխարեն), *եզերացեալ (հանգած, վերջացած)*, *համահասարումն, սրորանկի, մանաւանդականութիւն* և այլն: Կամ ուղղակի փոխառում էին լատիներեն արմատը. լատիներեն *ledere* (վնասել) արմատից կազմում են *լերել* բայը *վնասել* բայի փոխարեն:

Շատ ավելի մեծ էին լատինաբանների նորամուծությունները հայերենի ձևաբանության և շարահյուսության մեջ: Այսպես՝ ամեն ինչ կանոնավորելու մղումով անեզական բառերի *-ք* հոգնակերտը հանելով՝ նրանք բոլոր այդ բառերը դարձնում են եզակի՝ բուն անեզական ձևը համարելով պարզ հոգնակի, ինչպես՝ *կեան - կեանք, աչ - աչք, փառ-փառք, միտ - միտք, օրէն - օրէնք, կամ - կամք, բար - բարք, վար - վարք* և այլն: Իսկ *մարդիկ* ձևի փոխարեն կիրառում են՝ *մարդիկք*-ը: Հոլովման համակարգում փոխվում է ներգոյականի կազմությունը. նրանք *ընդ* նախդիրից, հունաբանների հետևողությամբ, ստեղծում են *ըն* նախդիր-նախամասնիկը՝ որպես ներգոյականի կազմիչ, այն ձայնավորով սկսվող բառերի դեպքում դառնում էր *ն* և գրվում բառին կից: Հոլովի բուն կազմությունը չի փոխվում՝ եզակի թվում տրականից, հոգնակիում՝ հայցականից, օրինակ՝ եզ. *ըն գեղջ, ըն տեսռն, ըն բանում, նԱդամում, նԵսայոջ, նարեան, նաղբեր*, հոգն.՝ *ըն բանս, ըն միտս, նոսկիս*: Ներգոյականի կազմությունը նույն սկզբունքով տարածվում էր ածականների, թվականների, դերբայների և դերանունների վրա՝ բացառյալ անձնական դերանունները, որոնք պահպանում են գրաբարյան ներգոյականի ձևերը: Ե ներդրական հոլովումը տարածվում է բաղաձայն+դ կազմությամբ բոլոր բառերի վրա, չնայած դրանց մի մասը գրաբարում *ու* հոլովման էր՝ *ծաղր>ծաղեր*՝ ծաղու-ի փոխարեն, *մեղր>մեղեր*՝ մեղու-ի փոխարեն, *քաղցր>քաղցեր*՝ քաղցու-ի փոխարեն և այլն:

Քանի որ գրաբարը չուներ ածականի գերադրական աստիճանի համար ինքնուրույն ածանց, լատինաբանները, բաղադրականին հատկացնելով *գոյն*-ը, գերադրականի համար առանձնացնում են *-գունեղ* ածանցը: Այսպես՝ *խոնարհ - խոնարհագոյն - խոնարհագունեղ, սպիրակ - սպիրակագոյն - սպիրակագունեղ, բարի - բարեգոյն - բարեգունեղ*: Գերադրականի այս ձևերից, ինչպես լատիներենում, հնարավոր էր կազմել գերադրական մակբայներ՝ *որոշագունեղասպէս*:

Որոշիչների համաձայնությունը, որը դասական գրաբարում արդեն միտում ուներ վերանալու (նախադաս որոշիչները, իբրև կանոն, չէին համաձայնում իրենց որոշյալներին), լատինաբանները դարձնում են ընդհանրական, պարտադիր բոլոր դեպքերում և բոլոր որոշիչների համար՝ ածական, թվական, դերբայ, դերանուն:

Բայական լծորդությունները նրանք դարձնում են երեք՝ *ս, հ, ու*, որպեսզի *ի*-ն վերածեն կրավորականի առանձին կազմիչի 3 լծորդության բոլոր բայերի համար: Կանոնավորվում են որոշ անկանոն բայեր. *լսել* բայի կատարյալի հիմքը դառնում է *լսեց*-ը՝ *լու*-ի փոխարեն, *ճանաչել*-ը կորցնում է *ժանի* հիմքը՝ ստանալով կանոնավոր՝ *ճանաչեց* ձևը: Բայական եղանակները համալրվում են ըղձականով, բայց ըղձականի համար ինքնուրույն ձևեր չեն ստեղծվում, այլ գրաբարյան ստորադասականի վրա ավելացվում է *երանի թէ* իղձ արտահայտող վերաբերականը, իսկ ստորադասականի դեպքում՝ *եթէ* պայման կամ ենթադրություն արտահայտող շաղկապը: Բոլոր եղանակներն ունեն ներկա, անկատար, կատարյալ, հարակատար և գերակատար ժամանակներ: Յույց տանք լատինաբանների ստեղծած բայական հարացույցի հիմնական նորամուծությունները *սիրել* բայի օրինակով:

Սահմանական եղանակ

Ներկա - *սիրեմ*

Անկատար - *սիրեի*

Կատարյալ - *սիրեցի*

Հարակատար - *սիրեալ եմ*

Գերակատար - *սիրեալ էի*

Ապառնի - *սիրեցից*

Հրամայական եղանակ

Ներկա- *սիրեա՛*

Ապառնի - *սիրեսցի՛ր*

Ստորադասական եղանակ

Ներկա - *եթէ սիրիցեմ*

Անկատար - *եթէ սիրիցէի*

Կատարյալ - հարակատար- *եթէ սիրեալ իցեմ*

Գերակատար- *եթէ սիրեալ իցէի*

Ապառնի - *եթէ սիրեալ եղէց*

Ըղծական եղանակ

Ներկա - *երանի թէ սիրիցեմ*

Անկատար - *երանի թէ սիրիցէի*

Կատարյալ - հարակատար - *երանի թէ սիրեալ իցեմ*

Գերակատար- *երանի թէ սիրեալ իցէի*

Ապառնի - *երանի թէ սիրեալ եղէց*

Աներևույթ եղանակ

Ներկա - *սիրել*

Կատարյալ, հարակատար, գերակատար - *սիրեալ գոլ*

Ապառնի- *սիրելոց գոլ*

Բնդունելություն

Ներկա - *սիրող*

Կատարյալ, հարակատար, գերակատար - *սիրեալ*

Ապառնի - *սիրելոց*

Ինչպես ակնհայտ է, լատինաբանների քերականական նորամուծությունները հիմնականում հակասում էին հայերենի զարգացման օրինաչափություններին, չափից ավելի տրամաբանական էին, համահարթեցված, ընդհանրական և հաճախ թելադրված լատիներենի քերականական իրողությունների պարզունակ վերարտադրությամբ, հետևաբար դրանք խոսակցական լեզվում որևէ կիրառություն չեն գտնում՝ սահմանափակվելով գուտ գրավոր խոսքի շրջանակներում, իսկ 18-րդ դարում արդեն դուրս են մղվում Մխիթարյան հայրերի նոր քերականություններից, բառարաններից, գրական երկերից, որտեղ վերականգնվում է դասական գրաբարն իր լեզվական անաղարտ կառույցով, անկանոնու-

թյուններով և բացառություններով, որոնք բնորոշ են բոլոր կենդանի լեզուներին:

ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

Արդի հայագիտության մեջ կան մի շարք հիմնախնդիրներ, որոնց վերաբերյալ ավանդաբար ձևավորված տեսակետները հաճախ ավելի շատ հարցեր են հարուցում, քան հստակ պատասխաններ գտնում, դրանցից մեկն է հայոց լեզվի պատմության գիտական շրջանաբաժանումը և երեք գրական հայերենների առանձնացումը՝ գրաբար, միջին հայերեն, աշխարհաբար:

Հայոց լեզվի պատմության գիտական շրջանաբաժանումը կատարած լեզվաբանները՝ Հ. Աճառյան, Գ. Ջահուկյան, գրաբարին հաջորդող գրական հայոց լեզուն ավանդաբար կոչել են միջին հայերեն և առանձնացրել անգամ նրա ենթաշրջանները՝ կիլիկյան հայերեն կամ կիլիկյան նորմավորման ենթաշրջան (12-14-րդ դդ.) և հետկիլիկյան (14-16-րդ դդ.), որը Գ. Ջահուկյանը հետագայում անվանում է աշխարհաբարացման ենթաշրջան: Սակայն ինչպես անցյալում, այնպես էլ այսօր չկա հստակ, միասնական համոզում, թե գրաբարից աշխարհաբար ընկած ժամանակահատվածում եղե՞լ է արդյոք միջանկյալ կապող օղակ՝ միջին գրական հայերեն: Կան տեսակետներ, ըստ որոնց՝ միջին հայերենը պետք է դիտարկել որպես միասնական աշխարհաբարի ենթաշրջան, որը չվերաճեց գրական լեզվի մակարդակի: Փաստ է, որ միջին հայերենին վերագրվող դարերի գրականության լեզուն խիստ անհամասեռ և՛ իր հնչյունաբանությամբ, և՛ բառապաշարով, և՛ քերականական յուրահատկություններով: 10-16-րդ դարերի գրավոր հուշարձաններում վկայված չէ հոգնակիակազմության միասնական մոտեցում. միևնույն բառը հանդիպում է 3-4 տարբեր հոգնակերտներով, հոլովվել է 2-3 հոլովմամբ, սահմանական ներկայի, անցյալ անկատարի և պայմանական ներկայի ու անցյալի բայական ձևերն արտահայտվում էին նույն *կոն/կ* եղանակիչով, հնչյունական համակարգը տեղ-տեղ երկաստիճան խլազուրկ էր,

տեղ-տեղ՝ եռաստիճան գրաբարատիպ: Միով բանիվ, լեզվի բոլոր մակարդակներում առկա են գուգաձևություններ, միևնույն քերականական ձևն ունի մի քանի, երբեմն իրար բացառող իմաստներ, չի նշմարվում միասնական լեզվական նորմը: Նման իրողությունները հակասում են «գրական լեզու» հասկացությանը:

Գրաբարի անկման և նոր գրական հայերենի առաջացման դարաշրջանների ըմբռնման հարցում հայագիտության մեջ ցայսօր միասնական տեսակետ չկա: Ա. Այտընյանից սկսած՝ բոլորը համաձայնում են, որ Է դարից գրաբարն այլևս խոսակցական լեզու չէ, բայց այդ և հետագա երեք-չորս դարերի լեզուն դեռ չեն համարում միասնական և համագործածական: Ս. Ղազարյանն իր «Հայոց լեզվի համառոտ պատմություն» աշխատության մեջ միջին հայերեն ասելով հասկանում է 10-17-րդ դարերի հայ գրականությամբ ավանդված լեզվական բազմազան տարրերի ամբողջությունը, որը հասկանալի էր տարբեր բարբառներով խոսող հայ ժողովրդի տարբեր հատվածներին: Հ. Աճառյանը միջին հայերենի հնագույն հիշատակարան է համարում Վահրամ սպարապետի որդի Գրիգորի դեղագիրը (1037 թ.)՝ գրված բժիշկ Բուսայիդի ձեռքով: Միաժամանակ հմուտ լեզվաբանը նշում է, որ պետք է տարբերել միջին հայերեն գրականության լեզուն միջին հայերեն բանավոր լեզվից, որովհետև վերջինս ծագումով շատ ավելի հին է, ապա միջին հայերեն գրական լեզվի համար սահմանագիծ է դարձում XII դարը, երբ Կիլիկյան թագավորությունն էր ստեղծվել, և միջին հայերենն արդեն ոչ միայն ժողովրդական, այլև պետական լեզու էր, բայց գրաբարը գրականությունը դեռ չէր կարողացել դուրս մղել: Միջին հայերենի վերջը, ըստ Հ. Աճառյանի, 16-րդ դարն է: Այս ժամանակաբաշխումն էլ իր համար հիմք դարձրեց Գ. Ջահուկյանը՝ հետևյալ մասնավորեցմամբ՝ ա) կիլիկյան նորմավորման ենթաշրջան (12-14-րդ դդ.) և բ) աշխարհաբարացման ենթաշրջան (15-16-րդ դդ.):

Բուն «միջին հայերեն» եզրույթը բավականին հին ծագում ունի, այս կապակցությամբ Հ. Աճառյանը գրում է. «Երկու անջատ լեզուների գոյությունը այլևս փաստ է (նկատի ունի X և հետագա դարերը – Ն. Դ.), և հարկավոր է որոշել նրանց միմյանցից. գրական լեզուն ստա-

նում է գրաբար անունը, իսկ ժողովրդական լեզուն կոչվում է գռեհիկ, մթին լեզու, գեղջուկ բան, ռամկօրէն, սովորական խոսք, աշխարհական խոսք, աշխարհաբար»⁵⁵: Հ. Աճառյանի հետագա շարադրանքից պարզ է դառնում, որ մինչև XX դարը հայ լեզվաբանության մեջ գրաբարի ժառանգորդ գրական լեզուն աշխարհաբարն է, բայց «այսօր լեզվաբանության մեջ զանազանություն է դրվում այս շրջանի (X-XVI դդ. – Ն. Դ.) ժողովրդական լեզվի և արդի ժողովրդական լեզվի միջև. առաջինը կոչվում է միջին գրական հայերեն (ըստ ոմանց ստորին հայերեն), երկրորդը աշխարհաբար կամ նոր հայերեն՝ հակադրությամբ գրաբարի կամ հին հայերենի»⁵⁶: Հ. Աճառյանն ինքը կարծես մեր գրական հայերենների երկու եզր է տեսնում՝ հին և նոր, նրանց միջին օղակը համարելով ժամանակի տուրք: Իսկ հայոց գրական լեզուները գրաբարն են և աշխարհաբարը՝ իրենց ենթաշրջաններով: Այդուհանդերձ, հայոց լեզվի պատմությանը վերաբերող տեսական գրականության մեջ ցայսօր դեռ ընդունված է տարբերակել երեք գրական հայերեն՝ գրաբար, միջին հայերեն և ապա աշխարհաբար՝ իր երկու տարբերակներով՝ արևելահայերեն և արևմտահայերեն:

Միջին գրական հայերենի կազմավորումը, ըստ Ս. Ղազարյանի, համընկավ արաբական տիրապետության վերացման, հայոց պետականության վերականգնման և տնտեսական ու մշակութային վերելքի հետ⁵⁷: Միջին դարերում Հայաստանը հայտնվում է համաշխարհային առևտրի տարանցիկ խաչմերուկում: Քաղաքային կյանքը զարգացում է ապրում, ձևավորվում են բարձր զարգացած տնտեսություն, մշակույթ ունեցող մի քանի կենտրոններ՝ Անին, Արծնը, Դվինը, Կարսը, որտեղ կառուցվում են եկեղեցական-կրթական մեծ համալիրներ, հիմնվում են գրչության նոր կենտրոններ: Հայաստանի տնտեսական, քաղաքական կյանքում տեղի ունեցած տեղաշարժերը նպաստում են նոր գաղափարախոսությունների ձևավորմանը, հոգևոր և աշխարհիկ ուղղությունների միահյուսմանը գիտության և արվեստի մեջ, հայկական վերածննդի ժա-

⁵⁵ Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս II, էջ 231:

⁵⁶ Նույն տեղում, էջ 232:

⁵⁷ Տե՛ս Ս. Ղազարյան, Հայոց լեզվի համառոտ պատմություն, էջ 204:

մանակաշրջանն է սկսվում: Հատկապես բուռն զարգացում է ապրում միջնադարյան հայ գրականությունը, որի հետ մեկտեղ՝ հայոց լեզուն: Ակնհայտ է դառնում, որ գրաբարն այլևս չի կարող լիարժեք ձևով կատարել իր գործառնությունները՝ իբրև համաժողովրդական հատորդակցության միջոց, որովհետև այն արդեն անհասկանալի էր դարձել հայության մեծ շերտերի համար. ժողովրդախոսակցական լեզուն էապես հեռացել էր վանքերում ուսուցանվող լեզվից, բարբառային տարբեր ազդեցությունների հետևանքով փոխվել էր գրաբարի ոչ միայն ձևաբանական-շարահյուսական համակարգը, այլև հնչյունական համակարգը, բառապաշարը: Նոր գրական լեզվի ձևավորումը մի պահ դանդաղում է մոնոլոգների արշավանքների պատճառով, բայց Կիլիկիայում հայոց թագավորության ստեղծումը փոխում է իրավիճակը:

Միջին հայերենը դառնում է պետական և ժողովրդական լեզու: Հ. Աճառյանը, անդրադառնալով այս ժամանակաշրջանին, հատկապես կարևորում է միջին հայերեն գրականության ստեղծումը, որի հնագույն նմուշներից է համարում 1037 թվականին բժիշկ Բուսայիդի ձեռքով գրված Վահրամ սպարապետի որդի Գրիգորի պատմական դեղագիրը⁵⁸: Ընդ սմին մեծ հայագետն իրավացիորեն նշում է, որ միջին հայերեն բանավոր լեզուն շատ ավելի հին է, քան նրա գրավոր տարբերակը: 12-րդ դարում միջին հայերեն գրականությունն ավելի զարգանում, հայտնի գործիչները՝ Ներսես Շնորհալին, Մխիթար Հերացին, Սմբատ Սպարապետը, սկսում են իրենց գեղարվեստական, ուսումնական, բժշկագիտական, դատական երկերը գրել միջին հայերենով: Կիլիկյան թագավորությունը միջին հայերենը դարձնում է պաշտոնական լեզու: Թագավորական դիվանատան հրովարտակները, արտոնագրերը, առևտրային պայմանագրերը, մուրհակները, նամակները գրվում էին միջին հայերենով: Անգամ մեծ հեղինակություն վայելող հոգևոր գործիչները, որոնք գրաբարագիր էին՝ Ներսես Լամբրոնացին, Վարդան Արևելցին, Հ. Երզնկացին և այլք, երբ դիմում էին թագավորին կամ իշխաններին՝

⁵⁸ Տե՛ս Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 233-234:

րին, գրում էին բոլորի կողմից ընդունված և հասկանալի միջին հայերենով:

Հ. Աճառյանը նշում է, որ եթե ինքը վերապահությամբ է մոտենում է V դարում բարբառների գոյությանը, ապա բնավ նույնը չի կարող պնդել 11-12-րդ դարերի համար: Այս ժամանակաշրջանում Հայաստանում և Հայաստանից դուրս ստեղծված գաղթօջախներում կազմավորվել էին զանազան բարբառներ: Միջին հայերենն էլ, գիտնականի համոզմամբ, մի բարբառ չէր, այլ ուներ իր զանազան ձևերը, բայց դրանք մեզ հայտնի չեն, և միայն Կիլիկյան գաղթօջախի բարբառն է պահպանվել և հասել մեզ, որովհետև այն Կիլիկյան պետականության շնորհիվ հասավ պատվավոր դիրքի ու դարձավ գրականության լեզու, որով ստեղծվեց հարուստ մատենագրություն⁵⁹: Միջնադարի հայ պատմիչները գրում էին պարզ գրաբարով, բացի այդ՝ իրենց երկերում բերում էին վիմագիր արձանագրություններից կամ պաշտոնական փաստաթղթերից հատվածներ, որոնք գրված էին միջին հայերենով, ինչպես օրինակ՝ Կիրակոս Գանձակեցին (13-րդ դ.), Վարդան Արևելցին (13-րդ դ.), Ստեփանոս Օրբելյանը (13-14-րդ դդ.), Թովմա Մեծփեցին (15-րդ դ.), Գրիգոր Դարանաղցին (16- 17-րդ դդ.), Առաքել Դավրիժեցին (17-րդ դ.) և այլք: Չուտ միջին հայերենով ստեղծվում են գեղարվեստական տարբեր ժանրերի բարձրարժեք երկեր: Վարդան Այգեկցին, Ֆրիկը, Հովհաննես Երզնկացին, Կոստանդին Երզնկացին, Քուչակը ստեղծագործել են ժամանակի խոսակցական լեզվով, բայց և միաժամանակ կիրառել են գրաբարյան բազմազան ոճեր, բառեր և քերականական ձևեր: Այս ճանապարհով միջին հայերենը մշակվում էր, հարստանում և հղկվում: Բերենք միջին հայերենով ստեղծագործած Ֆրիկի տաղերից մի հատված, որտեղ վկայված են հայերենի խոնարհման և հղովման համակարգի, բառապաշարի հիմնական տեղաշարժերը:

Ֆրիկ, Տաղեր

13-14-րդ դդ., Երևան, 1982, էջ 85

Յորժամ հայիոյէք զաղքատն ու դրժար խօսօք կըռուիք,

⁵⁹ Հմմտ. Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 236:

Ելնէք յաստուծոյ աշացն, ւի մեղաց դաւթար գրքուիք:
 Յէգուց, երբ ասէ աստուած, ես եկի՝ տառապելիս չըտվիք,
 Ու զինչ Ղազարոս ի դրռուին ընկած ու յիս չհայէիք:
 Չօգտէ փոշիմնիլն յէգուց, քե՛զ ասեմ, լըսէ դու Ֆրրի՛կ,
 Ձինչ որ մեծատունն եղաւ՝ աներես ու խիստ անհարկիք:
 Երբ դուք հայիք ի հուրըն ի գատէ՝ լուկ կու պապակիք,
 Յայնժամ չի թափէ ըզձեզ ո՛չ բեհեզ եւ ո՛չ ծիրանիք:
 Ջօրըն կեր ու խում առնէք, գուսանով երթայք՝ ըզբաղիք,
 Ջքարոզըն՝ տնագ առնէիք, մաես բարկ-բարկ ծիծաղէիք:
 Յորժամ դատաստան լինի, գայս յիշէք ՚հոն նըւաղիք,
 Չօգնէ կերուխումն ի հոն եւ լինիք ձախակողմն լալիք:
 Գեմ վասն աղքատաց եկաւ միածինն, որ դուք գիտեճայք,
 Երեկ եւ զպակասն ելից, չասաց, թէ դուք թերանայք:
 Յառջեւնիդ փորէք դուք հոր եւ անձամբ ի մէջն անկանիք,
 Տամէք զմեղքն յաստուած հանէք, դուք անմեղ ի գատըն կանգնիք:
 Քաւել թէ երթանք առ կոյսն, միածնիւն ի յոտքն անկանիմք,
 Որ մա բարեխօս լինի իւր որդոյն, որ մեք խալըսիմք:
 Գիտեմ չի թողու աստուած մէկ հետէ, որ մեք կորընչիմք,
 Ձիւր կենդանագիրն յիշէ, իւր ծնօղին առնէ մա հարկիք:
 Հազար թէ իրաւ է բանս, դուք անհոգ ի քուն մի՛ լինիք,
 Ձարթիք ու պատրաստ կացէք, դըժոխաց որդիք մի՛ լինիք:

Միջնադարում գեղարվեստական գրականության հետ մեկտեղ մեծ զարգացում է ապրում մասն գիտությունը, հատկապես՝ բժշկությունը: Հայաստանում գրվում կամ թարգմանվում են չորս տասնյակից ավելի բժշկագիտական երկեր՝ «գեղջուկ և արձակ բարբառով» գրված, քանի որ դրանք ուղղված էին ժողովրդի բոլոր խավերին: Մխիթար Մեքաստացին, Ամիրդովլաթ Ամասիացին, Ասար Մեքաստացին, Բունիաթ Մեքաստացին իրենց ինքնուրույն աշխատություններում ստեղծում են բազմաթիվ հայկական գիտաբառեր, կիրառում են նոր փոխառություններ, գրաբարյան, բարբառային բառերին, դարձվածքներին նոր իմաստներ են հաղորդում, կանոնավորում և մշակում են քերականական իրողություն-

մերը՝ ժամանակի պահանջներին համահունչ: Հատվածները բերենք մաս միջին հայերենով գրված բժշկագիտական երկերից:

***Ասար Սեբաստացի, Գիրք բժշկական արհեստի, XVI - XVII դդ.
Երևան, 1993 թ., ԼԹ, էջ 108***

Այսպես որ ԼԵ (35) տարին կու սկսնու ալևորութիւն, որ գիջութիւնն և տաքութիւնն երկութն այլ կու պակսի: Եւ ի Կ (60) տարուն յետն ծերութենէ և յետն այսոր զայն տաքութիւնն և գիջութիւնն, որ ի ծընընդենէն բերել կու սկսնու և պակասել և հատանել: Եւ այս պակասիլն և հատանիլն անճարակ է և պիտի, որ լինի և այնպես հատնի այդ տաքութիւնդ, որպես որ ճրագին եղն հատնի, ճրագին՝ մայ լոյսն կու վատուծի: Սոյնպես լինի և մարդն, յորժամ պակսի բնութիւնքն և այնոր համար, որ զբնական գիջութիւնն զորն օդն է պակսեցուցել և զորն բնական տաքութիւնն ժամանակաւ մսխել է, որպես զճրագի եղ վառելով հատել է և պակասել է և զայսմ պակասութիւնս կերակուր ուտելով մարդ ի տեղն չկարէ բերել: Զի այն չաքն, որ կու պակսի մայ այն չափոյն փոխան չի լինիր ի կերակրոցն, որ զնորայ պակասութիւնն կարողանայ լմնցել:

***Բունիսթ Սեբաստացի, Գիրք բժշկութեան, 17-րդ դ.
Երևան, 1987 թ.***

Աքթա (ուղեղային կաթված) ինքն ցաւ մի է, որ մարդուն կամ ի մտել տեղն կամ ի քալելու ժամն դափիլ (հանկարծ) լինի մեռածի պես. պատճառն որ շիրեանին երկնին, որ ի սրտէն ի գլուխն կելնէ այնոց ճանապարհն պեղծ պաղղամ կու լցվի, զհարաքաթն կու խափանէ սրտին երկնուն:

Նշանն այն է, որ յերեսն պաղ, անձն պաղ մեռելի պես է, բերնեն ջուր շատ երթա, ի քթէն գիճութիւն շատ գա, ըխտաւորի պէս չի խռկա, այս ցաւս դժար ցաւ է, որ հարաքաթ-ի յագիղան որ քրտնի այնոր սապապն է, որ տեղն ի սիրտն է, որ տաքութիւն կու կապէ (Թ, 69):

Պատճառ այրած սաֆրային (դեղին մաղձ) այս է, որ սրանա և այրի և զօղվածին կերակուրն այլ այրի և սփռի ամէն անձն և աւիրէ զբնութիւնն: Նշանն այն է, որ յառաջն անձին կաշին սևնա և աղի լինի և

ճղբտի և դեղին ջուր ելանէ և խռչակն բռնվի և շունչն կարճնա և երեսին գոյնն մթնա: Դեղն այն է, որ յառաջն ք (2) թեւն ...արիւն առնես և ոտիցն երկնուն և ի ճակտէն այլ: Եւ....ամռան ատուրքն ի բաղանիս մտէ, որ աղէկ լինի արիւնն և զամէն հով և զգէջ ձիթեր ի կանանց կաթն խառնէ և օժէ և տուր զայն իրվին, որ սավտա լուծէ և տուր կաթնակեր գառին միս խորված և թէ ցաւն հին և ամուր լինի՝ դժար է (ԽԼ, էջ 119):

Պետք է նշել, որ լեզվի պատմության ցանկացած շրջանաբաժանում պայմանական է. այս կամ այն շրջափուլի առանձնացման համար նախադրյալները մի դեպքում անհրաժեշտ և բավարար են, մյուս դեպքում՝ անբավարար: Յ. Ավետիսյանը «Գրական հայերենի զարգացման երկու շրջափուլերը՝ գրաբար և աշխարհաբար» աշխատության մեջ, ելնելով միջինհայերենի լեզվական անմիօրինակությունից և արևմտահայ աշխարհաբարի հետ ունեցած լեզվական ընդհանուր որակներից, առաջարկում է հայոց գրական լեզուների պատմության մեջ տարբերակել երկու փուլ՝ գրաբար և աշխարհաբար, որոնք կտրուկ տարանջատվող լեզվական որակներ են: Ըստ այս մոտեցման՝ գրաբարը գրական լեզու է եղել 5-12-րդ դարերում, ապա նրան հաջորդել է աշխարհաբարը՝ 12-րդ դարից ցայսօր: Աշխարհաբարի համար տարբերակվում է երեք ենթաշրջան՝ ա) XII-XVIII դարեր, որը համարվում է վաղ աշխարհաբարի ենթաշրջան, այն «խիստ պայմանականորեն կոչվել է կամ կարող է կոչվել նաև միջին հայերեն»⁶⁰: բ) XVIII դարից սկսվում է երկճյուղ աշխարհաբարի շրջանը, որի ընթացքում մշակվում և մորմավորվում են մեր գրական լեզվի երկու տարբերակները՝ արևմտահայերենը և արևելահայերենը, մինչև 1920 թվական: գ) 1920 թվականից մինչև այսօր շարունակվում է երկճյուղ աշխարհաբարի զարգացման ժամանակաշրջանը: Այսպիսով՝ միջին հայերենը դառնում է ոչ թե առանձին գրական լեզու, այլ աշխարհաբարի ենթափուլ:

Շրջանաբաժանման պայմանականությունը չի կարող հաղթահարվել նման կերպ, ընդհակառակը՝ որքան մեծանում է գրական լեզվի ձևա-

⁶⁰ Յ. Ավետիսյան, Գրական հայերենի զարգացման երկու շրջափուլերը՝ գրաբար և աշխարհաբար, Եր., 2016, էջ 79-80:

վորման և զարգացման ժամանակը, այդքան աճում են նրա անմիօրինակությունն ու տարբերակվածությունը, այսինքն՝ դժվարանում է այն գիտականորեն նկարագրելու և իբրև միասնական որակ բնութագրելու գործը, ուստի Գ. Ջահուկյանի շրջանաբաժանումն առավել հստակ է, մեթոդական առումով դյուրըմբռնելի. գրաբարի և աշխարհաբարի կամ, ավելի ճշգրիտ, հին և նոր գրական հայերենների միջև գոյություն է ունեցել նրանց միջին տարբերակը՝ միջին հայերենը:

ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Հայոց լեզվի գիտական շրջանաբաժանման համապատասխան՝ հայոց լեզվի նոր կամ աշխարհաբարի շրջանը սկսվում է 17-րդ դարից և շարունակվում է մինչ այսօր՝ 21-րդ դար: Գ. Ջահուկյանը աշխարհաբարի համար առանձնացնում է երեք ենթաշրջան. ա) վաղ աշխարհաբարի՝ 17-րդ դարի սկզբներից մինչև 19-րդ դարի կեսը, որը կարելի է կոչել նաև միասնական աշխարհաբարի շրջան, բ) ուշ կամ երկնյուղ աշխարհաբարի շրջան՝ 19-րդ դարի կեսից մինչև 1920 թվական և գ) ժամանակակից՝ 1920 թվականից ցայսօր: Ա. Այտընյանը իր «Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի» աշխատության մեջ բերում է ԺԴ դարի (1358 թ.) Բջնու եկեղեցիներից մեկի թագավորական արձանագրության համառոտությունը՝ այն համարելով աշխարհաբարի հնագույն նմուշներից մեկը⁶¹: Հ. Աճառյանը կարծում է, որ այս արձանագրության մեջ աշխարհաբարի շունչն այնքան էլ զգալի չէ, և առաջարկում է 1478 թվականին գրված «Անգիտաց անպէտ» բժշկագիտական գրքից մի հատված (Ամիրդովլաթ Ամասիացի), որի լեզվական իրողությունների համեմատությունից էլ փորձում է առանձնացնել աշխարհաբարը միջին հայերենից սահմանազատող քերականական հատկանիշը. «Միջին հայերենը որոշ սահմանագիծ չունի գրաբարից բաժանվելու համար, բայց գոնե ունի կու մասնիկը, որ միջին հայերենի բացար-

⁶¹ Տե՛ս Ա. Այտընյան, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, էջ 169:

ծակ որոշիչ նշանն է: Մի գրաբար գրվածք, որ ունի *կու* մասնիկը արդեն գրաբար չէ: Աշխարհաբարն էլ միջին հայերենից բաժանելու նշանն է հայցականի **զ** նախդրի բացակայությունը⁶²: Թեև անմիջապես էլ բերում է երկու հանգամանք, որ հակասում են իր պնդմանը. 1) կան բարբառներ, որ մինչ այսօր էլ պահպանում են **զ** նախդիրը, 2) յուրաքանչյուր հեղինակ, որ ծանոթ էր գրաբարին, հեշտությամբ կարող էր գործածել **զ** նախդիրը, հատկապես եթե իր բարբառը դեռ պահպանում էր այն: Այսպես, հենց նույն Ամիրդովլաթ Ամասիացու աշխատանքներում այդ **զ**-ն առկա է: Այնուհետև բերելով XVI – XVII դարերի վաղաշխարհաբարյան տարբեր բնագրերի 11 նմուշ՝ Հ. Աճառյանն ի վերջո հանգում է այն տեսակետին, որ վաղ աշխարհաբարը կրում էր գրաբարի և տեղական բարբառների կնիքը. «Կարելի է ասել, թե ամեն մի գավառ ունի իր տեղական առանձին աշխարհաբարը, որ գրողի գիտության համեմատ մոտենում կամ հեռանում է գրաբարից»⁶³: Մենք ևս բերենք Բջնու արձանագրությունից և «Անգիտաց անպետ»-ից հատվածներ՝ ակնառու դարձնելով այն իրողությունը, որ գրաբարը իրեն հաջորդող գրական լեզվից վճռորոշ տարբերություն ուներ, բայց միջին հայերենն ու աշխարհաբարը այդպիսի հստակ տարբերություն չունեին:

Բջնու արձանագրությունը՝ 1358 թ.

Ես Աբաբակ շահինշահ, ի բռնակալութեան Մելիք Աշրափին՝ զմեր հայրենիքս զԲջնի քաղաք յիսնէ հուլմով խլեր էր, զիր ճորտերին էսիր կացուցէր. և Հանի Բէկ նիսպեցաւ ու զքաղաքս ի հիմանց քակեց, ու շատ յանուանի մարդ ի սուր քաշեց ու զերկիրս ի չորս դիւսց անբնակ արար ու զբրիստոնէք անխնայ կոտորեաց. մեք յԱստուած ապաւինելով զմեր սալսհը... հեծելին գլուխ կացուցաք, որ զիր ապրանքն նախնա (թեևս անխնայ - Ա. Այրորնեան) բաշխէր, որ Աստուած խղճաց մեզ ու մեր հայրենիքս զԲջնու բերդս ի մեր շեռս բերաց. գրունիսք արշանս վերստին հաստատեցաք. զվիճակ, զվանք, զգեղ, զարի զդաշտի հայրե-

⁶² Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս II, էջ 443:

⁶³ Տե՛ս նույն տեղում, էջ 445:

նիք, բէց ու շինական ու գործաւոր ազատ և քարիսան արարին հարկէ եւ ի ծառայութենէ...⁶⁴:

Անգիտաց անպէտ՝ 1478 թ.

Եւ ասացել է գրոցս ժողովողն թէ ես տեսայ մարդ մի, որ յորժամ արեգակն ի Խոյն մտաւ, Ա մթիսալ այս դեղէս գինով խմեց, և այն տարին քանի հեղ նորա մահացու դեղ տուին, զեն չարաւ. հենց որ ք դանկ և կէս ալմաս տուին և այն օրն՝ այլուի ք դանկ ալմաս տուին և հեղ մըն այլ օջի լեղի մահացու արբուցին և քանի ազգ այլ մահացու դեղ տուին, զեն չարաւ, և յետոյ իմացան, որ այս մարդս Ա մթիսալ մոխալլասայ է կերել, ինչպէս որ վերն գրած էր, և այս դեղիս մոխալլասայ անոր համար կասուի, որ յամենայն չարէ փրկող է և ի մահացու դեղոց, որ զեն կառնէ՝ դարձուցանէ⁶⁵:

Ս. Ղազարյանը, անդրադառնալով աշխարհաբարի և միջին հայերենի հնարավոր տարբերություններին, նախ արձանագրում է, թե նրանց միջև որոշակի տարբերություններ առաջանում են միայն 17-18-րդ դարերում, երբ աշխարհաբարը սկսում է մշակվել տարբեր բարբառների հիման վրա, թեև նշված ժամանակաշրջանում էլ նրանց լեզվական որակները միաձույլ էին: Աշխարհաբարի հիմնական բնութագրիչ նա համարում է հետևյալ չորս հատկանիշները՝ ա) գրաբարյան նախդիրների կիրառության նվազումը, բ) բարբառների մեծ ազդեցությունը գրական լեզվի վրա, գ) բարբառներով գրական գործեր ստեղծելու միտումը, դ) տարբեր հեղինակների, երբեմն անգամ նույն հեղինակի երկերում լեզվական տարբեր որակների՝ բարբառների, գրաբարի ու միջին հայերենի քերականական իրակությունների, բառապաշարային միավորների անխտիր, կողք կողքի գործածությունը⁶⁶: Ս. Ղազարյանն աշխարհաբարը համարում է միջին հայերենի շարունակությունը և համաձայնում է Հ. Աճառյանի այն պնդմանը, թե նրանց սահմանը որոշելու համար որևէ վճռական կետ նշել անհնար է: Աշխարհաբարի զարգացումն ընթացել է

⁶⁴ Հմմտ. Ա. Այտընյան, Զննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, էջ 169:

⁶⁵ Հմմտ. Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 443:

⁶⁶ Տե՛ս Ս. Ղազարյան, Հայոց լեզվի համառոտ պատմություն, Եր., 2006, էջ 339:

բավական դանդաղ. պատճառներն արտալեզվական էին՝ անվերջ պատերազմները, տնտեսական-քաղաքական անկայունությունը, պետականության բացակայությունը թույլ չէին տալիս մեր ազգային գրական լեզվին կանոնավորվել և միասնական դառնալ:

Աշխարհաբարով ստեղծված գեղարվեստական գրականության սկզբնավորողը, ըստ Ս. Ղազարյանի, Նաղաշ Հովնաթանն է, որի լեզուն հասկանալի էր, բազմերանգ և հարուստ: Աշխարհաբարի գրական մշակմանը և հղկմանը էապես նպաստել է նաև հայ քաղաքական մտքի զարթոնքը: Քաղաքական գրականության առաջին նմուշներից էր Մովսես Բաղրամյանի «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ» աշխատությունը, որը լույս է տեսել 1773 թվականին Մաղրասում: Ազգային ինքնագիտակցության վերելքը հանգեցնում է ինքնուրույն պետականության վերականգնման գաղափարների ամրակայմանը, որի հիմքում ազգային-ազատագրական պայքարի գաղափարաբանությունն էր: XVIII դարի վերջը խորհրդանշում է հայ պարբերական մամուլի սկզբնավորումն ու զարգացումը: 1794 թվականին Մաղրասում սկսում է լույս տեսնել «Ազդարարը», որտեղ տպագրվող հոդվածները ոչ միայն նպաստում էին մեր ազգային քաղաքական վերելքին, այլև աշխարհաբար լեզվի կանոնավորմանը, զարգացմանը: 1799-1802 թվականներին լույս է ընծայվում «Տարեգրություն» հանդեսը, որի լեզվական որակը բավական մշակված է: Ասպարեզում հայտնվում են պատմագիրներ և ժամանակագիրներ, որոնք իրենց տարածքի բարբառային տարրերով հարստացնում են հին գրական լեզվի օրինաչափությունները՝ դրանք հաճախ փոխարինելով նոր առաջացած և բոլորին հասկանալի բառերով, քերականական իրողություններով:

Նշենք հատկապես Գրիգոր Դարանաղցուն, որի «Ժամանակագրութիւն Գրիգոր Վարդապետի Կամախեցոյ կամ Դարանաղցոյ» (1630 թ.) երկի լեզուն աշխարհաբարյան ձևերով հարստացված պարզ գրաբարն է, ապա՝ վաճառական, ճանապարհորդ Չաքարիա Ագուլեցու օրագրությունը (1647-1681 թթ.), որը համարվում է արևելյան աշխարհաբարի դասական նմուշներից: Մեջբերենք հատվածներ Չ. Ագուլեցու օրագրությունից՝ ցույց տալու համար այդ ժամանակաշրջանում հայե-

րենի բառապաշարի, ուղղագրության և քերականության մեջ կատարված զգալի փոփոխությունները:

Չաքարիա Ագուլեցու Ռազրոթյունը, 1630-1691 թթ., Յերեվան, 1938

Մարտի գումն ես Չաքարիայ որ Իզմիրէն գուս եկի, որ գնաք Բուրսայ: Հենց որ Իզմիրէն դուրս եկի, սելաի բռաստ եկինք: Շամ հալ քաշեցի: Աստուած զմեզ փրկեաց ողողի տանելու: Մարտի ժրումն ես Չաքարիայ եկի Բուրսայ Աստուծով: Թվի ոճգ մարտի ինումն Էջմիածնումն որ Փիլիպոս կաթողիկոսն վախճանեցաւ, եղաւ սուրբ Հռփսիմէ եկեղցին ի կողմն յուսուսային: Սայ էր Կ ամաց: Սորայ փոխարէն աթոռ նստաւ Հակոբ կաթողիկոսն Չուղայեցին: Ապրիլ բումն ես Չաքարիայ որ Բուրսու դուս եկի: Ապրիլ ժնումն ես Չաքարիայ զարիկ Դարախշիարումն արարի: Ետհենց զարիկ մարդ ոչ անէ. գերայ Գեվիլու բարցին զարիկ կիրակի օրն, հենց որ տվինք բելն Սարուջայ, թօքմիշ ելան կարաւանի վերայ. բ մարդ մեռաւ, է, ը մարդի ժարայ տվին: (ՉԱ, էջ 45)

Թվին ոճժը մայիսի ժնումն Ագուլիս այսօր Ագուլաց ի տուն խիզանով գնացինք: Գաղայ նահապտակն ուխտ: Ես Չաքարիայ այլվի խիզանով յեւր սոցայ գնացի, ուխտ արարաք: Մայիսի իումն եկինք Ագուլիս. օրն համբարշում: Թվին ոճժը յունիսի ժգումն Ագուլիս Վերի թաղէն այրումն մեծարումն, անումն խոջայ Ավաք, որ այսօր առ աստուած փոխեցաւ: Քանզի շար մարդի վկայութենովն իմացաք, որ սայ ի հօրէ, ի մօրէ էթիմ էր, որ բնաւ ունչիչ չունէր սայ Աստուծոյ տուածէն: Այնչափ տվեց Աստուած, որ թէ տուն, թէ մուլք, թէ աջիաս, թէ փող, զո բումանի տէր դառաւ: Սայ էր հ ամաց: Սայ մեռաւ, ոչինչ տարաւ, բայց միայն ի գազ կտաւ: Ով մահկանացուն, մի շար ազահութիւն անիլ. վերջն այսպէս կուլինի. այս է: (ՉԱ, էջ 85)

XIX դարի կեսերին սկսվում է հայոց ազգային լեզվի որակական տեղաշարժերի երկրորդ փուլը, որն ընթանում էր հայ ազգի երկփեղկվածության պայմաններում: Հայաստանի արևելյան շրջանները թուրք-պարսկական տիրապետությունից անցնում են Ռուսական կայսրության իշխանության ներքո, որի շնորհիվ մինչ այդ իմանականում միջին հայե-

րենի և արևմտյան *կը* բարբառների ազդեցությամբ մշակվող աշխարհաբարի զարգացման վրա սկսում են մեծ ազդեցություն գործել արևելյան *նա* ճյուղի բարբառները, հատկապես՝ Արարատյան բարբառը: Գրական աշխարհաբարը սկսում է տրոհվել երկու ճյուղերի: 19-րդ դարի առաջին կեսին արևմտահայ աշխարհաբարը, որը զարգացավ միջին հայերենի և հատկապես Պոլսի բարբառի հիմքի վրա, ավելի զարգացած էր և լայն տարածում ուներ, քանի որ արևմտահայերենով բազմաթիվ գեղարվեստական, գիտական գրքեր, պարբերականներ էին հրատարակվում: Սակայն աստիճանաբար արևելահայերենը ևս սկսում է գրական մշակման ենթարկվել: Այս գործընթացին նպաստում են ոչ միայն արևելահայերենով լույս տեսնող տարաբնույթ գրքերը, այլ նաև ուսումնական կենտրոնները: Մեր լեզվի գրական մշակման տեսանկյունից վճռորոշ էին 1810 թվականին Աստրախանում հիմնադրված Աղաբաբյան վարժարանը, որը ղեկավարում էր ժամանակի ուսյալ այրերից մեկը՝ Մերովբե Պատկանյանը, 1815 թվականին Մոսկվայում ստեղծված Լազարյան ճեմարանը, որը հայ գիտնականների և մշակութային գործիչների ձևավորման դարբնոց դարձավ, և, իհարկե, 1824 թվականին Թիֆլիսում բացված հայտնի Ներսիսյան դպրոցը, վերջինս իրավամբ համարվել է արևելահայ աշխարհաբար գրական լեզվի կազմավորման հիմնական կենտրոններից մեկը⁶⁷:

Գ. Վանցյանը իր «Պատմական քերականություն արևելահայ լեզվի» աշխատության մեջ արձանագրում է տարբեր բարբառներով խոսող աշակերտների լեզվի բնականոն մշակման գործընթացը գրաբարի ազդեցությամբ. «Աշակերտների նորանոր մտապատկերները պիտի լրացվեն փոխառություններով գրաբարից: Գրաբարը, ուրեմն, բոլոր գավառականների վերաբերմամբ ուներ գերագույն և իշխող նշանակություն»⁶⁸: Գ. Վանցյանի նշած այս կարևորագույն իրողությամբ էլ կարելի է բացատրել այն փաստը, որ արևելահայերեն իր հնչյունական համակարգով, բառապաշարով, բառակազմությամբ ավելի հարազատ մնաց գրաբարին, քան արևմտահայերենը, որը միջին հայերենի ուղղակի ժա-

⁶⁷ Տե՛ս Ս. Լազարյան, Հայոց լեզվի համառոտ պատմություն, էջ 364-365:

⁶⁸ Գ. Վանցյան, Պատմական քերականություն արևելահայ լեզվի, Թիֆլիս, 1906, էջ 49:

ռանգորդը եղավ: Ուշագրավ է, որ եթե Գ. Վանցյանը արևելահայերենի ձևավորման գործում հատկապես կարևորում է Ներսիսյան դպրոցի ներդրումը, ապա Հ. Աճառյանն այդ փառքի դափնիները հիմնականում հատկացնում է Մոսկվայի Լազարյան ճեմարանի ուսանողությանը՝ միաժամանակ մատնանշելով մեր երկու գրական հայերենների զարգացման նույնատիպ ուղին. «Նրանք (արևելահայ գրական գործիչները՝ Խ. Աբովյան, Ս. Նազարյան, Մ. Նալբանդյան – Ն.Գ.) ստեղծեցին մի ուրիշ գրական լեզու, որի հիմքը Երևանի բարբառն է, և որի հեղինակն է համարվում Մոսկվայի Լազարյան ճեմարանի ուսանողությունը: Այստեղ ամեն կողմից հավաքված հայ աշակերտները սովորական գործածության մեջ հետզհետե կոկում են իրենց լեզուն, մասնավորը տեղի է տալիս ընդհանուրին և կամաց-կամաց այդ կոկած լեզուն դառնում է խոսակցական ընդհանուր լեզու: Այստեղ աշխատանքը տարվեց ճիշտ այն ձևով և ծրագրով, ինչպես արևմտահայ գրական լեզվի համար: Քերականությունը վերցվեց բարբառից, օտար բառերը վտարվեցին, և հայերեն բառերը վերածվեցին իրենց գրաբար ձևին»⁶⁹:

Հայոց աշխարհաբար լեզվի մշակման ընթացքը մեր իրականության մեջ չէր կարող խաղաղ լինել. հայ ժողովուրդը վերածվում էր ազգի, ավատականությունից դեպի ազատականություն անցման ճանապարհին հայ հասարակությունը բաժանվում էր դասակարգերի, աշխարհիկ նորահաստատ իշխանությունը փորձում էր թոթափել գրաբարագիր և գրաբարամետ հոգևորականների հզոր ազդեցությունը մեր գրականության, գիտության և կրթության ոլորտներից: Այս ամենը հանգեցնում էր գաղափարական բախումների. հին լեզվի և նոր լեզվի միջև բնական ընտրություն պետք է կատարվեր, որի շրջանակներում էլ սկսվում է գրապայքար կոչվող երևույթը: Նոր հայերենը գրականության և կրթության լեզվի մակարդակի առաջինը բարձրացնում է Խաչատուր Աբովյանը՝ իր հեղինակած դասագրքերով, գրական գործերով: Այնուհետև Մոսկվայում Ստեփանոս Նազարյանը տեսական և գործնական հիմնավորումներ է առաջադրում նոր ազգային լեզվի ձևավորման աղբյուրների և ուղղու-

⁶⁹ Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս II, էջ 497-498:

թյունների վերաբերյալ, ապա 1858 թվականին Միքայել Նալբանդյանի աջակցությամբ հիմնում է «Հյուսիսսափայլ» հանդեսը, որտեղ մեր նոր արևելահայ լեզուն սկսում է դրսևորվել և կատարելագործվել: «Հյուսիսսափայլի» հրապարակումները ավելի են թեժացնում գրաբարի վերագարթոնքի և աշխարհաբարի կողմնակիցների պայքարը: Գրեթե նույն ժամանակահատվածում գրաբարի և աշխարհաբարի հնարավոր մերձեցման և մերդաշնակեցման ուղիների որոնումը ծավալվում է նաև Հասստանի արևմտյան հատվածում. Գ. Օտյանը, Ս. Թնկլյանը, Ն. Ռուսինյանը առաջարկում են այնպես մշակել աշխարհաբարը, որ այն աստիճանաբար մերձենա գրաբարին: Դրա արդյունքը Ն. Ռուսինյանի՝ 1853 թվականին հրատարակած «Ուղղախօսութիւն արդիի հայ լեզուին, յօրինած ուսումնական խորհրդակցութեամբ» ձեռնարկն էր, որտեղ հեղինակը փորձում է, գրաբարյան օրինաչափություններին համապատասխան, կանոնավորել արևմտահայ աշխարհաբարը: Սակայն ժամանակը ցույց է տալիս, որ արհեստական միջամտություններով անհնար է փոխել լեզվի զարգացման ուղղությունը: Ի վերջո, հաստատվում է այն ճշմարտությունը, որ ազգային լեզուն պետք է մշակվի ինքնուրույնաբար՝ չենթարկվելով ո՛չ հին գրական լեզվի, ո՛չ էլ որևէ բարբառի գերակա ազդեցությանը: Գրաբարի հունաբան և լատինաբան տարբերակների ծագման և գոյատևման պատմական ընթացքն արդեն ապացուցել էր, որ, անկախ մտադրությունների տրամաբանությունից և կատարված փոփոխությունների որակից, լեզուն պահպանում է այն նորարակագնությունները, որոնք չեն հակասում իր բնույթին և համակարգին, մնացյալը մոռացվում է ժամանակի հորձանուտում: Հունաբան հայերենի բազմաթիվ փոփոխություններից հայերենը պահեց մեկ տասնյակից ավելի նախածանցները, նրանցով ստեղծված բառերը, ինչպես նաև նորագյուտ այն բարդությունները, որոնց կարիքը զգացվում էր: Նույնը եղավ աշխարհաբարի պարագայում. հոլովման և խոնարհման համակարգերի գրաբարաբանություններն աստիճանաբար դուրս մղվեցին, բառապաշարից դուրս մնացին բարբառային օտար փոխառությունները, բնիկ բառերի բարբառային հնչյունափոխված տարբերակները, դրանք փոխարինվեցին գրաբարի բառապաշարից ժառանգված ձևերով: Աշխար-

հաբարի երկու գրական տարբերակներում կատարված հնչյունական, քերականական փոփոխություններին միջին հայերենի և գրաբարի զուգադրմամբ կանոնադաշտանք համեմատական քերականության համապատասխան բաժիններում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբրահամյան Ա., Հայոց գիր և գրչություն, Եր., 1973:
2. Ադոնց Ն., Անծանոթ էջեր Մաշթոցի եւ նրա աշակերտների կեանքից ըստ օտար աղբիւրների, Հանդէս ամսօրեայ, քիւ 7-8, 1925:
3. Ադոնց Ն., Հայաստանի պատմություն, Եր., 1972:
4. *Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության*, Եր., հ. Ա, 1972:
5. Աճառյան Հ., Հայոց գրերը, Վիեննա, 1928:
6. Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, մաս I-II, Եր., 2013:
7. Այտընեան Ա., Զննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Վիեննա, 1866:
8. Աճնմյան Վ., Արևմտահայ աշխարհաբարի ձևավորումը, Եր., 1971:
9. Ավետիսյան Յ., Գրական հայերենի զարգացման երկու շրջավուրտը՝ գրաբար և աշխարհաբար, Եր., 2016:
10. Ավետիսյան Յ., Արևմտահայ բանաստեղծության լեզուն, Եր., 2002:
11. Իշխանյան Ռ., Նոր գրական հայերենը XVII-XVIII դդ., Եր., 1979:
12. Իշխանյան Ռ., Արևելահայ բանաստեղծության լեզվի պատմություն, Եր., 1978:
13. Համբարձումյան Վ., Լատինաբան հայերենի պատմություն (14-18-րդ դդ.), Եր., 2010:
14. Հայոց լեզվի պատմության քրեստոմատիա, Եր., 1987:
15. Հյուբշման Հ., Հայագիտական ուսումնասիրություններ, Եր. 2004:
16. Ղազարեան Ս., Հայոց լեզուի պատմութիւն, Անթիլիաս-Լիբանան, 2007:
17. Ղազարյան Ս., Հայոց լեզվի համառոտ պատմություն, Եր., 2006:
18. Ղափանցյան Գ., Հայոց լեզվի պատմություն. Հին շրջան, Եր., 1961:
19. Մանանդյան Հ., Երկեր, Բ, Եր. , 1978:
20. Մանանդյան Հ., Հունաբան դպրոցը և նրա զարգացման շրջանները, Վիեննա, 1925:
21. Մեյե Ա., Հայագիտական ուսումնասիրություններ, Եր., 1978:

22. Սկրտչյան Է., Աշխարհաբարի տարրերը միջնադարի գրական հուշարձաններում, Եր., 1980:
23. Մուրադյան Ա., Հունարան դպրոցը և նրա դերը հայերենի քերականական տերմինաբանության ստեղծման գործում, Եր., 1971:
24. Պետրոսյան Ա., Հայոց ազգածագման հարցի շուրջ / Հայոց ազգածագման հարցեր, Եր., 2006:
25. Ջահուկյան Գ., Հայոց լեզվի զարգացման փուլերը, Եր., 1964:
26. Ջահուկյան Գ., Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Եր., 1969:
27. Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987:
28. Mallory J., D. Adams, Encyclopedia of Indo-European culture, London, Chicago, 1997.
29. Гамкрелидзе Т., Иванов В., Индоевропейский язык и индоевропейцы, Тб., 1984.
30. Джаукян Г., Очерки по истории дописьменного периода армянского языка, Ер., 1967.
31. Мартirosян А., Первобытные иероглифы Армении и их урарто-армянские двойники/ Լրաբեր հասարակական գիտությունների, 1971, N 9:
32. Мифологический словарь, М., 1991.
33. Языки мира, Реликтовые индоевропейские языки Передней и Центральной Азии, М., 2013.
34. Тер-Мовсесян М., История перевода Библии на армянский язык, СПб., 1902.

Մաս I

ՊԱՏՄԱԿԱՆ ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Պատմական հնչյունաբանությունը հայոց լեզվի պատմության այն բաժինն է, որը կատարում է հայերենի հնչյունական համակարգի տարածամասնակյա քննություն՝ ներկայացնելով գրաբարի հնչյունների պատմական զարգացումը: Հնչյունաբանությունը ուսումնասիրում է հնչյունների ուղղախոսական, ուղղագրական առանձնահատկությունները, բառակազմիչ հատկանիշները՝ իբրև հնչույթների, բառերի վերլուծական բաղադրիչների՝ վանկերի կազմության մեջ նրանց կատարած դերը, շեշտի դրսևորումները, քերականական և տրամաբանական գործառնությունները, հնչյունափոխությունը՝ իբրև լեզվական իրողություն՝ իր տարբեր դրսևորումներով՝ պատմական, դիրքային, փոխազդեցական և այլն: Պատմական հնչյունաբանությունը կատարում է այս իրողությունների պատմական քննություն:

«Հնչյուն» և «հնչույթ» եզրույթների ճշգրիտ մեկնությունը հնարավորություն է տալիս ներկայացնելու տվյալ լեզվի հնչյունական համակարգի ամբողջական պատկերը: Հնչյունը լեզվի նվազագույն, այլևս անտրոնհելի նյութական միավորն է: Այն հնչյունները, որոնք ունեն բառակազմիչ արժեք, այսինքն՝ մոր բառ են կազմում, կոչվում են հնչույթ⁷⁰: Հնչույթը իմաստատարբերակիչ դեր կատարող հնչյունն է, հնչյունը՝ հնչույթի արտասանական և դիրքային տարբերակը, հնչույթի դրսևորումն է խոսքում⁷¹, իսկ հնչյունի գրային պատկերը տառն է:

Հայերենը՝ իբրև կառուցվածք, ձևավորվել է դեռևս լեզվի զարգացման հնագույն շրջանում, որը, ըստ Գ. Ջահուկյանի՝ հայոց լեզվի պատմության գիտական շրջանաբաժանման, ընդգրկում է Ք.ա. XII դարից մինչև Ք.ա. IV դարը⁷²: Այսինքն՝ գրավոր ժամանակաշրջանում

⁷⁰ Տե՛ս Է. Աղայան, Լեզվաբանության հիմունքներ, Եր., 1987, էջ 240-247:

⁷¹ Տե՛ս Ա. Մուքիսյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1999, էջ 20:

⁷² Հիմք ենք ընդունել հայոց լեզվի պատմության գիտական շրջաբաժանումը, որ տվել է ակադ. Գ. Ջահուկյանը: Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Եր., 1969, էջ 36-38:

ունեինք լեզվական կառուցվածքային այն որակները, որոնցով հայերենը՝ իբրև հնդեվրոպական լեզվաընտանիքի առանձին լեզու, ներկայացնում էր մայր լեզվի որոշակի հատկանիշները՝ իրեն բնորոշ փոփոխություններով: Վաղնջահայերենի (Ք.ա. 3-րդ հազարամյակի սկզբներից մինչև Ք.ա. 13-րդ դարը) և հնագույն հայերենի համար Գ. Ջահուկյանը ներկայացնում է ձայնավորների, երկբարբառների և բաղաձայնների հետևյալ համակարգերը⁷³:

Ձայնավորներ և երկբարբառներ

վաղնջահայերեն

e o a i u

ē ò ā ī ù

ei oi ai

eu ou au

հնագույն հայերեն

e o a i u

ei oi ai ui eu iu ia ua

iai uai uau uoi

Ինչպես տեսնում ենք, հնագույն շրջանն արդեն չունի կարճ և երկար ձայնավորներ: Նախալեզվում դրանք հնչույթային տարբերություններ ունեին⁷⁴: Հաջորդ էական փոփոխությունը հնդեվրոպական լեզվում բացակայող բարձրացող երկբարբառների և եռաբարբառների համակարգն է՝ **ia, ua, iai** և այլն:

Բաղաձայններ

վաղնջահայերեն

b [h] d [h] g [h] j [h]

p t k c

p[c] t[c] k[c] c[c]

s z h

⁷³ Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, էջ 225-226, 346-347:

⁷⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 225:

հնագույն հայերեն

b [h]	d[h]	g[h]	j[h]	j̃[h]	z	ž
p	t	k	c	č	s	š
p[c]	t[c]	k[c]	c[c]	č[c]	x	h

Գրային շրջանում արդեն վերացել են երկար և կարճ ձայնավորները, բաղաձայնական համակարգից՝ շնչեղ ձայնեղները: Մայր լեզվի ձայնորդ հնչյունները՝ y, w, i, m, n, r, ř, կորցրել են իրենց վանկարար արժեքը, ինչը բնորոշ է հնդեվրոպական լեզվաընտանիքի այլ լեզուների⁷⁵:

Մ. Մաշտոցը, տիրապետելով հայերենի հնչույթային համակարգին և այն որպես հիմք ընդունելով, գիտական ճշտությամբ է ստեղծել հայոց այբուբենը՝ յուրաքանչյուր հնչույթի համար մեկ գիր սկզբունքով: Ժամանակն ինքը տվեց մեսրոպյան այբուբենի գիտական հիմնավորումն ու արժեքը, քանի որ V դարից առ այսօր այբուբենում ընդամենը **օ** և **ֆ** տառերի ներմուտք է կատարվել, իսկ դա միջինհայերենյան իրողություն է, այսինքն՝ արտացոլում է միջին հայերենի հնչույթային առանձնահատկությունները:

Մ. Մաշտոցի օրոք քերականությունը դեռևս իր ձևավորման սկզբնակետում էր, և այնպիսի երևույթներ, ինչպիսիք էին՝ հնչույթ, հնչյուն, ուղղագրություն, ուղղախոսություն, հնչյունական նորմեր, բացառություններ, դեռևս մեկնաբանված ու քննված չէին: «Բայց Մեսրոպ Մաշտոցը միայն հնչույթաբան չի եղել. նա եղել է իր ժամանակի մեծագույն լեզվաբանը բառիս ամենալայն առումով, մի լեզվաբան, որ հիանալի կերպով հաշվի էր առել տարբեր վայրերի խոսվածքները և հստակ պատկերացում կազմել հայերենի ընդհանուր հնչյունական համակարգի մասին, որ խորապես ուսումնասիրել էր մեր լեզվի քերականական կառուցվածքը և ուղղագրության կանոնները որոշելիս հիմնվել քերականական տվյալների վրա, մի պայծառամիտ գիտնական, որ ոչ միայն իր, այլև հետագա բոլոր ժամանակների ամենախստագույն պահանջներին բավարարող կատարյալ այբուբեն է հորինել»⁷⁶:

⁷⁵ Մանրամասն տե՛ս **Ս. Ղազարյան**, Հայոց լեզվի համառոտ պատմություն, էջ 86-90:

⁷⁶ **Է. Աղայան**, Գրաբարի քերականություն, Եր., 1964, էջ 362:

Հին հայերենի հնչյունական համակարգը կազմված էր ձայնավորներից, բաղաձայններից, երկբարբառներից և եռաբարբառներից, որոնք, ինչպես տեսանք, ձևավորվել են մայր լեզվի հնչյունական համակարգի համապատասխան միավորներից՝ որոշակի փոփոխություններով:

Մեարոայան ալբուբենն ունի 36 գիր, որոնցից յուրաքանչյուրն առանձին հնչույթ է: Այն լիովին արտացոլում է գրավոր շրջանի դասական գրաբարի ենթաշրջանի հնչյունական համակարգը: Հայագիտության մեջ ընդունված է Հյուբշմանի կողմից առաջարկված գիտական հետևյալ տառադարձությունը:

Տառանշան	Տառի անունը	Տառադարձումը
Ա ա	ayb	a
Բ բ	ben	b
Գ գ	gim	g
Դ դ	da	d
Ե »	e	e
Զ զ	za	z
Է է	e	e
Ը ը	tʰ	ə
Թ թ	th	tʰ
Ժ ժ	že	ž
Ի ի	ini	i
Լ լ	lyun	l
Խ խ	xe	x
Ծ ծ	ča	č
Կ կ	ken	k
Հ հ	ho	h
Չ չ	ja	j
Ղ ղ	lat	l
Ճ ճ	če	č
Մ մ	men	m
Յ յ	hi	y
Ն ն	nu	n
Շ շ	ša	š

Ո ո	vo	o
Չ չ	č ^c a	č ^c
Պ պ	pe	p
Ջ ջ	je	j
Ռ ռ	ra	r
Ս ս	se	s
Վ վ	vev	v
Տ տ	tyun	t
Ր ր	re	r
Յ ջ	c ^c o	c ^c
Ի լ	vyun	w, u
Փ փ	p ^c yr	p
Ք ք	k ^c e	k ^c

Հայերենի քերականագիտության մեջ **լ** տառի տառադարձումը կատարվում է նաև **ս**-ով. սա պայմանավորված է գրաբարում **վ** հնչյունի եռատառ գրությամբ՝ **վ, լ, ու (v, w, u)**:

Հայտնի է, որ հայոց այբուբենի տառերն ունեն թվային արժեք, և իբրև այդպիսիք՝ դրանք թիվ արտահայտող միակ նշաններն էին մինչև արաբական թվանշանների փոխառությունը: Հայոց տառերով արտահայտվում են միավորները, տասնավորները, հարյուրավորները և հազարավորները:

Ա	այբ	1	Ժ	ժե	10	Ճ	ճե	100	Ռ	ռա	1000
Բ	բեն	2	Ի	ինի	20	Մ	մեն	200	Ս	սե	2000
Գ	գին	3	Լ	լյուն	30	Յ	հի	300	Վ	վեվ	3000
Դ	դա	4	Խ	խե	40	Ն	նու	400	Տ	տյուն	4000
Ե	եչ	5	Ծ	ծա	50	Շ	շա	500	Ր	րե	5000
Ջ	զա	6	Կ	կեն	60	Ո	ո	600	Յ	ցո	6000
Է	է	7	Հ	հո	70	Չ	չա	700	Ի	վյուն	7000
										(հյուն)	
Ը	ըթ	8	Չ	ձա	80	Պ	պե	800	Փ	փյուր	8000
Թ	թո	9	Ղ	ղատ	90	Ջ	ջե	900	Ք	քե	9000

Բյուրի նշանն է **ւ**. այն նշանակում էր տասը հազար:

Դասական գրաբարի հնչյունական համակարգի միավորներն են ձայնավորները, երկբարբառները, եռաբարբառները և բաղաձայնները: Ներկայացնենք նախ նրանց առանձնահատկությունները հին հայերենում, ապա՝ կրած փոփոխությունները միջին և նոր գրական հայերեններում:

1. Գրաբարի ձայնավորները, երկբարբառները և եռաբարբառները

Գրաբարի ձայնավորներն են *ա, է, ը, ի, ո, ու*: Դրանք դասակարգվում են երեք սկզբունքներով: Առաջին սկզբունքի համար հիմք է ընդունվում լեզվի արտաբերության տեղը, ըստ որի՝ ձայնավորները լինում են առաջնալեզվային, միջնալեզվային և հետնալեզվային (կամ՝ առաջին շարքի, միջին շարքի, հետին շարքի): Առաջնալեզվային են **ա, է** ձայնավորները, միջնալեզվային՝ **ը**, հետնալեզվային՝ **ա, ո, ու**:

Երկրորդ սկզբունքը լեզվի բարձրացման աստիճանն է, ըստ որի՝ **ու, ի** ձայնավորները վերին բարձրացման են, **ո, ը, է** ձայնավորները՝ միջին բարձրացման, իսկ **ա**-ն՝ ստորին:

Երրորդ սկզբունքի հիմքում ընկած է շրթունքների մասնակցության աստիճանը, ըստ որի՝ ձայնավորները լինում են շրթնայնացված և ոչ շրթնայնացված:

Շրթնայնացված են **ո, ու** ձայնավորները, մյուսները՝ ոչ շրթնայնացված:

	հետնալեզվային	միջնալեզվային	առաջնալեզվային
ստորին բարձրացման	ա		
միջին բարձրացման	ո (շրթնայնացած)	ը	է
վերին բարձրացման	ու (շրթնայնացած)		ի

Մետրոպոլիտան աթոռներում *հ* և *է* հնչյուններն արտացոլվել են տարբեր գրերով, քանի որ նրանք տարբեր հնչյութներ էին (օրինակ՝ *սէր* նշանակում է զգացմունք, *սէր՝* կաթի սեր): Դրանք դասական գրաբարի ենթաշրջանում ունեին տարբեր արտասանություն. *է*-ն ուներ երկբարբառային արտասանություն՝ *էյ*, իսկ հետդասական ենթաշրջանում այն վերածվում է պարզ փակ *ե*-ի: Ուստի և այս ենթաշրջանում արդեն *ե*-ն, որը փակ պարզ ձայնավոր էր արդի հայերենի *է*-ի նման, և երկբարբառակերպ *է*-ն ստանում են միևնույն արտասանությունը: Նրանք տարբեր ուղղագրություն են ունեցել: Այսպես՝ ա) բառավերջում *է* հնչյունը միշտ գրվել է *է* տառով, օրինակ՝ *Հեղինե, գուցե, բազե, եթե, որևե, բոպե* և այլն, բ) բառասկզբում արտասանվող *է* հնչյունը գրվել է *է* տառով, օրինակ՝ *էութիւն, էջ, էշ* և այլն, գ) բառամիջում արտասանվող *է*-ն գրվել է *է*-ով, եթե այն կարող էր հնչյունափոխվել *ի*-ի, օրինակ՝ *հանդէս > հանդիսի, սէր > սիրոյ, շէջ > շիջանի, նուէր > նուիրել* և այլն: Այս բառերը եթե բառարդման կամ բառածանցման դեպքում հանդես են գալիս բառավերջում, պահպանում են իրենց՝ *է*-ով գրությունը, օրինակ՝ *գահալէժ, այսպէս, Կրդէր* և այլն: Ունենք *պէտր* արմատի երկիմաստ գործածություն, որով պայմանավորվում է նրանց երկգրությունը, այսպես՝ *պէտրք*-պիտոյից (*անհրաժեշտություն իմաստով*) և *պէտր* (*առաջնորդ իմաստով*), որ գրվում է *ե*-ով, օրինակ՝ *մոզպէտր, քահանայապէտր* և այլն: *է*-ով են գրվում նաև այն հատուկ անունները, որոնք վերջանում են *էս, էոս, էլ, էն* ձևությամբով: Այս բառերում թեքման ժամանակ տեղի է ունենում *է > ի* կամ *է > հ* հնչյունափոխությունը, օրինակ՝ *Արդաշէս > Արդաշիսի, Աքիլէս > Աքիլեայ, Տիմոթէոս > Տիմոթեայ, Աբէլ > Աբելայ, Աշխէն > Աշխենայ, Մովսէս > Մովսիսի*: *է*-ն հանդես է գալիս նաև որոշակի բառածներում. այսպես՝ *հմ* օժանդակ բայն ունի սահմանական ներկա, անցյալ անկատար և ստորադասական ապառնի ժամանակաձևերը.

հմ, հս, է, հմք, էք, հն

էի, էիր, էր, էաք, էիք, էին

իցեմ, իցես, իցէ, իցեմք, իցէք, իցեն

եր, երուք/էք:

Դասական գրաբարում, պայմանավորված **է** հնչյունի երկբարբառային արտասանությամբ, բառերում և բառաձևերում **է** գրվում էր այն դեպքում, երբ հանդես էր գալիս *էյ* հնչյունակապակցությունը, օրինակ՝ *յրէր* բառում ունենք *յրի+այր*, որտեղ *ի*-ն հնչյունավորվել է *ե*-ի՝ *յրէյր*, որը և գրվել է *յրէր*: Դիտարկենք *է*-ով կառույցները խոնարհման և հոլովման համակարգերի բառաձևերում:

ա) Սահմանական եղանակի անցյալ անկատար ժամանակաձևերում *ե* և *ի* լծորդության բայերում առկա է *յ* հնչյունը, որն արտացոլում է անցյալ ժամանակային տիրույթի իմաստ (հմմտ.՝ խաղայի, գրէի, թողուի, նայէի): *Յ*-ն *ու*-ից հետո չի գրվում՝ ըստ գրաբարի ուղղագրական կանոնների: *Ի* լծորդության բայերը անորոշ դերբայի կազմում դասական գրաբարի ենթաշրջանում ունեն *ել* (հայել- հայիմ, պատերազմել- պատերազմիմ), ուստի անցյալ անկատարը լինում է *հայեյի-հայէի, երգեյի-երգէի*: բ) Սահմանական և ստորադասական եղանակների առաջին ապառնու եզակի երրորդ և հոգնակի երկրորդ դեմքերում *ե* լծորդության բայաձևերում ունենք *էյ> է* իրողությունը, այսպես՝

<i>գրեմ</i>	<i>Գրեմ</i>	<i>գրիցեմ</i>	<i>գրիցեմք</i>
<i>գրես</i>	<i>գրէք/էյք/</i>	<i>գրիցես</i>	<i>գրիցէք/էյք/</i>
<i>գրէ/էյ/</i>	<i>Գրեն</i>	<i>գրիցէ/էյ/</i>	<i>գրիցեն</i>

Ստորադասական եղանակի դեպքում նույն գրությունն ունեն նաև *ա* լծորդության բայերը, ինչպես՝ *աղայցեմ, աղայցես, աղայցէ(էյ), աղայցեմք, աղայցէք(էյք), աղայցեն*: Կամ՝ անձնական դերանունների հոլովման համակարգում անձնական դերանուններից առաջին դեմքի բացառականի *յինէն, ի մէնջ*, երկրորդ դեմքի՝ *ի քէն, ի չէնջ* ձևերում առկա է նույն երևույթը. եզակի թվում՝ *յն*, հոգնակի թվում *յնջ* դերանվանական վերջավորություններն են, այսպես՝ *յինէն=* յ+ին+ե+յն, *ի մէնջ=* ի մ+ե+յնջ, *ի քէն=* ի ք+ե+յն, *ի չէնջ=* ի ձ+ե+յնջ:

է-ն ուներ նաև հնչյունավորվելու հատկանիշ. այն կարող էր դառնալ *ի* կամ *ե*, օրինակ՝ սէր-սիրել, քէկն-քեկան: Իսկ *ե*-ն չէր հնչյունավորվում՝ բացառությամբ *դեւ* բառի՝ *դեւ-դիւի*: *Ե*-ն փոքրաթիվ բառերում

թեքման ժամանակ կարող էր սղվել, ինչպես՝ *ասեղն-ասղան, Բարսեղ-Բարսղի, Կիրեղ-Կիրղի, քիթեռն-քիթռան*: Այսպիսով՝ է-ն երկբարբառային արտասանությամբ միավոր էր՝ տարբեր *ե-ից*, և դրսևորում էր հնչյունափոխության և ուղղագրության՝ իրեն բնորոշ հատկանիշները: Պատմականորեն դիտարկելով է և **ե** հնչյույթների զարգացումը՝ տեսնում ենք նրանց տարբեր փոփոխությունները բարբառներում: Այս առումով հետաքրքիր օրինակներ է վկայակոչում Հ. Մուրադյանը. **բեռն** բառի համար Մշո բարբառում ունենք **բեռ**, Վանում և Շառախում՝ **պեռ**, իսկ **տեք** բառը նշված բարբառներում մնում է անփոփոխ⁷⁷:

Ա և *ո* ձայնավորները ամենահնչեղ ձայնավորներն են: *Ռ*-ն արտասանվել է կարճ արտասանությամբ՝ *ո*, իսկ *օ*-ն գրաբարում ունեցել է երկբարբառային *աւ* արտասանությունը, և քանի որ այն երկբարբառ է եղել, հանդես է եկել բաղաձայնից առաջ, օրինակ՝ *լուան* (*լրոն*), *նարաւոր* (*նարօր*), *կրաւն* (*կրօն*): Գրաբարում չի եղել որոշակի կանոն, ըստ որի՝ տարբերակվեին բառամիջում *ո*-ով գրվող բառերը *աւ*-ով գրվողներից: Բաղաձայնից առաջ *աւ* երկբարբառը արտասանվել է երկբարբառային *au* արտասանությամբ, ինչը ժամանակի ընթացքում բանավոր խոսքի ազդեցությամբ պիտի աստիճանաբար փոխվեր պարզ *ո* արտասանության՝ գրաբարի *ո*-ի նման: *Ա՛ւ* *օ* պատմական հնչյունափոխությունը կատարվել է X դարում, բայց առանձին *օ* տառի փոխառությունը լատիներենից և մեսրոպյան այբուբենի համալրումը նրանով կատարվել է XII դարում: Գրաբարում *աղանի*, *նաւթ* և *քաղեալ* (աստղագուշակ, կախարդ) բառերում *աւ-ը ալ* է արտասանվել: *Ալ* արտասանությունը չի փոխվել նաև գրաբարյան *ք* հոգնակերտ ձևույթից և *ւ*, *դ*, *ն* հոդերից առաջ, քանի որ վերջիններս բառահարաբերական ձևույթներ են, ունեն քերականական արժեք և բառիմաստի փոփոխություն չեն առաջացնում, օրինակ՝ *նաւ-նաւթ*, *հաւ-հաւթ*, *հաւս*, *հաւդ* և այլն (սրանցում *աւ-ը* երկ-

⁷⁷ Տե՛ս Հ. Մուրադյան, Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. 1, Եր., 1982, էջ 26: Տե՛ս նաև Հ. Աճառյան, Հայոց գրերը, Վիեննա, 1928, էջ 301: Նշված աշխատության 289-312 էջերում Հ. Աճառյանը ներկայացնում է գրաբարի ձայնավորների ամբողջական վերլուծություն: Հեղինակը հայերենի հնչյունական համակարգի պատմական և ընդհանուր լեզվաբանական ուսումնասիրություն է կատարել նաև իր «Լիակատար քերականություն հայոց լեզվի» 6-րդ հատորում, Եր., 1971:

բարբառ չէ): Է. Աղայանը իր «Գրաբարի քերականություն» աշխատության մեջ, մանրակրկիտ և բազմակողմանի ընդգրկմամբ վերլուծության ենթարկելով գրաբարի հնչյունական համակարգը, անդրադառնում է մասն *նաւթ* և *աղանիկ* բառերին՝ նշելով, որ որոշ բարբառներում դրանք դարձել են *նօթ*, *աղօնիկ(կ)* կամ *աղունիկ*, ուստի հետևելով Հյուբշմանի բացատրությանը՝ պիտի ենթադրել, որ արտասանվել են *նաւթթ*, *աղաւրնի* և այս դեպքում պիտի դառնային *նաւթ*, *աղաւմի*, իսկ առանց *ը-*ի արտասանության դեպքում կլինեին *նօթ*, *աղօնիկ(կ)*⁷⁸:

Ըստ Է. Աղայանի՝ *աւ-*ը երկբարբառ էր բաղաձայնից առաջ, «ձայնավորի և բաղաձայնների կապակցություն՝ ձայնավորից առաջ և բառավերջում» (Հ. Աճառյանը *աւ-*ը երկբարբառ էր համարում մաս բառավերջում), ուստի ունենք *հաւթ* և ոչ թե *հօթ*, քանի որ *թ-*ից առաջ արտասանվել է *ը՝ հաւթթ*⁷⁹: Այսինքն՝ հոգնակի գործիականում *ը չի* արտասանվել, իսկ հոգնակի ուղղականում ենթադրվում է, որ արտասանվել է: Է. Աղայանը նույն վերլուծությամբ է մեկնաբանում այդ երևույթը *ի* հոլովման գոյականների համար, օրինակ՝ *սրորիւք*, որտեղ չկա *ը-*ով արտասանություն, իսկ *իւ-*ով վերջացող բառերի հոգնակի ուղղականում եղել է *ը-*ով արտասանություն (*հովիւ-հովիւրք*)⁸⁰:

Ե և *ն* հնչյունների առնչությամբ Հ. Աճառյանը անդրադառնում է այն հարցին, թե արդյոք բառասկզբում *ե* (*je*) կամ *ն* (*vo*) արտասանություն ունեցել ենք հիմնգերոդ դարում: Հայագետը մախ քննում է *է-*ով և *ն-*ով սկսվող բառերի օտար տառադարձումները, որոնցում տառադարձված են իբրև պարզ ձայնավորներ: Մյուս կողմից՝ Հ. Աճառյանը համոզված է, որ եթե նրանք ունենային երկբարբառային արտասանություն, ապա Մ. Մաշտոցը մեկ գրով չէր արտահայտի⁸¹:

Ա և *ի* հնչյունները գրաբարում չունեին ուղղագրական առանձնահատկություններ: Նրանցից *ա-*ն հնչյունափոխվել է միայն *Ասպրուած* (Աստուծոյ), *արմալ* (արմտիք) բառերում:

⁷⁸ Տե՛ս Է. Աղայան, նշվ. աշխ., էջ 120:

⁷⁹ Նույն տեղում:

⁸⁰ Տե՛ս Է. Աղայան, նշվ. աշխ., էջ 122:

⁸¹ Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց գրերը, Վիեննա, 1928, էջ 302-305:

Բայց *ի*-ն, շեշտով պայմանավորված, ակտիվ հնչյունափոխություն է դրսևորել հետևյալ դեպքերում.

- ա) բառասկզբի *ի*-ն դարձել է *ը*, օրինակ՝ *իդշ-ըդշալի*,
- բ) բառամիջի փակ վանկում նույնպես *ի*-ն դարձել է *ը*, օրինակ՝ *սիրտ-սրտի*,
- գ) բառավերջի փակ վանկում *ի*-ն կարող էր սովել, ինչպես՝ *ամուսին-ամուսնոյ*,
- դ) բառավերջի բաց վանկում *ի*-ն *ո*-ից առաջ դառնում էր *ւ* (*որդի - որդւոյ, այգի - այգւոյ*) և *ե*՝ *ա*-ից առաջ, օրինակ՝ *այգի- այգեաւ*:

Հնչյունափոխական այս երևույթը, ինչպես նկատել է Պեդերսենը, կապվում է հնդեվրոպական *ի* և հնչամիացություններով վերջացող բառերի հետ. *ի* և *ու* միացությունը շեշտի ազդեցությամբ տվել է *ու*: Հնչյունափոխական այս կանոնը հետագայում տարածվել է նաև ոչ հնդեվրոպական ծագում ունեցող նման կարգի բառերի վրա⁸²: *Ա*-ից առաջ *ի*>*ե* հնչյունափոխությունը պահպանվում է գրական հայերենի մյուս շրջաններում ևս, այնինչ *ի*>*ւ* հնչյունափոխությունը գրաբարի *ո* և *ո-ա* խառը արտաքին հոլովումներում միջին հայերենում այլևս չկա, օրինակ՝ *որդի-որդւոյ* (գրբ.) - *որդոյ/որդու* (միջին հ.), *այգի - այգւոյ* (գրբ.) - *այգոյ/այգու* (միջին հ.):

Ը ձայնավորը շեշտակիր չէ: Գրաբարում բառասկզբում այն գրվում է *յայնորդ + պայթական կամ պայթաշիական* կապակցություններից առաջ, ինչպես՝ *ըդշալի, ըմբիշ, ընկեր, ընրիր, ընչասեր, ընծայ* և այլն: Ընդհակառակը, *սուլական* կամ *շական*+*պայթական* կապակցություններից առաջ *ը* երբեք չի գրվում, ինչպես՝ *սկսանիւմ, գրադիւմ, զգաստ, շրսապ, սպանանիւ* և այլն⁸³: Բացառություն է կազմում միայն *ըստ* բառը: *Ը*-ն ինքնուրույն հնչույթ է, ունի բառակազմիչ արժեք բառասկզբում և բառամիջում (գաղտնավանկ *ը*-ի տեսքով անգամ), իսկ բառավերջում այն շեշտակիր չէ ինչպես գրաբարում, այնպես էլ աշխարհաբարում:

⁸² Տե՛ս Ս. Ղազարյան, Հայոց գրական լեզվի պատմություն, Եր., 1961, էջ 185:

⁸³ Տե՛ս Է. Աղայան, Գրաբարի քերականություն, հ. 1, Եր., 1964, էջ 82:

Համեմատենք *ընդ-անդ-ունդ*, *սկն-սկան* (փոս), *վարս* (մագ) -*վարքս* (*վարք* բառի հայց. հոլով)⁸⁴:

Գրաբարում *ը*-ն վատահաբար առանձին հնչույթ է⁸⁵: Գրաբարում *ը*-ն՝ իբրև *ն* որոշիչ հողի տարբերակ, չի գործառվել. այն ձևավորվել է ավելի ուշ *ըն*-ով վերջացող բառերի հենքի վրա, որոնցում *ն* վերջնահնչյունը արժևորվում է իբրև որոշիչ հող՝ *ձուկն-ձուկ-ձուկ(ը)*, *հարսն-հարս-հարս(ը)*, *անձն-անձ-անձ(ը)*: Այն իբրև որոշիչ հող գործածության մեջ է մտել վաղ աշխարհաբարում: Բառամիջում այն գրվում է, երբ առկա է *ը*-ով սկսվող առանձին արմատ, օրինակ՝ *ամենընկալ*, *անընկեր* և այլն:

Ու ձայնավորի վերաբերյալ կա երկու մոտեցում. որոշ լեզվաբաններ այն համարում են պարզ ձայնավոր, մյուսները՝ երկբարբառային միավոր: *Ու*-ի ամբողջական և, կարծում ենք, անվիճահարույց բացատրությունը տալիս է. Աղայանը՝ նշելով. «Դասական գրաբարում *ու*-ն հանդես է գալիս իբրև ձայնավոր՝ ջուր, հուր և այլն, իբրև բաղաձայն (վ, ի), օրինակ՝ նուագ, նուէր: Մյուս կողմից նախաշեշտ *ու*-ն *ոյ*-ի լծորդն է (բոյս-բուսոյ, լոյս-լուսոյ) և այլն»⁸⁶: Պարզ ձայնավոր *ու* հնչույթը բառի մեջ երեք դիրքերում էլ ունի բառակազմիչ արժեք՝ *ունչ-ինչ* (բառասկիզբ), *սուր-սար* (բառամեջ), *նու* (հարս)-*նա* (բառավերջ): *Ու*-ն մույնպես շեշտից կախված հնչյունավորության է ենթարկվում.

ա) բառասկզբում այն դառնում է *ը*, օրինակ՝ *ունպ-ընպել*,

բ) բառամիջի փակ վանկում այն կարող է դառնալ *ը* կամ սովել, օրինակ՝ *գարուն-գարնանային*, *ջուր-ջրոյ*:

Վ հնչյունը գրաբարում ձայնավորից առաջ գրվում էր *ու*-ով, եթե նրան նախորդում էր բաղաձայն, օրինակ՝ *արուեստ*, *նուէր*, *պարուէր* և այլն: Սա պայմանավորված է նրանով, որ *ու*-ի մեջ կա *ւ* բաղադրիչը ($n+ւ = nu$): Այս կանոնին չէին ենթարկվում *ու* լծորդության բայերը՝ *թողուլ*, *գարթնուլ* և այլն, որոնք անցյալ անկատարում մույնպես պահպա-

⁸⁴ Մանրամասն տե՛ս Է. Աղայան, նշվ. աշխ., էջ 82-87:

⁸⁵ Տե՛ս Հ. Բարսեղյան, Ը ձայնավորը և նրա նշանային արտահայտությունը գրական հայերենում (Պատմական հնչյունաբանության ակնարկներ), Եր., 1999, էջ 12-26:

⁸⁶ Է. Աղայան, նշվ. աշխ., էջ 96:

նում էին իրենց *ու* արտասանությունը՝ *քողովի*: Այս ամենից ակնհայտ է *ու*-ի երկբարբառային բնույթը: Նշենք, որ Մաշտոցը *ու*-ն չի դիտարկել որպես հնչյուն, ուստի և նրա համար առանձին տառանշան չի ստեղծել:

Գրաբարի երկբարբառների և եռաբարբառների հարցում լեզվաբանները տարակարծիք են: Երկբարբառներ, որպես կանոն, համարվում են երկու ձայնավորների կամ մեկ ձայնավորի և մեկ ձայնորդի այն կապակցությունները, որոնք վանկարար են: Հայերենը հնդեվրոպական մայր լեզվից ժառանգել է սակավաթիվ երկբարբառներ, ընդ որում՝ երկու ձայնավոր սկզբունքով կազմված միայն մեկ երկբարբառ ունենք՝ *հա*: Եռաբարբառներն արդեն երկու ձայնորդից և մեկ ձայնավորից կազմված վանկարար կապակցություններ են: Է. Աղայանը և Է. Թումանյանը ընդունում են *հա*, *ուա*, *ուե*, *ուի*, *ուո*, *այ*, *աւ*, *եւ*, *ոյ*, *իւ*, *ւո* երկբարբառները և *ուէ* եռաբարբառակերպը⁸⁷: Սակայն հայագիտության մեջ առավել ընդունված է դասական գրաբարում հետևյալ երկբարբառների և եռաբարբառների տարբերակումը՝ *այ*, *աւ*, *հա*, *ոյ*, *եւ*, *իւ*, *հաւ*, *հայ*, *ւոյ*:

Ներկայացնենք գրաբարի երկբարբառները և եռաբարբառները: Երկբարբառներն են՝ ա) *այ* - այր, հայր, բ) *աւ* - աղ, ած, գ) *հա* - մատեան, ցորեան, դ) *եւ* և *իւ* - առեւծ, գիւղ, իւղ, ե) *ոյ* - բոյս, լոյս, գ) *ւո* - որդով, Կողբացով: Եռաբարբառներն են՝ ա) *հայ* - հրեայք, քրիստոնեայք, բ) *հաւ* - այգեաւ, սիրելեաւ, գ) *ւոյ* - հոգւոյս, ոսկւոյն, դ) *իայ* - միայն:

Երկբարբառները և *հայ* եռաբարբառը գրաբարում ենթարկվել են շեշտից կախված հնչյունափոխության, այսպես՝

ա) *ոյ*-ը դառնում է *ու*, օրինակ՝ *լոյս-լուսոյ*,

բ) *իւ*-ը *ա* ձայնավորից առաջ դառնում է *ե*՝ *սիւն-սեան*, իսկ բառավերջում՝ *ու*, օրինակ՝ *պարիւ-պարուոյ*,

գ) *հա*-ն դառնում է *ե*, օրինակ՝ *արեան-արեանկալ*, *ցորեան-ցորենոյ*,

դ) *հայ* եռաբարբառը դառնում է *է*, ինչպես՝ *հրեայ-հրէի*, *քրիստոնեայ-քրիստոնէի*:

⁸⁷ Տե՛ս Է. Աղայան, նշվ. աշխ., էջ 140, Զ. Туманян, Древнеармянский язык, М., 1971, с. 28; Структура индоевропейских имен в армянском языке, М., с. 431 (հնչյունաբանությունը տե՛ս 40-54 էջերում):

Միջին հայերենի ձայնավորները, երկարբառները, եռարբառները

Միջին հայերենի ձայնավորներն են՝ *ա, հ (է), ը, ի, ու, ո(օ)*: *Ե* և *է* հնչյունները աստիճանաբար արտասանական տարբերություններ են կրել. *է*-ն արտասանվել է, ինչպես *հ*-ն, այսինքն՝ կորցրել է իր երկարբառային, արտասանությունը, իսկ *հ*-ն բառասկզբում երկարբառային արտասանություն է ձեռք բերել՝ *յէ*: Այսպիսով՝ միևնույն հնչյունի համար ամրագրվել են *հ* և *է* տառերը: Բնականաբար ձևավորվել են նաև ուղղագրության փոփոխություններ: *Ե* ձայնավորը գրաբարում ուներ միայն *է* արտասանությունը, միջին հայերենում այն բառամիջում և բառավերջում արտասանվել է *է*, իսկ բառասկզբում՝ *է* կամ *յէ* և գրվել է *հ, յհ* տառերով: Հետևաբար խառնվել են *է* և *հ* հնչույթների գրության՝ գրաբարում ընդունելի կանոնները: Միջին հայերենում նրանք խառնված և չկանոնավորված ուղղագրությամբ են հանդես գալիս, օրինակ՝ *եթէ* // *եթե*, *գրեին* // *գրեին*, *գրէ* // *գրե* և այլն:

Միջին հայերենի ձայնավորների հետ կապված երկրորդ կարևոր իրողությունը գրաբարի *ո* ձայնավորի և *աւ* երկարբառի *օ* փոփոխությամբ ձևավորված *ո* և *օ* հնչույթների նույնացումն էր, այսինքն՝ նրանք դառնում են միևնույն հնչյունի տառային տարբերակներ: *Օ*-ն իբրև փակ հնչյուն, ձևավորվել է միջին հայերենում, որին համարժեք տառը փոխառություն է լատիներենից: *Օ* հնչույթի գրավոր երկակի դրսևորումների մասին (ո և աւ) առաջին անգամ խոսում է Վարդան Արևելցին. «Իսկ այս երեքս սուղ վասն այն ասին, զի մարդկայինք են. և երկոքին ոյերն՝ մին *ու* է, և միւս՝ *աւ*, զի *աւ*-ն բերանի բառ էր և ոյն քթի և այս ինքն է, զի յորժամ ասես թէ վոյ՝ նա քմաք ասի: Եւ վասն այսորիկ են սուղք և մարդկայինք⁸⁸»: Գ. Խաչերյանը իրավամբ բարձր է գնահատում Վ. Արևելցու վերոհիշյալ վկայությունը, քանի որ «այս վկայությունը կարևոր է նրանով, որ ուղղակի ակնարկում է արդեն 13-րդ դարում ո-ի և աւ-ի հնչույթային տարբերակումը արտասանական բազայում⁸⁹»:

⁸⁸ Վարդան Արևելցի, Մեկնութիւն քերականի, Եր., 1972, էջ 86:

⁸⁹ Վարդան Արևելցի, նշվ. աշխ., Առաջաբան, էջ 17:

Օ-ն գրվել է *n*, *o* և *au* տառակապակցությամբ: Դա միջին հայերենի հատկապես երկրորդ ենթաշրջանում վերանում է: Միջին հայերենում բառասկզբում գրաբարյան *n* ձայնավորը արտասանվում էր *վո* հնչյունակապակցությամբ, ինչը նույնպես անվանում են ձայնավորի երկբարբառայնացում, ինչպես *ե>յե*⁹⁰: Գրաբարյան արտասանությունը և գրությունը պահպանել են միայն *ով*, *ովքեր* դերանունները, ինչը և անցել է նոր գրական հայերենին: Գրաբարում շեշտը կայուն-շարժական էր, և շեշտից կախված հնչյունավորության ենթարկվում էին ձայնավորները, երկբարբառներն ու *հայ* եռաբարբառը: Միջին հայերենում նույնպես շեշտը ընկնում էր վերջին վանկի ձայնավորի վրա: Սակայն ենթադրվում է, որ բացի հիմնական շեշտից՝ եղել է նաև բառասկզբի վանկի ձայնավորի վրա ընկնող երկրորդական շեշտ, որի պատճառով էլ բառամիջի անգամ ուժեղ ձայնավորները միջին հայերենում ընկնում են, օրինակ՝ *վաճառական-վաճռկան-վաճ/ը/ռկան/*. փոփոխության է ենթարկվել միջին վանկի *ա*-ն, կամ *դարարոր-դ/ը/րավոր-դարոր* և այլն:

Միջին հայերենի շեշտավորական հնչյունավորությունը գրաբարի համեմատությամբ ունի էական տարբերություններ, որոնց առաջացումը և ամրակայումը ձևավորված է մի կողմից բանավոր խոսակցական լեզվի՝ գրավորի վրա ըստ ամենայնի ազդեցությամբ, մյուս կողմից՝ բարբառների՝ իբրև լեզվական որոշակի հատկանիշներով տարբերակված միավորների տարածմամբ⁹¹: Ի հակադրություն գրաբարի՝ *ա* ձայնավորը միջին հայերենում, շեշտից կախված, որոշակի հնչյունավորությունների է ենթարկվել: Այսպես՝

ա) այն ընկել է *-ան*- տուկածանց և *-ուցան*- պատճառական ածանց ունեցող բայերում, որի արդյունքում գրաբարի *-ան*- տուկածանց ունեցող բայերը կան այն լրիվ են կորցրել, ինչպես՝ *գարկանել-գարկել*,

⁹⁰ Տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 116-118, Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 6, Եր., 1971, էջ 230:

⁹¹ Միջին հայերենի հնչյունական համակարգի առանձնահատկությունների մանրակրկիտ վերլուծություն է կատարում Յ. Կարստը իր «Կիլիկյան հայերենի պատմական քերականություն» աշխատության մեջ (Եր., 2002, էջ 24-108): Միջին հայերենում հնչյունավորության տարբեր իրողությունները հեղինակը քննում է նույն բաժնի «Հավելվածում» (էջ 108-116):

հատրանել-հատրել, կա՛մ միայն *ա*-ն են կորցրել, օրինակ՝ *տեսանել-տեսնել*, *մտրանել-մտրնել*, *հարցանել-հարցնել*, *խաղացուցանել-խաղացուցնել*, *վազեցուցանել-վազեցուցնել* և այլն:

բ) Երկու և ավելի *ա* ունեցող բառերում և բառաձևերում այն ընկել է կամ դարձել *ը*, օրինակ՝ *դատաստան-դատրտան*, *քաքաուոր-քաքուոր*, *բըբաուոր*, *դատաուոր-դատաուոր*, *դըրաուոր* և այլն:

Սա հաճախադեպ իրողություն է և կարելի է համարել օրինաչափություն:

Միջին հայերենին բնորոշ են նաև *ա*-ի հնչյունափոխության նաև մասնակի դեպքեր:

ա) *Ա*-ն կարող էր դառնալ *ը*, օրինակ՝ *անել-ընել*, *անկանել-ընկնիլ*, *ամեն-ըմենդ*, *ամենայն-ըմենուն* և այլն: Այս իրողությունը հազվադեպ է տեղի ունենում *մ* և *մ* ռեզային հնչյուններից առաջ:

բ) Որոշ դեպքերում *ա*-ն կարող է դառնալ *է*, օրինակ՝ *Ալեքսան-Էլեքսան*, *փայծադն-փայծեդն* և այլն:

գ) Տեղի է ունենում *ա > օ* հնչյունափոխություն *ա* ներքին թեքման բառերի գործիական հոլովում (*ամբ* վերջավորությամբ), ինչպես՝ ձկամբ-ձկօմ, անձամբ-անձօմ, ձեռամբ-ձեռօմ:

Ո (*օ*) ձայնավորը միջին հայերենում *ա*-ի նման հնչյունափոխվում է այն բազմաձևից բառերում, որոնցում առկա էր մեկից ավելի *ո*, օրինակ՝ *ժողովել-ժողվել*, *կոտորել-կոտրել* կամ *կըտորել*, *խոցուրել-խոցրել* և այլն: Որոշ դեպքերում *ո*-ն փոխվում էր *ու*-ի, օրինակ՝ *երեկոյ-իրիկուն*, *քո-քու*, *տումար-տումար* և այլն:

Ե-ն գրաբարում չէր հնչյունափոխվում, բայց միջին հայերենում այն կարող էր դառնալ՝

ա) *ի* կամ սղվել որոշ բառերում, օրինակ՝ *երեցկին-իրիցկին*, *մենակ-մինակ*, *վայելէ-վայիլ-վայլէ*, *երեսուն-երսուն*, *աւերել-աւիրել*, *աւրել*, *գիրենաւ-գիրնաւ* և այլն:

բ) *ա* կամ *ը*, օրինակ՝ *եղբայր-աղբար*, *եղունկն-ըղունկն*, անգամ սղվել, ինչպես՝ *ղունկն*,

գ) *ցերեկ* բառում այն հանդիպում է նաև *ե > ո* փոփոխությամբ՝ *ցերեկ > ցորեկ*:

Ու ձայնավորը գրաբարում հիմնականում դառնում էր *ը* կամ սղվում էր, ինչը բառի մեջ տարբեր դիրքերում պահպանվել է նաև միջին հայերենում:

ա) բառասկզբի *ու*-ն դառնում է *ը*, օրինակ՝ *ուղեղ-ըղեղ, ուղտապան-ըղտապան*,

բ) բառամիջում կարող է ընկնել, ինչը բնորոշ է պատճառական բայերին՝ *խաղացուցանել>խաղացուցնել* և ապա՝ *խաղացնել, կորուսանել>կորսնել*,

գ) բառամիջում *ու* կարող է դառնալ *ը՝ սուրբ>սրբեր, ջուր>ջրոյ-ջրեր*,

դ) գրաբարի այն բառերում, որոնցում բաղաձայնի և ձայնավորի միջև լսվող *ու*-ն գրվում էր *ու*-ով, միջին հայերենը արձանագրում է *ու>վ(ւ)* փոփոխությունը, օրինակ՝ *թուական>քվական (քական), նուէր>նվէր, լեզուի>լեզվի* և այլն:

Ի ձայնավորը միջին հայերենում պահպանել է շեշտից կախված հնչյունափոխության գրաբարյան իրողությունները:

ա) Բառասկզբում և բառամիջում կարող է դառնալ *ը*, օրինակ՝ *ինձ-ընչեհնաւոր, սիրտ-սրտի*:

բ) Երբեմն *ի*-ն կարող է սղվել, ինչպես՝ *մարմին>մարմնոյ-մարմնի, ամուսին>ամուսնոյ, ամուսնու*: Գրաբարյան այն բառաձևերում (*ո* և *ո-ս* խառը արտաքին հոլովման ժամանակ), որոնցում *ո*-ից առաջ ունենիք *ի>ւ* հնչյունափոխություն, միջին հայերենում աստիճանաբար տեղի է ունենում բառավերջի *ի>ու* հերթագայություն, քանի որ նշված հոլովումները միջին հայերենում անցնում են *ու* հոլովման հետևյալ հերթականությամբ՝ *որդի-որդոյ-որդոյ* և ապա՝ *որդու, այգի-այգոյ-այգոյ* և ապա՝ *այգու*, գործիականում *ի*-ն կարող լինել կամ՝ ոչ, օրինակ՝ *այգիով //այգով*:

գ) Բառավերջում *ի*-ն *ս*-ից առաջ հնչյունափոխվում է *ե*-ի՝ *որդի+ս+սեր>որդեսեր, այգի+ս+պան>այգեպան*, որոշ դեպքերում՝ բաղաձայնից (երբեմն ոչ բաղաձայնից) առաջ, օրինակ՝ *ուղիղ>ուղեղ, ջիղ-ջեղ* և այլն:

Ը ձայնավորը հիմնականում չհնչյունափոխվող ձայնավոր է՝ քա-
ցառությամբ մի շարք բառերի, որոնցում գաղտնավանկի ը-ն կարող է
դառնալ ի, ինչպես՝ *դժուար>դիժար* և այլն:

Բարբառները, պահպանելով գրաբարին բնորոշ հնչյունափոխա-
կան դեպքերը, արձանագրում են մասն հնչյունների՝ իրենց բնորոշ
առանձնակի փոփոխություններ:

Ստորև ներկայացնենք դրանց բնորոշ հետևյալ դեպքերը.

ա) **ա** ձայնավորը կարող է դառնալ **օ** կամ քմային **օ**, ինչպես՝
հաց>հօց, *բարձ>բօրձ*,

բ) **ա**-ն կարող է դառնալ **ու** կամ քմային **ու**, օրինակ՝ *հաց>հուց*,
կարաս>գուրուս,

գ) **ա**-ն կարող է դառնալ **է**, օրինակ՝ *բան>պէն*,

դ) **ա**-ն կարող է դառնալ **ի**, օրինակ՝ *աւել>իւիլ*:

Աճառյանի օրենքի համաձայն՝ այն բարբառներում, որոնք ձայնեղ
բաղաձայնների խլացում են արձանագրում, միաժամանակ **ա**-ն դառ-
նում է քմային՝ *բան>պա՞ն*, *բարակ>պա՞րա՞կ*:

Է և **ե** հնչյուններին բնորոշ են հնչյունափոխության հետևյալ դեպ-
քերը.

ա) **է**-ն կարող է դառնալ **ա**, օրինակ՝ *մէջ>մաջ*,

բ) **է**-ն կարող է դառնալ **ը**, օրինակ՝ *դեպի>դըբա*,

գ) **ե**-ն կարող է դառնալ **է**, օրինակ՝ *երագ>էրագ*,

դ) **ե**-ն կարող է դառնալ **ա** կամ **ա՞**, օրինակ՝ *երկու>արկու*,
երկաք>արկա՞ք,

ե) **ե**-ն կարող է դառնալ **ի**, օրինակ՝ *երեք>իրեք*,

զ) **ե**-ն կարող է դառնալ **յի**, օրինակ՝ *երբ>յիփ*,

է) **ե**-ն կարող է դառնալ **օ** կամ **օ՞**, օրինակ՝ *երդում>օրդում*, *լե-
ղակ>լօղակ*,

ը) **ե**-ն կարող է դառնալ **ը** կամ **օ**, օրինակ՝ *մեր>մըր*, *մեծ>մօծ* և այլն:

Ի-ն կարող է դառնալ՝

ա) **է**- խիղճ>խէղճ,

բ) **ույ**- մին>մույն,

գ) **էյ**- լիզել>լէյզիլ և այլն:

Ո-ն կարող է դառնալ՝

ա) **ու**- փող>փուղ,

բ) **ա**- ոսկի> ասկի,

գ) **է**- ոչխար>էխչար և այլն:

Ու-ն կարող է դառնալ՝

ա) **օ**- շուն>շօն,

բ) **օու**- ջուր>ձօուր և այլն:

Գրաբարի երկբարբառները միջին հայերենում վերածվել են երկ-
հնչյունների կամ ձայնավոր հնչյունների: Այսպես՝ *այ* երկբարբառը
դարձել է *ա* կամ *է*, օրինակ՝ *այս*>*աս* կամ *էս*, որոշ դեպքերում՝ *է* կամ *ը*,
օրինակ՝ *այսրենդ*>*ըսրենդ*, *տղայք*>*տղէք* և այլն: *Ա* երկբարբառը դար-
ձել է *օ* (գրվում էր *օ*, *ո* կամ *ա*), օրինակ՝ *խաղացո*//*խաղացո*, *խաղացաւ*,
սակայն այս իրողությունը աստիճանաբար վերանում է, և *աւ*>*օ* փոփո-
խությունն արձանագրվում է որպես օրինաչափությունը (հար>հօր):

Ընդհանրապես, միջին հայերենում զգալի են ուղղագրական իրո-
դությունների չնորմավորված երևույթները, բազմաձևությունները: Քանի
որ լեզվի բոլոր մակարդակների միավորները միջին հայերենում ձևաի-
մաստային դաշտի որոշակի փոփոխություններ էին կրում (փոխվում էին
գրաբարյան կառույցները, նոր միավորները դեռևս կազմավորման գործ-
ընթացում էին և պիտի օրինաչափություն դառնային երկրորդ ենթա-
շրջանի վերջերին միայն), լեզուն՝ իբրև կառուցվածք, էական և արմա-
տական փոփոխությունների էր ենթարկվում: Դա առավելապես պիտի
ընդգրկեր ուղղագրության ոլորտը, քանի որ հնչյունական համակարգը
ավելի քան բանավոր-խոսակցական լեզվի ազդեցությամբ առավելա-
գույն և անմիջական հաղորդակցման տիրույթին առնչվող փոփոխու-
թյուններ է կրել: *Ես* երկբարբառը դարձել է *է* կամ *ե* (*գրեալ-գրել*, *գրեա-*
գրէ, *իրեանց-իրենց*) և *ա*, ինչը հատկապես երևում է խառը խոնարհ-
ման անցյալ կատարյալի կառույցներում՝ *թռեաւ-թռաւ*, *փախեալ-փա-*
խա և այլն:

Ես>*է* հնչյունափոխությունը արտահայտվել է նաև բուն հրամայա-
կանի կազմում, օրինակ՝ *գրեա-գրէ՛*, *սիրեա-սիրէ՛*: Այս փոփոխությամբ է
անցյալ դերբայից ձևավորվել վաղակատար դերբայը՝ *խաղացեալ-*

խաղացել, խաղացելք։ Ոյ երկբարբառը դարձել է ու կամ ի, օրինակ՝ լոյս-լուս//լիս, քոյր-քուր//քիր և այլն։ Նույն ձևով n, n-ա խառը հոլովման բառերն անցել են ու արտաքին հոլովման, օրինակ՝ որդի>որդոյ>որդոյ>որդու, յգի>այգոյ>այգոյ>այգու, խաղալ>խաղալոյ>խաղալու և այլն։ Իւ երկբարբառը դարձել է ու կամ ի, օրինակ՝ արիւն>արուն, սիւն>սուն, իւր>իր, իրեանք>իրենք։ Հանդիպում են նաև իւ>ոյ (առեւծ, առիւծ>առոյծ) կամ իւ-ե հնչյունափոխության դեպքեր (երկիւղ>երկեղ)։ Եսու եռաբարբառը բառավերջում դարձել է եւ, օրինակ՝ առաջեւ>առջեւ։ Եայ եռաբարբառը դարձել է էյ, ապա՝ է, օրինակ՝ քրիստոնեայ>քրիստոնէ, երկաթեայ>երկաթէ։

Բարբառներում գրաբարի երկբարբառները վերածվել են պարզ ձայնավորների կամ երկհնչյունների.

ա) ալ>է- այն>էն (Վան),

ալ>ա կամ ա- եղբայր>ախպար (Նոր Նախիջևան),

այն>ան (Մեղրի) և այլն,

բ) եա>է –ցորեան>ցօրէն (Վան), սիրեա>սիրէ (Նոր Նախիջևան),

եա>ի-ցորեան>ցօրին (Սասուն),

գ) իւ>ու կամ ի- հարիւր>հարուր (Թբիլիսի), ձիւն>ձուն (Մեղրի/

իւ>է կամ ի- գիւղ>գիղ կամ գէղ (Կարին),

դ) աւ>օ կարատ>կարօտ (Նոր Նախիջևան), խաւսել>խօսիլ (Թիֆ-լիս)։

Չայնավորները և երկհնչյունները նոր գրական հայերենում

Նոր գրական հայերենում ձայնավորները բնութագրվում են արտասանական հետևյալ հատկանիշներով.

ա - հետնալեզվային, ստորին բարձրացման,

օ - հետնալեզվային, միջին բարձրացման, շրթնայնացված,

ու - հետնալեզվային, վերին բարձրացման, շրթնայնացված,

է - առաջնալեզվային, միջին բարձրացման,

ի - առաջնալեզվային, վերին բարձրացման,

ը - միջնալեզվային, միջին բարձրացման։

Չայնավորները արևելահայերենում և արևմտահայերենում դրսևորում են ուղղագրական և ուղղախոսական որոշակի հատկանիշներ⁹²:

Սույն աշխատանքը չձանրաբեռնելու նպատակով անդրադառնանք միայն ձայնավորների և երկհնչյունների դիրքային (շեշտից կախված) հնչյունափոխության կարևոր դեպքերին:

Գրական արևելահայերենում դիրքային հնչյունափոխության հիմնականում ենթարկվում են **է/ե, ի, ու**, ավելի սակավ՝ **ը, ա** և **ո/օ** ձայնավորները:

Է/ե ձայնավորի հնչյունափոխությունը:

ա) **Է/ե** ձայնավորը բառասկզբում դառնում է **ի** հետևյալ բառերում՝ էջ>իջնել, էգ>իգական, էշ>իշաբեռ: բ) Փակ վանկում դառնում է **ի**, ինչպես՝ սեր>սիրելի, տեր>տիրուհի, վեճ>վիճելի և այլն: գ) Երբեմն կարող է սղվել, ինչպես՝ ցորեն>ցորնամորթ, հայերեն>հայրեն, ասեղ>ասղտել և այլն: դ) Բառավերջի բաց վանկի **ե**-ն չի հնչյունափոխվում, օրինակ՝ բոպե - բոպեական, մարգարե - մարգարեություն և այլն:

Ի ձայնավորի հնչյունափոխությունը:

ա) Բառասկզբի **ի**-ն դառնում է **ը** հետևյալ բառերում՝ ինձ>ընձուղտ, ինչք>ընչաքաղց, իղձ>ըղձական: բ) Փակ վանկի **ի** ձայնավորը դառնում է **ը**, օրինակ՝ գիր>գրական, սիրտ>սրտոտ, միտք>մտավոր և այլն: գ) Փակ վանկում այն կարող է սղվել, ինչպես՝ դեղին>դեղնակարմիր, վարիչ>վարչություն, միջին>միջնաբերդ: դ) Բառավերջի **ի**-ն **-ակ** ածանցից առաջ դառնում է **յ**, օրինակ՝ որդի>որդյակ, պատանի> պատանյակ, կղզի>կղզյակ: ե) Հոդակապից առաջ **ի**-ն դառնում է **ե**, ինչպես՝ բարի>բարեսիրտ, որդի>որդեսեր, իսկ **ավոր** ածանցի հավելմամբ ստացվում է **ևոր**. հոգի-ավոր>հոգեվոր>հոգևոր:

Ու ձայնավորի հնչյունափոխությունը:

ա) Բառասկզբի **ու**-ն դառնում է **ը** հետևյալ բառերում՝ ունդ>ընդդեմ, ումպ>ըմպանակ, ունչ>ընչացք: բ) Փակ վանկի **ու**-ն հնչյունափոխվում է **ը**-ի, օրինակ՝ տուն>տնական, ջուր>ջրառատ, կուռ>կռնատ և այլն: գ) Փակ վանկի **ու**-ն կարող է սղվել, ինչպես՝ ամուր>ամրոց, գա-

⁹² Մանրամասն տե՛ս **3. Ավետիսյան**, նշվ. աշխ., էջ 6-29:

րուն>գարնանամուտ, մածուն>մածնաթան և այլն: դ) Բաց վանկի **ու**-ն երբեմն դառնում է **վ**, այսպես՝ չու>չվերթ, ձու>ձվածեղ, կատու>կատվա-
ձագ և այլն:

Ը ձայնավորը հնչյունափոխվում է միայն մեկ դեպքում, երբ գաղտ-
նավանկով վերջացող բառին ավելանում է ձայնավորով կցվող ձևույթ,
ինչպես՝ ակն - ակնակապիճ, դուստր - դստրիկ, մանր - մանրել և այլն:

Ա և **ո** ձայնավորները հազվադեպ են հնչյունափոխվում: Դառնում են **ը** արմատի կրկնությամբ կազմված բարդություններում՝ *վազվզել, ծամծմել, քաշքշել, քափքփել, կապկպել, փորփրել, դողդղալ* և այլն, կարող են սղվել՝ դաղարել>անդաղլում, մատաղ>մատղաշ, համա-
րել>համրել, կոճակ>կոճկել, շաբաթ>երկուշաբթի, քաղաք>քաղքենի,
բաղանիք>բաղնիք, ոսկոր>ոսկրածուծ, որկոր>որկրամոլ, օրորան>
բնօրորան, կոտորել>կոտրել, ծոծորակ>ծոծրակ և այլն: Կրկնավոր բար-
դություններում հանդիպում են ա>ու, ա>ո, ա>ե և այլ փոփոխություններ,
օրինակ՝ մանր-մուր, մագ-մուգ, քաղցր>մեղցր, լակոտ-լուկուտ, հայիո-
յել և այլն: Ի տարբերություն արևելահայերենի՝ արևմտահայերենում **ա**
ձայնավորի հնչյունափոխության դեպքերը շատ են: Միջին հայերենից է
ժառանգել **-ան**- սոսկածանցի հնչյունափոխված **ն**-ով տարբերակը, օրի-
նակ՝ գողանալ/գողնալ, մոռանալ/մոռնալ, շատանալ/ շատնալ և այլն:
Եթե արևելահայերենին բնորոշ են *խ, ու* ձայնավոր ունեցող վասկ վան-
կով բառերի հոգնակի հնչյունափոխված ձևերը (սրտեր, գրքեր, տներ,
մկներ), ապա արևմտահայերենում դրանք հանդես են գալիս անհնչյու-
նափոխ տարբերակով (սիրտեր, գիրքեր, տուներ, մուկեր): Ձայնավոր-
ների հնչյունափոխության հիմնական հատկանիշները նշելով՝ ավելաց-
նենք, որ արևելահայերենի և արևմտահայերենի հնչյունաբանությանը
նվիրված աշխատություններում տրվում է դրանց ամբողջական պատ-
կերը⁹³:

Նոր գրական հայերենում գրաբարի երկբարբառները դարձել են
երկհնչյուններ: Դրանք տարբեր փոփոխություններ են կրել արևելահա-

⁹³ Տե՛ս **Ա. Սուքիասյան**, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1999, էջ 49-52, **Յ. Ավետիսյան**,
Արևելահայերենի և արևմտահայերենի զուգադրական հնչյունաբանություն, Եր., 2011, էջ
52-75:

յերենում և արևմտահայերենում: Արևմտահայերենը հիմնականում պահպանել է գրաբարի երկբարբառների ավանդական ուղղագրությունը⁹⁴:

*Ի*ւ երկբարբառը արևելահայերենում դարձել է *յու*, օրինակ՝ *գիւղ> գյուղ*, իսկ արևմտահայերենում ունի եռարժեք դրսևորում.

ա) *իւ-ու* (իբրև *ու* ձայնավորի նշան), օրինակ՝ *առիւծ*: Այս դեպքում այն համարժեք է ֆրանսերենի *ս-ի*ն⁹⁵, օրինակ՝ *հիւթ* (գրվում է 4 տառով, արտասանվում 5 հնչյունով),

բ) *իւ>* քմային *ու*, օրինակ՝ *հյւրաքանչիւր*,

գ) *իւ-ի* ձայնավոր + *ւ* բաղաձայն, օրինակ՝ *հովիւ*, *պապիւ*, կամ *ա* ձայնավորից առաջ, օրինակ՝ *հիւանդ*: Բառամիջում (նույն արմատների դեպքում) դառնում է *ու*, օրինակ՝ *թիւ-թուական*, *հաշիւ-հաշուել* և այլն:

Յու երկհնչյունը արևելահայերենում կարող է ենթարկվել հետևյալ փոփոխությունների.

ա) կարող է սղվել, ինչպես՝ *ալյուր> ալրադաց*, *արյուն> արնանման*,

բ) կարող է փոխվել *ը-ի*, օրինակ՝ *շյուն> ջնաքութ*,

գ) կարող է դառնալ *ե*, ինչպես՝ *միություն> միութենական*, *եղջյուր> եղջերավոր* և այլն:

Այ-ը արևելահայերենում դառնում է *այ* երկհնչյուն և բացառություն չի ճանաչում: Նույնը չի կարելի ասել արևմտահայերենի մասին, որտեղ այն կարող է կարդացվել պարզ *ա* ձայնավոր: Սա նշանակում է, որ բառավերջում *յ-ն* արևմտահայերենում գրվում և չի կարդացվում, օրինակ՝ *վկայ-վկա*, *արքայ-արքա*, *Վանայ-Վանա*, *տղայ-տղա*, *կայ-կա* և այլն: Սակայն բառամիջում նշված արմատներում այն կարդացվում է՝ *արքայական*, *կայարան*: Արևմտահայերենում *յ-ն ա-ից* հետո չի գրվում հետևյալ դեպքերում.

ա) եզակի բուն հրամայականի կառույցներում՝ *խաղալ-խաղա՛, կարդալ-կարդա՛*,

բ) *ահա*, *հիմա*, *սպա*, *հապա* բառերում,

⁹⁴ Տե՛ս **3. Ավետիսյան**, նշվ. աշխ., էջ 25:

⁹⁵ Տե՛ս նույն տեղում:

գ) փոխառյալ հատկանուններում, օրինակ՝ *Անանիա, Սոնա, Աննա, Ասիա* և այլն, այդ թվում՝ նաև *խա*-ով վերջացող հասարակ անուններում, որոնք նույնպես փոխառություններ են, օրինակ՝ *մումիա, քիմիա* և այլն:

Ոյ երկբարբառը արևելահայերենում դարձել է *ույ* երկհնչյուն՝ *քոյս-քույս, լոյս - լույս*: *Ոյ*-ը արևմտահայերենում հանդիպում է բառամիջում և բառավերջում հետևյալ կանոնարկմամբ⁹⁶:

1. Բառամիջում բաղաձայնից առաջ *ույ* երկհնչյունը գրվում է *ոյ*-ով, օրինակ՝ *լոյս-լույս, քոյս-քույս*: Բացառություն են կազմում ձայնարկությունները, օրինակ՝ *վույ՛, է՛յ* և այլն:
2. Բառավերջում այն կարդացվում է իբրև պարզ ձայնավոր, ինչպես՝ *պահածոյ, դշտոյ* և այլն:
3. Բառավերջում *ոյ*-ը մնում է երկբարբառակերպ միայն միավանկ բառերում, օրինակ՝ *խոյ, Նոյ, գոյ* և այլն:
4. Բառասկզբում *ոյ*-ը հանդես է գալիս *ոյժ* և *ոյծ* բառերում, որոնցից *ոյժ*-ը գործածական է *ուժ* ձևով, իսկ *ոյծ*-ը միայն բառածանցման ժամանակ է գործածվում, ինչպես՝ *ուծանալ, ուծացում* և այլն:

Ինչպես տեսնում ենք, արևելահայերենն ու արևմտահայերենը այս դեպքում տարբերություններ չեն դրսևորում:

Ույ երկհնչյունը շեշտից կախված հնչյունափոխության է ենթարկվում հետևյալ դրսևորումներով.

- ա) *ոյ՛ ու* (արևել.) *գույն-գունավոր, ոյ՛ ու* (արևմտ.) *գոյն - գունավոր*,
- բ) այն կարող է սղվել, օրինակ՝ *սառույց - սառցակալել, սառույց - սառցապար,*
- գ) կարող է մնալ անփոփոխ՝ *առույգ - առույգանալ, առույգ – առոյ - գանալ*:
- դ) կարող է դառնալ *ը՝ բույն - բնավեր, բույր - բրոջ*:

Եւ-ն արևելահայերենում դարձել է *յա* երկհնչյուն, օրինակ՝ *պարեան> պարյան*, որը կարող է շեշտից զրկվելով դառնալ *հ*, ինչպես՝

⁹⁶ Տե՛ս 3. Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 27-28:

մարտանք, մարտենագիր, վայրկյան, վայրկենական, կյանք, կենարար, առօրյա, առօրեական և այլն: Յա-ն հնչյունափոխվում է *ի*-ի միայն *խարորյաշ* բառով բաղադրված կազմություններում, օրինակ՝ *խարորիշահեր*:

2. Բաղաձայնական համակարգը գրաբարում

Վերը նշել ենք նախալեզվի բաղաձայնական համակարգի տեղաշարժերը նախագրային շրջանում: Գրային շրջանում արդեն չկային շնչեղ ձայնեղները, և դասական գրաբարը հանդես էր գալիս եռաշարք բաղաձայնական համակարգով, որտեղ ունենք ձայնեղ, խուլ և շնչեղ խուլ հակադրությունը:

Ընդունված է բաղաձայնները դասակարգել հետևյալ սկզբունքների համաձայն՝

1. ըստ ձայնի և աղմուկի, որի ժամանակ տարբերակվում են ձայնեղ, խուլ, շնչեղ խուլ և ձայնորդ բաղաձայնները,
2. ըստ արտաբերության եղանակի, որի դեպքում առանձնացվում են պայթական, շփական և կիսաշփական (կամ կիսապայթական, պայթաշփական) բաղաձայնները,
3. ըստ արտաբերության տեղի, որին համապատասխան՝ բաղաձայնները լինում են առաջնալեզվային, միջնալեզվային, հետնալեզվային, երկշրթնային, շրթնատամնային, հագագային,
4. ըստ կազմության, որի դեպքում անջատվում են պարզ և բարդ բաղաձայնները:

Նախագրային շրջանում հնդեվրոպական մայր լեզվի քառաշարք բաղաձայնական համակարգը դեռ պահպանվում էր⁹⁷: Գրային շրջանում շնչեղ ձայնեղները վերանում են, և գրաբարի բաղաձայնական համակարգը ներկայանում է եռաշարք բաղաձայնների հակադրությամբ՝ ձայնեղ, խուլ, շնչեղ խուլ: Դրանք են՝ *բ-պ-փ, գ-կ-ք, դ-յ-թ, չ-ծ-ց, ջ-ճ-ջ*:

⁹⁷ Տե՛ս **Գ. Ջահուկյան**, Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987, էջ 346:

Երկշաբբ բաղաձայնական համակարգը ավելի քիչ բաղաձայններ է ներառում իր մեջ՝ *զ-ւ, ժ-շ*: Վ-ն և խ-ն միաշաբբի մեջ են մտնում. *վ-ն*՝ իբրև ձայնորդ, *խ-ն*՝ իբրև պարզ խուլ: Չայնեղ բաղաձայններն են՝ *բ, գ, դ, ջ, ծ, ժ, զ*: Չայնորդներն են՝ *մ, ն, ւ, լ, ռ, ռ, յ, լ*: Խուլերն են՝ *պ, կ, պ, ծ, ճ, չ, ս, խ, հ*:

Ըստ արտասանության տեղի՝ գրաբարի բաղաձայնները լինում են՝ առաջնալեզվային՝ *դ-դ-բ, ծ-ծ-ց, ջ-ճ-չ, զ-ւ, ժ-շ ւ, ն*, միջնալեզվային՝ *յ*, հետնալեզվային՝ *գ-կ-ք, դ-խ, երկշրթնային՝ բ-պ-փ, մ, ւ, շրթնատամնային՝ վ, կոկորդային՝ հ*:

Ըստ արտասանության եղանակի՝ բաղաձայնները լինում են պայթական՝ *բ-պ-փ, գ-կ-ք, շփական՝ դ-խ, զ-ւ, ժ, վ, լ, հ, ւ, լ, ռ, մ, ն, յ, կիսաշփական՝ ծ-ծ-ց, ջ-ճ-չ*:

Ըստ կազմության՝ բարդ են *ծ-ծ-ց, ջ-ճ-չ* բաղաձայնները, իսկ մյուսները պարզ են:

Դասական գրաբարի ենթաշրջանում արտասանության և գրության միջև տարբերություններ չեն եղել. բաղաձայնները գրվել են այնպես, ինչպես արտասանվել են: Հետդասական շրջանից արդեն բանավոր խոսքի ազդեցությամբ ձևավորվում էին արտասանության փոփոխություններ՝ գրությունից տարբեր, որոնք իրենց անմիջական ազդեցությունը պիտի ունենային հայերենի հնչյունական համակարգի վրա:

Դասական գրաբարում առանձնանում են բաղաձայնների ուղղագրության և արտասանության հետևյալ իրողությունները:

1) Յ հնչյունը պարտադիր գրվել է *ս* և *ռ* ձայնավորներից հետո և բառավերջում չի կարողացվել, օրինակ՝ *յրդայ, երեխայ, սկայ, կոփածոյ, երեկոյ* և այլն: Բացառություն են կազմել՝ ա) բուն հրամայականի եզակի թվի կառույցները, օրինակ՝ *երգել-երգեա՛, խաղալ-խաղա՛, խաղացուցանել-խաղացո՛, բ) սա, դա, նա* ցուցական դերանունների ուղիղ և թեք ձևերը, ինչպես՝ *սա, սորա, ամա, սոքա, սոցա* և այլն, գ) *այո՛, ահա, ապա* բառերը, դ) օտար փոխառյալ հատուկ անունները, օրինակ՝ *Ասիա, Յուդա, Աննա, Անանիա* և այլն:

2) Բառակազմի *յ-ն* արտասանվել է *հ*, օրինակ՝ *յաղագս, յարակ, յաւելո, յոլով, յոզնել* և այլն: Եթե այս արմատները բարդվել կամ ա-

Ծանցվել են, ապա բառամիջում պահպանել են իրենց ուղղագրությունը, օրինակ՝ *անյայր, անյաջող* և այլն: *Ի* նախդիրը, որը բացառական հոլովի կազմությանը մշտապես մասնակցել է, նույն կանոնով ձայնավորից առաջ դարձել է *յ*, օրինակ՝ *յԱրշակայ, յարքայե, յԱրարաշխե* և այլն: Նույնը վերաբերել է նաև ներգոյականի կազմությանը՝ *յանջին, յանջինս, յԱրշակ, յԱրարաշխի* և այլն: Չկա ուղղագրական որոշակի կանոն, ըստ որի՝ հնարավոր լիներ ձևակերպել, թե որոնք են *յ*-ով, որոնք՝ *հ*-ով գրվող բառերը: Թերևս դժվար չէ նկատել, օրինակ, որ *հ*-ով են գրվում պարսկերենից փոխառյալ *հազար, հարիւր, հրաման, հրեշտակ* և այլ բառերը, կամ անձնանունների մի գերակշիռ մեծամասնություն գրվում է *յ*-ով, ինչպես՝ *Յակոբ, Յարութին* և այլն:

Ուղղագրական որոշ առանձնահատկություններ ունի *վ* հնչյունը, որ գրվում է *ւ, վ, ու* տառերով: Անհրաժեշտ է տարբերակել հետևյալ կանոնները.

ա) բառակազմում լավող *վ* հնչյունը միշտ գրվում է *վ* տառով, որը պահպանվում է նաև բառամիջում, եթե դրանցով կազմված արմատները դառնում են բարդ բառի բաղադրիչ, օրինակ՝ *վարժ, վազել, անվարժ, անվրէպ* և այլն,

բ) բառամիջում լավող *վ* հնչյունը գրվում է *ւ* տառով երկու ձայնավորների միջև և *ու*-ով՝ բաղաձայնի և ձայնավորի միջև, օրինակ՝ *աւագ, աւար, պարութ, նուէր* և այլն,

գ) *ն* ձայնավորից հետո լավող *վ* հնչյունը միշտ գրվում է *վ* տառով, օրինակ՝ *ով, որդով, հովիւ, բովել* և այլն,

դ) բառավերջում լավող *վ* հնչյունը գրվում է *ւ* տառով *աւ, եւ, ի* ձայնավորներից հետո, օրինակ՝ *տիրանաւ, տերեւ, սրտիւ* և այլն:

Գրաբարում *ղ* ձայնեղ բաղաձայնը արտասանության տեղով և եղանակով չէր տարբերվում առաջնալեզվային *լ* ձայնորդից (օրինակ՝ աղի-անալի): Հ. Աճառյանը գրում է. «Ղ բաղաձայնը հնապես հնչվում էր թավ լ և ամենևին արդի ղ հնչումը չուներ»: Սրա ապացույցն այն է, որ մի կողմից օտար բառերի *լ* ձայնը հայերեն դառնում է *ղ*, ինչպես՝ Ղազար, Ղուկաս, սիղոբայ, ողիմպիադ, ողոգումեան: Մյուս կողմից ուրիշ լեզուների *ղ* ձայնը չի դառնում հայերեն *ղ*, այլ *գ*, ինչպես տե՛գ<պարսկերեն

tig⁹⁸....»: Նա վկայում է մաս Պեդերսնի և Մեյեի փաստարկումները. ըստ Պեդերսնի՝ հնդեվրոպական մախալեզվի *ln* դառնում է *ηλ*, որը հետո դառնում է *ηη* և ապա՝ *η*, որովհետև հայերենը չի սիրում կրկնակ բաղաձայն: Մեյեն, օրինակ, *հեղում* բայի *հեղ* արմատը կապում է հնդեվրոպական մախալեզվի *pelu* ձևի հետ⁹⁹:

Բանավոր խոսքի ազդեցությամբ *η* ձայնեղ բաղաձայնը աստիճանաբար վերածվում է հետմալեզվային բաղաձայն հնչյունի և կազմում *η* (ձայնեղ) - *խ* (խուլ) հակադրությունը՝ համալրելով երկշարք բաղաձայնների շարքը:

Միջին հայերենում *վ*-ին զուգահեռ ձևավորվում է *ֆ* խուլ շփական հնչյունը: Մինչ այդ օտար փոխառություններում *ֆ*-ով բառերը *փ*-ով են գործածվել՝ *փալաք-ֆալաքի* փոխարեն:

Հ. Աճառյանը ճիշտ չի համարում այն կարծիքը, որ «հայերենը չունի ֆ ձայնը և թե այդ ձայնը փոխ է առել օտար լեզուներից¹⁰⁰»: Հեղինակը գտնում է, որ եթե փոխառու լեզվում չկա փոխառու լեզվի տվյալ հնչյունը, ապա այն փոխառու լեզուն փոխարինում է իր լեզվում եղած հնարավոր տարբերակով. «Այսպես 5-րդ դարում կամ էլ ավելի առաջ հայերը պարսկերենից, ասորերենից և հունարենից փոխ առան մոր բառեր, որոնց մեջ կար, օրինակ, *ֆ* ձայնը, որ հայերը չունեին: Հայերն այդ *ֆ* ձայնը վերածեցին փ-ի: Նույն կատարում են այժմ էլ դարաբաղցիք..., օրինակ՝ պրոփետր փխն. պրոֆետր, կամ մարաղացիք էլ նմանապես թուրքերեն և կամ ռուսերեն բառեր փոխ առնելիս ֆ-ի փոխարեն գործ են ածում փ, օրինակ՝ փաբրիկ, փայթոն, փաս (տաճկերեն ֆես) և այլն¹⁰¹»:

Այսպիսով՝ միջին հայերենում ձևավորվում են վ-ֆ, դ-խ զույգերը, որոնք համարում են ձայնեղ խուլերի երկշարք համակարգը:

Միջին հայերենում ձայնեղները դառնում են խուլեր (բրինձ-պրինձ-ց), խուլերն էլ՝ ձայնեղներ՝ *սփեղայ< արեղայ, խնժոր< խնձոր, Սմպայր< Սմբայր*: Շնչեղ խուլերը և ձայնեղները կազմում են երկանդամ հակադ-

⁹⁸ Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 6-րդ, Եր., 1971, էջ 645:

⁹⁹ Տե՛ս նույն տեղում:

¹⁰⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 658:

¹⁰¹ Նույն տեղում:

րություն: Ուստի միջին հայերենի բաղաձայնական համակարգը բնորոշվում է իբրև երկշարք պարզ խլազուրկ համակարգ՝ բ-փ, գ-ք, դ-թ, ձ-ջ, ջ-չ:

Վ-ն պահպանում է իր արտասանությունը և գրվում *վ* (դովլաթ), *ւ* և *ու* տառերով: Չայնավորից առաջ *ու*-ն փոխվել էր *վ*-ի՝ *արուեստ-արվեստ*, բայց այդ բառերում հանդիպում են նաև գրաբարյան ուղղագրությամբ ձևեր, օրինակ՝ *արուեստ*: Հայերենում խուլերի ձայնեղացման իրողությունը արձանագրվել էր շատ ավելի վաղուց, որի մասին վկայում է դեռևս Անանուն Մեկնիչը, ուստի պիտի համաձայնենք Հ. Մուրադյանի հետ. «Խուլերի ձայնեղացման գործընթացը ենթադրվում է, որ պիտի կատարված լինի պատմական շրջանում: Նկատի ունենալով այն, որ Անանուն Մեկնիչի կողմից բերվող բազուկ, պազուկ, փազուկ բառաձևերի մեջ բառավերջի փոփոխություն չի արձանագրվում, դրանից եզրակացվում է, որ խուլերի փոփոխությունը դեպի ձայնեղները սկսվել է այդ վկայությունից հետո ընկած շրջանում (VII դարից հետո): Սա իհարկե լուրջ փաստարկ լինել չի կարող, քանի որ Անանունի նպատակն է եղել նշելու բառասկզբի լծորդական անցումների գոյությունը¹⁰²»:

Այսպիսով՝ խուլերի ձայնեղացումն ամրակայվում է միջին հայերենում: Խոսելով միջին հայերենում բաղաձայնների կրած փոփոխությունների մասին՝ պիտի միշտ նկատի ունենալ, որ միջին գրական հայերենը կազմավորված լեզու չէր¹⁰³, և ցանկացած իրողություն պետք է դիտել դրսևորման ընթացքի մեջ, որ արձանագրում է միջին հայերենը. այն անցման փուլ պիտի համարել գրաբարի և նոր գրական հայերենի միջև:

Բաղաձայնական համակարգի տեղաշարժերը բարբառներում այնքան օրինաչափ էին, որ հիմք հանդիսացան բարբառների հնչյունական դասակարգման համար: Ա. Ղարիբյանը իր «Հայ բարբառագիտություն» աշխատության մեջ, հիմք ընդունելով գրաբարի բաղաձայնական համակարգը, ներկայացնում է բարբառներում նրանց կրած փոփոխությ-

¹⁰² Հ. Մուրադյան, Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. 1, Հնչյունաբանություն, Եր., 1982, էջ 303:

¹⁰³ Տե՛ս նույն տեղում, էջ 160:

յունները՝ դրանք անվանելով բաղաձայնների տեղաշարժեր: Ըստ այդմ՝
նա ընդունում է 4 տեղաշարժ¹⁰⁴:

Առաջին տեղաշարժ. այս տեղաշարժի ենթարկված բարբառներում
գրաբարի պարզ ձայնեղները (այս դեպքում Ա. Ղարիբյանը գրաբարի
ձայնեղները դիտում էր իբրև պարզ) վերածվել են պարզ խուլերի (միշտ
պետք է նկատի ունենալ բառասկզբի դիրքերը), այսինքն՝ *բ, գ, դ, ծ, ջ>պ,
կ, լ, ժ, ճ*: Ստացվել է երկաստիճան պարզ ձայնեղագուրկ համակարգ.
պ, կ, լ, ժ, ճ-ն անփոփոխ են մնացել: Այսպիսի համակարգը հարուստ է
պարզ խուլերով: Բաղաձայնական մնան համակարգեր ունեն Վան-
Վասպուրականի, Ղարաբաղի, Խոյի, Մարաղայի, Շամախիի, Աստրա-
խանի, Քեյվա-Շաղախի, Հադրութի բարբառները, օրինակ՝ բերան>պե-
րան, գարուն>կա՛րուն, դանակ>տա՛նակ:

Երկրորդ տեղաշարժ. այս տեղաշարժն ունի երեք ենթախումբ:

Առաջին ենթախմբի բարբառներում գրաբարի խուլերը վերածվել
են ձայնեղների՝ *պ, կ, լ, ժ, ճ > բ, գ, դ, ծ, ջ*, իսկ ձայնեղներն ու շնչեղ
խուլերը պահպանվել են: Առաջացել է երկաստիճան խլագուրկ համա-
կարգ: Այս համակարգը հարուստ է ձայնեղներով, օրինակ՝ *քերան - քե-
րան, կրակ - գրագ, պարան - բարան, գինի-գինի, տարի - դարի, պապ-
բաբ, դուռն - դ՛ուռ, տատ - դադ, ճակատ - ջագադ, ջուր - ջ՛ուր, կերակուր
- գերագուր, գինի-գինի*: Այսպիսի համակարգ ունեն Կ. Պոլսի, Մարաշի,
Եվդոկիայի, Նոր Նախիջևանի, Տրապիզոնի բարբառները:

Երկրորդ ենթախումբն ունի եռաստիճան խլագուրկ բաղաձայնա-
կան համակարգ: Գրաբարի ձայնեղները վերածվել են շնչեղ ձայնեղնե-
րի (*բ>բ՛, գ>գ՛, դ>դ՛, ձ>ձ՛, ջ>ջ՛*), խուլերը ձայնեղացել են (*պ>բ, կ>գ, տ>դ,
ծ>ձ, ճ>ջ*), շնչեղ խուլերը մնացել են անփոփոխ, օրինակ՝ *դանակ - դ՛ա-
նագ, գարուն - գ՛արուն, քերան - ք՛երան, տարի - դարի, պանիր - բանիր,
կերակուր-գերագուր*: Այս ենթախմբին են պատկանում Համշենի, Ակնի,
Շապին-Գարահիսարի, Խարբերդ-Երզնկայի, Սեբաստիայի, Արաբկիրի
բարբառները:

Երրորդ ենթախմբի բարբառները քառաստիճան բաղաձայնական
համակարգ ունեցող բարբառներ են: Այստեղ, սակայն, Ա. Ղարիբյանը

¹⁰⁴ Մանրամասն տե՛ս Ա. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, Եր., 1953:

սկզբունքը խախտում է: Եթե մյուս դեպքերում նկատի է առնվում միայն բառասկզբի դիրքը, այս դեպքում՝ նաև բառամիջի դիրքը: Գրաբարի պարզ ձայնեղները վերածվել են շնչեղ ձայնեղների ($p > p'$, $q > q'$, $h > h'$), պարզ խուլերը բառասկզբում պահպանվել են ($ay > ay$), բառամիջում վերածվել պարզ ձայնեղների (*կարու-կաղու, պակաս-պագաս*): Շնչեղ խուլերը պահպանվել են (*փարսի-փարսի, քամի-քամի*): Եթե նկատի չունենանք բառամիջյան դիրքերը, երբ գրաբարի խուլերը ձայնեղանում են, ապա այստեղ ևս առկա է եռաստիճան համակարգ՝ առանց պարզ ձայնեղների, այսինքն՝ *բ', գ', դ' - պ, կ, յր - փ, ք, ք*: Ըստ Ա. Ղարիբյանի՝ բաղաձայնական քառաստիճան համակարգ ունեն Կարնո, Մշո, Նոր Զուղայի, Արարատյան, Ոզմիի բարբառները:

Երրորդ տեղաշարժ. այս տեղաշարժն ունի երկու ենթախումբ:

Առաջին ենթախմբի բարբառներում գրաբարի ձայնեղները վերածվել են շնչեղ խուլերի, իսկ խուլերը՝ ձայնեղների, ինչպես՝ *քերան-փերան, բարի-փարի, դանակ-թանագ, պանիր-թանիր, պարոն-թարոն*: Ստացվել է երկաստիճան խլագուրկ բաղաձայնական համակարգ: Այս համակարգը հարստացել է շնչեղ խուլերով՝ ի հաշիվ գրաբարի ձայնեղների: Բաղաձայնական այս համակարգը ընկած է գրական արևմտահայերենի հիմքում: Նույնպիսի համակարգ ունեն Տիգրանակերտի, Մալաթիայի, Նիկոմեդիայի բարբառները:

$p > փ$	$ay > ք$
$h > ք$	$ut > դ$
$\delta > g$	$\delta > \delta$
$z > z$	$\delta > z$
$q > ք$	$k > q$

Երկրորդ ենթախումբը անվանում են միջին հայերենի կամ կիլիկյան համակարգ: Այս ենթախմբի բարբառներում գրաբարի ձայնեղները վերածվել են խուլերի, իսկ խուլերը՝ ձայնեղների ($p > պ, ay > ք, q > կ, ky > գ, h > յր, yr > դ, z > \delta, \delta > \delta, z > \delta, \delta > z$):

Օրինակ՝	<i>կաղին-գաղին</i>	<i>գարուն-կարուն</i>
	<i>պար-բաղ</i>	<i>դանակ-տանագ</i>
	<i>տարիկ-դաղիզ</i>	<i>պահուսր-բահուսր</i>

Անտեղաշարժ են միայն շնչեղ խուլերը: Այստեղ ևս առկա է եռաստիճան համակարգ, բայց այն էականորեն տարբեր է գրաբարի եռաստիճան համակարգից: Բաղաձայնական այս համակարգն ունեին միջին հայերենը և կիլիկյան բարբառները:

Օրինակ՝ *բերան-պերան պապ-բապ*
դուռն-լուռն փափ-դափ
չու-ծու ծուխ-չուխ
ցերեկ-ցիյիզ թուղթ-թուխթ

Անտեղաշարժ բաղաձայնական համակարգ. Ա. Ղարիբյանը գրաբարի հնչյունական համակարգի պարզ ձայնեղները չէր դիտարկում իբրև շնչեղ ձայնեղներ, ուստի գրաբարի համար ընդունում էր *բ-պ-փ* եռաստիճան համակարգ: Այս խմբի բարբառներում գրաբարի պայթականներն ու պայթաշփականները բառասկզբում չեն տեղաշարժվել, այսինքն՝ *բ-պ-փ > բ-պ-փ*: Այս տեղաշարժն էլ իր հերթին, ըստ բառամիջի դիրքերի, ունի երկու ենթախումբ: Որոշ բարբառներում ձայնեղները բառամիջի դիրքերում, հատկապես *ր* շփականից հետո, խլանում են: Այսպես՝ *մարդ-մարթ, վարդ-վարթ, մարագ-մարաք, դադարել-դաթարել*: Այս դեպքում բաղաձայնները բառասկզբին փոփոխություն չեն կրում. այն նման է գրաբարին, այսինքն՝

<i>բ>բ</i>	<i>պ>պ</i>	<i>բերան>բերան</i>	<i>պապ>պապ</i>
<i>դ>դ</i>	<i>լ>լ</i>	<i>դուռն>դուռն</i>	<i>փափ>փափ</i>
<i>չ>չ</i>	<i>ծ>ծ</i>	<i>չու>չու</i>	<i>ծուխ>ծուխ</i>
<i>ջ>ջ</i>	<i>ճ>ճ</i>	<i>ջուր>ջուր</i>	<i>ճակալ>ճակալ</i>
<i>գ>գ</i>	<i>կ>կ</i>	<i>գինի>գինի</i>	<i>կերակուր>կերակուր</i>

Այս խմբին են պատկանում Արդվինի, Թբիլիսիի, Ղարաբաղի, Դիաղինի, Մոկսի բարբառները: Բաղաձայնական այս համակարգը ընկած է մաս գրական արևելահայերենի հիմքում: Այսպիսով՝ արևելահայերենն ունի եռաշարք, իսկ արևմտահայերենը՝ երկշարք բաղաձայնական համակարգ:

արևելահայերեն

բ-պ-փ

գ-կ-ք

դ-լր-ք

ձ-ծ-ց

ջ-ճ-ջ

արևմտահայերեն

բ-փ

գ-ք

դ-ք

ձ-ց

ջ-ջ

Ինչպես երևում է, արևելահայերենը ժառանգել է գրաբարի, իսկ արևմտահայերենը՝ միջին հայերենի բաղաձայնական համակարգերը: Արևմտահայերենում պայթական ձայնեղներն արտասանվում են որպես շնչեղ խուլեր, օրինակ՝ ջուր>չուր, և պայթական խուլերն արտասանվում են իբրև ձայնեղներ, օրինակ՝ պատ>բառ, և ըստ այդմ՝ արևելահայերենում ունենք եռաստիճան, իսկ արևմտահայերենում երկաստիճան բաղաձայնական համակարգ: Արևմտահայերենում այսօր «հաճախ դժվար է լինում արձանագրել ձայնեղների անպայման և հստակ շնչեղ խլացում և հակառակը՝ խուլերի ձայնեղացում¹⁰⁵»:

Այս իրողությունը պայմանավորված է՝

- ա) անհատական արտասանական հատկանիշներով,
- բ) տվյալ գաղթօջախում գերակա լեզվի ազդեցությամբ,
- գ) բառի մեջ տվյալ հնչյունի ունեցած դիրքով:

Հարցի մանրակրկիտ վերլուծություն կատարելով՝ Ռ. Սաքապետոյանը արդի արևմտահայերենում պարզ խուլերի առկայությունը մեկնաբանում է փոխազդեցական հնչյունափոխությամբ: Շրջապատող լեզուների ազդեցությունը այս իրողության համար հեղինակը համարում է բնական, «սակայն ոչ համակարգային: Այն կարող է բնորոշել հնչյունական որոշակի դիրքեր..., այսպես՝ *սխապար* բառում *պ* գրույթը սկնհայտորեն ունի պ հնչում (սպասելի բ-ի փոխարեն), քանի որ խուլ *խ*-ից հետո չի կարող արտասանվել ձայնեղ բ հնչյունը (այլընտրանքը կարող է լինել *սաղբար* հնչումը): Նույնը վերաբերում է *դ-ք* հնչյունախումբ ունեցող մյուս բառերին (*հղբայր*, *աղբյուր*, *ողբ*, *որբալ*, *աղբ* և այլն): Բառավերջի թույլ դիրքերում ևս առնմանման և տարնմանման հետևանքով

¹⁰⁵ **3. Ավետիսյան**, Արևելահայերենի և արևմտահայերենի զուգադրական հնչյունաբանություն, Եր., 2011, էջ 31:

պարզ խուլ հնչյունների գրությունը և արտասանությունը համընկնում են, ինչպես օրինակ *Հայաստան, դժբախտ, հարուստ, միշտ, կորուստ, փախուստ* և բազմաթիվ մնացած բառերում¹⁰⁶»:

Արևելահայերենը որոշակի ազդեցություն ունի արևմտահայերենի վրա, ինչի արդյունքում «վերջին շրջանում երկակի գրություն ունեցող մի շարք բառերի ուղղագրության մեջ արձանագրվում է միօրինակացման միտում, ինչպես՝ *գունւր> գունդ, զնւրան> զնդան, քանգ> քանկ, խենդ> խենք, զամբո> զամփռ, խնծոր> խնչոր, ծղրիկ// ծղրիդ> ծղրիթ, կակաջ> կակաչ, փափագ> փափաք և այլն*¹⁰⁷»: Այս զուգաձևություններից նախապատվությունը պիտի տալ «արևելահայերենին մոտ և համընկնող տարբերակներին, քանի որ դա ևս մի քայլ է իրար մոտեցնելու մեր երկու գրականները¹⁰⁸»: Ուղղագրական և ուղղախոսական հատկանիշներով առանձնանում են **հ-յ** և **վ-ւ** բաղաձայնները:

Գրաբարում բառասկզբում գրվող **յ-ն** արտասանվում էր **հ**, բայց բառասկզբում լսվող **հ-ն** գրվում էր նաև **հ-ով**, և չկար որևէ կանոն, ըստ որի տարբերակվեին բառասկզբում լսվող **հ** հնչյունի **հ** կամ **յ** տառերով գրության դեպքերը: Արևելահայերենում բառասկզբի **հ-ն** միշտ գրվում էր **հ** տառով: Արևմտահայերենը չի կանոնարկել բառասկզբում **յ-ով** և **հ-ով** գրվող բառերը, որոնք պիտի հիշել ճշգրիտ ուղղագրությունը պահպանելու համար: Օրինակ՝ *յորդորեկ, յորջորջեկ, յօդուած, Հայաստան, հող, համբոյր* և այլն: **Հ** հնչյունի **յ-ով** գրվող որոշ դեպքեր կանոնարկված են արևմտահայերենի դասագրքերում¹⁰⁹: Բառավերջում **յ-ի** գրությունը ևս կանոնարկված է¹¹⁰: Շատ կետեր գալիս են գրաբարից, օրինակ՝ բառավերջում **յ** չի գրվում՝ ա) *ա* խոնարհման պարզ բայերի բուն հրամայականում, օրինակ՝ *խաղա՛, գնա՛ ևն, բ) աղա՛, հիմա, հապա* բառերում, գ) ցուցական դերանուններից մի քանիսում՝ *սա, սահկա, արիկա, անիկա* գրաբարում, *սա, դա, նա*, ցուցական դերանունների ուղիղ և թեք ձևերում/ևն:

¹⁰⁶ **Ռ. Սաքապետոյան**, Արևմտահայերենի դասագիրք, Եր., 2006, էջ 11-12:

¹⁰⁷ **Յ. Ավետիսյան**, նշվ. աշխ., էջ 36:

¹⁰⁸ Նույն տեղում, էջ 37:

¹⁰⁹ Նույն տեղում, էջ 37-38:

¹¹⁰ Մանրամասն տե՛ս նշվ. աշխ., էջ 26-27:

Վ հնչյունի *վ-ւ* գրությունը պահպանվել է արևմտահայերենում՝ որոշակի կանոնարկմամբ.

1. ձայնավորների միջև գրվում է **ւ**, օրինակ աւաղ, նաւակ ևն,
2. **ռ-ից** հետո միշտ գրվում է **վ**, օրինակ՝ ծով, Յովհաննէս ևն,
3. բառակազմում միշտ գրվում է **վ**, օրինակ՝ վայր, վախ ևն, ինչը պահպանվում է նաև բառաբարդման ժամանակ, օրինակ՝ անվախ, հարթավայր:

Բաղաձայնները դասակարգվում են տարբեր հատկանիշներով՝ ըստ ձայնի, արտաբերման եղանակի, արտաբերման տեղի կազմության: Արևելահայերենում բաղաձայնական համակարգը եռաստիճան է կոչվում, քանի որ ըստ ձայնի պարունակության մեծ խումբ են կազմում եռաստիճան հակադրանքը ներկայացնող բաղաձայնները՝ ձայնորդներ՝ *մ, ն, լ, ռ, ռ, յ*. ձայնեղներ՝ *բ, գ, դ, ձ, ջ, վ, դ, գ, ժ*. պարզ խուլեր՝ *պ, կ, տ, ծ, ճ, ֆ, խ, ս, շ, հ* (հագագ-շունչ), շնչեղ խուլեր՝ *փ, ք, ք, ց, չ*: Ըստ արտաբերության եղանակի՝ տարբերում ենք պայթական (արտաբերվում են բերանի խոռոչում փակվածքի հաղթահարմամբ), շփական (արտաբերվում են բերանի խոռոչում ձևավորված նեղվածքի հաղթահարմամբ) և պայթաշփական (արտաբերվում են բերանի խոռոչում ձևավորված նեղվածքի և փակվածքի հաղթահարմամբ): Պայթական բաղաձայններն են՝

բ պ փ

գ կ ք

դ տ ք

Շփական բաղաձայններն են՝

վ ֆ լ

դ խ ռ

զ ս ռ

ժ շ յ

հ

Պայթաշփական բաղաձայններն են՝

ձ ծ ց

ջ ճ չ

Ըստ արտաբերության տեղի՝ բաղաձայնները լինում են՝

ա) երկշրթնային - բ, պ, փ, մ

բ) շրթնատամնային - վ, ֆ

գ) առաջնալեզվային - ձ, ծ, ց, ջ, ճ, չ, գ, ս, ժ, շ, ւ, ը, ն

դ) միջնալեզվային - յ

ե) հետնալեզվային - զ, կ, ք, դ, խ

զ) հագագային - հ:

Ըստ կազմության՝ բաղաձայնները լինում են պարզ և բարդ: Բարդ հնչյունները արտաբերվում են բերանի խոռոչում ձևավորված նեղվածքի և փակվածքի հաղթահարմամբ: Դրանք են պայթաշփականները՝ ձ (դզ), ծ (տս), ց (թս), ջ (դժ), ճ (տշ), չ (թշ) և շնչեղ խուլերը՝ փ (պհ), ք (տհ), ք (կհ):

Լեզվի զարգացման ընթացքում ուղղագրությունը, որը ներկայացնում է ճիշտ գրելու կանոնները, դանդաղ է փոփոխվում, ի հակադրություն ուղղախոսության, որը, պայմանավորված բանավոր խոսակցական լեզվի անմիջական ազդեցությամբ, ժամանակի ընթացքում արագ է փոփոխվում, մասնավորապես գործընթացում կարևորվում է անհատական արտասանական գործոնը: Արդի ուղղագրության և ուղղախոսության առանձնահատկությունները և կանոնարկումը ներկայացված են «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու»-ում (Երևան, 2006):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Աղնարկներ միջին գրական հայերենի պատմության*, Ա, Եր., 1972:
2. Աղայան Է., Գրաբարի քերականություն, հ. 1, Եր., 1964:
3. Աղայան Է., Լեզվաբանության հիմունքներ, Եր., 1987:
4. Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 6, Եր., 1971:
5. Ավետիսյան Յ., Արևելահայերենի և արևմտահայերենի զուգադրական հնչյունաբանություն, Եր., 2011:
6. Բարսեղյան Հ., Ը ձայնավորը և նրա նշանային արտահայտությունը գրական հայերենում (Պատմական հնչյունաբանության ակնարկներ), Եր., 1999:
7. Կարստ Յ., Կիլիկյան հայերենի պատմական քերականություն, Եր., 2002:

8. Ղազարյան Ռ., Ավետիսյան Մ., Սիջին հայերենի բառարան, Եր., 2009:
9. Ղազարյան Ռ., Գրաբարի բառարան, Եր., հ. Ա, Բ, 2000:
10. Ղազարյան Ռ., Գրաբարի հոմանիշների բառարան, Եր., 2006:
11. Ղազարեան Ռ., Գրաբարի դարձուածաբանական բառարան, Եր., 2012:
12. Ղարիբյան Ա., Հայ բարբառագիտություն, Եր., 1953:
13. Սկրտչյան Է., Խաչատրյան Լ., Հայոց լեզվի պատմության դասընթաց, Եր., 2016:
14. Մուրադյան Հ., Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. 1, Հնչյունաբանություն, Եր., 1982:
15. Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու, Եր., 2006:
16. Туманян Э., Древнеармянский язык, М., 1971.

Մաս II

ՊԱՏՄԱԿԱՆ ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ներածություն

Հայերենի բառապաշարի ուսումնասիրությունը, զուտ լեզվաբանական խնդիր լինելով, միաժամանակ կարևորագույն աղբյուր կարող է ծառայել տարբեր հարակից և անգամ ոչ հարակից գիտաճյուղերի համար, ինչպես փիլիսոփայությունը, պատմագիտությունը, ազգագրությունը, հոգեբանությունը, հասարակագիտությունը և այլն: Արդի լեզվաբանության մեջ բառապաշարի ծագումնաբանական, իմաստաբանական և բառակազմական քննության խնդիրները մոլվել են առաջին պլան: Բառապաշարի ուսումնասիրությանը մի կողմից հատուկ է կիրառվող սկզբունքների և մեթոդների բազմազանությունը, մյուս կողմից՝ այդ քննության սահմանների ընդլայնումը, բառային իմաստների հետ մեկտեղ քերականական իմաստների ուսումնասիրումը, լեզվական և արտալեզվական փաստերի համադրումը, բառահնէաբանական և ստուգաբանական հետազոտությունների միջոցով դրանց հիմքում ընկած սկզբնական իմաստների բացահայտումը, փոխառությունների աղբյուրների, կատարման ժամանակի ճշգրտումը, փոխառություններին զուգահեռ՝ բառապաշարի մեջ ենթաշերտի, մակաշերտի և առշերտի, այսինքն՝ լեզվական փոխներթափանցման երևույթների վերհանումը:

Բառապաշարը հնարավոր է քննել և՛ համաժամանակյա, և՛ տարաժամանակյա կտրվածքներով, քննությունը կարող է ընդգրկել տարբեր մակարդակներ՝ ա) ծագումնաբանական, որը ենթադրում է բնիկ և փոխառյալ բառաշերտերի վերհանումը, բ) բառակազմական, որի արդյունքում բացահայտվում են և նկարագրվում տվյալ լեզվին բնորոշ կաղապարները, գ) ոճաբանական, որը ենթադրում է տվյալ լեզվի բառերի ոճական իմաստների և բեռնվածության բացահայտում, խմբավորում, դ) հնչյունաբանական, վերջինիս միջոցով բացահայտվում են ուսումնասիրվող լեզվի բառերի հնչյունական բնութագրերը, լեզվի զարգացման

տարբեր շրջաններում դրանց կրած փոփոխությունները, ցեղակից լեզուների հետ ունեցած առնչությունները, բարբառային զուգաբանությունները և այլն:

Բառապաշարի ծագումնաբանական և իմաստաբանական քննության առումով առաջնային է բառերի տարածամասնակյա կտրվածքով նկարագրությունը: Հայոց լեզվի պատմության շրջանակներում առաջնային խնդիր է բառապաշարի տարածամասնակյա նկարագրությունը, որը ենթադրում է բնիկ հիմնաշերտի և փոխառյալ բառերի տարանջատումը, դրանց հնչյունական, բառակազմական առանձնահատկությունների վերհանումը և իմաստաբանական բնութագրումը լեզվաբանության մեջ ընդհանուր ճանաչում գտած Կ. Դ. Բաքի թեմատիկ 22 խմբերի առանձնացմամբ («Հնդեվրոպական լեզուների ընտիր հոմանիշների բառարան», 1949), որին հավելված է Հ. Աճառյանի, ապա Գ. Ջահուկյանի կողմից տարբերակված 23-րդ խումբը՝ դերանվանական, սպասարկու բառեր և մասնիկներ: Հայոց լեզվի պատմության դասընթացի բաղկացուցիչ մասը կազմող այս խնդիրը հայ և օտարագի լեզվաբանների տեսակետներով համակողմանի ներկայացված է Հ. Աճառյանի «Հայոց լեզվի պատմություն» մաս 1-ին և 2-րդ, ապա՝ Գ. Ջահուկյանի «Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան» գիտական մենագրություններում: Մեր նպատակը այս երկու հիմնական աղբյուրների համադրումն է՝ հաշվի առնելով դրանց գրվելու ժամանակային մեծ տարբերությունն ու այդ ընթացքում լեզվաբանական մտքի առաջընթացը: Անդրադարձել ենք հայերենի զարգացման տարբեր փուլերում կատարված փոխառություններին՝ վաղնջահայերենից մինչև արդի աշխարհաբար:

ՀԱՐՑԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Լեզվական փոխազդեցությունները թեև նկատելի են վաղնջական ժամանակներից, սակայն փոխառության պատմությունը լեզվաբաններին հետաքրքրել է 19-րդ դարի վերջերից սկսած, երբ արդեն ձևավորվել

էին պատմահամեմատական քննության և վերականգնման մեթոդները, դրանց կիրառման սկզբունքները: Բայց դեռևս 16-րդ դարից փորձեր էին կատարվել համեմատելու տարբեր լեզուների բառապաշարները՝ գտնելու համար դրանց մերձակցության աստիճանը: Հայերենի հանդեպ ման հետաքրքրության առաջին քայլերից է Գվիլիելմոս Պոստելլոսի՝ 1538 թվականին լույս ընծայված «Լեզուների մերձակցություն» հետազոտությունը, որտեղ հեղինակը համեմատում է 12 լեզուներով գրված (այդ թվում՝ հայերեն) «Տերունական աղօթքի» բառապաշարը և քերականությունը՝ հանգելով այն մտքին, թե մարդկության հնագույն լեզուն եբրայերենն է, հայերենն էլ մոտ է կանգնած այդ լեզվին: Առավել խորքային համեմատության փորձեր կատարվում են 18-րդ դարում Մխիթար Սեբաստացու և Գևորգ Դպիր Պալատացու կողմից, առաջինը համեմատում է հայերենի և լատիներենի բառապաշարը մերձակցության և փոխառությունների տեսանկյունից, իսկ Գևորգ Պալատացին «Պարսկերէն-հայերէն բառարանում» առանձնացնում է երկու լեզուների համար ընդհանուր 433 բառերից կազմված մի ցանկ, որոնց մի մասը համարում է փոխառությունը, իսկ մյուս մասը՝ բնիկ ստացվածք:

Հայերենի փոխառությունների գիտական բացատրության նոր և վճռորոշ քայլեր է կատարում Հ. Աճառյանի ուսուցիչ գերմանացի հայագետ Հ. Հյուբշմանն իր ուսումնասիրություններում՝ նպատակ դնելով հայերենի և նրան մերձավոր լեզուների ընդհանրությունների մեջ տարբերակել հնդեվրոպական նախալեզվից եկող և փոխառյալ բառերը: Հիմնավորելու համար բառային ընդհանրությունների մի մասի՝ մայր լեզվից ժառանգված և ոչ թե փոխառություն լինելու փաստը անհրաժեշտ էր գտնել դրանց իմաստային և հնչյունական մոլորությունը կամ մերձավորությունն ապացուցող օրենքներ, իսկ տարբերությունների առկայության դեպքում դրանք պետք է մեկնաբանվեին հնչյունական համապատասխանությունների հաստատված օրինաչափություններով, որից հետո միայն կարելի էր պնդել, թե դրանք փոխառյալ են և ոչ թե բնիկ: Այսպիսով՝ Հ. Հյուբշմանը հայերեն բառերն ըստ իրենց ծագումնաբանության բաժանեց բնիկ և փոխառյալ բառերի, իսկ վերջիններս ենթարկեց հատուկ քննության՝ բացահայտելու համար, թե որ լեզվից է հայերենը

դրանք անմիջաբար վերցրել: Բնիկ հայկական և իրանական լեզուներից կատարված փոխառությունների համակողմանի ուսումնասիրության ընթացքում («Հայագիտական ուսումնասիրություններ», 1883) նա արդեն հանգում է այն եզրակացության, որ հայերենը հնդեվրոպական լեզվաընտանիքում ինքնուրույն, անկախ ճյուղ է, որ միջին դիրք է գրավում իրանական, բալթյան, սլավոնական լեզուների և հունարենի միջև:

Իր «Հայերենի քերականություն» (մաս 1-ին, 1895, մաս 2-րդ, 1897) հայտնի աշխատության մեջ Հ. Հյուբշմանը ստուգաբանել է պարսկական և արաբական հնագույն փոխառությունները՝ միաժամանակ առանձնացնելով հայ մատենագրության մեջ հանդիպած պարսկական հատուկ անունները: Պետք է ասել, որ տարբեր լեզուներից հայերենի փոխառած բառերի գերակշռող տարրը պարսկականն է: Չհաշված նոր պարսկերեն անունները՝ Հ. Հյուբշմանը զանազանել է 686 հասարակ և 217 հատուկ անուն, որոնց մեծ մասը, հեղինակի հավաստմամբ, գալիս է պարթևական ժամանակաշրջանից՝ նկատի ունենալով դրանց պահլավական հնչյունական ձևը: Ժամանակագրական առումով, այնուամենայնիվ, հայագետը դժվարացել է իրարից սահմանազատել պարթևական և սասանյան պարսկերեն բառերը, քանի որ շատ դեպքերում տարբերակումն անհնարին է լինում: Սրան հակառակ՝ առանձին բաժնում հստակորեն ներկայացրել է նոր պարսկերեն փոխառությունները, որոնք մեծ մասամբ ներմուծվել են 11-րդ դարից հետո: Այս բառերի փոխառման ժամանակաշրջանի համար իբրև հիմք ընդունել է բաղաձայնների երկրորդ տեղաշարժի օրենքը և դրանք քննել արաբականների հետ համախառն (171), արաբերենը պարսկական, իսկ պարսկականն իր հերթին արաբական մեծաքանակ փոխառություններ ունենալու պատճառով: Այս հանգամանքը երբեմն անհնար է դարձնում որոշել տվյալ բառի ծագման առաջնային աղբյուրը: Հեղինակն իր կազմած ցանկը հավելում է նաև մի քանի թուրքերեն բառերով, քանի որ թուրքերենի բառապաշարում պարսկական և արաբական փոխառությունները տեսակարար մեծ կշիռ են կազմում, հետևաբար բուն պարսիկական կամ արաբական բառերը հայերենը կարող էր փոխառել նաև միջնորդ թուրքերենի միջոցով՝ հաշվի առնելով հայ-թուրքական պարտադրված սերտ համակեցության բնույթը:

Վերոհիշյալ աշխատության մեջ Հ. Հյուբշմանը հանգամանորեն քննության է ենթարկել նաև ասորերենից և հունարենից փոխառված հատուկ և հասարակ անունները՝ ըստ անհրաժեշտության ներկայացնելով այդ անունների լիակատար ցանկերը: Թե՛ պարսկական և թե՛ հունական ու ասորական փոխառությունները ներկայացվում են փոխատու լեզվի համատիպ ձևերին համապատասխան հնչյունական զուգադրումներով:

Սկզբունքային նշանակություն ունի Հ. Հյուբշմանի կողմից այդ փոխառությունների վերլուծությունը հայերենի ձայնավորների հնչյունափոխության ժամանակաշրջանը որոշելու տեսանկյունից: Ելնելով այս հարցի վերաբերյալ արված իր հիմնավոր դիտարկումներից՝ նա նշում է, որ հին հայերենում գործում է ձայնավորների երկու օրենք՝ առաջին («ի» և «ու» ձայնավորները պահպանվում են միայն վերջին վանկերում, մնացած դեպքերում սղվում կամ փոխվում են ը-ի) և երկրորդ («է» և «ոյ» ձայնավորն ու երկբարբառը պահպանվում են միայն վերջին վանկում, մնացած դեպքերում նրանք հնչյունափոխվում են «ի» և «ու» ձայնավորների), որոնք, ինչպես ինքն է նշում, հայերենի ձայնավորների համակարգը միայն պարթևական ժամանակաշրջանում արմատական փոփոխությունների ենթարկեցին, հետևաբար այդ օրենքների ազդեցությունը վերաբերում է պարթևների ժամանակաշրջանին: Հյուբշմանը հետաքրքիր գնահատական է տալիս հայերենի պարսկական փոխառություններին՝ փաստելով դրանց գիտական մեծ կարևորությունը, որովհետև ծագած լինելով պարթևական ժամանակաշրջանում, դրանք վերականգնում են հին իրանական մի լեզու, որ այսօր էլ բավական թերի վերականգնված պատկեր ունի. հետագա շրջանի պարսկերենն ընթացել է զարգացման այլ ճանապարհով, մասամբ փոխել իր հնչյունական, բառակազմական, իմաստաբանական բնութագրիչները, և միայն հայերենում պահպանված և, ըստ էության, արդեն հայկականացած այդ ձևերի միջոցով կարելի է վերականգնել պահլավերենի կորուսյալ բառապաշարը և հնչյունաբանությունը. «Պարսկական փոխառությունների մեծ մասը սերում է պարթևական ժամանակաշրջանից և մեզ օգնում է վերականգնել մի լեզու, որի հնչյունական հարաբերակցության շուրջ, նրա սե-

փական փաստաթղթերից ելնելով, մենք միայն շատ թերի գաղափար ունենք պահլավերենի մասին... Հայերենը մեծագույն ճշգրտությամբ է տալիս այն պարսկերենը, որ խոսվել է պարթևների ժամանակաշրջանում»¹¹¹: Հյուբշմանը բերում է նաև այնպիսի վերականգնված պահլավական փոխառությունների օրինակներ, որոնց սկզբնաձևը վկայված չէ ոչ պահլավերեն գրականության առկա մնացորդներում, որ էլ հին և նոր պարսկերեններում, ինչպես օրինակ՝ *պարուար* և *պարրոյգ*:

Հ. Հյուբշմանից հետո փոխառությունների խորը ուսումնասիրությամբ զբաղվել է Հ. Աճառյանը: «Հայերենի արմատական բառարանում» նա մինչև 4015 փոխառյալ արմատ է տարբերակել և ստուգաբանել:

Անվանի գիտնականը մեծ ներդրում ունի նաև անձնանվանագիտության բնագավառում: Նա կազմել է բնիկ և փոխառյալ անձնանունների բառացանկ՝ ըստ մատենագիտական աղբյուրների և դրանց սպառնիչ քննություն կատարել իր «Հայոց անձնանունների բառարանի» հինգ հատորներում: Բառարանում ընդգրկված են մինչև 15-րդ դարի հայ մատենագրության մեջ հիշատակված բոլոր հատուկ անունները, իսկ հետագա դարերի համար (մինչև 18-րդ դ.) բերված են ընտրովի անուններ՝ զգալի մասի ստուգաբանություններով: Հայագետի համոզմամբ՝ ոչ մի բան այնքան հավատարիմ կերպով չի ներկայացնում մեր պատմական կյանքի զանազան ելևէջները, մեր կրած ազդեցությունները օտար ժողովուրդներից, ինչպես և մեր ներքին ձգտումները, որչափ հատուկ անունները:

Փոխառյալ թե՛ հասարակ, թե՛ հատուկ անունների՝ լուրջ ու ծանրակշիռ հարցադրումներով հագեցած քննություն է կատարել Հ. Աճառյանն իր «Հայոց լեզվի պատմություն» աշխատության մեջ (1-ին մաս՝ 1940, 2-րդ՝ 1951): Ըստ հայագետի՝ փոխառությունները քաղաքական, մշակութային կյանքի որևէ պահանջը լրացնող բառեր են: Այսպես, հայերենի հունական փոխառությունները կրոնական, գրական կամ գիտական եզրեր են, իսկ պահլավական փոխառությունները՝ պետական, վարչական կառույցին, բանակին, ինչպես նաև առօրյա կյանքին վերա-

¹¹¹ Հ. Հյուբշման, Հայագիտական ուսումնասիրություններ, Եր., 2004, էջ, 340-341:

բերող բառեր: 18-20-րդ դարերում քաղաքակրթության զարգացման հետ կապված նոր հասկացությունների նշանակումները հայերենը փոխառել և փոխառում է ռուսերենից կամ եվրոպական լեզուներից, ի մասնավորի՝ անգլերենից:

Հ. Աճառյանի գնահատմամբ՝ հայերենում կան պարսկերենից, ասորերենից, հունարենից, լատիներենից, մասամբ նաև ասուրերենից, վրացերենից, խալդերենից և փոքրասիական զանազան լեզուներից կատարված փոխառություններ, որոնք դեռևս նախագրային շրջանից են (մինչև 5-րդ դ.): Նշվածների մեջ, սակայն, հեղինակի հավաստմամբ, խալդերենից և փոքրասիական մի շարք լեզուներից փոխառված բառերի հաստատման ու որոշման խնդիրը բարդանում է, քանի որ փոխատու այդ լեզուները անհետացած են: Մինչդեռ խնդիրն առավել հեշտությամբ լուծվում է կենդանի փոխատու լեզուներից կատարված փոխառությունների դեպքում:

Ի տարբերություն Հ. Հյուբշմանի՝ Հ. Աճառյանն այլ լեզուների հետ հայերենի շփումների և սրանցից արված փոխառությունների վերաբերյալ թե՛ հնչյունական, թե՛ ստուգաբանական իր վերլուծությունները կատարում է այդ բառերի իմաստային խմբավորմանը կամ դասակարգմանը զուգահեռ՝ այս հարցում ևս ցուցաբերելով նոր մոտեցում: Ընդ սմին՝ իմաստայի խմբերում բառերը խմբավորվում են անկախ իրենց փոխառության ժամանակից, որովհետև նույն իմաստային դաշտին պատկանող հասկացությունների անունները կարող են փոխառվել լեզվի տարբեր շրջաններում՝ հնագույնից մինչև նոր՝ պայմանավորված լեզվակիրների պահանջարկով:

Մույն աշխատության մեջ զետեղված հարուստ փաստական նյութը ներկայացված է նախ այբբենական կարգով, ապա ըստ իմաստի՝ սրանց մեջ աստղանիշով տարբերակելով արդի գրական հայերենում գործածվողները, միաժամանակ բերելով նաև փոխառյալ բառերի անհրաժեշտ թվային տվյալներ (իրան.՝ 1405 /+121 անձնանուն և 37 տեղանուն/, հուն.՝ 915, արաբ.՝ 702, ասոր.՝ 209 /+ 22 անձնանուն և 10 տեղանուն/, թրք.՝ 170, եբր.՝ 138 /+98 անձնանուն/, վրաց.՝ 54 և այլն), այս վիճակագրությունը փաստում է, որ փոխառությունների գերակշռող մասը պատկա-

նում է իրանական շերտին: Նկատի պետք է ունենալ, անշուշտ, որ այս փոխառությունների մեծ մասը դուրս են մղվել հայերենի բառապաշարից պարսկական, արաբական, թուրքական և այլ նվաճողների տիրապետության լուծը թողափելուց հետո: Օրինակ՝ արաբական 702 փոխառություններից արևմտահայերենում պահպանվել են միայն 21-ը (*խահուհ*՝ «սուրճ», *խիկար*՝ «խմաստուն», *խպխպ*՝ «ծնոտի տակի միսը» և այլն), իսկ ժամանակակից հայերենում՝ 32-ը:

Ինչպես նախորդ լեզվաբանները, այնպես էլ ակադեմիկոս Գ. Ղափանցյանը փորձել է պարզել հայոց լեզվի ծագման և նրա հետագա զարգացման ուղիները՝ հիմնվելով փոքրասիական մի շարք մեռած լեզուների՝ խեթերենի, ուրարտերենի, խուռերենի, պալայերենի և ոչ մեռած, այն է՝ քարթվեական լեզուներից զաներենի (ճաներեն կամ լազերեն և մեգրելերեն) փաստական տվյալների վրա: Քննելով հայ-զանական առնչությունների հարցերը՝ հայագետը բերում է հայերենի՝ զաներենից փոխառած 14 և զաներենի՝ հայերենից փոխառած 12 բառ՝ նշելով՝ «հայերը ևս, որ այդքան շփվել են լազերի և մեգրելների հետ, բառեր և թերևս ձևեր պիտի վերցնեին այդ լեզուներից: Ի հայտ բերել երկուստեք տեղի ունեցած բոլոր փոխառությունները և սպառել այդ խնդիրը հնարավոր չէ»¹¹²: Սրանց և հայերենի լեզվական ընդհանրությունների հիման վրա Գ. Ղափանցյանը, ի հակադրություն իր նախորդների, ենթադրում է, որ հայերենն իր ծագումով ասիանիկ (փոքրասիական) լեզու է, որը, իհարկե, լայն արձագանք չգտավ և մերժվեց հնդեվրոպաբանների կողմից: Հետագայում այս մասին Գ. Ջահուկյանը գրում է, որ Գ. Ղափանցյանը ելնում է հայերի ու խուռիների «ասիանիկ» ծագման վարկածից՝ հիմնավորելով դա անհամարժեք լեզվական փաստերով, երբեմն դիպվածային ընդհանրություններով: Այսպես՝ 1) նա խուռական բառերի հետ է համեմատում հնդեվրոպական ծագման մի շարք բառեր՝ *զեղ, երկար, զինը, թուլել, նէր* (ներ) «տազերկին», *սէր*, և դրանց միջև տեսնում է նույնականություն, թեև խուռական բառերի իմաստը, երբեմն էլ հնչյունական ձևը դրա համար բավարար հիմքեր չեն տալիս. 2) խուռա-

¹¹² Գ. Ղափանցյան, Հայոց լեզվի պատմություն, Եր., 1961, էջ 80:

կան բառերի համար կամայականորեն ենթադրում է հայերենին մոտ իմաստներ՝ *ծառայ* - խոռ. «թագավոր» ... 3) չի ճշտում խոռական բառերի բնիկ, թե փոխառյալ լինելը¹¹³: Սակայն մեր համոզմամբ, պետք է նշել, որ Գ. Ղափանցյանի բացահայտած լեզվական առնչությունները մեծ դեր կատարեցին հայերենի մեջ ասիանիկ, ավելի ստույգ՝ խեթալուվական, խոռական և կովկասյան ենթաշերտերի վերականգնման առումով, հատկապես հայոց տեղանունների, դիցանունների ու անձնանունների մեջ: Գ. Ջահուկյանը, թեպետ քննադատում է Գ. Ղափանցյանին, բայց իր գրեթե բոլոր աշխատություններում իբրև ելակետ ընդունում է նրա գտած զուգաբանությունները և շատ դեպքերում հնդեվրոպաբանության դիրքերից ապացուցում Գ. Ղափանցյանի կռահումները:

Տարբեր լեզուների հետ վաղնջահայերենի և հին հայերենի շփումների ու փոխառությունների քննությունը գիտական մի նոր աստիճանի է բարձրացնում ականավոր լեզվաբան ակադեմիկոս Գ. Ջահուկյանն իր «Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան» սովորածավալ աշխատության մեջ: Ի լրումն նախորդ քերականների ուսումնասիրությունների՝ Գ. Ջահուկյանի այս աշխատությունն աչքի է ընկնում ընդգրկված նյութի մեծ ծավալով և դրա դասակարգման, մանավանդ ժամանակագրական բաշխման սկզբունքներով: Այստեղ արտացոլված են բազմաթիվ նյութեր ու աղբյուրներ, որոնք հայտնի չեն եղել ո՛չ Հ. Աճառյանին, ո՛չ Հ. Հյուբշմանին և ո՛չ էլ նրանց նախորդներին:

Գ. Ջահուկյանը լեզուների փոխազդեցության երկու տեսակ է գանազանում՝ փոխներթափանցում և փոխառություն: Առաջինը լեզուների համեմատաբար խոր փոխազդեցություն է, որն ընդգրկում է նաև լեզուների կառուցվածքային առանձնահատկությունները, և որի համար հիմք կարող են լինել հատկապես քաղաքական նվաճումը և ժողովուրդների մերձավոր հարևանությունը: Փոխներթափանցման դրսևորումներից են ենթաշերտը, մակաշերտը և առշերտը: Ենթաշերտը տեղացիների լեզվի ազդեցությունն է եկվորների, հատկապես նվաճողների լեզվի վրա: Մակաշերտն արդեն եկվորների, հատկապես նվաճողների լեզվի ազդեցու-

¹¹³ Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987, էջ 422-427:

յունն է տեղացիների լեզվի վրա, իսկ առջերտը հարևան լեզուներից մեկի ազդեցությունն է մյուսի վրա խառը բնակության վայրերում: Փոխներքա-
փանցման դրսևորումներից է նաև լեզվամիությունը՝ առաջացած լեզու-
ների երկարատև շփման հետևանքով, որի անդամներն ունենում են կա-
ռուցվածքային ընդհանուր առանձնահատկություններ¹¹⁴:

Փոխազդեցության երկրորդ տեսակը՝ փոխառությունը, սահմանա-
փակվում է բառապաշարով և բառակերտման ընդհանուր կաղապարնե-
րով: Այն պայմանավորված է քաղաքական, տնտեսական, կրոնական և
մշակութային գործոններով: Փոխառության դրսևորման մի եղանակ է
բառապատճենումը, որը բառակազմական կաղապարի փոխառություն է:
Հայերենը հին շրջանում հատկապես պարսկերենից, հունարենից, նոր
շրջանում՝ ռուսերենից (արևելահայերենում) կամ ֆրանսերենից (արև-
մտահայերենում) բառապատճենումներ է կատարել: Փոխառությունները
լինում են անմիջական և միջնորդված, գրական կամ խոսակցական:

Ուսումնասիրելով հին հայերենի բառապաշարի հիմնաշերտն ու
բարբառային տարբերակները՝ Գ. Ջահուկյանը արժեքավոր դիտողու-
թյուններ է անում խոռատարարտական, հնդեվրոպական, քարթվելական
և արևմտակովկասյան ընդհանրությունների վերաբերյալ և հերքում
Ի. Մ. Դյակոնովի առաջ քաշած խոռատարարտական և նախյան-
դադստանյան լեզուների ցեղակցության գաղափարը՝ վկայակոչելով
ակնհայտորեն փոխառյալ բնույթի մի շարք բառեր: Ի հակադրություն
մի շարք լեզվաբանների՝ Ի. Բրաունի, Գ. Ա. Կլիմովի, Ի. Մ. Դյակոնովի,
Գ. Ղափանցյանի, Գ. Ջահուկյանը որդեգրում է հնդեվրոպական և խու-
ռատարարտական լեզուների ցեղակցության գաղափարը՝ հանգելով
խոռատարարտական լեզուների մոտարատիկ կամ ավելի մերձավոր ընդ-
հանրության տեսակետին:

Նորագույն հետազոտությունների հիման վրա անվանի հայագե-
տը, ամփոփելով Հ. Հյուբշմանի և Հ. Աճառյանի՝ հայերենի՝ սեմական լե-
զուներից (ակկադերեն, ասորերեն, արաբերեն) կատարած փոխառու-
թյունների վերաբերյալ ուսումնասիրությունները, կատարում է անհրա-

¹¹⁴ Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 10-12:

Ժեշտ լրացումներ ու ճշգրտումներ՝ նախորդների կազմած ցանկից հանելով այն բառերը, որոնց սեմական ծագումը կասկածելի է:

Նույն սկզբունքով քննության է ենթարկում իրանական լեզուներից, իսկ առավել մանրամասն՝ պասկերենից հայերենին անցած փոխառությունները՝ ճշգրտելով հայերենի կրած իրանական ազդեցության շրջանները: Նա ոչ միայն քննում է հասարակ անունները, այլև, ըստ անհրաժեշտության, քննում է նաև դիցանունները, անձնանուններն ու տեղանունները: Հեղինակի բերած տվյալների համաձայն՝ հայերենի պատմությունն սկսվում է մոտավորապես Ք.ա. 3-րդ, իրանական լեզուներինը՝ մոտավորապես 2-րդ հազարամյակի սկզբներից: Հետևաբար՝ իրանական ժողովուրդների վերաբերյալ առաջին տեղեկությունների ժամանակներից էլ սկսվում է հայ-իրանական շփման պատմությունը:

Անցնելով կովկասյան և հունալատինական փոխառությունների քննությանը՝ Գ. Ջախուկյանն անդրադարձել է սրանց, ինչպես նաև իրանական փոխառությունների հնչյունական, ձևաբանական, բառակազմական և իմաստային առանձնահատկություններին: Մեծ գիտնականի մահից հետո (խմբագրությամբ Վ. Սարգսյանի) լույս ընծայվեց նրա «Հայերեն ստուգաբանական բառարանը»՝ շուրջ 120 հազար բառահոդվածով, ներառյալ կեղծ, սխալագիր և միայն մեկ անգամ գործածված բառերը, որոնց մի մասին տրված է նոր բացատրություն և ստուգաբանություն: Բառարանն անշուշտ կլինեք առավել ընդգրկուն, եթե հայագետն այն ավարտին հասցներ:

Հայերենի իրանական փոխառությունների բազմակողմանի հետազոտություն է կատարել Լ. Հովհաննիսյանը, որը, հետևելով վրաց լեզվաբան Մ. Անդրոնիկաշվիլիին, ճշտում է նաև *փոխառություն* եզրի ըմբռնումը՝ օտար ձևույթ+մայրենի լեզվի ձևույթ կառույցները փոխառություն չհամարելով: Հայերենի բառապաշարում նման կառույցները մեծաքանակ են¹¹⁵: Հ. Հյուբշմանի և Հ. Աճառյանի իրանական փոխառությունների ցանկից Լ. Հովհաննիսյանը հանում է մոտ 60 բառ և հավելում մոտ 200 նոր արմատներ և կազմություններ: Լ. Հովհաննիսյանն առանձին անդրադառնում

¹¹⁵ Տե՛ս Լ. Հովհաննիսյան, Հայերենի իրանական փոխառությունները, Եր., 1990, էջ 35-36:

է նաև բառապատճենումներին՝ նշելով, որ պատճենման իրողությունների տարաժամանակյա լիակատար քննությունը անհաղթահարելի դժվարությունների է բախվում, որովհետև հաճախ անհնար է սպառնիչ պատասխանել այն հարցին, թե տվյալ բառերը հայակազմություննե՞ր են, թե՞ օտար լեզվից փոխառություններ: Նա, որպես օրինակ, բերում է Հ. Աճառյանի մատնանշած մի քանի կազմություններ՝ *տիրակալ, ամօթահար, սրաթեւ*, նշելով, որ այս բառերին համարժեք կազմություններ կան իրաներենում, բայց միանշանակ որոշել, թե որն է առաջնային աղբյուրը՝ հաճախ հնարավոր չէ¹¹⁶:

Հ. Աճառյանի հետևողությամբ՝ հայերենի փոխառությունների քննություն կատարել են նաև Ա. Սուքիասյանը, Ա. Մարգարյանը, Է. Աղայանը: Հին և հնագույն փոխառությունների նրանց դասակարգումներն ըստ էության հիմնված են Հ. Աճառյանի ստուգաբանական դիտարկումների վրա¹¹⁷:

Հայերենի մոստրատիկ ընդհանրություններին և հնդեվրոպական սակավ ուսումնասիրված հնագույն լեզուների հնարավոր առնչություններին վերաբերող արժեքավոր հետազոտություններ ունի Վ. Համբարձումյանը¹¹⁸:

Միջին հայերենի բառապաշարի փոխառյալ շերտերի ուսումնասիրությամբ զբաղվել և արժեքավոր բացահայտումներ են կատարել Ղևոնդ Հովնանյանը («Հետազոտութիւնք նախնեաց ռամկօրէնին վրայ», Վիեննա, 1895), Նորայր Բյուզանդացին («Հայկական բառաքննութիւն», Կ. Պոլիս, 1880, «Բառգիրք ստորին հայերենի ի մատենագրութանց ԺԱ-ԺԵ դարուց», Ստոկհոլմ, 1884), Յոզեֆ Կարստը («Կիլիկյան հայերենի պատմական քերականություն», Ստրասբուրգ, 1901, հայերեն թարգմանությունը և տպագրությունը՝ Երևան, 2002), ինչպես նաև Հ. Աճառյանը, Ստեփանոս Մալխասյանը («Հայերենի բացատրական բառարան», 1-4

¹¹⁶ Հմմտ. Լ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 171- 179, նաև 219-263:

¹¹⁷ Տե՛ս Ա. Սուքիասյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1980, Ա. Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1993, Է. Աղայան, Բառաքննական և ստուգաբանական հետազոտություններ, Եր., 1974:

¹¹⁸ Տե՛ս Վ. Համբարձումյան, Հայերենի բառաքննական եւ ստուգաբանական ուսումնասիրություններ, Եր., 2012:

հի., 1944-1945): Նոր շրջանում այս հարցին առանձին աշխատություններով անդրադարձել են Մառլենա Մուրադյանը («Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», Ա, Բառագիտություն, Երևան, 1972) և Ռ. Ղազարյանը («Միջին գրական հայերենի բառապաշարը», Երևան, 2001), որոնցում տարբեր սկզբնաղբյուրներից քաղված փաստական հարուստ նյութի հիման վրա, միջինհայերենյան բնիկ բառերի իմաստային ու բառակազմական քննությունից բացի, հանգամանորեն ուսումնասիրված են նաև գրական հայերենի՝ միջին շրջանում այլ լեզուներից կատարած փոխառությունները՝ արաբական, պարսկական, թուրքական, հունական և այլ: Ըստ Ռ. Ղազարյանի հետազոտության՝ միջնադարում փոխառված բառերի մեծագույն մասը ժողովրդական փոխառություններ են: Այդ կարգի փոխառությունները միջին գրական հայերենի բառապաշար մուտք են գործել ժամանակի ժողովրդախոսակցական լեզվից և տարբեր բարբառներից: Այստեղ հարկ է նշել, որ հաճախ ժողովրդական փոխառությունները դժվար է սահմանազատել գրականից՝ որոշել, թե դրանցից որոնք են ժողովրդական, որոնք՝ գրական, այլ կերպ ասած՝ փոխառությունների անցումը ինչպե՞ս է կատարվել՝ խոսակցական՞ ճանապարհով, թե՞ գրավոր: Ռ. Ղազարյանը, ելնելով իր բերած վիճակագրական տվյալներից, շեշտում է միջին գրական հայերենի արաբական փոխառությունների ակնառու գերազանցությունը (1436) հնագույն շրջանի նույնատիպ փոխառությունների համեմատությամբ (702): Ըստ անհրաժեշտության՝ վերոհիշյալ աշխատություններում կատարվել են ինչպես բնիկ, այնպես էլ փոխառյալ հայերեն բառերի նոր, ուշագրավ ստուգաբանություններ:

Միջին հայերենի բառապաշարը 12-16-րդ դարերի ինքնուրույն և թարգմանական երկերում վկայված բառերով, դարձվածքներով ներկայացված է Ռ. Ղազարյանի և Հ. Ավետիսյանի «Միջին հայերենի բառարան» աշխատության մեջ, որը երկու հրատարակություն ունեցավ, վերջին՝ 2009 թվականին բարեփոխված տարբերակում հնարավորինս ամփոփ տրված են միջինհայերենյան բառերը՝ հնչյունական տարբերակներով, քերականական, ոճական և ստուգաբանական բացատրություններով, ինչպես նաև գրավոր աղբյուրներից քաղված հեղինակային վկայություններով:

ՀԱՅԵՐԵՆԻ ԲՆԻԿ ԲԱՌԱՊԱՇԱՐԸ

Հիմնաշերտ

Հայերենի բառապաշարում բնիկ կամ հնդեվրոպական ծագման բառերը իմաստային (թեմատիկ) դասակարգմամբ բաշխվում են հետևյալ խմբերում՝ ա) ֆիզիկական աշխարհ, բ) մարդկություն, սեռ, տարիք, գ) կենդանիներ, դ) մարմնի մասեր, մարմնական գործառնություններ և պայմաններ, ե) ուտելիք և ըմպելիք, կերակրի պատրաստում, ամանեղեն, զ) հագուստ, անձնական զարդարանք և խնամք, է) բնակարան, կահկարասի, ը) երկրագործություն և բուսականություն, թ) ֆիզիկական տարբեր գործողություններ և սրանց հարաբերությունը առանձին արհեստների և արվեստների հետ՝ համապատասխան գործիքներով, նյութերով ու արտադրանքներով, ժ) շարժում, տեղափոխություն, փոխադրում, նավագնացություն, ժա) ունեցվածք, սեփականություն, առևտուր, ժբ) տարածական հարաբերություններ՝ տեղ, ձև, չափ, ժգ) քանակ և թիվ, ժդ) ժամանակ, ժե) զգայական ընկալումներ, ժզ) զգացմունք, խառնվածքային, բարոյական և գեղագիտական ըմբռնումներ, ժէ) մտածողություն, միտք, ժր) ձայնական արտահայտություն, խոսք. ընթերցանություն, գիր, ժթ) տարածքային, հասարակական և քաղաքական բաժանումներ, հասարակական հարաբերություններ, ի) ռազմական գործ, իա) օրենք, իբ) կրոն և նախապաշարումներ, իգ) դերանվանական և սպասարկու բառեր, մասնիկներ:

Վաղնջահայերենի, այսինքն՝ հնդեվրոպական նախալեզվից առանձնացած հայերենի բառապաշարի միջուկը կազմում են հնդեվրոպական միասնության շրջանից ժառանգված բառերը, որոնց իմաստային խմբերը և հիմնային բառերն ու հասկացությունները կներկայացնենք առանձին բաժնով: Սակայն պակաս կարևոր չէ, ըստ այդ թեմատիկ խմբերի, հայերենի արմատների բովանդակային վերլուծությունը: Վեր հանված յուրահատկությունները բնորոշում են հնդեվրոպական միասնությունից անջատվելու շրջանում հայերի մշակույթը, մտածողության զարգացման մակարդակը, բնակության միջավայրը, աշխարհըն-

կալումը: Ըստ այդմ՝ ֆիզիկական աշխարհին վերաբերող բնիկ բառերի մեջ արտացոլվել են շրջապատող աշխարհի հիմնական գոյացությունները՝ *առ, արև, արեգ, լոյս, լուսին, ասարդ, հող, գեպին, երկիր, ջուր, լիճ, գետ, առու, աղբեր, փայր, սար, քար, բլուր...* Այս բառաշերտին բնորոշ է *ցեխ, փղղմ, հոսող և կանգնած ջրեր*, նրանց մերձակայք նշանակող բառերի առատությունը, ինչպես նաև *քարեր և քարքարոտ տեղանք* նշանակող բառ-հասկացությունների մեծաքանակությունը՝ *առու, աղբ, գայռ, գետ, գոռ, մար, ջուր, լիճ, հեղեղ, հորդ, հուն, քար, քերծ, խութ, խոչ, այր, անշա...* Հետաքրքիր է, որ հայերենը չի պահպանել *ծովի* հնդեվրոպական որևէ անվանում, նաև ծովի հետ կապված *կղզու* անվանումը, *ցամաք* բառը Գ. Ջահուկյանը ընդգրկում է հիմնաշերտում, այն վկայված է նաև Յ. Պոկոռնու «Հնդեվրոպական ստուգաբանական բառարանում», բայց նշում է, որ Հ. Աճառյանը ցամաքը համարում է ասորական փոխառություն: Ծառ անվանումը, «Հայոց լեզվի պատմության» մեջ Գ. Ջահուկյանը հարցականով է համարում հնդեվրոպական, սակայն «Հայերենի ստուգաբանական բառարանում» այն արդեն տրված է որպես բնիկ բառ, թեև նշենք, որ *փայր* բառը գործածվել է նաև *ծառ* իմաստով:

Հայերենում պահպանվել են *մարդուն, նրա սեռին, տարիքին և ընտանեկան հարաբերություններին* վերաբերող հիմնական հասկացությունների հնդեվրոպական անվանումները՝ *մարդ, անձն, այր, կին, ամուսին, հայր, մայր, եղբայր, քույր, ուսուր, դուստր, մամ, նան, ծնող, թոռն, հարսն, սկեսուր, քեռի, ընտանիք, ազգական...* Իսկ կնոջ կողմից ազգակցություն ցույց տվող բառերի որոշ մասը բացակայում է, թեև Գ. Ջահուկյանը, ի տարբերություն Հ. Աճառյանի, *փեսայ, աներ, քեռի* բառերի համար հնդեվրոպական զուգահեռներ է գտնում: Հայերենում վկայված չեն այրիացած կնոջ և տղամարդու հնդեվրոպական նշանակումները, մեր *այրի-*ն կա՛մ հայկական նորակազմություն է, կա՛մ անհայտ ծագման փոխառություն:

Կենդանական աշխարհի իմաստային դաշտը վկայում է, որ հայերը ծանոթ են եղել վայրի և ընտանի բազմաթիվ կենդանիների, թռչունների, ձկների, սողունների ու միջատների՝ տարբերակելով դրանց արուն և

էգը, հասուն արարածներին ու ձագերին: Հայերը հմուտ են եղել որսորդության և անասնապահության գործերում՝ *գայլ, արջ, աղուէս, առիւծ, կորիւն, ինձ, լուսան, ոզնի, կով, եզն, ցուլ, երինջ, հորթ, մաքի, գառն, այծ, ուլ, էշ, ձի, արքադաղ, հաւ, ագռաւ, աղավնի, արծուի, բու, ցին, ուրուր, քիթեռն, քրթուր, անիծ, լու, րիգ, սարդ, մեղու, մրջին, աւշ, իծ...*

Հայերենում չկան *ձիու, խոզի* հնդեվրոպական անվանումներից շատերը՝ *հովաւրակ, զամբիկ, մարրուկ, խոզ, գոճի, խոճկոր, վարագ, փոխառյալ բառեր են, դա վկայում է, որ ձիաբուծությունն ու խոզաբուծությունը հայերի մեջ զարգացած չեն եղել: Հայկական չեն նաև կապովի, վագրի, փղի, կապիկի, ուղրի անվանումները, որոնց հայերը ծանոթացել են ավելի ուշ ժամանակաշրջանում:*

Մարմնի մասերի և մարմնական գործառնությունների հետ կապված գրեթե բոլոր բառերը բնիկ են՝ *միս, ջիլ նեարդ, արիւն, ակն, ունկն, ռունգն, այր, բերան, լեզու, արամն, կոկորդ, ոսկր, ուս, լանջ, սրիւնք, ձեռն, մաւրն, եղունգն, ուրն, ծունկն, սիրտ, լեարդ, փայծաղն, արգանդ, անուկ, շու, քիրտն...* Բնութագրական է հայերենում *մաշի, մորթ, կաշի* բառերի, ինչպես նաև *մազի, եղջյուրի, կրծքի, թոքի* անվանումների բացակայությունը, որոնք գրեթե բոլորը փոխառություններ են: Թեև նշենք, որ Գ. Ջահուկյանը *կուրծ*-ը համարում է հնդեվրոպական, պարզապես դեռ ճշտված չէ նրա բուն նախաձևը: Հնդեվրոպական չեն նաև գլխի և դիմամասերի որոշ կարևոր նշանակումներ՝ *զանգ, ուղեղ, ճակատ, հոնք, կզակ, քիթ, շուրթն*, այս հիմքերը կորստյան են մատնվել՝ փոխարինվելով անհայտ ծագման կամ իրանական փոխառություններով: *Գլուխ* բառն ինքնին թե՛ Յ. Պոկոռնին, թե՛ Գ. Ջահուկյանը կասկածանքով են հայերենում բնիկ համարում, իսկ *մարմին* բառի համար Հ. Աճառյանը ենթադրում է իրանական աղբյուր, բայց այն չի պահպանվել, Գ. Ջահուկյանը փորձում է հնդեվրոպական գուգահեռներ գտնել, բայց բոլորն էլ կասկածելի է համարում:

Ուտելիք և խմելիք, կերակրի պատրաստում, ամանեղեն նշանակող բառերի դաշտը հայերենում բնիկ բառերով հարուստ չէ, հնդեվրոպական մայր լեզվից հայերենին անցել են հիմնականում դրանց ընդհանուր հասկացությունների բառանունները՝ *ուրեկ, սնեկ, լափեկ, ծամեկ, կլանեկ,*

կրծեկ, լակեկ, ըմբեկ, արբեկ, խարշեկ, եփեկ, խորովեկ, խարկեկ, կերկուր (կերակուր): Օրվա տարբեր ժամերի հետ կապված սննդի ընդունման հասկացությունները ևս բացակայել են՝ *նախաճաշ, ճաշ, ընթրիք*. դրանք բոլորը ուշ ծագման են: Աղքատ է նաև ամանեղենի դաշտը, բացի *տիկ-ից* և *տարգալ-ից*՝ մնացյալը փոխառված են դրացի հնդեվրոպական կամ ոչ հնդեվրոպական լեզուներից՝ *կաթսայ, սան, տապակ, ափսե, պնակ, գավաթ, բաժակ, բաս, սրոակ, դանակ*. բոլորը փոխառություններ են:

Հագուստի և զարդարանքի, խնամքի իմաստային դաշտը ևս աղքատիկ է: Հայերին առավելապես ծանոթ է եղել բրդից գործված հագուստը: Բամբակյի և վուշի անվանումները հնդեվրոպական չեն: Առկա են հնդեվրոպական ծագման *զգեստ, արթոց, աշիք, քող* անվանումները, բայց հագուստի առանձին տեսակների հնդեվրոպական անվանումները բացակայում են: Հայերենում դրանք կա՛մ անհայտ ծագման, կա՛մ իրանական փոխառություններ են, ինչպես՝ *քանկոն, շապիկ, վարտիք, գուլպայ, կաշիկ, մոճակ, գդակ, ճարմանդ*: Չարդարանքներ նշանակող *զարդ, գինդ, մալրանի, ակն* բառերը բնիկ են, բայց զարդ նշանակող մնացյալ բառերը փոխառվել են ավելի ուշ, հիմնականում դարձյալ իրաներենից:

Բնակարանին, տանը և կահույքին վերաբերող իմաստային դաշտում պահպանվել են հիմնական հասկացությունների անվանումները՝ *տուն, օթևան, դուռն, յարակ, որմն, չեղուն, առաստաղ...*, իսկ կահույքի մասերի անվանումները փոխառյալ են:

Բուսական աշխարհին և երկրագործությանը բնորոշ հնդեվրոպական անվանումները ներկայացնում են այն տեղանքը, կլիմայական միջավայրը, որտեղ բնակվել են հայերը հնդեվրոպական միասնությունից անջատվելուց անմիջապես հետո՝ *կաղնի, բարդի, հացի, թեղի, եղևնի...* Ինչ վերաբերում է զուտ երկրագործությանը, ապա հայերենում պահպանվել են գործունեության այս ոլորտին վերաբերող որոշ բառեր՝ *արտ, ալգի, բիր, բրիչ, բերք, բոյս, սերմն, պտուղ, քաղ, հերկ, արաւր, եղան*: Սակայն երկրագործական մի շարք կարևոր հասկացությունների անվանումներ հնդեվրոպական չեն՝ *ակոս, փոցիս, մանգաղ, հացահատրիկ, ցորեն, տարեկան, վարսակ*:

Արհեստների և արվեստների իմաստային դաշտը երևան է բերում վաղնջահայերի հիմնական զբաղմունքը և նրանց հմտությունները: Ըստ այդմ՝ հայերը հմուտ են եղել ատաղձագործության, մետաղագործության ու դարբնության, կավագործության մեջ՝ *ալրաղձ, գերան, սիւն, մուրճ, քակն, ձող, շաղախ, արծաթ, քիթեղն, դարբին, հալի, շուլե, բով, հնոց, դուրգ*: Մետաղների անուններից, սակայն, հնդեվրոպական է միայն *արծաթը*, մյուս մետաղների անվանումները փոխառյալ են: Ուշագրավ է *կառուցել, շինել, կերպել, կազմել* բայերի ոչ հնդեվրոպական բնույթը և այս գործողության հնդեվրոպական ծագման հոմանիշի բացակայությունը:

Ունենալու, ստանալու, տալու գործառնությունների հնդեվրոպական անվանումները հայերենը պահպանել էր, սակայն առևտրի, հարստության, սեփականության, հատկապես դրամային շրջանառության հետ կապված հասկացությունների բառային հիմնական նշանակումները՝ *պարուք, վճար, հաշիվ, ծախս, շահ, վնաս ռոճիկ, գին*, փոխառյալ են: Վաղնջահայերենում այս ոլորտին առնչվող բառերը, ըստ Գ. Ջահուկյանի, գրեթե վկայված չեն, որովհետև ինչպես հնդեվրոպացիների, այնպես էլ վաղնջահայերի մոտ բացակայել են զարգացած առևտուրը և դրանով պայմանավորված դրամային հարաբերությունները: Բնութագրական է, որ անգամ *հարուստ* բառի մեջ «ունեցվածքի տեր» լինելու գաղափարը երկրորդային է. այս բառի առաջնային, նախնական իմաստն եղել է «ուժեղ», արմատը *հար-*ն է, *հարել* բայից՝ «հարվածել, զարկել» նշանակությամբ: *Արծաթ* բառի «դրամ», «հարստություն», «գանձ» իմաստները ևս երկրորդային են, ավելի ուշ առաջացած: Տվյալ իմաստային դաշտի հիմնական հասկացությունները հայերենը փոխառել է ավելի ուշ ասորերենից և պարսկերենից: Բնիկ հիմնաշերտից պահպանվել են *ունել, տալ, առնուլ, ստանալ, գին, զնել, աղքատ* բառերը:

Ժամանակի իմաստային դաշտը հարուստ է հնդեվրոպական անվանումներով, որոնք նշանակում են տարիք, տևողություն, տարվա եղանակներ, ժամանակի չափման միավորները, ինչպես՝ *օր, տիւ, ցերեկ, գիշեր, երեկոյ, ամ, ամիս, ամառն, չմեռն, աշուն, գարուն*: Ամիսների և օրվա ավելի ավելի մանրամասն բաժանումների անվանումները հնդեվրո-

պական չեն, և, ըստ ամենայնի, դրանք հայտնի չեն եղել վաղնջահայերենին:

Զգայական ընկալումների նշանակումները հայերենում գերազանցապես հնդեվրոպական ծագման են: Հոտի, համի, լսելիքի, տեսանելիքի և շոշափելիքի հետ առնչվող հասկացությունների բառ-անվանումները բնիկ են, ինչպես՝ *զգալ, իմանալ, լսել, տեսանել, հոտորել, շոշափել, հպել, համ, քաղցր, կծու, աղի, սուր, բուք, կարծր, պինդ, փափուկ, մեղմ, մուգ, դեղին, դեղձան, բիլ, փայլ, ջերմն, ցուրտ, հով, ողորկ, դերբուկ, քաց, չոր...*

Մտածողության և գիտելիքի հետ կապված հիմնային հասկացությունների անունները հնդեվրոպական են՝ *միտք, բան, ըմբռնել, իմանալ, գիտենալ, ճանաչել, ուսանել...*

Տարածքային, հասարակական-քաղաքական հարաբերությունների դաշտը հայերենում կազմավորվել է հիմնականում փոխառյալ բառերից, հնդեվրոպական բառանուններն այստեղ սակավաթիվ են: Հասարակական աստիճանակարգության վաղ շրջանի վկայություններ են հետևյալ բառերը՝ *տէր, տիկին, տանուտէր, ծառայ, արքանեակ, ընդոծին*:

Ռազմական գործին և օրենքին վերաբերող դաշտերը հարուստ չեն հնդեվրոպական բառերով: Կենսագործունեության այս ոլորտների հետ առնչվող բառերի հիմնական մեծամասնությունը հայերենը փոխառել է պարսկերենից: Բերենք հնդեվրոպական պահպանված անվանումները՝ *մարտ (մարտնչել), սուր, բուր, աղեղն, նեյր, սլաք, իրաւ-ունք, մեղաւոր, յանց-անք, յանց-աւոր, արդար, գող, արգել-ուլ և այլն*:

Կրոնի և հավատալիքների իմաստային դաշտում հնդեվրոպական անվանումները դարձյալ փոքրաթիվ են: Հնդեվրոպացիներն ակնհայտորեն նախապաշարմունքներով ծանրաբեռ չեն եղել, կրոնական հավատալիքների համակարգն էլ սաղմնային վիճակում էր: Այս իմաստային դաշտի մեջ ներառենք ինչպես կրոնական բովանդակության անունները, այնպես էլ դիցանունները: Կրոնական բովանդակության բառերն ուղղակիորեն արտացոլում են հանրության կյանքում տեղի ունեցող պատմամշակութային, քաղաքական, տնտեսական զարգացումները՝ բնա-

պաշտական բազմաստվածությունից անցումը մենաստվածության, հիմնական հավատին զուգահեռ՝ այլ կրոնների առկայությունը տվյալ տարածքներում, կրոնական գործոնի ազդեցության աստիճանը պետական-քաղաքական կյանքի վրա և այլն: Կրոնական հասկացությունները դասակարգվում են իմաստային, ծագումնաբանական հատկանիշներով: Իմաստային դասակարգման միջոցով բացահայտվում են լեզվի և լեզվակիրների գաղափարականացման աստիճանը, հոգևոր արժեհամակարգը, լեզվամտածողության հիմքը: Իմաստային դասակարգումը բազմաստիճան է: Նախ՝ առանձնացնում ենք հեթանոսական, ապա՝ քրիստոնեական հասկացությունները, իսլամական կամ մահմեդական կրոնի հետ առնչվող ամունները դիպվածային են: Ըստ ծագման՝ առանձնացնում ենք.

Ա. նախահայկական (ենթաշերտային),

Բ. հայկական,

Գ. փոխառյալ կրոնամունքներ.

- ❖ իրանական
- ❖ հունական
- ❖ ասորա-եբրայական
- ❖ արաբական
- ❖ խառն:

Ենթաշերտային կրոնական եզրույթներն առանձին քննությունն արժանի են, որովհետև նման անունների ծագումնաբանության վարկածները երբեմն բավական հակասական են: Դրանցից նշենք խեթական աղբյուրներում հիշատակված Tarumuš դիցանունը, որի անունից ածանցվել է Տուրուբերանում գտնվող բնակավայրերից մեկի անունը, այն հնչյունական աղերսներ ունի *Տարում* տեղանվան հետ, և աշխարհագրական տեղադրումը ևս համընկնում է Տարունի հետ¹¹⁹: Շումեր-ակկադական ծագում է վերագրվում *Նանե* աստվածուհու անվանը, որը հին շրջանում տեղանվանակերտ գործառույթ ուներ¹²⁰, ինչպես՝ *Նանա*, *Նա-*

¹¹⁹ Տե՛ս Ա. Քոսյան, Հայկական լեռնաշխարհի տեղանունները (Ըստ խեթական աղբյուրների), Եր., 2004, էջ 63:

¹²⁰ Мифологический словарь, М., 1991, էջ 386:

նեն, Նանաս, Նանվի, Նանէական, Նանենց, Նանանց, Նանենից, Նանինց: Թեև վերջին տարիների աշխատանքներում Նանէ-ի համար որպես հիմք դիտարկում է *նան* հնդեվրոպական արմատը, Ջահուկյանը դա համարում է քիչ հավանական՝ հակված լինելով այս դիցանվանը ակկադական ծագում հատկացնելու¹²¹: Հնդեվրոպական փոխառյալ կրոնանուններից տարածված են իրանական կազմիչներով կառույցները, որոնք հարաբերական հին շերտին են պատկանում, այնուհետև քրիստոնեության մուտքն ուղղակի հանգեցնում է հունական և ասորա-բերայական ծագման անունների երևան գալուն, իսկ մահմեդականության հետ առնչվող սակավաթիվ անուններն արդեն արաբական ծագման բաղադրիչներ ունեն: Հայերենում կրոնական հավատալիքների հետ կապված անունների առանձնացման և դասակարգման համար անհրաժեշտ է նախ քննել դրանք ընդհանուր բառապաշարի, ապա՝ հիմնական բառափոնդի մեջ: Բնորոշ է, որ Հ. Աճառյանը, ապա Գ. Ջահուկյանը մման բառերի նախնական կրոնական բովանդակությունը ոչ միշտ են հավաստի համարում, այսպես՝ հենց *կրոն* բառը, որ ծագում է *կրեմ* բայից, վաղնջահայերենում ունեցել է առաջնային «կարգուկանոն, օրենք» իմաստը, որից միայն հետո է ածանցվել է «հավատ, կրոն» նշանակությունը¹²²: Հնդեվրոպացիների մոտ աստծո գաղափարը շատ յուրօրինակ զուգակցվում էր բաշխելու, բաժին հանելու գաղափարի հետ, որը հաստատվում է *bagh արմատով: Այս արմատից էլ ծագում է աստծո անունը հնդիրանական ցեղերում, այն փոխառում են հայերը՝ և՛ հասարակ, և՛ հատուկ անունների տեսքով (անձնանուն, տեղանուն)՝ *Բագին, Բագարան, Բագարայր, Բագառին, Բագաւան, Բագրեւանդ, Բագ-րարակերդ, Բագրարաշէն* և այլն: Հիշյալ *բագ*-աստված արմատը վկայված է նաև փոյուզիացիների և սլավոնական ցեղերի լեզուներում, այսպես՝ *бог, богатый, убогий*: Ընդ որում, ակնհայտ է, որ հարուստ լինելու հատկանիշը կապվում է աստծո բարեհաճության հետ, այն աստ-

¹²¹ Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, էջ 412:

¹²² Նշվ. աշխ., էջ 273-274:

վածատուր է, իսկ նրանից մերժված լինելը թշվառության հոմանիշն է. богатый- նշանակում է հարուստ, убогий-թշվառ¹²³:

Հայերենի հիմնական բառաֆոնդում, որ հնդեվրոպական մայր լեզվից է ժառանգված, կրոնի և հավատալիքների հետ առնչվող եզրերն ի սկզբանե, այսինքն՝ վաղնջահայերենից սկսյալ (Ք.ա. 3-րդ հազարամյակից - Ք.ա. 13-րդ դար)՝ բավականին աղքատիկ են եղել: Հնդեվրոպացիները և միասնությունից նոր տրոհված վաղնջահայերը, իհարկե, ունեին պաշտամունքային համակարգ՝ ծիսական արարողություններով և սրբության, աստվածայինի վերաբերյալ հատուկ հասկացություններով, բայց դրանք սահմանափակ էին, այս իրողությունը մեր նախնիների իրապաշտ, հողեղեն աշխարհընկալման մասին է վկայում: Պատահական չէ, որ հետագայում հայերը դյուրությամբ փոխառեցին իրանական դիցարանը՝ բավարարվելով փոխառյալ աստվածներով, հնագույն հայկական աստվածներից ոմանք անգամ դուրս մղվեցին իրանական աստվածների կողմից: Վաղնջահայերի երկրպագությունը սահմանափակվում էր հստակ շրջանակներով: «Ներմուծված» աստվածները հիմնականում ծագում էին հնդիրանական աշխարհից, թեև կային նաև շումեր-սկկադական ծագում ունեցող աստվածություններ: Փոխառյալ աստվածների դյուրին մուտքը Հայաստան և՛ Ն. Ադոնցի, և՛ Հ. Կարազոյանի կողմից հիմնականում բացատրվում է Հայաստանի և Իրանի՝ միևնույն արքայատոհմի տիրապետության ներքո գտնվելու հանգամանքով¹²⁴: Արքայատոհմը, անշուշտ, նախաձեռնողն էր պաշտոնական հավատի ընդունման և ամրակայման, բայց պետք է նշել որ ժողովրդի կողմից այդ եկվոր աստվածներն ընդունվեցին անմիջապես, հոժարությամբ, անգամ, ինչպես նշեցինք, տեղաբնակ որոշ աստվածների պաշտամունքը սկսեց փոխանցվել հնդիրանական ծագման աստվածություններին, ինչպես օրինակ՝ Արա Գեղեցիկի և Վահագն Վիշապաքաղի պարագայում: Արա Գեղեցիկին բնորոշ հատկանիշները, պաշտամունքային արարողությունները, կոթողները, խորհրդանիշերը, գրեթե ամեն ինչ

¹²³ **Գ. Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 84:

¹²⁴ Տե՛ս **Ն. Ադոնց**, Հայաստանի պատմություն, Եր., 1972, էջ 370, **Յ. Կարազեղեան**, Սեպագիր տեղանուններ, Եր., 1998, էջ 287:

սկսեց վերագրվել Վահագն Վիշապաքաղին, թեև հայ դիցաբանության մեջ նրանք հանդես են գալիս միաժամանակ¹²⁵: Արա դիցանունը, համեմատած Վահագնի հետ, դարձավ նվազ գործածական, թեև Արա Գեղեցիկը մեր առասպելաբանության սիրելի հերոսներից է, նա համարվում է ազգի նահապետ՝ Արամի որդին, այսինքն՝ միաժամանակ և՛ դիցանուն է, և՛ դյուցազնանուն (էպոնիմ): Եթե Արայի անվամբ կան լեռ, բազմաթիվ բնակավայրեր՝ գյուղեր, ավաններ*, ապա Վահագնի անունից կազմվել են, և ամենակարևորը, կազմվում են ոչ միայն բնականություններ, այլև լեռնանուններ՝ *լեռնազագար, լեռնաքազուկ, գեղախուն, գալառախուն*: Ջուտ հայկական դիցանունները, այսպիսով, հայոց դիցարանում սակավաթիվ են դարձել գուցե թե աստիճանաբար, օտար պաշտամունքների մշակութային և քաղաքական հզոր ազդեցությունների պատճառով:

Գ. Ջահուկյանը, անդրադառնալով մեր նախնիների պաշտամունքային պատկերացումներին, նշում է, որ աստվածայինը վաղնջահայերի համար մի կողմից առնչվում էր շողացող երկնքին և լուսավոր օրվան, մյուս կողմից՝ նախահայրերի պաշտամունքին: Գուցե այս ընկալման հետ պետք է կապել գուտ հայկական ծագում ունեցող *Մարդիկի* պաշտամունքը՝ որպես սիրո և գեղեցկության աստվածուհու:

Աստվածայինի հավերժական ըմբռնման արդյունք է արեգակնապաշտությունը լայն իմաստով՝ հեթանոսական և վերհեթանոսական: *Արեգ, արև*, ավելի սակավ *արփի* արմատները գործունակ են եղել մեր պատմության գրեթե բոլոր ժամանակահատվածներում՝ *Արեգունի, Արեգին, Արեգա, Արեգավան, Արեգակնաձագ, Արևիք, Արևաշոր, Արփի, Արփա, Արփիավան, Արփիագոծ* և այլն: *Արեգ, արև, արփի* արմատներով անվանումները աշխարհագրական մեծ տարածում ունեն՝ Տուրուբերան, Սյունիք, Կարին, Ակն, Գեղարքունիք, Արարատյան դաշտ, Կիլիկիա: Արևի իմաստ արտահայտող անունները հաղիպում են լեռնազագաթների, լեռնաշղթայի, գետերի, լճերի, աղբյուրների, ձորերի, գավառների, շեների և գյուղերի անվանումներում, անձնանուններում, որը վկայում է արևի պաշտամունքի խորության և ուժի մասին: Նշենք, որ այս

¹²⁵ Հմմտ. **Յ. Կարազեղեան**, նշվ. աշխ., էջ 285-287: Ինչպես նաև՝ **Գ. Ղափանցյան**, Անուիպ գործեր, *Ара Прекрасный. Мифотворческий образ у армян*, Եր., էջ 18-23:

լուսատուի անվանումը գործում անվանակազմիչ է նաև այսօր, թեև ուղղակի կրոնական բովանդակություն արդեն չունի, սակայն երկրպագության առարկա շարունակում է լինել ցարդ: Նույնը մասամբ վերաբերում է հնդեվրոպական *երկին* արմատին:

Քրիստոնեական բառապաշարը հայերենում մեծ մասամբ դարձյալ փոխառյալ է, ինչպես և հեթանոսական հավատի բառապաշարը, որովհետև այն ևս օտարածին էր: Պարսկական դիցանուններին, հավատքի խորհրդանիշներին փոխարինելու եկավ քրիստոնեությունը՝ իր հետ բերելով հրեական, հունաստրական փոխառությունների ալիքը:

Կրոնական շինություններ արտահայտող անուններից ամենակենսունակը և վաղնջականը *վան/ք* արմատն է, որը սկզբնապես նշանակել է բնակատեղի, հավաքատեղի՝ *աւան*, ապա որոշակիացել է իբրև ծխական, հոգևոր նպատակներ հետապնդող մարդկանց հավաքատեղի: Այս բառի ծագումը Հ. Աճառյանը համարում է իրանական, թեև առավել համոզիչ է նրա ընդհանուր հնդեվրոպական ծագումը: Այստեղ ունենք *աւվան/վան* հնարավոր գուգաձևությունը, առաջինն ամրակայվում է, որպես ընդհանուր նշանակության բնակատեղի, իսկ երկրորդը վերածվում է կրոնական- շինարարական եզրույթի, իբրև տեղանվանակազմիչ՝ արդեն ավելի հազվադեպ ունենք *եկեղեցի, մալոռո, անապատ* արմատները, առաջին երկուսը հունական փոխառություններ են, *անապատ*-ը՝ իրանական:

Բառիմաստային վերջին՝ 23-րդ խումբն ընդգրկում է դերանվանական և սպասարկու բառ-մասնիկները, որոնք հիմնականում հնդեվրոպական նախալեզվից են ժառանգված՝ *ես, դու նա, մեք, դուք, նոքա, իմ, քո, իւր, մեր, չեր, իմն, ինչ, ումն, որ, ուն, երբ, քան, ոչ, մի, առ, ընդ, ըստ, ց, եւ, ու, վեր, գեր, ներ, -վոր, -ք* և այլն:

Ստորև ներկայացնենք հայերենի բնիկ բառերը՝ ըստ ընդունված իմաստային, թեմատիկ խմբերի՝ նշելով, որ Հ. Աճառյանը առանձնացնում է 713 բնիկ արմատ: Այս առումով գիտնականը գրում է, որ հունարենը կամ լատիներենը մայր լեզվի 2223 արմատների գրեթե կեսը ժառանգել են: Գ. Ջահուկյանը բնիկ արմատների թիվը մասամբ ավելացնում է, ուստի կարող ենք արձանագրել, որ բնիկ արմատների թիվն այ-

սօր անցնում է 1000-ից, հետևաբար հայերենը ևս նախալեզվի արմատների կեսը պահպանել է:

Ա. Ֆիզիկական աշխարհ

Ալի-ք, աղբեր, ամպ, արեւ, առու, աստղ, ատաղձ, արեգ, ամպրոպ, այր, անձաւ, անդունդ, անտառ, արեգակն, աւագ, աղ, աւագ, բլուր, բոց, գետ, գետին, լիճ, լոյս, լուսին, խութ, կարկուտ, հեղեղ, հող, հողմ, հով, հուն, ձիւն, մառ, մաւր, մէգ, մոխ, յորդ, յորձ-անք, շանք, որոտ, ջուր, սառն, սար, ցլեպ, փայտ, քար, քերծ...

Բ. Մարդկություն՝ սեռ, տարիք, ընտանեկան հարաբերություններ

Մարդ, անձն, ազգական, այր, աղիջ (աղջիկ), ամուսին, դուստր, եղբայր, ընտանիք, թոռն, ծնող, կին, հարսն, հաւ, հոր (փեսա), մամ, նու (հարս), նան, հայր, մայր, ուստր, որդի, տալ, տայգր, քոյր, քենի...

Գ. Կենդանիներ

ա) ընտանի կենդանիներ՝ *որջ, սրերջ, ցուլ, եզն, կով, մոզի, երինջ, առն, մաքի, գառն, որոջ, այծ, էջ, քաղ (արու այծ), ուլ, ամիկ (մեկամյա արու ուլ), չի, հաւ, բառ, աքաղաղ, մարի (էգ թռչուն), սագ, շուն...*

բ) վայրի կենդանիներ՝ *գայլ, ինձ, առեւծ, լուսան, արջ, աղուէս, բորենի, եղն, որս, երէ, ոզնի, մուկն...*

գ) թռչուններ՝ *հաւ, բառ, ազոռա, աղաւնի, արծուի, բու, բուէն, ծիծառն, կկու, կռունկ, յոպոպ, ցին, ուրուր...*

դ) ձկներ, միջատներ և սողուններ՝ *ձուկն, քարք (ձուկ որսալու կողով), կարք, անիծ, լու, մրջիւն, սարդ, տիգ, մեղու, բոռ, բրէտ, մլակ, թիթեռն, թրթուր, աւձ, իժ, քարք (արքայիկ օձ)...*

Դ. Մարմնի մասեր, մարմնական գործառնություններ և պայմաններ

Միս, ջիլ, նեարդ, մարութ-ք, արիւն, ոսկր, թէկն, կուռն, ողն, երես, մոռք, ծնաւտ, ակն, ունկն, բերան, քիմ-ք, ատամն, լինդ, ուլն (պարանոց), կոկորդ, ուս, թեւ, ձեռն, բուռն, մատն, բոյք, ոտն, սրուն-ք, ոլոք, ծունկն, եղունգն, լանջ, ստին-ք, սիրտ, լեարդ, արգանդ, փայծաղն, փամփուշտ

(միգապարկ), թուք, քիրտն, շող-իք, կիծ-կծանել, խայթել, խածանել, լի-
զանել, լպստել, ործկալ, քուն- քնել, մեզ-միզել, բեղմն, ծին-ծնանել, երկն-
երկնել (ծննդյան ցավ քաշել), ամուլ, յղի, կեալ- կեան-ք, մեռանել, դի, գէշ,
առ-ողջ, հիւանդ, հիւծանել, դալ-ուկն, ելունդ, պալար, խիթ (ցավ), այտ-
նուլ (այտուցվել), թարախ, դեղ, խեղ (հաշմանդամ), մունջ, պապանձ,
մերկ, հոլանի, բոկ, արբել...

Ե. Ուտելիք, ըմպելիք, կերակրի պատրաստում, ամանեղեն

Ուտել, սնել, լակել, լափել, ծամել, կլանել, կրծել, կերակուր, յագե-
նալ, եփել, խորովել, խարկել, ըմպել, հում, շաղել, մաղել, աղալ, աղալը-
իք, երկան-ք, հնոց, պուլ-իկ (կավե աման), տիկ, տարգալ (գդալ), ալեր,
աղանձ, բլիթ, բոկեղ, միս, թան, մածուն, կաթն, սիսեռն, խստոր, բողկ,
պտուղ, կորիզ, որթ, դեղձ, չիր, սունկ, մոշ, մոռ, աղ, մեղր, գինի, մաճ-առ,
կոզի (կարագ)...

Զ. Հագուստ, անձնական զարդարանք, խնամք

Ագանել, գ-գեմուլ, գ-գեստ, մաշել, ասր, բուրդ, գեղմն, իլ-իկ, հէն-ք,
ոստայն, ասեղն, հերիւն, աւթոց (վերարկու, զգեստ, ծածկոց), աւձ-իք,
աւղ (կոշիկ), գ-արդ, գինդ, մատանի, աւժանել...

Է. Բնակարան, տուն, կահկարասի

Տուն, դուռն, նիզ (սողնակ), փեղկ, յատակ, աւթ-աւթել (օթևան,
օթևանել), որմն, ձեղուն, քիւ, առաստաղ, սեղան, սար-ք, ան-կող-ին...

Ը. Երկրագործություն, բուսականություն

Աճել, ածու, այգի, արտ, անդ, արար, թի, բիր, սերմն, քաղել, բեր-ք,
դալար, թառամ, թոռոմ, բոյս, գինձ, դեղձ, դաղձ, թելուկ, մամուռ,
արմ-ատ, ոստ, բողբոջ, ծիլ, շիւ, կաղին, մայրի, հացի, թեղի, ցախ...

Թ. Ֆիզիկական տարբեր գործողություններ, սրանց հարաբերույթ- յունը առանձին արհեստների ու արվեստների հետ՝ համապատասխան գործիքներով, նյութերով, արտադրանքներով

Առնել-արարել, եմ, եղանել, գոյ, լինել, դառնալ, ջանալ, փորձել,
հայթայթել, հարկանել, քերթել, քորել, հաստատել (ամրացնել, շինել),

ստեղծանել, բեկանել, ճմլել, հեղուկ, քերել, քերթել, գործ, մուրճն, քակն, ձող, սիւն, դարբին, քեքել, հալել, սալ, ձուլել, քիթեղն, բով (հնոց), արծաթ, իր...

Ժ. Շարժում, տեղափոխություն, փոխադրում, նավագնացություն

Ելանել, բառնալ, անկանել, անցանել, յառնել, իջանել, ցածնուլ, ընկենուլ, քոչել, խրտնուլ, հարթնուլ, սարտնուլ, շրտնուլ, երթալ, չուել, անցանել, գալ, հասանել, մատչել, մերձենալ, մտանել, բերել, ածել, զեռալ, խաղալ, ընթանալ, ուղի, լողալ, նաւ, լաստ, առ-ագ-աստ...

ԺԱ. Ունեցվածք, սեփականություն, առևտուր

Ունել, առնուլ, ստանալ, տալ, աւգուտ, գտանել, գող, գողանալ, գին, զնել, տուրելառ...

ԺԲ. Տարածական հարաբերություններ՝ տեղ, ձև, չափ

Ետդ-տեղ, դիր-ք, կալ-կամ, դիզանել, բանալ, թաքչել, բարձր, ցածր, վեր, լայն, հիմն, կէտ, կողմն, մէջ, մերձ, մօտ, հուպ, աջ, արեւ-ել-ք, արեւ-մուտ-ք, արեւ-ել-ք, անկիւն, ձև, հարաւ, փոքր, մանր, երկայն, հաստ, անձուկ (նեղ), թանձր, նուրբ, գոգ, կոր, կեռ, անկիւն, խաչ, արդ (ձև)...

ԺԳ. Քանակ և թիվ

Քան-ակ, թիւ, ողջ, յոլով (բազում), աւել, յ-աւելուլ, յոգն (շատ), բոլոր, սաստիկ, լի, լնուլ, սին, ունայն, առաջ-ին, երկու, երեք-եռ, չորք- քառ, հինգ, վեց, եաւթն, ութ, ինն, տասն, մետասան, երկոտասան, երեքտասան, չորեքտասան, հնգետասան, վեշտասան, քսան, երեսուն, քառասուն, յիսուն, վաթսուն, եւթանասուն, ութսուն, իննսուն...

ԺԴ. Ժամանակ

Տի-ք (տարիք, հասակ), նոր, թարմ, հին, ծեր, երէց, տնել, յար, ստէպ, երբեմն, երբ-եք, աւր, տիւ, գիշեր, երեկոյ, ամ, ամիս, ձմեռն, գարուն, ամառն, աշուն, տնել...

ԺԵ. Զգայական ընկալումներ

Իմանալ, հոտ, հոտոտել, համ, քաղցր, լսել, անսալ, հունչ, լուր, տեսանել, ցուցանել, փողփողել, փայլել, երեսել, բիլ (բաց կապոյտ), դեղին, կարծր, պինդ, փափուկ, մեղկ (թույլ, մեղմ), ոլորկ, սուր, բուք, ցուրտ, հով, թաց, թրջել, ջերմ, գոլ, գաղջ....

ԺԶ. Զգացմունք, խառնվածքային, բարոյական և գեղագիտական ըմբռնումներ

Հոգի, ոգի, եռանդ, հոգ(ս), (զ)արմանալ, եղեռն (փորձանք, աղետ), հաւանել, կայտիւ (կայտառ), սիրել, սէր, փարել, ծիծաղել, փռփկալ, ծաղր, լալ, ողբալ, արտասուք (արտասւր), ատել, ատելութիւն, գան, գարշ, գանել, գարշել, խոտել (զզվել, զզվանք), երկիւղ, երկնչել, ցատումն, քէն, մեղ-ք, քաւ-ութիւն, սխալ, մոլոր, սուտ, արդար, գեղ-եց-իկ, տ-գեղ...

ԺԷ. Մտածողություն, միտք

Միտ-ք, մտ-ա-դը-ութիւն, իմանալ, գիտել, ճանաչել, ուսանել, ուսանող, ուսուցիչ, գիտուն, իմաստուն, մեկնել (բացատրել), մոռանալ...

ԺԸ. Չայնական արտահայտություն, խոսք, ընթերցանություն և գիր

Չայն, երգել, գեղգեղալ, աղաղակել, գոչել, ճչալ, ճիչ, կարդալ, հարցանել, բան, բայ (բան, խոսք), բառ, անուն, ասել, լռել, գիր, գր-իչ, գիր-ք, ընթեռնուլ...

ԺԹ. Տարածքային, հասարակական և քաղաքական բաժանումներ, հարաբերություններ

Երկիր, ազգ, գաւառ, հայր-ենի-ք, ցեղ, զարմ, տէր (տի-այր), տի-կին, թաղ, ընկեր, ընդոծին, արբանեակ, դը-ացի, հիւր, բար-ք, լիւր, լալիրշ, լկտի ...

Ի. Ռազմական գործ

Մարտ, կռիւ, մարտնչել, մարտիկ, աղեղն, նետ, սլաք, թուր, կումբ, գերի...

ԻԱ. Օրենք

Իրաւ-ունք, բողոք, երդումն, երդնուլ, երդ-մն-ա-զ-անց-ութիւն, մեղա-ւոր, մեղ-ա-դը-ել, յ-անց-աւոր, քաւել, արդար,...

ԻԲ.Կրոն և նախապաշարմունք

Դի (աստված), կրաւն, երկինք-ք, ձօն, տօն, սուրբ, աւետել- աւետա-րանել, անէծք, անիծանել, աղաթել, մաղթել, թովել...

ԻԳ.Դերանվանական և սպասարկու բառեր ու մասնիկներ, ածանց-ներ

Ես-մեք, դու-դուք, ինքն-ինքեանք, իմ, մեր, ձեր, իւր, սա, այս, սոյն, ս, դա, դոյն, դ, նա, այն, նոյն, ն, աւասիկ, աւաղիկ, աւանիկ, ո(վ), ինչ, որ, ոմն, ուրեմն, ուստի, որ, առ, առաջ, ընդ, ըստ, վեր, ներ գեր, արտ, մինչ, եւ, ու, այլ, եթէ, երբ, քան, ոչ, մի, ան -*անուն*, տ- *որչեւ*, տըր- *մեղաւոր*, *յիւն-նաւոր*....

ՀԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

Հ. Հյուբշմանը, որ իրավամբ համարվում է հնդեվրոպաբանության դիրքերից հնագույն հայկական անձնանունների առաջին գիտական ուսումնասիրողներից մեկը, հետաքրքիր մի դիտարկում ունի անվանադրման հայկական սկզբունքների վերաբերյալ, որը բնորոշում է մեր ազգային մտածելակերպը. «Ազնվականները հիմնականում կրում էին պարսկական (մեծ մասամբ Արշակունյան) անուններ, հոգևորականները՝ բիրիական, հունական կամ ասորական, մինչդեռ ժողովուրդը հավանաբար իր հին անունները դեռ երկար ժամանակ շարունակում էր պահել, որոնք, սակայն, պատմիչները իրենց աշխատությունների մեջ չեն հիշատակում, քանի որ հասարակ մարդիկ պատմիչների համար որևէ դեր չէին կատարում, և դժվար թե նրանք համարվեին հիշատակու-

թյան արժանի»¹²⁶: Բնիկ հայկական անձնանունների քննությամբ Հ. Աճառյանից հետո առանձին զբաղվել է Գ. Ջահուկյանը՝ նշելով, որ հայկական անձնանունների գիտական ուսումնասիրությունը համեմատաբար նոր զարգացող լեզվաբանական բնագավառ է: Բնիկ անձնանունների քննությունը նա կատարում է ըստ հետևյալ շրջանաբաժանման. ա) հնագույն շրջան՝ մինչև 5-րդ դար, բ) հին շրջան 5-րդ դարի վերջերից մինչև 11-րդ դար, գ) միջին շրջան՝ 12-16-րդ դարեր, 4) նոր շրջան 17-րդ դարից մինչ 20-րդ դար: Վերջին բաժանման եզրագիծը հաստատապես կարելի է բերել մինչև 21-րդ դար, որովհետև անվանաստեղծման գործընթացը վաղուց արդեն մեծ ձևափոխությունների չի ենթարկվում:

Անձնանունները տեղանուն դառնալու մեծ ներուժ ունեն. հին շրջանում արքաների և իշխանների, հերոսների անուններով կոչվում էին ոչ միայն նրանց պատկանող, նրանց կողմից կառուցված կամ գրավված քաղաքներն ու ավանները, այլև նրանց ընծայված բնակավայրերը, որտեղ տարածվում, բազմապատկվում էր պաշտամունք դարձած նրանց փառքն ու հռչակը:

Պատմագիտության և լեզվաբանության մեջ իշխում է այն մոտեցումը, ըստ որի՝ ժողովրդանունները ծագում են անձնանուններից, այսինքն՝ պատմական որոշակի իրադարձություններից հետո (ռազմական հաղթանակներ, տնտեսական-մշակութային նվաճումներ) տոհմի մահապետի անունով սկսում է կոչվել նրա ողջ զարմը: Մեր պատմագրության հայր Մովսես Խորենացին իր «Հայոց պատմությունը» կառուցել է հենց այս սկզբունքներով և մեր ինքնանվանումը որպես ազգային միավոր՝ *հայ*, ինչպես նաև այլ ազգերի կողմից մեզ տրվող անվանումները՝ *արմեն*, *թորգոմյան*, *ասքանազյան* և այլն, բացատրում է մեր ազգի հերոս մախնիների անձնանունների միջոցով: Խորենացին ոչ միայն մեր ժողովրդանունների ծագումն է կապում դյուցազունների անունների հետ, այլև նշանավոր բոլոր տեղանունները բխեցնում է Հայկյան զարմի ժառանգների անուններից¹²⁷:

¹²⁶ Հ. Հյուբշման, Հայագիտական ուսումնասիրություններ, էջ 318-319:

¹²⁷ Տե՛ս Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Եր. 1981, էջ 48-52:

Քրեթոդահայր Խորենացուց հետո դարեր են անցել, սակայն տեղանվանգիտության մեջ դեռևս քննության խնդիր է, օրինակ՝ *Արմավիր* կամ *Արմաշ*, *Արմա*, *Հարմա* տեղանունները ծագում են մեր էթնիկական արմեն անվանումից, որը ստուգաբանվում է որպես «արմ- արմատ, ցեղ, զարմ» կամ «ընծիւղ, ցողուն», «մեծ, ուժեղ, հզոր»¹²⁸, թե՞ մեր նախահայր Արմենի անձնանունից, որը մեծ հավանականությամբ կարող է առաջացած լինել հենց վերոնշյալ հասարակ գոյականներից կամ ածականներից, քանի որ դրանք կարող էին լինել անձի անվանադրման համար կարևոր բնութագրիչ մականուններ:

Դեռևս նախորդ դարի սկզբին Ն. Ադոնցը¹²⁹, իսկ 1940-ական թվականներին Գ. Ղափանցյանը յուրօրինակ տարանջատում են կատարել՝ ուրարտական, նախյան, խեթական, խաղական և կովկասյան ցեղերից մեզ անցած տոհմանուն-տեղանունների վերլուծության ժամանակ՝ առանձնացնելով դրանց նախահայկական սկզբնաձևերը կիրառության հայկական ձևերից. ձուլող ժողովուրդը յուրացնում է բնիկների լեզուների բառապաշարը, նրա լեզվում առաջանում են նոր հնչյունական, ձևաբանական, բառակազմական և այլ օրինաչափություններ, որոնք հետագայում բնորոշվում են որպես ենթաշերտային: Ուշագրավ է այս առումով *Ծոփք* տեղանվան ստուգաբանությունը. Ն. Ադոնցը նշում է, որ *Ծոփք* նույն նախահայկական Supani-ն է, որը հայերենին անցել է Ս>Ծ հնչյունական անցումով, իսկ մեր ք-ն բնիկների լեզվի հոգնակերտն է, այսինքն՝ ունենք ենթաշերտային փոխառյալ արմատ + հայկական հոգնակերտ ձևույթ կառույցը. «Supani անվանումը հարազատորեն պահպանվել է ասորական Sofan-aje ձևի մեջ՝ հավանաբար հնաբնակների հետ ասորիների ավելի մոտիկ ազգակցություն ունենալու հետևանքով: Հայկական և ասորական ձևերը իրապես, այսինքն՝ աշխարհագրական առումով համընկնում են և նշանակում միևնույն երկիրը, որ բնակեցված էր գերազանցապես հայ և ասորի ծագում ունեցող ժողովուրդներով»¹³⁰:

¹²⁸ Գ. Զահուկյան, Հայոց լեզվի պատմություն. Նախագրային շրջան, Եր. 1987, էջ 287-288:

¹²⁹ Ն. Ադոնց, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում. Քաղաքական կացությունը ըստ նախարարական կարգերի, Եր., 1987, էջ 413-549:

¹³⁰ Նույն տեղում, էջ 52:

Հ. Կարապետյանն իր «Սեպագիր տեղանուններ» աշխատության մեջ «Առեղծվածային լարիքինքոս» խորագրով բաժնում զարգացնում է Գ. Ղափանցյանի դիտարկումներից ծագող այն տեսակետը, ըստ որի, պատկերավոր բնորոշմամբ, «երկու սկյուր ցեղապետից երեք հայ թագավոր» է սերել. *Լժպա* սկյուր ցեղապետը հայ մատենագրության մեջ հանդես է գալիս որպես հայ թագավոր Կայպակ, իսկ բիայնական-արամեական աղբյուրներում նշված *Տագա* ցեղապետը, որը նույն *Լժպա*-ն էր՝ ըստ ասորեստանյան աղբյուրների, հայ մատենագրության մեջ դառնում է Սկայորդի (Շագայորդի): Իսկ Պարտաթուան (*Partat'ua*), մեր ավանդական պատմության տվյալների համաձայն, հայ նախարարների մեջ առաջինը արքայական տիտղոս ստացած Պարույրն է: Սրանք ծագմամբ ոչ հայկական անվանումների հայկականացման հետաքրքիր օրինակներ են¹³¹:

Բնիկ հայերեն (ինդեվրոպական արմատներից) կազմված անձնանունների սահմանազատումն որոշ չափով պայմանական է. անհայտ ծագման և հայացված անձնանունները նույնքան հարազատ են հայերին, երբեմն անգամ ավելի, քան Գ. Ջահուկյանի կողմից առանձնացվածները: Այսպիսով՝ բնիկ անձնանունների մեջ մեծ թիվ են կազմում հասարակ անուններից ծագած հատուկ անունները, որոնց մեջ, ըստ իմաստի, կարելի է տարբերակել մի քանի խումբ:

Ա) Կենդանիների անուններից ծագած անձնանուններ, սրանք անձնանունների վաղնջական շերտին են պատկանում և արտացոլում են տոտեմական հավատալիքների շրջանի մարդկանց աշխարհընկալումը՝ *Արյորյր*, *Այծեսան*, *Այծեմնիկ*, *Անգղ*, *Գառնիկ*, *Գայլ*, *Ընչակ*, *Եզնիկ*, *Հաուկ*, *Չագիկ*, *Կորիւն*, *Մրջինիկ* և այլն:

Բ) Ազգակցական բառերից կազմված անձնանուններ՝ *Դուսրր-Դարրիկ*, *Եղբայր*, *Հայր*, *Հաւրոյ*, *Թոռնիկ*, *Որդի*, *Տղայ*, *Պապ/Պապին* և այլն:

Գ) Մարմնամասերի անվանումներից ծագած անձնանուններ՝ *Թաքիկ*, *Թաթուկ*, *Չեռէս*, *Աչիկ*, *Հրաչյա* և այլն:

¹³¹ Տե՛ս Յ. Կարապետյան, նշվ. աշխ., էջ 273-277:

Գ) Բնության մարմինների և երևույթների անուններից ծագած անձնանուններ, բոլորը հեթանոսական շրջանից ավանդված՝ *Արև/Արևիկ, Արեգ/Արեգնագ, Արփի/Արփենի, Ամպ/Ամպակ, Շող/Շողիկ/Շողեր, Շաղ/Շաղիկ, Ասյղ/Ասյղիկ, Լոյս/Լուսիկ* և այլն:

Ե) Վերացական անուններից ծագած անձնանուններ՝ *Արբուն, Գալուսյ/Գալիկ, Գիւր, Յարութիւն, Հոյս/Հուսիկ, Քաջ/Քաջիկ, Քաղոց, Մանուկ* և այլն:

Չ) Այլ բառերից ծագած անուններ՝ *Գինդ, Երանեակ, Սլաք, Չուիկ, Տէր/Տիր/Տիրուկ, Այր/Այրուկ/Առնակ* և այլն:

Նման անձնանունների թիվը զգալի է եղել հեթանոսության շրջանում, իսկ քրիստոնեության տարածման և ամրակայման հետ մետեղ դրանք դուրս են եկել կիրառությունից՝ փոխարինվելով քրիստոնեական անուններով, որոնց էական մասն աստվածաշնչյան ծագում ունեն, այսինքն՝ եբրայական են, բայց հայերենին անցել են հունական և ասորական տառադարձմամբ և տարբերակներով, որովհետև Աստվածաշունչը թարգմանվել է այս երկու լեզուներից:

Բնիկ հայերեն արմատներով անձնանուններն ըստ կազմության բաժանվում են 4 խմբի՝ ա) պարզ, բ) ածանցավոր, գ) խոնարհման ձև ունեցող և դ) բարդ:

Ի տարբերություն իրանական և հունական անձնանունների՝ բնիկ հայկական անձնանունները մեծ մասամբ պարզ են կամ ածանցավոր: Ածանցներից առավել գործածական են *-ակ, -իկ, -ուկ, -ոց* ածանցներով անձնանունները, որոնք մեծ մասամբ կազմված են հասարակ անունները: Հոլովաձևերից հաճախ անձնանուն են դառնում եզակի կամ հոգնակի սեռական հոլովի կառույցները՝ *Անգեղ, Առն, Տեառն, Հարոյ, Պապին, Տիրոց, Ափոց, Բարոց, Ականց, Տիրանց*, բայական ձևերից հանդիպում են ինչպես խոնարհման, այնպես էլ դերբայական վերջավորություններով կազմված անուններ՝ *Գլոսյ, Յուսամ, Երանեայ, Խնդրուած, Տուած* և այլն: Բարդությունների մեջ գերազանցապես հանդիպում է *այր* բաղադրիչը՝ *Ջարմայր, Նորայր, Հրայր, Ուռնայր, Կորայր, Տիրայր*: Հազվադեպ հանդիպում են *յուր* և *որդի* բաղադրիչներով

կազմությունները՝ *Խաչատուր, Տեառնյուր, Աստվածատուր, Ազնորդի, Սկայորդի*:

Զգալի թիվ են կազմում խառն կամ հիբրիդ անձնանունները բնիկ հայերեն և փոխառյալ կամ անհայտ ծագման բաղադրյալներով՝ լինի արմատ, թե ածանց՝ *Գինեվարդ, Խաչեվարդ, Մայրապետ, Հայխաթուն, Մեծպարուն, Նորվարդ, Վարդիթեր, Շողմեխք, Շաղոսկի, Վեհանուշ, Երանուհի, Զարմանուհի, Սրբուհի, Մաքրուհի* և այլն¹³²:

ԻՐԱՆԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գ. Զահուկյանը պնդում է, որ իրանագետների կողմից տարբերակ-վող իրանական լեզուների հին, միջին և նոր շրջանները չեն համընկնում հայերենի զարգացման համապատասխան շրջանների հետ: Դա պայ-մանավորված է այս լեզուների զարգացման առանձնահատկությունների և շրջանաբաժանման տարբեր սկզբունքների հետ: Իրանական հիմք լեզ-վի անկախ գոյությունը տարածամանակավորման և լեզվաժամանակագ-րության մեթոդների կիրառմամբ հաշվարկվում է Ք.ա. մոտավորապես 2-րդ հազարամյակից, երբ հնդիրանական միասնությունը սկսեց տրոհվել, իսկ հայոց լեզվի ինքնուրույն գոյությունը ուրվագծվում է 3-րդ հազարա-մյակում, այսինքն՝ մեր լեզվական փոխազդեցությունների պատմությունը վաղնջական է, բայց իրանական լեզվի և նրա բազմաթիվ բարբառների ազդեցությունը հայերենի վրա այս հազարամյակների ընթացքում չափա-զանց տարբեր է եղել, վաղնջական և հնագույն իրանական փոխառու-թյունները արդի լեզվաբանական մեթոդներով վերականգնվում են ավելի շատ որպես փոխներթափանցում, իսկ բուն փոխառությունների շրջանը սկսվում է հայ-պահլավական հարաբերությունների դարաշրջանից, որից հետո իրաներենի ազդեցությունը հայերենի վրա էապես նվազում է:

Նշենք, որ հին շրջանի իրանական բարբառներից հայերենը շփված պետք է լիներ կիմերերենի, սկյութերենի, մարերենի և հին պարսկերենի

¹³² Տե՛ս Գ. Զահուկյան, Բնիկ հայերեն արմատներով կազմված հայկական անձնանուն-ները, «Պարմա-բանասիրական հանդես», հ. 4, 1984, էջ 32-43:

հետ¹³³: Իրանական գրավոր հուշարձանները ստեղծվել են հայերենի գրավոր հուշարձաններից ավելի քան 1 հազարամյակ առաջ: Հին պարսկերեն տեքստերը թվագրվում են Ք.ա. 6-4-րդ դարերից: Հին պարսկերեն ասելով՝ նկատի ունենք Ք.ա. 560-330 թվականների ժամանակահատվածում ավանդված լեզուն: Միջին պարսկերենը, որ առավել հայտնի է պահլավերեն անվամբ, ունի 2 ենթաշրջան՝ արշակունյաց կամ հին պահլավերեն և սասանյան կամ նոր պահլավերեն, պահլավական ժամանակաշրջանն ընդգրկում է Ք. ա. 256-ից մինչև Ք. հ. 642 թվականը:

Նոր պարսկերենի ժամանակաշրջանը սկսվում է 10-րդ դարից և մասնակի փոփոխություններով ձգվում է մինչև այժմ: Այսօր Իրանի լեզուն նոր պարսկերենն է՝ զանազան բարբառներով:

Հայ-իրանական լեզվական սերտ առնչությունների մասին կարելի է խոսել Մեդական պետության դեմ Կյուրոսի տարած հաղթանակից հետո, երբ Պարսկաստանը դարձավ Առաջավոր Ասիայի ամենահզոր տերությունը՝ իր տիրապետության տակ առնելով Հայաստանը: Դարեհ Առաջինի օրոք Հայկական լեռնաշխարհում ստեղծվել են 13-րդ և 18-րդ սատրապությունները, որոնք ընդգրկում էին Հայաստանի տարածքը: Աքեմենյան թագավորները թողել են բազմաթիվ սեպագիր արձանագրություններ: Այս շրջանում պարսկերենի ազդեցությունը հայերենի վրա անշուշտ եղել է, բայց ոչ այնքան համակարգային և համատարած, ինչպես միջին պարսկերենի ժամանակահատվածում: Այդ ազդեցությունը ոչ թե էթնիկական մերձավոր շփումների և փոխներթափանցումների արդյունք էր, այլ՝ պետական գերիշխանության:

Պատմությունը վկայում է, որ հայերն իրանական ցեղերի հետ հարևանությամբ ապրել են 1600 տարուց ավելի, որից շուրջ 900 տարի հայերը կամ անմիջաբար հպատակվում էին պարսիկ թագավորներին, կամ նրանց ենթակա վասալական իշխանություն ունեին: Մնացյալ 700 տարին, Հ. Աճառյանի բնութագրմամբ, հայերը շարունակել են սերտ շփման մեջ գտնվել Պարսկաստանի հետ: Հայաստանում երկար ժամանակ իշխել են իրանական ծագման արքաներ: Հատկապես զգալի էր

¹³³ Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 488-508:

պարթևական ազդեցությունը: Հայոց իշխանությունների գրագրությունը պարսկերեն էր, հագուստն ու ապրելակերպը, վարչական աստիճանակարգությունը, կրոնը, գրեթե ամեն ինչ պարսկաոճ էր: Մեր կյանքը մի մեծ ժամանակահատված գտնվել է պարսկական մշակույթի հզոր ազդեցության ներքո, այդ աշխարհընկալմամբ են ձևավորվել հասարակական-պետական, անգամ ներընտանեկան հարաբերությունները: Ուստի օրինաչափ էր հայերենի կողմից պարսկերենից մեծաթիվ բառ-հասկացությունների, ոճերի ու դարձվածների փոխառությունը: Իր «Հայոց լեզվի պատմության» առաջին մասում Հ. Աճառյանը բերում է լատինատառ պարսկերեն և հայերեն շարադրված լեզվական մոտիվներ, որոնք բառապաշարի առումով բազմաթիվ համընկնումներ ունեն և բավարար չափով հասկանալի են պարսկերեն չուսումնասիրած հայախոսին¹³⁴: Հայերենի և պարսկերենի այս վճռորոշ մամուրությունն էլ պատճառ է եղել, որ շատ հետազոտողներ սկզբնապես կարծել են, թե հայերենը իրանական բարբառ է: Գերմանացի հայագետ Հայնրիխ Հյուբշմանը առաջինն էր, որ 1875 թվականին իր «Հայերենի դիրքը հնդեվրոպական լեզուների շրջանակներում» աշխատության մեջ ապացուցեց, որ հայերենը հնդիրանական լեզվաճյուղին պատկանող բարբառ չէ, այլ նրանից անկախ, առանձին ճյուղ է հնդեվրոպական լեզվաընտանիքում:

Հայերենի և իրանական բարաբառների ընդհանուր բառերը ընդունված է բաժանել 4 խմբի.

- 1) հնդեվրոպական նախալեզվից ժառանգված ընդհանուր բառեր, ինչպես՝ *մայր, փասն* և այլն,
- 2) պարսկերենից հայերենի փոխառյալ բառերը՝ *ազադ, սպարապետ, հրապարակ* և այլն,
- 3) մի երրորդ աղբյուրից հայերենի և պարսկերենի փոխառյալ բառեր՝ *անպարար*. այս բառը արաբերենից վերցրել են թե՛ հայերենը, թե՛ արաբերենը,
- 4) հայերենից պարսկերենի փոխառյալ բառեր, ինչպես՝ *բարեկենդան, աղյուս*, երկուսն էլ գործածական են պարսկերենում:

¹³⁴ Հմմտ. Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս 1, Եր., 2013, էջ 219-220:

Յուրաքանչյուր դեպքում պետք է ճշտել, թե իրանա-հայկական ընդհանուր բառերը հիշյալ խմբերից որին են պատկանում: Ընդ որում, պետք է շեշտել, որ հայերենը փոխառություններ կատարել է պարսկերենից իր զարգացման գրեթե բոլոր շրջաններում՝ հնագույն հայերեն, գրաբար, միջին հայերեն, բացի այդ՝ մենք փոխառություններ ենք կատարել իրանական տարբեր լեզուներից. այդ փոխառությունները առանձնանում են միմյանցից իրենց հնչյունական, ձևաբանական, անգամ բառակազմական հատկանիշներով: Գ. Ջահուկյանը «Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան» աշխատության մեջ փորձում է առանձին վերլուծել հին իրանական տարբեր ժողովուրդների հետ հայերի ունեցած լեզվական առնչությունները՝ սկսելով հայ-կիմերական հնարավոր լեզվական փոխազդեցություններից: Կիմեր ցեղանունը նա կապում է ոչ միայն Կապադովկիայի հայկական Գամիրք անվան հետ, այլև *Կումայրի* > *Գյումրի* բնականվան հետ, իբրև բաղարկման արդյունք՝ *Կիւ* > *Կում*¹³⁵: Հայ-սկյութական առնչությունների կապակցությամբ շեղադրվում է Գ. Ղափանցյանի և Բ. Պիատովսկու կողմից առաջ քաշված վարկածը, ըստ որի՝ սկյութական թագավոր Պարտատուան (Պրոտոթյես) և Խորենացու հիշատակությամբ Նինվեի կործանմանը մասնակցած Պարույրը նույն անձն են՝ *Պարույր* > *Պարպարուա*, ընդ որում, նշվում է, որ Պարույրը Սկայորդու հաջորդն էր, իսկ սկյութները սակյան ցեղեր են՝ *սկայ-սակ* կապը հայագետը հնարավոր է համարում՝ համաձայնելով Գ. Ղափանցյանի և սակա՝ Հ. Կարագյոզյանի վարկածներին¹³⁶: Հայ սկյութական բառային գուգադիպումներից Ջահուկյանը առանձնացնում է՝ *դարբին*, *արդար*, *էթն* արմատները: Սակայն հայ-սկյութական, առավել ևս՝ հայ-կիմերական բառային գուգադիպումները չափազանց սակավ են, բոլորը ենթադրելի, ուստի դժվար է խոսել հայերենի և իրանական այդ լեզուների ուղղակի փոխազդեցությունների վերաբերյալ: Նույնը վերաբերում է հայ-մեդական և հին պարսկական լեզվական առնչություններին: Ուսումնասիրողները հիմնականում ուշադրությունը բևեռում են հայերենի և միջին իրանական լեզուների բա-

¹³⁵ Հմմտ. Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 494-499:

¹³⁶ Նույն տեղում, էջ 502-505:

ռային ընդհանրությունների վրա: Ինչպես վերը նշեցինք, պարսկերենն ունի հետևյալ շրջանաբաժանումը. 1) հին պարսկերեն, որը մեզ ավանդվել է Պերսեպոլիսի և մի քանի այլ բևեռագիր արձանագրություններով, որոնք գրված են Ք.ա. 560-530 թվականներին: 2) Պահլավերեն կամ միջին պարսկերեն՝ երկու ենթաշրջաններով. ա) արշակունյաց պահլավերեն, որը կոչվում է հին կամ պարթևական պահլավերեն, որ գործածվել է Ք.ա. 256-226 թվականներին, և բ) սասանյան պահլավերեն, որ կոչվում է նոր պահլավերեն և գործածական է եղել 226-642 թվականներին: Պահլավերենն ավանդված է մի քանի արձանագրություններով, մագդեական կրոնական և մանիքեական գրվածքներով: 3) Նոր պարսկերեն, որի հնագույն աղբյուրն է Ֆիրդուսիի Շահնամեն՝ 10-րդ դար, այս լեզուն որոշ փոփոխություններով հանդերձ այսօր էլ խոսակցական լեզու է Պարսկաստանում՝ բարբառային մեծ տարբերակվածությամբ¹³⁷:

Հայերենի իրանական փոխառություններն ամբողջացվել են դեռ Հյուբշմանի, ապա՝ նրա աշակերտ Հ. Աճառյանի կողմից: Գ. Ջահուկյանը արդյի գիտության տվյալների հիման վրա փորձում է ճշգրտել այդ փոխառությունների ցանկը՝ մատնանշելով այն հակասությունները, որոնք կային, դրանք հատկապես վերաբերում են այն բառերին, որոնց իրանյան ծագումը կասկած չի հարուցում՝ ելնելով նրանց հնչյունական և բառակազմական առանձնահատկություններից, բայց դրանց համապատասխան ձևերը իրանական աղբյուրներում չեն հայտնաբերված, առաջարկված վերականգնումներն էլ արժանահավատ չեն, ինչպես օրինակ՝ *արվարշան*, *աւազակ*, *աւժանդակ*, *գերեզման*, *խորան*, *կարապ*, *կարն*, *կիրն*, *ճառ*, *ճշմարիտ*, *մագ*, *յաւշուրեյ*, *նշաւակ*, *պանդուխտ*, *պարանի*, *պարճառ*, *պարում*, *պարույր*, *վառել*, *վախճան*, *վեր-ք* և այլն:

Կուտակված փաստական հարուստ նյութը թույլ է տալիս տարբերակել միջին իրանական լեզուներից հայերենին անցած բառերը: Նշենք, որ միջին իրանական լեզուները բաժանվում են երկու մեծ խմբի՝ հյուսիսարևմտյան և հարավարևմտյան: Ինչպես նշում է Լ. Հովհաննիս-

¹³⁷ Հմմտ. Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս I, էջ 227:

յանը, հայագետների համար հատկապես կարևոր է հյուսիսարևմտյան խմբին պատկանող պարթևներենից և հարավարևմտյան խմբին հարող միջին պարսկերենից կատարված փոխառությունների տարբերակումը, բանգի դրանք են հայերենի փոխառության հիմնական աղբյուրները¹³⁸:

Բերենք Հ. Աճառյանի կողմից ժամանակագրորեն տարբերակված բառաշարքերը, որտեղ առաջին միավորներն առավել հին շրջանից են՝ արշակունյաց պահլավերենից, իսկ երկրորդները՝ սասանյան, ավելի ուշ՝ *Արամազդ - Որմիզդ, պաշտպան - փուշտիպան, պարթև - պահլավ, Վահագն - Վահրամ, Վրկէն - Գուրգէն* և այլն¹³⁹:

Հ. Աճառյանն իր «Հայոց լեզվի պատմություն» մեջ իրանական փոխառյալ բառերի թիվը հասցնում է 1405-ի, որից 960-ը փոխառված պահլավերենից, իսկ 445-ը փոխառված 12-րդ դարից՝ նոր պարսկերենից:

Իսկ Գ. Ջահուկյանը «Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան» աշխատության մեջ իրենց նախաձևերով բերում է 712, իսկ ամանցային ձևերի հետ 839 իրանական փոխառություն: Բայց անմիջապես էլ նշում է, որ դրանց թիվը շատ ավելի մեծ է, պարզապես դրանց նախաձևերը, ինչպես նշեցինք, չեն պահպանվել:

Ինչ վերաբերում է փոխառությունների ժամանակագրական դասակարգմանը, ապա այդ խնդիրը բավական բարդ է. 5-րդ դարում ավանդված բառերը ժամանակագրական առումով միատարր չեն: Դրանց մեջ կան, ինչպես դրանից առաջ կատարված իրանական փոխառություններ, այնպես էլ հենց այդ ժամանակաշրջանում սասանյան պարսկերենից կատարված փոխառություններ: Փոխառությունների ժամանակագրական դասակարգումը նեղ լեզվաբանական խնդիր է, որը հայոց լեզվի պատմության ուսումնական դասընթացի ծրագրից դուրս է: Ա. Մեյեն, Հ. Աճառյանը փորձել են մման տարբերակումներ կատարել, այնուհետև Գ. Ջահուկյանը, հիմնվելով վրաց լեզվաբան Մ. Անդրոնիկաշվիլու առանձին ուսումնասիրության վրա («Իրանա-վրացական լեզվական փոխհարաբերությունների ակնարկներ»), այդպիսի տարանջատման փորձ է կատարում՝ իբրև չափորոշիչ ընդունելով, ինչպես իրանական լե-

¹³⁸ Տե՛ս Լ. Հովհաննիսյան, Հայերենի իրանական փոխառությունները, էջ 68-69:

¹³⁹ Տե՛ս Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 229-230:

գումների, այնպես էլ հայկական փաստերը՝ նշելով, իհարկե, որ դա բացարձակ արդյունք տալ չի կարող, որովհետև լեզվի մեջ ուժեղ է համաբանության, համահարթման, ժողովրդական ստուգաբանության ու վերաիմաստավորման հնարավորությունը¹⁴⁰:

Այժմ ներկայացնենք հայերենի կատարած իրանական փոխառություններն ըստ իմաստային խմբերի՝ առանց նշելու նրանց պարսկական վերականգնված նախաձևերը և փոխառության հնարավոր ժամանակաշրջանը:

Ա. Ֆիզիկական աշխարհ

Աշխարհ, դաշտ, մարգ, աւազան, վտակ, ժայռ, վեմ, զմրուխտ, արուսեակ, ախտար-ք (աստղ), մահիկ...

Բ. Մարդկություն, սեռ, տարիք, ընտանեկան հարաբերություններ

Դայեակ, զաւակ, ազն (ցեղ, սերունդ), տոհմ, նահապետ, հարագատ, երիտասարդ, պառաւ...

Գ. Կենդանիներ

Մատակ (էգ կենդանի), ախոռ, ասպաստան, գոմէշ, նոխազ, յաւանակ, կուզ (կատու), վարագ, վիշապ, յովագ, վագր, սամոյր, կապիկ, փիղ, բագէ, սարեակ, սիրամարգ, տատրակ, ճուռակ...

Դ. Մարմնի մասեր, մարմնական գործառնություններ, պայմաններ

Անդամ, ճարպ, դէմ-ք, դիմակ, ճակատ, երախ, գես, վարս, երակ, բագուկ, դաստակ, սմբակ, դմակ, ճանկ, մահ, ախտ, բոյժ (դեղ)-բուժել-բժիշկ, դարման, նշտիր/նշտար (վիրաբուժական դանակ), աշխատել, կոյր, ոյժ...

¹⁴⁰ Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 552-556:

Ե. Ուտելիք և ըմպելիք, կերակրի պատրաստում, ամանեղեն

(Ըմ)բոշխն-ել, պաշար, նպար, նկանակ, թոշակ, խորտիկ, ճաշ, պանիր, կարագ, հրուշակ, ապուխտ, աւշարակ, վարունգ, սով, սոխ, միրգ, թութ, արմաւ, կուժ, դոյլ, ապակի, շիշ, սրուակ, բաժակ...

Զ. Հագուստ, անձնական զարդարանք, խնամք

Հանդերձ, պատմունճան, դերձակ, դիպակ, կերպաս, դրաւշակ, նարատ, պարեգօտ, շապիկ, կօշիկ, մոյկ, մունճակ, թագ, խոյր, պսակ, ապարանջան....

Է. Բնակարան, տուն, կահկարասի

Բնակ-իլ, ապարան, դաստակերտ, տաճար, վրան, տաղավար, գմբէթ, դահլիճ, դիւան, շատրուան, սպաս, սրահ, պատշգամբ, պատուհան, պարիսպ, կահ, սպաս, դարան, պաստառ, գահ, թախտ, վարագոյր...

Ը. Երկրագործություն, բուսական աշխարհ

Մշակ, դրախտ, պարտէզ, ամբար, վարել, ման, բահ, բրինձ, բագուկ, աւշինդր, համասպրամ, հիրիկ, հօրոտ, մանուշակ, յասմիկ, մարգէս, վարդ, նոճ, պատուաստ...

Թ. Ֆիզիկական տարբեր գործողություններ, արվեստ և արհեստ

Արուեստ, քարշել, վանել, խորտակել, տաշել, տախտակ, ժանգ, պողովատ, արոյր, պղինձ, քանդ, քանդակ, նկար, պատկեր, կարել, կերտել, ճարտար...

Ժ. Շարժում, տեղափոխություն, մավագնացություն

Վագել, ճախրել, արկանել, ճեմել, ճանապարհ, նաւագ, մակոյկ, կարաւան, ճախարակ...

ԺԱ. Ունեցվածք, առևտուր

Նուէր, ընծայ, վնաս, աւերել, քանդել, գերդաստան, դրամ, քսակ, գանձ, կտակ, հանգանակ, պարտ-ք, գրաւ, գրաւ-ական, վաշխ, հարկ, օգոտ, օգտակար, մորիակ, վարձել, վարձ, վճար, վաճառ-ական, վաճառապետ, կրպակ, արժան...

ԺԲ. Տարածական հարաբերություններ՝ տեղ, ձև, չափ

Ասպարէզ, հրապարակ, բազմել, բաժանել, կոյս (կողմ), ահեակ, տակ, վտարել, գունդ, հաւասար, նիշ, նշան, նշանակ, բարակ, նկուն...

ԺԳ. Քանակ, թիվ

Համար, համակ, բազում, շատ, յաւէտ, պակաս, նուազ, բաւական, գումար, ամբոխ, գումարտակ, երամ, խումբ, կոյտ, առատ, հազար, բեր....

ԺԴ. Ժամանակ

Ժամ, ժամանակ, անգամ, ուշ, արագ, շտապ, ճեպ, հանապազ, միշտ, յաւէտ, յաւերժ, տակաւ, հակիրճ, նախ, նաւասարդ, տրէ, մեհեկան, ահեկան, մարերի, մարգաց, հրոտից, երիտասարդ, պառաւ¹⁴¹...

ԺԵ. Զգայական ընկալումներ

Բոյր-բուրել, խունկ, կնդրուկ, նշմարել, դիտել, երանգ, դժգոյն, խաւար, ճերմակ, սպիտակ, սեաւ, կարմիր, աշխէտ (կարմիր, հրագոյն), կապոյտ, տապ, տօթ, երաշտ...

ԺԶ. Զգացմունք, բարոյական և գեղագիտական ըմբռնումներ

Բախտ, վիճակ, թշուառ, պատուհաս, ուրախ, համբոյր, ախորժ, պատիւ, վեհ, նուաստ, նկուն, փառք, բարգաւաճ, վէս, ամբարտաւան, վստահ, վտանգ, կամ-ք, կամիլ, ապաւէն, երախտ, վատ, վատթար, դաժան, դժխեն, ժանտ, խուժան, գով-ք, դրուատ...

¹⁴¹ Նշենք, որ հայոց հնագույն տոմարի որոշ ամսանունների համար կան նոր ստուգաբանություններ՝ հօգուտ նրանց հնդեվրոպական ծագման, ինչպես օրնակ՝ *Տրէ*-ն, *Մարգաց*-ը: Տե՛ս **Լ. Հովհաննիսյան**, նշվ. աշխ., էջ 228-231:

ԺԷ. Մտածողություն, միտք

Հանճար, ապ-ուշ, խրատ, հրահանգ, կիրք, վարժ, մարզել, աշակերտ, դաստիարակ, վարդապետ, յիշել, վաեր, հաւաստ-ել, նպատակ...

ԺԸ. Չայնական արտահայտություն, խոսք, ընթերցանություն և գիր

Թմբուկ, նուագ, տալիդ, վին, պատասխանի, պահանջ, խոստումն, ուխտ, մերժել, հրաւեր, զանգակ, ագո, համբաւ, պատգամ, հրեշտակ, դպիր, նամակ, պատճէն, մատեան...

ԺԹ. Հասարակական և քաղաքական հարաբերություններ

Մարգ, նահանգ, քաղաք, շէն, սահման, ռամիկ, իշխել, թագաւոր, կարապետ (առաջնորդ, ուղեցոյց), գահ, բամբիշն (թագուհի), իշխան, ասպետ, բղեշխ, դեհկան, դեսպան, հազարապետ, տակառապետ, մարգպան, նախարար, ոստիկան, սեպուհ, պարէտ, պետ, հպատակ, ազատ, հրաման, հրովարտակ, պատուէր, պատուիրան, պատուիրակ, թշնամի, ապստամբ, դաւ, դաւաճան, ստահակ, օտար, նժդեհ (պանդուխտ)...

Ի. Ռազմական գործ

Պայքար, վէճ, պատերազմ, ռազմ, դաշն, զօր-ք, ճամբար, գունդ, սպայ, վաշտ, դրօշ, զինուոր, հրամանատար, սպարապետ, զէն-ք, աշտեայ, նիզակ, տէգ, զրահ, ասպազէն, սաղաւարտ, ասպար, վահան, պարտել (հաղթել), պարտիլ (հաղթվել), արշաւել, նախճիր, ասպատակ, նահանջ, աւար, դարան, պաշտպան...

ԻԱ. Օրենք

Աւրենք, դատ, դատաստան, դատաւոր, դատախագ, վկայ, վճիռ, տոյժ, տուգաք, դահիճ, բանտ, ապահարգան...

ԻԲ. Կրոն, նախապաշարմունք

Դեն (կրոն, հավատ), մագդեզն (գրադաշտական կրոն), մեհեան, ատրուշան, պաշտել, մոգ, մոգպետ, բուրբառ, օրհնել, նգովել, դժոխ-ք, սանդարամետ, հրաշ-ք, հրէշ, դեւ...

ԻԳ. Դերանուններ և մասնիկներ, ածանցներ

*Դէմ, հանդերձ, յանդիման, վասն (մասին, համար), կամ, -ակ- ար-
չակ, դերձակ, դիպակ, վանդակ, վիճակ, տախտակ, -անակ - ընդանակ,
յաղթանակ, ցուցանակ, -աւոր - դատաւոր, զանձաւոր, սպասաւոր, զին -
լալագին, տախագին, -պէտ - վաճառապէտ, տակառապէտ, -ստան - դա-
տաստան, շահաստան, -արար - մատակարար, հուշարար, նախարար,
-զան - սրբազան, հրաշագան, ալլագան, -պէս - մեծապէս, առողջապէս,
ներքնապէս, -օրէն - արիօրէն, սրբօրէն, նուաստօրէն...*

Հայերենում իրանական փոխառությունների խմաստային խմբերը վերլուծելով՝ Գ. Ջահուկյանն առանձնացնում է մի շարք կարևոր բնութագծեր, որոնց հավելենք մաս Լ. Հովհաննիսյանի դիտարկումները:

ա) Իրանական փոխառությունները մնացած բոլոր փոխառյալ բառերի համեմատությամբ միակն են, որ ընդգրկում են խմաստային-թեմատիկ բոլոր խմբերը: Այս առումով նրանք համադրելի են միայն բնիկ հնդեվրոպական բառերի հետ: Ընդ որում, հնչյունական առանձնահատկությունների հիման վրա Գ. Ջահուկյանը եզրակացնում է, որ հայերը շփվել են հիմնականում հյուսիսարևմտյան իրանական բարբառների կրողների հետ¹⁴²:

բ) Իրանական փոխառություններն իրենց քանակով, գործածությամբ և բառակազմական արժեքով զիջում են հնդեվրոպական բառերին այն խմբերում, որոնք վերաբերում են հիմնական բառաֆոնդին, որը յուրաքանչյուր առանձին լեզվի միջուկն է: Մասնավորապես պետք է առանձնացնել մարդկային սեռերին, ընտանիքին, մարմնամասերին ու ֆիզիկական աշխարհին, շարժման և գործողության սովորական ձևերին վերաբերող խմաստային խմբերը, որտեղ իրանական փոխառությունները սակավաթիվ են, նույնը վերաբերում է դերանունների, թվականների խմաստային ենթադասերին:

գ) Իրանական փոխառությունները մեծաքանակ են և անգամ գերազանցում են հնդեվրոպական բառերին հետևյալ դաշտերում՝ արևա-

¹⁴² Հմմտ. Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 558:

դարձային գոտու կենդանիներ, մշակաբույսեր, կերակուրներ և ամաններեն, արդուզարդ, գունային նշանակումներ, ամսանուններ, առևտրային, պետական-քաղաքական, վարչական, իրավական եզրույթներ: Հատկապես մեծաթիվ են պարսկական տիրապետության ուղղակի արդյունք տիտղոսների, պաշտոնների, աստիճանների անվանումները: Սովոր են հայ հեթանոսական կրոնի հետ կապված բառերը, բայց կան նաև քրիստոնեական հավատի դաշտ անցած բառեր՝ *դրախտ, դժոխք, հրեշտակ, հրեշ* և այլն: Կա երկու մեծ թիվ նշանակող թվական՝ *հազար* և *քիւր* (տասն հազար):

դ) Հաճախ միևնույն խմբերի կամ ենթախմբերի մեջ ընդգրկված բնիկ և իրանական ծագման բառերի միջև առկա են ընդհանուրի և առանձինի հարաբերություններ: Բնութագրական է, որ իրանական փոխառություններում չկան ընդհանուր անվանումներ, բայց շատ են տեսակների նշանակումները: Օրինակ՝ չկա *ամանի* ընդհանուր բառ-նշանակումը, բայց կան բազմապիսի ամանների տեսակային անվանումներ՝ *դոյլ, կուժ, շիշ, սրուակ, բաժակ, տաշտ* և այլն: Չկան հացի և թխվածքի ընդհանուր անվանումներ, բայց կան հացատեսակների փոխառյալ նշանակումներ՝ *նկան, նկանակ, նշխար, կտրապ*: Նույնը ծաղկի պարագայում ընդհանուր անվանումը իրանական չէ, սակայն հիմնական ծաղկատեսակների բառանունները իրանական են՝ *վարդ, մանուշակ, յասմին, նարգիզ* և այլն:

ե) Իրանական բառերի հայկականացման ընթացքում հաճախ տեղի են ունենում իմաստային տեղաշարժեր՝ իմաստի նեղացմամբ կամ մասնակիացմամբ: Երբեմն իրանական արմատները, կորցնելով բառային ինքնուրույնությունը, վերածվել են ածանցների, ինչպես՝ *-օրէն, -պէս, -շէն, -պար, -պէր* և այլն: Հաճախադեպ են նաև իրանական բառերի խոսքիմասային փոխանցումները՝ գոյական - ածական, ածական - գոյական, հայերենում այդ բառերի իմաստային տեղաշարժերը հանգեցնում են իրանական բառերի նոր՝ միայն հայերենում առկա իմաստների առաջացման: Իրանական փոխառությունների մեջ մեծ թիվ են կազմում գոյականները և բայերը, ունենք երկու թվական՝ *հազար* և *քիւր*, մի քանի մակբայ՝ *կամա, ակամայ*:

զ) Լ. Հովհաննիսյանը «Իրանական փոխառությունները հայերենում» աշխատության մեջ առանձնացնում և բնութագրում է այն հնարավոր բառապատճենումները, որ հայերենը կարող էր կատարել իրաներենից՝ օգտվելով հայ լեզվաբանության մեջ առկա երեք հիմնական չափորոշիչներից՝ կառուցվածքի կրկնօրինակում, իմաստի վերաբառադրում և օտար միավորի ազդեցությամբ ստեղծված լինելու որոշակիություն: Հայերենի բառապաշարի վրա իրանական լեզուների ունեցած մեծ ազդեցությունը պատճառ է դարձել ոչ միայն առանձին բառերի փոխառության, այլև իրանական բարդ բառերի, կապակցությունների, ոճերի պատճենման՝ հայկական արմատների ու բառաձևերի միջոցով: Լ. Հովհաննիսյանը բերում է միջին պարսկերենից ու պարթևերենից կատարված տարբեր պատճենումների օրինակներ, որոնց անդրադարձել են այնպիսի ճանաչված հնդեվրոպաբան-համեմատաբաններ, ինչպիսիք են՝ Ա. Մեյեն, Է. Բենվենիստը, Ջ. Բոլոնիեզին և այլք՝ *լրանլրիկին, լրանլրէր, կէսօր, մահարժան, ռազմարենչ, բիրակն, ասլուծորդի, առիւծածին, նորածին, շնորհակալ, գործակալ, չերքակալ, արեւելք, արեւմուրք, ազալալոհիւ, աշխարհակալ, կուսակալ, դռնապան, սանձահարել, արքայից արքա, րիկնանց րիկին, յալիլեանս յալիլենից...* Բայական հարադրությունների կազմության ընթացքում ևս հայերենը պատճենումներ է կատարել իրաներենից, օրինակ՝ *հուր արկանել, փող հարկանել, բանակ հարկանել, խորան հարկանել, ազալ առնել, հռչակ առնել, աղաղակ առնել* և այլն¹⁴³:

Միջին հայերենը ևս բավական փոխառություններ է կատարել պարսկերենից, բայց դրանց մեծ մասն այսօր գործածական չէ գրական հայերենում: Այդ փոխառությունների մանրամասն դասակարգում կատարել է Ռ. Ղազարյանը¹⁴⁴: Բերենք միջինհայերենյան պարսկական փոխառությունների որոշ օրինակներ, որոնք այս կամ այն հաճախակա-նությամբ գործածական և հասկանալի են արդի հայերենում՝ *ասլուռ, բարուն, բեկ, բրինձ, գազար, գալ, գիժ, բուրդ, դարդ, դիո, երիշուա, բարխուն, թութակ, լաթ, լախուր, լաչակ, լղար, խաշխաշ, խոջա, խուրմա,*

¹⁴³ Հմմտ. Լ. Հովհաննիսյան, Իրանական փոխառությունները հայերենում, էջ 175-179:

¹⁴⁴ Տե՛ս Ռ. Ղազարյան, Միջին գրական հայերենի բառապաշարը, Եր., 2001, էջ 114-130:

հիւ, մարիս, մզկիթ, նամագ, նարգիզ, շադգամ, չարչի, ջան, ջուլիակ, սինի, սպանախ, փարչ, փլավ, քաթան, քաչալ, քիչ և այլն:

ԻՐԱՆԱԿԱՆ ՓՈԽԱՌՅԱԼ ԴԻՅԱՆՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

Հայկական հեթանոսական դիցարանում մեծ դեր են ունեցել իրանական փոխառյալ աստվածությունները՝ սկսած Բարձրագույն աստվածությունից՝ Արամազդից մինչև նրան ենթակա այլ աստվածներն ու ոգիները: Նրանց անունները հին շրջանի փոխառություններ են: Ստորև ներկայացնենք այդ դիցանունները՝ իրենց թարգմանական իմաստներով:

Արամազդ- Որմիզդ-Որմզդատ - տեր իմաստնագույն

Անահիտ - ամենամաքուր, անարատ

Միհր - բարեկամություն, դաշինք, այս դիցանունից են ծագել *Միհրան, Միհրդատ, Միհրշապուհ* անձնանունները:

Տիր - փայլածու մոլորակ, արեգակնային տոմարի 4-րդ ամիս, ամսվա 13-րդ օրը: Այս հիմքից են ենթադրվում *Տիրան, Տիրիթ* անձնանունները:

Սպանդարամետ - սրբամիտ, սրբանվեր

Վահագն - հաղթական, հարձակուճը խափանող: Այս ծագումը վերագրվում է նաև *Վահրամ, Վռամ* անձնանուններին:

Անձնանուններ

Իրանական ծագման անձնանունները գերազանցապես արական անուններ են, իգականները համեմատաբար սակավաթիվ են: Բառակազմական տեսանկյունից բավական տարածված են անձնանվանակերտ իրանական վերջածանցներով կազմությունները: Գ. Ջահուկյանն առանձնացնում է այդ ածանցները՝ *-ակ, -էն, -ան, -անոյշ, -դուխտ, -ուհի* և այլն:

Հ. Աճառյանն իր «Հայոց լեզվի պատմության» առաջին հատորում 121 իրանական ծագման անձնանունների ցանկ է բերում, որոնց մի մասն այսօր գործածական չէ՝ *Բայր, Գոյորորոզ, Դայրաբէն, Գորի-դուխար, Երազմակ, Չափրանիկ, Մամակ, Մերչապուհ, Քաւթար...*, սակայն մեծամասնությունը կենսունակ անուններ են, ընդ որում, շեշտված ազգային գունավորմամբ. դրանք հայոց պատմության, մեր անցյալի նշանավոր դեմքերի, հերոսների անուններն են, որոնք բնիկ հայկական են ընկալվում: Ինչպես արձանագրում է Հ. Աճառյանը, պարսիկները, ընդունելով մահմեդականությունը, հրաժարվեցին իրենց այս անուններից՝ վերցնելով արաբական անձնանուններ: Դրանով իսկ իրանական անունների հայկականացման գործընթացը հասավ իր տրամաբանական ավարտին:

Ներկայացնենք իրանական ծագման տարածված որոշ անձնանուններ՝ իրենց թարգմանական իմաստներով:

Աշխէն - թուխ, մթագույն կամ տիրուհի, իշխանուհի

Արշակ - արջ

Արսէն- այր, տղամարդ

Արտակ, Արտաշէս, Արտավազ, Արտաշիր - հաստատուն արդարամիտ

Բագրատ - աստծո տվածը կամ ստեղծածը

Դրաստամատ - ուղիղ քայլվածքով եկող

Երվանդ - իդձ, փափագ

Խոսրով - բարեհամբավ

Ներսէս- այրական խոսք, պատգամ

Շահէն - մեծ, ապիտակ բազե

Սուրէն - ուժեղ, զորավոր

Վազգեն- գորտ

Վահան - վահան

Վահագն- խափանարար, հաղթական

Վարդան-վարդ

Տիգրան - նետերով մարտնչող

ԻՐԱՆԱԿԱՆ ՓՈԽԱՌՅԱԼ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

Իրանական փոխառությունների կշիռը Հայաստանի տեղանունների մեջ ավելի փոքր է, քան սովորական բառապաշարում և անձնանուններում: Հ. Հյուբշմանն իր «Հայերենի քերականության մեջ» առանձնացնում է իրանական ծագման 121 անձնանուն, տեղանունների թիվը՝ 37 է: Հ. Աճառյանը համաձայնում է նրա ցանկին: Գ. Ջահուկյանը վերապահությամբ է վերաբերում Հյուբշման-Աճառյան տեղանունների ստուգաբանությանը՝ առանձնացնելով խառն տեղանունների մի խումբ, որտեղ բաղադրիչներից մեկն իրանական է, մյուսը՝ հայկական: Բերենք մի քանի նման տեղանուններ՝ *Բագայառիճ*, *Բագնայր*, *Վարազաբլուր*, այս տեղանունների միայն առաջին բաղադրիչն է պարսկական: *Բագա* - աստված, *բագին* - մեհյան, *վարազ* - վայրի խոզ: Վերջին բաղադրիչներից՝ այր-ը, բլուր-ը հնդեվրոպական ծագում ունեն, իսկ *առիճ*-ի ծագումն անհայտ է, թեև այս արմատ-բաղադրիչով տեղանունները հայերենում հանդիպում են՝ *Առիճ-Հառիճ*, *Կթառիճ*, *Ջիթառիճ*: Գ. Ղափանցյանն այս կազմիչի համար խեթական ծագում է վերականգնում՝ *յրեդ*, *վայր* իմաստով:

Գ. Ջահուկյանը վերապահումով է գուտ իրանական համարում իրանական անձնանուններից իրանական տեղանվանակերտ ածանցներով բաղադրված տեղանունները: Կարծելով, թե այդ անձնանուններն արդեն հայկականացել են, և միայն դրանից հետո է կատարվել այդ անձնանուններից տեղանունների կազմությունը: Իսկ անձնանունները տեղանունների հիմք են դարձել, որովհետև հայ թագավորների և իշխանների անուններ էին, և նրանց հիմնադրած բնակավայրերը կամ նրանց պատկանող տեղանքի միավորները ստանում էին իրենց տերերի անունները: Այս տեսակետը բացատրելի է այն հանգամանքով, որ *Տիգրան*, *Վարդան*, *Ներսես*, *Երուանդ*, *Արշակ* և նման անունների հայկականացումն իրոք լիակատար է դարձել, թեև ծագումնաբանորեն դրանք եղել և մնում են իրանական: Բերենք նման տեղանունների օրինակներ՝ *Արշակաւան*, *Վարդանակերտ*, *Երուանդակերտ*, *Երուանդաւան*, *Տիգրա-*

նակերպ, Վարդաշէն, Վաղարշապատ, Վաղարշաւան, Խոսրովակերպ և այլն:

Բուն իրանական տեղանունները հիմնականում տարածված են Պատմական Հայաստանի հարավարևելյան ծայրագավառներում՝ Պարսկահայքում, Փայտակարանում, Ուտիքում, նաև Արցախում և Վասպուրականում, որտեղ հայերի և պարսիկների շփումներն առավել սերտ էին և տևական:

Չուտ իրանական ծագման տեղանուններ Գ. Ջահուկյանը համարում է *ռուր* (զետ), *ասպ* (ծի), *պերոժ* (հաղթ) արմատներով, ինչպես նաև *լանդ* և *ունի* ուրարտական վերջածանցով տեղանունները՝ *Բագր-լանդ*, *Որմիզդպերոժ*, *Ասպական*, *Ասպահեն*, *Բաղանոուր*, *Ճուաշոուր*, *Ապահունիք*, *Վարաժնունիք*....

Իրանական են համարվում նաև՝ *Գանձակ*, *Հրազդան*, *Ագար*, *Երասխ*, *Սեպուհ*, *Դուին* հայտնի տեղանունները¹⁴⁵:

ԻՐԱՆԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՆՉՅՈՒՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Իրանական փոխառություններին բնորոշ են մի շարք հնչյունական առանձնահատկություններ, որոնք բխում են հայերենի և իրանական լեզուների հնչյունական համակարգերի, հատկապես բաղաձայնների տարբերություններից: Ստորև ներկայացնենք այն հիմնական, կասկած չհարուցող հնչյունական բնութագրիչները, որոնց միջոցով հնարավոր է հայերենում իրանական փոխառությունները տարբերակել այլ ծագման բառերից:

1. Հայերեն *ւ/-ով* և *յ/-ով* (հատկապես, եթե *յ-ն* նախորդային ծագում չունի) սկսվող բառերի մեջ իրանական ծագում ունեցողները մեծ թիվ են կազմում: Ինչպես նշում է Գ. Ջահուկյանը, մեծ հավանականությամբ իրանական ծագում ունեն հետևյալ բառերը՝ *վախճան*, *վախկ*, *վայր*,

¹⁴⁵ Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 582-583:

վասարակ, վարագոյր, վարակ, վարկ, վարսակ, վարուժան, վէճ, վէպ, վէս, վթար, վիհ, վհար, վիռուկ, վրառ, վրիպ, յախուռն, յիմար, յարակ, յաւար և այլն:

2. Քանի որ բնիկ հայերեն բառերի համար *հր* կամ *րհ* զուգորդումները բնորոշ չեն, հ-ն էլ բուն հայերեն բառերի վերջում չի հանդիպում, ուստի կարելի է ասել, որ *հր*-ով, *րհ*-ով բառերն անխտիր, իսկ բառավերջի *հ*-ով բառերի զգալի մասը իրանական ծագում ունեն, եթե անգամ դրանց սկզբնաձևերի իրանական աղբյուրները վկայված չեն:

3. Բնիկ հայերեն *ժ* հնչյունը պարունակող բառերը խիստ սակավաթիվ են: Հետևաբար *ժ* ունեցող, հատկապես *ժ*-ով սկսվող (այս հնչյունով սկսվող բնիկ բառ հայերենում չկա) բառերի հիմնական մասը իրանական ծագում ունի՝ *ժանիք, ժապավեն, ժառանգ, ժիպեկ, ժպիրի, ապառաժ, նծույգ, պժգալ* և այլն:

4. Իրանական փոխառություններին բնորոշ են *խ*ը, *շխ*, *չր*, *զմ* տիպի զուգորդումներ: Մանավանդ *շխ* հնչյունակապակցություն ունեցող բառերը գրեթե առանց բացառության իրանական ծագման են՝ *աշխարհ, աշխեր, երաշխիք, աշխույժ, պարերազմ, ռազմ* և այլն:

5. Իրանական փոխառություններին բնորոշ են *զ/ջ/ժ, կ/ճ/շ* հնչյունական հերթագայությունները, ինչպես օրինակ՝ *արզ/արժ, բազ/բաժ, րուզանք/րույժ, կար/կերպրել/ճար* և այլն:

ՀՈՒՆԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինչպես աշխարհի բոլոր ժողովուրդներն ու ազգերը, այնպես էլ նրանց լեզուները իրենց զարգացման տարբեր շրջաններում շփումներ են ունեցել բազմաթիվ այլ լեզուների հետ, որոնց հետևանքով ենթարկվել են փոխառված ազդեցությունների: Երևույթը պատմական անհրաժեշտություն է, որն իրապես նպաստել է փոխառյալ բառերի ներմուծմանը տարբեր լեզուների բառապաշարի մեջ: Այս առումով հայերենին անցած հունա-լատինական փոխառությունները հայ ժողովրդի կյանքում տեղի

ունեցած պետական և քաղաքական կարևորագույն իրադարձությունների արդյունք են:

Ք. ա. 11-րդ դարում իրենց նախահայրենիքից հեռանալով՝ հույները մտնում են Հունաստան՝ ուծացնելով նախաբնիկ պելասգներին: Սակայն երկրի տնտեսության ծայրաստիճան աղքատ վիճակը հելլեններին ստիպում է բռնել գաղթականության ճանապարհը և հիմնել Ջմյուռնիա, Եփեսոս, Սիլետ գաղթավայրերը, որոնք հետագայում ընկնում են պարսկական լծի տակ: Սրան հաջորդում են աշխարհակալ Ալեքսանդր Մակեդոնացու՝ ղեպի արևելք կատարած արշավանքները, որից էլ կործանվում է պարսից պետությունը: Այնուհետև տեղի դառնալով ամբողջ Արևելքին, ինչպես նաև վերադարձնելով բոլոր հունական գաղթավայրերը՝ հույներն Ալեքսանդրիա անունով մինչև 70 քաղաք են հիմնում և սկսում տարածել իրենց լեզուն, գիտությունն ու արվեստը, հունական կրոնական գաղափարները: Հունական ազդեցությունն այնքան ուժեղացավ, որ Առաջավոր Ասիայի շատ ազգեր, այդ թվում՝ նաև հայերը, յուրացրին հունական քաղաքակրթությունը, որի արդյունքում զգալի թվով թե՛ հասարակ, թե՛ հատուկ անուններ փոխառվեցին հայերի և տարբեր ժողովուրդների կողմից:

Գ. Ջահուկյանը նախագրային շրջանի համար տարբերում է հայ-հունական լեզվական առնչությունների 4 հիմնական փուլ:

1) *Վաղ առնչությունների փուլ* (Ք.ա. 5-4-րդ դդ.): Այս փուլում հայերի շփումը հույների հետ պատահական բնույթ է կրել: Հայերն առևտրական կապի մեջ են եղել Փոքր Ասիայի ծովափնյա հունական գաղութների հետ: Բացի այս՝ շփում է եղել նաև Պարսկաստանում ծառայող հույն զինվորների հետ, բացառված չեն նույնիսկ իրանական, սեմական, փոքրասիական և այլ ժողովուրդների միջնորդավոր հարաբերությունները:

2) *Հունական քաղաքական և մշակութային վաղ ազդեցության փուլ* (Ք. ա. 3-րդ դարի 30-ական թթ. - Ք. հ. 1-ին դարի 60-ական թթ.): Սա սկսվում է Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքներով, պարսկական պետության անկմամբ, հունական քաղաքակրթության ուժեղ ազդեցությամբ: Հելլենիզմի շրջանում Հայաստանը ևս ենթարկվել է հունական մշակութային և սրանից անբաժան լեզվական ազդեցությանը:

3) Հռոմի քաղաքական ազդեցության ուժեղացման և հունական մշակութային ազդեցության շարունակման փուլ: Այս փուլն սկսվում է Հռոմի՝ Հայաստան կատարած արշավանքներով, Տիգրան 2-րդի հետ հռոմեացիների կնքած դաշնագրով: Թեև շարունակվում է հունական ազդեցությունը, բայց սրան զուգահեռ՝ զգալի դեր է կատարում նաև լատիներենի անմիջական և հունարենով միջնորդված ազդեցությունը: 1-2-րդ դարերի հունական և լատինական արձանագրություններ են պահպանված Գառնիում, Էջմիածնում, Արտաշատում, Տիգրանակերտում, Խարբերդում:

4) Բյուզանդական մշակութային և կրոնական ազդեցության փուլ (4-րդ դ.): Այս փուլը հայտնի է քրիստոնեության մուտքով Հայաստան: Հայերը կրոնակից են դառնում հույների հետ և քրիստոնեական կողմնորոշումից հետո սերտ կապեր են հաստատում հունական պետության հետ, որն էլ միջնորդ է դառնում Հայաստանի ու Պարսկաստանի միջև: 367-374 թթ. (Պապ թագավորի օրոք) դավանաբանական տարաձայնությունների հողի վրա Հայաստանը եկեղեցու հարցում թեև անկախացավ Բյուզանդիայից, բայց և այնպես շարունակում էր գտնվել հունական մշակույթի ազդեցության ներքո: Պատմական այս ժամանակահատվածում հայոց մեջ սկսեցին լայնորեն տարածվել հունական կրոնաանունները:

Սկսած հելլենիզմի շրջանից՝ հայերը օգտագործել են հունարենը՝ դրամների վրա հունական գրություններ թողնելով, Տիգրանակերտում հիմնված թատրոնում հունարենով ներկայացումներ տալով: Տիգրանի որդին՝ Արտավազդը, որ հունական կրթություն ուներ, հունարենով ողբերգություններ է գրել: Խորենացու պնդմամբ՝ պաշտոնական գրությունները պարսկերենի հետ միասին նաև հունարենով էին գրում. «Գիր պարսից եւ յունաց, որովք այժմ գիտից եւ գաւառաց, եւս եւ իւրաքանչիւր տանց առանձնականութեանց եւ հանուրց հակառակութեանց եւ դաշանց այժմ առ մեզ գտանին անբաւ գրուցաց մատեանք, մանաւանդ որ ի սեպհական ազատութեան պայազատութիւն...» (Խոր. Ա. գ): Այս ամենով հանդերձ Հայաստանը, ըստ Մոմսենի, միշտ մնում է «ոչ հունական» երկիր՝ պահպանելով արևելյան իր կերպարանքը: Այս տեսակետին հետևում է

Հ. Աճառյանը. «Նախաքրիստոնեական շրջանում հայերենը հունարենից ոչ մի ազդեցություն չի կրել, և հայերը հույներից ոչ մի բառ փոխ չեն առել...»¹⁴⁶: Սակայն Գ. Ջահուկյանը հակառակն է պնդում. «Առանձին հատվածներում, այդ թվում՝ հունական մշակույթին ծանոթ մարդկանց մեջ, չէին կարող չգործածվել հունարեն որոշ բառեր»¹⁴⁷:

Եթե քաղաքական ասպարեզում հաղթող էին պարսիկները, ապա կրոնական դավանանքի և կրթության բնագավառում հաղթող դուրս եկան հույներն ու ասորիները, գուցե և այն պարզ պատճառով, որ հայ ազնվականության մի զգալի մասն իրանամետ, իսկ հոգևորականությունը հելլենասեր էր: Եկեղեցու դերը հայ իրականության մեջ միշտ ազդեցիկ է եղել: Հետևաբար 4-րդ շրջանում, երբ Հայաստանում բացվում են հունարեն և ասորերեն դպրոցներ, ակնհայտորեն ուժեղանում է հունարենի ազդեցությունն այն աստիճան, որ մրցակցությունից աստիճանաբար դուրս է մղում ասորերենը: Չնայած այս ամենին՝ հայերենում հունարենից կատարված փոխառությունների թիվը իրանականի համեմատությամբ այնքան էլ մեծ չէ: Հայ ժողովրդի լեզվի հելլենացումը սահմանափակվում էր գիտության և մշակույթի ոլորտներով, իսկ կենցաղը, պետական կառուցվածքը շարունակում էին մնալ արևելյան: Այնուհանդերձ հայերենի բառապաշարում առաջսօր էլ գործածվող հունարեն և՛ հասարակ, և՛ հատուկ բառեր կան:

Գերմանացի հայագետ Հ. Հյուբշմանը հունարենից փոխառված շուրջ 500 բառից հայերենում արմատացների թիվը հասցնում է հիսունի: Համեմատելով պարսկական փոխառությունները հունական, ինչպես նաև ասորական փոխառությունների հետ՝ գերմանացի հայագետը նշում է, որ դրանք ավելի մոտ են, քան պարսկական փոխառությունները, և դրանք հիմնականում հայերեն մուտք են գործել 3-րդ դարի վերջից մինչև 5-րդ դարի սկիզբն ընկած ժամանակահատվածում: Ելնելով այն փաստից, որ հունական փոխառությունները քանակով զիջում են պարսկականներին, գիտնականը հետաքրքիր դիտարկում է կատարում, ըստ որի՝ պարսկական մշակույթի ազդեցությունը պարթևական ժամանա-

¹⁴⁶ Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս II, էջ 8-9:

¹⁴⁷ Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 615-616:

կաշրջանում մեզ վրա ավելի մեծ է եղել, քան քրիստոնեական մշակույթի ազդեցությունը. «Քանի որ հարյուրավոր պարսկական փոխառությունների դիմաց կանգնած են մոտավորապես հարյուրից մի քիչ ավելի ասորականներ և հիսունից ոչ շատ ավելի իսկական քաղաքացիական իրավունք ստացած հունական փոխառություններ, որոնց կողքին հանդիպում են բավական մեծ քանակությամբ հունական ծագում ունեցող գիտական բառեր»¹⁴⁸:

Հունական փոխառությունների մեծ մասը գոյականներ են, փոքր մասը՝ ածականներ, որոնց բառակազմական արժեքն այնքան էլ մեծ չէ: Սրանք հիմնականում մշակութային, առևտրական, հասարակական-քաղաքական և կրոնական բնոյթի պատրաստի բառային միավորներ են, որոնց մի ստվար մասն այժմ էլ կենսունակ է և շարունակում է գործածվել ժամանակակից գրական հայերենում: Որոշ բառեր անգործածական են դարձել՝ երբեմն իրենց տեղը զիջելով այլալեզու զուգահեռ ձևերին: Այսպես, *բաղասմո(վ)ն* բառը արաբերենի *բալասան*-ն է, *թէսիրոն*-ի փոխարեն սկսել է գործածվել ասորերենի միջնորդությամբ փոխառված *բաիր* ձևը՝ *թարերական*, *թարերախաղ*, *բաիրոն*: Որոշ բառեր էլ վերակենդանացել են շրջակա լեզուների ազդեցությամբ՝ *ողոմպիսադ*, այժմ՝ օլիմպիադա, *պոէրէս*՝ պոետ, *յոպագիոն*՝ տոպագ:

Միջին հայերենի ժամանակաշրջանում՝ 12-14-րդ դարերում, մեր լեզուն շարունակում է հարստանալ հունական փոխառություններով, թեև հայ-հունական ուղղակի շփումներն արդեն անցյալում էին: Սակայն հունական գիտությունը և մշակույթը շարունակում էր ուղղորդող ազդեցություն գործել հայ մտավորականության վրա, ուստի մեր մատենագրության տարբեր բնույթի երկերում հանդիպում են մորանոր հունական փոխառություններ: Ինչպես նշում է Ռ. Ղազարյանն իր «Միջին գրական հայերենի բառապաշարը» աշխատության մեջ, դրանք գրական ճանապարհով կատարված փոխառություններ են, երբեմն եզակի կիրառություններ: Հունարեն և լատիներեն զուգահեռ ձևերի առկայության դեպ-

¹⁴⁸ Հ. Հյուբշման, նշվ. աշխ., էջ 352-353:

քում չի բացառվում տվյալ գրական փոխառության անմիջական լատի-
նական աղբյուրը:

Ըստ Բաքի իմաստային խմբերի բաշխման՝ ստորև ներկայացնում
ենք հունարենից հայերենի փոխառյալ բառերը:

Ա. Ֆիզիկական աշխարհ - հիւղ(է), փոս, աղամանդ, ալապաստր,
օխրայ, կլիմ(ա), բիւրեղ, մարմար, յակինթ, տպագլիոն (նոր ձևը՝ տո-
պագ), եթեր և այլն:

Բ. Կենդանիներ- փասեան, դ(ե)լփին, կէտ, սպոնգ, բասիլիկոս և
այլն:

Գ. Մարմնի մասեր, մարմնական գործառնություններ և պայմաններ-
ստամոքս, պատագրոս, բաղսամո(վ)ն, քերիակէ և այլն:

Դ. Ամանեղեն - ափսէ, կոնք, պնակ և այլն:

Ե. Հագուստ, անձնական զարդարանք և խնամք -մետաքս, աղաբո-
ղոն, փիլոն, քղամիդ և այլն:

Զ. Բնակարան, տուն, կահկարասի-բաղանիք, կրկէս, պալատն,
պանդոկ, կամար, դատիկոն, բեն, կանթեղ և այլն:

Է. Երկրագործություն, բուսականություն -արգասիք, որիզ (բրինձ),
դափնի, գմուռս, կիտրոն, մեղրապուպ, ռետին և այլն:

Ը. Ֆիզիկական տարբեր գործողություններ, արվեստ և արհեստ -
տաղանդ, մեքենայ, կար(ա)կին, անդր և այլն:

Թ. Ունեցվածք, սեփականություն և առևտուր-դենար, սիկդ, տոկոս,
լիտր և այլն:

Ժ. Տարածական հարաբերություններ՝ տեղ, ձև, չափ- ստադիոն,
տիտան և այլն,

ԺԱ. Ժամանակ-կիւրակէ, մարտ և այլն:

**ԺԲ. Չգացմունք, խառնվածքային, բարոյական և գեղագիտական
ըմբռնումներ**- քէատրոն, կրկէս, ողոմպիադ և այլն:

ԺԳ. Մտածողություն, միտք- մորոս, սոփեստէս, փիլիսոփոս և այլն:

**ԺԴ. Չայնական արտահայտություն, խոսք, ընթերցանություն և
գիր** - հռետոր, սիդոլոբայ (վանկ), տոմս, քարտ, տիպ, տոմար, գրամա(ր)-
տիկ(ոս), նոտար, պոէտէս...

ԺԵ. Տարածքային, հասարակական և քաղաքական բաժանումներ, հարաբերություններ- սինկրիտոս (ծերակույտ), աւգոստոս, սեբաստոս, հիւպատոս, սատրապ, բարբարոս, պոռնիկ, քարտողար, հեթանոս....

ԺԶ. Ռազմական գործ- լեգէո(վ)ն, բաղիստր:

ԺԷ. Օրենք- կանոն, գառազիլ:

ԺԸ. Կրոն, նախապաշարմունք -հերետիկոս, որթողոքս, քրիստոն- (եայ), մարտիրոս, մատուռն, սաղմոս, աբբա(յ), արքեպիսկոպոս, եպիսկոպոս, կաթողիկոս, կղերք, կղերիկոս, եկեղեցի, կաթողիկէ, տարտարոս, դեկան (վանահայր), դիակոն (սարկավագ), քեմ (առաջնորդական վիճակ), սինակոկ և այլն:

Ինչպես տեսնում ենք, կրոնական- մշակութային բնույթի անունները մյուսների համեմատությամբ գերակշռում են, իսկ բույսերի ու կենդանիների անունները սակավաթիվ են և մեր բնակության վայրերին անծանոթ: Փոխառությունների մեջ չկան բայեր, թվականներ, դերանուններ և քերականական մասնիկներ: Ինչպես վերը նշվեց, փոխառությունները հիմնականում գոյականներ են, մասամբ՝ ածականներ. դրանք բառակազմական մեծ արժեք չունեն, այսինքն՝ վերցվել են իբրև պատրաստի միավորներ:

ՀՈՒՆԱԿԱՆ ՓՈԽԱՌՅԱԼ ԱՆՁՆԱՆՈՒՆԵՐ

Քրիստոնեությունն ընդունած մյուս ազգերի օրինակով հայերը հասարակ անունների հետ մեկտեղ հունարենից փոխառել են նաև հատուկ անուններ: Դրանք հիմնականում աստվածաշնչյան անուններ են, որոնց կրողները կա՛մ հոգևորականներ, կա՛մ ազնվականներ էին: Վերջիններս, պահելով ժառանգած հեթանոսական անունները, հազվադեպ, բայց ընդունում էին քրիստոնեական անուններ: Այլ էր հայոց պարթևասեր թագավորների դիրքորոշումը: Նրանք ոչ միայն պահեցին հեթանոսական անունները, այլև քաղաքական զանազան նկրտումներից դրդված՝ չիրաժարվեցին արշակունյան-պարսկական անուններից: Մատենագրության մեջ ավանդված այս անուններում, անշուշտ, գրեթե տեղ չեն

գտել հասարակ ժողովրդի մարդկանց անունները: Քանի որ ժողովրդի դերակատարումը պատմական իրադարձություններում աննկատ էր, մեր մատենագիրները հասարակ մարդկանց անունները չեն նշում. նրանց հերոսները արքաներն էին, նախարարները և հոգևորականները: Կարող ենք ենթադրել, որ հասարակ մարդկանց անունները իրենց ծագմամբ առավելապես բնիկ էին՝ ի տարբերություն պարսկամետ արքաների ու իշխանների և հունամետ հոգևորականների:

Հ. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարանի» տվյալներով՝ հունական ծագում ունեցող անձնանունները՝ թվով 143, պատկանում են ժամանակագրական տարբեր շերտերի: Գ. Ջահուկյանը սրանցից առանձնացրել է նախագրային շրջանում և 5-րդ դարում գործածված անունները, որոնք մինչև 52 հիշատակություն ունեն: Այդ շարքում Հայաստանում պատմական դերակատարում ունեցած հույների անուններն են՝ *Գայիանէ՝* Հռիփսիմյան կույս, *Ջենոք՝* աշակերտ Լուսավորչի, *Ջենոն*, *Ողոմպիադա՝* Արշակ 2-րդ-ի կինը և այլն:

Բերենք հայերենում վկայված հունական ծագման անձնանունները՝ զանց առնելով հազվադեպ կամ դիպվածային կազմությունները:

Ագաթանգեղոս - բարի հրեշտակ

Ագապես - սեր

Աթանագինես - արեմածին, Աթենաս աստվածուհուց ծնված

Աթանաս - անմահ

Անդրեաս - առնական

Անտիոքոս - կառաղենիկ, թշնամու կառքի դեմ քշող կամ դիմակայող

Անտիպատրոս - հորը փոխարինող

Անտոն (4-րդ դ.) - < լատ. Antonius, առաջնորդ, գլխավոր

Արիստակես - ազնվորդի

Բասիլ (ուշ՝ նաև Բասիլիոս) - թագավորական (հմմտ. Բարսեղ)

Բարսեղ - թագավորական (տե՛ս նաև Բասիլ)

Գեորգ - երկրագործ

Գրիգոր - զգոն

Դեմետր - երկրագործության աստվածուհու անունից

Եպիփան - հայտնի, երևելի, նշանավոր, փառավոր

Էրատոյ - սիրային բանաստեղծության և քնարերգության մուսան՝
«սիրուն, սիրելի» բառի

Եւգենէոս - ազնիվ, ազնվացեղ

Եւրոկիա - բարի կամեցողություն, կամք

Եւսեբիոս - բարեպաշտ

Թէոդորոս - աստվածատուր, աստվածամկեր

Կիրակոս - տերունի, տերունական

Կիւրեղ - տեր

Կոստանդին - կայուն

Հեղինէ - Գ. Ջահուկյանը կարծում է, որ այս անվան վերաբերյալ եղած ստուգաբանությունները հավաստի չեն՝ վկայաբերելով Աճառյանի մեկնությունը, ըստ որի՝ անունը նշանակում է «նվիրական կողով, որը գեղեցիկ ծաղիկներով զարդարելով՝ նվիրում էին Արտեմիս աստվածուհուն»:

Ղեւոնդ (իոս) (ոչ՝ նաև Լեւոն) - առյուծ

Ղուկիանոս - լուսավոր

Մատթէոս - Յահվէի (աստծու) նվեր

Մարկոս - մուրճ

Մարտիրոս - վկա, նահատակ

Պետրոս - քար, վեմ

Պողիկտոս - շատ ցանկալի

Պաւղոս - փոքրիկ

Սոփիա - իմաստություն

Ստեփաննոս - պսակ

Փաւստոս - երջանիկ

Փիլիպպոս (Փիլիպպէ) - ձիասեր

Վերը նշված անձնանուններից բացի՝ հայերը հայկական հեթանոսական դիցարանի աստվածությունները հաճախ համադրել են հունական աստվածությունների հետ: Այսպես, հայերի գլխավոր աստվածը՝ Արամազդը, զուգադրվում էր Ջևսի հետ: Ազաթանգեղոսի վկայությամբ՝ սրանք հավասարաթեք են. «Եւ անդ կործանեցին զբազինն Ջևս դիցն

Արամազդայ» (գլ. ճթ.): Մյուս աստվածություններից Միհրը նույնական էր Հեփեստոսի, Վահագնը՝ Հերակլեսի, մասամբ նաև՝ Ապոլլոնի, Անահիտը՝ Արտեմիսի, Աստղիկը՝ Ափրոդիտեի, Նանեն՝ Աթենասի հետ: Հայոց դիցարանի աստվածություններին նվիրված հեթանոսական տաճարներում դրվել են հունական համապատասխան աստվածների արձանները:

ՀՈՒՆԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՆՉՅՈՒՆԱԿԱՆ ԵՎ ՁԵՎԱՐՔԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հնագույն հունական փոխառություններում դրսևորված հնչյունական մի շարք առանձնահատկություններից կանդրադառնանք հիմնականներին՝ ա) փոխառված բառերում հունարենին ոչ հատուկ **ջ, ճ, չ, ձ, ծ, ց** պայթաշփականների և **ժ, շ** շփականների բացակայություն, բ) եթե այս հնչյունները բացակայում են, ապա կրկնակ բաղաձայնները հիմնականում պահպանվում են՝ *արքա, սիդդորայ*, գ) հանդես են գալիս նաև հայերենին ոչ բնորոշ այնպիսի հնչյունակապակցություններ, ինչպիսիք են՝ *փս, քս, քր, հռ* և այլն, դ) հետևողական բնույթ չունի երկար ու կարճ ձայնավորների և երկբարբառների տառադարձությունը, որոնք տառադարձված են և՛ երկբարբառներով, և՛ մենաբարբառներով, ե) առանձին դեպքերում նկատվում են ձայնավորի սղման, ձայնեղների խլացման դեպքեր, զ) սովորական երևույթ պետք է համարել ձայնեղի դիրքային խլացումը կամ խուլերի ձայնեղացումը ռնգայինից հետո և այլն: Նշված շեղումներին զուգահեռ՝ կան այնպիսի բառեր էլ, որոնք փոխառվել են համապատասխան հնչույթակազմով:

Ձևաբանական մակարդակում հունարենում 1-ին և 2-րդ հոլովման պատկանող հունական փոխառությունների երկու շերտ կա՝ ա) խոսակցական լեզվից եկող և ժամանակագրական առումով հին բառեր, որոնց մեջ հունական վերջավորություններն ընկնում են, բ) կանոնավոր լեզվի և կրթված խավի կողմից ավելի ուշ կատարված փոխառություններ, որոնց մեջ դրանք պահպանվում են: Առաջին շերտի բառերից են՝ *ար-*

զասիք, բաղանիք, բիրեղ, դեմար, եկեղեցի, լաղիկ, լիպր, կդերք, հիւղ /հիւղէ, հի(ւ)պար/ հիւպարոս, ռերին, սարրաս, սիկդ, տաղանդ / տաղանր, տիպ, տոմար, փոս և այլն: Երկրորդ շերտի բառերից են՝ արքեպիսկոպոս, բարբարոս, տոկոս, քերիակէ, կաթողիկէ, կիրորոն, սարդիոն և այլն: Կան նաև զգալիորեն ձևափոխված փոխառություններ, որոնք նույնպես մուտք են գործել խոսակցական լեզվից՝ մայրուռն, պալարն, սրամոքս, տոմս:

Հունական ծագում ունեցող բառերը բաղադրվում կամ թեքվում են հայերենի բառակազմական հիմքերին բնորոշ եղանակներով՝ *աղամանդ - աղամանդեայ, արզասիք - արզասաւոր, բարբարոս - բարբարոսական* և այլն: Կան նաև հայերենի բուն ձևերից և բառակազմական հիմքերից տարբերվող դեպքեր՝ ա) հունական վերջավորությունների անկումով՝ աւգոստոս - աւգոստական, բ) հունական հայցականի ձևով՝ Քրիստոս - քրիստոնեայ, գ) հունարենի բառակազմական հիմքերին մոտ ձևերով՝ *զմոռոս - զմռնենի - զմռէլ* (հմմտ. նաև զմռսել):

Անդրադառնալով հատուկ անուններին՝ պետք է ասել, որ դրանց *-աս, -էս, -ոս* վերջավորություններն ընկնում են թեք ձևերում՝ *Արիստակէս - Արիստակայ, կան* դեպքեր էլ, որ պահպանվում են: Հոգնակերտ *-ք*-ի փոխարեն կարող են ստանալ *-ունք՝ հպիսկոպոսունք...*

Հայերենի զարգացման հետագա շրջաններում հունական *աս, ոս, էս* վերջավորությունները պահպանվում են և՛ ուղիղ ձևերում, և՛ բառաթեքման ժամանակ՝ ի տարբերություն սլավոնական կամ եվրոպական շատ այլ լեզուների, որտեղ հունական վերջավորություններն ընկնում են ի սկզբանէ:

ԼԱՏԻՆԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հռոմեացիները, որ հնդեվրոպական ցեղի իտալյան ճյուղի ներկայացուցիչն են են, ստեղծում են իրենց գերտերությունը, որով սկսվում է Հռոմի մեծ աշխարհակալությունների շրջանը: Այն ժամանակ Հռոմ ուներ երկու մրցակից՝ մակեդոնացիներն ու սելևկյանները: Հետագայում՝

սելեկյանների դեմ մղած Մագնեսիայի ճակատամարտում հռոմեացիների հաղթանակից հետո, թե՛ Հունաստանը, թե՛ Ասիան մտան հռոմեացիների իշխանության տակ: Հայաստանը, որ սելեկյաններին հպատակ երկիր էր, այդ ժամանակ դարձավ անկախ պետություն:

Սելեկյան գորեղ պետության կործանման ժամանակներից էլ սկսվում է հայ-հռոմեական հարաբերությունների պատմությունը: Նշանակված երկու կառավարիչները՝ Արտաշեսը՝ Արևելյան Հայաստանում, Ջարեհը՝ Արևմտյան Հայաստանում, թեև սելեկյանների գորապետներից էին, բայց ծագումով՝ հայոց հին թագավորական ցեղից էին: Լինելով հունական քաղաքակրթության կրողը և թոթափելով սելեկյանների լուծը՝ նրանք ընդարձակում են իրենց տիրույթները. Ջարեհը թագավորում է Փոքր Ասիայում, Արտաշեսը՝ Մեծ Հայքում:

Երբ հռոմեացիք զբաղված էին քաղաքացիական և քաղաքական մեծ պատերազմներով, Առաջավոր Ասիայում հիմնվում է մի մեծ կայսրություն՝ հայ-պոնտական կայսրությունը, որ պիտի պատերազմեր նախ՝ պարթևների, ապա՝ հռոմեացիների դեմ: Սակայն Պոնտոսը նվաճվում է և դառնում հռոմեական նահանգ, իսկ Հայաստանը վերածվում է Հռոմին դաշնակից պետության: Բայց հետագայում հայերը հեռանում են հռոմեացիների դաշինքից՝ միանալով պարթևներին, որոնց միությունն ամրապնդվում է հայ և պարթև թագավորների խնամությամբ: Հայ հռոմեական կապերը նորից վերահաստատվում են Արտավազդի օրոք, որը, փոխելով իր քաղաքականությունը, անցնում է հռոմեացիների կողմը, դրանից հետո հայերի և հռոմեացիների միացյալ բանակ է կազմվում՝ կռվելու Ատրպատականի դեմ: Հայ-հռոմեական հարաբերությունները տևել են շուրջ 400 տարի: Հայերը մերթ միացել, մերթ ապստամբել են հռոմեացիների դեմ մինչև նրանց բանակի վտարումը Հայաստանից և Պոլսի հիմնումը: Այս պատմական-քաղաքական իրադարձությունների հորձանուտում պարզ է, որ հռոմեական քաղաքակրթությունը չէր կարող չազդել հայոց կյանքի և հայերենի վրա, մանավանդ որ Հայաստանում շարունակ տեղակայված էր լինում հռոմեական գործը: Որտեղ գտնվել է այդ բանակը, այնտեղ էլ տարածվել է լատիներենը՝ իբրև վարչական ու զինվորական լեզու: Այնուամենայնիվ, հռոմեական ազդեցությ-

յունը մեծ չի եղել նախ այն պատճառով, որ այդ ազդեցությունը եղել է նախքան գրերի գյուտը, երբ գրավոր մշակույթ չի եղել, հետևաբար փոխառությունները գրի չեն առնվել և չեն փոխանցվել հետագա սերունդներին, բացի այդ՝ լատինական բառերը Բյուզանդական կայսրության ժամանակ տարածվում էին հունարենի միջնորդությամբ, այսինքն՝ հունական և ոչ թե լատինական հնչյունակազմով:

Հայ-հռոմեական պատերազմների հետևանքով Ք.ա. 1-ին դարում՝ Տիգրան 2-րդի ժամանակներում, Հայաստանը դառնում է Հռոմին ենթակա պետություն: Քաղաքական գերիշխանության այս պայմաններում լատիներենի ազդեցությունը հայերենի վրա անխուսափելի էր: Այդ ազդեցությունը սկզբում տեղի է ունեցել վարչական օղակներով և հատկապես ուժեղացել է Հայաստանի՝ հռոմեական նահանգ հայտարարվելու շրջանում, հետո՝ Հայաստանում գտնվող հռոմեական բանակի միջոցով: Ք. հ. 4-րդ դարում, երբ ձևավորվում է Արևելյան հռոմեական կայսրությունը, միաժամանակ դադարում է լատիներենի ազդեցությունը, քանի որ նոր կայսրության պաշտոնական լեզուն արդեն հունարենն էր:

Լատիներեն փոխառությունները կատարվել են անմիջաբար և միջնորդավորված: Հունարենի միջնորդությամբ լատիներենից հայերենին են անցել մի շարք բառեր՝ *աւգոստրոս*, *դենար*, *լադիկ*, *լեզեռ(վ)ն*, *կանթեղ*, *կիրորոն*, *կղեսուր*, *կրկէս*, *նուրար*, *պալարն*, *տասպալի*, *փոս*:

Հ. Հյուբշմանի հետևողությամբ՝ Հ. Աճառյանը, այնուհետև Գ. Ջահուկյանը լատիներենից անմիջական փոխառությունների ինը բառ են աներկբա նշում, որոնք՝ որպես անմիջական փոխառություններ, լատիներենից հայերենին են անցել նախագրային շրջանում: Դրանք են՝

արկղ, -եղ, հմմտ. ժող. լատ. Arcla՝ գրական arcula-ի դիմաց,

լկրիք «գահավորակ», հմմտ. լատ. Lectica,

բասրեռն, -ան, -անց, «գահավորակ», հմմտ. լատ. Basterna,

կայսր, -եր, հմմտ. լատ. Caesar (հունարենի միջնորդությամբ՝ *կեսար*)

կառք, -ի, -աց, հմմտ. լատ. Carrus

դենջակ, -ի, -աց, «անձեռոց, սրբիչ», հմմտ. լատ. Lentium / linteum

մարգարիտ, -ի, -աց, հմմտ. լատ. Margarita

պան, «կլոր հաց, բլիթ», հմմտ. լատ. Panis «հաց»

սկուտոլ, -եղ (ուշ՝ սկուտեղ), հմմտ. լատ. scutella:

Բառիմաստային առումով լատինական փոխառությունները ունեցել են սկստիվ գործածություն մանավանդ բարբառներում: Դրանք բաշխվում են հետևյալ թեմատիկ խմբերի՝

Ա. ֆիզիկական աշխարհ՝ մարգարիտ,

Բ. ուտելիք, ըմպելիք, կերակրի պատրաստում և ամանեղեն՝ սիտղ, սկուտոլ, պան,

Գ. հագուստ, անձնական զարդարանք և խնամք՝ դենջակ,

Դ. բնակարան, տուն, կահկարասի՝ արկղ,

Ե. շարժում, տեղափոխություն, փոխադրում, նավագնացություն՝ կառք, բաստեռն, լկտիք,

Զ. տարածքային, հասարակական և քաղաքական բաժանումներ, հասարակական հարաբերություններ՝ կայսր:

Լատինական փոխառությունները բնութագրվում են մի շարք առանձնահատկություններով, որոնցից առանձնացնենք մի քանիսը: ա) Այդ բառերում, ինչպես բնիկ հայերեն բառերում, նկատվում է վերջնավանկերի նույն կարգի թուլացում կամ անկում՝ կայսր < caesar, պան < panis, սկուտոլ < scutella և այլն: բ) *Լկտիք* բառում Լ-ի պահպանմամբ տեղի է ունեցել անկանոն հնչյունափոխություն՝ *ե*-ի անկում՝ *lectica*, իսկ *դենջակ* բառում Լ-ն փոխվել է *դ*-ի: գ) Լատիներենից փոխառված բառերը զգալիորեն ավելացնում են *-ր*-ով և *-դ*-ով հիմքերով բառերի թիվը, որն այնքան էլ մեծ չէ:

Միջին հայերենում առկա լատինական փոխառությունները Ռ. Ղազարյանը համարում է միջնորդավորված փոխառություններ, որոնց ամփոփական և հիմնական աղբյուրը հունարենը, ֆրանսերենը և իտալերենն են: Բերենք միջին հայերենի շրջանում լատինական փոխառությունների օրինակներ, որոնք հիմնականում կրոնականեղեցական, իրավունքի, պետական-հասարակական կյանքին առնչվող հասկացությունների անուններ են՝ միջինհայերենյան հնչյունական օրինաչափություններով, որոնք հայերենին չեն մերվում և մնում են որպես օտարաբանություններ՝ *բրոգեսիոն*-թափոթ, *գուբեռնաթոր*-եկեղեցական թեմի առաջնորդ, *ադվոգատ*-

փաստաբան, *գանգելար*- դիվանատան պետ, *կուրայոր*- հոգաբարձու, *զոնսոյ*- կուսակալ, *սենայոր*- ծերակուտական, *բադրիկ/բադրիկու*- պատրիկ, *պիպլոնէք*- գրքերի հավաքածու, *Մարս*- Հրատ, *սոլ*-արեգակ, *լունայ*-լուսին և այլն:

Մեր թվարկության VI-IX դարերում լատիներենն աստիճանաբար դադարում է խոսակցական լեզու լինելուց, բայց շարունակում է ծառայել որպես գրական և մանավանդ գիտական լեզու եվրոպական ժողովուրդների (ֆրանսիացիներ, գերմանացիներ, անգլիացիներ, իսպանացիներ, իտալացիներ) համար՝ խոշոր դեր կատարելով տերմինաշինության բնագավառում: Հանքատեսակների, դեղերի, հիվանդությունների, նյութերի գիտական անվանումները, որպես կանոն, լատիներեն են:

ԱՍՈՐԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ք.ա. երկրորդ հազարամյակի մոտավորապես երկրորդ կեսին արամեացիները, գաղթելով իրենց մախասիայրենիքից, հաստատվում են Ասորիքում և Հյուսիսային Միջագետքում:

Արամեացիների գիրը եղել է արամեերենը, որի հիշատակությունների մեջ ամենահինը ավանդվել է Ք.ա. 7-րդ դարից, և որը պարսկական կայսրության շրջանում Առաջավոր Ասիայում դառնում է տիրապետող՝ համարվելով ընդհանուր հաղորդակցական, ինչպես նաև պաշտոնական լեզու: Գրականության մեջ այն հայտնի է «թագավորական արամեերեն» (Ք. ա. 6-րդ դ.) անունով: Այս գրի ազդեցությունը հետգիտես մարում է, և Ք.հ. 7-15-րդ դդ. արդեն այն արաբերենի կողմից դուրս է մղվում: Արամեական գիրը փյունիկյան գրի պարզեցված տեսակն է: Որոշ փոփոխություններով այդ գիրն ընդունել են պարսիկները և հետագայում օգտագործել պահլավերենի և միջին պարսկերենի համար:

Արևմտյան, հյուսիսային և արևելյան արամեական լեզուների շարքում նշվում է նաև ասորերենը: Վերջինս համարվում է արևելաարամեական բարբառներից մեկը, որի գրավոր հիշատակությունն սկսվում է

Ք.հ. սկզբներից, իսկ գրականության ծաղկումը՝ քրիստոնեության մուտքից մինչև 14-րդ դ.:

Սելևկյանների տիրապետության կործանումից հետո (Ք. ա. 3-1-ին դդ.), երբ Ասորիքը սկզբում Հայաստանի, այնուհետև հռոմեացիների իշխանության տակ է ընկնում, Ք. ա. 136 թ. այստեղ ձևավորվում է Օսրոյենի թագավորությունը, որի մայրաքաղաքը Ուռհան կամ Եղեսիան էր՝ հիմնականում ասորի և հայ բնակիչներով: Այստեղ բացվում է ասորական դպրոց, որ կոչվել է մաս «Աստվածաբանական համալսարան», ուր գալիս էին տարբեր տեղերից՝ կրոնական ուսում ստանալու համար: Իբրև քրիստոնեության քարոզիչ՝ Հայաստանում հիշվում է եղեսացի մեծ բանաստեղծ ու պատմաբան Բարդաժանը: Հունարենից բացի, Գրիգոր Լուսավորչի համաձայնությամբ հայ եկեղեցու պաշտամունքի լեզուն համարվել է մաս ասորերենը: Իսկ Ներսես Մեծը մոյնիսկ ասորական դպրոցներ է բացել: Հունարենն ու ասորերենը դառնում են մրցակից լեզուներ: Հունարենն արգելվում է պարսիկների կողմից, և հայ եկեղեցու ծիսական ու պաշտոնական լեզուն դառնում է ասորերենը: Այսպիսով՝ ասորերենը դարձավ տիրապետող լեզու: Հասարակական ու քաղաքական այս դժվարին պայմաններն էլ առաջ են բերում հայոց գրերի գյուտի պատմական անհրաժեշտությունը: Եվ երբ ստեղծվեց հայ գրական լեզուն, ժողովուրդը ձերբազատվեց ասորական ազդեցությունից:

Հայերն ու ասորիները սերտ հարաբերությունների մեջ են եղել նախ՝ Ծովքի թագավոր Ջարեհի (Ք. ա. 2-րդ դ.) և ապա՝ Տիգրան Մեծի ժամանակ: Վերջինս իր տիրապետության օրոք (Ք. ա. 83 թ.) շատ ասորիների բնակեցնում է Հայաստանում: Այնքան են ամրապնդվում այդ հարաբերությունները, որ Օսրոյենի թագավորներն իրենց կոչում էին ասորիների և հայերի թագավորներ: Ք.հ. 7-րդ դարում, սակայն, երբ արաբները նվաճում են Ասորիքը, ասորիները մահմեդականանում և ընդունում են արաբական լեզուն: Այժմ Ասորիքում (Սիրիայում) ասորի ժողովուրդ չկա:

Ասորերենը պատկանում է սեմական ընտանիքի արամեական լեզուների շարքին: Կազմավորվել է Եղեսիա քաղաքի և նրա շրջապատի բարբառի հիման վրա: Նախապես եղել է գրական լեզու և որպես այդ-

պիսին՝ բուռն զարգացում է ունեցել քրիստոնեության մուտքից հետո: Ասորիների թիվը մինչև Առաջին համաշխարհային պատերազմը շուրջ կես միլիոն էր, այժմ՝ մոտ մեկ միլիոն, որոնք ապրում են հիմնականում Անդրկովկասում և Միջին Արևելքի երկրներում: Նոր ասորերենը, որ ձևավորվել է ասորական բարբառի հիման վրա, միակ կենդանի արամեական լեզուն է:

Ասորական գիրը արամեական գրի մի տեսակն է, որն առաջին քրիստոնյաների գիրն է: Այս գրով, որը սկզբնապես հայտնի է եղել *էսոր-բանգեղո* անունով, 3-րդ դարում թարգմանվեց Աստվածաշունչը: Սկզբում գրել են վերևից ներքև, տեքստը կարդացել՝ աջից ձախ: Արաբական տիրապետությունից հետո և ասորերենի թուլացման ու քրիստոնեական երկու աղանդի գոյացման հետ կապված՝ գիրը ենթարկվեց փոփոխությունների: Գրի մի ձևափոխությունը կոչվեց արևմտյան կամ յակոբինյան, որ հայտնի է նաև *սեբորո* անունով, մյուսը՝ արևելյան կամ մեսսորական: Հետագայում յակոբինյան գրի հիման վրա գոյացան ասորապաղեստինյան և եգիպտական գրերը, իսկ մեսսորականի հիման վրա՝ մանիքեական գիրը, քարշունին: Ասորական գիրը բաղաձայնական-հնչյունական գիր էր: Չայնավորների նշանակումը սկսվում է 6-րդ դարից, ընդ որում՝ արևմտյաններն օգտագործում են հունական ձայնավորանիշերի մանր տեսակները, իսկ արևելյանները՝ կետերը, որոնք դրվում են տողավերևում կամ տողատակին: Հ. Աճառյանը իր «Հայոց լեզվի պատմություն» աշխատության մեջ հայերենի վրա ասորական ազդեցության 4 շրջան է առանձնացնում:

ա) Նախնական շրջան, երբ Հայաստանի հարավային նորանվաճ գավառների ազգաբնակչության մեծ մասը ասորիներ են, որոնք հետագայում ձուլվում են բնիկներին (Ք. ա. 1-ին դար):

բ) Քրիստոնեական քարոզչության շրջան, երբ հայ եկեղեցու պաշտոնյաներն ու ծիսական լեզուն ասորերենն է (Ք. հ. 3-4-րդ դդ.):

գ) Մատենագրական շրջան, երբ Եղեհիայի դպրոցում ուսանելու են գնում հայ երիտասարդները, և ասորական եկեղեցական գրականության կարևոր գործերը թարգմանվում են հայերեն (4-5 դդ.):

դ) Անկման շրջան: Այս փուլում ասորիները, հայերի հետ ազգային, կրոնական սերտ հարաբերությունների մեջ գտնվելով, ակնկալում են հայերի հովանավորությունն ու պաշտպանությունը:

Ըստ Հ. Հյուբշմանի և Հ. Աճառյանի՝ հայ-արամեական լեզվական հարաբերությունները սահմանափակվում են միայն հայ-ասորականով, սակայն Գ. Ջահուկյանը հատկապես նշում է արևմտյան բարբառներին հարող «թագավորական արամեերենի»՝ հայերենի վրա ազդելու հնարավորությունը՝ նկատի ունենալով մաս պարսկական պետության մեջ նրա կատարած դերը: Պատմական-քաղաքական իրադարձություններից ելնելով՝ հայագետը հայ-արամեական հարաբերությունների երեք հիմնական փուլ է տարբերում՝ ա) ընդհանուր արամեական, մասնավորապես՝ արևմտարամեական ազդեցության փուլ (Ք.ա. 6-րդ դարից մինչև Ք.ա. 4-3-րդ դդ.), բ) Հայ-ասորական էթնիկական փուլ (Ք.ա. 2-րդ դարից մինչև Ք. հ. 2-րդ դ.), երբ հայերի և ասորիների շփումը տեղի է ունենում աշխարհագրական և հարևանության և քաղաքական սերտ հարաբերությունների պայմաններում: Օսրոյենի պետության մեջ մեծաթիվ էին հայերը, Հայաստանի հարավային շրջաններում՝ ասորիները, գ) ասորական կրոնաքաղաքական և դպրոցական ազդեցության շրջան (3-4-րդ դդ.):

Հայ գրերի գյուտից հետո ասորերենի ազդեցությունը տեղի է ունենում մատենագրական ճանապարհով՝ ասորերենից կատարված թարգմանությունների միջոցով:

Հ. Հյուբշմանը հիմնականում վերլուծության է ենթարկել 5-8-րդ դարերի ասորական փոխառությունները՝ չբացառելով դրանից ավելի վաղ կատարված փոխառությունների հնարավորությունը, բայց չնչին քանակով: Նա աղբյուրների առումով գուգահեռ է անցկացնում ասորական և հունական փոխառությունների միջև. «Ասորական և հունական կրթօջախներում (Եդեսիա և այլն) ուսանում էին ուսման ծախքով և ջերմեռանդ հայ հոգևորականները, ասորիներն ու հույները Հայաստան էին գալիս և այնտեղ քարոզում քրիստոնեություն, և V-VII դարերում ասորերենից և հունարենից բազմաթիվ աշխատություններ թարգմանվեցին հայերեն: Ընդհանրապես այն ազդեցության, որ ասորիները ունեցան հայերի վրա, բավական մեծ քանակությամբ ասորական բառեր մտան հայերեն, ըստ

որում, ինչպես առօրյա-խոսակցական, այնպես էլ այնպիսիները, որոնք միայն գիտական-գրքային լեզվին են պատկանում»¹⁴⁹:

Վաղ արամեական փոխառություններն են՝ *բարկ* «կայծակ», *բերդ, գաղոք* (գաղթ, գաղթել), *գուք, դար* «դարաշրջան», *բանգար* «վաճառական», *խմոր* (խմեալ «խմորված», *անխում* «չխմորված»), *խոռ* «ծակ, փոս, խոռոչ», *կացին, կուպր, հաղթ-ք, հաշիւ, շէք, ջիւք, մագաղաթ, մանգաղ, մաշկ, մաքս, շաւիղ, շղթայ, սակուր* (սակր) «ռազմատապար», *ցեց, քանքար, քնար...* (ընդամենը՝ 26 բառ):

Բուն ասորական փոխառություններն են՝ *աբեղայ, ադեն* (ադին) «եղեմ, դրախտ», *առնէլ, արսոր, բասրել* (բասիր), *գոյգ, գոպայ* «ծոթրինական երաժշտական», *բարգման, բարշիշ* «մի տեսակ թանկագին քար», *լումայ, խանչարուր, խանութ* (հանութ), *խարամանի* (խարամայնի, *խարամուն, հարամանի*) «ղև, սատանա, չար օձ», *խարքալ*-ել «մաղել. տակնովրաւանել, վնասել, վտանգել», *խ(ի)լայ* «պարզաւոր զգեստ. կանացի շոր», *խլուրդ, ծարիր* (ծարոյր) «աչքի սև ներկ», *ծում, ծրար* «կապոց. կծիկ. քսակ. ուշ՝ ծրար», *կաթսայ* (կալոսայ), *հեզ* «վանկ», *հեզենայ* «գիր, այբուբեն», *հեթանոս, հոփորոյայ* «ճարտասան, հռետոր», *հրեայ, չանչախարիթ* «մուգ, սև, (մուգ) կարմիր. մուր», *դե(ա)կ, մանանայ, մաշկն, մծղենայ* «մի աղանդ», *մորակ, մաշիհ* «մանր աղացած՝ նուրբ ալյուր», *շաբաթ, շամփուր, շափիղայ* (շափիղայ, շափիլայ), *շեփորայ* (շիփորայ), *ուրբաթ, պախրէ* (ուշ՝ պախրայ), *ռ(ա)բունայ* «գրավական, ավանդ», *սալանայ, սափր*-ել, *սկահ* (սկիհ), *սուսեր, սրիկայ, սրո(վ)քէ* (ձևափոխված՝ քերովքէ-ի մնանակությամբ «մի հրեշտակադաս»), *տղայ, փեզանայ* (փեզենայ) «մի տեսակ բույս՝ սատափ», *փիլիսոփայ, փրկ-ել, փրկան-ք, քահանայ, քաղղեայ, քանոն* (քանոն), *քարոզ* «մունետիկ, երաժիշտ. քարոզ», *քաշ* «արու այծ», *քուրայ, քուրմ...* (ընդամենը՝ 92 բառ):

Արամեաստրական փոխառությունները բաժանվում են հետևյալ իմաստային խմբերի (վաղ արամեական փոխառությունները առանձնացվում են աստղանիշով)՝

¹⁴⁹ Հ. Հյուբշման, նշվ. աշխ., էջ 264:

Ա. Ֆիզիկական աշխարհ՝ քարշիշ «թանկագին քար», շափիղայ «թանկագին քար», բարկ «կայծակ», սիւք, տեղ (*տեղում* իմաստով) և այլն:

Բ. Մարդկություն՝ սեռ, տարիք, ընտանեկան հարաբերություն՝ հրեայ, տղայ:

Գ. Կենդանիներ՝ պախրէ «տավար», ամարու «գառնուկ», քաւշ «արու այծ», առնէտ, խլուրդ, կատու, կաքաւ, ջալլամն, հաղբ-ք (խաղբ-ք) «թակարդ, թակարդի թոկ», ցեց և այլն:

Դ. Մարմնի մասեր, մարմնական գործառնություններ և պայմաններ՝ մաշկ, մարսել, շալակ, շէք:

Ե. Ուտելիք և խմելիք, կերակրի պատրաստում, ամանեղեն՝ մանա-նայ, խմոր, մաշիի «նուրբ ալյուր», ձէթ, խաւիժ, շամփուր, ապուղայ «ձեթի տիկ», կաթսայ, սկահ (սկիհ) «բաժակ», կթղայ, կողով և այլն:

Զ. Հագուստ, հարդարանք՝ ամղան «վերարկու», խ(ի)լայ «պարզև տրված զգեստ», քուսիթայ «կրոնավորի գլխարկ», խանձարուր, գուլ-պայ, սափրել, ծարիր «աչքի սև ներկ», շպար և այլն:

Է. Շինություն, շենքի մասեր՝ ագուգայ, բուրգն, գուռն (*ավագան*) խանութ, բերդ և այլն,

Ը. Երկրագործություն, բուսականություն՝ մանգաղ, գաղիշ «դեզ (ցորենի, խոտի)», խարբալ-ել «մաղել», զոպայ «ծոթրինակերպ մի բույս», տերեւ, կեղեւ, փեզանայ (փեզենայ) «սատափ» և այլն:

Թ. Արհեստներ և արվեստներ, համապատասխան գործիքներ, նյութեր՝ խարտել, շղթայ, ծրար «կապոց, կծիկ», կացին, մախաթ, մտրակ, կուպր, ձիւթ, քուրայ, և այլն:

Ժ. Շարժում և տեղափոխություն, փոխադրում, նավագնացություն՝ շալիղ, պողոտայ, սեռն «առանցք», կարկուրայ «նավակ», դե(ա)կ և այլն:

ԺԱ. Ունեցվածք, սեփականություն և առևտուր՝ լումայ, քանքար, հաշիւ, ռ(ա)բունայ, թանգար «վաճառական», խանութ (հանութ) մամո-նայ և այլն:

ԺԲ. Տարածական հարաբերություններ, տեղ, ձև, չափ՝ գուր, խոռ (*ծակ, փոս*), դարգ «կարգ, շարք» և այլն,

ԺԳ. Քանակ և թիվ՝ գոյգ:

ԺԴ. Ժամանակ՝ դար, (երկու-, երեք-, չորեք-, հինգ-) շաբաթ(ի), ուր-բաթ:

ԺԵ. Ձգացմունք. խառնվածքային, բարոյական և գեղագիտական ըմբռնումներ՝ տառապել, փրկել, փարատել, թոհուրոհ, սրիկայ, բասր-ել (բասիր) «պարսավել, անարգել»:

ԺԶ. Մտածողություն, միտք՝ փիլիսոփայ:

ԺԷ. Չայնական արտահայտություն, խոսք. ընթերցանություն և գիր՝ շեփոր(այ), ծնծղայ, քնար, թարգման, հռիտորայ, հեգ «վանկ», մագաղաթ (*գիրք*), քարտեզ և այլն:

ԺԸ. Պետական, քաղաքական, տնտեսական հարաբերություններ, աստիճանակարգություն՝ ամիրայ, կոմս, մաքս և այլն:

ԺԹ. Ռազմական գործ՝ սակ(ո)ր «ռազմատապար», խարբ «սուր, թուր», սուսեր, շեղբ, սոին և այլն:

Ի. Օրենք՝ արքտր-ք, գաղութ (գաղթ), քուեայ/ քուէ և այլն:

ԻԱ. Կրոն և նախապաշարմունք՝ արեղայ, քահանայ, քուրմ, քարոզ, ծոմ, սրո(վ)բէ, քերովբէ, սատանայ, խ(հ)արամանի, հեթանոս, քաղդեայ (քաղեայ) «հմայող, գուշակ» և այլն:

Արամեաստրական այս փոխառությունները վերաբերում են գրեթե բոլոր հիմնական իմաստային խմբերին, չունենք միայն աստրական փոխառյալ դերանուններ կամ սպասարկու բառեր, բայց շատ խմբեր ներկայացված են սակավաթիվ արմատներով, որոնց մի մասն աստիճանաբար դուրս է մղվել հայերենի բառապաշարից: Իմաստային (թեմատիկ) խմբերից ավելի բազմաճյուղում են քաղաքակրթական-մշակութային և կրոնական բնագավառներին վերաբերող հասկացությունները, օրինակ՝ ուտելիքի, հագուստեղենի, արհեստագործության, առևտրի, գրի և գրականության, ինչպես նաև ժամանակի հետ կապված անվանումները: Սակավաթիվ են ֆիզիկական աշխարհի, մարդկային տարիքի, մարմնի մասերի, բնականության, տարածական հարաբերությունների, քանակի ու թվի, հոգեկան աշխարհի, նաև հասարակական հարաբերությունների, ռազմական գործի և օրենքի հետ կապված բառերն ու եզրույթները, որոնք հիմնականում բնիկ են կամ իրանական փոխառություններ են: Համեմատաբար մեծաթիվ են

կրոնի, տոմարի և գրի հետ կապված անվանումները, որոնք ուշ շրջանի փոխառություններ են՝ կապված քրիստոնեության մուտքի ու Հայաստանում գործող ասորական դպրոցների հետ: Ժամանակագրական առումով ուշ շրջանից են մաս գրի և կրոնի հետ կապված անվանումները, իսկ այն բառերը, որոնք վերաբերում են արհեստներին, ռազմական գործին, ֆիզիկական գործողություններին, ուտելիքին, կենդանիներին և ընդհանրապես՝ կենցաղին, վաղ շրջանի փոխառություններ են:

ԱՍՈՐԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՆՉՅՈՒՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գերմանացի ականավոր հայագետ Հ. Հյուբշմանն իր «Հայերենի քերականության» մեջ քննել է ասորական փոխառությունների հնչյունական կապերը և ցույց տվել իրար համապատասխանող հնչյունները, ինչպես մաս որոշ կրկնակ բաղաձայնների կրճատ՝ մեկ բաղաձայնով փոխառյալ ձևերը: Այսպես, ասորերենում առկա կրկնակ բաղաձայնները հայերենում կարող են փոխարինվել մեկ բաղաձայնով, օրինակ՝ ասոր. **bb**-ն > հայ. **բ**-ով՝ *գուբ, շաբաթ*, ասոր. **nn**-ն > հայ. **ն**-ով՝ *քնար, շուշան*, ասոր. **pp**-ն > **փ**-ով՝ *շափիղայ, շոշիլայ, սափրեն*, ասոր. **qq**-ն > **ք**-ով՝ *կաքա*: Կան փոխառյալ բառեր, որտեղ կրկնակ բաղաձայնը փոխարինվել է ռնգային+պարզ բաղաձայնով՝ ասոր. *taggārā* > հայ. *թանգար* «վաճառական», ասոր. *magglā* > հայ. *մանգաղ*, ասոր. *kakkā* > հայ. *քանքար* և այլն: Որոշ հնչյունակապակցություններ դրափոխվել կամ այլ փոփոխությունների են ենթարկվել՝ *մր* > *մ*, *վլ* > *ղբ* (քուրմ, հաղբ-ք) և այլն:

Չույզ բաղաձայններից առաջինի՝ ռնգայինով փոխարինվելու (*gg* > *նգ*) լեզվական երևույթը անսովոր է հայերենում: Հիշյալ բառերը, ըստ Հ. Հյուբշմանի և նրա հետևորդ Հ. Աճառյանի, նախապես ռնգային ձև են ունեցել, այսինքն՝ *taggārā*-ն սկզբնապես ունեցել է **tangārā*, *magglā*-ն՝ **mangālā*, *kakkālā*-ն՝ *kankālā* ձևերը:

Հայերենը ասորերեն **w, ɣ, δ, í, τ** շնչեղ հնչյունները փոխարինում է **բ, գ, դ, փ, ք** պայթականներով, երբեմն **w, f** հնչյունները՝ **ւ**-ով, և **ք**-ով՝ *կաքաւ, հաշիւ, շափիղ, քաւշ, կեղեւ, տերեւ, հրեայ, շամփուր, ծարիր*:

Ասորերենում գոյականների երեք ձև է տարբերակված՝ բացարձակ, սաստկական, բաղադրյալ: Բացարձակ է համարվում բառի սկզբնաձևը: Սաստկական են համարվում **ā**-ով վերջացող գոյականները. **ā**-ն ավելանում է բառի զրո ձևին: Իսկ բաղադրյալ տեսակն այս երկուսի միախառն ձևն է: Հին ասորերեն գրական լեզվում սաստկականը բառի սկզբնաձևն է համարվել, իսկ բարբառների մեջ **ā** վերջավորությունը՝ հոդ, որը գրական լեզվում արդեն կորցրել է հոդի արժեքը: Սակայն ոչ բոլոր գոյականներն են, որ գործածվել են հիշյալ երեք ձևով: Կան այնպիսիք, որ միայն երկու, շատ դեպքերում առավելապես մեկ սաստկական ձևով են հանդես եկել: Օրինակ՝ *գաղութ* բառը ունի երեք ձև՝ բաց. *gālū*, սաստկ. *gālā*, բաղադր.՝ *gālū*, իսկ *տերեւ*-ը՝ երկու՝ բաց. *teref*, սաստկ. *tarpā*: Այս ձևերից փոխառվել են հիմնականում **ā**-ով վերջացող սաստկական գոյականները (Ք.հ. 2-5-րդ դդ.)՝ պահպանելով այդ վերջավորությունը (*-այ*), կամ էլ տղելով՝ *աբեղայ, շափիղայ, շոբայ. գաղութ, մաքս, խանութ* և այլն: Բացարձակ ձևերից ծագող բառերը, ըստ Հ. Աճառյանի, նախաքրիստոնեական շրջանի հնագույն փոխառություններ են, դրանք փոքր թիվ են կազմում (*տերեւ, կեղեւ*, ավելի ուշ՝ բրբռ. *կլեայ*):

Նշված օրինաչափություններից շեղվող ասորական փոխառություններ էլ կան, այդ շեղումների միջոցով երբեմն հնարավոր է բացահայտել տվյալ փոխառությունների աղբյուրը և ժամանակը: Այսպես օրինակ՝ ասորական **z, x, s, k, p** հնչյունները սովորաբար փոխարինվում են հայերեն **զ, խ, ս, ք, փ** հնչյուններով, սակայն մի շարք բառերում դրանք փոխարինվել են **ձ**-ով՝ *ձէք, հ*-ով կամ **կ**-ով՝ *հաշիւ, հաղք, կացին, շ*-ով՝ *շափիղայ, մաշար, պ*-ով՝ *կուպր, շպար*: Ենթադրվում է, որ *ձէք*-ը փոխառվել է իրաներենի միջնորոշյամբ, քանի որ իրանական **z**-ն հայերենում դառնում է **ձ**՝ *հանդերձ, վարձ*:

ԱՍՈՐԱԿԱՆ ՓՈԽԱՌՅԱԼ ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԸ

Հայերի անվանադրման խնդրում ասորերենն աննշան ազդեցություն է ունեցել հունարենի համեմատ: Հնագույն ժամանակներում հիշատակված արամեական կամ ասորական փոխառյալ անունները տարածված են եղել որոշ հայ ազնվական ընտանիքների, ինչպես նաև հոգևորականների շրջանակներում, հասարակ ժողովրդի համար այդ անունները խորթ և օտար էին: Բերենք օրինակներ՝ ա) հայ ազնվականներ՝ *Աբա Գնունի, Գաղիշո Խորիտռունի, Մար իշխան Մեծ Ծովքեցի, Յովնան կամ Յոհան՝ Ռափսոնյան րնից, Շաբաթ (Շամբիթ) իշխան Գողթան, Շմաուն Անձևացի, Սարգիս Դիմաքսյան, ք) հոգևորականներ՝ Եզր կաթողիկոս, Եղիշա եպիսկոպոս Ամսարունի, Մուշէ եպիսկոպոս Արծրունի և այլն:*

Աստվածաշնչյան անունները հայ թարգմանիչները առավելապես հունական և ոչ թե ասորական ձևերից են փոխառել, թեև երբեմն ունենք նաև ասորերենի միջնորդությամբ փոխառված սուրբգրային անուններ:

Գրական տարբեր աղբյուրներից մեզ ավանդված և հայերենի տարբեր շրջաններում վկայված ասորական անձնանուններից հիշատակենք հետևյալները՝ *Աբգար, Արշամ, Աբրահամ, Ահարոն, Իսահակ, Բարդաժան, Բարշամ, Գաղիշոյ, Եզր, Եղիշայ, Եփրեմ, Հաբել, Մարութ, Մուշէ, Յովնան, Շաբաթ, Շաղեմ, Շաղիւրայ, Շամիրամ, Շամբին, Շաւուդ/Սաւուդ, Շիդայ, Շմաուն, Շմոէլ/Սամւէլ, Շուշան, Սարգիս:* Տեղանուններն ավելի սակավաթիվ են՝ *Յորդանան, Մծբին, Հանձիթ, Ծովք, Ուռհայ, Նինուէ, Ծաղէք:*

ԵՐԲԱՅԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Եբրայերենը, որ պատկանում է սեմաքամյան ընտանիքի սեմական ճյուղի քանանական խմբին, հին հրեաների լեզուն է: Չափազանց մոտ լինելով փյունիկերենին՝ նրա հետ հաճախ մեկ լեզվի բարբառ էր համարվում: Հրեական գիրը կազմավորվել է փյունիկյան-քանանական

հիմքի վրա: Ք. ա. II-I հազարամյակներում եբրայերենով խոսել են Պաղեստինի հրեաները: Հնագույն հուշարձանը Հին կտակարանն է, որի տեքստերի մի մասը վերաբերում է Ք. ա. XIII-XII դդ.: Գրավոր աղբյուրները, արձանագրությունները ավանդված են Ք.ա. IX դարից («Հողագործի օրացույց»): Ք.ա. VI-V դարերից խոսակցական եբրայերենը աստիճանաբար դուրս է մղվել արամեերենի կողմից և վերածվել մեռած լեզվի: Նույն շրջանից ավանդվել են բանահյուսական, կրոնական և իրավական բնույթի ստեղծագործություններ: Ք.ա. III-II դդ., փոխառնելով արամեական գիրը, տառերի չափսերը հավասարեցրել են և քառակուսի տեսք տվել դրանց: Այսպես ստեղծվել է հրեական «քառակուսի գիրը»: Հին հրեերենը, որն այժմ պետական լեզու է Իսրայելում, կոչվում է նաև *իվրիտ*, ունի քառակուսի գրատեսակներով այբուբեն: Գիրը սկզբնապես բաղաձայնական էր, ձայնավորների համար տառեր չկային: Հետագայում որոշ բաղաձայն տառանշաններ գործածվել են որպես ձայնավոր, իսկ VII-VIII դդ. սկսել են կիրառվել հնչույթատարբերակիչ (դիակրիտիկ) նշաններ:

Հայերը եբրայեցիների հետ շփման մեջ են եղել Տիգրան Մեծի օրոք, որի կողմից նվաճվեց Հրեաստանը և կարճ ժամանակ հայոց պետության հպատակության տակ մնաց: Հայաստանի զանազան քաղաքներում բնակություն հաստատեցին Պաղեստինից գերի բերված հրեաները, որոնք թվով մույնիսկ գերազանցում էին հայերին: Այս փաստը որոշ չափազանցությամբ հիշատակել է Փ. Բուզանդը իր «Հայոց պատմության» այն դրվագում, որտեղ նկարագրում է պարսիկների արշավանքի ծանր հետևանքները Հայոց աշխարհում. «Եւ յետ այսորիկ եկին ի քաղաքն մեծ յԱրտաշատ, և առին զնա, և կործանեցին զպարիսպ նորա. առին անտի զգանձս մթերեալս՝ որ կային, և գերեցին զամենայն քաղաքն: Եւ խաղացուցին ի յԱրտաշատ ի քաղաքէ ինն հազար տուն երդ Հրեայս, զոր ածեալն էր գերի Տիգրանայ արքայի Արշակունոյ յերկրէն Պաղեստինացոց. և քառասուն հազար երդ Հայ, զոր յԱրտաշատ քաղաքէ խաղացուցին...» (Բուզանդ, 4-րդ, ԾԵ):

Հայաստան բերված այս գերիների հաղորդակցության լեզուն արամեերենն էր (ասորերենը), արամեախոս էին նաև Բաբելոնից Երուսաղեմ

վերադարձած հրեա գերիները: Որպես նվաճյալ ժողովուրդ՝ հրեաները թեև հրաժարվել էին իրենց լեզվից, սակայն այն պահպանել էին եկեղեցական հաղորդակցման համար: Ըստ էության եբրայերենը հայերենի վրա անմիջական ազդեցություն չի ունեցել: Այդ ազդեցությունը թե՛ հայերենի և թե՛ աշխարհի բազմաթիվ այլ ժողովուրդների լեզուների վրա եղել է անուղղակի՝ գրական և կրոնական: Հրեաների ունեցած քաղաքական և տնտեսական դերակատարումը հնագույն և հին ժամանակներում աննշան էր: Տարբեր լեզուներով թարգմանված Հին կտակարանի միջոցով եբրայական բազմաթիվ բառեր փոխառվեցին բոլոր քրիստոնյա, մասամբ նաև մահմեդական ազգերի կողմից: Իսկ որոշ բառեր էլ միջազգայնացվեցին, ինչպես՝ *ամէն*, *ալէլուիա*:

Ըստ մատենագրության՝ Սուրբ գիրքը նախ՝ ասորերենից, ապա՝ հունարենից է հայերեն թարգմանվել եբրայական բնագիր չունենալու պատճառով: Ուստի հայերենի եբրայական փոխառությունները կատարվել են հիմնականում հունարենի միջնորդությամբ: Այսպես, եբրայական այն հնչյունները (հատկապես *g* և *z*), որոնք բացակայում են հունարենում, փոխառյալ բառերում վերածվել են *ս*-ի: Օրինակ՝ *z*-ն դարձել է *ս* *ովսաննա* բառում: Հունարենը ջնջել է նաև եբրայերենի *h* հնչյունը տառադարձման ժամանակ՝ *ալէլուիա* < halelu yāh, *աքքանա* < habāmā, Աննա < Hannā: Հենց հունական սույն տառադարձությամբ էլ եբրայական բառերը մույնությամբ անցել են հայերենին:

Բացի Սուրբ գրքից՝ եբրայական բառերի օրինակներ կան վկայված նաև ինքնուրույն կամ թարգմանական այլ երկերում՝ Եզնիկ Կողբացու, Կյուրեղ Աղեքսանդրացու, Հովհան Ոսկեբերանի, Եփրեմ Ասորու գործերում, ենթադրվում է, որ դրանք ևս փոխառվել են հունարենի միջնորդությամբ: Հ. Աճառյանի բերած տվյալներով՝ Սուրբ գրքի և եբրայական գրականության միջոցով հայերենին անցել են 138 եբրայական բառեր, որոնց ամենատարածվածը մասը (123 բառ)՝ անգործածական են, հայերենին չմերված, իսկ մնացյալը (15 բառ) կրոնի իմաստային դաշտին են պատկանում՝ *ազազայել* «չար ոգի», *ալէլուիա*, *ակքան* «փուշ» (գրական՝ *եկքանիկ*), *ամէն*, *բակեղեթ* «տոպրակ», *բելիար* «սատանա», *բէեղզերուդ* «սատանայապետ», *բոսոր*, *գեհեն*, *եհովա*, *յոբելան*, *ովսաննայ*, *ռաք-*

քի, ռաբբունի, սապրան «հակառակորդ, չարախոս»: Ազգայել-ն ունի նաև *ազգալիլ* բարբառային ձևը, որը տարածված է Լոռիում և Փամբա-կում:

ԵՐՐԱՅԱԿԱՆ ՓՈԽԱՌՅԱԼ ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

Երբայական անձնանունների երկու խումբ կա: Ա) Անուններ, որոնք քեև վկայված են Հին կտակարանում կամ այլ գործերում, սակայն հայե-րի կողմից չեն փոխառվել, և Բ) անուններ, որոնք հայոց լեզվում գործա-ծական են դարձել հատկապես Սուրբ գրքի հունարեն թարգմանության միջոցով: Հ. Աճառյանն առանձնացնում է երբայերենից փոխառյալ 98 անուն: Ընտրողաբար ներկայացնենք այդ անունների ցանկը՝ *Աբխա-ղում, Աբրահամ, Ադամ, Ահարոն, Անանիա, Աննա, Ասքանազ, Բաղդա-սար, Բարթուղիմեոս, Բեթղեհեմ, Բենիամին, Բենիկ, Գաբրիել, Գա-սպար, Գեղեոն, Դանիել, Դաիթ, Եզեկիել, Եղիա, Եղիազար, Եղիասբեթ, Ենովք, Եսայի, Եսթեր, Երեմիա, Եսա, Եփրեմ, Զաքարիա, Էմմանուել, Թամար, Թորգոմ, Իսմայել, Իսրայել, Լիա, Հեղի, Մաթուսաղա, Մամբրե, Մանասե, Մանուել, Մարիամ, Միսաթ, Միքայել, Մովսես, Յաբեթ, Յա-կոբ, Յեսու, Յոթ, Յովակիմ, Յովասափ, Յովհաննես, Յովնաթան, Յով-սեփ, Յորդանան, Նազարեթ, Նոյ, Ռափայել, Ռեբեկա, Ռուբեն, Սահակ, Սաղաթիել, Սամուել, Սամիսոն, Սառա, Սիմեոն, Սիոն, Սիրաթ* և այլն: Մնացյալ անունները՝ *Աբդիու, Աբեղնագով, Ասանեթ* և այլն, հայերենում չամրակայված անուններ են, ուստի դրանց չենք անդրադառնա:

Բացի վերոհիշյալ անուններից՝ կան մի շարք անուններ էլ, որոնց մուտքը հայերեն կատարվել է Սուրբ գրքի առաջին՝ աստրական թարգ-մանության միջոցով: Քանի որ Հայաստանում քրիստոնեության քարոզ-չությանը հայտնի առաջին հոգևորական գործիչները ասորի էին, ուստի Սուրբ գրքի թարգմանության լեզուն էլ դարձավ ասորերենը, որի միջնոր-դությամբ փոխառվեցին քրիստոնեական-եբրայական այնպիսի անուն-ներ, ինչպիսիք են՝ *Դկզաթ, Եղիշե, Ծուր, Մուշե, Շեմ, Շամբին, Շմաուն, Ոռհայ* (Եղեսիա) և այլն: Որոշ անունների աստրական ձևերը՝ *Աբեշա-*

դովմ, Եղիշաբեք, Յիշով, Շամշոն, Հաբէլ, Շաւուդ, Շմուէլ և այլն, ջնջվել են, սակայն պահպանվել են սրանց գուգահեռ հունական ձևերը՝ *Աքիստ-դով, Եղիսաբեք, Յեսու, Սամփսոն, Աբէլ, Սաւուդ, Սամուէլ*: Հիշյալ ասորական ձևերից պահպանվել են միայն *Եղիշէ* և *Շամաոն* անունները: Փոխառության ընթացքում անվան սկզբնաձևից կարող են ծագել նրա հնչյունական տարբերակները, որոնք երբեմն բառային ինքնությունություն են ձեռք բերում, այսպես օրինակ՝ *Եղիսաբեք* անունը եվրոպական լեզուներում (իսպաներեն, ֆրանսերեն, անգլերեն), ռուսերենում, ինչպես նաև հայերենում ունի գուգաձևություններ՝ *Բզաբեկլա, Ելիզավետա, Լիզա, Բելա, Չապել, Սաբեք, Բեքքի* և այլն:

Այսպիսով՝ հրեաների լեզվական ազդեցությունը աշխարհի մեծագույն մասի վրա կրոնական բնույթ է կրել, Աստվածաշունչը՝ Հին կտակարանի հատվածով, դարձավ և՛ քրիստոնեության, և մահմեդականության սուրբ գիրքը՝ թարգմանվելով բազմաթիվ լեզուներով: Հայերենի վրա եբրայերենի ուղղակի ազդեցությանը խոչընդոտող պայման է եղել աշխարհագրական տարբեր մայրցամաքներում երկու ժողովուրդների ապրելու և գործելու հանգամանքը: Հայերի և հրեաների քաղաքական, պատմական կամ տնտեսական շփումները միջնորդավորված են եղել, ուստի եբրայերենի ազդեցությունը հայերենի վրա էական չի եղել:

ԿՈՎԿԱՍՅԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քանի որ կովկասյան ժողովուրդները (աղվաններն ու վրացիները) միշտ եղել են հայերի հյուսիսային հարևանները, ուստի հայերենը փոխառություններ է կատարել նաև կովկասյան լեզուներից: Սակայն ավելի բարձր մշակույթ ունեցող հայերը վրացիների, աղվանների և մյուսների համեմատությամբ միշտ էլ եղել են ավելի շուտ փոխաստու, քան փոխառու: Այսպես, վրացերենն ունի հայերեն փոխառությունների մի մեծ թվաքանակ, իսկ հայերենին անցած վրացերեն բառերը, ընդհակառակը, թվով սահմանափակ են:

Կովկասյան լեզուները բաժանվում են երեք լեզվաճյուղի՝ հարավկովկասյան կամ քարթվելական (երբեմն՝ իբերական), արևմտակովկասյան կամ արխագ-ադրդեական, արևելակովկասյան կամ նախյան-դաղստանյան, որոնց միջև ոչ թե մերձավոր, այլ հեռավոր (նոստրատիկ) ցեղակցական կապեր են եղել:

Հայերենը և քարթվելական լեզուները

Քարթվելական կամ հարավկովկասյան լեզվաճյուղին են պատկանում վրացերենը, զաներենը և սվաներենը: Ջաներենն ունի երկու հիմնական բարբառ՝ ճաներենը կամ լագերենը, որը հիմնականում տարածված է թուրքական Լազիստանում (մասամբ Վրաստանի Հանրապետությունում), և մեգրերենը, որը կիրառվում է Վրաստանի Հանրապետության արևմտյան շրջաններում: Այս բարբառներն ունեն բավականին խոր տարբերություններ, որի պատճառով երբեմն գնահատվում են որպես առանձին լեզուներ: Սվաներենը բավական տարբերվում է վրացերենից և զաներենից, կիրառվում է Վրաստանի Հանրապետության հյուսիս-արևմուտքում:

Վրացերենն ունի V դարից վկայված գրավոր պատմություն՝ երկու շրջաններով. V-XI դդ. ընկած շրջանը համարվում է հին, հաջորդողը՝ նոր վրացերենի շրջան: Ունի շուրջ մեկուկես տասնյակ բարբառներ՝ քարթլյան, կախեթյան, փշավյան, խեսուրյան, թուշյան, իմերեթական, գուրիական և այլն: Բաղաձայնների և ձայնավորների հարաբերությամբ վրացերենը և զաներենը հայերենից քիչ են տարբերվում: Նրանք ունեն հինգ ձայնավոր (a, e, i, o, u) և մոտ երեք տասնյակ բաղաձայն:

Հայ-քարթվելական գուգադիպումները Գ. Ջահուկյանը բաժանում է երկու խմբի՝ բնիկ և ձեռքբերովի: Առաջին խմբին պատկանում են նախ հեռավոր ցեղակցության՝ նոստրատիկ ընդհանրության միավորները, երկրորդ՝ բնաձայնությունները, ձայնարկություններն ու մանկական բառերը. պայմանականորեն այս խմբում են մաս պատահական գուգադիպումները:

Այսպես՝ *դա, ադ, դնե, եդն* «եղնիկ, եղջերու». *իւ, ինչ, լմե, լմմե, նա, այն, րուրն, րրուն* «կատար», *րի* «մեծ», *սիրր, կեր/կուր/կոկորդ*,

տալ «կին ազգական», *փերթ* «կտոր», *քերեկ*, *քերթել* բառերը համարվում են նոստրատիկ բնույթի ընդհանրություններ, իսկ *բզեզ*, *բզզալ*, *բու*, *կկու*, *կաքալ*, *կռունկ*, *յոպոպ*, *կռինչ*, *կռկռալ*, *ծիւ*, *ծվալ*, *ծվծվալ*, *փափա* «ուտելիք», *փուք*, *փուչ*, *փչել* և այլ բառերը բնածայնական ընդհանրություններ են, դրանց մի մասը առկա էր դեռ հնդեվրոպական նախալեզվում:

Մեծ թիվ են կազմում իրարից (անմիջաբար կամ միջնորդավորված) և երկրորդ աղբյուրից կատարած փոխառությունները: Հայերենը և կովկասյան լեզուները փոխառություններ են կատարել ուրարտերենից, ինչպես նաև իրանական լեզուներից, ասորերենից և հունարենից: Վրացերենում վկայված փոխառյալ որոշ բառերի համեմատությունը դրանց հայերեն հնչյունական տարբերակների հետ ցույց է տալիս, որ վերը նշված լեզուներից քարթվելական լեզուների կատարած փոխառությունների որոշ մասը հայերենի միջնորդությամբ է կատարվել:

Հայերենի և կովկասյան լեզուների զուգադիպումների ընդհանուր քանակը, ըստ Հ. Աճառյանի, շուրջ 900 է, որոնց առավելագույն մասը հայ-քարթվելականն է: Այս երկու ժողովուրդները, քաղաքական ու մշակութային սերտ կապերի մեջ լինելով, խաղաղ համակեցությամբ ապրելով, մեծ թվով փոխառություններ են կատարել միմյանցից, ընդ որում՝ հատկապես մեծաթիվ են վրացերենի՝ հայերենից կատարած փոխառությունները:

Հ. Աճառյանը իր «Հայոց լեզվի պատմության» 1-ին հատորում ներկայացնում է հայերենի՝ քարթվելական լեզուներից կատարած (թվով՝ 47) հնագույն փոխառությունները, որոնց մի մասն այսօր արդեն բնիկ է համարվում, ինչպես՝ *աղբ*, *գուքայ*, *գութան*, *խում*, *խմեկ*, *վաղ*, *վաղիւ*, *ծանր*: Հ. Աճառյանի կողմից քարթվելական համարված փոխառություններից նշենք հետևյալները՝ *անթեղ*, *բակ*, *բոզ*, *զգուեկ*, *զր-ոյց*, *լակոյր*, *խամուր*, *խամրիկ*, *խծուծ* (*կանեփի*), *խոճ*(*կոր*), *խոփ*, *խռովել*, *ծիր*, *ծմել* «սպանախ», *ծուխ*, *կոճան* «խոզ», *ճանճ*, *ծիպո*, *ճկոյթ*, *ճղոպուր(ր)* «ընկոյզ», *շլան* «մոխիր», *շմորիլ* «նեխվել», *մշակ*, *ոչխար*, *չանչ*, *պոլոճ*, *ջախեկ*, *ջախջախեկ*, *սահմի* (ամսանուն), *տաղախ* «ցեխ», *ցմախ* «բույս», *փարախ*, *փոշկ* «թրիք», *փուխր*, *փխրել* և այլն:

Արդի լեզվաբանության տվյալների հիման վրա Գ. Ջահուկյանը քարթվելական փոխառությունների մի մասի համար՝ *աղբ, անթեղ, գաւառ, գդակ, գութան (գութայ), խմել, խռով, ծանր, ծիծ - ծուծ, ծիր, ծմել - ծիմել - զիմել, ծուխ, ճողոպուր, մակ, մշակ - մշակել, շլան, պոլոճ, ջախել - ջախշախել, վաղ - վաղիւ - վաղվաղել, փշուր - փշրել, փռշի, փռշկ, փուխր - փխրել*, ենթադրում է այլ ծագում՝ ուրարտական, խեթական, իրանական՝ դիտողություններ անելով Հ. Աճառյանի ցանկի յուրաքանչյուր բառի հավանական ծագման վերաբերյալ: Այսպես, ըստ Գ. Ջահուկյանի, իրանական աղբյուրից են *գդակ* (հմմտ. -ակ), *խռով, խում* (խմել), *մշակ* (մշակել) բառերը: *Աղբ, անթեղ (ան+թեղ), ծանր* (հայերենի ր/ն հերթագայությունը հին հնդեվրոպական օրինաչափ երևույթ է), *ծիծ* (ունի *տիտ* տարբերակը) բառերը գալիս են հնդեվրոպական աղբյուրից, և սրանց նմանությունը քարթվելականի հետ պատահական է: Իսկ *գութան (գութայ), ծիր, վաղ, վաղիւ, վաղվաղել* «շտապել», *պոլոճ* «միջատ» (բարբառային տարբերակներն են՝ *պոլոճ, բողոճ, բոլոճ, պլոճ, բղոճ* և այլն) բառերի համար մի ընդհանուր աղբյուր է ենթադրվում՝ ուրարտերենը: *Ճողոպուր*-ը հանդիպում է Երեմիա Մեղրեցու բառարանում և բարբառներում, ուստի այն կարելի է հանել հայերենի՝ քարթվելական լեզուներից կատարած հին փոխառությունների ցանկից: Կասկածելի է նաև *փշուր* (փշրել), *փռշի, փռշկ* «թիք», *փուխր* (փխրել) բառերի՝ քարթվելական աղբյուրից ծագած լինելը, դրանց համար վերականգնվում են արևմտակովկասյան, ինչպես նաև ուրարտական նախաձևեր, իսկ *փշուր*-ի դեպքում՝ խեթա-լուվական գուգահեռներ և այլն¹⁵⁰:

Հիշյալ դիտարկումները Գ. Ջահուկյանին հիմք են տվել քարթվելական լեզուներից հայերենի կատարված 29 փոխառություն առանձնացնելու, որոնցից տասը տարբեր աղբյուրներից են և պատկանում են հնագույն շերտին՝ *լակուր, խամուր* (խամրիլ), *խծուծ* «կանեփի մնացորդ», *խզուզ* «կալի մնացորդ», *խծծել* «կտրտել պատառտտել», *խոճ* - «խոզ» (խոճ-կոր), *խրաւ* «պատի վրա բացվածք», *կոճան* «խոզ», *ճանճ, ճանջ, ճիպոն* (ավելի ուշ՝ ճպուռ) «աչքի կեղտ» (բրբռ. ծպուր «ոչխարի աղբ»),

¹⁵⁰ Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, էջ 586-599:

ճկոյթ (ծկոյթ), *ոչխար*: Մնացած տասնինը բառերը վրացերենից են անցել հայերենին:

Քարթվելական փոխառությունները բաշխվում են իմաստային հետևյալ խմբերի.

Ա. Ֆիզիկական աշխարհ՝ տաղալս, աբեթ, ծիւ:

Բ. Կենդանիներ՝ ոչխար, խոճ-, կոճան, կինճ, լակոտ, ճանճ (ճանջ):

Գ. Մարմնի մասեր. մարմնական գործառություններ և պայմաններ՝ կրճտել, ճկոյթ, ճիպը (ճպոտ):

Դ. Բնակարան, տուն, կահկարասի՝ բակ:

Ե. Երկրագործություն, բուսականություն՝ խոփ, խծուծ (խզուզ), ցմախ, չանչ:

Զ. Ժամանակ՝ հոռի, սահմի:

Է. Զգայական ընկալումներ՝ շմորիլ, ծանր, խամուր:

Ը. Զգացմունք՝ զգուել, խտիղ:

Թ. Մտածողություն, միտք՝ շղու(աբարոյ) «խենթ»:

Ժ. Զայնական արտահայտություն, խոսք՝ զրոյց:

ԺԱ. Հասարակական հարբերություններ՝ բոզ «պռռնիկ»:

Կան ավելի ուշ ավանդված մի քանի բառեր ևս, որոնք, ըստ Գ. Ջահուկյանի, հնարավոր է փոխառված լինեն հայերենի զարգացման միջին շրջանից ավելի վաղ: Այդ բառերից են՝ բոզի «արեգակ», մոծիր (մոճիր, մճիր, մծիր) «մոխիր», բարբառային են՝ գջլել «պոկել, պատռել», ճխլել (ավելի ուշ՝ ճխմել), քարդիկար «գարի և ցորեն խառնված» և այլն:

Հայերենը և արխագ-աղղեական լեզուները

Արխագ-աղղեական կամ արևմտակովկասյան լեզվաընտանիքի մեջ մտնում են արխագերենը, արագիներենը, ուբիխերենը, աղղերենը և կաբարդիներենը: Մերձավոր ցեղակիցներ են արխագերենն ու արագիներենը և աղղերենն ու կաբարդիներենը: Սրանց նկատմամբ միջակա դիրք է գրավում ուբիխերենը:

Արևմտակովկասյան լեզուները տարածված են Սև ծովից հյուսիս-արևելք ընկած տարածաշրջանում՝ Արխագիայի ու Կաբարդինա-Բալ-

կարիայի Հանրապետություններում և Աղբյուրայում ու Կարաչայ-Չերքեզիայում: Ուրիխերենով մոտ երկու տասնյակ խոսողներ են բնակվում Թուրքիայում:

Հնչյունական առումով արխազ-աղբյուրական լեզուներն աչքի են ընկնում բաղաձայնների հարստությամբ և ձայնավորների աղքատությամբ (ընդամենը 2-3): Աշխարհում ամենահարուստ բաղաձայնական կազմ ունեցող լեզուն ուրիխերենն է (82): Բաղաձայնների ամենավորքը քանակն ունի կաբարդիներենը՝ 47, որը, ի տարբերություն մյուսների, ունի 7 ձայնավոր:

Արխազ-աղբյուրական լեզուները հայերենի հետ շփման մեջ են եղել հին ժամանակներից սկսած: Այդ մասին է խոսում Հայաստանի Aripša քաղաքի անվան -pša-ն, որ համահունչ է աղբյ., կար. *псы* «ջուր» բառին: Կամ Arhita քաղաքանունը, որը կարող է բացատրվել արխազերեն *арха*, արազ. *рхъа* «հարթություն» բառի և տեղանվանակերտ *ita* մասնիկի միջոցով:

Հայերենը արխազ-աղբյուրական փոխառություններ չունի: Այդ լեզուների հետ հայերենն ունի նոստրատիկ և բնաձայնական բնույթի բառային ընդհանրություններ միայն՝ *լակել, մի՛, ածել, աւագ, ընդ, բաց/քանալ, կով, խոզ, սիսեռն, ցախ, չին, չոր, մոծակ, դադո* «հայրիկ», *դադա, դադէ* «քույր», *խոս, խոխոսալ* և այլն:

Ինչպես նկատելի է, եղածներն ընդամենը բառային գուգադիպումներ են: Կան նաև համընկնումներ, որոնք կա՛մ պատահական են, կա՛մ հնդեվրոպական լեզուներից արևմտակովկասյան լեզուների հնագույն փոխառությունների արդյունք:

Այս լեզուների նկատմամբ հայերենը ոչ թե փոխառու, այլ փոխատու լեզու է: *Արծաթ, ափսե, գերի, գիշեր, կակաչ, կիր, որբ* բառերը արխազ-աղբյուրական լեզուներին են անցել հայերենից:

Հայերենը և նախյան-դադստանյան լեզուները

Արևելակովկասյան լեզուների մեջ մտնում են նախյան մեկ և դադստանյան չորս խումբ՝ ավարա-անդի-ցեզյան, լակյան, դարգիա-

կան, լեզգիական: Այս լեզուները տարածված են Չեչեն-Ինգուշեթիայում, Դաղստանում և նրան հարակից որոշ շրջաններում:

Հնչյունական առումով մախյան և ավարա-անդի-ցեզյան լեզուները հարուստ են ձայնավորներով, աղքատ՝ բաղաձայններով, իսկ լեզգիական խմբում՝ ընդհակառակը: Արևելակովկասյան լեզուներն ունեն հարուստ հոլովական համակարգ, դասեր. թաբասարաներենն ունի 48, իսկ լակերեն՝ 40 հոլով: Տարբերակվում են տղամարդկանց, կանանց, կենդանիների և իրերի դասերը:

Արևելակովկասյան լեզուները բաժանվում են հետևյալ խմբերի.

Ա) մախյան խումբ՝ չեչեներեն, ինգուշերեն, բացբիերեն,

Բ) ավարա-անդի-ցեզյան՝ 1) ավարերեն, 2) անդիերեն, բոթլիխերեն, գոլոբերերեն, տինդերեն, կարատերեն, ախվախերեն, չամալերեն, բագուլալերեն, 3) ցեզերեն խվաշերեն, բեժիտերեն, դունգիբերեն, դինուխերեն,

Գ) լակերեն,

Դ) դարգերեն,

Ե) լեզգիերեն, թաբասարաներեն, ագուլերեն, ռուտուլերեն, ցախուրերեն, բուլուխերեն, կրիզերեն, ուտիերեն, հինալուդերեն, արչիերեն:

Հայերենի շփումը տևական ու ուժեղ է եղել հավանաբար լեզգիական խմբին պատկանող աղվաներենի հետ, որի մնացորդը ուտիերենն է: Սակայն աղվաներենի լեզվական մնացորդները սակավաթիվ են, նրանով գրված արձանագրությունները՝ ոչ լիովին ընթեռնելի:

Հայերենի և արևելակովկասյան լեզուների առկա ընդհանրությունները հեռավոր ցեղակցությունը փաստող լեզվամոլուշներ են: Կան մաս հնդեվրոպա-արևելակովկասյան տարածքային կապերով և հնագույն լեզվական շփումներով բացատրվող հայ-արևելակովկասյան բառային գույզադիպումներ: Հնդեվրոպացիների և կովկասյան ժողովուրդների բնակության վայրերի մերձավորության հետևանքով առաջացել են հնդեվրոպա-արևելակովկասյան բառային բազմաթիվ ընդհանրություններ: Այս շարքում տեղ գտած բառերից են՝ *ամիս*, *բարչր*, *գլուխ մեղր*, *մոր/մորենի*, *մառախուղ*, *մռայլ*, *մեղմ/մեղկ*, *յո* «ժխտական ածանց», *լոք* «մեծ քայլ» և այլն:

Հայերենի և արևելակովկասյան լեզուների զուգադիպումների մեջ առանձնանում են նաև բնաձայնություններն ու մանկական բառերը՝ բրբռ. *ապի, ափի, ափո, ափու, բու*, բրբռ. *դադա* «հայրիկ», *թուք, կոքան* «թխական», *ճայ, ճիկ - ճիչ*, ծիծառն, բրբռ. *նան* - նանի, *պագ* - պագանեմ, բրբռ. պաչել, *սարսուռ* և այլն:

Արևելակովկասյան լեզուներից կատարած փոխառությունները հանգամանորեն քննության է ենթարկել նաև Հ. Աճառյանը իր «Հայոց լեզվի պատմության» մեջ՝ այդ փոխառությունների թիվը հասցնելով մինչև 11-ի՝ *աթուր* «ոտք», *արջն* «սև», *արջասպ, աք* «ոտք», *խուր, ճադար, ճայդ* «ցեխ», *մագիլ, մոծակ, ուղի, քած*: Գ. Ջահուկյանը, վերանայելով այս բառերի քննությունը, գտնում է, որ սրանցից *արջն*-ը և *արջասպ*-ի առաջին մասը նախյան լեզուներում բնավ էլ բնիկ չէ, այլ փոխառված է իրանական աղբյուրից, իսկ *մոծակ* բառի կովկասյան լիները կասկածահարույց է: Մի քանի հավանական բառ ավելացնելով՝ հայագետն առաջադրում է հին շրջանի սկզբին ավանդված արևելակովկասյան փոխառությունների հետևյալ ցանկը (16 բառ)՝ իրենց իմաստային խմբերով¹⁵¹.

Ա. ֆիզիկական աշխարհ՝ ու(ղ)խ «հեղեղ»,

Բ. մարդկություն, սեռ, տարիք, ընտանեկան հարաբերություն՝ հարճ,

Գ. կենդանիներ՝ քած, չղջիկ,

Դ. մարմնի մասեր՝ գանգ, կտուց, մագիլ, աթուր, աք, թոք,

Ե. երկրագործություն, բուսականություն՝ խոտ,

Զ. տարածական հարաբերություններ՝ տեղ, ձև, չափ՝ կախ, կից:

Է. զգայական ընկալումներ՝ ծալի, կակուղ,

Ը. տարածքային, հասարակական և քաղաքական բաժանումներ, հասարակական հարաբերություններ՝ գիւղ:

Ավելի ուշ շրջանում ավանդվել են *աքցան, լեկիք* «չղջիկ», *խէզ* «մոլեռ», *կաթել - կաթիլ, ճայդ* «տիղմ» բառերը:

Ինչպես հայերենն է բառեր փոխառել արևելակովկասյան լեզուներից, այնպես էլ վերջիններս են փոխառություններ կատարել հայերենից,

¹⁵¹ Հմմտ. Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 599-615:

հատկապես վրացերենի միջնորդությամբ: Ստորև բերվող բառերի հնարավոր աղբյուր է հանդիսանում հայերենը՝ *ածուխ* (անձող), *անուկ*, *ասր* «բուրդ», *արծաթ*, *արծիս*, *արջառ* (բրբռ. աչառ), *դուսարր*, *եղան*, *երկան*, *թուր*, *լեզու*, *կաշի*, *կոր* և *ծուռ*, *հաց*, *շաղ*, *ոզնի*, *լրունկ*, *ցախ*, *լրուն*, վրացերենի միջնորդությամբ՝ *կիր*, *մանգաղ*, *յարդ* և այլն:

ՓՈԽԱՌՅԱԼ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

Հայերենը արևելակովկասյան լեզուներից անձնանուններ չի փոխառել: Որոշ տեղանուններում պահպանվել են այդ լեզուների հետքերը մատնանշող արմատներ, ինչպես՝ *Նախնաւան*, *Ուրիք*: *Նախն-աւան* տեղանվան առաջին մասը խոսում է նախյան ժողովուրդների անվան հետ ունեցած կապի մասին: Չեչենները հիմա էլ իրենց կոչում են *НОХЧО* (բրբռ. *нахчо*), որ պահպանվել է «Աշխարհացոյց»-ի հիշատակած նախնամատեանք («նախնալեզվյաններ») ժողովրդանվան մեջ:

Ուտիները հին աղվանների ժառանգորդներ են, և նրանց անվամբ կոչվող *Ուրիք* տեղանունը ևս արևելակովկասյան ծագում ունի: Արևելակովկասյան տարրեր կարող են լինել նաև Արցախի մեջ մտնող *Հարն-լանք*, *Մուխանք*, *Պիանք*, *Կողք*, ինչպես նաև Ուտիքի *Տոի* և *Աղուէ* գավառանուններում:

Նախյան-դաղստանյան ծագում ունի նաև *Կուր* գետի անունը. կրի-գերեն և բուրուխերեն լեզուներով *кур* նշանակում է «գետ», ուտիերեն՝ «ձոր», կա նաև *куро*՝ «առու» տարբերակը:

ԱՐԱՐԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայերենի վրա արաբերենի գործած համեմատաբար զգալի ազդեցության մասին գիտնականները դատողություններ են կատարում միայն 7-րդ դարից սկսած, երբ Հայաստանը հայտնվում է Արաբական Խալիֆաթի տիրապետության ներքո:

Հ. Հյուբշմանը և Հ. Աճառյանը ժխտում են մինչ այս դարը հայերենում արաբական ծագման բառերի գոյությունն ընդհանրապես: Այս տեսակետը վիճարկում է Գ. Ջահուկյանը, որը «Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան» աշխատության մեջ առաջ է քաշում սկզբունքային մոր մոտեցում՝ հայերենի սեմական փոխառությունների ցանկում առանձնացնելով 11 բառ, որոնց քիչ թե շատ հավանական աղբյուրը կարող է լինել արաբերենը, ավելի ստույգ «ասորա-արաբական կոյնեն», ինչպես նշում է գիտնականը: Այս պնդման պատմական հիմնական կռվանը հետևյալն է. արաբական տարբեր ցեղեր բնակվել են Իրանի և Բյուզանդիայի սահմանամերձ վայրերում 7-րդ դարից ավելի վաղ, և այս տարածքում՝ Հայաստանի հարավային մասնագներում, գոյություն է ունեցել յուրատեսակ «ասորա-արաբական կոյնե»՝ խոսվածք, որից էլ Գ. Ջահուկյանը բխեցնում է հիշյալ 11 բառերը: Արաբները դեռ մինչև իսլամ ընդունելը բնակվել են Հյուսիսային Սիջագետքում և 5-րդ դարի հայ մատենագրության մեջ հիշատակվում են իրանական բարբառներից փոխառյալ *յրանիկ* բառով, որ նշանակում էր և՛ արաբ, և՛ արագավազ:

Բերենք արաբական հին փոխառություններն ըստ իմաստային դաշտերի՝ որոշ բացատրություններով.

Ա. մարդկություն, սեռ, տարիք, ընտանեկան հարաբերություններ՝
կաւատ,

Բ. կենդանիներ՝ շառաւն - ուղտ, բոյրոյր - ճիճու, որդ, ցեց,

Գ. ուտելիք, ըմպելիք, պատրաստում՝ արշիլ (իմ) - ծարավել,

Դ. հագուստ՝ գունար - գոտի,

Ե. բնակարան, կահ-կարասի՝ աղիս - կողպեք, մահիճ,

Ջ. շարժում, տեղափոխություն՝ շալակ - պարկ, պատգարակ,

Է. զգացմունք, բարոյական և գեղագիտական ըմբռնումներ՝ սիրաւնալ - սքանչանալ, հիանալ, ալպն - ծաղր,

Ը. մտածողություն, միտք՝ ախամաիս - հիմար, տխմար:

Գ. Ջահուկյանը եզրակացնում է, որ արաբական հնագույն փոխառություններն առօրյա կյանքի բառեր են, մարդկային հարաբերություն-

ներով և կենսական կարիքներով պայմանավորված երևույթների անուններ (շարժում, տեղափոխություն, բնակարան, նշանակումներ):

Հայ-արաբական հարաբերությունների բուն շրջանը, ինչպես վերը նշվեց, սկսվում է 7-րդ դարի կեսից՝ ձգվելով մինչև 10-րդ դար՝ 250 տարի: Առաջին արաբական բանակը հարձակում գործեց Հայաստանի վրա 640 թվականին՝ հասնելով մինչև Դվին: Այս արշավանքին հաջորդեց 53 տարի ձգվող պատերազմների շրջանը արաբների և հույների միջև՝ հանուն Հայաստանի նվաճման: 693 թվականին արաբները հաղթականորեն ավարտեցին կեղարյա պատերազմը՝ պաշտոնապես տիրանալով Հայաստանին՝ իրենց տիրապետությունը տարածելով մինչև Կովկասյան լեռնաշղթա: Հայերը մի շարք ձախողված ապստամբություններից հետո արաբական լուծը կրեցին մինչև 9-րդ դար, երբ արաբական կայսրությունը սկսեց քայքայվել օբյեկտիվ գործոնների ազդեցության ներքո՝ ներքին կենտրոնախույս ուժերի բախումը, արաբական էքստրիմիզմի անմիատարրությունը, իսլամի զանազան հոսանքների, հերձվածների ծավալումը: Անկախության ոգին տարածվեց Արաբական Խալիֆայի ոչ միայն քրիստոնյա, այլև մահմեդական ժողովուրդների մեջ, որոնք ապստամբելով հիմնեցին անկախ խալիֆայություններ: Խորասանում ստեղծվեց Թահիրի պարսկական պետությունը, Աֆղանստանում՝ Սաֆարիների պետությունը: Նույն ժամանակահատվածում Աշոտ Ա-ի հմուտ քաղաքականության շնորհիվ հիմնվում է Բագրատունյաց թագավորությունը: Աշոտ Ա-ն արաբներից ստանում է թագավորական տիտղոս 885 թվականին: Բագրատունյաց թագավորությունը սկզբում հարկատու էր արաբներին, որոնց նշանակած ոստիկանը մի շրջան մատում է Դվինում, սակայն աստիճանաբար Հայաստանը կատարյալ անկախություն է ձեռք բերում:

Հայերի և արաբների սերտ հարաբերությունների երկրորդ շրջանը սկսվում է 12-րդ դարից: Արժրունյաց և Բագրատունյաց թագավորության անկման ժամանակ շատ հայեր գաղթում են Կիլիկիա՝ հիմնելով Կիլիկիայի թագավորությունը, որը Լևոն Բ-ի օրոք դարձավ հզոր և ազդեցիկ պետություն: Առաջանալով դեպի Եփրատ և Ասորիքի հյուսիսային կողմը՝ հայերը շփման մեջ մտան Հալեպի և Դամասկոսի արաբ սուլթա-

նությունների հետ, որը վերաճեց թշնամության: Հալեայի, Դամասկոսի և Եգիպտոսի սուլթանները ջանացել են ասպատակել Կիլիկիան, սակայն հայերը, դաշնակցելով թաթարների հետ, ոչ միայն դիմակայեցին այդ հարձակումներին, այլև նվաճեցին Հալեպը, Դամասկոսը, Երուսաղեմը, մտադիր էին անգամ արշավել դեպի Եգիպտոս, սակայն թաթարների հետ դաշինքը քանդվեց, քանի որ վերջիններս դավանեցին իսլամը: Հայերի նախկին դաշնակիցները վերածվեցին ախոյանների և արաբների հետ միանալով՝ հարձակվեցին Կիլիկիայի վրա: Կիլիկիայի հայկական թագավորությունն աստիճանաբար թուլացավ, սկսեց մաս-մաս նվաճվել, իսկ 1375 թ. դադարեց գոյություն ունենալ՝ ընկնելով Եգիպտոսի արաբների լծի տակ: Արաբ նվաճողներին հետագայում փոխարինեցին թուրքմեն և թուրք տիրակալները: 1597 թ. Կիլիկիան Ասորիքի, Պաղեստինի և Եգիպտոսի հետ նվաճվեց օսման թուրքերի կողմից:

Պատմաժամանակագրական այս ընթացքից ելնելով՝ Հ. Աճառյանը հայ-արաբական հարաբերությունները բաժանում է երկու շրջանի՝ 1) արաբական տիրապետություն բուն Հայաստանում՝ 7-րդ դարի կեսերից մինչև 10-րդ դար՝ 250 տարի տևողությամբ և 2) արաբական տիրապետություն Հայկական Կիլիկիայում և Ասորիքում՝ 12-րդ դարից մինչ այժմ, քանի որ այսօր էլ հայերն այնտեղ ապրում են արաբական տարբեր պետությունների կազմում՝ գտնվելով արաբների հետ հանապազօրյա շփումների մեջ: Այս երկու շրջանում էլ հայերենը փոխառություններ կատարել է արաբերենից:

Հ. Աճառյանը կարծում է, որ 7-8-րդ դարերում հայերենը չափազանց քիչ փոխառություններ է կատարել արաբերենից: Փոխառությունների ազդեցիկ մասը կատարվել է կիլիկյան կամ միջին հայերենի ժամանակահատվածում, ինչպես նաև արևելահայերենի կողմից Պարսկաստանի և պարսիկների միջոցով: Արաբերենն ի սկզբանե ողջ մահմեդական Արևելքի մշակութային լեզուն էր: Հայերին շրջապատող մահմեդական բոլոր ազգերը՝ պարսիկ, թուրք, քուրդ, թաթար, հսկայածավալ փոխառություններ են կատարել արաբերենից, և այդ փոխառություններն այնքան են ձուլվել բնիկ լեզուների մեջ, որ հաճախ անհնար է որոշել, թե որ բառի սկզբնաղբյուրն է արաբերենը, որինը՝ պարսկերենը կամ

թուրքերենը: Հ. Աճառյանը նշում է, որ Արևելքում ձևավորվել էր մի յուրօրինակ միջազգային բառարան, որն էլ մասամբ փոխանցվել է հայերենին: Հայագետի հաշվարկներով՝ հայերենի արաբական փոխառությունների թիվը 702 է: Դրանց մի մասը կատարվել է գրական ճանապարհով, գիտական - բժշկագիտական աշխատությունների միջոցով և, ըստ ամենայնի, ժողովրդական լեզվում գործածական չի եղել: Գրական հայերենը այդ բառերը հիմնականում դուրս է մղել. արաբական փոխառություններն առավել կենսունակ եղան բարբառներում: Հ. Աճառյանի դիտարկմամբ՝ գրական հայերենն այդ 700 բառերից պահպանել է միայն 111-ը, որոնց կազմում հայագետն առանձնացնում է 53 զուտ արաբերեն, 58 նոր պարսկերեն փոխառություններ:

Ռ. Ղազարյանն իր «Միջին գրական հայերենի բառապաշարը» աշխատության մեջ, անդրադառնալով 12-րդ դարից հետո արաբերենից հայերենի կատարած փոխառություններին, նշում է, որ այդ բառերի զգալի մասը գրական փոխառություններ են, որոնք հայերենին են անցել արաբերենից կատարվող բազմաբնույթ թարգմանությունների միջոցով: Արաբական գիտությունը, միջնադարում հասնելով էական բարձունքների, մեծ դեր է կատարել հայ գիտական մտքի զարգացման համար: Հատկապես բժշկությանը, մաթեմատիկային, աստղաբաշխությանը, ակքիմիային վերաբերող արաբական գիտական երկերը թարգմանվում էին հայ հեղինակների կողմից, և այդ բնագավառների գիտական բառապաշարը եզրույթներով հանդերձ փոխառվում էր՝ լայն կիրառում գտնելով հայերենում: Բազմաթիվ բուսանուններ, կենդանանուններ, բժշկությանը, դեղագործությանը, աստղագիտությանը, քիմիային, գյուղատնտեսությանը, ձիաբուծությանը վերաբերող բառեր առ այսօր էլ գործածական են հայերենում՝ *բակլիս, բալասան, թաս, լուրիս (լորի), խսիր, կապա, կապալ, հաք, հապալաս, հինա, հոզնա, հունաս, մարջան, մկրապ, նուպա, նունուֆար, շամամ, շիք, պահիրա, պալյուրա, ռեհան, սամուռ, սնդուկ*:

Ընտրողաբար ներկայացնենք այդ փոխառություններ՝ ըստ Հ. Աճառյանի և Ռ. Ղազարյանի առանձնացրած հիմնական իմաստային խմբերի:

Ա. Բնություն, բնական երևույթներ՝ ալամ (երկիր, աշխարհ), ա-
գատ, շամս (արև), ֆալաք (երկինք, երկնակամար), եաշմ, եասպ, սա-
մում, մարջան:

**Բ. Մարդ, մարդու և կենդանիների մարմնամասեր, մարմնական
գործառույթներ՝** հարիֆ (ընկեր), խալ, խալիպ (կրկնակզակ), կոտոշ,
ճիտ, նաֆաս (շունչ):

Գ. Կենդանիներ՝ բլբուլ, դաւաբ (ոչխար), դահուճ (թռչուն), թութակ,
մալ (եգ), մեմուն (կապիկ), պախրա, սակո (ագռավ):

Դ. Երկրագործություն, բուսածուկներ՝ աղարիկոն (սունկ), ափիոն,
բալ, բակլայ, թարխուն, թուրինջ, լալայ, լոբիա, խաշխաշ, զափրան
(քրքում), հիլ, հինայ, շահպրակ (ծաղիկ), սալաթ, սանտալ, սմբուլ, սպա-
նախ:

Ե. Անասնապահություն, ձիաբուծություն՝ լկամ, մալ, փալան:

Զ. Գիտություն, ուսում և արհեստներ՝ ալքիմիա, քիմիա, դալամ,
տաթար, մաղաշ, դամ (ձայնակցում), մաղարայ (թմբուկ), աճպարար,
պայտար, ջուլիակ, փալանտուգ, քասապ (մսագործ):

Է. Վաճառականություն և դրամական գործարք՝ ամանաթ (ա-
վանդ), բազազ (կերպասավաճառ), կապալ, կաւատ (միջնորդ), մալ,
մուլք (հարստություն), մաղտ:

Ը. Շինություն և շենքի մասեր՝ ամարաթ, աճառ (տանիք), բաբ
(դուռ), մղլակ (փական), պուրճ (բուրգ), չափար, փնտուկ (իջևան):

Թ. Հագուստ և զարդեղեն՝ լաթ, խալխալ (ապարանջան, մանյակ),
խսիր, կապայ, կումաշ (կերպաս), չմուշկ (պայտած կրունկներով, սուր
քթով մաշիկ), չուխայ, տրեզ (զգեստի կտոր), փարտայ (վարագույր),
քթան (կտավ):

Ժ. Ուտելիք և ըմպելիք՝ աղիտայ, խահուե, հերիսայ, նշայ (օսլա),
նշաստակ, քուֆտայ:

ԺԱ. Առտնին տնտեսություն, կահ-կարասի՝ ակիշ, բուխարի, թաս,
թափուր, կառան (պարան), կողպեք, մկրատ, սալա, սինի (կողով),
սնդուկ, քաֆշայ:

ԺԲ. Թիվ, չափ, կշիռ, դրամ՝ դաստայ, թուխթ, տրցակ, փարսախ:

ԺԳ. Երկիր և պետություն, պաշտոնակարգություն՝ ամիր, գզիր, խալիվայ, շահնայ, ջիհանգիր, ռայիս, սուլտան, ֆառաշ (ոստիկան):

ԺԴ. Պատերազմ, զենքեր՝ թալան, հարամի, խանդակ, խուխայ (կռիվ), սատիր (տապար):

ԺԵ. Կրոն, նախապաշարմունք՝ կուրան, կուռայ (կուրան կարդացող), հուրի, դադի (դատավոր), մալում (մողլա), մահտեսի, մզկիթ, մղում (անիծյալ), մեհրապ (մզկիթի խորան), մուղրի, մսլիմանակ (մահմեդական), նալաթ (նզովք), սունաթ, տլսիմ (կախարդանք):

ԺԶ. Սովորական կյանքի բառեր՝ բետար, դրուստ, խեթ (բարիք), շառ (խռովություն), խալատ (սխալ, թերություն), շիւան, սազիլ, սադրիլ, սդկել, տնագ, կոլոտ, ազապ (ամուրի, չամուսնացած):

ԺԷ. Մակբայ, եղանակավորող բառեր՝ ափսոս, բարե (գոնե), թեզ (վաղ, շուտ), ֆուլան (այս ինչ):

Բացի հասարակ անուններից՝ հայերենը արաբերենից փոխառել է նաև հատուկ անուններ, որոնք գերակշիռ մեծամասնությամբ արդեն պատմական անուններ են՝ արդի հայերենում անգործածական: Դրանք պահպանվել են միայն ազգանուններում՝ *Աբուսահի, Ազիզ, Ազիզմեյիթ, Ամիր, Ամիրդովլաթ, Ամիրմեյիթ, Ապունուսե, Ապուպաթր, Ասադ, Ասիլ, Ասլի, Ադալ, Բադալ, Բադի, Դովլաթ, Դունիս, Եադուր, Զարիֆ, Զուլալ, Էդիլ, Բնին, Համամ, Հասան, Զալալ, Սաֆար* և այլն:

ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԹՈՒՐԲԵՐԵՆԻՑ

Բաղդադի խալիֆները դիմակայելու համար իրենց հսկա տերության տարբեր ծագերում բռնկվող խռովություններին պետական ծառայության են կանչում Միջին Ասիայի իրենց հպատակ թուրքերին, որոնք ճանաչված էին իրենց դաժանությամբ: Այս թուրքերից կազմավորվում են տարբեր գնդեր՝ տեղակայված ոչ միայն Բաղդադի, այլև Փոքր Ասիայի, Եգիպտոսի, Ասորիքի սահմաններում: 9-րդ դարի կեսին Հայաստան արշաված Բուղա զորավարն այդ թուրքերից մեկն էր: Երբ թուրքերը դարձան մեծաքանակ և հզորացան, դադարեցին ծառայել արաբներին, ապստամբեցին՝

ստեղծելով թուրք-մոնղոլական պետություններ, ինչպես Սամանիների պետությունը 901 թ.՝ Բուխարա և Սամարղանդ մայրաքաղաքներով, և Ղազնևիների սուլթանությունը՝ 10-րդ դարավերջին Աֆղանստանի և Հնդկաստանի պատմական տարածքում:

Թուրքական ցեղերից սելջուկները Կասպից ծովի հարավային եզերքով շարժվեցին դեպի արևմուտք: Սելջուկներից Տուղրիլ բեկը Միջագետքն ասպատակելուց հետո առաջին անգամ Վասպուրականի կողմից 1021 թվականին մտավ Հայաստան: Նա հաղթեց Վասպուրականի Սենեքերիմ թագավորին, խորացավ մինչև Նախիջևան, որտեղից հետ դարձավ՝ մտնելով Պարսկաստան: Այստեղ էլ իրեն թագավոր հռչակեց՝ գրավելով Իրաքը, Մոսուլը և Բաղդադը: Տուղրիլը հաջորդաբար երեք մեծ արշավանք է ձեռնարկել Հայաստանի դեմ 1042, 1047 և 1048 թվականներին՝ ասպատակելով ողջ երկիրը՝ մինչև Տարոն, Կարին, Բասեն, Տայք և Սպեր: Նրա հաջորդը՝ Ալփաւանը, գրավեց Անին, Սեբաստիան՝ հասնելով մինչև Կեսարիա: Իսկ Մելիք շահի օրոք՝ 1086-1092 թթ., ամբողջ Հայաստանը հայտնվեց սելջուկների իշխանության ներքո: Այս բռնակալի տիրապետության ժամանակ սելջուկյան պետությունը հզորացավ: Այն իր մեծությամբ գերազանցեց հին պարսկական կայսրությանը և արաբական խալիֆայությանը՝ ընդգրկելով ողջ Փոքր Ասիան, Եգիպտոսը, Ատրիքը և Միջին Ասիայի մի մասը: Մելիքի մահից հետո այս գերկայսրությունը փլուզվեց, և նրա բեկորների վրա, այդ թվում Հայաստանում, կազմավորվեցին զանազան անկախ քրիստոնեական իշխանություններ, մահմեդական ամիրայություններ՝ Խլաթ, Դվին, Կարս, Անի, որոնք գոյատևեցին մինչև մոնղոլ-թաթարական արշավանքները:

1236 թ. մոնղոլ-թաթարները գրավեցին Աղվանքն ու Վիրքը՝ մուտք գործելով Հայաստան: Նրանցից մեկը՝ Հուլադու իշխանը, աթոռանիստ դարձրեց Ատրպատականի Մարաղա քաղաքը՝ հիմնելով պարսկա-թաթարական նոր հարստություն՝ իր ենթակայության տակ պահելով նաև Հայաստանը: 1340 թ. թաթարական մեծ պետությունը քայքայվեց: Իսկ Հայաստանը, թեև պաշտոնապես ենթակա էր Պարսկաստանի թաթարական պետությանը, բայց երկրում իշխում էին տարբեր ցեղեր. արև-

մուտքում՝ թուրքմենները, արևելքում՝ թուրքացած պարսիկները, հարավում՝ քրդերը:

1372 թ. Լենկթեմուրը վերականգնեց Չինգիզ խանի կայսրությունը՝ Չինաստանից մինչև Փոքր Ասիայի ծովեզերք, Մոսկվայից մինչև Եգիպտոս: Լենկթեմուրը երկու անգամ է հարձակվել Հայաստանի վրա՝ ասպատակ և ավեր սփռելով բոլոր նահանգներով ու քաղաքներով, ընդիույ մինչև Սեբաստիա: Հայաստանը մինչև Լենկթեմուրի մահը՝ 1405 թ., մնաց թաթարական լծի տակ: Լենկթեմուրի մահից հետո Հայաստանը դարձյալ ընկավ թուրքացած պարսիկ և քուրդ իշխանների ձեռքը, մինչև որ Ռուզուն Հասանը 1468 թվականին, տիրելով պարսից գահին, նվաճեց ամբողջ Հայաստանը: Այդ պահից ի վեր սկսվում է 250-ամյա տևական մի պատերազմ թուրքացած պարսիկների և օսմանցիների միջև՝ հանում Հայաստանի վերջնական նվաճման: Օսմանցիները 1473 թ. առաջին անգամ մուտք գործեցին Հայաստան, որից հետո Հայաստանը, ինչպես նաև Կովկասը, Վրաստանը, Ատրպատականը մերթ թուրք-պարսիկների, մերթ օսմանցիների լծի տակ էր հայտնվում մասամբ կամ ամբողջովին: Ավանդաբար Հայաստանի արևելյան հատվածը պարսիկների ձեռքում էր, արևմտյանը՝ օսմանցիների, մինչև որ Արևելահայաստանը չմիակցվեց Ռուսական կայսրությանը: Այս իրավիճակը շարունակվում է մինչև Առաջին համաշխարհային պատերազմ, որի քողածածկույթի ներքո Արևմտյան Հայաստանում Թուրքիան իրականացրեց հայերի բնաջնջման, ցեղասպանության իր քաղաքականությունը: Իսկ Արևելահայաստանը Ռուսաստանում խորհրդային կարգերի հաստատման արդյունքում անկախության կարճատև շրջանից հետո ևս խորհրդայնացավ մինչև 1991 թվականը: 20-րդ դարասկզբի հայ-թուրքական հարաբերությունների վերջին փուլը ավարտվեց 1921 թվականին, երբ մոսկովյան պայմանագրով Վ. Լենինի և Աթաթուրքի պայմանավորվածությունների արդյունքում հայկական Կարսը և Արդահանը ևս հանձնվեցին հայերի ցեղասպանություն իրագործած Թուրքիային՝ հետևողականորեն հայազրկվելով:

Պատմությունը վկայում է, որ հայերը շուրջ 900 տարի գտնվել են տարբեր թուրքական (թյուրքական) ցեղերի գերիշխանության տակ՝ սելջուկներ, Պարսկաստանի թուրքեր, մոնղոլ թաթարներ, էօզբեկ թաթար-

ներ, թուրքմեններ և վերջապես օսման թուրքեր: Թուրքական այս բոլոր ցեղերի լեզուն կարելի է միավորել ընդհանուր թուրքերեն անվան ներքո: Հայ-թուրքական շփումների այսքան երկարատև, ընդ որում՝ նվաճողական բնույթը (թուրքերը միշտ եղել են գերիշխող տերության ներկայացուցիչներ) պատճառ դարձավ հայոց լեզվի վրա թուրքերենի ճնշող ազդեցության: Բայց պետք է նշել կարևորագույն մի առանձնահատկություն. եթե մեզ նվաճած կամ մեզ հետ հոգևոր, մշակութային, քաղաքական-տնտեսական շփումների մեջ գտնված այլ ժողովուրդների լեզուները ազդել են գրական հայերենի՝ գրաբարի, միջին հայերենի, աշխարհաբարի վրա, ապա թուրքերենը մեծապես ազդել է միայն բարբառների վրա: Հայոց գրական լեզուն գրեթե զերծ մնաց թուրքական փոխառություններից, թուրքերենի լեզվական այլ ազդեցություններից:

Հ. Աճառյանը փաստում է, որ դեռևս 13-րդ դարից հայերը սկսել են սովորել թուրք-թաթարական ցեղերի լեզուն՝ մեջբերելով Կիրակոս պատմիչի (1201-1272թթ.) բերած բառացանկը, որը գիտնականի դիտարկմամբ՝ ճշգրիտ է արտացոլում մոնղոլ-թաթարական լեզվի հնչյունական և իմաստային յուրահատկությունները. «Այլ և խօսք մոցա խժականք եւ անձանօքք ի մէնջ. քանզի կոչէին զանուն աստուծոյ Թանկրի եւ զմարդն՝ էրէ, եւ զկինն եմէ ափճի. եւ զանուն հօր՝ էջքա եւ զմօրն աքա, եւ զեղբայրն՝ աղա, եւ զքոյրն՝ աքաճի, եւ զգլուխն՝ թորօն, եւ զաչս՝ նիտօն, եւ զականջս՝ ջիքին, եւ զմօրոս՝ սախալ, եւ զերեսս՝ յիզնիուր, եւ զերանն՝ աման...»¹⁵²: Թուրքերենի ազդեցությունը հայերենի վրա քննելու նպատակով Հ. Աճառյանը 1902 թ. առանձին աշխատություն է գրել՝ «Թուրքերենի ազդեցությունը հայերենի վրա և թուրքերենէ փոխառեալ բառերը հայերենի մէջ», որտեղ ներկայացնում է վիճակագրական տվյալներ Պոլսի, Վանի, Ղարաբաղի և Նոր Նախիջևանի բարբառներում առկա թուրքական բառերի քանակի վերաբերյալ: Ըստ այդմ՝ Պոլսի բարբառում այդ փոխառությունների թիվը 4000 է, Վանի բարբառում՝ 2100, Նոր Նախիջևանի բարբառում՝ 1170, Ղարաբաղի բարբառում՝ մոտ 800: Վերջինիս պարագայում, սակայն, Հ. Աճառյանը նշում է, որ ինքը չի հաշվել այն բառերը, որոնք գործա-

¹⁵² Հմմտ. Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս II, էջ 258-259:

ծական են միայն ազերի թուրքերի լեզվում, դրանք ևս նկատի առնելու դեպքում թուրքական փոխառությունների թիվը Ղարաբաղի բարբառում հասնում է 1000-ի¹⁵³:

Իբրև եզրահանգում՝ Հ. Աճառյանը նշում է, որ թուրքերենից ոչ մի գրական փոխառություն չի կատարվել այն պարզ պատճառով, որ թուրքական մատենագրությունը, բավական ուշ ձևավորվելով, չդարձավ հարուստ և բազմաբնույթ՝ ի տարբերություն հայերի հետ շփումներ ունեցած այլ ժողովուրդների՝ պարսիկների, արաբների, ասորիների և հույների գրավոր մշակույթի, որոնց աղբյուրներից հայերենը գրական ճանապարհով մեծաթիվ փոխառություններ է կատարել: Թուրքական բոլոր փոխառությունները ժողովրդական փոխառություններ են՝ բանավոր շփումների արդյունք: Դրանք ժողովրդական թուրքերենի բառապաշարի միավորներ են, ուստի ձևով հաճախ տարբերվում են գրական թուրքերենի համարժեք բառերից հնչյունական պատկերով և իմաստային նրբերանգներով: Գրական հայերենի՝ հին շրջանում կատարած թուրքերեն փոխառությունների թիվը Հ. Աճառյանը համարում է 170, իսկ արդի հայերենում այդ թիվը խիստ նվազում է՝ հասնելով ընդամենը 20 բառի: Այստեղ պետք է կատարել մի կարևոր վերապահում. թուրքերենն ինքը կատարել է մեծաթիվ արաբական, պարսկական փոխառություններ, որոնց մի մասը հայերենը վերցրել է հենց միջնորդ թուրքերենից և ոչ թե բուն աղբյուրից: Նման բառերը չեն դիտարկվում որպես թուրքական փոխառություններ, որովհետև ըստ էության անհնար է առանձին դեպքերում ստույգ պարզել, թե տվյալ արաբական կամ պարսկական ընդհանուր արմատը ինչպես է հայտնվել հայերենի բառապաշարում:

Ռ. Ղազարյանը ևս իր «Միջին գրական հայերենի բառապաշարը» աշխատության մեջ նշում է, որ միայն 13-րդ դարից սկսած՝ մատենագրական մի քանի գործերում սկզբնապես հանդիպող մոնղոլ-թաթարական փոխառություններին զուգահեռ՝ հայերենի մեջ աստիճանաբար մուտք են գործում թուրքական բառեր: Իսկ 14-15-րդ դարերի ընթացքում, երբ թուրքերը հիմնում են Օսմանյան կայսրությունը՝ դառնալով տարածաշրջանի

¹⁵³ Հ. Աճառյան, նշվ. աշխ., 270-273:

հզոր տերություններից մեկը, թուրքերենի լեզվական ազդեցությունը հայերենի վրա աննախադեպ մեծանում է, և միջին գրական հայերենի զարգացման երկրորդ շրջանի գրավոր հուշարձաններում թուրքական փոխառությունների քանակը զգալի է, ավելին՝ միջինհայերենյան ուշ շրջանի մեծաթիվ փոխառյալ բառեր, որոնք ծագումով արաբական, պարսկական և հունական կազմություններ կամ արմատներ են, թուրքերենում ունենալով համարժեք փոխառյալ ձևեր՝ հայերենին անցել են թուրքական միջնորդությամբ:

Այժմ, ըստ իմաստային խմբերի, ընտրողաբար ներկայացնենք Հ. Աճառյանի և Ռ. Ղազարյանի առանձնացրած թուրքական այն փոխառությունները, որոնք, միջին հայերենից սկսած, գործածական են մաս արդի հայերենում կամ բարբառներում:

Ա. Մարդ, մարդու և կենդանիների մարմնամասեր՝ ազագուն (ատամ), բեղ, բողազ (կոկորդ), դօշ (կուրծք):

Բ. Գերդաստան, ընտանեկան հարաբերություններ՝ աթա (հայր), բիճ (ապօրինի երեխա), դարաւաշ (սպասավոր), դարդաշ (եղբայր, հարազատ), դումայ (ապօրինի կին):

Գ. Կենդանիներ՝ բուղայ (ցուլ), թախտաբիթի (փայտոջիլ), խանտալայ (միջատի տեսակ), դարդայ (ագռավ), մլակ, սագան (ծածան), սառչայ (ճնճղուկ), փիլիճ (վառել), փորսուխ (գորշուկ):

Դ. Բույսեր, բույսի մասեր, պտուղներ՝ ելակ, կուկնար, մառօլ (սալաթ), չամ (տոճի), չօփ (ոստ, շյուղ), պիպեռ (պղպեղ, տաքդեղ), պուռչալախ (գազար), քօք (արմատ):

Ե. Առտնին տնտեսություն, կահ-կարասի՝ բուխերիկ (բուխարի), թաղար, թաւայ (տապակ), խամաճիք (տիկնիկ), խապախ (կափարիչ), դագան (կաթսա), չանախ (լայնաբերան կավե աման), չատր (վրան), տոպրակ, օթաղ (իջևան), օտայ (սենյակ):

Զ. Ուտելիք և ըմպելիք՝ դղմաճ, երշիկ, լեպլեպի (բոված սիսեռ), խաւիար (ձկնկիթ), պաքմազ (դոշաք), պօրակ (մսով կամ պանրով կարկանդակ), չորպայ (սպուր):

Է. Ռազմական գործ, զինատեսակներ՝ բաբան, բարութ, ենիչարի, թօփ (թնդանոթ), պօլուկպաշի (խմբապետ, հրամանատար):

Ը. Հասարակական հարաբերություններ՝ ամակ (վաստակ), բարի-
շել (հաշտվել), խորաթայ (գրույց), չոքել, պէի (գրավ), սաւաշ (աղմուկ-ա-
ղաղակ):

Թ. Պետական կազմ, պաշտոններ՝ աթաբէկ, բէկ, խաթուն, դան, չա-
ւուշ:

Ժ. Հագուստ, զարդեղեն՝ թօփ (գործվածք, կտոր), սուրմա, փարա-
ծիկ (թրքուհու շրջագգեստ), խաղայ (մուշկի յուղ), կապակ (կարճ կա-
պա, վերնագգեստ), ճօթ (ծայր, քղանցք):

ժԱ. Մետաղներ, հանքանյութեր՝ աղութ (հակինթ), եաղի (յուղ,
ձեթ), գմրութ, քութութ (ծծումք):

ժԲ. Քանակ, տարածական հարաբերություններ, չափ, տեղ, ձև՝ բոյ
(հասակ, բարձրություն), դիք (ողղահայաց, ցցված), եան (կողմ), չիֆթայ
(գույգ), պուճախ (անկյուն), սաղ (բոլոր):

ժԳ. Ֆիզիկական աշխարհ՝ իւրդ (արտավայր), մէշայ (անտառ),
չամուռ (ցեխ, տիղմ):

ժԴ. Խաշնարածություն և գյուղատնտեսություն՝ աղալ (փարախ),
խամութ (ծիու լծի կաշին):

ժԵ. Կրոն՝ աղթարմայ (կաթոլիկացած, հավատաւորիս հայ), արքա-
յուն (քրիստոնյա), կեաւուր (անհավատ), սօֆի (բարեպաշտ, աստվա-
ծավախ):

ժԶ. Չթեքվող խոսքի մասեր՝ անճայ (այնչափ), գէնայ (կրկին, նո-
րից), կօրէ (համեմատ, հարմար):

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայերի շփումը եվրոպացիների հետ, ինչպես փաստում է Հ. Աճառ-
յանը, սկսվում է Կիլիկիայում 11-րդ դարի սկզբում, երբ եվրոպացի կրոնա-
վորներն ու ուխտավորները սկսեցին այցելել Երուսաղեմ ուխտագնա-
ցության և արկածասիրության դրդապատճառներով: Այդ հարաբերու-
թյուններն առավել սերտացան Խաչակրաց առաջին արշավանքի ժամա-
նակ՝ 1096 թ., երբ խաչակիրները կեսմիլիոնանոց բանակով եկան անցան

Կիլիկիայով՝ գորակցություն ստանալով հայ Կոստանդին Ա իշխանից, որին շնորհեցին մարկիզի տիտղոս: Ատրիքում եվրոպացիները հիմնեցին մի քանի ավատական իշխանություններ, որոնցից նշանավոր էին Անտիոքի, Շոնեսիայի, Տրիպոլիսի դքսությունները: Երուսաղեմի լատին թագավորների թագուհիները գրեթե բոլորը հայ էին: Այս և այլ կերպ լատին իշխանները փորձում էին ամրացնել իրենց դիրքերը հայաշատ վայրերում:

Հայ-եվրոպական շփման գագաթնակետը Ռուբինյան թագավորության հաստատումն էր Կիլիկիայում Լևոն Բ-ի օրոք, որն իր թագը ստացավ Երկրորդ խաչակրաց արշավանքի առաջնորդ՝ Գերմանիայի Ֆրեդերիկոս և Հենրիկոս Ջ կայսերից: Լևոն Բ-ն ստեղծեց եվրոպական կառույցի պետություն՝ եվրոպական կարգերն ու աստիճանակարգությունը ներմուծելով հայ հասարակական-պետական կյանքի մեջ: Հրավիրվեցին ֆրանսիացի, իտալացի, գերմանացի ու անգլիացի բազմաթիվ պաշտոնյաներ, գորականներ ու դատավորներ, վաճառականներ, որոնք էլ իրենց գործունեությամբ պատճառ դարձան հայերենում փոխառությունների մի նոր շերտի առաջացման: Այս փոխառությունների աղբյուրը հիշյալ եվրոպական լեզուներն էին՝ հիմնականում իտալերենն ու հին ֆրանսերենը: Հ. Աճառյանը տվյալ շրջանի բառարաններից ու իրեն հայտնի աղբյուրներց քաղում է շուրջ 87 բառ, որոնց մեծ մասը հոգևոր-կրոնական և պետական կյանքին վերաբերող բառեր են, ըստ էության՝ հայերի համար նոր հասկացությունների անվանումներ: Այս երկու դաշտերի փոխառությունները միասին Հ. Աճառյանի հաշվումներով 51 բառ են՝ 13 կրոնական, 38 պետական հասկացություններին վերաբերող: Այսինքն՝ եվրոպական լեզուների ազդեցությունը հայերենի վրա պայմանավորված էր երկու խոշոր գործոններով՝ հոգևոր դաշտում կաթոլիկ եկեղեցին, աշխարհիկ կյանքում՝ ավատական կարգերը:

Ռ. Ղազարյանն իր «Միջին գրական հայերենի բառապաշարը» աշխատության մեջ եվրոպական փոխառությունները փորձում է զանազանել՝ կատարելով երկու խմբավորում՝ ֆրանսիական և իտալական փոխառություններ, ինչպես նաև լեհական փոխառություններ, բայց վերջին դեպքում հատուկ նշում է, որ լեհական փոխառությունների մեջ շատ

են այն բառերը, որոնք բնույթով գերմաներեն, ռումիներեն, ուկրաիներեն և ռուսերեն են, օրինակ՝ դայլառ/դայլար - *արծաթադրամ*, լօդ- *կշիռ*, *չափ*, ձեխմիսոդր - *համբարության ավազ* (գերմ.), բրբալապ - *քերդասպահ*, պոկար - *քաղաքային վարչության խորհրդական* (ռում.), սքադերդ - *սփռոց* (ուկր.), ռուբօմոյ - *լվացարան*, տրուշլաք - քամիչ, օբեքուն- *խնամակալ* (ռուս.) և այլն¹⁵⁴։ Եվրոպական տարբեր լեզուներից կատարված փոխառությունների ներքին տարբերակումը բավական պայմանական է, որովհետև հաճախ անհնար է որոշել, թե, օրինակ, լատինական արմատ ունեցող բառերը ֆրանսերենից, իտալերենից, թե գերմաներենից են փոխառված, կամ ընդհանուր սլավոնական արմատները հայերենին անցել են ռուսերենից, թե ուկրաիներենից կամ լեհերենից։

Ներկայացնենք Հ. Աճառյանի և Ռ. Ղազարյանի առանձնացրած եվրոպական լեզուներից կատարված փոխառություններն ըստ հիմնական իմաստային դաշտերի։ Նշենք նաև, որ այդ բառերի մեծամասնությունը չարմատավորվեց հայերենում, որովհետև դրանք ունեին հայերեն համարժեքներ, չմերվեցին մեր բառապաշարին և դուրս մղվեցին։ Լեզվաճանկան տարբեր շերտերում պահպանվեցին այն հասկացությունների անունները, որոնք մեզ համար նոր էին. դրանք հիմնականում եվրոպական ազնվականների դասային անվանումներ են, կաթոլիկ եկեղեցու աստիճանակարգության, եվրոպական դրամական միավորների անունները՝ *բարոն*, *մարկիզ*, *դուքս*, *գունդապալ*, *կանցլեր*, *կարդինալ*, *լեզալր*, *դուկալր* և այլն։

Ա. Կրոնական բառեր՝ բրաջուր (լատին քարոզիչ), լեկաթ (պապի մվիրակ), կարդինալ, պրե.ֆազ (պատարագի նախարան), ֆռա (լատին կրոնավոր)։

Բ. Հագուստ և զարդեր՝ գաղջեր (տոնապան), պակ (զարդ), պրացոլ (բազպան), ջաբրոն (վեղար), սօլեր (կոշիկներ)։

Գ. Թիվ և չափ՝ լիվր (դրամ), մարկ (դրամ), ունծայ (կշիռ), տուպլ (կրկնակի), սօլ (դրամ), տուգատ (դրամ)։

¹⁵⁴ Հմմտ. Ռ. Ղազարյան, Միջին գրական հայերենի բառապաշարը, էջ 143-148։

Գ. Երկիր, պետություն՝ անսիգ (օրենք), բլայթել (դատապաշտպանություն անել), բրինձ (պրինց, արքայազն), գունդստալլ (ախտռապետ), գոնթ (կոմս), մայստո (խորհրդական), մարաջախտ, մարգիգ, պալլ (իշխան), պաներ (դատի կանչող), պատրոն, պարոն, ջամբո (դիվանատուն), ջամբռլայն (սենեկապետ), ջանսլեր (պաշտոնյա), տամ (տիկին, դամա), տամոջել (օրիորդ, մաղմուագել), տուկ (դուքս), քումանտուր (հրամանատար), ֆրեր (խաչակիր զինվոր):

Ե. Երկրագործություն՝ արտիճոկ (կանկառ, բանջարեղենի տեսակ):

Զ. Սովորական կյանքի բառեր՝ մարիաճ (ամուսնություն), ռիճ (հարուստ), սայգել (ըմբռնել), տուայր (օժիտ) և այլն:

ՆՈՐ ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նոր շրջանի փոխառություններ են համարվում 20-րդ դարի սկզբից մինչև 60-70-ական թվականները կատարված փոխառությունները, որոնք հիմնականում իրենց ժամանակի տեսանկյունից նոր հասկացությունների, երևույթների անվանումներ էին: Այս փոխառությունները դժվար է ենթարկել ավանդական իմաստային-թեմատիկ դասակարգման, որովհետև դրանք գրեթե առանց բացառության վերաբերում են գիտության, պետական կառավարման և հասարակական հարաբերությունների իմաստային դաշտերին: Առաջնայինը գիտաբանների ոլորտն է, որտեղ բնական և հասարակագիտական գիտաճյուղերի անկասելի զարգացումն անընդհատ պատճառ է դառնում նոր երևույթների հայտնաբերման կամ հենքի վերաիմաստավորման, որոնցից յուրաքանչյուրը պետք է անվանվի: Հայերենը, լինելով Խորհրդային կայսրության կազմում գտնվող երկրի պետական լեզու, այդ անունները բնականորեն պետք է փոխառեր ռուսերենի միջնորդությամբ, ռուսերեն արտասանությամբ համապատասխան, թեև այդ բառերը հիմնականում լատինական արմատներից կազմված կապակցություններ են: Այնուհանդերձ հայերենին բնորոշ է մնում մի բացառիկ հատկանիշ՝ հաճախ անգամ կարճաժամկետ օգտագործումից հետո

օտար բառ-փոխառությունը թարգմանել, գտնել նրա հայեցի հոմանիշը: Այսպես է փոքր ազգի լեզուն, որի կրողների պետական-տնտեսական անկախությունը բավական հարաբերական է, փորձում է ինքնապաշտպանվել, պահպանել իր ինքնությունը: Եվ որքան էլ նույն հայկական շրջապատում քննադատվի նոր հասկացությունների, միջազգային բառերի հայացման այդ միտումը, միևնույնն է, այն շարունակում է գործել և պարտադրել իր կադապարները. դա վեր է անհատների կամքից և մեր լեզվի ինքնակա հատկանիշն է, հայերենի՝ որպես ազգային լեզվի ավանդույթ դարձած պարտադրանքը, որը չի կարող փոխվել առանձին անհատների և անգամ առանձին կառույցների կամքին ընդառաջ:

Հայերենը մշտապես փոխառություններ է կատարում տարբեր լեզուներից և դարերով արդեն կայուն օրինաչափությամբ սկզբնական շրջանում փոխառված օտար կազմությունները փոխարինում է հայերեն արմատներից բաղադրվող նորակազմություններով՝ անկախ այն վաստից, թե որ իմաստային դաշտին է պատկանում տվյալ փոխառյալ կազմությունը: Փոխառությունների մեջ ամենակայունը գիտաբառերն են, պետության կառավարման ոլորտին առնչվող անվանումները, բայց դրանք ևս հայերենում բավական արագ հայկական տարբերակներով են փոխարինվում, որոնք սկզբնապես գործածվում են զուգահեռաբար, ապա հաղթում է հայերեն համարժեքը: Բերենք այս միտումը հաստատող բնութագրական օրինակներ. գիտաբառեր՝ *սրսարհարհկա - վիճակագրություն, սոցիոլոգիա - ընկերաբանություն, դեպրեսիա - ընկճահար, դայրոնիզմ - գունակություն, շոկ - ցնցակաթված, էյֆորիա - բերկրաթմբիկ, կապսուլա - պարիմ, լեքսիկոն - բառամբերք, տենդենց - միտում, անալոգիա - համաբանություն, սիստեմ - համակարգ, էկոլոգիա - բնապահպանություն* և այլն, քաղաքագիտություն և պետության կառավարում՝ *լիբերալիզմ - ազատականություն, լիբերալ - ազատական, կոնսերվատիզմ - պահպանողականություն, կոնսերվատոր - պահպանողական, դեմոկրատիա - ժողովրդավարություն, դեմոկրատ - ժողովրդավար, ավտոնոմիա - ինքնավարություն, ավտորիտար - անձնիշխան, տոտալիտար - բռնարհական, ֆեդերացիա - դաշնություն, ֆեդերատիվ - դաշնային, կոնֆեդերացիա - համադաշնություն, միլիտարիզացիա - ռազմականացում, դեմի-*

լիւարիզացիա - ապառազմականացում և այլն, տեխնիկա և սպորտ՝ *ինտերնետ - համացանց, ակումուլյատոր - ուժակուրակիչ, միկրոֆոն - խոսափող, պիքսել - կերայնություն, բադմինյոն - փեյրազնդակ, դեբյուտ - առաջնելույթ* և այլն:

Նորագույն շրջանի փոխառություններն արդեն 20-րդ դարավերջին կատարված փոխառություններն են, որոնց առաջացման գործընթացին ակամատես ենք այսօր՝ 21-րդ դարում: Նորագույն շրջանի փոխառությունների առաջին ալիքը պետական-քաղաքական, տնտեսական կյանքին, կառավարման ոլորտին վերաբերող փոխառություններն են, որոնք շատ արագ փոխարինվեցին հայերեն համարժեք բառերով՝ *սպիկեր - խոսնակ, բրիֆինգ - ճեպագրույց, բոյկոտ - նենգադուլ, բանկրոտսնանկ, մինիստր - նախարար, պրեմիեր մինիստր - վարչապետ, պառլամենտ - խորհրդարան, դեպուտատ - պարզամասվոր, դեկեատ - պարվիրակ, հիմն - օրհներգ, ապարատ - աշխատակազմ, ինֆլյացիա - սղան, դեֆիցիտ - պակասուրդ, պրոֆիցիտ - հավելուրդ, կապիտալ - դրամազուխ* և այլն:

Փոխառությունների երկրորդ ալիքը պայմանավորված էր Հայաստանում նոր՝ աջ ազատական տնտեսակարգի հաստատմամբ, որին բնորոշ հասկացությունների, երևույթների անգլերեն անվանումներն արագ հայտնվեցին հայերենի բառապաշարում՝ դառնալով համագործածական՝ *մարքեդինգ, մարքեդոլոգ, մենեջմենթ, մենեջեր, թոփ մենեջեր, դիլեր, մակլեր, վաուչեր, օվշոր, դեֆոլտ, դեֆլյացիա* և այլն:

Հայաստանի պետական անկախացումն այս պարագայում պատճառ դարձավ կարևոր մի երևույթի. հայերենը դադարեց փոխառություններ կատարել ռուսերենի միջնորդությամբ. փոխառություններն արդեն կատարվում են ուղղակի բուն մայր լեզվից, որը հիմնականում անգլերենն է:

Նորագույն շրջանի փոխառությունների առյուծի բաժինը վերաբերում է համակարգչային տեխնիկայի, ծրագրավորման ոլորտներին, կապի նոր տեխնոլոգիաներին, ինովացիոն տնտեսությանը, որովհետև այսօր այս ոլորտներն են պայմանավորում մարդկության զարգացումը: Բերենք մնացած փոխառությունների օրինակներ՝ վերստին նշելով, որ այս դեպքում

ևս հայերենը փորձում է բավական արագ թարգմանել օտարախոսն Վոխառությունները՝ *ինրերնենր - համացանց, կոմպյուտեր - համակարգիչ, սկաներ-լուսածրիչ, պրինտեր - տպիչ, դիսկ - սկավառակ, սայթ - կայք, վինչեսայր - կուտակիչ, մաուս - մկնիկ, հայ-տեր - բարձր տեխնոլոգիա, դիջիտալ - Թվային, քսերոքս - պատճենահանում, կոնդինցիոներ - օդորակիչ, ֆոնր - տառարեսակ, բոլդ - թավ, իրալիկ - շեղ, բոլդ-իրալիկ-թավ-շեղ, ֆլեշ - կրիչ, դաունլոդ - ներբեռնում, լայք - հավանություն* և այլն: Փոխառությունների մի մասն էլ, իհարկե, դեռ չի հայացվել կամ գուցե չի էլ հայացվելու՝ *ֆայլ, ուզու, սերվեր, վորդ, վինդոուզ, էքսել, քվարկ, քվարկ-էքսպրես, մեգապիքսել, բայթ, մեգաբայթ, գիգաբայթ, բարթիշ, սիդի, սիդիռում, սիդի ռայթեր, կոմբոբլոք, դայլ - ափ, քլիք, ավատար* և այլն:

Երբեմն նման փոխառյալ արմատները, հայերեն արմատների ու բառահարաբերական և բառակազմական միավորների հետ զուգակցվելով, կարող են տարբեր խոսքիմասային պատկանելության նոր կազմություններ ստեղծել՝ *մենեջերական, մենեջերություն, ֆեյսբուքյան, լայքել, բազմապիքսել, քլիք անել, պրինտր տալ, բոլդ անել, սքան անել, դաունլոդ անել* և այլն: Սակայն ընդգծենք, որ նման կազմությունները հայերենում ժամանակավոր են. բավական է՝ նրանց նշանակած հասկացությունները ամրակայվեն մեր լեզվակիրների գիտակցության մեջ, և ստեղծվում են նրանց հայերեն համարժեքները, օրինակ՝ *մենեջմենթ-կառավարում, մենեջերական-կառավարչական, ֆեյսբուք-դիմագիրք, ֆեյսբուքյան-դիմագրային, պրինտեր-տպիչ, պրինտ անել- տպել, քսերոքս-պատճենահանման սարք, քսերոքսել-պատճենել, սկան անել- լուսապատճենել* կամ *լուսածրել* և այլն:

Այստեղ նշենք մի հետաքրքիր միտում ևս, որ առկա է նորագույն փոխառությունների դեպքում. որոշ եզրույթներ, բառ-հասկացություններ փոխառվում են ուղղակի, լատինատառ հնչյունապատկերով, այսինքն՝ անգլիատառ, արտասանությունն էլ անգլիական է, սրանց հայատառ գրությունը տվյալ ժամանակահատվածում անգամ անսովոր է, խորթ, ինչպես՝ PR (հանրային հարաբերություններ), GR (պետական հարաբերություններ), DVD, MP3, IP, XP և այլն:

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Քառաշերտ	Ընդհանուր թիվը
Բնիկ կամ հնդեվրոպական բառեր	713 արմատ, 927 բառ
Իրանական փոխառություններ	1415, որից 966 պահլավական, 445 պարսկական
Ասորական փոխառություններ	211
Եբրայական փոխառություններ	138
Հունական	918
լատինական փոխառություններ	151
Կովկասյան փոխառություններ	60
Արաբական փոխառություններ	702
Թուրք-թաթարական փոխառություններ	170
Եվրոպական փոխառություններ	86

Այս աղյուսակը ներկայացնում է Հ. Աճառյանի տվյալները, որոնք մեծապես հիմնված են Հ. Հյուբշմանի և նախորդ դարի այլ հայտնի հնդեվրոպաբանների ծագումնաբանական քննությունների արդյունքների վրա: Անշուշտ, այն այսօր մասամբ միով հնացած է, սակայն հիմնականում արտացոլում է փոխառությունների պատմության հիմնական համամասնությունները:

Գ. Ջահուկյանի և հետագա ուսումնասիրողների ստուգաբանությունների շնորհիվ հնդեվրոպական արմատների թիվն ավելանում է՝ հասնելով 1500 բառի, ընդ որում՝ ոչ միայն չստուգաբանված բառարմատների, այլև հատկապես մինչ այդ իրանական համարված փոխառությունների հաշվին: Գ. Ջահուկյանը հաշվարկներով՝ իրանական փոխառությունների թիվը նվազում է՝ հասնելով շուրջ հազարի: Պետք է նշել, որ Գ. Ջահուկյանն իր թվային հաշվարկներում այնքան միանշանակ չէ, որքան Հ. Աճառյանը. նա նոր ստուգաբանություններ կատարե-

լիս առավել թեական է, հիմնականում տեղ է թողնում տարընթերցումների համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ադոնց Ն., Հայաստանը Յուստինիանոսի դարաշրջանում. Քաղաքական կացությունը ըստ նախարարական կարգերի, Եր., 1987:
2. Ադոնց Ն., Հայաստանի պատմություն, Եր., 1972:
3. Աղայան Է., Բառաքնական և ստուգաբանական հետազոտություններ, Եր., 1974:
4. Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. I, 1971, հ. II, 1973, հ. III, 1977, հ. IV, 1979:
5. Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, Եր., 2005:
6. Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, մաս I-II, Եր., 2013:
7. Առաքելյան Վ., Հինգերորդ դարի հայ թարգմանական գրականության լեզուն և ոճը, Եր., 1984:
8. Դիլբարյան Ն., Խաչատրյան Ա., Հայերենի բնիկ և փոխառյալ բառերը, Եր., 2013:
9. Խաչատրյան Վ., Հայկական տեղանունները սեպագիր աղբյուրներում, Եր., 2012:
10. Կարազեդեան Յ., Սեպագիր տեղանուններ, Եր., 1998:
11. Համբարձումյան Վ., Հայերենի բառաքնական եւ ստուգաբանական ուսումնասիրություններ, Եր., 2012:
12. Հյուրշման Հ., Հայերենի քերականություն, Եր., 2003:
13. Հովհաննիսյան Լ., Հայերենի իրանական փոխառությունները, Եր., 1990:
14. Հովհաննիսյան Լ., Հայ թարգմանական գրականության բառապաշարը (V դար), Եր., 2007:
15. Հովհաննիսյան Լ., Գրաբարի բառապաշարի իմաստային խմբերի քննություն, Եր., մաս I, 2008, մաս II, 2012:
16. Հովհաննիսյան Լ., Բառերի մեկնությունները հինգերորդ դարի հայ մատենագրության մեջ, Եր., 2016:
17. Հովսեփյան Լ., Գրաբարի բառակազմությունը, Եր., 1987:
18. Ղազարյան Ռ., Միջին գրական հայերենի բառապաշարը, Եր., 2001:
19. Ղափանցյան Գ., Հայոց լեզվի պատմություն. Հին շրջան, Եր., 1961:

20. Ղափանցյան Գ., Անտիպ գործեր, *Ара Прекрасный. Мифотворческий образ у армян*, Եր., 2008:
21. Մալխասեան Ս., Հայերէն բացատրական բառարան, հ. I, II, III, 1944, հ. IV, 1945:
22. Սկրտչյան Է., Խաչատրյան Լ., Հայոց լեզվի պատմության դասընթաց, Եր., 2016:
23. Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. I, 1979, հ., II, 1981:
24. Ջահուկյան Գ., Բնիկ հայերեն արմատներով կազմված հայկական անձնանունները, Պատմա-բանասիրական հանդես, հ. 4, 1984:
25. Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987:
26. Ջահուկյան Գ., Հայոց լեզվի տեսության և պատմության հիմնահարցերը, Համազգային Վահի՛ Մեթեան տպարան, 2005:
27. Ջահուկյան Գ., Հայերենի ստուգաբանական բառարան, Եր., 2010:
28. Քոսյան Ա., Հայկական լեռնաշխարհի տեղանունները (Ըստ խեթական աղբյուրների), Եր., 2004:
29. Туманян Э., Структура индоевропейских имен в армянском языке, М., 1978.

Մաս III

ՊԱՏՄԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԵՐԵՆԻ ԽՈՆԱՐՀՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՁԱՐԳԱՑՈՒՄԸ

Դարերի ընթացքում հայերենը կարողացել է պարզեցնել հնդեվրոպական մայր լեզվի խոնարհման համակարգի բազմաձևությունը և մշակել խոնարհման իր համակարգը, որ կազմության տեսանկյունից պարզության դասական օրինակ է: Հին հայերենի բայի խոնարհումը կատարվում է ըստ չորս լծորդությունների, որոնք ձայնավորների անունով կոչվում են **ե, ի, ա, ու**, իսկ մեկ բայ՝ *գոմ*-ը, պատկանում է **ո** խոնարհման: Գրաբարի խոնարհման համակարգը շատ հստակ է: Կան չորս խոնարհումներ՝ պարզ և ածանցավոր ձևերով, երկու հիմք՝ ներկայի և կատարյալի, դրանցից կազմվող երեք եղանակների ութ բայաձևեր, որոնք հավասար բաշխվում են ժամանակ կազմող երկու հիմքերի վրա. ներկայի հիմքից կազմվում են սահմանական եղանակի անկատար ներկա, անկատար անցյալ, ստորադասական եղանակի 1-ին ապառնի, արգելական հրամայական ժամանակները, կատարյալի հիմքից՝ սահմանական անցյալ կատարյալ, ստորադասական 2-րդ ապառնի, բուն և հորդորական հրամայական ժամանակները:

Գրաբարի խոնարհման համակարգի այս պարզությունն էր պատճառը, որ դարերի ընթացքում այն քիչ փոփոխությունների ենթարկվեց: Այս առումով Հ. Աճառյանը, համեմատելով խոնարհման և հոլովման համակարգերը, նշում է, որ միջին հայերենում հոլովման համակարգը շրջադարձային փոփոխությունների ենթարկվեց, որոնց համեմատ խոնարհման համակարգի փոփոխությունը ոչինչ է: Հ. Աճառյանն ընդգծում է, որ հոլովումը գրաբարում հստակ կանոններ չունի, այնինչ ցանկացած բայ իր լծորդությամբ, կազմությամբ արդեն հուշում է՝ ինչ խոնարհման պետք է ենթարկվի, ինչ վերջավորություններ ստանա: Նրա վերլուծու-

թյամբ գրաբարի խոնարհման համակարգը միջին գրական հայերենում կրեց հետևյալ փոփոխությունները.

- 1) վերացավ ստորադասական եղանակը,
- 2) վերացավ գրաբարյան ապառնին,
- 3) գրաբարի ներկան և անցյալ անկատարը վերածվեցին ստորադասական ներկայի և անցյալի,
- 4) **կու** եղանակիչով նոր սահմանական ներկա և անցյալ անկատար ժամանակներ կազմվեցին:

Հավելենք ևս երեք վճռորոշ փոփոխություններ:

Առաջացան այնպիսի նոր դերբայներ, որոնք սկսեցին մասնակցել եղանակաժամանակային ձևերի կազմությանը՝ համադրական ձևերը հասցնելով նվազագույնի և ավելացնելով վերլուծական բայական ժամանակների քանակը հայերենում, որոնք կազմվում էին **եմ** բայի ներկա և անցյալ ձևերից (ապառնու ձևերն արդեն ջնջվել էին՝ **եմ** բայը դարձնելով էլ ավելի պակասավոր) և տարբեր դերբայներից՝ *ում, իս, ելոյ՝ ելու, ալոյ՝ ալու, ած, ել/եր* վերջավորություններով:

Ավելացան բայական եղանակները, որը պայմանավորված էր ինչպես նոր եղանակիչների առաջացմամբ՝ *կոյ/կու/կ, պիտի*, այնպես էլ նոր դերբայների առաջացմամբ:

Կրավորականի կազմության հին սկզբունքները վերացան, որը միջին հայերենի աշխարհաբարացման շրջանում հանգեցրեց կրավորական սեռի կազմության համար նոր *ու/ւ/վ* ածանցի առանձնացմանը:

Սրանք համակարգային այն փոփոխություններն էին, որ միջին հայերենը տարանջատում են գրաբարից: Իսկ գրաբարից և միջին գրական հայերենից դեպի աշխարհաբար տանող ճանապարհին կատարված փոփոխությունները լիովին խմբավորել դժվար է, որովհետև աշխարհաբարը երկճյուղ դարձավ՝ արևելահայ և արևմտահայ գրական լեզուների բաժանմամբ: Գրաբար-միջին հայերեն-արևելյան գրական աշխարհաբար շղթայում բայական համակարգի վճռական փոփոխությունները դարձյալ հանգում են հետևյալին:

- Սահմանական եղանակի անկատար ներկայի և անցյալի կազմության նոր ձևերի առաջացմանը՝ այս անգամ արդեն ոչ թե

եղանակիչով, այլ *ում*-ով անկատար դերբայի և *եմ* բայի պահպանված ներկա և անցյալ ձևերի միջոցով:

- **Կը** և **պիտի** եղանակիչներով և գրաբարյան սահմանական ներկայի ու անցյալ անկատարի ձևերի հնչյունափոխված տարբերակներով ենթադրական ու հարկադրական եղանակների տարանջատմանը:
- **Վ** ածանցի միջոցով ներգործածն և կրավորածն խոնարհումների հստակ հակադրության ձևավորմանը:

ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Անորոշ դերբայն անվանում է գործողությունը կամ եղելությունը ամենաընդհանուր ձևով: Այս դերբայը անցյալի քերականները առանձնացրել են դերբայական մյուս ձևերից և ներկայացրել որպես եղանակ. այն կոչում են անորոշ եղանակ: Հայերենում, սակայն, անորոշ դերբայն ինքնին ժամանակի իմաստ չի արտահայտում, ուստի եղանակ համարվել չի կարող: Գրաբարում անորոշ դերբայն ուներ չորս լծորդություն՝ **ա, ե, ի, ու**: **Ո** լծորդության ընդամենը մեկ բայ է վկայված՝ **գոլ**-ը, որը պակասավոր էր: Անորոշի վերջավորությունը **լ**-ն է, որը ծագել է հնդեվրոպական ***lo** վերջավորությունից: Այս **լ**-ից առաջ դրվում էին խոնարհիչ ձայնավորները: Գրաբարյան անորոշ դերբայի վերջավորություններն էին՝ **ալ, ել, ուլ**, միայն **ի** լծորդն էր, որը **լ**-ի հետ դասական գրաբարում, որպես կանոն, չէր հանդիպում: Այս լծորդության բայերն անորոշ դերբայում նույնանում էին **ե** լծորդության բայերի հետ, և միայն խոնարհման ժամանակ էր երևան գալիս **ի** լծորդը: **Իլ**-ով անորոշ դերբայներն առավելապես վկայված են հետդասական շրջանում: Բերենք օրինակներ՝ **ալ**-*անասլ, գթալ, լալ, յուսալ, փութալ, մութալ, յագենալ, գոհանալ, ել*-*ածել, բերել, յիշել, առնել, հատրանել, իջանել, մտրանել, ուլ*-*առնուլ, գենուլ, զբօսնուլ, հեծնուլ, իլ/ել*-*խաւսիլ/ել, հայիլ/ել, մարտնչիլ/ել, երկնչիլ/ել, քաքչիլ/ել*:

Միջին հայերենը ժառանգում է գրաբարյան չորս լծորդությունները՝ **ալ**՝ *խնդալ, լալ, մեծնալ, ուրախնալ, ել*՝ *ածել, բերել, յիշել, այնել, հաւրնել, ցուցնել, ուլ*՝ *թողուլ, առնուլ, մարնուլ, իջնուլ, իլ*՝ *խօսիլ, խորհիլ, մեռնիլ, պատկառիլ*:

Արևմտահայ գրական աշխարհաբարը ունի երեք լծորդություն, օրինակներ՝ **ալ**՝ *խնդալ, բուպիկնալ, կենալ, հասկնալ, ճանչնալ, ել*՝ *ածել, խալըսել, ընել, յիշել, ցուցնել, սպաննել, իլ*՝ *արգիլուիլ, հաղորդուիլ, հաճիլ*:

Արևելահայ ժամանակակից գրական լեզուն պահպանել է միայն երկու լծորդություն՝ **ա** և **ե** (վաղ շրջանում կար նաև **ի** լծորդությունը, որը, սակայն, ձուլվեց **ե**-ին)՝ **ալ**՝ *խաղալ, հագնալ, գոհանալ, տալ, ել*՝ *սպաննել, իջնել, մարնել, գրնել*:

Անորոշ դերբայի մասնիկներից առաջ հայերենում կարող էին լինել միջածանցներ, որոնք հայերենի զարգացման տարբեր փուլերում տարբեր դրսևորումներ և տեսակներ ունեն:

Գրաբարյան միջածանցները հետևյալներն են՝

1. սուկածանցներ, որոնք կոչվում են նաև կա՛մ բաղադրական ածանցներ, կա՛մ կերպածանցներ՝ **-ան-**, **-են-**, **-ն-**, **-նչ-**, **-չ-**, **-անչ-**, **-աչ-**, օրինակ՝ *սպանանել, մերչենալ, հեծնուլ, երկնչել, քաքչել*,

2. բազմապատկական ածանցներ՝ **-աւո-**, **-ոտ-**, **-տ-**, ինչպես՝ *խաժարել, խոցուրել, բեկրել*,

3. պատճառական ածանց՝ **-ուցան-/ուզան-/ուսան-**, օրինակ՝ *մատուցանել, փրուզանել, կորուսանել*:

Միջին հայերենի բայական ածանցներն են՝

1. սուկածանցներ՝ **-ն-**, **-նչ-**, **-չ-**, օրինակ՝ *նեղնալ, մոռնալ, գիւրնալ, երկնչիլ, փլչիլ, փախչիլ*,

2. բազմապատկական ածանցներ, օրինակ՝ **-ոտ-**, **-տ-**, ինչպես՝ *խոցոտել, կտրտիլ*,

3. պատճառական ածանց՝ **-ուցան-**, որն ավելի հաճախ վերածվում է **ցն-**ի՝ *կակղեցուցանել, կացուցանել, զինացնել, չորացնել, հասցնել*:

4. կրավորական ածանց՝ **ու/ւ/վ**: Հաճախ այս ածանցից առաջ **ե** լծորդը փոխվում էր **ի**-լծորդի. պատճառը գրաբարի ազդեցությունն էր,

կրկնակի կրավորական էր կազմվում, որովհետև գրաբարում ներգործական սեռի **ե** լծորդության բայերը կրավորականի իմաստ արտահայտելու համար ե>ի անցումով էին հանդես գալիս՝ *սիրեմ-սիրիմ, շինե-շինի*: Բերենք օրինակներ՝ *սրեղծուի, վճարուի, լցուի, տեսնել, բաժնել*:

Արևմտահայ և արևելահայ գրական լեզուներն ունեն **-ան-, -են-, -ն-, -չ-** տակածանցները, բայց տարբեր գործունակությամբ: Արևմտահայերենում ամենահաճախադեպը **-ն-** ածանցն է տարբեր լծորդությունների բայերում: Օրինակներ՝ *գոնջանալ, մերչենալ, ընթեռնուլ, երդնուլ, հասնել, մեռնիլ, փչիլ, դիպչիլ, կպչիլ*: Արևելահայերենում ամենագործունը **-ան-** ածանցն է **ա** լծորդության դեպքում՝ *գոհանալ, նրբանալ, հիմարանալ, քարանալ*: Մյուս ածանցներից կազմված բայերի օրինակներ՝ *հագենալ, մերչենալ, մկրնել, տեսնել, հանգչել, փախչել*: Պատճառական և կրավորական ածանցները արևելահայ և արևմտահայ գրական լեզուներում մույնն են՝ **-ցն-** և **-ու/վ-**: Այսպես, արևմտահայերենում ունենք հետևյալ պատճառականները և կրավորականները՝ *սվիլցնել, գողցնել, ճանչցնել, կորսնցնել, կորսուիլ, կուրակուիլ*: Արևելահայերենում **-ցն-** ածանցը զուգակցվում է **ա** և **ե** լծորդների հետ՝ **ացն/եցն**, այսպես՝ *մեծացնել, մոպեցնել*, իսկ կրավորական ածանցը ուղղագրական բարեփոխումից հետո ունի **վ** ձևը, որը կարող է գործածվել մաս չեզոք սեռի որոշ բայերի հետ՝ *սիրահարվել, ցնորվել*:

Անորոշ դերբայը ձևաբանական և իմաստաբանական սերտ կապեր ունի մյուս դերբայների հետ: Ինչպես հավաստում է Ա. Աբրահամյանը, «հետազոտությունները պարզում են, որ հայերենում անորոշ դերբայից են գոյացել ուրիշ դերբայներ՝ նրա հոլովման, ածանցման և դերբայական մասնիկների զանազան հնչյունական փոփոխությունների հետևանքով»¹⁵⁵:

Այսպիսով՝ անորոշ դերբայը մայրն է մնացյալ դերբայների: Գրաբարում այն հոլովվում էր միայն եզակի թվով՝ **ո** հոլովմամբ: Միջին հայերենի ուշ շրջանում **ոյ>ու** հնչյունափոխության պատճառով այս

¹⁵⁵ Ա. Աբրահամյան, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Եր., 1953, էջ 72:

դերբայն անցնում է **ու** հոլովման: Աշխարհաբարում անորոշը պահպանում է **ու** հոլովումը:

Գրաբար - ուղղ.՝ *մյրանեկ*, հայց.՝ *(զ)մյրանեկ*, սեռ/տրակ.՝ *մյրանեկոյ*, բացառ.՝ *ի մյրանեկոյ*, գործ.՝ *մյրանեկով*, ներգ.՝ *ի մյրանեկ*:

Միջին հայերեն - ուղղ.՝ *մյրնեկ*, հայց.՝ *(զ)մյրնեկ*, սեռ/տրակ.՝ *մյրնեկոյ* > *ու*, բացառ.՝ *(ի) մյրնեկոյ*, գործ.՝ *մյրնեկով*:

Արևելահայ աշխարհաբար - ուղղ.՝ *մյրնեկ*, սեռ/տրակ.՝ *մյրնեկու/ն*, բացառ.՝ *մյրնեկուց*, գործ.՝ *մյրնեկով*:

ԵՆԹԱԿԱՅԱԿԱՆ ԳԵՐԲԱՅԻ ՃԱԳՈՒՄԸ

Հ. Աճառյանը հայերենի ենթակայական դերբայի **աւղ/օղ** վերջավորությունը կապում է սլավոնական, իսկ Գ. Ղափանցյանը՝ հատկապես խեթերենի համապատասխան ձևերի հետ՝ բխեցնելով դրանք հնդեվրոպական ***atl**-ից, որը ցույց էր տալիս գործողություն կատարողին, օրինակ ռուսերեն՝ **атель- создатель, писатель**, խեթերեն՝ *halugatallas* – բանբեր, լուր բերող. գործողություն կատարողի համար կիրառվում էր **atall(as)** ձևությոն¹⁵⁶: Ա. Ղարիբյանը, ի տարբերություն Հ. Աճառյանի և Գ. Ղափանցյանի, փորձում է ստուգաբանել **ող**-ը՝ այն համարելով գրաբարի երբեմնի **ոլ** լծորդության անորոշ դերբայի մասնիկից ծագած՝ ոլ > ող. **լ**-ն **ղ** է դարձել, և իմաստի տարբերակմամբ վերջինս վերածվել է ենթակայական դերբայ կազմող ձևության:

Ենթակայական դերբայի մասնիկը մեր հնագույն գրավոր հիշատակարաններում մեզ ավանդվել է երկու ձևով՝ **ող** և **աւղ**: Առայսօր դժվար է ասել՝ որն է ավելի հին: Ա. Աբրահամյանը ենթադրում է, որ դրանք տարբեր մասնիկներ են եղել՝ գուցե անգամ իմաստային տարբերությամբ, սակայն հետագայում դրանց գործառնությունները մույնացել են, իսկ աւ>օ հնչյունափոխությունը և **օ**, **ո** հնչյունների արտասանության հետագա մույնացումը նպաստել է այդ մասնիկների խառնվելուն:

¹⁵⁶ Տե՛ս Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 228-229:

Գրաբարում այս դերբայի կիրառությունը խիստ սահմանափակ է: Գրաբարի քերականության մեջ այն ընդունված էր կոչել «ընդունելութիւն ներկայ», քանզի այս դերբայն արտահայտում էր ներկայում կատարվող գործողություն՝ ներառելով բայական և անվանական հատկանիշներ: Թ. Շահվերդյանը նշում է, թե ենթակայականը որքանով որ բայ է, այնքանով, գուցե և ավելի անուն է. «Ենթակայական դերբայները գործողություն կատարող անուններ են, կամ գործողությամբ բնութագրվող անուններ»¹⁵⁷: Կրավորական սեռի բայերը ենթակայական դերբայ բնավ չեն ունենում, ու լծորդության չեզոք սեռի բայերը՝ ևս: Որոշ անկանոն բայերի ենթակայականի ձևերը մմանապես կա՛մ չեն եղել, կա՛մ մեզ չեն հասել (*երթալ, լինել, յառնել, գոլ, պարսիլ*): Գրաբարում այս ձևերի սահմանափակությունը լրացվում է դրսևորման այլ ձևերով:

ա) **Իչ** դերբայական մասնիկով, որը շատ տարածված էր՝ *անիծիչ, ապրեցուցիչ, գնացուցիչ, գրիչ, ծնիչ, սիրիչ, սնուցիչ, արարիչ, րոհիչ, կերիչ*: Այս ձևերը ներգործական նշանակություն ունեին, օրինակ՝ *ծնիչ-ծնող*, բայց ոչ՝ *ծնվող*:

բ) Տվյալ բայի դիմավոր ձևով և **որ** հարաբերական դերանունով, հատկապես հունարենից կատարված թարգմանություններում՝ *որ վաճառեն մի ողբասցէ՝ վաճառողը, ով չեզ լսէ, ինչ լսէ, ով չեզ անարգէ, զիս անարգէ* - ձեզ լսողը, ձեզ անարգողը:

գ) Այլ դերբայների կամ բայանունների միջոցով, օրինակ՝ **ի**-ով ապառնի- *գործելի-գործող, կրելի-կրող, ու, ացու, ան, ուչ, օն* ածանցներով՝ *այցելու, շարժուն, մահացու, ջնջան, գործօն* = *այցելող, շարժող, մահացնող, ջնջող, գործող* և այլն: Մ. Ասատրյանը կարծում էր, թե գրաբարում ենթակայականը բայանուն է եղել, ոչ թե դերբայ, ահա թե ինչու **իչ** և **ող** վերջավորությամբ ձևեր ոչ բոլոր բայերից են կազմվում, այլ հատուկ են են միայն սահմանափակ թվով բայերի, բացի այդ՝ ենթակայականի ձևերը կրավորականի իմաստ գրաբարում չէին կարող արտահայ-

¹⁵⁷ Թ. Շահվերդյան, Գրաբարի դերբայները. Ձևաբանություն և շարահյուսություն, Եր., 2001, էջ 98:

տել, իսկ ներգործական բայափյունից կազմված ձևերն ունեին որ թե հայցական, այլ սեռական խնդրառություն¹⁵⁸:

Միջին հայերենում ենթակայական դերբայի կիրառությունն անսահմանափակ է. բոլոր բայերն առանց բացառության կարող են կազմել ենթակայականի ձևեր:

Այս դերբայը կազմվում է երկու հիմքից՝ ներկայի և կատարյալի: Գրաբարում **ե** և **ի** լծորդության պարզ և ածանցավոր բայերը (**ի** լծորդության միայն **ան** ածանցով բայերը) ենթակայական կազմում են և՛ ներկայի, և՛ կատարյալի հիմքերից, օրինակ՝ *երգել- երգող/երգեցող, ասել- ասող// ասացող, տեսանել- տեսանող// տեսող, հայել- հայող// հայեցող, ուսանել- ուսող// ուսանող*: Ա լծորդության բայերը ենթակայական կազմում են միայն կատարյալի հիմքից՝ *գոհանալ-գոհացող, զնալ-զնացող*, թեև կան ներկայի հիմքից կազմված *մուրող, հոգող, որսող, խնամող, լուսնող* ձևերը: Ու լծորդության բայերը ենթակայական դերբայ գրեթե չեն կազմում, կազմելիս էլ՝ միայն կատարյալի հիմքից՝ *ընթերնուլ-ընթերցող, առնուլ-առող*:

Միջին հայերենում, աշխարհաբարում, բարբառներում ենթակայականը կազմվում է կատարյալի հիմքից միայն **ա** լծորդության բայերի դեպքում: Մնացած խոնարհումների բոլոր սեռերի, այդ թվում՝ պատճառական բայերի ենթակայականը կազմվում է ներկայի հիմքից:

Բերենք օրինակներ միջին հայերենից՝ ներգործել>ներգործող, խօսիլ>խօսող, կարդալ>կարդացող, ուսնել>ուսնող, ուսցնել>ուսցնող, տաքցնել>տաքցնող, կակղցնել>կակղցնող, սպաննել>սպաննող, գտնուլ>գտնող և այլն:

Արդի հայերենում՝ զնալ>զնացող, տաքացնել> տաքացնող, ծիծաղել>ծիծաղող, գտնել>գտնող: Միայն որոշ անկանոն բայերի դեպքում՝ գալ>եկող, տալ>տվող և այլն:

Գրաբարում ենթակայական կամ ներկա դերբայը հոլովվում էր **ի-ա** վերջադրական հոլովմամբ: Օր.՝ եզակի ուղղ.՝ *գրացող, հայց.՝ (զ)գրացող, սեռ/տրակ.՝ գրացողի, բացառ.՝ ի գրացողէ, գործ.՝ գրացողաւ,*

¹⁵⁸ Տե՛ս Մ. Ասատրյան, Ժամանակակից հայերենի ձևաբանության հարցեր, հ. Բ., Եր., 1973, էջ 392-393:

ներգ.՝ *ի գրացողի*, հոգն. ուղղ.՝ *գրացողք*, հայց.՝ *(գ)գրացողս*, սեռ/տրակ.՝ *գրացողաց*, բացառ.՝ *ի գրացողաց*, գործ.՝ *գրացողաւք*, ներգ.՝ *ի գրացողս*:

Միջին հայերենում խառը հոլովումները վերանում են, և այս դերբայը դառնում է **ի** ընդհանրական հոլովման, որը և աշխարհաբարում պահպանվում է:

Մնացած դերբայների կազմության մասին կխոսենք եղանակաժամանակային համապատասխան ձևերի կազմության ժամանակ՝ ցույց տալով դրանց սերտ կապը խոնարհման համակարգի հետ:

ԿՈՒ/ ԿՈՅ ՄԱՍՆԻԿԻ ՃԱԳՈՒՄԸ

Միջինհայերենյան շրջանում՝ 12-րդ դարում, ստեղծվեց սահմանական ներկա և անցյալ անկատար ժամանակների կազմության մի նոր եղանակ՝ **կոյ** (կամ **կու**) գումարած գրաբարի սահմանական ներկա և անցյալ անկատար՝ **կոյ//կու գամ, կոյ// կու գայի** և այլն:

Այս մասնիկի ծագումը զբաղեցրել է շատ հայազետների: Առաջինը **կու**-ի ծագումնաբանության հարցով զբաղվել է Արսեն Այտընյանը: Նա իր «Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզուի» աշխատության մեջ (Վիեննա, 1866 թ.) նշում է, որ դեռ 5-րդ դարում գրաբարի սահմանական ներկա և անցյալ անկատար ժամանակները օգտագործվում էին ստորադասական ապառնիների փոխարեն: Այս բազմիմաստությունը և խառնակությունը դարերի ընթացքում առավել խորացան, և լեզվի մեջ անհրաժեշտաբար ստեղծվեց նոր մասնիկ, որը, դրվելով ստորադասական դարձած ներկայի և անցյալ անկատարի վրա, նրան պիտի հաղորդեր անկատար ներկայի և անցյալի իմաստ: Այտընյանը ենթադրում է, որ այս **կու**-ն **կայ** և **ու** բառերի բաղադրությունն է, որը կրճատմամբ դարձել է **կու**, փոխանակ **կայ ու նայի - կու նայի**, փոխանակ **կայ ու ուտե - կու ուտե**, հետագայում էլ երրորդ դեմքից տարածվել և ընդհանրացել է բոլոր դեմքերի համար, ինչպես օրինակ՝

կանք ու լսենք-ը դարձել է **կու լսենք**, **կայր ու տեսանէր**-ը վերածվել է **կու տեսանէր** և այդպէս շարունակ:

Հ. Աճառյանը փորձում է հիմնավորել Այտընյանի վարկածը հայերենի բարբառների հիման վրա: Կեսարիայի բարբառում կան **չկամ կարդամ, չկաս գրէիր** բայաձևեր, որոնք նշանակում են *չեմ կարդում, չէիր գրում*: Այս **չկամ, չկաս** ձևերը նա բխեցնում է *կալ/ կենալ* բայից, որից առաջացել է *կայ ու > կու* ձևը:

Առավել հետաքրքիր է Կեսարիայի բարբառում ներկա ժխտականի կազմությունը՝ *չիքամ գիրեմ, չիքաս գիրէս, չիքա գիրէ, չիքանք գիրէնք, չիքաք գիրէք, չիքան գիրէն*, որտեղ *չիքամ, չիքաս, չիքա* և մյուս ձևերը *չ+ կամ, կաս, կայ* ձևերից են ծագել:

Հ. Պետերմանը առաջ է քաշում այլ տեսակետ, ըստ որի՝ **կու** եղանակիչը միջին հայերենում առաջացել է **կամ/ք** բառից **ա**-ի սղմամբ և **մ>ու** հնչյունափոխությամբ: Պետերմանը կարծում է, որ *կու*-ն ապառնիության իմաստ է արտահայտում, այսինքն՝ ապագայում գործողություն կատարելու կամք է արտահայտում, բայց **կու** մասնիկն այս իմաստն ունի աշխարհաբարում, ոչ թե միջին հայերենում, ուստի Հ. Աճառյանն այս վարկածը սխալ է համարում թե՛ իմաստային, թե՛ հնչյունական տեսանկյուններից. **կամ**-ը չի կարող հնչյունափոխվել **կու**-ի:

Մ. Աբեղյանը «Աշխարհաբարի քերականության» մեջ սկզբում ընդունում է Այտընյանի վարկածը, բայց հետագայում «Հայոց լեզվի տեսության» մեջ նոր ստուգաբանության է հանգում՝ դարձյալ ելնելով հայերենի բարբառների ընձեռած փաստերից: Ըստ այդմ՝ **կու** մասնիկի հին ձևն է **կոյ**-ը, որը վկայված է հին ձեռագրերում. այդ **կոյ**-ը սկզբնապես եղել է անկախ բառ՝ *սահա* նշանակությամբ, որը ցայսօր էլ կիրառվում է մեր բարբառներում հնչյունական մի քանի տարբերակներով՝ **կո, կյո, գո, գյո**: *Սհա* բառը, դրվելով գրաբարյան իմաստափոխված ներկայի և անկատարի վրա, դրանց հաղորդել է ներկա պահին կատարվող գործողության իմաստ, իսկ **ոյ**-ն էլ աստիճանաբար հնչյունափոխվել է **ու**-ի: Այս հնչյունափոխությունը բնորոշ է հայերենի զարգացման գրեթե բոլոր փուլերին՝ *ոյժ> ուժ, բոյս> բուսական* և այլն: Հավելենք, որ ունենք բարբառներ, որտեղ ներկան կազմվում է *հա>սահա* մասնիկով:

Ն. Մառի տեսակետը զարգացնելով՝ Գ. Ղափանցյանը պնդում է, որ հայերենի **կու** մասնիկը ծագումնաբանորեն կապվում է լազերենի **ko** նույնապաշտոն մասնիկի հետ: Այս կապակցությամբ Հ. Աճառյանը նշում է, որ լազերենում **ko** մասնիկն ապառնի է կազմում միայն կատարյալից, ուստի անհավանական է համարում դրանց ծագումնաբանական նույնությունը:

Ա. Մուրվալյանը **կու**-ն բխեցնում է քարթվելական **օկոն** եղանակիչից, բայց վերջինս նշանակում է *սխիռի*, բացի դրանից՝ հնդեվրոպական հայերենը կովկասյան լեզուներից հարկ չունեն եղանակիչ փոխառելու:

Ա. Մարգարյանը **կու** մասնիկի ծագմանն առանձին հոդված և աշխատություն է նվիրել, որտեղ զարգացնում է Հ. Պետերմանի տեսակետն արդեն բայական տարբերակով: Նրա համոզմամբ՝ **կու** եղանակիչն իր ծագմամբ կապվում է գրաբարի **կամիլ** եղանակավորիչ բայի ներկա ժամանակի եզակի երրորդ դեմքի **կամի** բայաձևի հետ և առաջ է եկել դրա ու անորոշ դերբայի լայն կիրառությունների հիմքի վրա, այսպես՝ **կամի քաշել**-ը դարձել է **կամի քաշի**, ապա՝ **կու քաշի**, վերջինս էլ՝ **կքաշի**¹⁵⁹:

Հիշյալ տեսակետներից առավել համոզիչ են Ա. Այտընյանի և Մ. Արեղյանի հիմնավորումները, որոնք ելնում են **կու-կոյ** մասնիկի արտահայտած ներկա պահին գործողության կատարման իմաստից: Ապառնի գործողության կատարման իմաստ **կու**-ն հետագայում է ձեռք բերել:

ՊԻՏԻ ԵՂԱՆԱԿԻՉԻ ՃԱԳՈՒՄԸ

Միջին հայերենում գրաբարի ստորադասական ապառնու ջնջվելուց հետո իբրև ապառնի գործածվում էին **կամիմ** բայով կառույցները (*սիրել կամիմ կամ կամիմ սիրել*), սրա հետ մաս **կու**-ով ներկան: **Կամիմ**-ով ձևերը չամրակայվեցին լեզվի մեջ, իսկ **կու**-ով ձևերի գործածությունը՝ և՛ ներկայի, և՛ ապառնու իմաստներով, հաղորդակցման և ըմբռնման

¹⁵⁹ Հմմտ. Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. 2, Եր., 1975, էջ 117-182:

դժվարություններ էր առաջացնում, ուստի արևմտահայերը *կը*-ով ձևերը հատկացրին ներկային, իսկ ապառնու համար ստեղծեցին **պիտի** եղանակիչը: Արևելահայերը ներկայի համար ստեղծեցին *ում*-ով վերջավորվող անկատար դերբայը: Այսպիսով՝ *կը*-ն հատկացրին միայն ապառնուն՝ որպես ենթադրական կամ պայմանական եղանակի կազմիչ, իսկ **պիտի**-ն՝ հարկադրական կամ պարտադրական եղանակի:

Պիտի-ն նախապես անդեմ բայ էր **պետք է** նշանակությամբ և գործածվում էր անորոշ դերբայի հետ: 5-րդ դարում ունենք այդպիսի կառույցներ՝ **դարձեալ գալ պիտի, ոչ պիտի սպանանել** և այլն: Մինչև այժմ էլ **պիտի**-ն **պետք է** իմաստով անորոշի հետ կառույցներ է կազմում՝ **պիտի գնալ, պիտի մաքրել** և այլն: Այնուհետև այն միացավ գրաբարի սահմանական ներկայի և անցյալ անկատարի հետ՝ ստեղծելով հարկադրական եղանակի երկու ժամանակաձևեր՝ ապառնի և ապառնի անցյալ՝ **պիտի ասեմ, պիտի ասեի**:

Հայերենում **պիտի**-ն ծագումնաբանորեն *ի* լծորդության սովորական բայ է եղել՝ **պիտեյ**, որը կարող էր խոնարհվել ներկա՝ **պիտի**, անցյալ անկատար՝ **պիտէր**, և կատարյալ ժամանակներով՝ **պիտեցաւ**: Այս ձևերը գործածվել են մինչև 17-րդ դարը ներառյալ, այնուհետև **պիտէր**-ը համաբանությամբ դարձավ **պիտիր՝ պիտիր տանիմ, պիտիր գայք, պիտիր ուղարկեն**: Բայց այդ **պիտիր**-ը դուրս մղվեց, և գործածության մեջ հաղթեց **պիտի**-ն: Աստիճանաբար այն կորցրեց բառային ինքնուրույնությունը, բայաձևից վերածվեց մասնիկի՝ եղանակիչի, սկսեց կրճատվել՝ **պիտ, պտի, տի, պ, տ** տարբերակներով, որոնք արևմտյան բարբառներում դարձան՝ **բիդ, բի, դ**: Սկսեց միանալ **որ** շաղկապին՝ ստեղծելով **պիտոր/ բիդոր** եղանակիչը՝ **պիտոր գրեմ, բիդոր երթամ**:

Բարբառներում այն պահպանել է իր խոնարհման ձևերը, օրինակ՝ Թիֆլիսի բարբառում ունենք՝ **պիտիմ սիրի, պիտիս սիրի, պիտի սիրի, պիտինք սիրի, պիտիք սիրի, պիտին սիրի** ձևերը¹⁶⁰:

¹⁶⁰ Հմմտ. *Հայոց լիզվի պատմական քերականություն*, հ. 2, էջ 333-340:

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ՆԵՐԿԱ ԵՎ ԱՆՅՅԱԼ ԱՆԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՋԱՐԳԱՅՈՒՄԸ

Ներկա ժամանակի վերջավորություններն են **-մ, -ս, -յ, -մք, -յք, -ն** բոլորը հնդեվրոպական ծագման, միայն նշենք, որ հոգնակի 1-ին և 2-րդ դեմքերի **ք**-ն հայկական կազմություն է, որն առկա է նաև հոլովման համակարգում: Այս վերջավորությունների սկզբից կցվում են գրաբարի չորս խոնարհիչ ձայնավորները՝ համապատասխան հնչյունափոխություններով: Վերջավորությունները մաքուր ձևով պահպանվում են միայն **ա** լծորդության դեպքում, որովհետև **ա**-ն գրաբարում ուժեղ ձայնավոր էր և հնչյունափոխությունների գրեթե չէր ենթարկվում:

Այսպես՝ **ա** լծորդություն՝ *-ամ, -աս, -այ, -ամք, -այք, -ան, և* լծորդություն՝ *-եմ, -ես, -է (ե+յ=է), -եմք, -էք (ե+յ=է), -են, ու* լծորդություն՝ *-ում, -ուս, -ու (յ-ն սղվում է), -ումք, -ուք (յ-ն սղվում է), -ուն, ի* լծորդություն՝ *-իմ, -իս, -ի (յ-ն սղվում է), -իմք, -իք (յ-ն սղվում է), -ին:* Անցյալ անկատարի վերջավորություններն են՝ *-յի, -յիր, -յր, -յաք, -յիք, -յին:* Այս վերջավորություններին ևս կցվում են լծորդ ձայնավորները: Պատմական հնչյունափոխության հետևանքով **ե** և **ի** լծորդությունների վերջավորությունները նույնանում են: **Ա** լծորդության բայերը ստանում են՝ *-այի, -այիր, -այր, -այաք, -այիք, -ային, և* **ի** լծորդությունների բայերը՝ *-էի, -էիր, -էր, -էաք, -էիք, -էին, ու* լծորդությամբ՝ *-ուի, -ուիր, -ուր, -ուաք, -ուիք, -ուին:*

Խոնարհման հարացույցներ

ԳՐԱԲԱՐ

Անսալ- *սահմանական ներկա*՝ անսամ, անսաս, անսայ, անսամք, անսայք, անսան:

Սահմանական անցյալ անկատար՝ անսայի, անսայիր, անսայր, անսայաք, անսայիք, անսային:

Իջանել- *սահմանական ներկա*՝ իջանեմ, իջանես, իջանէ, իջանեմք, իջանէք, իջանեն:

Սահմանական անցյալ անկադար՝ իջանէի, իջանէիր, իջանէր, իջանէաք, իջանէիք, իջանէին:

Մոլորել(իս)- *սահմանական ներկա՝* մոլորիմ, մոլորիս, մոլորի, մոլորիմք, մոլորիք, մոլորին:

Սահմանական անցյալ անկադար՝ մոլորէի, մոլորէիր, մոլորէր, մոլորէաք, մոլորէիք, մոլորէին:

Երդնուլ- *սահմանական ներկա՝* երդնում, երդնուս, երդնու, երդնումք, երդնուք, երդնուն:

Սահմանական անցյալ անկադար՝ երդնուի, երդնուիր, երդնոյր, երդնուաք, երդնուիք, երդնուին:

ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆ

Լալ- *սահմանական ներկա՝* կու լամ, կու լաս, կու լայ, կու լանք/լամք, կու լաք, կու լան:

Սահմանական անցյալ անկադար՝ կու լայի, կու լայիր, կու լայր, կու լայաք, կու լայիք, կու լային:

Ժողվել- *սահմանական ներկա՝* կու ժողվեմ, կու ժողվես, կու ժողվե, կու ժողվենք/ենք, կու ժողվեք, կու ժողվեն:

Սահմանական անցյալ անկադար՝ կու ժողվէի, կու ժողվէիր, կու ժողվէր, կու ժողվէաք, կու ժողվէիք, կու ժողվէին:

Նմանիլ- *սահմանական ներկա՝* կու նմանիմ, կու նմանիս, կու նմանի, կու նմանիք, կու նմանիք, կու նմանին:

Սահմանական անցյալ անկադար՝ կու նմանէի, կու նմանէիր, կու նմանէր, կու նմանէաք, կու նմանէիք, կու նմանէին:

Լնուլ- *Սահմանական ներկա՝* կու լնում, կու լնուս, կու լնու, կու լնումք, կու լնուք, կու լնուն:

Սահմանական անցյալ անկադար՝ կու լնուի, կու լնուիր, կու լնոյր-/ուր, կու լնուաք, կու լնուիք, կու լնուին:

Եթե գրաբարի անցյալ կատարյալը և հրամայականը դարերի ընթացքում, որոշակի փոփոխություններով հանդերձ, պահպանվեցին մույն իմաստով, ապա սահմանականի անկատար կերպի երկու ժամանակներն էլ իմաստափոխվեցին՝ վերածվելով ըղձական եղանակի երկու

Ժամանակների՝ ապառնի և անցյալի ապառնի: Փաստենք, որ 5-րդ դարում արդեն սահմանական եղանակի ներկայի ձևերը զուգահեռաբար կարող էին արտահայտել ըղձականի իմաստ: Քանի որ գրաբարի ստորադասական երկու ապառնիներն էլ չունեին անցյալի ձևեր (*սիրեցից, սիրիցեմ* - *սիրեմ, կսիրեմ, պիտի սիրեմ, սիրելու եմ*), դեռ 5-րդ դարում սահմանական անցյալ անկատարը բազմաթիվ դեպքերում կիրառվում էր որպես ըղձական անցյալ: Սկսվելով անցյալ անկատարից՝ այս երևույթը տարածվեց նաև ներկայի վրա՝ ավարտին հանգեցնելով 12-րդ դարում: Իսկ այդ մույն ժամանակ արդեն սահմանական եղանակի ներկայի և անկատարի համար ստեղծվեց ու ամրակայվեց **կու** եղանակիչը, որը, ավելանալով գրաբարյան իմաստափոխված ներկայի և անկատարի վրա, ստեղծեց նոր՝ **կու ասեմ, կու ասէի** ձևերը: Մյաժամանակ նշենք, որ այս **կոյ-կու-կը-կ՝** եղանակիչը միջին հայերենում արտահայտում էր նաև պայմանական ապառնու և անցյալի ապառնու իմաստ, որը տարածվեց նաև հայերենի բարբառներում: Գրաբարի ապառնին ջնջվեց, միջին հայերենը մնաց առանց առանձին ապառնու, ուստի արևմտյան բարբառախոսները ձևավորեց **պիտի** ձևով ապառնի՝ **կը**-ով ձևերին հաղորդելով սահմանական ներկայի, անցյալ անկատարի և պայմանական ապառնու իմաստներ: Արևելյան բարբառախոսները գնաց առավել արդյունավետ ճանապարհով. ա) ստեղծեց **ում**-ով վերջավորվող անկատար դերբայ, որին կցվեցին **եմ** օժանդակ բայի ներկայի և անցյալի ձևերը, բ) **կը**-ն դարձրեց միակ ապառնի, գ) **պիտի**-ն հարկադրականի համար պահեց:

Ում-ով վերջավորվող դերբայի համար Հ. Աճառյանը բերում է հնագույն մի վկայություն՝ *ի կուումն եմ ընդ իրեսար*, որ նշանակում է՝ իրար հետ կռվի մեջ եմ, այսինքն՝ *կռվում եմ*. **ում**-ը ներգոյականի հոլովածն է: Հ. Աճառյանի համոզմամբ՝ անկատար դերբայի ձևերը ծագել են ներգոյականի կազմություններից¹⁶¹: Նույն կարծիքին հանգել էր նաև Ա. Այտընյանն իր «Քննական քերականության» *Նախաշավիղ* ներածակա-

¹⁶¹ Տե՛ս Հ. Աճառյան, Լիակատար քերականություն, հ. 4, Եր., 1959, էջ 156:

նում¹⁶²: Գ. Ջահուկյանն այս կապակցությամբ գրում է, որ անկատար դերբայի *ում* վերջավորությունը, իրոք, կապվում է ներգոյականի *ում*-ի հետ, բայց այն անորոշ դերբայի ներգոյականը չէ, այլ այն սկզբնապես դրվել է բայահիմք անունների վրա, ապա համաբանությամբ տարածվել մնացած ձևերի վրա¹⁶³:

Ընդունված է այն տեսակետը, ըստ որի՝ **ում**-ով ներկայի ձևեր 12-14-րդ դարերում չեն եղել. այն ծագել է ավելի ուշ: Բայց պետք է հիշել, որ միջին հայերենով պահպանված գրականությունը մեծ մասամբ կլիկյան է, որտեղ **ում**-ով ձևերը չպետք է լինեին: Բայց կան նաև այնպիսի աղբյուրները, որոնք վկայում են *ում*-ով անկատարի գոյությունը դեռ 12-րդ դարում: Այսպես՝ 12-րդ դարի բժշկապետ Մ. Հերացու «Ջերմանց մխիթարութիւն» աշխատության մեջ հանդիպում ենք «մաշում լինի» արտահայտությանը, 13-րդ դարի պատմիչ Վ. Արևելցու «Պատմութիւն տիեզերական» երկի մեջ՝ «աղօթք են առնում», 15-րդ դարի գրիչ Ջալեդի հիշատակագրության մեջ՝ «գրում ի»:

Ծագումնաբանորեն **ում**-ը տրականի հոլովակերտ է, որը հանդիպում էր և՛ գոյականների, և՛ ածականների, և՛ թվականների, և՛ դերանունների հոլովման հարացույցներում՝ *կղզում, հնում, առաջնում, այլում, քում* և այլն: Եզակի ներգոյականի կազմության դեպքում այս տրականին ավելանում էր **ի** նախդիրը՝ *ի կղզում, ի հնում, յառաջնում, յայլում, ի քում*: Գրաբարյան նախդիրների անկումն օրինաչափորեն պետք է հանգեցնեի **ում** հոլովակերտի մեջ ներգոյականի նշանակության ընդգծմանը և համաբանությամբ **ում**-ի տարածմանը նաև այլ բառերի վրա: Նման երևույթի արդեն հանդիպել ենք բացառական հոլովի պարագայում, երբ *է*-ն առանց **ի** նախդրի տարածում գտավ՝ իբրև բացառական հոլովի կազմիչ: Մեր լեզվամտածողությամբ սահմանական ներկան գործողության մեջ գտնվելու գաղափար է արտահայտում: Այս ընկալումը հաստատվում է նաև սահմանական ներկայի կազմության այլ ձևերի ծագումնաբանությամբ: Այսպես, հայերենի բարբառներ կան, որտեղ

¹⁶² Ա. Այոբյան, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզուի, Վիեննա, 1866, էջ 203:

¹⁶³ Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի զարգացման փուլերը, Եր., 1964, էջ 46:

անկատար ներկան կազմվում է *եղ*-ով, որը ևս ներգոյական է, ավելի ստույգ՝ անորոշ դերբայի ներգոյական հոլովը. գրաբարում անորոշ դերբայը հոլովվում է միայն եզակի թվով՝ **ո** հոլովիչով, այսինքն՝ նրա ներգոյականը պետք է կազմվեր **ի+անորոշի հայցական** կաղապարով՝ *ի խօսել է-խօսելու մեջ է-խոսում է, եմ ի կռուիլ- կռվում եմ, ի գնալ էր- գնում էր*:

«Հայոց լեզվի պատմական քերականության» 2-րդ հատորում Ս. Անթոսյանը, ներկայացնելով հայերենի խոնարհման համակարգի զարգացման պատմական ընթացքը, գրում է, որ **եղ**-ով ներկայի և անցյալ անկատարի ձևերի և ներգոյական հոլովաձևերի նույնությունը հաստատվում է նրանց ժխտման կաղապարներով՝ *չէ ի յերեւել- չի երևում, չէ ի յերեւենալ*¹⁶⁴:

Ներկայի և անցյալ անկատարի կազմության հաջորդ ձևը նույնպես հաստատում է նրանց և ներգոյական հոլովի սերտ կապը: **Ս** ճյուղի բարբառներում ներկան և անկատարը կազմվում են գրաբարյան **լիք**-ով կազմված բայանունների ներգոյական հոլովից՝ *ասելիք- յասելիս* (**ի+** հոգնակի հայցական), *լսելիք - ի լսելիս*: Նախդիրն աստիճանաբար ընկել է, ձևավորվել է **իս**-ով անկատար դերբայ: Օրինակ՝ *յասելիս եմ - ասելիս եմ, ի լալիս եմ - լալիս եմ, ի րալիս էր- րալիս էր* և այլն:

Ըստ Ս. Անթոսյանի՝ գրաբարյան սահմանական ներկայի և անցյալ անկատարի իմաստափոխությունից հետո առաջացած բազմաձևությունը բացատրվում է հայոց լեզվի տրամաբանական ներքին մոդուլով. ունենալ հնարավորինս հստակ և միանշանակ քերականական ներկա ու անցյալ, որը գեղեցիկ ձև ստացած լեզվամտածողության արդյունք է. «Անառարկելի է, որ լեզվամտածողության միևնույն հիմքի վրա ձևերի այդ բազմազանությունն առաջացավ ամուր և անխառն ներկա ունենալու անհրաժեշտությունից: Մեր լեզուն այն ունեցավ և այս անգամ արդեն իրապես զատորոշված իմաստով»¹⁶⁵:

¹⁶⁴ Տե՛ս Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. 2, Եր., 1975, էջ 190:

¹⁶⁵ Նշվ. աշխ., էջ 192-193:

ԿԱՏԱՐՅԱԼԻ ՀԻՄՔԸ

Կատարյալի հիմքը հայերենում կազմվում է որոշակի կանոններով: Այն լինում է պարզ և բաղադրյալ կամ ցոյակաճ, որի դեպքում բայա-հիմքն ավարտվում է *g*-ով վերջացող *սց* (գողանալ-գողաց), *հաց-եց* (երգեաց- գրք., երգեց- աշխ.) և *ոյց-ոց* (հեռացուցանել-հեռացույց-գրք.) վերջավորություններով: Բաղադրյալ են նաև *ի* թույլ բաղադրիչի միջոցով կազմվող հիմքերը, որոնք սահմանափակ կիրառում ունեն, բնորոշ են գրաբարում *-չ-, -նչ-* սուկաձանց ունեցող բայերին և գրաբարի *նում-չիմ* փոխանցման բայերին: Բերենք *նում-չիմ* փոխանցման տարածված բայերի ցանկը՝ *այրնուլ, զարթնուլ, ընդոսարանուլ, խափնուլ, խրրնուլ, հարթնուլ, շրթնուլ, ոսրնուլ, ուռնուլ, պակնուլ, պշնուլ, սարր-նուլ, ցածնուլ, ցասնուլ, քաղցնուլ*: Կատարյալի հիմքի այս *-ի-*ն կոչվում է թույլ, որովհետև հնչյունափոխության է ենթարկվում՝ հանդիպելով կատարյալի կրավորաձև վերջավորություններին՝ *կորնչիմ>կորի, կորի- + աբ=կորեայ*:

Աշխարհաբարում բաղադրյալ հիմքն ունի ևս մեկ տարբերակ՝ *ր-*ական. պատճառական բայերը կատարյալի հիմքը կազմում են *ր-*ով *ն>ր՝ խաղացնել-խաղացր, հագեցնել-հագեցր, բռցնել-բռցր*: *Ր-*ով կառույցը ձևավորվել է միջին հայերենում և բնորոշ է միայն պատճառական բայերին: Միջին հայերենում արդեն ունենք *ր-*ական հիմքի կազմության նախադրյալները այն կառույցների համար, որոնց մեջ կան *-ացն-, -եցն-, -ցն-* ածանցները՝ իբրև պատճառական բայեր:

Ներկայացնենք կատարյալի հիմքի կազմությունը գրաբարում՝ ըստ լծորդիչների:

Ե խոնարհման բայեր

Պարզ բայերն ունեն *հաց*-ով ցոյակաճ հիմք՝ *երգել-երգեաց, սիրել-սիրեաց, զարդարել-զարդարեաց* և այլն:

Բազմապատկական ածանց ունեցող բայերը չեն տարբերվում պարզ բայերից՝ *խածարել-խածարեաց, քեկտել-քեկտեաց* և այլն:

-Ան- սոսկածանց ունեցող բայերն ունեն արմատական հիմք, այսինքն՝ ածանցն ընկնում է՝ *տեսանել-տես, հասաննիմ-հաս, զեղծանել-զեղծ, իջաննիմ-էջ, ցուցանել-ցոյց, հարաննիմ-հար*:

Պատճառական ածանց ունեցող բայերն ունեն *ոյց*-ով ցոյական հիմք՝ *նարուցանել-նարոյց, հեռացուցանել-հեռացոյց, խաղացուցանել-խաղացոյց*:

Միայն *յանցանել* և *մեղանչել* բայերը շեղվում են ընդհանուր կանոնից և ունեն *ի* թույլ բաղադրիչով հիմք՝ *յանցի, մեղի*: Ընդ որում՝ *մեղանչել* բայը հանդես գալիս նաև *մեղ* հիմքով:

Ա խոնարհման բայեր

Պարզ և **-ան-** սոսկածանց ունեցող բայերն ունեն ցոյական հիմք՝ *աց*-ով վերջացող՝ *խաղալ-խաղաց, անաւ-անասց, ջանալ-ջանաց, գոհանալ-գոհաց, ուրանալ-ուրաց*: Որոշ **ե** լծորդության բայեր ունեն *աց*-ով հիմքեր՝ *գիտել-գիտաց, ասել-ասաց, մարթել-մարթաց* և այլն:

-Եմ- սոսկածանց ունեցող բայերը ունեն *եաց/եց*-ով ցոյական հիմք՝ *յագենալ-յագեաց/յագեց, մերչենալ-մերչեաց/մերչեց*:

Ի խոնարհման բայեր

Ի լծորդության պարզ բայերն ունեն *եաց*-ով ցոյական հիմք՝ *բազմիմ-բազմեաց, դժուարիմ-դժուարեաց, ապստամբիմ-ապստամբեաց*: Ունենք երկու բացառություն՝ *նարիմ-նիար, զգածիմ-զգած*:

-Ան- սոսկածանց ունեցող բայերն ունեն արմատական հիմք՝ անկանիմ-անկ, ագանիմ-ագ, բուսանիմ-բուս:

-Չ-, -նչ- սոսկածանց ունեցող բայերն ունեն պարզ կամ արմատական հիմք, որին ավելանում է **հ** բաղադրիչը՝ *թռչիմ-թռ+ի, փախչիմ-փախ+ի, թաքչիմ-թաք+ի, երկնչիմ-երկ+ի, կորնչիմ-կոր+ի*:

Ու խոնարհման բայեր

Պարզ բայերն ունեն արմատական հիմք՝ *հեղուլ-հեղ, թողուլ-թող, արգելուլ-արգել*:

Ն սոսկածանց ունեցող բայերն ունեն արմատական հիմք՝ *ջեռնուլ-ջեռ, հեծնուլ-հեծ*:

Նում-շիմ փոխանցման բայերն ունեն **ի** թույլ բաղադրիչով հիմք՝ *քաղցնուլ-քաղց+ի, մածնուլ-մած+ի, ոսրնուլ-ոսրի*:

Մի քանի սոսկածանցավոր բայեր ունեն հնչյունափոխված հիմքեր՝ *ընթեռնուլ-ընթերց, լնուլ-լից, խնուլ-խից, ընկենուլ-ընկեց, զգենուլ-զգեց, յենուլ-յեց*:

Միջին հայերենում պահպանվում են կատարյալի հիմքի կազմության գրաբարյան հիմնական օրինաչափությունները. վերանում են միայն *ի* թույլ բաղադրիչով և *ոյց/ուց*-ով հիմքերը: Այսպես՝ պարզ կամ արմատական հիմք ունեն *-չ-* և *-ն-* սոսկածանց ունեցող բայերը, որոնց սոսկածանցներն ընկնում են՝ *մյրնեի-մույր, փախչեի-փախ, ջեռնուլ-ջեռ, հեծնուլ-հեծ*: **Ն-** սոսկածանցավոր բայերի մեծամասնությունը միջին հայերենում գրաբարի **ան** սոսկածանցավոր բայերի հնչյունափոխված ձևերն են՝ *մյրանեի-մյրնուլ (ան-ն), տեսանեի-տեսնուլ (ան-ն), գրանեի-գրնուլ (ան-ն)*:

Բազմապատկական ածանցները գրաբարում հիմքակազմության կամ խոնարհման ժամանակ որևէ դեր չեն կատարում, ինչպես նաև միջին հայերենում և աշխարհաբարում: Կրավորական **ու/վ** ածանցով բայերը իրենց կատարյալի հիմքը կազմում են **ե** լծորդության պարզ բայերի պես, օրինակ՝ *սիրվեի-սիրվեց, ցնորվեի-ցնորվեց*:

Արդի հայերենում ցոյական հիմք ունեն՝

ա և **ե** լծորդության պարզ և *-ան/-են-* սոսկածանցներով **ա** լծորդության բայերը. ներկայացնենք դրանք գրաբարի համեմատությամբ:

Գրաբար

վազել – վազեաց/վազեց
խաղալ – խաղաց
գարմանալ – գարմաց
յազենալ – յազեաց/յազեց

Արդի հայերեն

վազել – վազեց
խաղալ – խաղաց
գարմանալ – գարմաց
հազենալ – հազեց և այլն:

Արմատական հիմք ունեն **ե** լծորդության **-և-** և **-չ-** սոսկածանց ունեցող փոքրաթիվ բայերը՝

Գ-բարբար

հասանել – հաս
գտանել – գիտ/գտ
թռչել – թռի
փախչել – փախի

Արդի հայերեն

հասնել – հաս
գտնել – գտ
թռչել – թռ
փախչել – փախ և այլն:

Բ-ական հիմք ունեն պատճառական բայերը՝ *խաղացնել-խաղացր, մոտեցնել-մոտեցր, բռցնել-բռցր*: Ժողովրդախոսակցական լեզվում այս *ր*-ով կատարյալի հիմքերին հաճախ ավելանում է **ե**գ ձևությամբ՝ *փախցրեք, փախցրեց, մտցրեք, մտցրեցի, խոսցրեք, խոսցրեցի*: Լեզվական կանոնի ուժ չունեցող այս երևույթն ապացուցում է, որ հայերենի բոլոր շրջաններում ամենագործունը կատարյալի ցոյական հիմքն է, որն աստիճանաբար կլանում է մյուս հիմքերը՝ ձգտելով դառնալ ընդհանրական:

Բ-ն հայերենում բազմիմաստ ձևությ է, և համաբանության հիմքով այն կարող էր դառնալ հիմքակազմիչ ձևությ: Միջին հայերենում ունենք *խաղացուցանել-խաղացուցնել-խաղացնել* փոփոխությունը: Հրամայականում՝ *խաղացո՛ւր*-ապա դրափոխությամբ՝ *խաղացրո՛ւ*, որն արդեն կատարյալի հիմքի դրսևորում է: Բացի այդ՝ գրաբարում (մաս մյուս փուլերում) ունենք **-և-** սոսկածանցով անկանոն բայեր, որոնց կատարյալի հիմքում **-և-** սոսկածանցը դառնում է *ր՝ րանել-* ներկայի հիմքը *րան*, կատարյալի հիմքը՝ *րար, դնել-դն՝ դր/դիր*:

Այսպիսով՝ կատարյալի հիմքը գրաբարում ուներ երեք դրսևորում՝ պարզ կամ արմատական, բաղադրյալ կամ ցոյական, **ի** թույլ բաղադրիչով, իսկ միջին և նոր գրական հայերեններում դրանց ավելանում է նոր՝ *ր*-ական կոչվող հիմքը, որը բնորոշ է պատճառական բայերին, վերանում են *ի* թույլ բաղադրիչով հիմքերը, որոնք դարձել են պարզ կամ արմատական՝ կորցնելով *ի* բաղադրիչը:

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԱՆՑՅԱԼ ԿԱՏԱՐՅԱԼ

Անցյալ կատարյալը ցույց է տալիս առանց տևականության գործողություն, որը սկսվում և միանգամից կատարվում-ավարտվում է անցյալ ժամանակակետում: Կարող ենք ասել, որ այն ավարտված կերպի գործողություն ցույց տվող բայաձև է: Գրաբարի անցյալ կատարյալ ժամանակը համարյա մենիմաստ բայաձև է իր կերպաժամանակային նշանակությամբ և հայերենի զարգացման հետագա փուլերում գրեթե իմաստային փոփոխությունների չի ենթարկվել: Այս իմաստով անցյալ կատարյալին կարող են հավասարվել հրամայականի միայն առանձին ձևեր¹⁶⁶: Անցյալ կատարյալը գրաբարի չորս խոնարհումների դեպքում ունի կազմության հետևյալ սկզբունքը՝ կատարյալի հիմքի որոշում՝ կախված բայերի կազմությունից և լծորդությունից, որին գումարվում են խոնարհման տիպերի հատուկ վերջավորությունները: Վերջավորություններն ունեն խոնարհման երկու տիպ՝ ներգործաձև և կրավորաձև: Խոնարհման տիպի ընտրությունը դարձյալ պայմանավորված է բայի կազմությամբ՝ կերպաձանցների առկայությամբ և լծորդությամբ:

Ե խոնարհման բայերի կատարյալի կազմությունը հստակ է. ներգործական սեռի պարզ և ածանցավոր բայերն ունեն ներգործաձև խոնարհում, իսկ կատարյալի հիմքը պարզ բայերի դեպքում, որպես կանոն, ցույական է՝ **եսց/եց**, ածանցավոր բայերի դեպքում՝ արմատական: Ներգործաձև վերջավորություններն են՝ **-ի, -եր, -, -աք, -էք/իք, -ին**: Եզակի երրորդ դեմքն աննշույթ է. որպես վերջավորություն՝ կատարյալի շեշտված հիմքն է հանդես գալիս, որը, եթե միավանկ է, կարող է ստանալ աճական՝ **ե/է** (**ե**-ն բաղաձայնով սկսվող հիմքերի համար, **է**-ն՝ ձայնավորով, օրինակ՝ *ածել-ած> էած, բերել-բեր> եբեր*): Օրինակ՝ **գտանել- գիտ/գտ- գտի, գտեր, եգիտ** կամ **գիտ, գտաք, գտէք/գտիք, գտին**: Կամ՝ **յաղթել-յաղթեաց/յաղթեց- յաղթեցի, յաղթեցեր, յաղթեաց, յաղթեցաք, յաղթեցէք/իք, յաղթեցին**: Այս նույն բայերը կրավորական սեռի իմաստ արտահայտելու համար խոնարհվում են կրավորաձև՝ ստեղծելով սեռային

¹⁶⁶ Տե՛ս Ա. Արաքյան, Անցյալ կատարյալ ժամանակը հայերենում, Եր., 2015, էջ 30-31:

հակադրություն՝ **յաղթեցի, յաղթեցեր, յաղթեաց, յաղթեցաք, յաղթեցիք- /էք, յաղթեցին - յաղթեցայ, յաղթեցար, յաղթեցաւ, յաղթեցաք, յաղթեցայք/արուք, յաղթեցան** (*հաղթեցի- հաղթվեցի* իմաստներով):

Ե խոնարհման պարզ բայերը և՛ միջին գրական հայերենում, և՛ բարբառներում, և՛ գրական երկու լեզուներում պահեցին գրաբարյան խոնարհման այս ձևերն աննշան հնչյունափոխություններով: Այլ էր **ե** լծորդության ածանցավոր բայերի զարգացումը. գրաբարի կերպասեռային խոնարհման համակարգի վերացմանը զուգահեռ՝ կրավորաձև վերջավորությունները կորցրին իրենց սեռային իմաստը և վերածվեցին **-ն**- սոսկածանցով բայերի անցյալ կատարյալի վերջավորությունների՝ զուրկ որևէ սեռային իմաստից: Միջին հայերենի արդեն վաղ շրջանից ունենք՝ **տեսնուլ//տեսնել- տեսայ, տեսար, տեսաւ...՝ տեսի, տեսեր, ետես...** ներգործակերպ ձևերի փոխարեն, **գտնուլ//գտնել-գտայ, գտար, գտաւ...**՝ **գտի, գտեր, եգիտ** և համապատասխան այլ ձևերի փոխարեն: Ջրկվելով կրավորականի իմաստից՝ այս վերջավորությունները սկսեցին դրվել նաև չեզոք սեռի բայերի վրա՝ **անցնիլ- անցայ** միջին հայերենում, **եկնուլ//եկնել//եկնալ՝ ելայ՝** գրաբարյան **անցի, ելի** ձևերի փոխարեն:

Գրաբարի **ե** խոնարհման ածանցավոր բայերը աշխարհաբարում դարձան **-ն**- սոսկածանցով բայեր, որոնց միացան **ի** լծորդության **-ան**-սոսկածանցով գրաբարյան բայերը մի մասը՝ կորցնելով **-ան**- սոսկածանցի **ա-ն**՝ **մեռանիլ>մեռնել, բուսանիլ>բուսնել, ազանիլ>հազնել** և այլն: **Ե** խոնարհման բայերի անցյալ կատարյալի համեմատական պատկերը ներկայացնենք ստորև:

Պարզ բայեր

Ա. Գրաբար - *սիրեցի, սիրեցեր, սիրեաց, սիրեցաք, սիրեցէք/իք, սիրեցին:*

Բ. Միջին հայերեն - *սիրեցի, սիրեցեր/իր, սիրեաց/եց, սիրեցաք, սիրեցէք/իք, սիրեցին:*

Գ. Արևելահայերեն - *սիրեցի, սիրեցիր, սիրեց, սիրեցինք, սիրեցիք, սիրեցին:*

Դ. Արևմտահայերեն - նույնը:

Սոսկածանցավոր բայեր

Ա. Գրաբար - *մյրի, մյրեր, հմուր, մյրաք, մյրէք/իք, մյրին:*

Բ. Միջին հայերեն - *մյրայ, մյրար, մյրաւ, մյրաք, մյրայք, մյրան:*

Գ. Արևելահայերեն - *մյրա, մյրար, մյրավ, մյրանք, մյրաք, մյրան:*

Դ. Արևմտահայերեն - *մյրայ, մյրար, մյրաւ, մյրանք, մյրաք, մյրան:*

Գրաբարյան **ի** խոնարհման բոլոր բայերը խոնարհվում են կրավորաձև: Այս խոնարհման չեզոք սեռի բայերը կրավորական ձևով արտահայտում են չեզոք սեռի իմաստ:

Միջին հայերենում **ի** խոնարհումը պահպանվում է, բայց նոր կրավորական ածանցի առաջացման հետևանքով այս խոնարհման ներգործածն բայերը ստանում են **ու/ւ/վ** ածանցը՝ կրավորական իմաստ արտահայտելու համար, օրինակ՝ *դասրիւ-դասրուիլ*: **Ի** խոնարհումը պահպանվեց միայն արևմտահայերենում: Արևելահայ գրական լեզվում մինչև 19-րդ դարի վերջը այս լծորդությունը դեռ պահպանվում էր, այսպես՝ **ծագել**-ը խոնարհվում էր՝ **ծագեցաւ**, որովհետև *ի* լծորդության էր, նույնը՝ *բացեցաւ-բացիլ, հոգնեցաւ-հոգնիլ* և այլն: Բայց 20-րդ դարասկզբին **ի** լծորդության պարզ բայերը, ինչպես նաև **վ** ածանցն ունեցող կրավորական և չեզոք բոլոր բայերն անցման **ե** պարզ խոնարհման շարքը:

Ինչ վերաբերում է **ի** խոնարհման ածանցավոր բայերին, ապա նրանք և՛ միջին հայերենում, և՛ երկու գրականներում պահպանում են կրավորաձև խոնարհումը, օրինակ՝ **բուսնել- բուսաւ/վ, հագնել- հագաւ/վ, հեծնել- հեծաւ/վ**: Գրաբարում **ի** խոնարհման ածանցավոր բայերը ունեին նաև **չ, նչ** կերպաձանցները, որոնք գրաբարում կատարյալի հիմքում ունեին **-ի** թույլ բաղադրիչ՝ **երկնչել/իլ-երկի, թոչել/իլ-թոի, մարտնչել/իլ-մարտի**: Այս բայերի կատարյալի **ի** բաղադրիչը կրավորաձև խոնարհման **ա**-ից առաջ դառնում էր **ե**, օրինակ՝ **երկի+ա=երկեայ, թոի+ա=թոեայ** և այլն:

Միջին հայերենում, թեև այս ձևերը տեղ-տեղ կան, բայց դրանք ակնհայտ հնաբանություններ են: Միջին հայերենում **ի** թույլ բաղադրիչը վերանում է, **-չ-** սոսկաձանցով բայերի կատարյալի հիմքը դառնում է

պարզ կամ արմատական, իսկ կրավորաձև խոնարհումը պահպանվում է (գրաբարում՝ **փախեայ, փախեար, փախեաւ, փախեաք, փախեայք, փախեան**, միջին հայերենում՝ **փախայ, փախար, փախաւ, փախաք, փախայք, փախան**): Խոնարհման նույն կերպը փոխանցվում է աշխարհաբարին: Արևելահայ աշխարհաբարում մնացել են չ սոսկածանց ունեցող 8 բայեր (*փախչել, թռչել, կորչել, կաչել, դիպչել, ուռչել, սառչել, հանգչել*), որ ունեն կրավորակերպ անցյալ կատարյալ՝ **-ա, -ար, -աւ, -անք, -աք, -ան**: Գրաբարյան **-նչ-, -աչ-, -անչ-** ածանցները ձուլվել են արմատին, այդ բայերն էլ անցել են ցոյական հիմքի ներգործակերպ խոնարհման՝ **մարտնչեցի, երկնչեցի, մեղանչեցի, ճանաչեցի** և այլն:

Ա խոնարհման պարզ բայերը ներգործական սեռի դեպքում ունեն ներգործաձև խոնարհում, կրավորական սեռի դեպքում՝ կրավորաձև՝ **աղաց-աղացաւ**: Սոսկածանցավոր բայերը, անկախ սեռից՝ ներգործական, չեզոք, միայն կրավորակերպ են խոնարհվում, օրինակ՝ **գողանալ-գողացայ, գողացար, գողացաւ, գողացաք, գողացայք/արուք, գողացան, սլանալ-սլացայ, սլացար, սլացաւ, սլացաք, սլացայք/արուք, սլացան**: Գրաբարյան **ա** խոնարհման այս ձևերը գրեթե նույնությամբ անցան միջին հայերենին, միայն **ա** խոնարհման պարզ բայերի կրավորակերպ խոնարհման ձևերը վերացան, փոխարենը **-ու/ւ-** ածանցն էր դրվում՝ **աղացւեց/աղացուեց**:

Աշխարհաբարում հարացույցը նույնն է. պարզ բայերը ստանում են ներգործաձև՝ **-ի, -իր, -եց, -ինք, -իք, -ին**, սոսկածանցավորները՝ **-ա, -ար, -աւ, -անք, -աք, -ան** վերջավորությունները:

Ու լծորդության պարզ բայերը գրաբարում ներգործակերպ են խոնարհվում, եթե ներգործական սեռի են, և կրավորակերպ, եթե արտահայտում են կրավորականի իմաստ, ինչպես՝ **կիզուլ- կիզի, կիզեր, եկեզ, կիզաք, կիզեք/իք, կիզին** (այրեցի, այրեցիր...) - **կիզայ, կիզար, կիզաւ, կիզաք, կիզայք/արուք, կիզան** (այրվեցի, այրվեցիր...): Ածանցավորները, անկախ սեռից, միայն՝ կրավորակերպ, օրինակ՝ **ջեռուլ - ջեռայ, ջեռար, ջեռաւ, ջեռաք, ջեռայք/արուք, ջեռան**:

Միջին հայերենում պահպանվում է խոնարհման գրաբարյան ձևը, միայն կրավորական սեռի դեպքում ավելանում է **ու/ւ** ածանցը՝ **թողնուլ> թողաւ - թողնվեց**:

Արևելահայ աշխարհաբարում **ու** լծորդությունը վերանում է՝ վերածվելով **ե** լծորդության: Արևմտահայերենում ևս **ու** լծորդությունը գրեթե վերացել է (կան որոշ բացառություններ միայն):

Պատճառական բայերի **ուցան** ածանցը կատարյալում դառնում էր՝ **-ոյց/ուց**, խոնարհման վերջավորությունները ներգործակերպ էին՝ **հասուցանել՝ հասուցի, հասուցեր, հասույց, հասուցաք, հասուցէք/իք, հասուցին**:

Միջին հայերենի առաջին շրջանում խոնարհման այս սկզբունքը պահպանվում է, այնուհետև եզակի 3-րդ դեմքի **ոյց-ը** դառնում է **ուց-հաւնեցոյց>հաւնեցրուց**: Փոխվում է բուն հրամայականը. **հաւնեցո՛ւն** դառնում է **հաւնեցո՛ւր, գորացո՛ւր, կակղեցո՛ւր**:

Հրամայականի համար ընդհանրական այս **ր** ձևույթը ներթափանցում է խոնարհման ողջ համակարգ՝ ստեղծելով **-ցն>-ցր** հիմքային հակադրությունը՝ ներկա՝ **-ցն** -կատարյալ՝ **-ցր**:

Աշխարհաբարում պատճառական բայերը խոնարհվում են **ր**-ական հիմքով ներգործակերպ վերջավորություններով, օրինակ՝ **վազեցնել - վազեցրի, վազեցրիր, վազեցրեց, վազեցրինք, վազեցրիք, վազեցրին**:

Ե/Է ԱՃԱԿԱՆ

Գրաբարում կատարյալի միավանկ հիմքերը սահմանական եղանակի անցյալ կատարյալի ներգործակերպ խոնարհումների եզակի 3-րդ դեմքում կարող էին ստանալ հնդեվրոպական մայր լեզվում վկայված նախահավելված մասնիկ՝ ածական՝ **ե/է**, ձայնավոր արմատները՝ **է - անցանել- էանց, անկանել - էանկ**, բաղաձայն արմատները՝ **ե - հասանել- էհաս, մտանել- էմուտ, գտանել- եգիտ**: Սակայն գրաբարի բուն ածական պետք է համարել **ե**-ն, իսկ **է**-ն ուշ շրջանի հնչյունափոխության արդյունք: Ս. Անթոսյանը բերում է վիճակագրություն Աստվածա-

շնչի համաբարբառից, որտեղ **է** ածականով ձևեր գրեթե չկան՝ **ի** տարբերություն **ե**-ով կազմությունների¹⁶⁷:

Եթե մայր լեզվում բայաձևն ինքնին չէր արտահայտում անցյալ ժամանակի իմաստ, ածականը կամ նախահավելվածը պարտադիր ցուցիչ էր դառնում բայի անցյալ ժամանակի համար, ապա հայերենում կատարյալի հիմքն արդեն ավարտում անցյալի ցուցիչ է: Սակայն հայերենում կար այլ խնդիր. **ե** լծորդության ածանցավոր և **ու** լծորդության պարզ բայերի խոնարհման դեպքում անցյալ կատարյալի եզակի թվի 3-րդ դեմքը և բուն հրամայականի եզակի 2-րդ դեմքը նույնանում էին՝ **մո՛ւտ-մուտ, գի՛տ-գիտ, զե՛ն-զեն, կէ՛զ-կէզ**: Այս պարագայում ածականը դառնում էր քերականական համանունության վերացման միջոց՝ **մո՛ւտ-եմուտ, գի՛տ-եգիտ, զե՛ն-եզեն, կէ՛զ-եկէզ** և այլն:

Անկանոն **տալ, դնել** բայերի խոնարհման դեպքում ածականը դրվում է նաև այլ դեմքերի վրա՝ **եսու, ետուր, ետ, եղի, եղեր, եղ** և այլն: Բացի այդ՝ **դնել** բայի 2-րդ ապառնու 1-ին դեմքը ևս ունի ածական՝ **եղից-եղայց**: Անցյալ դերբայը ևս ածականով է՝ **եղեալ**: Պատճառը կատարյալի հիմքի հնչյունական կազմն է. **դնել** բայի դեպքում ունենք մեկ բաղաձայնով կատարյալի հիմք՝ **դ**, որը հայերենի համար բացարձակ խորթ է, ուստի բայական վերջավորություններից բացի՝ հիշյալ **դ** հիմքին ավելանում է ածականը՝ **եղի, եղեր, եղ**: Գրեթե համանման է **տալ** բայի կատարյալի հիմքը, որը, ճիշտ է, բաղկացած է արդեն երկու հնչյունից՝ **տու**, բայց հայերեն բառերն ու բառաձևերը հիմնականում բաղկացած են լինում երեք և ավելի հնչյուններից, ուստի բառասկզբում դարձյալ օգնության է գալիս ածական-նախահավելվածը:

Միջին հայերենի վաղ շրջանում այս ածականը տեղ-տեղ պահպանվում է որպես գրաբարաբանություն, որոշ բայերում կատարվում է **ե/է>ի** հնչյունափոխություն՝ **ելաց- իլաց, եհան - իհան, էառ - իառ, եղիր - իղիր**, ապա անհետանում: Այս ածականը միջին հայերենում փոխում է իր արտասանությունը, որի պատճառով փոփոխվում են որոշ անկանոն բայերի անցյալ կատարյալի եզակի երրորդ դեմքերը: Այսպես՝ միջին

¹⁶⁷ Տե՛ս Հայոց լեզվի պարունական քերականություն, էջ 218-220:

հայերենում **գալ, տալ, դնել** բայերի անցյալ կատարյալի եզակի III դեմքում ունենք **երեկ, երես, երեդ** բայաձևերը: Յ. Կարստի և Հ. Աճառյանի վարկածով՝ այս ձևերը ծագում են *հ* նախահավելվածի հնչյունափոխությունից. գրաբարյան **եկն, ետ, եդ** ձևերը միջին հայերենում պետք է հնչեին՝ ***եյեկ, *եյետ, *եյեդ**: Բայց քանի որ *էյ* հնչակապակցությունը բառակզբում խորթ էր հայերենին, ուստի դրանք դառնում են՝ ***եղեկ, *եղետ, *եղեդ**, ապա *յառնել* և *գալ* բայերի հարադիր գործածության հիմնայականի կարճ ձևի համաբանությամբ՝ *արի՛ եկ>արե՛կ*, դրանք վերածվում են՝ **երեկ, երես, երեդ** կառույցների: Ս. Անթոսյանի ճիշտ դիտարկմամբ՝ այս պարագայում ավելորդ է ենթադրել ***եղեկ, *եղետ, *եղեդ** միջանկյալ ձևերը, մանավանդ որ դրանք միջինհայերենյան շրջանից չեն վկայված, ուղղակի *արեկ* ձևը ազդել է ***եյեկ, *եյետ, *եյեդ** կառույցների վրա, և *յ>ը* հնչյունափոխությամբ առաջացել են **երեկ, երես, երեդ** ձևերը¹⁶⁸: Սա, իրոք, ավելի հավանական և անմիջական ճանապարհ է հիշյալ ձևերի առաջացման համար:

Աճականի հետագա անհետացման ազդեցիկ պատճառն է դառնում հայերենում կատարյալի միավանկ հիմքերի և դրանցից կազմված բայաձևերի վերացումը: Այսպես՝ **ե** խոնարհման ամանցավոր բայերը միջին հայերենում սկսում են ստանալ կրավորաձև վերջավորություններ՝ **եզիտ>գտալ, եմուտ>մտալ**: Իսկ **ու** լծորդության բայաձևերն արդեն դուրս էին մղվում կիրառությունից: Աշխարհաբարի գրական երկու տարբերակներում էլ աճականը վերացել է:

ԲՈՒՆ ԿԱՄՆԵՐԿԱԼ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

Գրաբարի բուն կամ ներկա հիմնայականը կատարյալի հիմքից կազմվող ժամանակներից է, որն ուներ ներգործակերպ և կրավորակերպ խոնարհումներ: Հիմնայականը հայերենի զարգացման բոլոր շրջաններում արտահայտվել է միայն երկրորդ դեմքով, եզակի-հոգնակի հակադ-

¹⁶⁸ Այս մասին առավել մանրամասն տե՛ս Հայոց լեզվի պատմական քերականություն, էջ 213-215:

րությամբ: Գրաբարում ներգործակերպ խոնարհման բայերը եզակի թվի 2-րդ դեմքում վերջավորություն չեն ստանում, հրամայականի դեր կատարում է կատարյալի շեշտված հիմքը: Յոյական բայերի դեպքում վերջին **ց**-ն ընկնում է՝ **կիզուլ - կէզ, մտանել - մո՛ւտ, գտանել- գի՛տ, ասել-ասա՛, յաղթել- յաղթեա՛**, հոգնակի թվում կատարյալի հիմքին ավելանում է **-էք**-ը, օրինակ՝ **գտէ՛ք, մտէ՛ք, կիզէ՛ք, ասացէ՛ք, յաղթեցէ՛ք**: Կրավորաձև խոնարհման դեպքում ունենք եզակի թվում՝ **-իր**, հոգնակիում՝ **-այք/ա-րուք**. վերջիններս **-ի** թույլ բաղադրիչով հիմքերի դեպքում դառնում են՝ **եա՛յք/երո՛ւք**:

Օրինակներ՝ *փահչել/իմ - փահի՛ր, փախեա՛յք/փախերո՛ւք, մարտնչել/ իմ - մարտի՛ր, մարտեա՛յք/մարտերո՛ւք, զբօսնուլ - զբօսի՛ր, զբօսա՛յք/արո՛ւք, սլանալ - սլացի՛ր, սլացա՛յք/արո՛ւք, դարել/իմ - դար-տեա(ց), դարեցա՛յք/արո՛ւք, ծիծաղել/իմ - ծիծաղեա՛(ց), ծիծաղեցա՛յք-/արո՛ւք*: Ինչպես տեսնում ենք, **ի** լծորդության պարզ բայերը եզակի թվում **իր** չեն ստանում, այլ պահպանում են կատարյալի շեշտված հիմքը, որի վերջին **ց**-ն կարող էր **է** լծորդության պարզ բայերի համաբանությամբ երբեմն ընկնել՝ *ծիծաղեա՛, դարեա՛*: Պատճառական բայերը խոնարհվում են ներգործակերպ վերջավորություններով, բայց բուն հրամայականի եզակի թվում **ոյց** հիմքի ոչ միայն **ց**-ն է ընկնում, այլև **յ**-ն. ունենք **ո**-ով ավարտվող ձևեր: Օրինակ՝ **նստուցանել-նստոյց>նստո՛, ուսուցանել-ուսոյց>ուսո՛, բազմեցուցանել - բազմեցոյց>բազմեցո՛**: Հոգնակիում **ուց** անշեշտ հիմքին գումարվում է **-էք** վերջավորությունը՝ **նստուցէ՛ք, ուսուցէ՛ք, բազմեցուցէ՛ք**:

Միջին հայերենի շրջանում նախ փոփոխվում է բուն հրամայականի ներգործակերպ խոնարհման եզակի 2-րդ դեմքը **եսս** վերջավորությունը դառնում է **է՛** **ես>է** հնչյունափոխությամբ, *սիրեա՛-սիրէ՛, խօսեա՛- խօսէ՛*, հոգնակին նույնն է՝ *-էք*, օրինակ՝ *սիրեցէ՛ք, խօսեցէ՛ք*: Ապա **է** և **ի** լծորդության բայերի համար ընդհանրանում է կրավորականի *իր* վերջավորությունը, որն արդեն կորցրել էր կրավորականի կերպային իմաստը *ու/ւ* կրավորական ածանցի առաջացման պատճառով: Այսկերպ առաջանում են բուն հրամայականի հետևյալ ձևերը՝ *սիրի՛ր, խօսի՛ր, սիրի՛ր, յաղթի՛ր*:

Աստիճանաբար տեղի է ունենում ներգործակերպ և կրավորակերպ վերջավորությունների միաձուլում. բուն հրամայականը սկսում է կազմվել *-ի՞ր, -է՞ք* ձևությամբ, իսկ *-ա՛յք, -արո՛ւք* վերջավորությունները ջնջվում են:

Պատճառական բայերը միջին հայերենում բուն հրամայականի եզակի երկրորդ դեմքում սկսում են ստանալ *-ո՛ւր* վերջավորությունը, օրինակ՝ զայրացուցանել - զայրացո՛ւր, մատեցուցնել-մատեցո՛ւր: Հոգնակին գրաբարտիպ է՝ *-է՛ք* վերջավորությամբ, այսպես՝ *զայրացուցէ՛ք, մատեցուցէ՛ք*:

Արևելահայերենում պատճառականների եզակին ունի *ո՛ւ* վերջավորությունը՝ *զայրացնել-զայրացրո՛ւ, ծիծաղեցնել-ծիծաղեցրո՛ւ*, հոգնակիում՝ *-է՛ք* կատարյալի բեական հիմքի վրա, ինչպես՝ *զայրացրե՛ք, ծիծաղեցրե՛ք*:

Արևմտահայերենում **ե** և **ի** լծորության պարզ բայերի համար պահպանվել է հրամայականի եզակի 2-րդ դեմքի միջին հայերենում առաջացած *-է* վերջավորությունը՝ եա>է, օրինակ՝ *գրե՛լ- գրէ՛, խորհի՛լ- խորհէ՛*: Պատճառական բայերի հրամայականի եզակին դարձյալ միջինհայերենյան *ո՛ւր* վերջավորությունն ունի՝ *հարցնել-հարցո՛ւր, իջեցնել-իջեցո՛ւր*: Հոգնակին *-էք*-ով է՝ *հարցուցէ՛ք, իջեցուցէ՛ք*: Ա խոնարհման պարզ բայերը եզակի թվում զցում են կատարյալի հիմքի **ց**-ն, ինչպես գրաբարում՝ *յուսա՛լ-յուսա՛, կարդա՛լ-կարդա՛: -Ն-, -չ-, -ան-, -են-* սուկաձանցներով բայերը ստանում են *-իր* վերջավորությունը, օրինակ՝ *մոռնալ-մոռցի՛ր, բռչի՛լ- բռչի՛ր, խոստանալ-խոստացի՛ր, մերջենալ-մերջեցի՛ր*: Հոգնակի հրամայականը բոլոր դեպքերում կազմվում է կատարյալի հիմքից *-էք* վերջավորությամբ, այսպես՝ *գրեցէ՛ք, խորհեցէ՛ք, մոռցէ՛ք, խոստացէ՛ք, բռե՛ք*:

Խոնարհման հարացույցներ

Գրաբար

Իջանել- է՛ջ, իջէ՛ք, *յուսալ-* յուսա՛, յուսացա՛յք/արուք, *գրել-* գրեա՛, գրեցէ՛ք, *ծիծաղել(իմ)-*ծիծաղեա՛ց, ծիծաղեցա՛յք/ծիծաղեցարո՛ւք, *ագանել(իմ)-* ագի՛ր, ագա՛յք/ագարո՛ւք, *հեծնուլ-* հեծի՛ր, հեծա՛յք/հեծարո՛ւք,

թողուլ- թո՛ղ, թողե՛ք, փախչել(իմ)- փախի՛ր, փախեա՛յք/փախերո՛ւք, զարթնուլ- զարթի՛ր, զարթեա՛յք/ զարթերո՛ւք:

Միջին հայերեն

Իջնել- Է՛ջ, իջե՛ք, յուսալ-յուսա՛, յուսացե՛ք, գրել- գրե՛, գրեցե՛ք, ծիծաղիլ – ծիծաղե՛, ծիծաղեցե՛ք, հազնիլ-հազի՛ր, հազե՛ք, հեծնուլ- հեծի՛ր, հեծե՛ք, թողնուլ- թո՛ղ, թողե՛ք, փախչիլ- փախի՛ր, փախե՛ք, զարթնուլ-զարթի՛ր, զարթե՛ք:

Արևելահայերեն

Իջնել- իջի՛ր, իջե՛ք, հուսալ-հուսա՛, հուսացե՛ք, գրել- գրի՛ր, գրե՛ք// գրեցե՛ք¹⁶⁹, ծիծաղել – ծիծաղի՛ր, ծիծաղե՛ք, հազնիլ-հազի՛ր, հազե՛ք, հեծնել- հեծի՛ր, հեծե՛ք, թողնել- թո՛ղ, թողե՛ք, փախչիլ- փախի՛ր, փախե՛ք, զարթնել-զարթնի՛ր, զարթնե՛ք:

Արևմտահայերեն

Իջնել- իջի՛ր, իջե՛ք, յուսալ-յուսա՛, յուսացե՛ք, գրել- գրե՛, գրեցե՛ք, ծիծաղել - ծիծաղե՛, ծիծաղեցե՛ք, հազնիլ-հազի՛ր, հազե՛ք, հեծնել- հեծի՛ր, հեծե՛ք, թողուլ- թո՛ղ, թողե՛ք, փախչիլ- փախի՛ր, փախե՛ք, զարթնել-զարթի՛ր, զարթե՛ք:

ՀՈՐԳՈՐԱԿԱՆ ԿԱՄ ԱՊԱՌՆԻ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

Հրամայական եղանակի այս ապառնի ժամանակն ունի ներգործածն- կրավորածն ընդհանուր վերջավորություններ՝ *-ջի՛ր, -ջի՛ք*, որոնք դրվում են կատարյալի հիմքի վրա: Այս հրամայականն առաջացել է ստորադասական եղանակի երկրորդ ապառնուց, արդի հայերենն թարգմանվում է լրդական, ենթադրական, հարկադրական եղանակների ապառնիներով՝ հրամայական շեշտով, երբեմն նաև՝ հաստատական

¹⁶⁹ -**եցե՛ք**-ով ձևերը այժմ հնաբանություններ են:

հրամայականով: Այսպես՝ *խորհեսցի՛ր/* կխորհե՛ս, պիտի խորհե՛ս կամ խորհի՛ր: Բերենք տարբեր լծորդության և կատարյալի տարբեր հիմքեր ունեցող բայերի հորդորական հրամայականի կազմության օրինակներ՝ *մարտնչել/իմ/* > *մարտի-մարտիջի՛ր, մարտիջի՛ք, ցասնուլ/* > *ցասի- ցասի-ջի՛ր, ցասիջի՛ք, ասել/* > *ասաց-ասասջի՛ր, ասասջի՛ք, յիշել/* > *յիշեց-յիշես-ջի՛ր, յիշեսջի՛ք, մարուցանել/* > *մարուց-մատուսջի՛ր, մատուսջի՛ք: Աց, եց և ուց* վերջավորությամբ կատարյալի հիմքերի **ց-ն ջ-ի** ազդեցությամբ փոխվում է **ս-ի**, ինչպես երկրորդ ապառնի ժամանակաձևի կազմության դեպքում: Այս հնչյունափոխությունը չի վերաբերում արմատական **ց** ունեցող բայարմատներին՝ *լալ/* > *լաց-* *լացջի՛ր, լացջի՛ք, հարցանել/* > *հարց-հարցջի՛ր, հարցջի՛ք, լնուլ/* > *լից-* *լցջի՛ր, լցջի՛ք:*

Միջին հայերենում հորդորական հրամայականը վերանում է այնպես, ինչպես նրան ծնունդ տված ստորադասական երկրորդ ապառնին: Որոշ հեղինակների մոտ հանդիպող ձևերը զուտ գրաբարաբանություններ են: Այդ ձևերը չանցան նաև աշխարհաբարին: Պահպանվում են հրամայական եղանակի երկու բայաձևեր՝ հաստատական և արգելական:

ԱՐԳԵԼԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

Այս հրամայականը գրաբարում կազմվում է ներկայի հիմքից: Վերջավորություններն են **-ր, -յք**, ժխտումն արտահայտվում է **մի՛** մասնիկով, որը կարող էր ժխտել նաև ստորադասականի առաջին կամ երկրորդ ապառնիների ժամանակաձևերը՝ *մի՛ տեսցես, մի՛ յագենայցես:*

Արգելական հրամայականի հարացույցը ներկայացնենք գրաբարյան չորս խոնարհման բայերի օրինակներով: **Ասել-** *մի՛ ասեր, մի՛ ասէք, դատիլ-* *մի՛ դատիր, մի՛ դատիք, անսալ - մի՛ անսար, մի՛ անսայք, հեղուլ - մի՛ հեղուր, մի՛ հեղուք:*

Միջին հայերենի շրջանում արգելական հրամայականի եզակի թվում սկսում է տարածվել **իբ** վերջավորությունը երկու լծորդությունների համար՝ *մի՛ ծածկիր, մի՛ քաղիր, մի՛ յիշիր* և այլն: Այս երևույթն անցնում

է աշխարհաբարին: Պատճառն այն էր, որ **ե** և **ի** լծորդության շատ բայեր դեռ գրաբարում ունեին փոխանցումներ, այսինքն՝ ենթարկվում էին **և՛ ե, և՛ ի** խոնարհման:

Ե լծորդության պարզ բայերի արգելական հրամայականի հոգնակին միջին հայերենում և աշխարհաբարում նման է գրաբարին՝ ներկայի (ըղձական ապառնու) հոգնակի թվի 2-րդ դեմքի բայաձևին գումարած **մի** արգելականը՝ *մի՛ սիրէք, մի՛ տանջէք, մի՛ յիշէք*: **Ի** լծորդությունը միջին հայերենում գուտ գրաբարատիպ է, ինչպես նաև արևմտահայերենում՝ **իր, իք**: Օրինակ՝ *մի՛ աշխատիր, մի՛ աշխատիք, մի՛ լինիր, մի՛ լինիք*: Արևելահայերենում **ի** լծորդություն չկա. այդ բայերն անցել են **ե** լծորդության, ուստի ունենք՝ **-իր, -եք** վերջավորությունները, այսպես՝ *մի՛ եղիր, մի՛ եղեք*:

Ու լծորդությունը միջին հայերենում պահպանել է գրաբարյան վերջավորությունները, իսկ արևմտահայ աշխարհաբարում այս լծորդությունից մնացել է միայն **թողուլ** բայը, որի արգելական հրամայականը գրաբարակերպ է՝ *մի՛ թողուր, մի՛ թողուք*: Արևելահայերենում **ու** լծորդության բայերն անցել են **ե** խոնարհման (բացառություն է *տանուլ տալ* հարադրությունը):

Ա խոնարհման բայերի դեպքում միջին հայերենը և արևմտահայերենը պահպանում են գրաբարյան սկզբունքները՝ *մի՛ հասկնար, մի՛ հասկնայք*: Արևելահայերենում սկզբնապես եզակի թվում գրաբարյան **ար** վերջավորությունն էր առկա, բայց հետագայում վերջին **ր**-ն ընկնում է՝ *մի՛ գնար*-ը դառնում է *մի՛ գնա*: Հոգնակիում փոխվում է հիմքը. ներկայի փոխարեն՝ կատարյալի հիմք, որին գումարվում է **-եք** հրամայականի վերջավորությունը՝ *մի՛ գնացիք, մի՛ անսացիք*: Արգելականի **-ցեք** վերջավորությունը վկայված է արդեն միջին հայերենի աշխարհաբարացման շրջանում:

Արևելահայ աշխարհաբարում հանդիպում էր նաև բարբառային **միք**-ով արգելականի կազմություն՝ *մի՛ք խաղա, մի՛ք խոսի, մի՛ք ասի*: Երբեմն **միք**-ով կառույցներում նրանից հետո դրվում էր անորոշ դերբայը՝ *մի՛ք ասիի, մի՛ք խոսիի, մի՛ք խաղալ*: Այժմ հնացած են նաև մի՛ արգելական + անորոշի ձևափոխված կադապարով կառույցները (*մի՛ գյր-*

նիր, մի՛ մոտենալ): Կանոնական են համարվում հաստատական հրամայականից *մի* արգելականով կազմությունները, օրինակ՝ *մի՛ գլորիր, մի՛ մոտենիր*: Իսկ արևմտահայ գրական լեզվում գրաբարյան **այք**-ը դառնում է **աք՝ ալ** երկբարբառի պարզեցմամբ, որն օրինաչափ երևույթ էր հայերենի համար՝ *մի՛ գնալք- մի՛ գնաք*:

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ

ԱՌԱՋԻՆ ԱՊԱՌՆԻ

Այս ժամանակն իր ծագումով վաղնջական չէ. առաջացել է սահմանական ներկայից, որի վերջավորություններին կցվել է **ց** ձևությամբ՝ ապառնիության իմաստ հաղորդելու համար, իսկ **ց**-ից առաջ դրվում է բայական լծորդ ձայնավորը: **Ա** լծորդության բայերի դեպքում ունենք մաս **յ** ձայնակապը: Կազմվում է ներկայի հիմքից, այսինքն՝ կազմության ժամանակ կարող է ունենալ կերպածանցներ՝ **-ան-**, **-են-**, **-ն-**, **-չ-**, **-նչ-**, **-աչ-**, **-անչ-**: **Ա** լծորդության վերջավորությունները կազմվում են հետևյալ կերպ՝ **ա+յ+ց+** սահմանական ներկայի *ե* լծորդության վերջավորությունները՝ **-այցենմ**, **-այցես**, **-այցե**, **-այցենմք**, **-այցեք**, **-այցեն**: Օրինակ՝ *անսայցենմ*, *անսայցես*, *անսայցե*, *անսայցենմք*, *անսայցեք*, *անսայցեն*:

Ե լծորդության բոլոր բայերը՝ ներառյալ պատճառական, առաջին ապառնին կազմում են ոչ թե **-եցենմ**, **-եցես**... սպասելի վերջավորություններով, այլ՝ **-իցենմ**, **-իցես**, **-իցե**, **-իցենմք**, **-իցեք**, **-իցեն**: Օրինակներ՝ *իջանիցենմ*, *իջանիցես*, *իջանիցե*, *իջանիցենմք*, *իջանիցեք*, *իջանիցեն*, *նսրուցանիցենմ*, *նսրուցանիցես*, *նսրուցանիցե*, *նսրուցանիցենմք*, *նսրուցանիցեք*, *նսրուցանիցեն*:

Ու լծորդության վերջավորությունները կանոնավոր են՝ **-ուցում**, **-ուցուս**, **-ուցու**, **-ուցումք**, **-ուցուք**, **-ուցուն**, օրինակ՝ *գարթնուցում*, *գարթնուցուս*, *գարթնուցու*, *գարթնուցումք*, *գարթնուցուք*, *գարթնուցուն*:

Ի լծորդության բայերի վերջավորությունները կազմվում են նույն սկզբունքով՝ **-իցիմ, -իցիս, -իցի, -իցիմք, -իցիք, -իցին**, օրինակ՝ *ծիծաղիցիմ, ծիծաղիցիս, ծիծաղիցի, ծիծաղիցիմք, ծիծաղիցիք, ծիծաղիցին*:

Այս ժամանակն արտահայտում է ըղձական, պայմանական, հարկադրական և սահմանական եղանակների ապառնի ձևերի իմաստ՝ *ծիծաղիցի - ծիծաղեմ, կծիծաղեմ, պիտի ծիծաղեմ, ծիծաղելու եմ*: Ըստ անհրաժեշտության՝ գրաբարի առաջին ապառնին կարող էր արտահայտել նաև ըղձական, պայմանական, հարկադրական և սահմանական եղանակների անցյալի ապառնու իմաստ, օրինակ՝ *յումմէ կարօւրանայր խնդրեւ որդի, որ գայցէ (գար) եւ գերկինս եւ գերկիր առնիցէ...* (ստեղծեր) (Եզնիկ, էջ 82):

Քանի որ առաջին ապառնին ներկայի հիմքից է կազմվում, որոշ լեզվաբաններ այս ապառնի ժամանակի մեջ տեսնում են անկատար կերպի արտահայտություն, որով այն հակադրվում է երկրորդ ապառնուն: Այս հակադրություն-տարբերակումը միանշանակ եղել է, սակայն արդեն դասական գրաբարի շրջանում այն մթազնել էր, և առաջին ու երկրորդ ապառնիներն իրենց իմաստով դարձել էին նույնական, ուստի նույն նախադասության մեջ գրաբարագիր հեղինակները կարող էին առաջին և երկրորդ ապառնիները գուգակցել, օրինակ՝ Տէ՛ր, որ լուսատր **առնիցէ** զգաղտնիս խաւարի, եւ **յայտնիցէ** զխորհուրդս սրտից. եւ ապա իւրաքանչիւր գովութիւն **եղիցի** (I Կորնթ.Գ 3): Այս բայաձևերի ժխտումը կատարվում է **մի**, երբեմն նաև՝ **ոչ** մասնիկներով: Ուշագրավ է, որ հատկապես առաջին ապառնին երբեմն կարող էր նաև ներկայի և անցյալ անկատարի իմաստներ արտահայտել¹⁷⁰:

Գրաբարի քերականագետների վիճակագրական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հետդասական գրաբարում երկրորդ ապառնին ավելի հաճախ է գործածվել, քան առաջինը, այսինքն՝ առաջին ապառնին մեր լեզվի դեռ հին շրջանում աստիճանաբար դուրս էր մղվում¹⁷¹:

¹⁷⁰ Առավել մանրամասն տե՛ս Հայոց լեզվի պարունական քերականություն, էջ 316-319:

¹⁷¹ Տե՛ս նույն տեղում, էջ 322-324:

ԵՐԿՐՈՐԳ ԱՊԱՌՆԻ

Այս ժամանակը կազմվում է կատարյալի հիմքից: Ներգործակերպ և կրավորակերպ վերջավորություններն իրար հակադրվում են **ե-ի** խոնարհիչների հերթագայությամբ. **ե-ն** ներգործական սեռի ցուցիչ է, **ի-ն**՝ կրավորական: Գուցե այս սեռային հնագույն հակադրության պատճառով էլ *չ, նչ, անչ, աչ* սոսկածանցով, ինչպես նաև *նուս-չիս* փոխանցման **ի-** թույլ բաղադրիչով կատարյալի հիմք ունեցող չեզոք սեռի բայերը երկրորդ ապառնու իրենց խոնարհման ձևերում չունեն **ի** լծորդ. այն փոխարինվում է **ե/է-ով**՝ առաջացնելով, այսպես կոչված, խառը վերջավորություններ՝ -այց, -իցես, -իցէ, -իցուք, -իջիք, -իցեն: Բերենք այս խոնարհման օրինակներ՝ *մարտնչել- մարտի - մարտեայց, մարտիցես, մարտիցէ, մարտիցուք, մարտիջիք, մարտիցեն, պակնուլ- պակի -պակեայց, պակիցես, պակիցէ, պակիցուք, պակիջիք, պակիցեն, մեղանչել - մեղ/ի-մեղայց, մեղիցես, մեղիցէ, մեղիցուք, մեղիջիք, մեղիցեն*: Այս բայերի առաջին դեմքում կրավորաձև վերջավորությունն է հանդես գալիս, իսկ մյուս դեմքերում՝ ներգործաձև:

Այժմ ներկայացնենք ներգործաձև խոնարհման բայերի հարացույցները՝ *յիշել- յիշեց - յիշեցից, յիշեսցես, յիշեսցէ, յիշեսցուք, յիշեսջիք, յիշեսցեն, ուսուցանել-ուսուց-ուսուցից, ուսուցես, ուսուցէ, ուսուցուք, ուսուցիք, ուսուցեն*: *Եց/աց կամ ուց* կատարյալի հիմքերի **ց-ն** երկրորդ ապառնու **ց** կամ **ջ** ունեցող վերջավորությունների ազդեցությամբ դառնում է **ս**՝ հայեց+ցիս=հայեսցիս, անսաց+ջիք=անսասջիք, սակայն կատարյալի արմատական հիմքի բաղաձայն **ց-ն** փոփոխություններ չի կրում, դիցուք՝ *ցուցանել - ցուց- ցուցից, ցուցցես, ցուցցէ, ցուցցուք, ցուցջիք, ցուցցեն, լալ-լաց-լացից, լացցես, լացցէ, լացցուք, լացջիք, լացցեն*:

Կրավորաձև խոնարհման դեպքում՝ *դարել/իլ- դարեց - դատեցայց, դատեսցիս, դատեսցի, դատեսցուք, դատեսջիք, դատեսցին, հեծնուլ- հեծայց, հեծցիս, հեծցի, հեծցուք, հեծջիք, հեծցին*:

Միջին հայերենում ստորադասական եղանակն իր երկու ժամանակաձևերով վերանում է, սակայն հատկապես վաղ շրջանի միջինհայերե-

նյան աղբյուրներում այս ձևերը դեռ հանդիպում են, բայց դրանք արդեն գրաբարաբանություններ են: Չմոռանանք, որ 12-16-րդ դարերում ուսումնառությունը գրաբարով էր կատարվում, և դեռ մի քանի դար ևս գրաբարը պահպանելու էր իր գերակայությունը՝ իբրև գիտության, արվեստի լեզու:

Միջին հայերենը ձևավորել էր ստորադասականի իր ձևերը՝ ըղձական, պայմանական, հարկադրական եղանակները:

Արդի հայերենում գրաբարյան երկրորդ ապառնու սակավաթիվ ձևեր են պահպանվել, որոնց մի մասն ակնհայտ գրաբարաբանություն են և գործածվում են բարձր ոճերում՝ *քալ լիցի*, *Աստված մի արասցե*, *կեցցես*, *կեցցի*, մի մասն էլ իմաստափոխվել է, կորցրել բայական արժեքը՝ դառնալով վերաբերական կամ գոյական, ինչպես օրինակ՝ *դիցուք*, *գուցի*, *հասցի* և այլն:

ԸՂՁԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ՉԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Ըղձական եղանակը միջին հայերենում կազմվել է գրաբարյան սահմանական ներկայի և անկատարի ձևերից, որոնք անգամ 5-րդ դարում բազմիմաստ էին, ունեին այնպիսի կիրառություններ, որտեղ հստակ արտահայտում էին ըղձական և պայմանական ապառնիների իմաստ: Թեև 12-րդ դարում արդեն գրաբարյան ներկան և անկատարը կորցրել էին իրենց հիմնական իմաստը, և այդ իմաստով կիրառվում էին **կոյ/կու/կը** եղանակիչով կազմված կառույցները, այնուհանդերձ հին ներկան դեռևս շատ բազմիմաստ էր: Կարող էր արտահայտել. ա) ներկայի իմաստ, բ) ըղձականի իմաստ, գ) պայմանականի իմաստ, ուստի երբեմն զուտ ըղձականի իմաստն ընդգծելու համար սկսեցին կիրառվել միջինհայերենյան *կենալ* բայի ներկայի ժամանակաձևերը *ու* շաղկապի հետ: Առաջացավ ըղձականի եղանակային կառույց՝ *կենան ու ասեն* (ասեն), *կենայ ու մեռնի* (մեռնի), *կենաս ու ասես* (ասես) և այլն:

Ինչպես արձանագրում է Հ. Աճառյանը, «կենայ ձևը ստեղծվել էր ստորադասականը սահմանականի հետ չփոքրելու համար»¹⁷²: Լեզվաբանը նշում է, որ այս ձևերը միջին հայերենի վաղ շրջանին էին բնորոշ, ուստի **կոյ/կու** եղանակիչի արմատավորումից հետո դուրս են մղվում, և գրաբարյան ներկան ու անցյալ անկատարն առանց որևէ օժանդակ միջոցի սկսում են արտահայտել ըղձական ապառնու և անցյալի իմաստներ: Արևմտահայերենը նույնությամբ ժառանգում է միջինհայերենյան այս իրողությունը, իսկ արևելահայերենը հնչյունավորվում է դիմային վերջավորություններից մեկը՝ *և* լծորդության եզակի 3-րդ դեմքի *է*-ն դարձնում *ի*, այսպես՝ միջին հայերեն, արևմտահայերեն՝ **պատէ, ծաղրէ, տոնէ**, արևելահայերեն՝ **պատի, ծաղրի, տոնի**:

Ըղձականի կազմության ևս մի բաղադրյալ եղանակ ուներ գրաբարը *թողուլ* բայի **թող** եզակի հրամայականի միջոցով՝ **թող հանից, թող բառնամ**: Աշխարհաբարում մման կառույցներում *թող*-ը դիտվում է վերաբերական:

ՊԵՅՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Արևմտահայերենի քերականներն առանձին պայմանական եղանակ չեն նշում, որովհետև ձևով այն նույն սահմանական եղանակի ներկան և անկատար անցյալն է, իսկ արևելահայ աշխարհաբարում պայմանականն առանձին եղանակ է, որն արտահայտում է հիմնականում հաստատապես կատարվելիք գործողություն, որոշ կառույցներում էլ՝ խոսելուց հետո պայմանով կատարվելիք գործողություն՝ քեական երանգով: Միջին հայերենում **կոյ/կու** եղանակիչով բաղադրված ձևերն ի սկզբանե արտահայտել են ապառնիության իմաստ, ինչպես գրաբարյան ներկան 5-12-րդ դարերում, օր՝ *Ջիրար սիրենք խօշ կու լինի կամ չասելոյ բանն քո տան չասես, լեզուդ կսովրի* և այլն: Այս իմաստն էլ ժառանգել են երկու գրական հայերենները, բայց ինչպես նշեցինք, արևմ-

¹⁷² Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. IV, էջ 396:

տահայերենում **կու-**ով ձևերը սահմանական եղանակի ներկա և անկատար են կազմում և ապա միայն՝ երկրորդաբար արտահայտում ապառնիության իմաստ, իսկ արևելահայերենում կա հստակ հակադրություն՝ *սիրում եմ- կսիրեմ, սիրում էի- կսիրեի*: Այս եղանակի ժխտական բայաձևերի կազմության համար ձևավորվել է մի նոր դերբայ՝ ժխտական կամ ըղձական, որը **եմ** օժանդակ բայի ներկա և անցյալ ժխտական ձևերի հետ կազմում է պայմանական եղանակի ապառնի և անցյալ ժամանակների ժխտական խոնարհումը, օրինակ՝ *կգործեմ, կգործես, կգործի, կգործենք, կգործեք, կգործեն՝ չեմ գործի, չես գործի, չի գործի, չենք գործի, չեք գործի, չեն գործի* կամ *կգործեի կգործեիր, կգործեր, կգործեինք, կգործեիք, կգործեին՝ չէի գործի, չէիր գործի, չէր գործի, չէինք գործի, չէիք գործի, չէին գործի*:

ԺԽՏԱԿԱՆ ԴԵՐԲԱՅԻ ԾԱԳՈՒՄԸ

Մինչև 20-րդ դարի 30-ական թվականները ժխտական դերբայը՝ որպես ինքնուրույն ձև, հայերենում չի եղել: Այն որպես առանձին դերբայ արդի գրական հայերենում առաջինը ճանաչվել է Ա. Ղարիբյանի կողմից: Ժխտական դերբայը ցույց է տալիս մի գործողություն կամ եղելություն, որի կատարումը ժխտվում է օժանդակ բայի ժխտական ձևով: Ա. Ղարիբյանը քերականության իր դասագրքում ցույց է տալիս, որ *կ* եղանակիչով ժամանակաձևերի ժխտումն արդեն կազմվում է ոչ թե *եմ* բայի ժխտական ձևեր + անորոշ դերբայ կադապարով՝ *կգթամ-չեմ գթալ, կգթայի-չէի գթալ, կլսեմ-չեմ լսի, կլսեի-չէի լսիլ*, քանի որ *ե* լծորդության բոլոր բայերը ժխտման դեպքում պարտադիր վերածվում էին *ի* լծորդության, այլ *եմ* բայի ժխտական ձևեր + անորոշ դերբայից լ-ի անկումով կազմված նոր դերբայով¹⁷³: Արդի գրական հայերենի բայի պայմանական եղանակի երկու ժամանակների ժխտական ձևերի կազմությանը մասնակցող այս բայաձևը նա համարեց նոր դերբայ՝ ըղձական անու-

¹⁷³ Տե՛ս Ա. Ղարիբյան, Հայոց լեզվի քերականության դասագիրք, Եր., 1941, էջ 167:

նով: Այն կազմվում է անորոշ դերբայից. **ե** խոնարհման դեպքում անորոշ դերբայի **լ**-ն ընկնում է, **ե** լծորդը դառնում է **ի**, իսկ **ա** խոնարհման բայերի դեպքում ընկնում է միայն անորոշի **լ**-ն: Օրինակ՝ **թողնել>թողնի- չեմ թողնի, մոռանալ>մոռանա- չեմ մոռանա**:

Գ. Սևակն այս դերբայը կոչեց ժխտական՝ իր միակ գործառության նշանակությամբ (կազմել պայմանական եղանակի ժխտական խոնարհումը)՝ **կբերեմ- չեմ բերի, կբերի- չէի բերի, կանսամ- չեմ անսա, կանսայի- չէի անսա**:

Ըստ Ա. Աբրահամյանի՝ ժխտական դերբայ չի ունեցել միայն գրաբարը. այն ծագել է միջին հայերենում, փոխանցվել երկու աշխարհաբարներին և բարբառներին, բայց քերականագիտությունն այն անտեսել է: Ժխտականը, ինչպես նշեցինք, ծագում է անորոշ դերբայից. վերջինս միջին հայերենում և վաղ աշխարհաբարում մասնակցում էր սահմանական եղանակի ներկա և անցյալ անկատար, պայմանական եղանակի ապառնի և անցյալ ապառնի ժամանակների ժխտմանը՝ երբեմն ենթարկվելով լքր հնչյունավորության, երբեմն ստանալով *ի* նախդիրը, այսպես օրինակ՝ *չեմ գրիի, չեմ գրնուլ, չեմ աւորար, չեմ մոռնար, չիր սիրեր, չի լինիր, չէ ի հասանել, չէր ի բացվիլ, չեմ ի հաւարալ, չեմ ի կենար, չեմ ի րար* և այլն¹⁷⁴: Ելնելով լեզվական այս փաստերից՝ Ա. Աբրահամյանը եզրակացնում է. «Այս դեպքում անորոշ դերբայի կրած փոփոխությունը վկայում է տվյալ լեզվական համակարգի մեջ ժխտական դերբայի պահանջի մասին, և այդպիսով առաջանում է նոր դերբայ՝ անորոշ դերբայի տարբերացման հիման վրա»¹⁷⁵:

Արևմտահայ աշխարհաբարում, ինչպես արձանագրում է Ա. Այտրնյանը. «Բայի մը բացասական ձևը (*սահմանական ներկայի ու անկալարի- Ն. Դ.*) կը շինուի՝ աներեւութին ծայրի լ գիրը թէի փոխելով. այսպէս. լսեր, սորվիր, կարդար, մոռնար»¹⁷⁶: Արևելահայ աշխարհաբարում անորոշի **լ** ձայնորդը, որը միջին հայերենում կարող էր դառնալ **ր**, ընկ-

¹⁷⁴ Ա. Աբրահամյան, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Եր., 1953, էջ 239-240:

¹⁷⁵ Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 238:

¹⁷⁶ Ա. Այտրնյան, Բնական քերականություն, Եր., 1987, էջ 82:

նում է, օրինակ՝ **չեմ կարդալ>չեմ կարդար> չեմ կարդա, չեմ ասել> չեմ ասեր> չեմ ասի, կու մոռնամ> չեմ մոռնար>չեմ մոռանա:**

Թեև արդի արևելահայ գրական լեզվում **ի** խոնարհման բայերը ձուլվեցին **ե** խոնարհման բայերի հետ, բայց ժխտական դերբայում **ի** խոնարհիչը պահպանվեց, **ե** խոնարհման բայերի **ե** լծորդը վերածվեց **ի-ի**, օրինակ՝ **գրել-գրի, բերել-բերի, ասել-ասի:** Այս դերբայն այլ գործառույթ չունի՝ բացի պայմանական եղանակի ժխտական ձևերը կազմելուց:

ՀԱՐԿԱԴՐԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Մ. Աբեղյանն առաջինն էր հայ քերականագիտության մեջ, որ «Աշխարհաբարի քերականության» մեջ գրաբարյան ներկայից կազմված ըղձականից զանազանեց և իբրև ինքնուրույն եղանակներ առանձնացրեց **կը և պիտի** եղանակիչներով կազմված բայաձևերը. առաջինները՝ իբրև ենթադրական, երկրորդները՝ հարկադրական եղանակ: *Պիպի + ըղձական ապառնին* հայ քերականագիտության մեջ կոչվում է հարկադրական ապառնի, *պիպի + ըղձական անցյալը*՝ հարկադրական անցյալ: Այս ժամանակաձևերը կան մաս արևմտահայերենում, բայց որպես բացարձակ ապառնի՝ *պիպի ասեմ*, և անկատար ապառնի՝ *պիպի ասէի*:

Գրաբարում առկա էր **պիտիմ** պակասավոր բայը, որը հիմնականում միադիմի բայ էր, այսինքն՝ հանդիպում էին նրա եզակի և հոգնակի թվերի 3-րդ դեմքի ձևերը՝ **պիտի, պիտին:** Միջին հայերենում արդեն գործածական էին դրա տարբեր դեմքերի ոչ միայն ներկա, այլև անցյալ ձևերը՝ հիմնականում անորոշ դերբայի հետ, օրինակ՝ **հայիլ պիտի, ջանալ պիտէի** և այլն: Երբեմն մաս **որ** շաղկապի հետ **պիտի որ** ձևը հանդիպում էր բարդ ստորադասական նախադասություններում: Այս կադապարը բարբառներում հնչյունափոխվել դարձել է **բիդօր:** Ընդհանրապես բարբառներում **պիտի** եղանակիչը երբեմն գրեթե անճանաչելի փոփոխություններ է կրել՝ *պրի, բրի, բոու, բուդու, բրդր:*

Աստիճանաբար այս պակասավոր միադիմի բայը գրկվում է նյութական բովանդակությունից և դառնում է եղանակիչ՝ հարկադիր-պարտադիր կատարման ենթակա գործողություններ արտահայտելու համար: Միջին հայերենում **պիտի** + **ըղձական** բայաձևերի կառույցներում **պիտի**-ն բազմաթիվ հնչյունափոխությունների է ենթարկվում՝ **պիտի, պիտ, պտի, տի**: Օրինակ՝ *պիտր ապաշխարիէ, տի կոչէ, տի տրանիս, պտի գոչէ*: Այս կերպափոխությունները վկայում են, որ **պիտի**-ն արդեն բայ չէր, այլ եղանակիչ էր՝ ապառնիության և գործողության պարտադիր կատարման նշանակությամբ: **Պիտի** եղանակիչով բայաձևերը, ինչպես նշեցինք, ժառանգում են արևելահայ և արևմտահայ գրական հայերենները՝ մի կարևոր իմաստային տարբերությամբ. արևմտահայերենում **պիտի** **ասեմ**-ը համարժեք է սահմանական ապառնուն՝ **ասելու եմ**: Արևելահայերենում **պիտի**-ով ձևերը, թեև արտահայտում են ապառնիության իմաստ, բայց նաև պարտադիր կատարման, հարկադրականի նշանակություն ունեն: Ժխտումը կատարվում է չ մասնիկով՝ *չպիտի*:

Հարկադրականի իմաստով արևելահայ և արևմտահայ գրական լեզուներում հանդես է գալիս նաև **պետք է** կազմությունը, որի մեջ հարկադրությունը կարծես առավել շեշտված է, քան **պիտի**-ի մեջ, որը նաև ապառնիություն էր արտահայտում: **Պետք է**-ն եղանակիչ բայ է, որ գործածվում է ըղձականի եղանակի ներկայի և անցյալի ձևերի հետ՝ *պետք է ասեմ// պետք է ասեի*, երբեմն **որ** շաղկապով՝ *պետք է որ*:

Այս միադիմի կառույցը ծագում է գրաբարից, որտեղ ունենք **պետք - անհրաժեշտություն, կարիք** գոյականից առաջացած այլ բաղադրություններ ևս՝ **պիտոյ է**. սա **պետք**-ի եզակի սեռականն է, որ գրաբարում անորոշ դերբայի հետ ստեղծում էր միադիմի կառույցներ՝ *պիտոյ է երթալ*: Համարժեք է **պարտ/ք** գոյականից առաջացած **պարտ է** կառույցին:

Միջին հայերենում կար նաև ապառնու իմաստ արտահայտելու մեկ այլ եղանակ, ոչ թե **պիտիմ** բայի միջոցով, այլ՝ **կամիմ** + անորոշ դերբայ: Օրինակ՝ *կամիմ հասնել, կամիմ չափել* և այլն, բայց այս ձևերը, մրցակցության մեջ մտնելով **պիտիմ** բայի համանման կառույցների հետ, պարտվեցին և դուրս մղվեցին:

ԲԱՂԱԴԴՅԱԼ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

Անցյալ, վաղակատար և հարակատար դերբայներով կազմվող ժամանակները հայերենում

Գրաբարում բաղադրյալ ժամանակներ կազմվում էին անցյալ և ապառնի դերբայների միջոցով, որոնց ստորոգումային բաղադրիչը **եմ** և **լինել/իմ** բայերն էին, երբեմն մասնակա՝ **կամ**-ը, օրինակ՝ **գրեալ եմ/ գրեալ լինիմ/ գրեալ կամ**: Որպես օժանդակ բայ, որը ստորոգում է հաղորդում դերբայներին, առավել հաճախ կիրառվում էր **եմ**-ը: Այն բաղադրյալ ժամանակներ էր կազմում և՛ անցյալ, և՛ ապառնի դերբայների հետ, իսկ **լինել/իմ**-ը՝ միայն անցյալ դերբայի հետ:

Եմ բայն անցյալ դերբայի հետ կազմում է երեք ժամանակ. ա) **սահմանական եղանակի վաղակատար-հարակատար ներկա**՝ *ստեալ եմ, ստեալ ես, ստեալ է, ստեալ եմք, ստեալ էք, ստեալ են, բ) վաղակատար-հարակատար անցյալ*՝ *ստեալ էի, ստեալ էիր, ստեալ էր, ստեալ էաք, ստեալ էիք, ստեալ էին, գ) ստորադասական եղանակի վաղակատար-հարակատար ապառնի*՝ *ստեալ իցեմ, ստեալ իցես, ստեալ իցէ, ստեալ իցեմք, ստեալ իցեք, ստեալ իցեն*:

Ապառնի դերբայի հետ **եմ**-ը դարձյալ երեք ժամանակ է կազմում. ա) **սահմանական եղանակի բաղադրյալ ապառնի**՝ *ստելոց եմ, ստելոց ես, ստելոց է, ստելոց եմք, ստելոց էք, ստելոց են, բ) սահմանական եղանակի անցյալ ապառնի*՝ *ստելոց էի, ստելոց էիր, ստելոց էր, ստելոց էաք, ստելոց էիք, ստելոց էին, գ) ստորադասական եղանակի բաղադրյալ ապառնի*՝ *ստելոց իցեմ, ստելոց իցես, ստելոց իցէ, ստելոց իցեմք, ստելոց իցեք, ստելոց իցեն* :

Անցյալ դերբայի հետ **եմ** բայի եզակի թվի III դեմքի բայաձևերը կազմում են այնպիսի բաղադրյալ կառույցներ, որտեղ ենթական դրվում էր սեռական հոլովով, օրինակ՝ *իմ տեսեալ է/իմ տեսեալ էր// իմ տեսեալ իցէ*: Նման կառույցները գրաբարում արդեն հաճախադեպ չէին, իսկ միջին հայերենում, ապա աշխարհաբարում դադարում են գոյություն ունենալ:

Լինել(իմ) բայն անցյալ դերբայի հետ կազմում է ութ բաղադրյալ ժամանակաձևեր: Բերենք դրանց միայն եզակի առաջին դեմքերի օրինակները՝ *ասեալ լինիմ, ասեալ լինէի, ասեալ եղէ, ասեալ իցեմ, ասեալ եղէց, ասեալ լի՛ր, ասեալ լիջի՛ր, ասեալ մի՛ լինիր*:

Գրաբարում անցյալ դերբայով կազմված ձևերն արտահայտում էին թե՛ վաղակատարի, թե՛ հարակատարի իմաստ: Այս իմաստային միասնությունը ժառանգել է արևմտահայերենը, որտեղ վաղակատարը և հարակատարը կարող են միմյանց փոխարինել՝ *ասեր եմ/ասած եմ*: Միջին հայերենում գրաբարյան անցյալ դերբայով բաղադրյալ ժամանակները դեռ շարունակում են հանդիպել, միայն *անցյալ դերբայ + առաջին ասպառնի* ձևերն էին գրեթե դուրս մղվել գործածությունից՝ *ասեալ իցեմ, իցես, իցէ, իցենք, իցէք, իցեն*, որովհետև ստորադասական առաջին ասպառնին արդեն վերացել էր: Եւ պակասավոր բայն էլ պահպանել էր միայն ներկա և անցյալ ձևերը:

Անցյալ դերբայը միջին հայերենում ենթարկվում է հնչյունափոխության. *եա* երկբարբառը պարզեցվում է: Գրաբարում դա վկայված հնչյունափոխություն էր՝ *մարեալ*>*մարենի, լեառն-լերին*: 11-12-րդ դարերում արդեն անցյալ դերբայը ձեռք է բերում *ել* վերջավորությունը. այն քերականագիտության մեջ սկսում է կոչվել վաղակատար դերբայ: Այս *ել* վերջավորությունը արևմտյան բարբառներում ենթարկվում է ևս մեկ հնչյունափոխության՝ լ>ր: Ինչպես օրինակ՝ *սիրեալ*>*սիրել*>*սերեր, յուսացեալ*>*յուսացել*>*յուսացեր*: Նշենք, որ գրաբարի անցյալ դերբայը և՛ բայական, և՛ անվանական կիրառություններ ուներ: Անվանական կիրառությունների դեպքում ցույց էր տալիս վիճակ և դրություն դարձած գործողություն՝ *անկեալ այր, որդի մոլորեալ*: Որպես անուն՝ անցյալ դերբայը հոլովվում էր *n* հոլովիչով:

Միջին հայերենում գրաբարյան անցյալ դերբայը կրում է ոչ միայն ձևային փոփոխություններ՝ *եալ*>*ել* հնչյունափոխության պատճառով, այլ նաև իմաստային. այն կորցնում է անվանական գործառույթը: Այս գործառույթը փոխանցվում է մի նոր դերբայի՝ *ած* վերջավորությամբ, որը կոչվելու էր հարակատար: Գրաբարյան *ած* բայանվանակերտ ածանցը վերածվում է դերբայակերտ վերջավորության՝ ստեղծելով հա-

րականաբար դերբայը: Այս **ել** և **ած** վերջավորությամբ դերբայները **եմ** բայի հետ ստեղծում են նոր բաղադրյալ ժամանակներ՝ վաղակատար + **եմ** բայի ներկա և անցյալ, ինչպես նաև՝ հարակատար + **եմ** բայի ներկա և անցյալ, ինչպես օրինակ՝ *ասել եմ//էի, ասած եմ//էի*: Այս նույն օրինաչափությամբ **ել**-ով վաղակատարը միջին հայերենում գործածվում է **լինիմ** բայի հետ՝ *ասել լինի, հարել լինին, կրթել լինի...* Ինչպես նշեցինք, միջին հայերենում **ել**-ի վերջին **լ**-ն դառնում է **ր**, որի հետևանքով ստանում ենք՝ **եալ>ել>եր** պատմական փոփոխությունների շղթան՝ *լրեսեսալ եմ/լրեսել եմ/լրեսեր եմ*:

Միջինհայերենյան որոշ հեղինակների գործերում այս երեք ձևերն էլ կարող էին միաժամանակ գործածվել: Սակայն աստիճանաբար 13-րդ դարից հետո առավել կիրառական են դառնում **եր**-ով ձևերը, այնուհետև 16-րդ դարից հետո արևմտյան բարբառների կրողները կիրառում են **եր**-ով ձևերը, իսկ արևելյան բարբառների ներկայացուցիչները՝ **ել**-ով ձևերը: **Ել>եր** հնչյունափոխության պատճառը, ըստ Հ. Աճառյանի, անորոշ և անցյալ դերբայների տարբերակման ձգտումն է. երկդիմությունը հաղթահարելու լեզվական միտում, որի համար օրինակ է ծառայում մի կողմից՝ *մի խօսիլ- մի խօսիր* փոխակերպման նախադեպը, մյուս կողմից՝ անկատարի *էր* վերջավորությունը՝ *էր* անցյալ անկատար>*եր* անցյալ դերբայ¹⁷⁷:

Եթե անցյալ դերբայ + եմ կառույցները համապատասխան ձևափոխություններով ամրակալվեցին հայերենի՝ գրաբարին հաջորդած բոլոր շրջաններում՝ կորցնելով միայն ապառնու ձևերը, ապա անցյալ դերբայ + լինիմ կառույցներն աստիճանաբար սկսեցին դուրս մղվել կիրառությունից:

Միջին հայերենում դրանք դեռ հանդիպում են՝ հիմնականում *լինիմ* բայի ներկա և անցյալ անկատար ձևերի հետ՝ *ասացել լինի, խմել լինին, կերել լինէր* և այլն: Սակայն հետագայում դրանք փոխարինվեցին հարակատար դերբայով և **լինիմ** բայի խոնարհված ձևերով կազմվող երկրորդական բաղադրյալ ժամանակներով՝ **ասած լինեմ, կերած լիներ**,

¹⁷⁷ Տե՛ս Հ. Աճառյան, նշվ. աշխ., հ. IV, Բ, Եր., 1961, էջ 216:

խմած լինէին: Պատճառն այն է, որ եթե անցյալ դերբայ+եմ կառույցներն արտահայտում էին վաղակատարի իմաստ, ապա **լինիմ** բայի հետ՝ հարակատարի իմաստ, ուստի հետագայում դրանք սկսեցին կազմվել հարակատար դերբայով:

Անցյալ դերբայը, բացի **եմ** բայից, կարող էր հարադրվել նաև **կամ** և **ունիմ** բայերի հետ: Նման կառույցներ կային և՛ գրաբարում, և՛ միջին հայերենում, բայց ավելի հաճախ **կամ** և **ունիմ** բայերը գործածվում էին հարակատար դերբայի հետ՝ *նստած կային, բուսած կայր, բռնած ունին, ժողոված ունին* և այլն:

Որպես օրինակ՝ բերենք միջին հայերենում վաղակատար ներկայի և անցյալ վաղակատարի խոնարհման հարացույցները:

Վաղակատար ներկա

Կարդալ՝ *կարդացել եմ, կարդացել ես, կարդացել է, կարդացել եմք/ենք, կարդացել էք, կարդացել են:*

Խօսիլ՝ *խօսել եմ, խօսել ես, խօսել է, խօսել եմք/ենք, խօսել էք, խօսել են:*

Խնուլ՝ *խցել եմ, խցել ես, խցել է, խցել եմք/ենք, խցել էք, խցել են:*

Ասել՝ *ասել եմ, ասել ես, ասել է, ասել եմք/ենք, ասել էք, ասել են:*

Վաղակատար անցյալ

Կարդալ՝ *կարդացել էի, կարդացել էիր, կարդացել էր, կարդացել էինք, կարդացել էիք, կարդացել էին:*

Խօսիլ՝ *խօսել էի, խօսել էիր, խօսել էր, խօսել էինք, խօսել էիք, խօսել էին:*

Խնուլ՝ *խցել էի, խցել էիր, խցել էր, խցել էինք, խցել էիք, խցել էին:*

Ասել՝ *ասել էի, ասել էիր, ասել էր, ասել էինք, ասել էիք, ասել էին:*

Արևելահայ աշխարհաբար

Վաղակատար ներկա

Կարդալ՝ *կարդացել եմ, կարդացել ես, կարդացել է, կարդացել ենք, կարդացել եք, կարդացել են:*

Խոսել՝ *խոսել եմ, խոսել ես, խոսել է, խոսել ենք, խոսել եք, խոսել են:*

Վաղակատար անցյալ

Կարդալ՝ կարդացել էի, կարդացել էիր, կարդացել էր, կարդացել էինք, կարդացել էիք, կարդացել էին:

Խոսել՝ խոսել էի, խոսել էիր, խոսել էր, խոսել էինք, խոսել էիք, խոսել էին:

Արևմտահայ աշխարհաբար

Վաղակատար ներկա

Կարդալ՝ կարդացիր եմ, կարդացիր ես, կարդացիր է, կարդացիր ենք, կարդացիր էք, կարդացիր են:

Խոսել՝ խոսիր եմ, խոսիր ես, խոսիր է, խոսիր ենք, խոսիր էք, խոսիր են:

Վաղակատար անցյալ

Խնդալ՝ խնդացիր էի, խնդացիր էիր, խնդացիր էր, խնդացիր էինք, խնդացիր էիք, խնդացիր էին:

Խոսել՝ խոսիր էի, խոսիր էիր, խոսիր էր, խոսիր էինք, խոսիր էիք, խոսիր էին:

ՀԱՐԱԿԱՏԱՐ ԳԵՐԲԱՅՈՎ ԿԱԶՄՎՈՂ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

Միջին հայերենում անցյալ դերբայը երկփեղկվեց. բուն **եալ**-ից առաջացան **ել/եր** ձևերը, որոնց մեջ խորացավ վաղակատարի նշանակությունը, հետևաբար հարակատարի նշանակության համար նոր ձևույթ պետք է առաջանար: Այդպիսին դարձավ գրաբարում առկա **-ած//ուած** ածանցը, որը հիմնականում գոյականներ և ածականներ էր կազմում բայարմատներից. այն վերածվեց նոր՝ հարակատար դերբայ կազմող ձևույթի: Գրաբարում արդեն այս **-ած//ուած** ձևույթը բայական մասնակի կիրառություններ ուներ, ուստի և, ինչպես դիպուկ բնորոշում է Ս. Անթոսյանը. «Միջին հայերենում կատարվել է մի երևույթ, որ շատ բնութագրական է հայոց լեզվի պատմության համար, այն է՝ լեզվի մեջ մասնակի կիրառությամբ հանդես եկող մի ձև ընդհանուր կիրառություն է

ձեռք բերում՝ բարձրանալով քերականական ընդհանրական արժեք ունեցող երևույթի մակարդակի»¹⁷⁸։ Քանի որ **ած//ուած** վերջավորությամբ անունները գրաբարում համդես էին գալիս **եմ** և **լինիմ** բայերի հետ՝ որպես բաղադրյալ ստորոգյալ, օրինակ՝ *շինած էր, անկած լինիցի*, ապա միջին հայերենում արդեն նման կառույցները ընդհանրացան՝ որպես հարակատար դերբայով բաղադրյալ ժամանակաձևեր։

Հարակատարը ցույց է տալիս կատարված, ավարտված գործողություն կամ եղելություն որոշակի հետևանքով, այսինքն՝ այնպիսի ավարտված գործողություն, որը վերածվել է տևական կամ ժամանակավոր դրության, վիճակի։ Միջին հայերենում հարակատար դերբայը **եմ** բայի ներկայի և անցյալի ձևերի հետ կազմում էր սահմանական եղանակի երկու ժամանակներ՝ հարակատար ներկա և հարակատար անցյալ։ Արևմտահայերենում հարակատարից կազմված բայաձևերը շատ գործածական դարձան, ընդ որում հատկապես ներգործական սեռի բայերի դեպքում դրանք արտահայտում են վաղակատարի իմաստ և գործածվում են դրա փոխարեն՝ *գիրքած են- իմացել են, զնած է- զնել է, սիրած էր- սիրել էր, շինած են-շինել են* և այլն։

Արևելահայերենում վիճակը բոլորովին այլ է. հարակատարի և **եմ** բայի միջոցով կազմված ձևերը չեն համարվում բայի եղանակային ձևեր։ Ընդ որում ներգործական սեռի բայերի հարակատար դերբայը արդի արևելահայերենում չի կազմում բաղադրյալ ժամանակներ։ Այդպիսի ձևեր կարող են կազմվել միայն չեզոք և կրավորական սեռերի բայերի հարակատար դերբայներից, օրինակ՝ *շինած է, գրած է, սիրած է* կազմություններն անհնար են, փոխարենն ունենք՝ *նստած է, քնած է, հագնված է, սիրված է, մոռացված է* և այլն։ Հարակատար դերբայը կազմում է երկրորդական բաղադրյալ ժամանակներ **լինել** բայի հետ՝ *գրած լինեմ, գրած կլինեմ* և այլն։ Լեզվի պատմության տեսաբանների կարծիքով՝ միջին հայերենի վաղ շրջանում համանման իրավիճակ էր, և վաղ միջինհայերենյան աղբյուրներում հարակատար դերբայն օգտագործել են կա՛ն կրավորական, կա՛ն չեզոք իմաստներով¹⁷⁹։ Ավելի ուշ

¹⁷⁸ Ս. Անթոսյան, Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. II, Եր., 1975, էջ 235։

¹⁷⁹ Տե՛ս Ս. Անթոսյան, նշվ. աշխ., էջ 236-237։

միայն՝ XV-XVI դարերում, հարակատար դերբայը ներգործական բայերի հետ սկսել է արտահայտել վաղակատարի իմաստ՝ առանց կրավորականության իմաստի: Այս հատկանիշն էլ ժառանգել է արևմտահայերենը:

Արևելահայերենում ներգործական սեռի բայերի հարակատարը *հմ* օժանդակ բայի հետ ժամանակաձևեր չի կազմում, իսկ մյուս բայերի դեպքում հարակատարը ստորոգելիական վերադրի դեր է կատարում՝ *գարմացած հմ, հարքած հմ*:

Միջին հայերենում հարակատար դերբայը բացի *լինիմ* բայից բաղադրյալ ժամանակներ կարող էր կազմել նաև **կամ** և **ունիմ** բայերի հետ, օրինակ՝ *գրած կայ, լցած կար, պահած ունէր* և այլն:

Բերենը հարակատարով խոնարհված բայերի հարացույցները միջին հայերենում և արևմտահայ աշխարհաբարում (արևելահայ աշխարհաբարում այդ ձևերը բայական հարացույցում չկան):

Հարակատար ներկա

Իմանալ՝ *իմացած հմ, իմացած ես, իմացած է, իմացած եմք/ենք, իմացած էք, իմացած են:*

Խօսիլ՝ *խօսած հմ, խօսած ես, խօսած է, խօսած եմք/ենք, խօսած էք, խօսած են:*

Լնուլ՝ *լցած հմ, լցած ես, լցած է, լցած եմք/ենք, լցած էք, լցած են:*

Ասել՝ *ըսած հմ, ըսած ես, ըսած է, ըսած եմք/ենք, ըսած էք, ըսած են:*

Հարակատար անցյալ

գիրնալ՝ *գիրցած էի, գիրցած էիր, գիրցած էր, գիրցած էինք, գիրցած էիք, գիրցած էին:*

Խօսիլ՝ *խօսած էի, խօսած էիր, խօսած էր, խօսած էինք, խօսած էիք, խօսած էին:*

Լնուլ՝ *լցած էի, լցած էիր, լցած էր, լցած էինք, լցած էիք, լցած էին:*

Ասել՝ *ըսած էի, ըսած էիր, ըսած էր, ըսած էինք, ըսած էիք, ըսած էին:*

ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅՈՎ ԿԱԶՄԱԾ ԲԱՅԱԶԵՎԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Ապառնի և ապառնի անցյալ

Ապառնի դերբայը գրաբարում ուներ **-ոց** վերջավորություն, որն ավելանում էր անորոշ դերբայի վրա: Ծագումնաբանորեն այն անորոշ դերբայի սեռական հոլովածն է հոգնակի թվով՝ *ասել/ասելոյ/ասելոց*: Ու լծորդության բայերի ապառնի դերբայի կազմության ժամանակ *ու* լծորդը սղվում է՝ *քողուլք քողոց, հեղուլք հեղոց, առնուլք առնոց*: Այս դերբայը գրաբարում ունի միայն բայական կիրառություն. **եմ** բայի երեք ձևերի հետ՝ ներկա, անցյալ, ապառնի, կազմում է սահմանական եղանակի ապառնի, անցյալի ապառնի և ստորադասական եղանակի բաղադրյալ ապառնի ժամանակները:

Սահմանական ապառնի՝ *ասել -ասելոց եմ, ասելոց ես, ասելոց է, ասելոց եմք, ասելոց էք, ասելոց են*:

Անցյալի ապառնի՝ *ասելոց էի, ասելոց էիր, ասելոց էր, ասելոց էաք, ասելոց էիք, ասելոց էին*:

Ստորադասական բաղադրյալ ապառնի՝ *ասելոց իցեմ, ասելոց իցես, ասելոց իցէ, ասելոց իցեմք, ասելոց իցէք, ասելոց իցեն*: Թարգմանվում է աշխարհաբար՝ *ասելու լինի, կլինի, պիտի լինի*:

Ապառնի դերբայը, ինչպես վերը նշեցինք, կարող էր ունենալ նաև **-ի** վերջավորությունը, որը ևս հանդիպում է բաղադրյալ ժամանակների կազմում, օրինակ՝ *կրելի է, ուրելի է*: Այս **-ի** վերջավորությունը դարձյալ անորոշ դերբայի սեռականի ձև է: Անորոշ դերբայի **ի** հոլովմամբ սեռականի ձևերը պահպանվել են հայերենի բարբառներում՝ *ասիլի, պահիլի* (Արցախ), *տալի, քիցիլի*// գցելու (Շամախ)¹⁸⁰: **Ի** ձևությամբ անորոշ դերբայի ձևերը հայերենի զարգացման բոլոր շրջաններում շատ կենսունակ են. դրանք դառնում են *և՛* անուն՝ գոյական, ածական, *և՛* միադիմի բայ, օրինակ՝ *քանալի, սիսածանելի* (գոգնոց, ծածկոց) *դարովելի, տեսանելի, մարտուցանելի է, հաւատալի իցէ* և այլն:

¹⁸⁰ Տե՛ս Հայոց լեզվի պարունական քերականություն, հ. 2, Եր., 1975, էջ 161-162:

Գրաբարի ապառնի դերբայի այս երկու ձևերը՝ **-ոց** և **-ի**, ըստ սեռերի տարբերակված չեն. **-ոց** վերջավորությամբ կարող են և՛ ներգործական, և՛ չեզոք, և՛ կրավորական սեռի բայերի ապառնի դերբայներ կազմվել, ինչպես և **-ի-ով**՝ *զալոց է, գնալոց է, չարչարելոց է ի նոցանէ, զայրակողից էք յինէն, ըմպելի է, կրելի է*:

Միջին հայերենում **ոց**-ով վերջավորվող դերբայը դառնում է գրաբարաբանություն. նրանով կազմվող ստորադասական բաղադրյալ ապառնին ընդհանրապես դուրս է գալիս կիրառությունից, որովհետև ստորադասական եղանակի բայաձևերն արդեն դուրս էին մղվում: Իսկ **եմ** բայի՝ ներկայով և անցյալով կազմվող ժամանակները որոշ հեղինակներ շարունակում են գործածել: Միջին հայերենում ստեղծվում է նոր ապառնի դերբայ՝ անորոշի սեռական հոլովից՝ *ժողվել-ժողվելոյ//ժողվելու*: Դեռևս գրաբարում հանդիպում էին **-ոյ**-ով վերջավորվող ձևեր, որոնք առավելապես ապառնու իմաստ էին արտահայտում և ոչ թե անորոշ դերբայի սեռական հոլովի, օրինակ՝ *դու ընդ իս իցես խօսելոյ, չես լինելոյ առն*:

Միջին հայերենում այս *ոյ* վերջավորությամբ կառույցները շատ ավելի քիչ են հանդիպում. համագործածականը **ու**-ով ապառնիներն են՝ *անցանելու ես, կխսելու եմ, տեսնելու է և այլն*:

Ապառնի

Իմանալ՝ *իմանալու<ալոյ եմ, իմանալու ես, իմանալու է, իմանալու եմք/ենք, իմանալու էք, իմանալու են*:

Խօսել/իմ՝ *խօսելու<ոյ եմ, խօսելու ես, խօսելու է, խօսելու եմք/ենք, խօսելու էք, խօսելու են*:

Յենուլ՝ *յենելու<ոյ եմ, յենելու ես, յենելու է, յենելու եմք/ենք, յենելու էք, յենելու են*:

Ասել՝ *ասելու<ոյ եմ, ասելու ես, ասելու է, ասելու եմք/ենք, ասելու էք, ասելու են*:

Ապառնի անցյալ

Իմանալ՝ իմանալու< ալոյ էի, իմանալու էիր, իմանալու էր, իմանալու էինք, իմանալու էիք, իմանալու էին:

Խօսել/իմ՝ խօսելու< ելոյ էի, խօսելու էիր, խօսելու էր, խօսելու էինք, խօսելու էիք, խօսելու էին:

Յենուլ՝ յենելու< ոյ էի, յենելու էիր, յենելու էր, յենելու էինք, յենելու էիք, յենելու էին:

Ասել՝ ասելու< ոյ էի, ասելու էիր, ասելու էր, ասելու էինք, ասելու էիք, ասելու էին:

Ու վերջավորությամբ ապառնին ամրակայվեց *Ում* ճյուղի բարբառներում, իսկ *Կը* ճյուղի բարբառներում ապառնու իմաստով սկսեցին գործածվել **պիտի** եղանակիչով գրաբարյան ներկան և անցալ անկատարը՝ *պիտի սիրեմ*=*սիրելու եմ*, *պիտի սիրէի*// *սիրելու էի*: Այս ձևերը *Ում* ճյուղի բարբառներում հարկադրական եղանակի իմաստ են արտահայտում: Արևելահայերենում ապառնի դերբայով և օժանդակ բայի ներկայի ու անցյալի ձևերով բաղադրվում են սահմանական եղանակի ապառնի և անցյալի ապառնի ժամանակաձևերը, ինչպես՝ *գրելու եմ*, *գրելու էի*: **Ու**-ով կազմվող ապառնի դերբայը բաղադրյալ դիմավոր ժամանակներ է կազմում նաև **լինել** բայի հետ: Ինչպես օրինակ՝ *սիրելու լինեմ*, *սիրելու լինես*, *սիրելու կլինի*, կամ **լինել** բայի՝ արևմտահայերենին բնորոշ հնչյունափոխությամբ վկայված ձևերը՝ *սիրելու ըլլամ*, *սիրելու ըլլաս*, *սիրելու կ'ըլլայ* և *այլն*:

Արևելահայերենում ապառնի դերբայով և օժանդակ բայի ներկայի ու անցյալի ձևերով բաղադրվում են սահմանական եղանակի ապառնի և անցյալի ապառնի ժամանակաձևերը, ինչպես՝ *գրելու եմ*, *գրելու էի*:

ԺԽՏԱԿԱՆ ԽՈՆԱՐՀՈՒՄ

Հայերենում ժխտումն արտահայտվում է *ոչ*, *չ*, *մի* մասնիկներով, որոնք հնդեվրոպական ծագում ունեն: *Ոչ*, *չ* մասնիկներից, Այտրնյանի համոզմամբ, առավել հին և դասական է *ոչ*-ը, իսկ *չ*-ն հետդասական է,

ոչ-ի կրճատված տարբերակը¹⁸¹: *Ոչ* և *չ* մասնիկների կիրառությունը գրեթե հավասարազոր է. դրանք ժխտման համար դրվում են հետևյալ ձևերի վրա՝ 1. սահմանական ներկա- **ոչ իշխե, չիշխե**, 2. անկատար անցյալ- **չգտաներ, ոչ գտաներ**, 3. անցյալ կատարյալ- **չասաց, ոչ ասաց**, 4. ստորադասական առաջին և երկրորդ ապառնիներ- **չիցե, չիցեն, ոչ արշալիցեն**, 5. դերբայների և անունների վրա՝ **չտեսանել, չաջողութիւն, ոչ տալով, ոչ անձնաւոր**, 6. բաղադրյալ ժամանակների վրա - **ոչ տեսանելոց ենք, չիցե տեսեալ**: Միայն հրամայականն է ժխտվում *մի-ով՝ մի՛ անցաներ, մի՛ անցանէք*: Ստորադասական առաջին և երկրորդ ապառնիների ժխտականը կազմվում է հիմնականում *մի* մասնիկով, բայց կան նաև *ոչ-ով* ժխտման ձևեր: Այսպես՝ *մի՛ խորորեացի սիրտ քո ի ճանապարհս նորա, եւ մի՛ մոլորեացիս ի շաւիղս նորա* կամ *ոչ բողաջուցից ձեզ, մինչեւ կատարեսցիք ամենայն կամս հրամանաց իմոց*:

Միջին հայերենում պահպանվել են գրաբարյան ներկան և անկատարը, նրանց ժխտումն էլ պահպանվում է գրաբարյան երկձևությամբ՝ *ոչ ունենայ, չընդունի*: Բայց երբեմն եզակի 3-րդ դեմքի համար կիրառվում էր նաև **չի** մասնիկը՝ **չի կարե, չի գիտե** և այլն: Միջին հայերենի չ-ով ըղձականի ժխտական ձևերը ժառանգեցին նոր գրական լեզուները: *Կու-ով* ձևերի ժխտումը կատարվում էր հետևյալ կերպ. ժխտական խոնարհման օժանդակ բայ + **ի+** անորոշ դերբայ: Վերջինս փաստորեն անորոշի ներգոյական հոլովածն է. **ո** հոլովման բառերի ներգոյականը կազմվում էր **ի+** *հայցական* կաղապարով, օրինակ՝ *կու գիտեր-չէր ի գիտել, կու հասկանաւ - չեմ ի հասկանալ, կու պակասեն - չեն ի պակասել*: Աստիճանաբար այս կառուցվածքից տղվում է *ի* նախդիրը՝ *չէ ի տալ > չի տալ*, իսկ միջին հայերենի ուշ շրջանում և արդեն աշխարհաբարում ընկնում է անորոշի / վերջավորությունը, անորոշի /-ն սկսում է *ը* դառնալ, օրինակ՝ *չեմ ի տալ > չեմ տալ > չեմ տար > չեմ տա*: Ե լծորդության բայերի ժխտման դեպքում անորոշը վերջավորվում էր *իլ-ով*, ուստի /-ի անկումը բերում է *ի-ով* վերջավորվող նոր ժխտական դերբայի առաջացման՝ *կու գրեմ > չեմ ի գրիլ > չեմ գրիլ > չեմ գրի*:

¹⁸¹ Ա. Այոբյան, նշվ. աշխ., էջ 87:

Միջին հայերենի բաղադրյալ ժամանակաձևերի ժխտումը կատարվում է օժանդակ բային չ հավելելով՝ *գրած եմ- չեմ գրած, տեսեր եմ- չեմ տեսեր, գրելոյ եմ - չեմ գրելոյ* և այլն: Մեր նոր գրական լեզուները գրեթե նույնությամբ ժառանգում են բաղադրյալ ժամանակների ժխտման ձևը. օժանդակ բայն առաջ է գալիս՝ ստանալով չ: Պետք է հիշել, որ արևելահայերենում բայի եզակի 3-րդ դեմքի է-ն ժխտվելիս դառնում է *ի՝ չի, է-ն չի* դառնում *ի*, եթե բաղադրյալ ստորոգյալի հանգույցն է, օրինակ՝ *սիրում է-չի սիրում, հաղթել է- չի հաղթել, գրմեկու է- չի գրմեկու, բարի է-բարի չէ, ընկած է- ընկած չէ*: Արևմտահայերենում օժանդակ բայի ներկայի եզակի երրորդ դեմքի ժխտական ձևը՝ չի-ն, կարող է հնչյունափոխության ենթարկվել ձայնավորով սկսվող բայերի սահմանական ներկայի բայաձևերում. ի-ն տվում է, այս սղումը գրավոր խոսքում արտահայտվում է ապաթարցով, օրինակ՝ *կ'երգէ-չի երգեր- չ'երգեր*:

Մի մասնիկը գրաբարում կարող էր ժխտել ոչ միայն հրամայականի բայաձևերը՝ կազմելով արգելական հրամայականը, այլև ստորադասական 1-ին և 2-րդ ապառնիները՝ *մի՛ արասցես, մի՛ լինիցիք, մի՛ երթայցեք*:

Միջին հայերենում ստորադասականները վերանում են, և **մի** մասնիկի կիրառության ոլորտը նեղանում է՝ սահմանափակվելով արգելականի կազմությամբ: Աշխարհաբարում իրավիճակը նույնն է: Որպես հնաբանություն՝ պահպանվել է «Աստված մի արասցե» արտահայտությունը՝ «Աստված չանի»:

Արևմտահայերենում ժխտումը կատարվում է նույն մասնիկների օգնությամբ՝ **մի**, չ: Մի մասնիկով կազմվում է արգելական հրամայականը, որի հոգնակին գրաբարատիպ է, տարբերվում է արևելահայերենի ձևերից, *մի-ն* ավելանում է *ներկայի հիմք+ էք* վերջավորությամբ ձերին՝ *մի՛ կարդաք, մի՛ հեռանաք, մի՛ պատմեք, մի՛ խօսեք*: Յուրահատուկ է նաև *պիտի* եղանակիչով կազմված բայաձևերի ժխտումը, որպես կանոն՝ չ-ն դրվում է բայաձևի վրա՝ *պիտի նայիմ→պիտի չնայիմ, պիտի կարդամ→պիտի չկարդամ*, թեև վերջին տասնամյակներում արևելահայերենի ազդեցությամբ տարածվել են *չպիտի նայիմ, չպիտի կարդամ* ժխտական կառույցները: Սահմանական եղանակի ներկայի և անկատար ան-

ցյալի *կը* եղանակիչով կազմությունների ժխտական խոնարհման դեպքում *եւ* օժանդակ բայի ժխտական ձևերին հետ գործածվում են ժխտական դերբայի ձևերը՝ *կը պարմեւ* → *չեւ պարմեր*, *կը խօսիւ* → *չեւ խօսիր*, *կը մնաւ* → *չեւ մնար*... Սահմանական եղանակի վաղակատարներկա և անցյալ բայաձևերի ժխտականը այս պատճառով տարածված չէ, որովհետև կառաջանար համանունություն, ուստի վաղակատար ներկայի ու անցյալի ժխտական ձևերին փոխարինում են հարակատարի ժխտականները՝ *պարմեր եւ* → *չեւ պարմած*, *խօսեր եւ* → *չեւ խօսած*, *մնացեր եւ* → *չեւ մնացած* և այլն: Ինչպես տեսնում ենք, *եւ* օժանդակ բայի ժխտական ձևերը նախադաս են:

Գրական արևելահայերենում ձևավորվել է ժխտման մի յուրահատուկ ձև, որը չի եղել գրաբարում, չկա նաև արևմտահայերենում: Դա, այսպես կոչված, կրկնակի ժխտումն է: Եթե խոսքը կազմվում է ժխտական դերանվամբ, ապա նրա հետ կիրառվում է ժխտական խոնարհման բայ՝ *ոչ որ չգիրեր եղածի մասին*, *ոչինչ չեւ ասի ձեզ*: Արևմտահայերենում, որպես կանոն, ժխտումը կրկնակի չէ, ժխտական դերանունների հետ դրվում են դրական խոնարհման բայեր՝ *ոչ որ ըրած է*, *ոչ մէկ բան ըրած է*, *ոչ մէկ անգամ ըրած է* և այլն: Բայց նշենք, որ արևմտահայ որոշ հեղինակների գործերում հանդիպում են կրկնակի ժխտման ձևեր: Սա արևելահայերենի ազդեցության հետևանք է: Բացի այս, արևելահայերենում անկատար, վաղակատար, ապակատար դերբայներով կազմված վերլուծական ժամանակների ժխտման դեպքում օժանդակ բայը գալիս է առաջ, ներկա ժամանակի 3-րդ դեմքի է ձևությամբ հնչյունափոխվում է՝ *է>ի*, օրինակ՝ *գրելու է- չի գրելու, գրում է- չի գրում* և այլն: Արևմտահայերենում, որպես կանոն, *է>ի* հնչյունափոխությունը չի գործում, և օժանդակ բայը չի տեղափոխվում բայից առաջ: Օրինակ՝ *ըսելու է-ըսելու չէ*, *ըսելու էք-ըսելու չէք* և այլն: Նշենք նաև, որ արևմտահայերենում վաղակատար ներկա և վաղակատար անցյալ ժամանակների ժխտական ձևերը գործածական չեն, որովհետև դրանք նույնանում են սահմանական անկատարի ձևերին, փոխարենը գործածվում են հարակատարի ժխտականները, օրինակ՝ *գրեր եւ* → *չեւ գրած* ոչ թե → *չեւ գրեր*, *գրեր է* → *չէ գրած*, ոչ թե → *չէ գրեր*:

ԿՐԱՎՈՐԱԿԱՆԻ ԿԵՐՊԱՍԵՌԱՅԻՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Կրավորական կառույցներ արտահայտելու համար հին հայերենում բացակայում էր մեկ միասնական և համակարգային ձևույթ կամ եղանակ: Ներկայի հիմքից կազմվող ժամանակներում գործում էր կրավորականի իմաստի արտահայտության հետևյալ եղանակը՝ *ե>ի* փոխակերպումը, իսկ կատարյալի հիմքից կազմվող ժամանակներում ներգործածն խոնարհման վերջավորությունները փոխարինվում էին կրավորակերպ խոնարհման վերջավորություններով:

Ինչպես նշեցինք, ներկայի հիմքից կազմվող ժամանակներում որպես կրավորականության ցուցիչ տարբերակվում էր *ի* լծորդը: **Ե** լծորդության ներգործական սեռի բայերը կրավորական իմաստ արտահայտելու համար իրենց լծորդը փոխում էին **է>ի՝ շինէ- շինի (շինում է- շինվում է), սիրեն-սիրիմ (սիրում են-սիրվում են)** կամ **սիրիցեն- սիրիցիմ (սիրելու են- սիրվելու են), մի՛ սիրեր-մի՛ սիրիր (մի՛ սիրիր- մի՛ սիրվիր):** Անցյալ անկատարում վիճակն այլ է, քանի որ *ե* և *ի* խոնարհումներն ունեն ընդհանուր վերջավորություններ՝ *էի, էիր, էր, էաք, էիք, էին:* Դրանք նույն ձևով արտահայտում էին և՛ ներգործական, և՛ կրավորական սեռերի իմաստներ՝ *սիրէր = սիրում էր և սիրվում էր:* Միայն համատեքստից կարելի էր որոշել բայի սեռային իմաստը: Մնացյալ խոնարհումների բայերը գրաբարում կոչվում էին ընդհանուր կամ հասարակ բայեր և նույն ընդհանուր վերջավորություններով արտահայտում էին տարբեր սեռերի իմաստներ՝ **խնու-** փակում է և փակվում է, **լնու-** լցնում է և լցվում է, **դատի-** դատում է և դատվում է, **աղայ-** աղում է և աղացվում է: **Ա** լծորդության բայերը միայն 1-ին ապառնիում կարող էին տարբերվել ըստ սեռերի. կրավորականի դեպքում *այցեն, այցես, այցէ, այցենք, այցէք, այցեն* վերջավորությունների **ե** լծորդը վերածում էին **ի-ի՝ այցիմ, այցիս, այցի, այցիմք, այցիք, այցին:** Օրինակ՝ *բանայցեն-բանայցիմ/բրջեն-բրջվեն, բանայցէ-բանայցի /բացի-բացվի* և այլն:

Կատարյալի հիմքից կազմվող ժամանակներում՝ սահմանական անցյալ կատարյալ, ստորադասական երկրորդ ապառնի, բուն հրամա-

յական, ներգործական և կրավորական սեռերի իմաստն արտահայտելու համար հին հայերենում ստեղծվել էր վերջավորությունների հատուկ հակադրություն՝ ներգործակերպ և կրավորակերպ: Սակայն արդեն 5-րդ դարում այս հակադրությունը կորցրել էր իր կերպասեռային իմաստը, որովհետև *ի* լծորդության բոլոր բայերը, անկախ սեռից, խոնարհվում էին միայն կրավորաձև. դրանք կրավորակերպ խոնարհման վերջավորություններով արտահայտում էին երկու սեռերի իմաստներ՝ *դասրեցաւ - դասրեց և դասրկեց, խօսեացի - կիտսի և կիտսվի*: Միայն ներգործակերպ խոնարհում ունեցող բայերը կարող էին ըստ սեռային անհրաժեշտության փոխել իրենց խոնարհման վերջավորությունները՝ *սիրեաց - սիրեց, սիրեցաւ-սիրվեց, եփեց-փակեց, խցաւ-փակվեց, եբաց-բացեց, բացաւ-բացվեց* և այլն: Այսպիսով՝ կրավորականի կերպասեռային դրսևորումները գրաբարում անմիօրինակ էին և բազմաձև:

Գրաբարի կրավորականության դրսևորման համակարգի առաջին ճեղքվածքը համարվում է հետդասական շրջանում *ե* լծորդության բայերի կրավորական անորոշի վերածումը *իւ*-ի: Ստեղծվեցին *խոնարհել* (խոնարհել)-*խոնարհիլ* (խոնարհվել), *հնազանդել* (հնազանդել)-*հնազանդիլ* (հնազանդվել) գույգերը: Առաջացավ նաև եզակի 3-րդ դեմքի առանձին կրավորականի վերջավորություն՝ *իւր*՝ *գլխանիւր- գլունվում էր, սկսանիւր-սկսվում էր, կոչիւր-կոչվում էր*: Սակայն այս ձևերն անբավարար էին կրավորականությունն արտահայտող ամբողջական և պարզ համակարգ ստեղծելու համար, ուստի հայերենում ստեղծվում է ընդհանրական կրավորական ածանց՝ *ու/ւվ*: Այս ածանցի ծագման երկու վարկած կա՝ 1. Պետերմանի, Հյուբմանի, Կարստի և 2. Այտընյանի: Առաջինների կարծիքով՝ *-ու/-ւվ*- ածանցը ծագում է *ու* լծորդից, կրավորական դարձնելու համար դրանց հիմքին ավելանում էր *ի* լծորդը՝ *բողուլ* > *բողուիլ, զենուլ* > *զենուիլ*: Այս *ուիլ* նորակազմության մեջ *ու*-ն սկսում է ըմբռնվել որպես նոր կրավորական: Սկզբում առաջանալով միայն *ու* լծորդության բայերի դեպքում՝ այն աստիճանաբար տարածվում է մնացած լծորդությունների վրա:

Ա. Այտընյանի համոզմամբ՝ *-ու/-ւվ*- կրավորականը ծագում է գրաբարյան *-ուած* բայանվանակերտ ածանցից, որը ցույց էր տալիս ինչ-որ

մեկի կողմից կատարված գործողության արդյունքում ստեղծված վիճակ կամ դրություն: **-Ուած-**ով կազմությունները կրավորականի իմաստով էին ընկալվում: **-Ուած-**ից նախ ձևավորվում է հարակատար դերբայը, ապա՝ կրավորական ածանցը: Միջին հայերենում կրավորական ածանցը **ու/վ-**ն է, որ, դրվելով անորոշում դերբայական վերջավորությունից առաջ, այնուհետև հանդես է գալիս մյուս դերբայներում և բայի խոնարհված ձևերում: **-Ու/-վ-** ածանցը միջին հայերենից փոխանցվեց մեր բարբառներին և երկու գրական հայերեններին¹⁸²:

Վ ածանցը դրվում է բայահիմքի և դերբայական վերջավորության միջև՝ *երգել- երգ+ վ+ ել, գլրնել-գլրն+ վ+ ել, խօսիլ- խօս+ վ+ իլ, ըսել- ըս+ վ+ իլ*: Միայն **ա** լծորդության բայերի դեպքում **վ-**ն ավելանում է անցյալի հիմքին՝ *աղալ- աղաց+ վ+ ել, կարդալ- կարդաց+ վ+ ել, իմանալ- իմաց+ վ+ ել* և այլն:

Աշխարհաբարում **ու/վ** մասնիկը կրավորական սեռի արտահայտության միակ միջոցն է: Բայական մոր ածանցի շնորհիվ հաղթահարվեց կրավորականության դրսևորման գրաբարյան բազմաձևությունը: Այս առումով աշխարհաբարը գերազանցում է գրաբարը, քանի որ պարզությունը լեզվի կարևորագույն առավելությունն է: Թեև պետք է նշել, որ **վ** ածանցը արդի հայերենում կարող է արտահայտել նաև չեզոք սեռի իմաստ: Մ. Ասատրյանը, անդրադառնալով կրավորական բայերի արտահայտած չեզոք իմաստին, նշում է, որ այս երևույթը պայմանավորված է ժամանակակից հայոց լեզվում պարզ ներգործական բայերի առանձին չեզոք ձևի բացակայության հանգամանքով: Անհրաժեշտություն և կարիք է զգացվում, դիցուք, *շարժել, բացել, քափել, սկսել* և մնան բայերի արտահայտած գործողությունը ներկայացնել ոչ միայն որպես ներգործական ու կրավորական սեռի, այլև չեզոք սեռի գործողություն: Կենդանի խոսքում մնան ձևերի անհրաժեշտությունն առկա է, ուստի **վ** ածանցով ձևերը սկսում են արտահայտել նաև չեզոք սեռի իմաստ, ինչպես օրինակ՝ «Քամին *շարժվում է մեղմիկ*», «Վարդը *բացվում է մայի-*

¹⁸² Հմմտ. **Ս. Անթույան**, Հայոց լեզվի պատմական քերականություն, հ.2, Եր., 1975, էջ 365-376:

սին», «Նրա աչքերից արցունքներ են թափվում»¹⁸³: Մ. Ասատրյանը ցույց է տալիս, որ գրաբարում ևս կար նման երևույթ. ներգործական սեռի բայերը, կրավորաձև խոնարհվելով, արտահայտում էին ոչ միայն կրավորական, այլև չեզոք իմաստներ, այսպես՝ «Ապա *լցան սփռեցան, ծառակեցան* ընդ ամենայն երկիրն Հայոց» (Փառստոս) կամ «Յորդա-գոյնս տարածեցաւ աղանդ նոցա» (Ագաթանգեղոս): Միջին հայերենում *-ու/-ւ/-ւ/-* ածանցի առաջացումը թույլ է տալիս հստակ տարանջատել անցողական բայերի ներգործական, կրավորական և չեզոք սեռերի ձևերը՝ *հփհմ*-ներգործական, *հփհմ*-չեզոք, *հփվիմ*-կրավորական, *բաժնհմ*-ներգործական, *բաժնիմ*-չեզոք, *բաժնվիմ*-կրավորական, *շարժհմ*-ներգործական, *շարժիմ*-չեզոք, *շարժվիմ*-կրավորական: Բայց երեք սեռերի այսպիսի ձևեր կարող էին ունենալ միայն ե խոնարհման անցողական բայերը: Ա. Այտընյանն իր քննական քերականության մեջ արևմտահայերենի համար ևս բերում է մի քանի ներգործական բայերի կրավորական և չեզոք տարբերակները՝ *ե>ի* լծորդության անցումով, ապա՝ ու/*վ* ածանցով և *ի* լծորդությամբ, օրինակ՝

<i>Ներգործական</i>	<i>Չեզոք</i>	<i>Կրավորական</i>
կտրել	կտրիլ	կտրուիլ
կոտրել	կոտրիլ	կոտրուիլ
այրել	այրիլ	այրուիլ
թափել	թափիլ	թափուիլ
ազատել	ազատիլ	ազատուիլ ¹⁸⁴

Որոշ կրավորական բայեր արտահայտում են այնպիսի գործողություն, որը կատարում է ենթական, բայց այդ գործողությունը միաժամանակ ուղղված է հենց ենթակայի վրա: Հայ քերականագիտության մեջ նման բայերը կոչվում են անդրադարձ բայեր: Անդրադարձության

¹⁸³ Տե՛ս Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու: Չափաբանություն, Եր., 1983, էջ 231-232:

¹⁸⁴ Հմմտ. Ա. Այտընյան, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Եր., 1987, էջ 88-90:

իմաստը կրավորական բայերի արտահայտած չեզոք իմաստի դրսևորումներից մեկն, բերենք անդրադարձ բայերի օրինակներ՝ *մաքրվել, հարդարվել, շպարվել, օծվել, սափրվել, քավել, փաթաթվել, հանվել, հագնվել, լվացվել, պաշտպանվել, պատրաստվել* և այլն:

ԱՆԿԱՆՈՆ ԲԱՅԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Տարարմատ անկանոն բայեր

Գրաբարյան անկանոն բայերը տարանջատվում են ըստ կատարյալի հիմքի կազմության սկզբունքի, ըստ այդմ՝ տարարմատ են կոչվում այն բայերը, որոնց ներկայի և կատարյալի հիմքերը լիովին տարբերվում են, այլ բայահիմքերից են կազմված: Դրանք բոլորը հնդեվրոպական ծագման վաղնջական բայեր են, որոնք անկանոնություններ ցուցաբերում են ոչ միայն հիմքակազմության ժամանակ, այլև խոնարհման կերպի և դիմային վերջավորությունների կցման ընթացքում:

1. **Ուտել-** ե լծորդության պարզ բայ է, կատարյալում ունի **կեր կամ կերի՝** / թույլ բաղադրիչով հիմքեր: Անցյալ կատարյալում հանդես է գալիս **կեր** հիմքով, իսկ **կերի** հիմքը երևան է գալիս երկրորդ ապառնու 2-րդ դեմքից սկսած՝ ներառյալ նրանից ծագած հորդորական հրամայականը՝ անցյալ կատարյալ՝ **կերայ, կերար, կերաւ, կերաք, կերայք/արուք, կերան, 2-րդ ապառնի՝ կերայց, կերիցես, կերիցէ, կերիցուք, կերիջիք, կերիցեն**, հորդորական հրամայական՝ **կերիջի՛ր, կերիջի՛ք**, բուն հրամայական՝ **կեր, կերայք, կերարո՛ւք**, անցյալ դերբայ՝ **կերեալ**:

Միջին հայերենում տարարմատ հիմքը պահպանվում է, խոնարհման կրավորակերպ վերջավորությունները ևս, վերանում է **ի** թույլ բաղադրիչը, որովհետև վերանում են 2-րդ ապառնին և հորդորականը: Բուն հրամայականի հոգնակին ստանում է ընդհանրական դարձած **-եք** վերջավորությունը՝ **կեր, կերե՛ք**: Այս հարացույցն էլ աննշան փոփոխություններով ժառանգում են երկու արդի գրական հայերենները՝ հոգնակի 1-ին դեմքը դառնում է **աք>անք**, իսկ 2-րդը՝ **այք >աք = կերանք, կերաք**:

2. Ըմպել- ե լծորդության պարզ բայ է, որ կատարյալում ունեն **արբ** հիմքը, որից ունեինք *արբել, արբենալ* բայերը, մնացած բոլոր ձևերում կանոնավոր բայ է՝ ներգործածն վերջավորություններով: *Անցյալ կատարյալ՝ արբի, արբեր, (ե)արբ, արբաք, արբէք/իք, արբին:*

2-րդ ապառնի՝ **արբից, արբցես, արբցէ, արբցուք, արբջիք, արբցեն, հորդորական հրամայական՝ արբջիր, արբջիք, բուն հրամայական՝ արբ, արբէք, անցյալ դերբայ՝ արբեալ:**

Միջին հայերենում, ապա աշխարհաբարում այս բայը կանոնավորվում է՝ **ըմպեցի, ըմպեցեր, ըմպեց...**, բայց գրեթե չի գործածվում, փոխարենը *արբ* արմատից երեք բայ էր կազմվել՝ *արբել, արբենալ, ի+արբել=յարբել/ հարբել*, բոլորը կանոնավոր են՝ կատարյալի՝ *արբեց, հարբեց* հիմքերով:

3. Երթալ - ա լծորդության պարզ այս բայը կատարյալում ունի **չոգ** հիմքը, մնացած բոլոր դեպքերում՝ **երթ/երթի**. խոնարհվում է կրավորաձև: Անցյալ կատարյալ՝ **չոգայ, չոգար, չոգաւ, չոգաք, չոգայք/արուք, չոգան, 2-րդ ապառնի՝ երթայց, երթիցես, երթիցէ, երթիցուք, երթիջիք, երթիցեն, հորդորական հրամայական՝ երթիջիր, երթիջիք, բուն հրամայական՝ երթ, երթայք/արուք, անցյալ դերբայ՝ երթեալ:**

Միջին հայերենում **չոգ** հիմքը վերանում է, **երթ**-ը երբեմն ստանում է **աց** բաղադրիչը՝ ներգործակերպ վերջավորություններով՝ **երթացի, երթացիր, երթաց, բայց՝** հազվադեպ է հանդիպում: Կարող ենք արձանագրել, որ այս բայը դարձել էր պակասավոր, կատարյալի հիմք չուներ, փոխարինվում էր **գալ** բայի **գաց** հիմքի ձևերով, որոնք ժառանգել է արևմտահայերենը՝ **գացի, գացիր, գաց, գացինք, գացիք, գացին:** Արևելահայերենում փոխարինվել է **գնալ** բայի կանոնավոր ձևերով՝ **գնացի, գնացիր, գնաց, գնացինք, գնացիք, գնացին, հրամայականը՝ գնա՛, գնացե՛ք:**

4. Գալ - ա լծորդության պարզ բայ է, որ կատարյալում **եկ, եկեց/ս** հիմքերով է խոնարհվում: Անցյալ կատարյալ՝ **եկի, եկիր, եկն, եկաք, եկէք/իք, եկին, 2-րդ ապառնի՝ եկից, եկեսցես, եկեսցէ, եկեսցուք, եկեսջիք, եկեսցեն, հորդորական հրամայական՝ եկեսջիր, եկեսջիք, բուն հրամայական՝ եկ, եկա՛յք/արուք, անցյալ դերբայ՝ եկեալ:**

Միջին հայերենում պահպանվում է **եկ** հիմքը, բայց խոնարհման կերպը դառնում է կրավորաձև, թեև եզակի 3-րդ դեմքում ձեռք է բերում շատ անսովոր, ըստ Կարաոի, հնդեվրոպական մայր լեզվից եկող **եր** նախահավելված աճականը՝ **երեկ** (նույն նախահավելվածը ստանում են միավանկ այլ անկանոն բայեր **սա՝ տալ-ը և դնել-ը՝ երեստ, երեղ**): Առավել կանոնավոր էին **եկայ, եկար, եկաւ, եկաք/անք, եկայք/աք, եկան** ձևերը, հրամայականում՝ **եկ, եկէ՛ք**: Քանի որ գրաբարում **յառնել և գալ** բայերը հարադիր էին գործածվում, **յառնել**-ի բուն հրամայականը՝ **արի, արիք**, նույնանում է **գալ** բայի հրամայականի հետ՝ ստանալով ընդհանուր իմաստ՝ **արի եկ>արեկ>արիք**, ապա՝ **արի=եկ**: Աշխարհաբարում ամրակայվում է միջինհայերենյան կանոնավոր խոնարհումը:

5. Ունել/իմ/- ի լծորդության այս բայը կատարյալում **կալ** հիմքն ունի, որից ունենք նաև **կալնուլ** բայը, և խոնարհվում է կրավորաձև վերջավորություններով: Անցյալ կատարյալ՝ **կալայ, կալար, կալաւ, կալաք, կալայք/արուք, կալան**, 2-րդ ապառնի՝ **կալայց, կալցիս, կալցի, կալցուք, կալջիք, կալցին**, հորդորական հրամայական՝ **կալջի՛ր, կալջի՛ք**, բուն հրամայական՝ **կա՛/լ, կալա՛յք, կալարո՛ւք**, անցյալ դերբայ՝ **կալեալ**:

Միջին հայերենում այս բայը դադարում է գործածվել *քռնել* իմաստով, իսկ **կալ** արմատից ձևավորվում է **կալնուլ/կալել** բայը, որն արևելյան բարբառներում պահպանված է **վեր կալել** հարադրության մեջ: Աշխարհաբարում ինքնուրույն կիրառություն չունի, ունենք **կալանավորել** կանոնավոր բայը:

6. Լինել/իմ/- ի լծորդության *և* սոսկածանցով հնագույն բայ է, կատարյալում ունի **եղ, եղի, լի** հիմքերը, խոնարհման վերջավորությունները խիստ անկանոն են՝ կրավորակերպ/ներգործակերպ: Անցյալ կատարյալ՝ **եղէ, եղեր, եղեւ, եղեաք/աք, եղէք, եղեն**, 2-րդ ապառնի՝ **եղեց, եղիցիս/իցես, եղիցի, եղիցուք, եղիջիք, եղիցին**, ունի 2-րդ ձևը՝ **լիցիմ, լիցիս, լիցի, լիցուք, լիջիք, լիցին**, հորդորական հրամայական՝ **լիջի՛ր, լիջի՛ք**, բուն հրամայական՝ **լե՛ր, լերո՛ւք**, անցյալ դերբայ՝ **լեալ**:

Միջին հայերենում պահպանվում է միայն **եղ** հիմքը՝ արդեն կրավորաձև վերջավորություններով, որովհետև **լինել-ը** ի լծորդության *ն* սոսկածանցով բայ էր. այդպիսիք միջին հայերենում խոնարհվում էին կրա-

վորածն՝ **եղայ, եղար, եղաւ, եղաք/անք, եղայք/եղաք, եղան**, հրամայականը՝ **եղի՛ր, եղէ՛ք**, վաղակատարը և հարակատարը՝ **եղել/եր, եղած**: Այս ձևերն էլ հիմնականում ժառանգեցին մեր երկու նոր գրական հայերենները: Նշենք, որ արևմտահայերենում *լիմել* բայածնը հնչյունափոխվել է՝ դառնալով *լլլալ*, բայց կատարյալի հիմքի գրաբարյան *եղ* ձևը պահպանվել է:

Նույնարմատ անկանոն բայեր

Այս բայերը գրաբարում կատարյալի հիմքը կազմելիս հնչյունափոխությունների էին ենթարկվում, բացի այդ՝ կարող էին ունենալ կատարյալի հիմքի մի քանի տարբերակ՝ անցյալ կատարյալի և 2-րդ ապառնու կամ հրամայականի համար առանձին, տարբեր սկզբունքներով կազմված: Օրինակ՝ **յառնել** բայն ունի **ի** թույլ բաղադրիչով **յարի** հիմքը անցյալ կատարյալում, 2-րդ ապառնիում և հորդորական հրամայականում, իսկ բուն հրամայականում նրա հիմքն է՝ **արի-ն**: **Տալ** բայը կատարյալում ունի **ետ** հիմքը, իսկ 2-րդ ապառնիում **տաց**, բուն հրամայականում՝ **տու**, իսկ **դնել** բայը **եղ** և **դի** 2 հիմքերով է հանդես գալիս:

1. Առնել - *ն* սոսկածանցով *ե* լծորդության բայ է, որի կատարյալի կանոնավոր հիմքը պետք է լիներ արմատական՝ **առ/ր**, բայց հնդեվրոպական մայր լեզվից ժառանգած օրինաչափությամբ այս բայն իր կատարյալի հիմքը կազմում էր արմատի կրկնությամբ՝ **ար+ար**, խոնարհվում էր ներգործածն, 2-րդ ապառնիում և հորդորականում *p > u* հնչյունափոխություն է կատարվում, կատարյալի հիմքակազմիչ **ց-ի** համաբանությամբ՝ *արար+ցես= արասցես* կամ *արար+ջիր= արասջիր*, իսկ բուն հրամայականում արմատական այս բաղաձայնն ընկնում է, այսինքն՝ արմատի վերջի **ր-ն** իրեն պահում է ինչպես կատարյալի **ց** ձևությամբ: Անցյալ կատարյալ՝ **արարի, արարեր, արար, արարաք, արարեք/իր, արարին**, 2-րդ ապառնի՝ **արարից, արասցես, արասցե, արասցուք, արասջիր, արասցեն**, հորդորական հրամայական՝ **արասջի՛ր, արասջի՛ք**, բուն հրամայական՝ **արա՛, արարէ՛ք**, անցյալ դերբայը՝ **արարեալ**:

Միջին հայերենում խիստ ձևափոխվում է անորոշ դերբայը՝ **առնել- >այնել>ընել>անել**: Կատարյալի հիմքը դառնում է **ար** նախնական բայարմատը, որին կցվում են ներգործածն վերջավորությունները, երբեմն նաև՝ կրավորաձև՝ **առ**: Անցյալ կատարյալ՝ **արի, արիիր, արաւ/արեց, արինք, արիք, արին, կամ՝ ըրի, ըրիր, ըրեց/ըրաւ, ըրինք, ըրիք, ըրին**, հրամայականը՝ **արա՛, արէ՛ք, ըրա՛, ըրէ՛ք**, վաղակատար, հարակատար դերբայները՝ **արել, արած, ըրել/եր, ըրած**:

Արդի հայերենում կանոնավորման միտումը խորացել է. **ար** արմատին ավելացել է ընդհանրական **եց-ը՝ արեցի, արեցիր, արեց, արեցինք, արեցիրք, արեցին, վաղակատար և հարակատար դերբայները՝ արել, արած**:

2. Տալ- ա լծորդության պարզ բայ է, որը կատարյալում ունի **ետ, տու, տաց** հիմքերը: Հնագույն բայ է, ուստի վերջավորություններն անգամ բավական հնչյունափոխված են: Անցյալ կատարյալ՝ **ետու, ետուր, ետ, տուաք, ետուք, ետուն, 2-րդ ապառնի՝ տաց, տացես, տացէ, տացուք, տաջիք, տացեն, հորդորական հրամայական՝ տաջի՛ր, տաջի՛ք**, բուն հրամայական՝ **տո՛ւր, տո՛ւք**, անցյալ դերբայ՝ **տուեալ**:

Միջին հայերենում պահպանվում է **ու** բաղադրիչով **տու** հիմքը՝ և՛ ներգործածն, և՛ կրավորաձև վերջավորություններով՝ **տուի, տուիր, տուաւ/ երետ, տուաք/անք, տուայք/աք, տուին/տուան, հրամայականը՝ տո՛ւր, տուէ՛ք, դերբայները՝ տուել/եր, տուած**: Արևելահայ աշխարհաբարում **տու/տվ** հիմքին ավելանում է **եց՝ տվեցի, տվեցիր, տվեց, տվեցինք, տվեցիրք, տվեցին և այլն**: Մնացյալը միջին հայերենից է գալիս **ու/վ** անցումով՝ **տվել, տված**: Հրամայականն անկանոն է՝ եզակիում գրաբարապետաբար՝ **տո՛ւր, տվէ՛ք**:

3. Գնել- նույն համաբանությամբ է զարգանում **ե** լծորդության **ն** ստակածանցով **դնել** բայը, որը գրաբարում ուներ կատարյալի **եդ, դի, դից** հիմքերը: Անցյալ կատարյալ՝ **եդի, եդիր, եդ, եդաք, եդիք, եդին, 2-րդ ապառնի՝ եդից, դիցես, դիցէ, դիցուք, դիջիք, դիցեն, հորդորական հրամայական՝ դիջի՛ր, դիջի՛ք**, բուն հրամայական՝ **դիր, դիք**, անցյալ դերբայ՝ **եդեալ**:

Միջին հայերենում ունենք կանոնավորված հետևյալ ձևերը՝ անցյալ կատարյալ՝ **դրի, դրիր, դրաւ (երեղ), դրեց, դրինք, դրիք, դրին, հրամայական՝ դի՛ր, դրէ՛ք**, վաղակատար, հարակատար՝ **դրել, դրած: Արևելահայերենում դր-ին ավելանում է եց՝ դրեցի, դրեցիր, դրեց, դրեցինք, դրեցիք, դրեցին:** Վաղակատար և հարակատար դերբայները կազմվում են **դր** հիմքից՝ **դրել, դրած:** Հրամայականը եզակիում պահպանել է գրաբարյան ձևը, հոգնակին՝ միջինհայերենյան՝ **դի՛ր, դրէ՛ք:**

4. Ճանաչել- ե լծորդության **-աչ-** ստկածանցով բայ է, որը գրաբարում ուներ **ի** թույլ բաղադրիչով կատարյալի հիմք՝ բառասկզբի **ճ>ծ** անցումով՝ **ծանի:** Խոնարհվում էր կրավորաձև և խառն, ինչպես **ի** թույլ բաղադրիչով բայերը: Անցյալ կատարյալ՝ **ծանեայ, ծանեար, ծանեաւ, ծանեաք, ծանեայք/երուք, ծանեան, 2-րդ ապառնի՝ ծանեայց, ծանիցես, ծանիցէ, ծանիցուք, ծանիջիք, ծանիցեն, հորդորական հրամայական՝ ծանիջի՛ր, ծանիջի՛ք**, բուն հրամայական՝ **ծանի՛ր, ծանեա՛յք, ծաներո՛ւք**, անցյալ դերբայ՝ **ծանուցեալ:**

Միջին հայերենում լիովին կանոնավորվում է. **-աչ-**ը այլևս ածանց չէ: Անորոշը հնչյունափոխվում է. միջնավանկի **ա-**ն սղվում է՝ **ճանչել-ճանչեցի, ճանչեցիր, ճանչեց, ճանչեցինք, ճանչեցիք, ճանչեցին, հրամայական՝ ճանչի՛ր, ճանչէ՛ք**, վաղակատար, հարակատար՝ **ճանչել/եր, ճանչած:** Արևելահայերենում վերականգնվում է գրաբարյան անորոշը՝ **ճանաչել**, խոնարհվում է **ե** լծորդության պարզ բայերի պես: Իսկ **ծան** հիմքից հին պատճառականով կազմվում է նոր բայ՝ **ծանուցել**, որը կանոնավոր է:

5. Մեղանչել- ե լծորդության **անչ** ստկածանցով բայ է: Գրաբարում այն ուներ կատարյալի երկու հիմք՝ **մեղ** և **մեղի:** Անցյալ կատարյալ՝ **մեղայ, մեղար, մեղաւ, մեղաք, մեղայք/արուք, մեղան, 2-րդ ապառնի՝ մեղայց, մեղիցես, մեղիցէ, մեղիցուք, մեղիջիք, մեղիցեն, հորդորական հրամայական՝ մեղիջի՛ր, մեղիջի՛ք**, բուն հրամայական՝ **մեղի՛ր, մեղա՛յք, մեղարո՛ւք:**

Միջին հայերենում և աշխարհաբարում **-անչ-** կերպածանցը ձուլվում է բայաբնատին, որին միջին հայերենի ուշ շրջանում կատարյալի նոր հիմքի կազմության համար գումարվում է **եց-**ը՝ կազմելով կանոնա-

վոր խոնարհում՝ **մեղանչեցի, մեղանչեցիր, մեղանչեց, մեղանչեցինք, մեղանչեցիք, մեղանչեցին**, հրամայականը՝ **մեղանչի՛ր, մեղանչե՛ք**: Միայն կիլիկյան շրջանում են հանդիպում գրաբարյան **մեղայ, մեղար, մեղաւ, մեղաք, մեղայք/արուք, մեղան** ձևերը՝ որպես գրաբարաբանություն: Աշխարհաբարում հանդիպում է *մեղա տեր* դարձվածը:

6. **Յանցանել** - է լծորդության *ան* սոսկածանցով բայ է, բայց կատարյալում ունի ի թույլ բաղադրիչ՝ **յանցի**+ կրավորաձև և խառն վերջավորություններ: Անցյալ կատարյալ՝ **յանցեայ, յանցեար, յանցեաւ, յանցեաք, յանցեայք, յանցեան**, 2-րդ ապառնի՝ **յանցեայց, յանցիցես, յանցիցէ, յանցիցուք, յանցիջիք, յանցիցեն**, հորդորական հրամայական՝ **յանցիջի՛ր, յանցիջի՛ք**, բուն հրամայական՝ **յանցի՛ր, յանցեայք, յանցեարո՛ւք**: Այս բայը միջին հայերենում այլևս գործածական չէ, աշխարհաբարում՝ նույնպես:

7. **Լսել**- *ե* լծորդության պարզ բայ է, կատարյալում ունի **լու, լուի** հիմքերը՝ կրավորաձև վերջավորություններով: Անցյալ կատարյալ՝ **լուայ, լուար, լուաւ, լուաք, լուայք/արուք, լուան**, 2-րդ ապառնի՝ **լուայց, լուիցես, լուիցէ, լուիցուք, լուիջիք, լուիցեն**, հորդորական հրամայական՝ **լուիջի՛ր, լուիջի՛ք**, բուն հրամայական՝ **լո՛ւր, լուա՛յք, լուարո՛ւք**, անցյալ դերբայ՝ **լունալ**:

Միջին հայերենում լիովին կանոնավորվում է՝ **լսեց**+ներգործաձև վերջավորություններ՝ **-ի, -իր, -եց, -ինք, -իք, -ին** և այլն: Հրամայականում՝ **լսէ//լսի՛ր, լսեցէ՛ք**: Աշխարհաբարը ժառանգում է միջինհայերենյան կանոնավորումը:

8. **Տանել**- *ի* լծորդության *ն* սոսկածանցով բայ է, կատարյալում ունի *ն* > *ր* հնչյունափոխությամբ **տար** հիմքը, խոնարհվում է կրավորաձև, այս **ր**-ով գրաբարում անկանոն համարվող հիմքից էլ աշխարհաբարում կառաջանա **ր**-ական հատուկ հիմք պատճառական բայերի համար **ն** սոսկածանց > **ր** փոփոխությամբ՝ **մեծացն-մեծացր, ծիծաղեցն-ծիծաղեցր**: Անցյալ կատարյալ՝ **տարայ, տարար, տարաւ, տարաք, տարայք, տարան**, 2-րդ ապառնի՝ **տարայց, տարցիս/ցես, տարցէ, տարցուք, տարջիք, տարցին**, հորդորական հրամայական՝ **տարջի՛ր, տարջի՛ք**, բուն հրամայական՝ **տա՛ր, տարա՛յք/արո՛ւք**, անցյալ դերբայ՝ **տարեալ**:

Միջին հայերենում գրաբարյան խոնարհումները հիմնականում պահպանվում են, միայն հոգնակի հրամայականը կազմվում է **-էք-ով՝ տա՛ր, տարէ՛ք**, վաղակատար, հարակատար դերբայները՝ **տարել/եր, տարած**: Աշխարհաբարում նույնությամբ պահպանել է **տար** հիմքը և անցյալ կատարյալի կրավորաձև խոնարհումը՝ **տարա, տարար, տարավ, տարանք, տարաք, տարան**: Հրամայական եզակին գրաբարյան է, հոգնակին՝ **-եք** մասնիկով՝ **տա՛ր, տարե՛ք**:

9. Հարկանել - ե լծորդության *ան* սոսկածանցով այս բայի միակ անկանոնությունը արմատական հնչյուն *կ*-ի անկումն է՝ **հար** + ներգործածն վերջավորություններ: Անցյալ կատարյալ՝ **հարի, հարեր, եհար, հարաք, հարիք/էք, հարին**, 2-րդ ապառնի՝ **հարից, հարցես, հարցէ, հարցուք, հարջիք, հարցեն**, հորդորական հրամայական՝ **հարջի՛ր, հարջի՛ք**, բուն հրամայական՝ **հա՛ր, հարէ՛ք**, անցյալ դերբայ՝ **հարեալ**:

Միջին հայերենում այս բայը աստիճանաբար դուրս է մղվում կիրառությունից: Փոխարենը կատարյալի հիմքից կազմվում է նոր բայ՝ **հարել**, որը կանոնավոր է:

10. Յառնել- ե լծորդության *ն* սոսկածանցով բայ է, կատարյալում ունի **յար, յարի** հիմքերը և կրավորաձև, խառն վերջավորություններ: Անկանոն է նաև բուն հրամայականի կազմությունը, որտեղ ընկնում է հիմքի *յ*-ն: Անցյալ կատարյալ՝ **յարեայ, յարեար, յարեալ, յարեաք, յարեայք/երուք, յարեան**, 2-րդ ապառնի՝ **յարեայց, յարիցես, յարիցէ, յարիցուք, յարիջիք, յարիցեն**, հորդորական հրամայական՝ **յարիջի՛ր, յարիջի՛ք**, բուն հրամայական՝ **արի՛, արի՛ք**, անցյալ դերբայ՝ **յարուցեալ**: Միջին հայերենում այս բայը վերանում է՝ վերածվելով գրաբարաբանության: Պահպանվում է միայն հրամայական եզակին *գալ* բայի հարադրությամբ՝ *արի եկ>արեկ*: Արևելահայ աշխարհաբարում *յառնել*-ը է խոնարհման պարզ բայ է. *ն* սոսկածանցը ձուլվել է արմատին՝ **հառնել- հառնեցի, հառնեցիր, հառնեց, հառնեցինք, հառնեցիք, հառնեցին**, վաղակատար դերբայը՝ **հառնել**: Այս բայը սակավ գործածական է դարձել, բառիմաստը նեղացել է, ձեռք է բերել բանաստեղծական ոճական գուճավորում: Միտում ունի դառնալու հնարանություն:

11. Երդնուլ- ու լծորդության *ձ* ստեղծանցով բայ է, որ կատարյալում **երդու/ երդուի** հիմքերն ունի, խոնարհվում է կրավորաձև և խառն վերջավորություններով: Անցյալ կատարյալ՝ **երդուայ, երդուար, երդուաւ, երդուաք, երդուայք, երդուան,** 2-րդ ապառնի՝ **երդուայց, երդուիցես, երդուիցէ, երդուիցուք, երդուիջիք, երդուիցեն,** հորդորական հրամայական՝ **երդուիջի՛ր, երդուիջի՛ք,** բուն հրամայական՝ **երդուի՛ր, երդուա՛յք/երդուարո՛ւք,** անցյալ դերբայ՝ **երդուեալ:**

Միջին հայերենում պահպանում է գրաբարյան անկանոնությունը՝ **երդու** հիմքը և կրավորաձև խոնարհումը: Հրամայական եզակին ևս պահպանվում է՝ **երդուի՛ր,** քեն ունի նաև **երդուէ՛** ձևը, հոգնակին *այք/արուք*-ի փոխարեն *-էք* է ստանում՝ **երդուէ՛ք:** Արդի արևելահայերենում դարձել է **երդվել,** որը գրաբարյան կատարյալի **երդու** հիմքից է կազմվել, կատարյալի նոր հիմքը կանոնավոր է՝ **երդվեց,** խոնարհումը ևս՝ *-ի, -իր, -եց, -ինք, -իք, -ին* վերջավորություններով՝ **երդվեցի, երդվեցիր, երդվեց, երդվեցինք, երդվեցիք, երդվեցին:** Արևմտահայերենում պահպանել է գրաբարյան **երդնուլ** ձևը, կատարյալի հիմքը **երդու-**ն է, խոնարհվում է նույն կրավորակերպ վերջավորություններով՝ *-այ, -ար, -աւ, -անք, -աք, -ան,* հրամայականը՝ *-իր, -էք:*

ՊԱԿԱՍԱՎՈՐ ԲԱՅԵՐ

Գրաբարում պակասավոր դարձած և վաղնջահայերենից եկող հնագույն բայերը հետևյալն են՝ **եմ, կամ, պարտիմ, գոլ, գոգ, չիք:** Այս բայերի մեծ մասն այնքան է ձևափոխված, որ չունեն անգամ անորոշ դերբայ՝ բացի **գոլ**-ից, որը **ո** լծորդության միակ պահպանված բայն է: *Եմ*-ի անորոշ դերբայը *եւ-*ն է, որը կորցրել է ինքնուրույն կիրառությունը՝ դառնալով անորոշ դերբայի վերջավորություն գրաբարյան **ե** լծորդության համար: **Եմ** բայի ներկայի, անկատարի, առաջին ապառնու ձևերը, բացի ինքնուրույն կիրառությունից, նաև *ե* լծորդության բայերի խոնարհման վերջավորություններն են՝ ներկա - *եմ, ես, է, եմք, էք, են,* անցյալ - *էի, էիր, էր, էաք, էիք, էին,* ապառնի - *իցեմ, իցես, իցէ, իցենք, իցէք, իցեն,* հրամայականը՝ *եր, էք/երուք:* Հրամայական եղանակի բա-

յաճևերը գործածվում են միայն որոշակի դարձվածներում, օրինակ՝ *ողջ ե՛ր, ողջ է՛ք կամ երո՛ւք*:

Գու-ը (=լինել, գոյություն ունենալ) ունի ամբողջական սահմանա-
կան ներկա, իսկ անցյալ անկատարը և ստորադասական 1-ին ապառ-
նին վկայված են միայն եզակի և հոգնակի 3-րդ դեմքով՝ ներկա - **գոմ,**
գոս, գոյ, գոմք, գոյք, գոն, անցյալ անկատար - **գոյր, գոյին,** ապառնի -
գուցէ, գուցեն:

Կամ - անորոշ դերբայը պետք է լիներ **կալ:** Այս բայն ունի վկայվա-
ծության մույն աստիճանը, ինչ *գոլ-*ը. ներկա -**կամ, կաս, կայ, կամք,**
կայք, կան, անցյալ անկատար - **կայր, կային,** ապառնի - **կայցէ, կայ-**
ցեն:

Պարտիմ/պարտել (=պետք լինել, պարտավոր լինել, պարտք ունե-
նալ): Ունի մույն երեք ժամանակների ամբողջական հարացույցներ՝
ներկա - *պարտիմ, պարտիս, պարտի, պարտիմք, պարտիք, պարտին,*
անցյալ - *պարտէի, պարտէիր, պարտէր, պարտէաք, պարտէիք, պար-*
տէին, ապառնի - *պարտիցիմ, պարտիցիս, պարտիցի, պարտիցիմք,*
պարտիցիք, պարտիցին:

Գոգ (=ասա): **Գոգ/*գոգել-**ը միակն է, որ ունի կատարյալի հիմքից
կազմվող 2-րդ ապառնու ժամանակաձևերը, բուն և հորդորական հրա-
մայականները: Ապառնու 1-ին դեմքը վկայված չէ՝ -, **գոգցես, գոգցէ,**
գոգցուք, գոգջիք, գոգցեն, բուն հրամայական՝ **գո՛գ, գոգէ՛ք,** հորդորա-
կան հրամայական՝ **գոգջի՛ր, գոգջի՛ք:** Այս բայը, թեև միջին հայերենից
սկսած կիրառությունից դուրս է գալիս, սակայն նրա երկրորդ ապառնու
եզակի թվի երկրորդ դեմքի բայաձևը պահպանվում է՝ արդեն իբրև թեա-
կան իմաստ արտահայտող վերաբերական, ինչպես նրա հոմանիշ *ասել*
բայի համապատասխան ձևը՝ **ասես, գոգցես** = կարծես թե, իբրև թե:

Չիք (=չկա): **Չիք-**ը միադիմի է, միմիայն այս ձևով վկայված: Ծագել
է ***իքել** հնագույն կառույցից: Բարբառներում մնան բայ պահպանվել է՝
իք- «գոյ, բան» բայարմատից կազմված:

Միջին հայերենում պակասավոր բայերը կրում են հետևյալ փոփո-
խությունները: *Գոլ, գոգ, չիք* բայերը լիովին դուրս են մղվում կիրառու-
թյունից: Պահպանվում են **եմ, կամ, պարտիմ** բայերը: Գրաբարյան

ստորադասական եղանակը վերացել էր, ուստի ջնջվում են նրա բոլոր ձևերը, և **եմ, կամ, պարտիմ** բայերի պակասավոր լինելն առավել ընդգծվում է. նրանք պահպանում են միայն ներկայի և անկատար անցյալի ձևերը: Բարբառներում **եմ/կամ** ձևերը յուրօրինակ հնչյունափոխության են ենթարկվում՝ *եմ/ամ/իմ, ես/աս/իս, է/այ/ի* և այլն:

Արևելահայ գրական աշխարհաբարում պահպանվում են *եմ, կամ* բայերի ներկան և անկատար անցյալը, իսկ արևմտահայերենում *եմ, կամ, պարտիմ* բայերի ներկան և անկատար անցյալը: Բացի այդ՝ ավելանում են նոր պակասավորներ. արևելահայերենում՝ *ցանկալ, հուսալ, լվալ, գիրեմ, արժեմ, ունեմ*: Այս բայերն ամենից առաջ չունեն աշխարհաբարյան սահմանական ներկայի և անկատարի *ում* անկատար դերբայով ձևերը: *Եմ, կամ, գիրեմ, արժեմ, ունեմ* բայերը ունեն միայն սահմանական եղանակի գրաբարատիպ ներկա և անկատար՝ *եմ/էի, կամ/-կայի, ունեմ/ունեի, արժեմ/ արժեի, գիրեմ/գիրեի*: *Ցանկալ* բայն ունի միայն ըղձական (*ցանկամ/ցանկայի*), ենթադրական (*կցանկամ/կցանկայի*), հարկադրական (*պիրի ցանկամ/պիրի ցանկայի*) եղանակներ: *Հուսալ* բայը, նշվածներից բացի, ունի նաև հրամայական (*հուսամ/հուսայի, կհուսամ/կհուսայի, պիրի հուսամ/պիրի հուսայի, հուսա՛, հուսացե՛ք*): *Լվալ*-ը ունի միայն անցյալ կատարյալի և հրամայականի ձևեր՝ *լվացի, լվացիր, լվաց, լվա՛, լվացե՛ք*:

Արևմտահայերենում պակասավոր են համարվում *եմ, կամ, ունիմ, գիրեմ, պարտիմ, կրնամ (կարենամ), երթալ, երևիլ, բողոլ, երդնուլ* բայերը: *Եմ, կամ, գիրեմ, ունիմ, պարտիմ* բայերն ունեն միայն գրաբարատիպ սահմանական ներկա և անցյալ անկատար՝ առանց *կը* եղանակիչի՝ *եմ-էի, կամ-կայի, ունիմ-ունեի, գիրեմ-գիրեի, պարտեմ-պարտեի*: *Կրնամ* բայի ներկան և անկատարը դարձյալ գրաբարատիպ է՝ *կրնամ-կրնայի*: Այս բայը չունի սահմանական ապառնի, անցյալ ապառնի և ըղձական եղանակի ձևերը: *Երթալ* բայը չունի վաղակատար, հարակատար և ենթակայական դերբայներ, ինչպես նաև անցյալ կատարյալի ու հրամայականի ձևեր: *Երդնուլ* բայը պահպանել է միայն սահմանական ներկան, ապառնին և ըղձական եղանակի ձևերը, այսինքն՝ գրաբարյան սահմանական ներկայի իմաստափոխված և եղանակիչների հետ գուգակցված ձևեր՝ *կ'երդնում, պիրի երդնում, երդնում* և այլն:

ՀՈԼՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ

Գրաբարում հոլովվում էին գոյականները, ածականները, թվականները, դերանունները և դերբայները: Ըստ անունների և դերանունների հոլովման յուրահատկությունների՝ տարբերակվում էին անվանական և դերանվանական հոլովումներ: Անվանական հոլովման ենթարկվում էին գոյականները, ածականները, թվականները, դերբայները և որոշ դերանուններ՝ ստացական, փոխադարձ, որոշյալ: Դերանվանական հոլովման ենթարկվում էին հիմնականում անձնական, ցուցական, անորոշ, հարցահարաբերական դերանունները: Հոլովումն արտահայտվում էր հոլովի, թվի, որոշյալության, որոշ դերանունների դեպքում նաև դեմքի քերականական կարգերով: Գրաբարը թեքական լեզու էր՝ հոլովիչների հարուստ համակարգով, քերականական համաձայնությամբ: Որոշյալ գոյականի հետ հոլովով, թվով, ցուցական դերանունների հետադաս կիրառության դեպքում նաև դեմքով համաձայնում էին որոշիչ ածականները, թվականները և դերանունները:

Գրաբարի հոգնակիակազմության սկզբունքը ենթադրում էր ամեն հոլովի համար իր հոգնակերտը, որոնք հետևյալներն էին՝ **ք-** ուղղական հոլով, **ս-** հայցական հոլով, **ց-** սեռական-տրական և բացառական հոլովներ, **ք-** գործիական հոլով: Հոգնակերտը դրվում էր բառի վերջում՝ հոլովիչից հետո, օրինակ՝ եզակի ուղղական՝ **տիտան-** հոգնակի ուղղական՝ **տիտանք**, եզակի հայցական՝ (զ)**տիտան-** հոգնակի հայցական (զ)**տիտանս**, եզակի սեռական-տրական՝ **տիտանայ-** հոգնակի սեռական-տրական՝ **տիտանաց**, եզակի բացառական՝ **ի տիտանայ-** հոգնակի բացառական՝ **ի տիտանաց**, եզակի գործիական՝ **տիտանաւ-** հոգնակի գործիական՝ **տիտանաւք**:

Միջին հայերենում գրաբարյան հոլովման համակարգը մեծ փոփոխությունների է ենթարկվում: Թեքականությունը և համադրականությունը խիստ սահմանափակվում են, դրա փոխարեն գերիշխող են դառնում կցական - վերլուծական կառույցները. միջին հայերենում հոլովվում էին միայն գոյական անունը և գոյական դերանունները: Հայերենի լեզվական կառուցվածքը վճռորոշ փոփոխությունների է ենթարկվում: Որակա-

կան այս անցումը վերջնականապես ավարտվում է աշխարհաբարում: Այս պատճառով էլ միջին հայերենի հոլովական համակարգը՝ իբրև անցումային, աչքի է ընկնում անմիօրինակությամբ, ձևությների բազմազանությամբ, զուգաձևությունների առատությամբ: Գրաբարյան հոլովիչների և հոգնակերտների հետ մեկտեղ, նրանց զուգահեռ, գործածվում էին միջինհայերենյան նորակազմ հոլովիչներն ու հոգնակերտները: Միջին հայերենի առաջին շրջանում, որ կոչվում է նաև կլիկյան նորմավորման ենթաշրջան՝ XII-XIV դարեր, գրաբարյան ձևերը դեռևս գերակշռող էին, սակայն Կլիկյան հայկական պետականության անկումից հետո՝ ուշ միջին կամ աշխարհաբարացման շրջանում՝ XV- XVI դարերում, նորակազմություններն արմատավորվում են, գրաբարաբանությունները դուրս են մղվում: Հոգնակի թվի թեք հոլովների կցական կառույցների տարածումը հանգեցնում է նրան, որ հոգնակի և եզակի հոլովումները սկսում են կատարվել հիմնականում մույն թեքությներով: Առաջանում են հոլովական ընդհանուր ձևությներ՝ **է-ն** բացառականի, **ով-ը** գործիականի համար: Այս երկու ձևությներն էլ գրաբարյան ծագում ունեն, բայց միջին հայերենում փոխվում է նրանց բնույթը: **Ով-ը** գրաբարում բաղադրյալ էր՝ **n** հոլովիչ + գործիականի **վ** հոլովակերտ, միջին հայերենում այն այլևս անտրոհելի է և գործիական հոլով կազմում է բոլոր բառերից՝ անկախ նրանց հոլովումից և թվից: Սրա շնորհիվ էլ վերանում են խառը հոլովումները, որոնց տարբերակիչ հատկանիշը պարզ հոլովումներից եզակի գործիականում նոր հոլովիչի երևան գալն էր: Այս հոլովից էր սկսվում անցումը երկրորդ հոլովիչին՝ *եկեղեցի- եկեղեցույ/եկեղեցեսա, իշխան- իշխանի/իշխանա:*

Այսպիսով՝ միջին հայերենում եզակի և հոգնակի հոլովումները սկսում են տարբերվել միայն թվանիշ ձևությի առկայությամբ կամ բացակայությամբ՝ *չորոյ-չորերոյ, չորե-չորերե, չորով-չորերով* և այլն: Միջին հայերենում խիստ սահմանափակվում են նաև ներդրական հոլովումները, վերջապահական հոլովումը դառնում է տիրապետող: Սկսում են ձևավորվել նաև նոր իմաստային հոլովումներ, ինչպես **ոջ-ը** և **ուան-ը**, առաջինը՝ որպես ազգակցություն ցույց տվող բառերի, իսկ երկրորդը՝ ժամանականիշ բառերի հոլովիչ: Միջին հայերենում անունների բաշ-

խումը հոլովման տարբեր տիպերի միջև վերջնական և միանշանակ չէր. «Բազմաթիվ անուններ կարող են միաժամանակ հոլովվել երկու, երեք և մույնիսկ ավելի հոլովումներով: Պետք է սակայն նշել, որ հիմնականում այդ փոխանցումները տեղի ունեն մի կողմից՝ ամենատարածված **ի** հոլովման, մյուս կողմից հոլովման որևէ այլ տիպի միջև, այնպես որ սակավ բացառություններով համարյա բոլոր հոլովումներից որոշ թվով բառեր կարող են անցնել **ի** հոլովման»¹⁸⁵: Բուն միջին հայերենը չուներ ներգոյական հոլով, սակայն ուշ շրջանում արևելյան բարբառների ազդեցության տարածքներում գրաբարյան **ում** տրականի հոլովակերտը սկսում է տարածվել իբրև ներգոյական հոլովի կազմիչ, որովհետև գրաբարում եզակի ներգոյականը կազմվում էր **ի + եզակի տրական** կադապարով, օրինակ՝ **ի կղզում/կղզում, յայգում/այգում**: Նույն տարածքներում ներգոյականի այս կադապարով ստեղծվում է **ում**-ով անկատար դերբայը: Այս **ում** հոլովակերտ-դերբայակերտը դառնում է աշխարհաբարի ճյուղավորման հիմնական պատճառներից մեկը. մեր լեզվի արևելահայ և արևմտահայ գրական տարբերակների սահմանազատիչ կարևորագույն հատկանիշներից մեկը **ում**-ով ներգոյականի առկայությունն է և սահմանական ներկայի կազմությունը **կ** եղանակիչով կամ **ում**-ով անկատար դերբայով:

Դերանվանական հոլովումը միջին հայերենում պահպանում է իր հիմնական հոլովական յուրահատկությունները՝ միասնական հոլովիչի բացակայություն, արմատի հնչյունափոխություններ, տարահիմքություն, բայց այստեղ ևս ակնհայտ է պարզեցման միտումը: Անձնական, ցուցական դերանունների բացառական և գործիական հոլովները սկսում են կազմվել միասնական հոլովակերտներով թե՛ եզակի, թե՛ հոգնակի թվերում՝ **մէ/նէ, մով/նով**:

¹⁸⁵ Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, Խ.Բ. Եր., 1975, էջ 31:

ՀՈԼՈՎԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Հոլովակազմության առանձնահատկությունները գրաբարում, միջին հայերենում և աշխարհաբարում սկզբունքորեն տարբերվում են, որովհետև գրաբարը հիմնականում թեքական լեզու էր, իսկ միջին հայերենը, այնուհետև աշխարհաբարը՝ կցական:

Հայերենի հոլովների ըմբռնման հարցում տարակարծությունները եղել են գրաբարի քերականության գիտական առաջին իսկ շարադրանքներից սկսած: «Հոլովների իմաստների և շարահյուսական գործառույթների տարբերակման, ձևերի կաղապարման սկզբունքները մշակվում էին ոչ այնքան բուն լեզվական նյութի, որքան նախապես հայտնի սխեմաների, մեծ մասամբ այլ լեզուների, մասնավորապես հունարենի, ավելի ուշ՝ լատիներենի քերականական համապատասխան օրինաչափությունները անքննադատ ընդօրինակելու և հայերենի վրա ձևելու հիմքի վրա: Ընդհուպ մինչև 19-րդ դարի առաջին քառորդը հրատարակված քերականություններում գրաբարի հոլովական հարացույցները ներկայացվում էին հինգից մինչև տասը հոլովական անփոփոխակներով, այսինքն՝ հոլովներով»¹⁸⁶:

Գրաբարն ունի վեց հոլով՝ ուղղական (անվանական, պարզ, ուղիղ), սեռական (ստացական, հայրենյաց), տրական (պատվիրական, թոթական, տվողական), հայցական (աղերսական, խնդրական, կրողական, հարցական), բացառական (սկզբնական, պատճառական, առողական), գործիական (առաքական, ցուցական): Գրաբարի որոշ քերականագետներ, նշված հոլովներից բացի, ընդունում են նաև ներգոյական, պատմական, պարառական և կոչական հոլովները, որոնք չունեն իրենց հատուկ հոլովակազմիչները: Գ. Ավետիքյանն առաջինն էր, որ մերժում է այս հոլովները՝ գրելով. «Պետք է մեկ մը անուրը փոխվի իր ծայրը կամ սկիզբը, մեկ մ'ալ փոխվելով առնու տարբեր եղանակ մը նշանակելու իրմով, իր

¹⁸⁶ Ա. Աբաջյան, Հայերենի հոլովական համակարգի ըմբռնումը և պատմական զարգացումը հայ քերականագիտության մեջ, Եր., 2006, էջ 4:

մէջը եւ ոչ թէ ուրիշ բառի նոր նշանակութիւն աւելցնէ վրան»¹⁸⁷: Հոլովի քերականական կարգի հիմքում, այսպիսով, որոշակիորեն դրվում է հոլովական փոփոխական ձևի և իմաստի անբաժանելի միասնությունը: Հոլովվող բառը «ինքն իրմով»՝ իր արտահայտվելու կերպով պետք է ձևավորվի որպես հոլովաձև և ոչ թե ուրիշ բառի/նախդրի նոր նշանակութիւն աւելցնէ վրան: Այսպես վարվելու դեպքում գոյանում է ոչ թե *նախդրիվ հոլով*, այլ նախդրի հոլովառություն, այսինքն՝ ժամանակակից գիտաբանով ասած՝ նախադասության անդամի հոլովակապային կառույց»¹⁸⁸:

Գ. Ավետիքյանը եզրակացնում է. «Քանի՞ հոլով կրնայ ունենալ մեկ անունը հարցնես նե, ետքի քերականութիւն գրողները տասը հանեցին: Բայց աղէկ փնտրելով՝ հատուկ հոլով մեր հայո լեզուին կըգտնենք աս վեցը. ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական: Ատոցմէ դուրս ետքինները դրին չորսն ալ. պատմական, պարառական, ներգոյական, կոչական.... Ատ չորսը զատ հոլով ըսելու չէ»¹⁸⁹:

Գ. Ջահուկյանը այս չորս հոլովների մասին իրավացիորեն նշում է. «Դրանց՝ հոլովներ համարելու դեպքում պիտի առանձին հոլովներ համարվեին նախդիրների հետ հոլովների մաս այլ գուգորդումները՝ *գբարի, ընդ քարի, ըստ օրէնս, առ մարդում, առ նովսու* և այլն»¹⁹⁰:

Ամփոփելով հավելենք, որ գրաբարի որոշ դասագրքերում ներկայացված է վեց հոլով՝ առանց ներգոյականի, մյուսներում՝ յոթ հոլով:

1. Գրաբարում հոլովիչը հանդես է գալիս բոլոր թեք հոլովներում՝ և՛ եզակի, և՛ հոգնակի, իսկ ներդրական թեքման բառերի դեպքում՝ մասն հոգնակի ուղղականում, օրինակ՝ կայսեքք, անգեղք, աւուքք, ուստի հոլովման քերականական կարգն ուներ համակարգային դրսևորում:

2. Հոլովիչները հիմնական ձայնավորներն են՝ **ա, ե, ու, օ, ի**:

¹⁸⁷ Գ. Ավետիքյան, Քերականութիւն հայկական նորոգ քննութեամբ, Վենետիկ, 1792, էջ 250:

¹⁸⁸ Ա. Աբաջյան, նշվ. աշխ., էջ 49:

¹⁸⁹ Գ. Ավետիքյան, նշվ. աշխ., էջ 250:

¹⁹⁰ Գ. Ջահուկյան, Գրաբարի քերականության պատմություն, Եր., 1974, էջ 353:

3. Հոլովման 4 տիպ կա՝ պարզ, խառն, ներդրական, վերջադրական: Պարզ հոլովումներն են՝ **ա, ե, ի, ո, ու**, խառն հոլովումները երկուսն են՝ **ի-ա, ո-ա**: Ներդրական բնույթ ունեն **ա, ե, ի** հոլովիչները, **ու**-ն միայն մեկ բառի դեպքում՝ **աւր – աւուր**:

4. Բացի հոլովիչներից՝ հոլովմանը մասնակցում են հոլովակերտները, ուղղականը և հայցականը չունեն հոլովակերտ, սեռականում՝ **յ, ջ, նջ, ն**, տրականում՝ **յ, ջ, նջ, ն** նաև **ում**, բացառականում՝ **է**, գործիականում արտաքին թեքման դեպքում՝ **ւ/վ**, ներդրական թեքման դեպքում՝ **բ**:

5. Ամեն հոլովում ունի իր հոգնակի հարացույցը. հոգնակերտը դրվում է հոլովիչից հետո և կատարում նաև հոլովակերտի գործառույթ, ուղղական՝ **ք**, հայցական՝ **ս**, սեռական-տրական՝ **ց**, բացառական՝ **ց**, գործիական՝ **ք**:

6. Կան անեզական բառեր, որոնք հոլովվում են միայն հոգնակի, որովհետև ուղղականում ունեն միայն **ք** հոգնակերտով սկզբնաձևեր՝ **վարք, կուռք, պահք, արեւելք, կարծիք, միտք**

7. Առկայացումն արտահայտվում է հետևյալ կերպ. որոշյալ առման դեպքում ուղղական, սեռական-տրական, բացառական, գործիական, ներգոյական հոլովների վրա դրվում է **և** հոդը՝ **սիրտն, սրտին, ի սրտէն, սրտին, զսրտիցն** և այլն, իսկ հայցականի վրա՝ **զ** նախդիրը՝ երբեմն նաև **ն** հոդի հետ մեկտեղ՝ **զահն, զծովսն**: Առկայացումն արտահայտվում է նաև **ս, դ** հոդերով՝ նախ ցուցականության իմաստով, ապա՝ ստացականության և դիմորոշ:

Եզակի ուղղական հոլովը բառի սկզբնաձևն է՝ գուրկ հոլովական վերջավորությունից, սեռական-տրականը անվանական հոլովման համակարգում նույնացել են՝ բացի **ո, ո-ա** խառը հոլովման բառերի որոշ մասից, որոնք պահպանել են վաղնջահայերենից եկող **ում**-ով ձևերը՝ **այգում, կղզում, հնում, նորում...**

Գրաբարում եզակի սեռական-տրականի հնարավոր վերջավորություններն են՝ **այ՝ Կադմեայ, ան՝ մատրան, եղ/եր՝ անգեղ, ոսկեր, ի՝ նետի, ու՝ քինու, ոյ՝ եկեղեցույ, ին՝ լերին**: Բացառականը կազմվում է **ի/յ** նախդիր + տրական + է կադասպարով՝ **ի վահանէ, ի սրտէ, յաստեղէ, ի քինուէ, ի մատրանէ**, բացի **ա, ո, ո-ա** վերջադրական հոլովումներից, որոնք

հնագույն հոլովումներ են և ինքնուրույն բացառականի ձևեր չունեն, բացառականի իմաստն արտահայտվում է **ի/յ նախդիր +եզակի տրական** կաղապարով՝ **ի թշնամույ, ի յուսոյ, ի Վռամայ**: Եզակի գործիականը կազմվում է՝ ա) **եզակի սեռական+ւ՝սրտի, քաղաքաւ, մատանեաւ, բ) սեռական +վ**, եթե **n** հոլովիչն է, օրինակ՝ **լուսով, հրով**:

Եզակի ներգոյականը կազմվում է **ի/յ նախդիր +եզակի տրական** կաղապարով՝ **ի ծովու, յետեղ, ի մատրան, ի սրտի**, բացի **ա, ո, ո-ա** վերջադրական հոլովումներից, որոնց պարագայում գործում է **ի/յ նախդիր +եզակի հայցական** կաղապարը՝ **յեկեղեցի, ի Վահէ, ի լոյս**: Պատմական հոլովն արտահայտում է **մասին** կապի իմաստը և եզակի ու հոգնակի բոլոր հոլովումների դեպքում կազմվում է **զ նախդիր +բացառական** կաղապարով՝ **զաստեղէ, զհրոյ, զտիտանայ, զվրիժէ, զսրտէ, զթշնամույ/ զաստեղաց, զոգուց, զտիտանաց, զթշնամեաց, զիշխանաց**: Պարանական հոլովը եզակի և հոգնակի բոլոր հոլովումների դեպքում կազմվում է **զ նախդիր + գործիական** կաղապարով՝ **զաստեղք, զհրով, զտիտանաւ, զվրիժու, զսրտիւ, զթշնամեաւ/ զաստեղաւք, զհրովք, զտիտանաւք, զվրիժուք, զսրտիւք, զթշնամեաւք**: Արտահայտում է **շուրջը/ շուրջբոլորը** կապի իմաստը:

Կոչական հոլովը արտահայտվում էր **ուղղական հոլով +ով ձայնարկությոն** կաղապարով, օրինակ՝ *ո՛վ այր*:

Ինչպես վերը նշվեց, պատմական, պարանական և կոչական հոլովներ ընդունել են գրաբարի որոշ քերականներ: Հետագայում դրանք մերժվել են Գ. Ավետիքյանի և մյուսների կողմից:

Հոգնակի թվի ուղղականը կազմվում է **եզակի ուղղական+ք** կաղապարով, եթե վերջադրական հոլովում է՝ *տիրանք, վրէժք, զարդք, լոյսք*, և բաղադրյալ ձևությներով՝ *-ունք, -անք, -ինք*, օրինակ՝ *շարժումնք, եզինք, անջինք, ականք, մայրունք, մասունք*: Գրաբարում հոգնակի ուղղականում կան մաս հոգնակերտ-հավաքական այլ մասնիկներ, որոնք դուրս են հարացույցից՝ *-եար, -մեար, -տի/ոտի, -անի/նի, -որեայ, -ստան*, օրինակ՝ *վանեար, բերդեար, բարձկնեար, մաւկնեար, աւագանի, մանկտի, ոսկրոտի, արտորեայ, այգեստան*: **Ե, ու** ներքին հոլովման բառերի ուղղականը կազմվում է **եզակի սեռական +ք** կաղապարով՝ *վագր-վա-*

գեր- վագերք, ար, աուր- աուրք: Հոգնակի հայցականը կազմվում է հոգնակի ուղղականի **ք>ս** փոխակերպմամբ՝ **աստեղս, տիտանս, լոյսս, մատրունս:** Հոգնակի սեռական-տրականը կազմվում է **եզակի սեռական-տրական+ց** կառույցով, օրինակ՝ **տիտանայ-տիտանաց, նետի-նետից, ցլու-ցլուց** և այլն: Հոգնակի բացառականը կազմվում է **ի/յ նախդիր + հոգնակի տրական** կաղապարով՝ **ի վահանաց, ի սրտից, յաստեղց, ի քինուց, ի մատրանց:** Հոգնակի գործիականը կազմվում է **եզակի գործիական +ք,** օրինակ՝ **սրտիւք, քաղաքաւք, մատանեաւք, լուսովք, հրովք:** Հոգնակի ներգոյականը բոլոր դեպքերում կազմվում է **ի/յ նախդիր +հոգնակի հայցական** կաղապարով՝ **յեկեղեցիս, ի ցուլս, ի կայսերս, ի ծովս:**

Աշխարհաբարում հոլովիչները ոչ միայն պարզ ձայնավորներ են, այլև ձայնավոր-ձայնորդ կապակցություններ, բոլորը գրաբարից ժառանգված՝ բացի **ո** ներքին հոլովումից, որն ուղղագրական բարեփոխման պատճառով է առաջացել:

Ներդրական հոլովման տիպը պահպանվել է, բայց միայն սեռական-տրական հոլովում, մնացած բոլոր հոլովներում հոլովումը գոտ վերջադրական է, որովհետև բառի վրա դրվում են համապատասխան հոլովակերտներ՝ *սեղանից, ոսկուց, անկողնով, լույսով, լսարանում, անյրառում* և այլն: Թեքման ներդրական սկզբունքը մասամբ պահպանվել է *ա* ներքին հոլովման որոշ բառերի գործիականում, թեև կան նաև դրանց արտաքին թեքման գուգաձևությունները՝ *բազմությամբ-բազմությունով, արյամբ-արյունով:*

Վերացել է խառն հոլովումը, գրաբարյան հոլովիչներից *ու-*ն վերածվել է *ի* թեքման, *ո, ո-ա* հոլովումները *ոյ* սեռականի ձևությի հնչյունավորության պատճառով դարձել են *ու՝ եկեղեցւոյ-եկեղեցու, անկողնոյ-անկողնու:*

Առաջացել են գրաբարում սեռականի վերջավորություններից ծագած մոր բաղադրյալ հոլովիչներ՝ **ան-** աշուն-աշնան, **վա-** օր-օրվա, **ոջ-** քույր-քրոջ, տեր-տիրոջ, **ց-** Վարդանանք-Վարդանանց, կանայք-կանանց, մարդիկ-մարդկանց:

Հոլովիչը դրվում է միայն սեռական-տրականում, իսկ մնացած հոլովների դեպքում ուղղականին գումարվում են ընդհանրական բացառականի և գործիականի վերջավորություններ, թեև *վա/ն, ան, ոչ* հոլովումների դեպքում հմարավոր են **սեռական+ից** կամ **ով** կառույցներ *ևս՝ օրից-օրվանից, մկից-մկանից, աշունից-աշնանից, ընկերով-ընկերոջով, տերով-տիրոջով*: Արևելահայերենում բացառականի համար ընդհանրացել է *ից* մասնիկը՝ գրաբարյան *ի* հոլովման հոգնակի տրականի ձևույթը, *ու* հոլովման դեպքում՝ *ուց*: Արևմտահայերենում բացառականը կազմվում է *է, մէ* մասնիկներով: Գործիականը արևելահայերենում կազմվում է *ով* մասնիկով, որը ծագումնաբանորեն գրաբարյան *ո* հոլովման եզակի գործիականի վերջավորությունն է: Արևմտահայերենում *ով*-ի հետ մեկտեղ գործածվում է *մով*-ը: Ներգոյականի համար արևելահայերենում ընդհանրացել է գրաբարյան տրականի *ում* հոլովակերտը: Ի տարբերություն մնացած հոլովների՝ արևելահայերենում ներգոյական հոլով չունեն անձնանիշ հատուկ ու հասարակ անունները, կենդանիների անունները, *-ցի, -ացի, -անք, -ենք, -ոնք, -ոնք*, ինչպես նաև *-եղեն, -ություն, -ում* ածանցներով բաղադրված գոյականները և այլն: Սրանք ներգոյականի իմաստ արտահայտում են **սեռական հոլովածն +մեջ կապ** կաղապարով: Արևմտահայերենը (նաև միջին հայերենը) ներգոյական հոլով չունի:

Հոգնակիակազմության բանաձևը փոխվել է. ուղղականին, կախված վանկերի քանակից և լեզվական ավանդույթից, կցվում են *եր, ներ* մասնիկները: Հոգնակի սեռականը կազմելու առումով նոր հայերենը հասել է միակերպության. արևելահայերենում տիրապետող է *ի* հոլովումը, արևմտահայերենում՝ **ու** (չնչին բացառություններով): Այդ պատճառով բառի՝ այս կամ այն հոլովման պատկանելը որոշվում է նրա միայն եզակի սեռականի ձևից:

Միջին հայերենում *-եր* մասնիկին գուգահեռ՝ *-նի* մասնիկն է առավել գործածական, երկու հոգնակերտներն էլ ենթարկվում էին *ոյ* հոլովման, գրական արևմտահայերենում այդ *ո* հոլովումը հնչյունափոխվել է *ու* հոլովման: Օրինակ՝ *շուն-շուներ-շուներոյ-շուներու, գլուխ-գլխնի-գլխնոյ-գլխնու*: Կար նաև *ուի/վի* հոգնակերտը հիմնականում երկակի առարկաների համար՝ *աշուի, ունքուի, ուրուի, ջեռուի, դռուի* (երկփեղկ դուռ):

Գրաբարյան բառահարաբերական **ք** ձևությոն այլևս հոգնակերտ չէ, այլ ածանց՝ *միւրք-միւրքեր* (բացառությունները չհաշված): Գրաբարյան հոգնակերտները պահպանվել են հազվագյուտ դրսևորումներով՝ *մարդիկ, կանայք, տիկնայք, տեարք, պարոնայք, Վարդանենք, անձինք* և այլն:

ԱՆԿԱՆՈՆ ՀՈՒՈՎՈՒՄՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ

Գրաբարագիտության պատմության մեջ ավանդաբար տարբերակվել են անկանոն կամ զարտուղի (կամ՝ այլաձև, միայնակ, թերականոն, առանձնական, պարականոն) հոլովումներ: Սրանց շարքին է դասվել այն գոյականների հոլովումը, որոնք այս կամ այն չափով շեղվել են հոլովման ընդհանուր օրինաչափություններից: Այդ բառերը թվով տասնմեկն են: Գրաբարում այս հոլովումները խմբավորվում են՝ *1. հայր, մայր, եղբայր. 2. կին, տիկին, 3. այր, տէր, 4. քոյր, 5. գեւո, 6. տիւ, 7. ար:* Վերջինս անկանոն չէ, պարզապես 5-րդ դարում պահպանված միակ գոյականն է՝ **ու** ներդրական թեքմամբ:

Հայր, մայր, եղբայր - *այ* երկբարբառով այս բառերը գրաբարում հոլովվում են *ւ* հոլովակերտով, որը ներդրական է՝ *հայր-հայր, մայր-մայր, եղբայր-եղբայր*, հոգնակիում *այ* երկբարբառը պարզեցվում է -*ք* հոգնակերտից առաջ՝ *հարք, մարք, եղբարք*: Եզակի սեռական -տրականի *աւ*-ը միջին հայերենի շրջանում դառնում է **օ**՝ արտասանվելով որպես փակ վանկի **օ**, իսկ արևելյան աշխարհաբարում Մ. Արեղյանի ուղղագրական բարեփոխումից հետո դառնում է **ո**՝ ստեղծելով զուտ աշխարհաբարյան *ո* ներդրական հոլովում *հայր, մայր, եղբայր* և նրանցից ածանցված բառերի համար: Գրաբարում արդեն *հայր, մայր* բառերի հոլովումը կանոնավորվում էր՝ եզակի գործիականից սկսած հոգնակի թեք բոլոր ձևերում *ա* ներդրական հոլովման համաբանությամբ՝ *հարք/հարամք, հարց/հարանց, մարք/մարամք, մարց/մարանց*: Հոլովենք *մայր* բառը: Եզակի ուղղական՝ *մայր*, հայց՝ *(գ)մայր*, սեռական-տրական՝ *մայր*, բացառական՝ *ի մայրէ*, գործ՝ *մարք/մարամք*, ներգոյական՝ *ի մայր*: Հոգ-

նակի ուղղական՝ *մարք*, հայցական՝ *(գ)մարս*, սեռական-տրական՝ *մարց/մարանց*, բացառական՝ *ի մարց*, գործիական՝ *մարքք/մարամքք*, ներգոյական՝ *ի մարս*: Միջին հայերենում այս բառերն անցնում են օ ներդրական հոլովման: Եզակի ուղղական՝ *մայր*, հայց.՝ *(գ)մայր*, սեռական-տրական՝ *մօր*, բացառական՝ *(ի) մօրէ*, գործ.՝ *մօրով*: Հոգնակի ուղղական՝ *մայրեր*, հայցական՝ *(գ)մայրեր*, սեռական-տրական՝ *մայրերոյ/նու*, բացառական՝ *(ի) մայրերոյ/նուէ*, գործիական՝ *մայրերով*: Աշխարհաբարում, ինչպես նշեցինք, այս իմաստային բառախումբը՝ *հայր*, *մայր*, *եղբայր*, հոլովվում է *n* ներդրական տիպով, բոլոր թեք հոլովները կազմվում են սեռականի հիմքից՝ *մայր/ը*, *մոր/ը*, *մորից*, *մորով*: Արևմտահայերենում դա օ ներդրական հոլովումն է՝ *մայր*, *մօր*, *մօրմէ*, *մօրմով*:

Կին/տիկին-գրաբարում **n** հոլովման գոյական է, անկանոնությունը ջ հոլովակերտով կայուն գործածությունն է և **կնոյ* ենթադրյալ ձևի բացակայությունը: Հոգնակիում ունի *այք* հոգնակերտը, իսկ հոլովումը և՛ վերջադրական է, և՛ ներդրական *ա* հոլովիչով՝ *կանաց- րիկնաց/ կանանց- րիկնանց*, պահպանվել է նաև *յ-ն* *աց* ձևության հետ՝ *կանայց*, *րիկնայց*, փաստորեն, *n-ա* հոլովման հնագույն բառեր են՝ *կնաւ- կանամբ*, *կանաց- կանանց*: Հոլովներ միայն *կին* բառը՝ եզակի ուղղական՝ *կին*, հայց.՝ *(գ)կին*, սեռական-տրական՝ *կնոջ*, բացառական՝ *ի կնոջէ*, գործիական՝ *կնաւ/կանամբ*, ներգոյական՝ *ի կնոջ*: Հոգնակի ուղղական՝ *կանայք*, հայցական՝ *(գ)կանայս*, սեռական-տրական՝ *կանաց/կանայց/կանանց*, բացառական՝ *ի կանաց/ ի կանայց/ ի կանանց*, գործիական՝ *կնաւք/կանամքք*, ներգոյական՝ *ի կանայս*: Միջին հայերենում անցել է նորակազմ *ոջ* հոլովման՝ եզակի ուղղական՝ *կին*, հայց.՝ *(գ)կին*, սեռական-տրական՝ *կնոջ*, բացառական՝ *(ի) կնոջէ*, գործիական՝ *կնոջով*: Նշենք, որ վկայված է նաև հնչյունափոխված *կնիկ* ձևը, որը *ան* հոլովման է՝ *կնկան*, *կնկ(ա)նէ*, *կնկանով*: Հոգնակի ուղղական՝ *կ(ի)ներ*, հայցական՝ *(գ)կ(ի)ներ*, սեռական-տրական՝ *կիններոյ/նու*, բացառական՝ *(ի) կիններոյ/նուէ*, գործիական՝ *կիններով*: Աշխարհաբարում այս բառը կանոնավորվել է՝ պահպանելով գրաբարյան եզակի սեռականը, որի վերջավորությունը դարձել է ինքնուրույն հոլովիչ՝ դրվելով ազգակցական հարաբերությունների իմաստ արտահայտող առնչվող այլ բառերի

վրա ևս՝ *քույր, րեր, րալ, րեգր, ընկեր, աներ, սկեսուր*: Հոգնակին արևելահայերենում գրաբարյան *այր* հոգնակերտով է, ուստի *g* հոլովման է ենթարկվում՝ *կանայք, կանանց, կանանցից, կանանցով*: *Տիկինը* եզակիում հոլովվում է *կին* բառի համաբանությամբ, բայց հոգնակիում ունի մաս կանոնավոր գուգաձևություններ՝ *րիկնայք/րիկիններ*: Արևմտահայ աշխարհաբարում լիովին կանոնավոր է՝ ոչ հոլովմամբ՝ *կին, կնոջ, կնոջմէ, կնոջմով*: Հոգնակիում ստեղծվել է *կիներ* ձևը, որը հոլովվում է *ու* հոլովիչով՝ *կիներու, կիներէ, կիներով*:

Այր, տէր (տի + այր) գոյականները հոլովվում են **ն** հոլովակերտի միջոցով, որը ևս վերջադրական է. դրվում է եզակի ուղղականի վրա. երկբարբառը պարզեցնում է այ>ա, օրինակ՝ այր-առն: Տէր- տեառն. այստեղ է երկբարբառակերպ ձայնավորը վերածվում է *հա* երկբարբառի՝ է>հա: Գրաբարում արդեն այս բառը կանոնավորվելու միտում ունեն *ա* ներդրական հոլովիչի միջոցով, հատկապես հոգնակի թվում և եզակի գործիականում՝ *րերամբ, րերանց, ի րերանց* և այլն: Եզակի ուղղ.՝ *այր, րէր*, հայց.՝ *(գ)այր, (գ)րէր*, սեռ.-տրակ.՝ *առն, րեառն*, բացառ.՝ *յառնէ, ի րեառնէ*, գործ.՝ **արբ/արամբ, րեարբ/րերամբ*, ներգ.՝ *յառն, ի րեառն*: Հոգնակի ուղղ.՝ *արբ, րեարբ*, հայց.՝ *(գ)արս, (գ)րեարս*, սեռ.-տրակ.՝ **արց/արանց, րեարց/րերանց*, բացառ.՝ **յարց/յարանց, ի րեարց/ի րերանց*, գործ.՝ **արբբ/արամբբ, րեարբբ-րերամբբ*, ներգ.՝ *յարս, ի րեարս*: Միջին հայերենում այր բառի հնչյունափոխված տարբերակն է գործածական՝ էրիկ, որը *ան* հոլովման է՝ *էրիկ, էրկան, էրկընէ, էրկընով*: Աշխարհաբարում **այր** բառը հիմնական բառաֆոնդից դուրս է մղվել. արդի հայերենում կիրառվում է բարձր կամ պաշտոնական ոճում, *ի* հոլովման է, բայց եզակի հոլովումը հազվադեպ է՝ *այրի, այրից, այրով* և այլն: **Տէր** բառը միջին հայերենում կանոնավորվել է՝ անցնելով ոչ հոլովման՝ տէր-տիրոջ, տիրոջէ, տիրոջով: Արևելահայ աշխարհաբարում ևս **ոչ** հոլովման է՝ *րեր, րիրոջ, րիրոջից, րիրոջով*: Պաշտոնական ոճում հանդիպում է *րյարբ* ձևը (*րյարբ և րիկնայք*): Հազվադեպ կիրառվում է *րյար-ը*՝ որպես *պարոն*ի հարգական փոխարինող: Արևմտահայերենում մույն *ոչ* հոլովումն է, տարբեր են միայն հոլովակերտները՝ մէ, մով. *րէր, րիրոջ, րիրոջմէ, րիրոջով*:

Քոյր բառը գրաբարում *հ* ներքին հոլովման է, 5-րդ դարում պահպանվել էին սեռականի երկու ձևեր՝ *քուեր* և հնչյունափոխված *քեռ*-ը. վերջինս առավել գործածական էր: Ոյ երկբարբառը սկզբում դարձել է *ու՝ քույր* > *քուեր*, ապա ընկել՝ *քուեր* > *քեռ*, իսկ վերջին *ր*-ն վերածվել է իր լծորդ *ռ*-ին՝ *ր* > *ռ՝ քեր-քեռ*: Հոգնակի ուղղական և հայցական հոլովմեքում *ք* հոգնակերտից առաջ *ոյ* երկբարբառը պարզվել է՝ *ոյ* > *ո* (*քորք, քորս*): Եզակի ուղղ.՝ *քոյր*, հայց.՝ (*զ*)*քոյր*, սեռ.-տրակ.՝ *քուեր/քեռ*, բացառ.՝ *ի քուերե/քեռէ*, գործ.՝ *քուերք/քերք*, ներգ.՝ *ի քուեր/ ի քեռ*: Հոգնակի ուղղ.՝ *քորք*, հայց.՝ (*զ*)*քորս*, սեռ.-տրակ.՝ *քուերգ/քերգ*, բացառ.՝ *ի քուերգ/ ի քերգ*, գործ.՝ *քուերքք/քերքք*, ներգ.՝ *ի քորս*: Միջին հայերենում այս բառը հնչյունափոխվել է և անցել *ռջ* հոլովման՝ *քուր, քուրոջ/քրոջ, քրոջէ, քրոջու*: Հոգնակին՝ *քուրեր, քուրերոյ/մ, (ի)քուրերոյ/մ/է, քուրերու*: Աշխարհաբարում այս բառը ևս *կին* բառի համաբանությամբ անցել է *ռջ* հոլովման, սեռականի հիմքից էլ կազմվում են եզակի թեք հոլովները՝ *քրոջից, քրոջու*, արևմտահայերենում՝ *քրոջմէ, քրոջմու*:

Գեւղ/գիւղ բառի հոլովման անկանոնությունը ջ հոլովակերտով է արտահայտվում, որը պահպանվել է միայն եզակի թվում: Այն վերջադրական է. դրվում է եզակի ուղղականի վրա, ձայնավոր հոլովիչ չկա՝ **գիւղ- գեւղ**. Զ-ի հավելումը բերում է եւ/իւ երկբարբառի պարզեցման՝ *եւ* > *հ*: Հոգնակին, ինչպես նա եզակի գործիականը գրաբարում արդեն կանոնավորվել էր՝ *ի* հոլովիչով: Եզակի ուղղ.՝ *գեւղ*, հայց.՝ (*զ*)*գեւղ*, սեռ.-տրակ.՝ *գեւղջ*, բացառ.՝ *ի գեւղէ*, գործ.՝ *գիւղիւ*, ներգ.՝ *ի գեւղջ*: Հոգնակի ուղղ.՝ *գիւղք*, հայց.՝ (*զ*)*գիւղս*, սեռ.-տրակ.՝ *գիւղից*, բացառ.՝ *ի գիւղից*, գործ.՝ *գիւղիւք*, ներգ.՝ *ի գիւղս*: Միջին հայերենում, ապա աշխարհաբարում լիովին կանոնավորվել է. *ի* հոլովիչը տարածվել է բոլոր փուլերում՝ *գիւղ- գիւղի, գիւղէ, գիւղով*, արևելահայերենում՝ *գյուղ, գյուղի/ն, գյուղից գյուղով, գյուղում* և այլն:

Տիւ նշանակում էր *ցեղեկ*, հնդեվրոպական հնագույն բառ է՝ գրաբարում արդեն գործածությունից դուրս եկող: Հոգնակին պահպանվել է լոկ ուղղական և հայցական հոլովաձևերով: Անկանոնությունը հոլովակերտի տեղակայման մեջ է. դրվում է հոլովիչից առաջ՝ *տուրնջեան* >

նջ+եան: Գրաբարում հոլովակերտը սովորաբար դրվում էր հոլովիչից հետո՝ *n+j n+ջ*: Եզակի ուղղ.՝ *յրիւ*, հայց.՝ *(գ)յրիւ*, սեռ.-տրակ.՝ *յուրն-ջեան*, բացառ.՝ *ի յուրնջեանէ*, գործ.՝ *յուրնջեամբ*, ներգ.՝ *ի յուրնջեան*: Հոգնակի ուղղ.՝ *յրիւք*, հայց.՝ *(գ)յրիւ*: Մնացյալ հոլովածները գրաբարում արդեն վկայված չէին: Միջին հայերենում, ինչպես նաև աշխարհաբարում այս բառը գործածական չէ, թեև պահպանվել է գրաբարյան սեռականը որպես ածական *յովնջյան լուսապոռ* բառակապակցության մեջ:

Ար - Եզակի ուղղ.՝ *ար*, հայց.՝ *(գ)ար*, սեռ.-տրակ.՝ *արուր*, բացառ.՝ *յարեւ*, գործ.՝ *արուրբ*, ներգ.՝ *յարուր*: Հոգնակի ուղղ.՝ *արուրք*, հայց.՝ *(գ)արուրս*, սեռ.-տրակ.՝ *արուրց*, բացառ.՝ *յարուրց*, գործ.՝ *արուրքք*, ներգ.՝ *յարուրս*: Միջին հայերենում և աշխարհաբարում որպես ժամանականիշ բառ **օր**-ը գրաբարյան **մահ** բառի համաբանությամբ անցել է *ուսն/վա* հոլովման: Ուղղ.՝ *օր*, սեռ.-տրակ.՝ *օրուսն*, *օրուրնէ*, *օրով*: Արևելահայերենում՝ *օրվա/ն*, բաց.՝ *օրվանից/օրից*, գործ.՝ *օրվանով/օրով*, ներգ.՝ *օրում*: Կարող է հոլովվել նաև **ի** հոլովիչով՝ *օրի*, *օրէ//օրից*, *օրով*: Հոգնակին, միջին հայերենից սկսյալ, **եր** հոգնակերտով է՝ օրեր, որը միջին հայերենում **ոյ>ու** հոլովման էր (արևմտահայերենում՝ **ու**)՝ *օրեր*, *օրերոյ/ու*, արևելահայ աշխարհաբարում՝ **ի. օրեր**, *օրերի*:

Աշխարհաբարում ստեղծվել են սեփական անկանոն գուգաձև հոլովումներ, որոնք բոլորը գրաբարյան են՝ անցյալում հիմնականում կանոնավոր, ինչպես՝ *ա* հոլովում՝ *աղջիկ> աղջկա*, *ո՝ Աստված>Աստծո*, *լույս>լուսո*, *սուգ>սգո*, *հույս>հուսո*, *պատիւ>պատվո*, *խնդիր>խնդրո*, *մամուլ>մամլո*, *յան՝ ծնունդ>ծննդյան*, *գալուստ>գալստյան*, *կորուստ>կորստյան*, *ե* ներքին՝ *դուստր>դստեր*, *կայսր>կայսեր* և այլն:

Ա ՀՈԼՈՎՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ

Ա արտաքին հոլովում

Ա հոլովիչը գրաբարում ամենատարածված հոլովիչն էր, որը հանդիպում էր և՛ արտաքին, և՛ ներքին, և՛ պարզ, և՛ խառը հոլովումների դեպքում: Ա արտաքին հոլովումը գրաբարում իմաստային հոլովում էր, որովհետև այդ հոլովման ենթարկվում էին գրաբարի հատուկ անունների մեծ մասը՝ անձնանուն կամ տեղանուն: Հասարակ անուններից միայն *դի-դան*-ն էր այս հոլովման: Ա հոլովիչը վերջադրական թեքման դեպքում ստանում էր յ հոլովակերտը՝ **այ**: Եզակի բացառականում այս հոլովման բառերը է հոլովակերտ չէին ստանում, իսկ գործիականում ստանում էին **ա+ւ**: Եզակի ներգոյականը կազմվում էր **ի+հայցական** կաղապարով: Հունական **աւ, ու** վերջավորություն ունեցող բառերի հոլովման ժամանակ **ս**-ն ընկնում էր, **ո**-ն վերածվում էր **ե**-ի՝ *Ղուկաս//Ղուկայ, Անդրեաս//Անդրեայ, Փաւստոս//Փաւստեայ*: Ա-ով վերջավորվող փոխառյալ հատուկ անունների հոլովման դեպքում **ա** հոլովիչը չի ավելանում, բնի ձայնավորը փոխարինում է նրան յ հոլովակերտի հավելմամբ՝ *Աննա//Աննայ, Ասիա//Ասիայ*: Բերենք հոլովման հիմնական տիպերի հարացույցները:

Ուղղ.	Անակ	Մոկք	Կադմոս	Յուդա	Վահէ
Հայց.	(գ)Անակ	(գ)Մոկս	(գ)Կադմոս	(գ)Յուդա	(գ)Վահէ
Սեռ.-տր.	Անակայ	Մոկաց	Կադմեայ	Յուդայ	Վահեայ
Բացառ.	յԱնակայ	ի Մոկաց	ի Կադմեայ	ի Յուդայ	ի Վահեայ
Գործ.	Անակաւ	Մոկաք	Կադմեաւ	Յուդաւ	Վահեաւ
Ներգ.	յԱնակ	ի Մոկս	ի Կադմոս	ի Յուդա	ի Վահէ

Միջին հայերենում այս հոլովումը պահպանվում է, սակայն խիստ սահմանափակվում է, արդեն գրաբարում **ա** վերջադրական թեքման շատ անուններ ունեին **ի** հոլովմամբ զուգաձևություններ՝ *Ղուկաս//Ղուկայ//Ղուկասի, Աննա//Աննայ//Աննայի*, ուստի միջին հայերենում նրանց

մեծ մասն անցնում է ընդհանրական դարձող **ի** հոլովման: Միջին հայերենում այս հոլովումը դարձյալ իմաստային է, ընդգրկում է անձնանունների, արդեն սակավաթիվ տեղանունների հոլովումը, թեև միջին հայերենում անձնանիշ որոշ հասարակ գոյականներ ևս կարող էին ենթարկվել այս հոլովման՝ *սուլթան*//*սուլթանայ*, *յրիկին*//*յրիկնայ*, *քրմուհի*//*քրմուհեայ*: Բայց դրանք արդեն առանց սահմանափակումների կարող էին հոլովվել նաև այլ հոլովիչներով: Այսինքն՝ **ա** վերջադրական հոլովումը միջին հայերենում արդեն մարդկային հոլովում էր:

Ուղղ.	Բեղ	Հոռոմ	սուլթան
Հայց.	(գ)Բեղ	Հոռոմ	(գ)սուլթան
Մեռ.-տր.	Բեղայ	Հոռոմայ	սուլթանայ
Բացառ.	Բեղայ	ի Հոռոմայ	ի սուլթանայ
Գործ.	Բեղով	Հոռոմով	սուլթանաւ

Աշխարհաբարում այս հոլովումը վերանում է՝ պահպանվելով միայն քարացած կառույցներում, հատկապես տեղանվանական՝ *Սևանա լիճ*, *Վանա լիճ*, *Գեղամա լեռներ*, *Մարութա սար*, *Մարա Մելիք*, *Մոկաց Միրզա*, *Սասնա ծռեր* և այլն: **Ա** արտաքին հոլովման պատկանում է միայն *աղջիկ* գոյականը:

Ա ներքին հոլովում

Ա ներքին հոլովումը գրաբարում ձևային հոլովում էր: Այս հոլովման ներքո գրաբարում արդեն միավորվում էին հնագույն տարբեր հոլովիչներ, անգամ վերջադրական բնույթի, ինչպես օրինակ՝ **ան** և **եան**, *Ասորդիկ*//*Ասորդկան*, *Ժադիկ*//*Ժադկան*, *աղջիկ*//*աղջկան*, *Ժողովուրդ*//*Ժողովրդեան*, *ծնունդ*//*ծննդեան*: **Ան**, **եան** հոլովիչներն ըստ ամենայնի վաղնջական ծագում ունեին, գրաբարում կորցրել էին իրենց համակարգային բնույթը, և գրաբարի քերականները դրանք ավանդույթի ուժով էին միավորում *ա* ներդրական հոլովման կազմի մեջ:

Այս հոլովման ենթարկվում էին՝

ա) բաղաձայն *+ն* բառավերջ ունեցող բառերը՝ *արեգակն, աղեղն, բորգն, մայրուռն, այծեամն, հիմն* և այլն,

բ) *-ումն* բայանվանակերտ ածանցով բառերը՝ *երեսումն, խոյրորումն, ցատումն, ուսումն* և այլն,

գ) *-ում*-ով վերջավորվող մի քանի բառ՝ *յրում, շում, չեղում, անում, աշում, գարում*, նաև *մահ*,

դ) *-իկ* և *-ուկ* ածանց ունեցող մի շարք բառեր՝ *մարդիկ, աղջիկ, անդրանիկ, խցիկ, ծաղիկ, մանուկ, Ասրդիկ, Յուսիկ, Չուիկ* և այլն,

ե) *-ութիւն* կամ *-իւն* վերջավորություն ունեցող բառերը՝ *մեծութիւն, բարութիւն, գոհութիւն, կորիւն, մրջիւն* և այլն,

զ) *-ունդ, -ուրդ, -ուսդ* և *-իսդ* վերջածանցներով մի շարք բառեր՝ *ծնունդ, սնունդ, ժողովուրդ, խորհուրդ, կորուսդ, թաքուսդ, հանգիսդ* և այլն: Նշենք, որ այս խմբի բառերը ենթարկվում էին նաև այլ հոլովումների՝ *ո* կամ *ի*,

է) ձևային և իմաստային ընդհանրություններ չունեցող մի շարք բառեր՝ *յրեսիկ, ժամ, ամիս*: Բերենք հոլովման հարացույցների օրինակներ:

Գրաբար

Ուղղ.	դուռն	դրուք	ուսումն	ուսմունք	տուն	տունք
Հայց.	(զ)դուռն	(զ)դրունս	(զ)ուսումն	(զ)ուսմունս	(զ)տուն	(զ)տուն
Սեռ.-տր.	դրան	դրանց	ուսման	ուսմանց	տան	տանց
Բացառ.	ի դրանէ	ի դրանց	յուսմանէ	յուսմանց	ի տանէ	ի տանց
Գործ.	դրամբ	դրամբք	ուսմամբ	ուսմամբք	տամբ	տամբք
Ներգ.	ի դրան	ի դրունս	յուսման	յուսմունս	ի տան	ի տունս

Ուղղ.	արիւն	արիւք	ծնունդ	ծնունդք
Հայց.	(զ)արիւն	(զ)արիւնս	(զ)ծնունդ	(զ)ծնունդս
Սեռ.-տր.	արեան	արեանց	ծննդեան	ծննդեանց
Բացառ.	յարեանէ	յարեանց	ի ծննդեանէ	ի ծննդեանց
Գործ.	արեամբ	արեամբք	ծննդեամբ	ծննդեամբք
Ներգ.	յարեան	յարիւնս	ի ծննդեան	ի ծնունդս

Միջին հայերենում **ա** ներքին հոլովումը տրոհվում է. նրանից առանձնանում են՝

ա) **եա** ներդրական հոլովումը՝ *-իւն, -ուքիւն* վերջ ունեցող բառերի համար,

բ) **եան** վերջադրական հոլովումը՝ *-իսր, -ուսր, -ունդ* վերջավորությամբ որոշ բառերի համար,

գ) **ան** վերջադրական հոլովումը՝ *-իկ, -ակ, -ուկ* վերջավորությամբ բառերի համար, որոնց միանում են *գարուն, աշուն, ուղեղ/ըղեղ, խունկ* և այլ բառեր,

դ) **ուան/ վան/ւան** հոլովումը, որը ծագում է *մահ* բառի *մահուան* հոլովածնից և միջին հայերենում դառնում է ժամանականիշ բառերի հոլովիչ՝ *գիշեր, էգուց, իրիկուն, ցերեկ, օր, տարի* > *գիշերուան, էգուցուան, իրիկուան, ցերեկուան, օրուան, տարուան* և այլն:

Բուն **ա** ներդրական հոլովումը պահպանվում է *բաղաչայն + ն* վերջով բառերի համար, որոնց միանում են արդեն վերացած **ի-ա** խառը ներդրական հոլովման որոշ բառեր, թեև դրանց մի մասը անցնում է **ի** կամ **ան** վերջադրական հոլովումների, օրինակ՝ *եզն/ եզ- եզի, եզան*:

Արևելահայերենում **ա** ներդրական հոլովմամբ թեքվում են միայն **-ուքյուն** ածանցով կազմված բոլոր (չհաշված *Հարություն* անձնանունը) և *տուն, շուն, չյուն, սյուն, արյուն, անկյուն* գոյականները: Ինչ վերաբերում է *անուն* բառին, ապա այն պատկանում է ոչ թե **ա**, այլ **ու/վա** ներքին հոլովման:

Արևմտահայերենում **ա** ներդրական հոլովումը ևս պահպանվում է մասնակիորեն, այս հոլովմամբ թեքվում են **-ուքիւն** ածանցով գոյականները և *անուն* բառը, թեև վերջինս առավել հաճախ հոլովվում է **ի** հոլովիչով:

Ուղղ.	բազմութիւն	անուն
Մեռ.-տր.	բազմութեան	անուան//անունի
Բացառ.	բազմութենէ	անունէ
Գործ.	բազմութեամբ// բազմութիւնով	անուամբ

Ո ՀՈԼՈՎՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ

Ո հոլովիչը գրաբարում գործուն հոլովիչ էր, որը մասնակցում էր և՛ պարզ, և՛ խառն հոլովումների կազմությանը, բայց միայն վերջադրական բնույթի: Այս հոլովման ենթարկվում էին գոյականներ, ածականներ, թվականներ և դերբայներ: Ո վերջադրական հոլովման գրաբարում պատկանում էին.

ա) *ի* բուն ունեցող միավանկ բառերը՝ *ձի, թի, դի*,

բ) *ի* բառավերջ ունեցող բազմավանկ բառերից բացառության կարգով այս հոլովման ենթարկվում էին *երի, որդի, ոգի, հոգի, ոսկի* բառերը,

գ) *-ային, -ին, -ուած, -ուն, -ցի* ածանցներով բառերը՝ *լեռնային, մարդկային, առաջին, վերջին, յոդուած, շինուած, անասուն, գիտուն, Փարպեցի, հելլենացի* և այլն,

դ) անորոշ և անցյալ դերբայները, որոնցից անորոշը՝ միայն եզակի թվով, անցյալը՝ եզակի և հոգնակի,

ե) մի շարք հատուկ անուններ՝ *Սանատրուկ, Տարօն, Շապուհ*, ե) անեզական անուններ՝ *կուռք, դժոխք, պահք, հունձք, Վայք, Տայք*,

զ) ձևային տարբերակում չունեցող բազմաթիվ բառեր՝ *ամա, արծաթ, բոյս, յոյս, հուր, ջուր, թուղթ, թուր, իւղ, սափոր* և այլն:

Այս հոլովման դեպքում *ո* հոլովիչը միշտ ստանում է *յ* հոլովակերտը՝ *ոյ*, հազվադեպ նաև՝ *ջ > ոջ*, օրինակ՝ *միոյ/միոջ*: Տրական հոլովում այս հոլովման որոշ բառեր ստանում են *ում* հոլովակերտը, որից էլ *ի* նախդրով կազմվում է ներգոյականը, օրինակ՝ *ասացեալ > ասացելում > յասացելում, վերջին > վերջնում > վերջնում, հին > հնում > ի հնում*, թեև ներգոյական հոլովը *ո* հոլովման դեպքում, որպես կանոն, կազմվում է հայցական հոլովից՝ *ի հուր, ի հուրս, ի շինուած, ի շինուածս*: Որոշ բառեր եզակի ներգոյականի կազմության ժամանակ երբեմն ստանում են *ի* հոլովիչը՝ *ի գուր/ի գրի, յերազ/յերազի* և այլն¹⁹¹: Այս երևույթը Ա. Աբրահամյանը բացատրում է հոլովական գուգաձևությամբ. նման բառերը, բացի *ո* հոլովիչից, հոլովվել են նաև *ի* հոլովիչով: Առաջ անցնելով՝ նշենք,

¹⁹¹ Տե՛ս Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Եր., 1976, էջ 39:

որ պատմական զարգացման ընթացքում այս բառերն իրոք անցնում են *ի* հոլովման: Բացառականը, որպես կանոն, կազմվում է տրականից *ի* նախդրով, առանց *է* հոլովակերտի՝ *ի հրոյ, ի բուսոյ, ի գիտնոյ*, գործիականը ստանում է *վ* հոլովակերտը: Եթե բառն ունի վերջնահանգ *ի* և միավանկ չէ, այդ *ի*-ն դառնում է *ւ*, այսպես՝ *նզի+ոյ=նզւոյ, քաղաքացի+ոյ=քաղաքացւոյ*, միավանկ բառերի *ի* ձայնավորը չի հնչյունավորվում՝ *քի+ոյ=քիոյ*:

Ուղղ.	բերան	բերանք	էշ	էշք	դժոխք
Հայց.	(գ)բերան	(գ)բերանս	(գ)էշ	(գ)էշս	(գ)դժոխս
Սեռ.-տր.	բերանոյ	բերանոց	իշոյ	իշոց	դժոխոց
Բաց.	ի բերանոյ	ի բերանոց	յիշոյ	յիշոց	ի դժոխոց
Գործ.	բերանով	բերանովք	իշով	իշովք	դժոխովք
Ներգ.	ի բերան/ի	ի բերանս	յէշ	յէշս	ի դժոխս

Բերենք անորոշ և անցյալ դերբայների գրաբարյան հոլովման հարացույցները:

Ուղղ.	թողուլ	սիրեցեալ	սիրեցեալք
Հայց.	(գ)թողուլ	(գ)սիրեցեալ	(գ)սիրեցեալս
Սեռ.-տր.	թողլոյ	սիրեցելոյ	սիրեցելոց
Բաց.	ի թողլոյ	ի սիրեցելոյ	ի սիրեցելոց
Գործ.	թողլով	սիրեցելով	սիրեցելովք
Ներգ.	ի թողուլ	ի սիրեցեալ	ի սիրեցեալս

Միջին հայերենում *ո* հոլովումն ավելի է ընդլայնվում, որովհետև գրաբարյան **ո-ս** խառն հոլովման բառերը ևս անցնում են **ո** հոլովման, բացի այդ միջինհայերենյան հոգնակերտների մեծ մասը ենթարկվում է *ո* հոլովման՝ *եր- երոյ, ներ-ներոյ, նի-նոյ, անի-անոյ, վի-վոյ*: Ընդ որում՝ այս հոլովման գործիականի *ով* վերջավորությունն ընդհանրաճանաչ է բոլոր հոլովումների համար և կանոնավորում գործիական հոլովի կազմությունը թե՛ անվանական, թե՛ դերանվանական հոլովման համակարգերում:

Ուղղ.	բերան	բերաննի	էշ	իշվի
Հայց.	(զ)բերան	(զ)բերաննի	(զ)էշ	(զ)իշվի
Սեռ.-տր.	բերանոյ	բերաննոյ/ու	իշոյ/ու	իշվոյ
Քաց.	(ի) բերանոյ/է	(ի) բերաննոյ/է	(յ)իշոյ/ու	(յ)իշվոյ/ու
Գործ.	բերանով	բերաննով	իշով	իշվով

Միջին հայերենի ուշ շրջանում *ոյ> ու* հնչյունափոխությունը գնալով ամրակալվում է, դառնում ընդհանրական և աշխարհաբարում արդեն վերածվում նոր *ու* հոլովման: Արևելահայերենի քերականություններում *ու*-ն արտաքին հոլովում է: Սակայն այս հոլովման մեջ ներկայացված են երկու տարբեր կարգի հոլովումներ՝ *ու* արտաքին (0>ու) և *ի/ու* հերթագայությունը: Ուստի սրանք անհրաժեշտ է միմյանցից տարանջատել¹⁹²: Ի>ու հերթագայության ենթարկվում են *ի*-ով վերջացող բազմավանկ բառերը. նրանց բացառականը ևս *ու* հիմքով է կազմված՝ *ուց՝ եկեղեցի/եկեղեցու/եկեղեցուց*: Արևելահայերենում *ու* արտաքին հոլովման են անցել գրաբարում *ո* հոլովման պատկանող *սասրված, մարդ, ամուսին, ակողղին աղախին* բառերը, ինչպես նաև *ձի, քի, դի* միավանկ բառերը, երբեմն նաև *մահ* գոյականը: Անորոշ դերբայը ևս *ու* հոլովման է՝ *վազեի, վազելու, վազելուց, վազելով*: Հ. Աճառյանի բերած օրինակներից *էշ>իշու, րդա>րդու, գլուի>գլիու* ձևերը պահպանվել են ժողովրդախոսակցական լեզվում: Արևմտահայերենում *ու*-ն առաջին հոլովումն է և ունի մեծ ընդգրկում: Արևմտահայերենում անորոշ դերբայի *ի, ու* խոնարհիչները փոխվում են *ե*-ի, օրինակ՝ *թողուլ> թողելու, խօսիլ> խօսելու, թռչիլ> թռչելու*¹⁹³: *Եր* կամ *ներ* հոգնակերտներով բոլոր բառերը ինչպես միջին հայերենում, այնպես էլ արևմտահայերենում ենթարկվում են *ոյ> ու* հնչյունափոխության արդյունքում ձևավորված նոր *ու* հոլովման՝ *սարեր> սարերու, ջուրեր> ջուրերու, միրգեր> միրգերու*:

Որոշ բառերի գրաբարյան *ո* հոլովման ձևերը պահպանվում են իբրև գրաբարաբանություն՝ *սուգ/սգո, լույս/լուսո, հույս/հուսո, պարիլ/*

¹⁹² Տե՛ս Ա. Աբաջյան, նշվ. աշխ., էջ 387-390:

¹⁹³ Տե՛ս Յ. Ավետիսյան, Արևելահայերենի և արևմտահայերենի զուգադրական քերականություն, Եր., 2007, էջ 70:

պարվո, մամուլ/մամլո ցան ասարված/ասարծո/ասարծու: Այս հոլովատի-
պերը կոչվում են այլաձև կամ զարտուղի: Նշված բառերի կանոնավոր
սեռականը **ի** հոլովիչով է՝ սզի, լույսի, հույսի, պարվի, մամուլի: Միայն
սեռ բառն է, որ հոլովվում է զուտ *ո* հոլովիչով՝ սեռ, սիրո, սիրուց, սիրով:

Արևմտահայերենում *ո/ոյ* հոլովումը բավական տարածված է, սա-
կայն արդեն առկա են նահանջի միտումները: Այսպես, *ոյ* հոլովման են-
թարկվում են *իս*-ով վերջավորվող օտար հատուկ տեղանունները, բայց
հիշյալ աշխարհագրական անունները կարող են հոլովվել ցան *ի* հոլովի-
չով՝ *Իդալիս*>*Իդալիոյ/ Իդալիայի, Ռուսիա*> *Ռուսիոյ/Ռուսիայի* և
այլն: Չուտ այս հոլովման ենթարկվում են *սեռ, ասարուած, Պոլիս* բառե-
րը, թեև *սեռ* բառը հանդիպում է ցան *ի* հոլովիչով՝ *սերի/սերին*, ընդ սմին՝
արևմտահայերենում է>*ի* գրաբարյան հնչյունափոխությունը հաճախ չի
կատարվում: Որպես այլաձև հոլովման տարբերակ՝ *ի*-ով վերջավորվող
բառերը հատկապես բարձր ոճերում կարող են հանդիպել գրաբարյան
ձևով՝ *եկեղեցի*>*եկեղեցւոյ, հոգի*>*հոգւոյ, որդի*>*որդւոյ*: Ի-ով վերջավոր-
վող բառերի համար առավել ընդունված են *ի* հոլովիչով տարբերակնե-
րը՝ *հոգի*>*հոգիի, եկեղեցի*>*եկեղեցիի, որդի*>*որդիի* և այլն:

ՈՒ ՀՈԼՈՎՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՁԱՐԳԱՑՈՒՄԸ

Ու հոլովումը գրաբարում մեծ տարածում չունեցող պարզ հոլովում
էր՝ հիմնականում վերջադրական բնույթի: Գրաբարում պահպանվել է *ու*
ներդրական հոլովման միայն մեկ բառ՝ *աւր/աւուր*: Հոլովման հարացույ-
ցը հետևյալն է՝

Ուղի.	աւր	աւուրք
Հայց.	(զ)աւր	(զ)աւուրս
Մեռ.-տր.	աւուր	աւուրց
Բաց.	յաւրե	յաւուրց
Գործ.	աւուրք	աւուրքք
Ներգ.	յաւուր	յաւուրս

Միջին հայերենում *օր* բառի հոլովումը մասամբ կանոնավորվում է: Ժամանականիշ այլ գոյականների հետ մեկտեղ, *մահ* բառի համաբանությամբ այն անցնում է նոր՝ *վան/ուան* ժամանականիշ հոլովման՝ *օր-վան, ցորեկվան, էգուցվան, վաղվան, տարուան*, թեև միջին հայերենում հանդիպում է նաև *օր* բառի *ի* արտաքին հոլովման ձևը՝ *օրի*:

Ուղղ.	օր	օրեր
Հայց.	(զ)օր	(զ)օրեր
Սեռ.-տր.	օրվան	օրերոյ/ու
Բաց.	(յ)օրվնէ	(յ)օրերոյ/ու/է
Գործ.	օրվնով	օրերով

Աշխարհաբարում պահպանվում է միջինհայերենյան հոլովատիպը՝ *վա* հոլովմամբ՝ *օր, օրվա, օրվանից/օրից, օրով, օրում*:

Ու վերջադրական հոլովման ենթարկվում են.

ա) ձևային տարբերակում չունեցող մի շարք բառեր՝ *արև, զանչ, դաս, դար, նախանչ, շաբաթ, ուրբաթ* և այլն,

բ) կենդանի, թռչուն նշանակող բառեր՝ *ագռու, աղուէս, առեւծ, արջ, գրաստ, ինչ, ուղտ, ցուլ, կաքաւ* և այլն,

գ) մի քանի հատուկ անուն և սակավաթիվ անեզական գոյականներ՝ *Աբրահամ, Խոսրով, Յովսէփ, Յորդանան, Մարիամ, բարք, պարտք, վարք* և այլն,

դ) *ր*-ով և նախորդող բաղաձայնով ավարտվող մի քանի բառեր՝ *ասր, քանչր, ծաղր, ծանր, մեղր, բարչր* և այլն: Այս բառերից *բարչր*-ը և *ցածր*-ը, *մանր*-ը հոգնակի թվում ստանում են *ունք* հոգնակերտը և ներդրական հոլովման տիպին են անցնում՝ *բարչունք-բարչանց, փութունք-փոքունց, մանունք-մանունց*, բայց այս բառերի մեծ մասը գրաբարում արդեն այլաձև հոլովումներ ունենին՝ *ռ* վերջադրական, *հ* ներդրական:

Մեռական-տրականում *ու* հոլովիչն է, բացառականում տրականին ավելանում է *է* հոլովակերտը. այս դեպքում *ու* հոլովիչը սովորաբար տվում է, թեև երբեմն կարող է պահպանվել: Գործիական հոլովը նույն սեռական-տրականն է, որովհետև գործիականի հոլովակերտ *ւ*-ը չի կա-

րող գումարվել: Ներգոյականը կազմվում է եզակի թվում **ի + տրական**, հոգնակի թվում՝ **ի + հայցական** կաղապարներով:

Ուղղ.	զարդ	զարդք	փոքր	փոքունք	պարտք
Հայց.	(զ)զարդ	(զ)զարդս	(զ)փոքր	(զ)փոքունս	(զ)պարտս
Սեռ.-տր.	զարդու	զարդուց	փոքու	փոքունց	պարտուց
Բաց.	ի զարդէ	ի զարդուց	ի փոքուէ	ի փոքունց	ի պարտուց
Գործ.	զարդու	զարդութք	փոքու	փոքումբք	պարտութք
Ներգ.	ի զարդու	ի զարդս	ի փոքու	ի փոքունս	ի պարտս

Միջին հայերենում գրաբարյան **ու** վերջադրական հոլովումը գրեթե վերանում է, ու հոլովման պահպանված սակավաթիվ ձևերն ունեն հոլովական գուգաձևություններ ի հոլովիչով, զորօրինակ՝ *խոզու-խոզի, շագու-շագի, մախանչու-մախանչի, Ղազարու-Ղազարի*: Այսինքն՝ գրաբարյան **ու** վերջադրական հոլովման ենթարկվող բառերն անցնում են հիմնականում **ի** ընդհանրական հոլովման:

Միջին հայերենում արդեն ստեղծվել էր նոր **ու** հոլովում, որը գրաբարյան **ո** հոլովման պատմական զարգացման հետևանքն էր՝ **ոյ>ու** հնչյունափոխության արդյունք՝ **այգի-այգւոյ>այգոյ>այգու**: Արևմտահայերենում **ու** հոլովումը ամենատարածվածն է: Այս հոլովումը պահպանել են մի շարք գոյականներ՝ *ծով>ծովու, հաւ>հաւու, կով>կովու, էշ>իշու, արջ>արջու, ժամ>ժամու, գահ>գահու, շաքաթ>շաքթու* և այլն: Բայց դրանց մի մասն արդեն աստիճանաբար անցնում է *ի* հոլովման, ինչպես՝ *արջ>արջի, շաքաթ>շաքաթի* կամ *շաքթուան*:

Ի ՀՈԼՈՎՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ

Ի հոլովիչը գրաբարում ամենատարածված հոլովիչներից է, որը մասնակցում էր պարզ և խառն հոլովումների կազմությանը, ինչպես և ներքին **ի-ա**, արտաքին **ի-ա** թեքումներին:

Ի պարզ հոլովումը վերջադրական է: Այս հոլովման ենթարկվում են՝

ա) *-հայ, -ալ, -ոյ, -է* բառավերջ ունեցող բոլոր բառերը՝ *պաշտօնեայ, հրեայ, արքայ, երեխայ, երեկոյ, բազէ, ափսէ* և այլն,

բ) *-հան* հանգով բառերը՝ որոշ բացառություններով, օրինակ՝ *մալեան, արեան, վայրկեան*,

գ) *-հայր/ ասուր, -ոյք* ածանցներով բառերը՝ *գովհայր, համհայր, պահհայր, առագաստ, լաստ, երեսոյք, ծածկոյք* և այլն,

դ) մի շարք անձնանուններ, հատուկ և հասարակ անեզական գոյականներ՝ *Մովսէս, Արարչէս, Ներսէս, Սարգիս, Վաչէ, խօսք, միրք, կուրծք, անէծք, Աղոսանք, Պարսք, Կասպք* և այլն,

ե) ենթակայական դերբայը՝ *ող* վերջավորությամբ՝ *հայրանող, շիջանող, ուսանող* և այլն,

զ) ձևային տարբերակում չունեցող բազմաթիվ բառեր՝ *ախար, բախար, բան, բանուր, դադ, դար, խորշ, կայծ, կարաւոր, ջահ, սիրտ* և այլն:

Ի վերջապահական հոլովման դեպքում սեռական-տրական հոլովը եզակի թվում վերջավորվում է *ի* հոլովիչով, բացառականում բառերը ստանում են *է* հոլովակերտը, որից առաջ *ի-*ն ընկնում է, գործիականը կազմվում է՝ սեռական հոլովին ավելացնելով *ւ* հոլովակերտը: Ներգոյական հոլովը կազմվում է եզակի թվում՝ *ի+ րրական*, հոգնակի թվում՝ *ի+ հայցական* կադապարներով: Հոգնակի թիվը կազմվում է *ք, ս, ց* հոգնակերտներով:

Ուղղ.	բան	բանք	խօսք
Հայց.	(զ)բան	(զ)բանս	(զ)խօսս
Մեռ.-տր.	բանի	բանից	խօսից
Բաց.	ի բանէ	ի բանից	ի խօսից
Գործ.	բանիւ	բանիւք	խօսիւք
Ներգ.	ի բանի	ի բանս	ի խօսս

Միջին հայերենում *ի* վերջապահական հոլովումը խիստ ընդլայնվում է, որովհետև այս հոլովման են անցնում գրաբարյան *ի-ա* խառը, ինչպես նաև *ու* հոլովման բառերը:

Ուղղ.	բան	բաներ	խօսքեր
Հայց.	(գ)բան	(գ)բաներ	(գ)խօսքեր
Մեռ.-տր.	բանի	բաներոյ/ու	խօսքերոյ/ու
Բաց.	(ի) բանէ	(ի) բաներոյ/ու/է	(ի) խօսքերոյ/ու/է
Գործ.	բանով	բաներով	խօսքերով

Արևելահայերենի ամենամեծ հաճախականություն ունեցող հոլովումն է: *Ի*-ով են հոլովվում գոյականների մեծագույն մասը, փոխանուն ածականը, թվականը, դերանվանական հոլովման չպատկանող, բայց հոլովվող դերանունները, առհասարակ գոյականաբար հանդես եկող բոլոր բառերը՝ բացի *անք*, *յք/նք*, *ք/ց* հոլովումների ենթարկվող բառերից, ինչպես նաև գոյականների հոգնակի թիվը: Գ. Սևակի արտահայտությամբ՝ այս հոլովումը մեծ «էքսպանսիա» ունի, որը դրսևորվում է նրանով, որ այլ հոլովումների պատկանող բառերը ինչ-ինչ նկատառումներով հաճախ հոլովվում են *ի*-ով, ինչպես՝ *ամսվա/ամսի*, *տալոջ/տալի*:

Միջինհայերենյան օրինաչափությունները ժառանգած արևմտահայերենում **-եր/ներ** հոգնակերտներով կազմությունները **ու** հոլովման են ենթարկվում: Գրաբարյան **ի** հոլովման հոգնակի սեռական-տրականի **ից** ձևությոն արևելահայ աշխարհաբարում դառնում է բացառական հոլովի հիմնական կազմիչը բոլոր հոլովումների համար՝ ներառյալ դերանվանական, բացի **ու** հոլովումից, որի դեպքում գործում է **ուց** ձևությոն՝ դարձյալ ի տարբերություն արևմտահայերենի, որտեղ բացառականի կազմիչը է հոլովակերտն է: Գրաբարում *n* և հատկապես *n-ա* խառն հոլովման ենթարկվող *ի*-ով վերջավորվող բառերը արևմտահայերենում անցել են *ի* հոլովման՝ *ուսուցչուի*>*ուսուցչուիի*, *աստվածուի*>*աստվածուիի*, *որդի*>*որդիի*, *հոգի*>*հոգիի*: -Ում բայանվանակերտ ածանցող բառերը ևս հիմնականում դարձել են *ի* հոլովման՝ *սպասում*>*սպասումի*, *ծաղկում*>*ծաղկումի*, *այլասերում*>*այլասերումի*, *չուլում*>*չուլումի*¹⁹⁴:

¹⁹⁴ Հմմտ. 3. Ավետիսյան, Արևելահայերենի և արևմտահայերենի գրագրական քերականություն, Եր., 2007, էջ 68:

Ե ՆԵՐԴՐԱԿԱՆ ՀՈԼՈՎՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ

Ե ներդրական հոլովումը գրաբարի պարզ ձևային հոլովումներից է: Այս հոլովման ենթարկվում են բաղաձայն+**դ** և բաղաձայն+**ր** բառավերջ ունեցող բառերը (մնան կառույցի որոշ բառեր հոլովվում էին *ու* հոլովմամբ՝ արմատական բաղաձայնի անկմամբ՝ **բարձր>բարձու, մեղր>մեղու, ասր>ասու, ծաղր>ծաղու, քաղցր>քաղցու**), ինչպես նաև **եր/իր** բառավերջով բառերը, որոնք, սակայն, կարող էին հոլովվել նաև **ո, ի, ի-ա** հոլովումներով:

Ե հոլովիչը ծագումնաբանորեն մայր լեզվի բնի ձայնավոր է, որը հայերենը տղել է և վերականգնել որպես հոլովիչ, այսպես՝ **աստղ** բառի ուղիղ ձևը մայր լեզվում ***ster** էր, **ուստրը՝ *sukter**, **տայգր՝ *daiver** և այլն: Այս հոլովումը գրաբարում արդեն սահմանափակ հոլովում էր, շատ էին զուգաձևությունները: Հոգնակի թվում **ե** հոլովիչի հետ զուգահեռ գործածվում էր **ա** հոլովիչը, որը դրվում է **ե** հոլովիչով եզակի սեռական-տրական հիմքի վրա՝ կազմելով **ա** վերջադրական հոլովմանը բնորոշ թեքություն՝ **աց, աւք**, ինչպես օրինակ՝ **աստղ-աստեղ +աց, աստեղ-+աւք** և այլն: Սա վկայում է, որ **ե** հոլովիչն արդեն գրաբարում մարդկանց հոլովում էր:

Ե հոլովիչը սեռական-տրականում դրվում էր վերջին բաղաձայնից առաջ: Եզակի բացառականում այս հիմքի վրա ավելանում էր **է** հոլովակերտը, գործիականում՝ **բ**: Հոգնակի ուղղականում **ք** հոգնակերտն ավելանում էր եզակի սեռական-տրականի հիմքին՝ ստեղծելով **եքք** կամ **եղք** վերջավորությունները՝ **ուստեքք, աստեղք, շիգեղք** (շիգղ=կոճակ, գարդ), **տարեքք**:

Ուղղ.	աստղ	աստեղք
Հայց.	(գ)աստղ	(գ)աստեղս
Սեռ.-տր.	աստեղ	աստեղց/աստեղաց
Բաց.	յաստեղէ	յաստեղց/յաստեղաց
Գործ.	աստեղր	աստեղրք/աստեղաւք
Ներգ.	յաստեղ	յաստեղս

Ուղղ.	ալիւր(ալեւր)	ալեւրք
Հայց.	(գ)ալիւր	(գ)ալեւրս
Սեռ.-տր.	ալեր	ալերց/ալերաց
Բաց.	յալերէ	յալերց/յալերաց
Գործ.	ալերք	ալերքք/ալերաւք
Ներգ.	յալեր	յալերս

Միջին հայերենի վաղ շրջանում այս հոլովումը դեռ պահպանվում է, բայց որպէս գրաբարաբանութիւն: 14-րդ դարից հետո այս հոլովման բառերը հիմնականում սկսում են հոլովվել **ի** հոլովիչով՝ **աստղի, աղբրի, դատրի**, բացառականը կազմում են **է** հոլովակերտով, որն արդեն ավելանում էր ոչ թե սեռականին, այլ ուղղականին՝ **(յ)աստղէ, (ի)կայսրէ**: Գործիականում մնան բառերը ավելի հաճախ ստանում են **ով** մասնիկը՝ **աստղով, կայսրով, ալրով**: Հոգնակի ուղղական էլ, **ք** հոգնակերտից բացի, սկսում է ստանալ **եր, ներ, նի** հոգնակերտները՝ **աստղեր, աստղնի, աղբրներ**:

Ուղղ.	աստղ	աստղեր, աստղնի
Հայց.	(գ)աստղ	(գ)աստղեր/(գ)աստղնի
Սեռ.-տր.	աստեղ/ աստղոյ/ու	աստղերոյ/աստղնոյ
Բաց.	(յ)աստեղէ /(յ)աստղէ	(յ)աստղերոյ/ու/է /(յ)աստղնոյ/ու/է
Գործ.	աստեղը/աստղով	աստղերով, աստղնով

Աշխարհաբարում այս հոլովումը վերանում է, դրան ենթարկվող բառերն անցնում են **ի** ընդհանրական հոլովման, հոգնակին կազմվում է **եր** կամ **ներ** հոգնակերտներով՝ կախված վանկերի քանակից: Վերջնականկում գաղտնավանկ ունեցող այսպէս կոչված մեկուկեսականիաները արևելահայերենում հոգնակին կազմում են **-եր**-ով, օրինակ՝ **կայսրեր, դուստրեր, ասպդեր, սանրեր**: Մի քանի բառերում **ե** հոլովիչով ձևերը պահպանվում են եզակի սեռականում՝ որպէս գրաբարյան կայուն զուգաձևութիւններ՝ **դուստր-դպրեր/դուստրի, կայսր-կայսեր/կայսրի**: Գրաբարյան սեռականի որոշ ձևեր դարձել են բառակազմական հիմ-

քեր՝ *ասար, ասարեղ-ասարդային* և *ասարեղային* կամ՝ *կայսր, կայսեր-կայսերապետություն, կայսերապաշտություն, կայսերական, տարր, տարեր - տարերային, եզր, եզեր - եզերք* և այլն:

ԽԱՌՆ ՀՈԼՈՎՈՒՄՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՋԱՐԳԱՑՈՒՄԸ

Ի-Ա խառն արտաքին հոլովում

Այս հոլովումը գրաբարի ամենատարածված հոլովումներից է. այս հոլովման ենթարկվում են ձևային տարբերակում չունեցող բազմաթիվ գոյականներ և ածականներ՝ *ազահ, ազար, աղքատ, ամ, աշխարհ, քա-զում, զազան, զաւազան, դեւ, երիտասարդ, երկիր, լաւ, խաւար, կարգ, չար, ոտիս, պայծառ, պարտէզ, սէգ, վէմ, տէգ, տիւնար, տկար, փիղ, օրհորդ* և այլն, ինչպէս նաև ներկա կամ ենթակայական դերբայը: Ձևա-յին ընդհանրություն ունեցող բառախմբերից առանձնացնենք հետևյալ բառերը, որոնք բառավերջում ունեն՝

- ակ, -անակ, -հակ* -աղիւսակ, աշտարակ, բաժակ, պսակ, պուրակ, աշտանակ, արգանակ, յաղթանակ, դղեակ, դայեակ, մանեակ, սե-նեակ...
- ական* – անապատական, շինական, փախստական...
- ածու* - ակնածու, նուագածու, ձեռնածու...
- արան*- գանձարան, պահարան, դատարան....
- էղ, -եղէն*- զօրեղ, հիւթեղ, հողեղէն, հրեղէն...
- իկ*- կապիկ, կօշիկ, ռոճիկ...
- իչ*- բրիչ, գրիչ, գործիչ...
- որդ*- առաջնորդ, ճանապարհորդ, որսորդ, երկրորդ, երրորդ...
- ոց*- խայթոց, փողոց, պահոց....
- ու*- արու, եղջերու, լեզու, մեղու....
- *ուկ* - աղմուկ, բազուկ, գեղջուկ, վիուկ...
- պան* - դռնապան, պահապան, պարտիզպան...
- սրան* - այգեստան, բուրաստան, հեռաստան....

-*ուր/աւոր* - զինուոր, աղանդաւոր, աղեղնաւոր, սպասաւոր...

-*անք* անձանցով անեզական գոյականները՝ աղաչանք, պաղա-
տանք, յանցանք, լկանք...

-մի շարք անեզական գոյականներ՝ արտասուք, խելք, կանք, միտք,
կառք, փառք:

Հոլովման ընթացքում առաջին հոլովիչը մասնակցում է եզակի սե-
ռական-տրական հոլովների թեքմանը՝ դրվելով բառավերջում, բացա-
ռականը կազմվում է **է** հոլովակերտով, գործիականը՝ **ւ** հոլովակերտով՝
աւ: Եզակի գործիականից սկսած՝ թեքումը կատարվում է **ա** հոլովիչով՝
աց, աւք՝ ներառյալ հոգնակի հոլովածները: Ներգոյական հոլովը եզակի
թվում կազմվում է *ի*+ *տրական*, հոգնակի թվում՝ *ի* + *հայցական* կա-
ռույցներով:

Ուղղ.	վեմ	վեմք	գթացող	գթացողք
Հայց.	(գ)վեմ	(գ)վեմս	(գ)գթացող	(գ)գթացողս
Սեռ.-տր.	վիմի	վիմաց	գթացողի	գթացողաց
Բաց.	ի վիմէ	ի վիմաց	ի գթացողէ	ի գթացողաց
Գործ.	վիմաւ	վիմաւք	գթացողաւ	գթացողաւք
Ներգ.	ի վիմի	ի վեմս	ի գթացողի	ի գթացողս

Ուղղ.	յանցանք
Հայց.	(գ)յանցանս
Սեռ.-տր.	յանցանաց
Բաց.	ի յանցանաց
Գործ.	յանցանաւք
Ներգ.	ի յանցանս

Միջին հայերենում այս հոլովումը, ինչպես մասնագամ խառը հո-
լովումները վերանում են: **ի-ա** վերջադրական հոլովման բառերն անց-
նում են **ի** վերջադրական հոլովման: Հիմնական պատճառը գործիական
հոլովի կանոնավորումն էր ընդհանրական դարձող **ով** հոլովակերտի մի-
ջոցով և՛ եզակի, և՛ հոգնակի թվերում: Աշխարհաբարը ժառանգում է մի-
ջինհայերենյան կանոնավորումը: Արդի գրական արևելահայերենում և

հատկապես արևմտահայերենում **ի-ա** խառը հոլովման եզակի գործիականի մի քանի ձևեր պահպանվում են իբրև մակբայներ, կապեր կամ եղանակավորող բառեր՝ *հրապարակալ, միջոցաւ, պատրճառաւ, հաւաստեաւ* և այլն:

Ի-Ա ներդրական հոլովում

Այս հոլովման բացառման սկզբունքով ենթարկվում են **ն-ով** և **նա-խորդող** բաղաձայնով ավարտվող այն բառերը, որոնք չեն ենթարկվում **ա** ներդրական հոլովման, օրինակ՝ *ազն, անձն, ափն, բեռն, բուռն, գառն, դաշն, թոռն, խաշն, լեառն, կաթն, կառափն, հարսն, սառն* և այլն: **Ի** հոլովվիչը մասնակցում է եզակի սեռական-տրական հոլովի թեքմանը՝ դրվելով բառավերջի **ն** բաղաձայնից առաջ, բացառականը կազմվում է **է** հոլովակերտով, գործիականը՝ **բ** հոլովակերտով՝ **ամբ**: Եզակի գործիականից սկսած, ներառյալ հոգնակի հոլովածները, թեքումը կատարվում է **ա** հոլովվիչով, որը ևս դրվում է **ն-ից** առաջ՝ **անց, ամբք**: Ներգոյական հոլովը եզակի թվում կազմվում է *ի+ տրական*, հոգնակի թվում *ի + հայցական* կառույցներով: Հոգնակին կազմվում է **ինք** կամ **ունք** հոգնակերտներով:

Ուղղ.	հարսն	հարսունք	լեառն	լերինք
Հայց.	(գ)հարսն	(գ)հարսունս	(գ)լեառն	(գ)լերինս
Սեռ.-տր.	հարսին	հարսանց	լերին	լերանց
Բաց.	ի հարսնէ	ի հարսանց	ի լեռնէ/լեառնէ	ի լերանց
Գործ.	հարսամբ	հարսամբք	լերամբ	լերամբք
Ներգ.	ի հարսին	ի հարսունս	ի լերին	ի լերինս

Միջին հայերենում այս հոլովումը վերանում է, սկսում է փոխվել նաև այս բառերի հնչյունական կազմը. վերջին **ն** հնչյունն ընկնում է: Այս արմատական հնչյունը հիմնականում վերականգնվում է հոգնակի թվում **եր** մասնիկից առաջ՝ **լեռ-լեռներ, եզ-եզներ**, բայց ոչ միշտ՝ **կաթ-կաթեր, մաս-մասեր**: Բառերի մեծ մասն անցնում է **ի** վերջադրական հոլովման՝ **մաս-մասի, կաթ-կաթի, բեռ-բեռի, գառ- գառի**, մի մասը սկսում է են-

թարկվել **ան** նորակազմ վերջադրական հոլովման, որտեղ **ա-**ն հոլովիչն է, **ն-**ն՝ վերականգնված բառավերջի հնչյունը: Գրաբարում արդեն այս հոլովման որոշ բառերի բացառականում **ի-**ի փոխարեն հանդես էր գալիս **ա** հոլովիչը՝ **ի գառանէ, ի բեռանէ, յեզանէ**: Աշխարհաբարում **ան** հոլովիչով հոլովվող բառերն ունեն **ի** հոլովիչով գուգաձևություններ՝ **եզեզան-եզի, լեռ-լեռան-լեռի, թոռ-թոռան-թոռի** ևն: **Անձ** գոյականը պահպանել է գրաբարատիպ հոլովման հետքեր գործիականում և հոգնակի ուղղականում՝ **անձ-անձամբ** և **անձով, անձինք** և **անձեր**: Ներգոյականի հին հոլովաձևերը կորցրել են իրենց նյութական իմաստը, վերածվել են կապերի՝ **հանձին, հանձինս**:

Ո-Ա ԽԱՌՆ ՀՈԼՈՎՈՒՄ

Գրաբարի ձևային հոլովումներից է. այս հոլովման ենթարկվում են բառավերջում **ի** հանգ ունեցող բազմավանկ հատուկ և հասարակ գոյականներն ու ածականները, ինչպես նաև **-իք**-ով ավարտվող անեզական գոյականները՝ *այգի, աղանի, ամեհի, առաքինի, բարի, զարի, զօրի, գերի, եղևնի, բշմամի, կարաղի, կենդանի, մարի, պարասխանի, փեղի, գեղանի, պիրանի, փիրուհի, քրմուհի, ծերունի, արգասիք, բաղանիք, ընտանիք, կարծիք, հարսանիք, Սմբարուհի, Տաճարուհի, Խոռխոռունի, Վարաժնունի* ևն: Պատմահամեմատական ուսումնասիրությունները վկայում են որ վաղնջահայերենում և հնագույն հայերենում **ի**-ով վերջավորվող բառերի դեպքում **ո** հոլովումը եղել է արական սեռի հոլովում, իսկ **ո-ա-**ն՝ իգական սեռի բառերի տարբերակիչ հոլովում, դասական գրաբարում այս սեռային տարբերակումն արդեն լիովին մթագնել էր: Վ. Առաքելյանը իբրև հիմնավորում բերում է հետևյալ հետևյալ համոզիչ օրինակները. *մաքի, մարի, յղի, այրի, օղի*, ինչպես նաև ծառերի անվանումները, *-ուհի* ածանցով կազմությունները, որոնք հնում իգական սեռի բառեր են եղել, դրանք հոլովվում են **ո-ա** խառն հոլովմամբ, իսկ *անղի, որղի* բառերը, որոնք արական սեռի են, հոլովվել են **ո** պարզ հոլովմամբ¹⁹⁵:

¹⁹⁵ Տե՛ս Վ. Առաքելյան, Գրաբարի քերականություն, Եր., 2010, էջ 66-67:

Եզակի սեռական-տրականում և բացառականում հանդես է գալիս **ո** հոլովիչը, բացառականը չունի է հոլովակերտը, այն նույն տրականն է՝ **ի** նախդրով, օրինակ՝ **մատանի՝ մատանույ, ի մատանույ, ո** հոլովիչից առաջ բառավերջի **ի**-ն դառնում է **ւ**, օրինակ՝ **քշնամի + ոյ=քշնամույ**: Գործիական հոլովում **ւ** հոլովակերտն է, որովհետև եզակի գործիականից սկսած և հոգնակի թեք հոլովումներում արդեն **ա** հոլովիչն է հանդես գալիս, որից առաջ **ի** ձայնավորը հնչյունափոխվում է **ե**-ի, օրինակ՝ **այ-գի + աւ=այգեաւ, այգի+ ագ=այգեաց**: Սեռական-տրական հոլովում **ո** վերջադրական հոլովիչից առաջ միշտ **յ** հոլովակերտն է հանդես գալիս, բայց ունենք բառեր, որոնք հանդիպում են **ջ** հոլովակերտով՝ **կղզուջ, տարուջ, տեղուջ, այգուջ**: Այս **ջ** հոլովակերտի առկայությամբ բացառականը ոչ թե տրականաձև է, այլ հաճախ ստանում է է հոլովակերտը՝ *ի տարուջէ, ի կղզուջէ, ի տեղուջէ*: Ներգոյականի իմաստն արտահայտվում է **ի** նախդրով և հայցական հոլովով՝ և՛ եզակի, և՛ հոգնակի թվերում: Եզակի ներգոյականի իմաստը երբեմն կարող է արտահայտվել նաև **ի+ ոջ** ձևով՝ *ի գինուջ, ի տեղուջ*: Այս հոլովման ենթարկվող որոշ բառեր ներգոյականում վկայված են նաև *ում*-ով՝ *ի հնում, ի նորում, ի մարմնում*:

Ուղղ.	տեղի	տեղիք	հարսանիք
Հայց.	(գ)տեղի	(գ)տեղիս	(գ)հարսանիս
Սեռ.-տր.	տեղույ/ոջ	տեղեաց	հարսանեաց
Բաց.	ի տեղույ/ոջէ	ի տեղեաց	ի հարսանեաց
Գործ.	տեղեաւ	տեղեաք	հարսանեաք
Ներգ.	ի տեղի/ուջ	ի տեղիս	ի հարսանիս

Միջին հայերենում այս հոլովումը վերանում է, **ի**-ով վերջացող բոլոր բառերն անցնում են **ո** վերջադրական պարզ հոլովման, միջին հայերենի ուշ շրջանում *ոյ> ու* հնչյունափոխության պատճառով դրանք սկսում են հոլովվել նաև նոր **ու** հոլովիչով՝ *այգուոյ> այգուոյ> այգու: Ի>ւ* հնչյունափոխությունն էլ աստիճանաբար դադարում է գործել. **ի**-ն ոյ-ից առաջ ընկնում է:

Աշխարհաբարում այս բառերը պատկանում են **ու** հոլովման, օրինակ՝ *պատրանի-պատրանու-պատրանուց, գուրի-գուրու-գուրուց*:

ՎԱՌԻԱՆ ՀՈԼՈՎՈՒՄ

Միջին հայերենում, ապա արևելահայ և արևմտահայ գրական հայերեններում գործում է *վա<ուան* հոլովումը, որին ենթարկվում են հիմնականում ժամանականիշ բառերը: Այս հոլովիչը ծագումով գրաբարյան է. *մահ* բառը գրաբարի քերականություններում նշվում է որպես *ա* ներդրական հոլովման բառ, սակայն նրա սեռականը կազմվում է *ուան* ձևությամբ՝ *մահ>մահուան*: Այս նորակազմ հոլովումը միջին հայերենի սկզբնական շրջանում չի հանդիպում սեռական-տրականի հոլովաձևով, այլ միայն վերականգնվում է բացառականի կազմությամբ՝ *վաղվրնէ, էգուցվրնէ, օրվրնէ*: Այս հոլովման են պատկանել նաև *գիշեր>գիշերվան, ցորեկ>ցորեկվան, փարի>փարվան* բառերը:

Միջին հայերեն

Ուղղ. գիշեր

Հայց. (գ)գիշեր

Սեռ.-տր. գիշերվան

Բաց. (ի)գիշերվրնէ

Գործ. գիշերով

Արևելահայերեն

Ուղղ. գիշեր

Սեռ.-տր. գիշերվա/գիշերի

Բաց. գիշերվանից/գիշերից

Գործ. գիշերվանով/գիշերով

Ներգ. գիշերում

Արևմտահայերեն

Ուղղ. գիշեր

Սեռ.-տր. գիշերուան/գիշերի

Բաց. գիշերուրնէ/գիշերէ

Գործ. գիշերով

Ավելի ուշ արևելահայ բարբառներում *վան* հոլովման վերջին *ն* ձայնորդը սկսում է շփոթվել որոշիչ հոդի հետ և ընկնում է, այստեղից էլ՝ *վան* ձևությամբ վերածվում է *վա* հոլովիչի: Այս *վան*-ը արևելահայերենում կարող ենք վերականգնել բացառական հոլովաձևերում՝ ամառ*վանից*, օր*վանից*:

Արդի արևելահայերենում *վա* հոլովման ենթարկվում են ժամանականիշ գոյականների մեծ մասը, ինչպես՝ օր, կեսօր, ցերեկ, ամառ, առավոտ և այլն, ժամանականիշ որոշ մակբայներ, երբ հարցահարաբերական դերանունը և այլն: Սրանք բացառականը, երբեմն նաև գործիականը կազմում են սեռական-տրականի հիմքից՝ օր-օր*վա*-օր*վանից*-օր*վանով*, չմեռ-չմեռ*վա*-չմեռ*վանից*-չմեռ*վանով* և այլն:

Արևմտահայերենում այս նույն իմաստային դաշտի բառերը ենթարկվում են *ուան* հոլովման՝ օր>օրուան, շաբաթ>շաբթուան, գիշեր>գիշերուան և այլն: Այս հոլովման պատկանող բառերի մի մասը և՛ արևելահայերենում, և՛ արևմտահայերենում կարող է հոլովվել *ի* ընդհանրական հոլովմամբ: Այդ դեպքում բացառական և գործիական հոլովաձևերն ավելի հաճախ կազմվում են ուղղականի հիմքից: Օրինակ՝ արևմտահայերենում՝ ամառ-ամառ*վան*/ամառ*ի*-ամառուրնէ/ամառէ, կէսօր-կէսօրուան/կէսօր*ի*-կէսօրուրնէ/կէսօրէ կամ արևելահայերենում՝ օր-օր*վա*/օր*ի*-օր*վանից*/օրից, շաբաթ-շաբաթ*վա*/շաբաթ*ի*-շաբաթ*վանից*/շաբաթից և այլն: Արևմտահայերենում ժամանականիշ որոշ գոյականներ գուգահեռաբար պահպանել են գրաբարյան ու հոլովման ձևեր՝ շաբաթ-շաբթու, ժամ>ժամու, փարի-փարու, առաւօր-առօրու և այլն:

ԱՆ ՀՈԼՈՎՈՒՄ

Ան հոլովումը միջինհայերենյան նորակազմ հոլովումներից է, որը ծագում է գրաբարյան ա և ի-ա ներդրական հոլովումներից: Երբ բառավերջի *ն* ձայնորդը բաղաձայն+ *ն* բառավերջ ունեցող բառերում աստիճանաբար սկսում է ընկնել, ինչպես՝ դուռն>դուռ, մուկն>մուկ, եզն>եզ, քեռն>քեռ, շարժումն>շարժում, անկումն>անկում: Այն պահպանվում է

միայն սեռական- տրականում՝ արդեն ձուլված *ա* հոլովիչին՝ դռան, մկան, եզան, բեռան, շարժման, անկման: Միջին հայերենում այս հոլովման պատկանում են նաև *-ակ*, *-իկ*, *-ուկ* բառավերջով կազմությունները, *ուղեղ/ըղեղ*, *գարուն*, *աշուն* և այլ բառեր՝ *լուսնեակ*>*լուսնեկան*, *կնիկ*>*կնկան*, *էրիկ*>*էրկան*, *ըղեղ*>*ըղեղան*, *գարուն*>*գարնան*, *աշուն*>*աշնան*:

Միջին հայերեն

Ուղղ.	աղջիկ
Հայց.	(զ)աղջիկ
Մեռ.-տր.	աղջկան
Բաց.	(յ)աղջկնէ
Գործ.	աղջկնով

Արևելահայերենում *ան* հոլովման ենթարկվում է գրաբարյան *ա* և *ի-ա* ներդրական հոլովումների պատկանող բառերի մի մասը.

ա) *ում* (*ումն*) ածանցով կազմված բառերը՝ *անկում*, *ուսում*, *շարժում*, *ոգեշնչում* և այլն: Այս բառերի գործիականը, որպես կանոն, կազմվում է գրաբարյան սկզբունքով՝ *ամբ* վերջավորությամբ, այսինքն՝ սեռական-տրականից *բ* հոլովակերտով՝ *անկմամբ*, *ուսմամբ*, *շարժմամբ*, *ոգեշնչմամբ*: Թեև ունենք նաև *ուկ* հոլովակերտով գործիականի ձևեր՝ *անկումով*, *ուսումով*, *շարժումով*, *ոգեշնչումով*:

բ) Գրաբարում *ն* վերջնահնչյուն ունեցած և այն կորցրած որոշ բառեր՝ *բեռ* – *բեռան*, *գառ*–*գառան*, *դուռ*–*դռան*, *եզ*–*եզան*, *թոռ*–*թոռան*, *լեռ*–*լեռան*, *ծոռ*–*ծոռան*:

գ) Տարվա եղանակների անունները, ինչպես՝ *գարուն*–*գարնան*, *աշուն*–*աշնան*: Այս բառերի բացառական հոլովը կազմվում է սեռական-տրականից՝ *ից* հոլովակերտով: Այսպես՝ *ձմռանից*, *աշնանից*, *գարնանից*, *ամռանից*:

դ) *Մանուկ* հասարակ գոյականը՝ *մանուկ*–*մանկան*:

Նշենք, որ վերոհիշյալ բառերի զգալի մասը կարող է հոլովվել նաև *ի* րնդիանրական հոլովիչով՝ *շարժում*–*շարժման*/*շարժումի*, *բեռ*–*բեռան*/*բե-*

նի, գառ-գառան/գառի, եզ-եզան-եզի, թռռ-թռռան/թռռի, լեռ-լեռան/լեռի, ծոռ-ծոռան/ծոռի, շարժան/շարժումի, անկում-անկման/անկումի և այլն:

Արևմտահայերենում *ան* հոլովման պատկանում են.

ա) *ուս* ածանցով կազմված բառերը՝ *բաժանում, հեռացում, ուսում, կերպում* և այլն, թեպետ այս բառերն արդեն ավելի հաճախ հոլովվում են *ի* հոլովիչով՝ *բաժանումի, հեռացումի, ուսումի, կերպումի*: Սրանց գործիականը, ի տարբերություն արևելահայերենի, ավելի ընդունված է կազմել *ով* ընդհանրական հոլովակերտով:

բ) Գրաբարում *ն* վերջնահնչյուն ունեցող սակավաթիվ բառեր՝ *բեռ-բեռան, դուռ-դռան, եզ-եզան, լեռ-լեռան, նուռ-նռան, թռռ-թռռան*: Այս բառերը ևս կարող են հոլովվել նաև *ի* հոլովիչով՝ *բեռի, դուռի, լեռի, նուռի, թռռի*: Իսկ *մուկ* և *շուկ* բառերի սեռական-տրականը ընդունված է կազմել *ի* հոլովիչով՝ *մուկի, շուկի*՝ ի տարբերություն արևելահայերենի, որը պահպանել է գրաբարյան հոլովատիպը:

գ) Տարվա եղանակների անունները. *գարուն* և *աշուն* բառերի համար արևմտահայերենի քերականներն առավել գերադասելի են համարում *ի* հոլովիչով ձևերը՝ *գարունի, աշունի*¹⁹⁶: Այս բառերի բացառականը և գործիականը կազմվում են ուղղականից և ոչ թե սեռական-տրականից:

դ) *Աղջիկ, մանուկ, էրիկ* և *կնիկ* բառերը:

Արևմտահայերեն

Ուղղ.	աղջիկ	աշուն
Սեռ.-տր.	աղջկան	աշնան
Բաց.	աղջիկէ	աշունէ
Գործ.	աղջիկով	աշունով

¹⁹⁶ Տե՛ս 3. Ավետիսյան, Արևելահայերենի և արևմտահայերենի զուգադրական քերականություն, էջ 76:

ՈՋ ՀՈԼՈՎՈՒՄ

Ոջ վերջադրական հոլովումը դարձյալ նորակազմ հոլովում է, քեև գրաբարում **ո** հոլովիչը երբեմն զուգորդվում էր ջ հոլովակերտի հետ *n* և *n-ա* խառը հոլովման բառերի եզակի սեռական-տրականում և դրանից կազմված բացառականում՝ *այգի-այգոյ-այգոջ-այգոջէ, կղզի-կղզոյ-կղզոջ-ի կղզոջէ, մի-միոյ-միոջ-ի միոջէ, տեղի- տեղոյ-տեղոջ-ի տեղոջէ: Կին և տիկին* բառերի հոլովման դեպքում այդ ջ-ն պարտադիր է՝ *կին-կնոջ, տիկին-տիկնոջ*: Գրաբարում *ոջ*-ը ինքնուրույն հոլովիչ չէր, այլ *n* հոլովման սեռական-տրականի կազմության ձևաբանական տարբերակ՝ *ոյ/ոջ*: Իսկ միջին հայերենում *n* հոլովիչը ձուլվում է ջ հոլովակերտին և ստեղծում նոր իմաստային հոլովում, որին ենթարկվում էին արդ, մարդ-կային և ազգակցական հարաբերություններ նշանակող բառեր՝ *ընկեր, տեր, քույր, կին, տեգր, տալ*: Միակ բացառությունը *զին* բառն էր՝ *զին-զնոջ*:

Միջին հայերեն

Ուղղ.	տէր
Հայց.	(զ)տէր
Սեռ.-տր.	տիրոջ
Բաց.	(ի)տիրոջէ /տիրոջմէ
Գործ.	տիրոջով /տիրոջմով

Գրական արևելահայերենում և արևմտահայերենում *ոջ* հոլովման ենթարկվող բառերի թիվը սահմանափակ է՝ *սկեսուր, տալ, տեգր/տագր, քույր, կին, ընկեր, տեր*, և վերջին 4 բառերից բաղադրված կազմությունները՝ *մորաքույր, տիկին, գործընկեր, տանտեր* և այլն: Այս բառերի բացառական և գործիական հոլովները կազմվում են սեռական-տրականի հիմքից: Ներգոյական հոլով այս բառերը չունեն նաև արևելահայերենում:

Արևելահայերենում միայն *ոջ* հոլովման պատկանում են *քույր, կին, ընկեր, տեր* բառերը, իսկ մնացածների համար արդեն ավելի կիրառա-

կան է *ի* հոլովումը: Արևմտահայերենում *ի* հոլովման անցած բառերի թվում է նաև *ընկեր-ը*, մասամբ նաև *տիկիկն-ը*, այսինքն՝ *ոջ* հոլովան տիրույթն ավելի փոքր է:

Արևելահայերեն

Ուղղ.	տեր	ընկեր
Մեռ.-տր.	տիրոջ	ընկերոջ
Բաց.	տիրոջից	ընկերոջից
Գործ.	տիրոջով	ընկերոջով

Արևմտահայերեն

Ուղղ.	տեր	ընկեր
Մեռ.-տր.	տիրոջ	ընկերոջ/ընկերի
Բաց.	տիրոջմէ	ընկերոջմէ/ընկերէ
Գործ.	տիրոջմով	ընկերոջմով/ընկերով

ՈՕ ՆԵՐՔԻՆ ՀՈՒՈՎՈՒՄ

Սա նոր հոլովում է, որն առաջացել է գրաբարում *այ* երկբարբառից կազմված *հայր, մայր, եղբայր* բառերի անկանոն հոլովման պատմական զարգացման արդյունքում: Գրաբարում դրանք հոլովվում էին *ի* հոլովիչով՝ *հայր>հաւր, մայր>մաւր, եղբայր>եղբաւր*: Տեղի էր ունենում *այ>աւ* հերթագայությունը, սակայն աստիճանաբար *աւ* երկբարբառը հնչյունափոխվում է, վերածվում նոր հնչյունի, որի արտահայտման համար 10-11-րդ դարերում փոխառում են նոր տառանշան՝ *օ*, որն էլ սկսում է գիտակցվել իբրև հոլովիչ՝ *այ>օ* անցումով:

Արևելահայերենում ուղղագրական բարեփոխման հետևանքով այդ *օ*-ն սկսում են գրել *ո*, և առաջանում է նոր ներքին հոլովում՝ *ո*, որը արևմտահայերենում *օ* է: Երկու գրական հայերեններում այս հոլովման ենթարկվում են *հայր, մայր, եղբայր* բառերը և այն բարդ կազմությունները, որոնց վերջին բաղադրիչը հիշյալ արմատներն են՝ *կնքահայր, վանահայր, խաչեղբայր, տիրամայր, հորեղբայր/հորեղբայր, մորեղբայր/մորեղբայր* և այլն: Բացառական և գործիական հոլովները կազմվում են

սեռական-տրականի հիմքից արևելահայերենում *ից* և *ով* վերջավորություններով, իսկ արևմտահայերենում՝ *-մէ*, *-մով*: Ներգոյական հոլով արդի գրական հայերենի երկու տարբերակներում էլ այս հոլովման բաները չունեն: Բերենք հարացույցների օրինակներ:

Արևելահայերեն

Ուղղ.	հայր	մայր
Մեռ.-տր.	հոր	մոր
Բաց.	հորից	մորից
Գործ.	հորով	մորով

Արևմտահայերեն

Ուղղ.	հայր	մայր
Մեռ.-տր.	հոր	մոր
Բաց.	հորմէ	մորմէ
Գործ.	հորմով	մորմով

ՀՈԳՆԱԿԻԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Անունների քանակական բնութագրման համար լեզուն մշակում է թվի քերականական կարգը: Հայերենի պատմական զարգացման ողջ ընթացքում քանակական բնութագրումը եղել է երկանդամ՝ եզակի և հոգնակի: Հնդեվրոպական մայր լեզվին և քույր լեզուներին զարգացման վաղ շրջանում հատուկ էր եռանդամ հակադրություն՝ եզակի, երկակի, հոգնակի: Հունաբան հայերենի ձևավորողները, այս հատկանիշը համարելով առավելություն, հայերենում ևս փորձում են առանձնացնել երկակի թվի ցուցիչ. անվանական հոլովման համակարգում երկու թվականի **ու** ձայնավորը դարձնում են երկակիակերտ ձևույթ՝ ստեղծելով հետևյալ հակադրությունը՝ **Պետրոս-Պետրու-Պետրոսք**: Սակայն մնան ձևերը գրաբարում գործնական կիրառություն չունեցան:

Երկակի թվի առանձնացման լեզվական որոշ միջոցներ անսպասելիորեն ի հայտ են գալիս միջին հայերենում, որոնք, անշուշտ, վաղնջա-

կան ծագում ունեին, եղել էին գրաբարի բարբառներում, բայց դասական և հետդասական գրաբարում վկայված չեն. կան չեն եղել, կան մեզ չեն հասել:

Միջին հայերենում երկակի թիվը արտահայտվում էր **ուի/վի** ձևությամբ, որը համակարգային բնույթ չունեւ, այլ մասնակի դրսևորումներ ուներ մարմնի գույգ անդամներ պարունակող բառերի համար, ինչպես օրինակ՝ **աչ-աչուի/վի, երես-երեսվի, ունք-ընքվի, ծունկ-ծնկվի, ձեռ-ձեռվի, ոտ-ոտվի** և այլն: Նշենք նաև, որ այս հոգնակերտը հանդիպում է նաև երկակիություն չենթադրող բառերի հետ՝ **դուռ-դուվի** (այս պարագայում նկատի կարող էին ունենալ երկվեդկ դռները), բայց **էշ-իշուի**, թեև ունենք **էշեր** հոգնակին, **միտք-մտվի, շուն-շնվի, պատճառ-պատճառվի** և այլն:

Գրական աշխարհաբարում այս երկակի հոգնակին վերանում է՝ պահպանվելով միայն բարբառներում:

Հայոց լեզվի զարգացման տարբեր շրջաններում հոգնակիակազմությամբ մասնակցում էին և՛ հոգնակերտ մասնիկները, և՛ հավաքական իմաստ արտահայտող ձևությները, որոնց միջև իմաստային տարբերություն ոչ միշտ կարելի էր տեսնել, օրինակ՝ **գուսան-գուսանք-գուսանեստան, էշ-իշան-էշք, վան-վանեար-վանք** և այլն:

Եզակի թիվը բառի ուղիղ ձևն է, այսինքն՝ բնութագրվում է հոգնակի թվանիշ ձևության բացակայությամբ: Բայց գրաբարում ունենք բառերի հատուկ կարգ, որոնք միշտ հանդես են գալիս **-ք** հոգնակերտ ձևությամբ՝ արտահայտելով և՛ եզակի, և՛ հոգնակի առարկաների կամ երևույթների իմաստ, օրինակ՝ **անէծք, բարք, խելք, կառք, միտք, պահք** և այլն: Սրանք կազմում էին անեզական անունների քերականական կարգը, որը միջին հայերենում աստիճանաբար վերանում է, որովհետև **-ք** հոգնակերտը կորցնում է իր բառահարաբերական իմաստը՝ վերածվելով բառակազմական ձևության՝ ածանցի:

Գրաբարում, ուղղական հոլով կազմող հոգնակերտներից բացի, կային նաև թեք հոլովների հոգնակերտներ, և բառերի հոլովման հարացույցն ընդգրկում էր թե՛ եզակի, թե՛ հոգնակի հոլովումները: Գրաբարում ուղղական հոլովի հոգնակին կազմվում էր **-ք** պարզ հոգնակերտով՝ հիմ-

նականում վերջադրական հոլովումների դեպքում, երբ բառի ուղիղ ձևին ավելանում էր **-ք**, այսպես՝ **զեն- զենք, տիտան-տիտանք, ընծայ-ընծայք, տի-տիք, իշխան-իշխանք**: Ներդրական **ե** և **ու** հոլովման դեպքում **-ք** հոգնակերտն ավելանում էր սեռական-տրականի հիմքին, օրինակ՝ **տարր-տարրք, աստղ-աստղք, ար-արուք**: Բացի պարզ **ք**-ից՝ գրաբարում կային ուղղական հոլովի բաղադրյալ հոգնակերտներ, որոնք իրենց կազմում ունեին **-ք՝ -ոնք, -անք, -ինք**, օր.՝ **քիրտն-քրտինք, ազն-ազունք, սերմն-սերմանք** և այլն: Այսկերպ հոգնակի կազմում են հիմնականում **ա, ի-ա** ներդրական հոլովման բառերը: Ունենք նաև **-իկ** հոգնակերտը *մարդ* > *մարդիկ* եզակի կիրառությամբ. *մարդիկ* հոգնակին հոլովվում է եզակիի ձևով՝ *մարդկան, ի մարդկանէ, մարդկամք, ի մարդկան*: Հավաքականակերտ հոգնակիակազմիչներ էին **ան, ական, անի, եան, եար, նեար, ստան, որեայ/որայ, տի/ոտի** ձևույթները: Այսպես՝ **գուսանական, ամրոցանի, գլխանի, բերդեան, գիւղեան, բանեար, վանեար, բարձկ-նեար, նաւկնեար, արտորեայ, վանորայ, մանկտի, ծակտի, փորոտի** և այլն: Այս բառաձևերը ևս հոլովվում էին եզակի ձևով:

Մեռական-տրական հոլովի հոգնակերտն էր **ց**-ն, հայցականինը՝ **ս**-ն, բացառականինը՝ **ց**-ն, գործիականինը՝ **ք**-ն:

Միջին հայերենում հավաքական իմաստ ունեցող ձևույթներն իմաստափոխվում են և դառնում հոգնակիակազմիչներ՝ դրվելով նաև այն բառերի վրա, որոնք հավաքականության իմաստ չէին արտահայտում: Անեզական գոյականների քերականական կարգը վերանում է, դրանց հոլովման հարացույցը փոխվում է: Գրաբարյան անեզականները արդեն հոլովվում են եզակի թվով, ունեն **-եր** ձևույթով հոգնակի՝ խօսք-խօսքեր, միտք-մտքեր: Ճիշտ է՝ պահպանվում են դրանց հարացուցային հին ձևերը ևս, բայց դրանք արդեն գրաբարաբանություն են և ոչ թե միջինհայերենյան քերականական իրողություն:

Անունների բացարձակ մեծամասնությունը հոգնակին կազմում է 4 մասնիկներով՝ **-ք, -եր, -նի, -ներ**¹⁹⁷: Այսինքն՝ **ք** հոգնակերտը սկսել էր զիջել իր դիրքերը, փոխարինվել այլ հոգնակերտներով: Հոգնակի թվի

¹⁹⁷ Առավել մանրամասն տես՝ *Աղնարկների միջին գրական հայերենի պարունության*, հ. Բ, էջ 34-63:

կազմության ժամանակ զուգաձևությունները բազմաթիվ էին, քեւ **ք**-ն դեռ կարող էր դրվել բոլոր անունների վրա՝ կազմելով հոգնակի: Կիրառության հաճախականությամբ վերը նշված 4 հոգնակերտներին հաջորդում են **-ունք, -ուի/վի, -անի, -ստան, -այք, -որայք** մասնիկները: Եզակի վկայվածությամբ ունենք՝ **-իք, -տի, -աք, -ան, -ենի, -արէք, -իկ, -եան, -որ, -ոնք, -էք** հոգնակերտները: Միջին հայերենում հաճախ այս հոգնակերտները զուգորդվում են, ունենք **երք, երայք, երվի, երնի, վանք, ստաններ** և այլ բաղադրյալ ձևերը: Օրինակ՝ **գետերք, դեղերայք, զօղվածերվի, սրտերնի, իշվանք, հայրենեստաններ** և այլ կրկնակ հոգնակերտով բառերը, որոնք վկայում են միջին հայերենում հոգնակիակազմության բանաձևի նոր փոփոխությունների ծագման և որոնումների մասին: Հոգնակերտ նոր մասնիկների մեծ մասը գրաբարյան է և ծագել է պատմական հնչյունափոխության հետևանքով, փոքր մասը բարբառային ծագում ունի: Աշխարհաբարում հաղթանակած **-եր** և **-ներ** համակարգային հոգնակերտները գրաբարյան ծագման են. **եար>եր, նեար>-ներ**, վերջին հոգնակերտի առաջացումը որոշ քերականներ բացատրում են այլ կերպ՝ **նի+եար**:

Միջին հայերենում տարածված **-եր, -ներ, -նի, -ուի/վի**, նաև **-ստան, -տի** հոգնակերտները հոլովվում են հիմնականում **ոյ** վերջադիրական հոլովմամբ, որը միջին հայերենի երկրորդ շրջանում՝ 14-րդ դարից հետո, սկսում է հնչյունափոխվել **ու-ի՝ ոյ>ու**, այսպես՝ **ազգերոյ, ծաղկնոյ/ու, կարասներոյ/ու, մեղուներոյ/ու, իրվոյ, քոյրվտոյ, հայրենեստաններոյ** և այլն: Որոշ դեպքերում ունենք նաև **ի** հոլովմամբ վկայված **եր** հոգնակերտով ձևեր, օրինակ՝ **աչեր-աչերոյ/աչերու, աչերի**, բայց վերջիններս տարածված չեն: Այսպիսով, միջին հայերենում հոգնակի թվի ամենատարածված հոլովումը **ոյ**-ն է՝ հետագա **ու** հնչյունափոխությամբ: Գրաբարյան **-ք** մասնիկը պահպանած բառերի հոգնակի հոլովումը գրաբարատիպ է՝ **ս, ց**, հոգնակերտների պահպանմամբ: Աշխարհաբարում ևս **ք** պարունակող բաղադրյալ հոգնակերտների դեպքում ունենք գրաբարատիպ **ց** հոլովում՝ **Արմենենք-Արմենենց, կանայք-կանանց** և այլն:

Արդի հայերենում հոգնակիակազմությունն առավելագույնս պարզեցված է՝ կցական լեզուների օրինաչափություններով. հոլովական

տարբեր իմաստներ արտահայտող ձևությոններն ավելանում են բառի հոգնակի ձևին, ուստի գրեթե բոլոր բառերի հոգնակի հարացույցը նույն սկզբունքով է կազմվում: Աշխարհաբարում ընդունված է միավանկ բառերի հոգնակին կազմել **-եր** մասնիկով, իսկ բազմավանկների՝ **-ներ**՝ իրենց ներքին բացառություններով, ըստ այդմ՝ արևելահայ գրական լեզվում բառերի հոգնակի հարացույցը բացարձակ մեծամասնությամբ **ի** ընդհանրական հոլովման է՝ **քարեր/ը, քարերի/ն, քարերից, քարերով, քարերում**, իսկ արևմտահայ գրական լեզվում՝ **ու**, որը ծագումով միջին-հայերենյան **ոյ** հոլովման պատմական զարգացումն է՝ **ոյ>ու** հնչյունափոխությամբ, օրինակ՝ **քարեր, քարերու/ն, քարերէ/ն, քարերով**:

**ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԵԶԱԿԻ ԵՎ ՀՈԳՆԱԿԻ
ՀՈԼՈՎՄԱՆ ՀԱՐԱՑՈՒՅՑՆԵՐ**

Վերջադրական թեքում

Ի հոլովում

Ուղղ.	ազգ	ազգեր
Հայց.	(զ)ազգ	(զ)ազգեր
Մեռ.-տր.	ազգի	ազգերոյ/ու/ի
Բաց.	(յ)ազգէ	(յ)ազգերոյ/ու/է
Գործ.	ազգով	ազգերով

Ո հոլովում

Ուղղ.	ամիս	ամիսք	անսիզ	անսիզնի
Հայց.	(զ)ամիս	(զ)ամիսս	(զ)անսիզ	(զ)անսիզնի
Մեռ.-տր.	ամսոյ	ամսոց	անսիզոյ	անսիզոյ/ու
Բաց.	(յ)ամսոյ/է	(յ)ամսոց	(յ)անսիզոյ/է	(յ)անսիզոյ/ու/է
Գործ.	ամսով	ամսովք	անսիզով	անսիզով

Ու հոլովում

Ուղղ.	այգի	այգիք	գլուխ	գլխնի
Հայց.	(գ)այգի	(գ)այգիս	(գ)գլուխ	(գ)գլխնի
Մեռ.-տր.	այգու	այգեաց/եց	գլխու	գլխնոյ/ու
Բաց.	(յ)այգ(ու)է	(յ)այգեաց/եց	(ի)գլխէ	(ի)գլխնոյ/ու
Գործ.	այգով	այգովք	գլխով	գլխնով

Ան հոլովում

Ուղղ.	աղջիկ	աղջկներ
Հայց.	(գ)աղջիկ	(գ)աղջկներ
Մեռ.-տր.	աղջկան	աղջկներոյ/ու
Բաց.	(յ)աղջկնէ	(յ)աղջկներոյ/ու/է
Գործ.	աղջկնով	աղջկներով

Ա հոլովում

Ուղղ.	Ադամ
Հայց.	(գ)Ադամ
Մեռ.-տր.	Ադամայ
Բաց.	(յ)Ադամայ/է
Գործ.	Ադամաւ

Եան հոլովում

Ուղղ.	ծնունդ	ծնունդք
Հայց.	(գ)ծնունդ	(գ)ծնունդս
Մեռ.-տր.	ծննդեան	ծննդոց
Բաց.	(ի) ծննդենէ	(ի) ծննդոց
Գործ.	ծննդով	ծննդովք/օք

Վան հոլովում

Ուղղ.	գիշեր	գիշերներ
Հայց.	(գ)գիշեր	(գ)գիշերներ
Մեռ.-տր.	գիշերվան	գիշերներոյ/ու

Բաց.	(ի) գիշերվնէ	(ի) գիշերներոյ/ու/է
Գործ.	գիշերով	գիշերներով

Ոջ հոլովում

Ուղղ.	տէր	տէրեր
Հայց.	(զ)տէր	(զ)տէրեր
Մեռ.-տր.	տիրոջ	տերերոյ/ու
Բաց.	(ի) տիրոջէ	(ի) տերերոյ/ու/է
Գործ.	տիրոջով	տէրերով

Ներդրական քերում

Ա հոլովում

Ուղղ.	տուն	տնվի
Հայց.	(զ)տուն	(զ)տնվի
Մեռ.-տր.	տան	տնվոյ/ու
Բաց.	(ի)տնէ	(ի)տնվոյ/ու
Գործ.	տնով	տնվով

Եա հոլովում

Ուղղ.	հիւնդութիւն	հիւնդութիւններ
Հայց.	(զ)հիւնդութիւն	(զ)հիւնդութիւններ
Մեռ.-տր.	հիւնդութեան	հիւնդութիւններոյ/ու
Բաց.	(ի) հիւնդութենէ	(ի) հիւնդութեններոյ/ու
Գործ.	հիւնդութենով	հիւնդութեններով

Ի հոլովում

Ուղղ.	անձն	անձներ
Հայց.	(զ)անձն	(զ)անձներ
Մեռ.-տր.	անձին	անձներոյ/ու
Բաց.	(յ)անձնէ	(յ)անձներոյ/ու/է
Գործ.	անձով /օմ	անձներով

ԱՌԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Լեզվի մեջ ընդհանուրի և մասնավորի, որոշյալի և անորոշի իմաստներն արտահայտելու համար կիրառվում են հոդերը՝ որպես առկայացման քերականական կարգի ցուցիչներ: Գրաբարում անորոշն արտահայտելու համար անուն խոսքի մասերի վրա սովորաբար որևէ քերականական ձևույթ չի դրվում. անորոշ առումը աննշույթ է՝ *այր, կին, իշխան, արքայ*, թեև առարկայի կամ անձի, նրա որակի անորոշությունը ցույց տալու համար անուն խոսքի մասերը կարող են իբրև որոշիչ ստանալ անորոշ դերանունները՝ *ուն, որ, իմն, ինչ, մի*, որոնք, որպես կանոն, հետադաս կիրառություն ունեն: *Ուն, որ* դերանուններն անորոշություն են արտահայտում անձերի վերաբերմամբ՝ *կին ուն, տեր որ*, իսկ *իմն, ինչ* ձևերը՝ առարկաների համար՝ *բան իմն, լիառն ինչ*: Մի թվականից ծագած անորոշ *մի* դերանունը կիրառվում է թե՛ անձերի, թե՛ առարկաների վերաբերմամբ՝ *եղբայր մի, գիտ մի*:

Ինչպես նշում է Հ. Աճառյանը, որոշյալ հոդը գրաբարում յուրօրինակ իմաստային մասնավորեցում ունի. «Որոշյալ հոդը գրաբարում ամենևին նման չէ ո՛չ հունարենի, ո՛չ եվրոպական լեզուների և ո՛չ էլ աշխարհաբարի հոդին»¹⁹⁸: Եթե եվրոպական լեզուներում, ինչպես և աշխարհաբարում որոշյալ հոդը միայն մեկ իմաստ ունի, այն է՝ ցույց տալ, որ տվյալ առարկան կամ անձը խոսքի մեջ արդեն հիշատակված են, այսինքն՝ ծանոթ, ապա գրաբարում որոշյալ հոդը խոսքի մեջ որոշյալ առարկա կամ անձ նշանակելուց բացի ցույց է տալիս երեք դեմքերի՝ խոսողի, խոսակցի և երրորդ անձի հետ տվյալ առարկայի հարաբերակցությունը: Ըստ այդմ՝ ունենք երեք հոդ՝ *ս, դ, ն*: Այս ձևույթները համապատասխանում են *ես, դու, նա* կամ *այս, այդ, այն* դերանուններին: Հ. Աճառյանը ցույց է տալիս, որ գրաբարում այս հոդերը ի սկզբանե ստացական նշանակություն չունեին, ինչպես աշխարհաբարում, այլ ցուցական դիմորոշ էին: *Ս*-ն ցույց էր տալիս առաջին դեմքի հետ հարաբերակցություն, *դ*-ն՝ երկրորդ, *ն*-ն՝ երրորդ: Օրինակ՝ Եւ խօսեցաւ Եղիսէ

¹⁹⁸ Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. III, Եր., 1957, էջ 959:

ընդ կնոջն, գորոյ կեցոյց գորդին, եւ ասէ, արի գնա դու եւ տուն քո եւ լեր պանդուխտ ուր ես եւ պանդխտիցիս, զի կոչեաց տէր սով ի վերայ երկրիս... (Թագաւ. ԳԼ. Ը 1), ...գտաւ կնճիռսն յարսդ Յուդայ եւ ի բնակիչսդ Երուսաղեմի... (Երեմիա, ԳԼ. ԺԱ 9): Այս նախադասութիւնների մեջ *կնոջն* նշանակում է այն կնոջը, *գորդին* = այն որդին, *ի վերայ երկրիս* = այս երկրի վրա, *յարսդ* = այս այրերի մեջ, *ի բնակիչսդ* = այս բնակիչների մեջ: Հոդերի այս յուրահատկությունը Հ. Աճառյանը, հետևելով անցյալի մեր քերականներին, ինչպես նաև Ա. Մեյեին, համարում է գրաբարի լեզվական ճոխության դրսևորումներից մեկը. «Գրաբարի մեծ առավելություններից է այն, որ միայն մի վերջնահար ձայնով ոչ միայն անորոշը դարձնում է որոշյալ, այլև միաժամանակ որոշում է նրա դեմքն ու դիրքը, ժամանակը: Դիմորոշ հոդերի ճիշտ կիրառությամբ է, որ երևան է գալիս հայերենի նախադասության հստակությունը, և այն հեղինակներն ու թարգմանիչները, որոնք կիրառում են այդ հոդերը մշտապես և ճիշտ գործածությամբ, տալիս են դրանով իրենց ոճին կյանք և հրապուրիչ արտահայտություն: Այս կետում ուրիշ ոչ մի հնդեվրոպական լեզու չի հասնում հայերենին»¹⁹⁹:

Գրաբարում *ս, դ, ն* հոդերը կարող են դրվել բոլոր հոլովների վրա, այսպես՝ Որ յետ սակաւ ինչ ատուրց *թագաւորելոյն* իւրոյ, անցեալ *զկամբջաւն* Արտաշատ քաղաքի՝ որսալ կինճս եւ իշա վայրիս զակամբք Գինայ, աղմկեալ ի ցնորից իմն խելագարանաց, ընդ վայր յաժելով *երիվարան*, անկանի խոր իմն... *ի ծննդենէն* եւեթ մոլութեամբ լեալ (Խորենացի, 2-րդ, ԿԱ), ... իսկ եթէ *ի* նմին *յամառութեանն* կացցեն (Եզնիկ, 24): Գրաբարում որոշիչ հոդի իմաստը կարող է արտահայտվել նաև *զ* նախդրի միջոցով, բայց միայն եզակի և հոգնակի հայցական հոլովի դեպքում, ընդ որում՝ այս *զ* նախդրի առկայության դեպքում անգամ կարող էին դրվել *ս, դ, ն* հոդերը, օրինակ՝ ... *թէ որպէս կենդանացոյց գորդին մեռեալ* ... (Թագաւ. ԳԼ. Ը 1) կամ *դարձո՜ղմս զամենայն զարդինսն*... (Թագաւ. ԳԼ. Ը 1):

¹⁹⁹ Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հատոր III, Եր., 1937, էջ 961:

Գրաբարում հողերի կիրառության հետ կապված՝ պետք է նշել հետևյալ օրինակափոխությունները:

ա) Հատկացուցիչ-հատկացյալ կապակցություններում հողը, ի տարբերություն, աշխարհաբարի, հատկացուցչի վրա է դրվում, բայց եթե հատկացուցիչը հատուկ անուն է՝ հատկացյալի վրա՝ Դարձան *յա-նիրաւութիւնս հարցն* իւրեանց առաջնոց... (Երեմիա, ԳԼ. ԺԱ 10), ..Ձի եւ անուն քաղաքին Գերեզման կոչեսցեն... (Եզեկիէլ, ԳԼ. ԼԹ 15), ի վերայ *բնակչացն Անաթովբայ* ... (Երեմիա, ԳԼ. ԺԱ 23):

բ) Որոշիչ-որոշյալ կապակցություններում հողը դրվում է որոշյալի վրա, իսկ եթե որոշյալը հատուկ անուն է՝ որոշիչ, այսպես՝ ...Եւ առի *զգաւազանն իմ զգեղեցիկ*... (Չաքարիա, ԳԼ. ԺԱ, 10), ...եւ ընկեցի *զգաւազանն երկրորդ* ... (Չաքարիա, ԳԼ. ԺԱ, 14) կամ արքայն Կիւրոս... (Գիրք Եզրի առաջին ԳԼ. 2, 24):

Գրաբարում որոշյալության իմաստը բավական ճկուն արտահայտության ձևեր ունի, այսպես՝ հատուկ անունները սովորաբար հող չեն ստանում, քեւ որոշյալ են, երբեմն հող են ստանում դրանց որոշիչները: Բերենք բնագրային համապատասխան օրինակներ՝ ...իբրեւ լուաւ *Յովնաթան* զպատգամն ... (Մակաբայեցոց Առաջին, ԳԼ. Ժ, 74),...եւ պատանեակն *Անդիոքոս* ընդ մմա... (Մակաբայեցոց Առաջին, ԳԼ. ԺԱ, 54): Հող չեն ստանում նաև բնության մեջ գոյություն ունեցող եզակի երևույթների անունները, ընդհանուր, վերացական իմաստով գործածված հասկացությունների անվանումները, օրինակ՝ ...*ջուր* ոտից իմոց ոչ ետու... (Աւետարան ըստ Ղուկասու ԳԼ. Է, 44), *դէւ* գոյ ի մմա... (Աւետարան ըստ Ղուկասու ԳԼ. Է, 33-34), ...*որդի* մարդոյ ուտէ եւ ըմպէ... (Աւետարան ըստ Ղուկասու ԳԼ. Է, 34-35):

Միջին հայերենում առկայացման քերականական կարգի դրսևորման գրաբարյան ձևերը դեռ պահպանվում են, սակայն *ս*, *դ* հողերի մեջ ընդգծվում է ստացականության իմաստը: Որոշյալության համար առանձնանում է *ն* հողը, իսկ անորոշությունը սկսում է արտահայտվել կա՛մ հողի բացակայությամբ, կա՛մ *մի/մին/մը* անորոշ դերանվան ձևերով: *Ոմն, ոք, իմն, ինչ* ձևերն աստիճանաբար ջնջվում են: Արևմտահայ աշխարհաբարում պահպանվում է անորոշի միջինհայերենյան *մը* ձևը,

որը հետադաս կիրառություն ունի՝ *մարդը մը, կին մը*: Արևելահայերենում գրաբարյան *մի* սկզբնաձևն է, բայց արդեն նախադաս կիրառությամբ, որովհետև իբրև թվական՝ հանդես է գալիս *մեկ-ը՝ մի մարդ, մի կին*:

Աշխարհաբարի որոշիչ հոդն է *և* կամ *ը*: Որպես կանոն, *և* ստանում են ձայնավորահանգ բառերը՝ *եկեղեցին, գուրին, թագուհին*, իսկ *ը*՝ բաղաձայնահանգ՝ *հայրը, քույրը, տերը*: Այս *ը*-ն առաջացել է *-ըն* հանգող բառերից. անշեշտ հնչման պատճառով պատմական զարգացման ընթացքում այս բառերը կորցրել են իրենց բառավերջի *և*-ն՝ *մուկն> մուկը> մուկ, դուռն> դուռը> դուռ* և այլն: Բառավերջի *ը*-ն սկսում է ըմբռնվել որպես որոշյալ հոդ, և բաղաձայնահանգ բառերը սկսում են ստանալ ոչ թե *և*, այլ *ը* նորաստեղծ որոշիչ հոդը: Անգամ այն բառերում, որտեղ գրաբարյան արմատական *և*-ն չի ընկել, այն սկսում է գիտակցվել իբրև հոդ և մասամբ փոխարինվում է *ը*-ով՝ *տասն> տասը, դառն> դառը, խառն> խառը*:

Եթե խոսքի շղթայում որոշյալ բառին հաջորդում է ձայնավորով սկսվող բառ, ապա նրա *ը* հոդը կարող է փոխարինվել *և*-ով՝ հորանջից խուսափելու համար, բայց այս կանոնը պարտադիր չէ: Այսպես՝ *Արմենն ասաց // Արմենը ասաց*: Եթե ուզում ենք տրամաբանական շեշտով ընդգծել որոշյալ բառը, ապա նրա *ը* հոդը *և* չի դառնում՝ *Արմենը ասաց*: Նույն ձևով և հաջորդող *սկ, սպ, սր, գգ, գբ* և մնացած հնչյունակապակցություններով սկսվող բառերից առաջ կարող է լինել թե՛ *ը*, թե՛ *և*, ինչպես՝ *դասը սկսել // դասն սկսել*:

Ընդ որում՝ արևելահայ աշխարհաբարում միայն ուղղական և սեռական-տրական հոլովներն են որոշյալ *ը/և* հոդ ստանում, բացառական, գործիական և ներգոյական հոլովները հոդ չեն ստանում: Հավելենք, որ արևմտահայ գրական լեզվում հատկացուցիչը, ի տարբերություն արևելահայերենի, կարող է հոդ ստանալ՝ *Գրիգորին տունը, Հայաստանին յույսը, սրբին մէջ* և այլն:

Ս, դ, և հոդերը գրաբարում կարող են դրվել նաև բայ-ստորոգյալների վրա՝ փոխարինելով գեղչված դերանուն ենթականերին կամ խնդիրների, այսինքն՝ *ս* նշանակում է *ես, սա, այս* և սրանց հոգնակները, *դ* =

դու, դա, այդ և դրանց հոգնակիները, *ն* = *նա*, *այն* և նրանց հոգնակիները: Որպես կանոն, դրանք դրվում են հարաբերական դերանուններով գլխավոր նախադասությանը կապվող երկրորդական նախադասությունների ստորոգյալների, հազվադեպ՝ այլ անդամների վրա, օրինակ՝ Քաղցրութեամբ լո՛ւր գոր ասելոցս ենք (Եղիշէ, էջ 45) = Քաղցրությամբ լսիր այն, ինչ մենք ենք ասելու, կամ՝ Խիստ են խնդրուածքդ գոր խնդրեցերդ (Բուզանդ, 5-րդ, Է) = Խիստ են այդ խնդրանքները, որ դու խնդրեցիր, ...գոր ինչ խնդրեցերձ, երթ տուեալ լիցի քեզ... որ ինչ յինէնս խնդրեցեր փոխանակաց քոց (Բուզանդ, 5-րդ, Է) = այն ինչ որ խնդրեցիր, գնա՛, թող տրվի քեզ, ինչ որ ինձանից խնդրեցիր քոնի փոխարեն, ...աւա՛ր գոր ասեմքս քեզ (Բուզանդ, 4-րդ, ԾԴ) = արա՛ այն, ինչ մենք ենք քեզ ասում: Նման կառույցներ միջին հայերենում արդեն չկային:

Ս, դ, ն հոդերը գրաբարում կարող էին մասնատացական իմաստ արտահայտել, բայց այդ դեպքում նրանք հիմնականում գուգորդվում էին համապատասխան ստացական դերանունների հետ, օրինակ՝ եւ բարկացեալ տէրն *նորս* (Մատթ., ԺԸ, 34) կամ ...ի մարմինդ քո բուսցի փուշ եւ տատասկ (Բուզանդ, 6-րդ, Թ) = քո մարմնին կբուսնի փուշ և տատասկ: *Ս, դ* հոդերի ստացականության իմաստը հայերենի պատմական զարգացման ընթացքում խորանում է, դառնում է հիմնական՝ դուրս մղելով ցուցականության իմաստը: Այս պարագայում ստացական դերանունների կիրառությունը դառնում է այլևս ավելորդ՝ *գիրքս, գիրքդ*, ոչ թե՛ *իմ գիրքս, քո գիրքդ*:

ԱԾԱԿԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Ածական են կոչվում այն բառերը, որոնք արտահայտում են առարկայի հատկանիշ: Հայերենի զարգացման բոլոր շրջաններում ածականը բաժանվել է երկու տեսակի՝ որակական և հարաբերական՝ ըստ իրենց արտահայտած հատկանիշների բնույթի: Որակական ածականները արտահայտում են առարկաների որակական հատկանիշ ուղղակի կերպով, առանց միջնորդավորվածության: Հարաբերական ածականները

արտահայտում են առարկայի միջնորդավորված հատկանիշ: Գրաբարում որակական ածականներին բնորոշ են համեմատության աստիճանների, հոլովման, թվի, հոլովի և առկայացման քերականական կարգերը: Հարաբերական ածականներն ունեն նույն քերականական կարգերը՝ բացառյալ համեմատության աստիճանները:

Գրաբարում համեմատության աստիճանների կազմության սկզբունքը միաձև չէր: Հնդեվրոպական մայր լեզվի համեմատության աստիճանների կազմության սկզբունքը ջնջվել էր: Համեմատության աստիճանները երեքն էին՝ որակական, բաղդատական կամ համեմատական և գերադրական: Դրական աստիճանը ածականի ելակետային ձևն էր՝ *քաջ, գեղեցիկ, իմաստուն*: Բաղդատական աստիճանը կազմվում էր կա՛մ ածանցմամբ, կա՛մ նկարագրական եղանակով: Բաղդատականի ածանցը **գոյն**-ն էր, ինչպես՝ *քաջագոյն*-ավելի քաջ, *գեղեցկագոյն*-ավելի գեղեցիկ, *իմաստնագոյն*-ավելի իմաստուն և այլն: Նկարագրական եղանակով բաղդատական աստիճանի իմաստն արտահայտվում էր **ածականի ուղիղ ձև + քան նախադրություն + համեմատելի բառի հայցական հոլովաձև**՝ որպես **քան**-ի խնդիր: Օրինակ՝ *քաջ քան զԲել - ավելի քաջ, քան Բելը* կամ *Բելից քաջ, իմաստուն քան զհնքն- իրենից իմաստուն, գեղեցիկ քան զքազուհի-քազուհուց ավելի գեղեցիկ*: Բաղդատական աստիճանը կարող էր արտահայտվել նաև այս երկու եղանակների համադրմամբ՝ *քաջագոյն քան զԲել, իմաստնագոյն քան զհնքն, գեղեցկագոյն քան զքազուհին*: Ընդ որում, **-գոյն** ածանցն արդեն գրաբարում կարող էր արտահայտել ոչ միայն բաղդատականի, այլև գերադրականի իմաստ, այսինքն՝ ածականների համեմատության սկզբունքները դեռևս մշակման շրջանում էին, և հայերենն աստիճանաբար ընտրում էր այն ձևույթները, որոնք համեմատության աստիճանները կկազմեին հնարավորինս միօրինակ:

Մայր լեզվի բաղդատական աստիճան կազմող *yes և *tero մասնիկները հայերենը չի պահպանել: Հ. Աճառյանը *tero-ի եզակի հետք է տեսնում *վարքար* բառում> վատ + **քաղ**, բայց այս բառը հայերենը փոխառել է պարսկերենից (*քար, քարին* մասնիկները պարսկերենում համեմատական և գերադրական աստիճանների արտահայտիչներ են), ոչ

թե պահպանել մայր ձևը, ուստի *վարքար*-ից կազմվում է *վարքարագոյն* բաղդատականը²⁰⁰: Գիտնականը անստույգ է համարում **-գոյն** մասնիկի կապը իրանական ծագման **գոյն** բառի հետ և մասնակի ընդհանրություն է տեսնում մեր **-գոյն**-ի և բասկերենի **go** մասնիկի հետ, որը ևս բաղդատական է կազմում²⁰¹:

Գերադրական աստիճանը գրաբարում կազմության միասնական սկզբունք չուներ. մայր լեզվի *isto ձևությոն ջնջվել էր: Այս աստիճանի իմաստը հիմնականում արտահայտվում էր սաստկական մակբայների միջոցով՝ **կարի, սաստիկ, քաջ, յոյժ, անհնարին** և նման մակբայներ + ածականի ելակետային ձև, օրինակ՝ *քաջ իմաստուն*- ամենաիմաստուն, *անհնարին զեղեցիկ*-զեղեցկագույն, *յոյժ քաջ*-քաջագույն կամ ամենաքաջ: Հունաբան և հատկապես լատինաբան հեղինակները գերադրականի կազմության այս ձևի փոխարեն առաջարկում էին **գունեղ** ձևությոն կիրառել՝ *քաջ-քաջագոյն-քաջագունեղ*:

Աճառյանի հավաստմամբ՝ հետդասական գրաբարում **ամեն** դերանունը, որը սկզբում դրվում էր միայն բայարմատների վրա՝ կազմելով բայանուններ (օրինակ՝ *ամենիմաց*- ամեն ինչ իմացող, *ամենարես*- ամեն ինչ տեսնող, *ամենակառոյց*- ամեն ինչ կառուցող), սկսում է դրվել նաև ածականների վրա՝ նրանց հաղորդելով գերադրականի իմաստ, ինչպես՝ *ամենաժուժկալ, ամենասուրբ*:

Միջին հայերենում ածականների համեմատության աստիճանների կազմությունը կրում է հետևյալ փոփոխությունները. բաղդատականի կազմիչ **-գոյն** ածանցը չի կիրառվում, նրա փոխարեն որակական ածականից առաջ դրվում է **այլ** բառը, իսկ համեմատելի բառը ստանում է **քան** կամ **քանց** նախադրությունը՝ *այլ հին*- ավելի հին, *այլ նոր*-ավելի նոր, *այլ աղեկ*-ավելի լավ, *այլ կանուխ*-ավելի վաղ: Այս **այլ**-ը կարող էր նաև հնչյունափոխվել **էլ**-ի կամ **ալ**- ի՝ **էլ աղուոր/ ալ աղուոր, էլ մեծ, էլ անուշ**:

Գրաբարյան գերադրականի կազմության ձևերը միջին հայերենում ջնջվում են. փոխարենը **այլ**-ով ձևերին ավելանում է որոշիչ հոդը՝ **այլ**

²⁰⁰ Տե՛ս Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 1, Եր., 1952, էջ 63:

²⁰¹ Հմմտ. Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 64:

աղեկն-ամենալավը, **այլ մեծն**- ամենամեծը: Բացարձակ գերադրականի կազմության համար որակական ածականի վրա կարող էին դրվել **խիստ** և **շատ** մակբայները՝ **խիստ ամուր, շատ ամուր**:

Գրական լեզվի երկու տարբերակներում էլ ածականը չբեքվող խոսքի մաս է: Փոխանվանական կիրառության դեպքում ստանում է **ը** հոդը և հոլովվում անվանական հոլովման ընդհանուր օրինաչափություններով:

Արևելահայ և արևմտահայ գրական լեզուներում ածականների համեմատության աստիճանների կազմության ձևերն ավելի ընդհանրական են և մշակված: Բաղդատական աստիճանը հիմնականում կազմվում է **ավելի** բառով, համեմատվող առարկան արտահայտվում է բացառականով կամ *քան+ ուղղական* կադապարով: Օրինակ՝ *Եղբայրը ավելի մեծ էր քրոջից* կամ *Եղբայրը ավելի մեծ էր, քան քույրը*: Գերադրականի համար ընդհանրացել է հետդասական գրաբարից ժառանգված **ամենա** ձևությոնը՝ *ամենամեծ, ամենահզոր*, որոշ ածականների համար կիրառվում են նաև **գույն** ածանցով հին ձևերը՝ որպես գերադրականի զուգահեռ ձևեր՝ *մեծագույն, հզորագույն*: Վերջին ձևերը կարող են արտահայտել հատկանշի գերադրական աստիճան՝ առանց համեմատության: Այդպիսի գերադրականը կոչվում է բացարձակ գերադրական, օրինակ՝ *լավագույն ասմունքող, ընդրագույն ճաշակ*: Երբեմն հանդիպում են նաև շարահյուսական միջոցներով արտահայտված գերադրականներ, ինչպես՝ *քոլորից խելացի, ամենքից ազնիվ, քաջերից քաջ* և այլն:

Արևմտահայերենում այս հարցում տարբերությունները աննշան են: Այսպես՝ բաղդատական աստիճանի կազմության համար *աւելի* մասնիկը կարող է զուգորդվել **ալ** մասնիկի հետ՝ *ալ՝ աւելի խոշոր, ալ՝ աւելի իմաստուն* և այլն: Սրանք առավել բնորոշ են առօրյա-խոսակցական լեզվին:

Գերադրական աստիճանի իմաստ արտահայտելու համար արևմտահայերենում ավելի տարածված են *ամէնէն* բառով վերլուծական կազմությունները՝ *ամէնէն պարտական, ամէնէն հզօր, ամէնէն ընդհր, ամէնէն ազաւր*: Հանդիպում են նաև *գեր-* նախածանցով գերադրականներ, օրինակ՝ *գերիւիւր, գերկարճ, գերհզօր*:

Գրաբարում ածականների հոլովումը չի տարբերվում գոյականների հոլովումից: Այսպես՝ **ի**-ով վերջավորվող ածականները **ո-ա** խառը հոլովման են, **ային, ին** վերջավորություն ունեցողները՝ **ո** հոլովման, **գոյն**-ով վերջավորվողները՝ **ի** հոլովման, **բաղաձայն +ր/ղ** վերջավորություն ունեցողները՝ **ու** հոլովման և այլն: Բերենք ածականների տարբեր հոլովումների մի քանի օրինակ:

Ո-ա հոլովում

Ուղղ.	սիրելի	սիրելիք
Հայց.	(զ)սիրելի	(զ)սիրելիս
Մեռ.-տր.	սիրելույ	սիրելեաց
Բաց.	ի սիրելույ	ի սիրելեաց
Գործ.	սիրելեաւ	սիրելեաւք
Ներգ.	ի սիրելի	ի սիրելիս

Ո հոլովում

Ուղղ.	հին	հինք
Հայց.	(զ)հին	(զ)հինս
Մեռ.	հնոյ	հնոց
Տր.	հնում	հնոց
Բաց.	ի հնոյ	ի հնոց
Գործ.	հնով	հնովք
Ներգ.	ի հնում	ի հինս

Ու հոլովում

Ուղղ.	փոքր	փոքունք
Հայց.	(զ)փոքր	(զ)փոքունս
Մեռ.- տր.	փոքու	փոքունց
Բաց.	ի փոքուէ	ի փոքունց
Գործ.	փոքու	փոքումքք
Ներգ.	ի փոքու	ի փոքունս

Ի հոլովում

Ուղղ.	մեծագոյն	մեծագոյնք
Հայց.	(զ)մեծագոյն	(զ)մեծագոյնս
Սեռ.-տր.	մեծագունի	մեծագունից
Բաց.	ի մեծագունէ	ի մեծագունից
Գործ.	մեծագունիւ	մեծագունիւք
Ներգ.	ի մեծագունի	ի մեծագոյնս

Նախադաս ածականները, որպես կանոն, չէին համաձայնում իրենց որոշյալ գոյականներին, այսինքն՝ չէին հոլովվում, բայց միավանկ ածականները, հատկապես՝ **մեծ, քաջ, սուրբ, չար**, նախադաս կիրառությունների ժամանակ համաձայնում էին գոյականներին: Հետադաս կիրառությունների դեպքում ածականներն արդեն համաձայնում էին իրենց որոշյալ գոյականներին: Սակայն այս կանոնը անգամ 5-րդ դարի մատենագրական երկերում խախտված էր, ինչը վկայում է, որ ածականը հայերենի պատմական զարգացման ընթացքում աստիճանաբար վերածվում էր չհոլովվող խոսքի մասի. որոշիչ-որոշյալների համաձայնությունը պետք է վերանայ:

Արդեն միջին հայերենում ածականը չի հոլովվում, ածականները կարող էին հոլովվել միայն գոյականաբար կիրառվելիս: Աշխարհաբարում այս քերականական իրողությունը վերջնականապես ամրակայվում է: *Ածական+ գոյական* կապակցության եղանակը համաձայնությունից փոխվում է առդրության: Գոյականաբար կիրառվելիս ածականներն **ի** ընդհանրական հոլովման են ենթարկվում:

Բերենք գրաբարում ածական որոշչի և գոյական որոշյալի կապակցությունների կիրառությունների օրինակներ:

Նախադաս ածական որոշիչ (միավանկ և բազմավանկ)

Մեծ աստղ

Ուղղ.	մեծ աստղ	մեծք աստեղք
Հայց.	(զ)մեծ աստղ	(զ)մեծս աստեղս
Սեռ.-տր.	մեծի աստեղ	մեծաց աստեղց/աց

Բաց.	ի մեծէ աստեղէ	ի մեծաց աստեղ/աց
Գործ.	մեծաւ աստեղը	մեծաւք աստեղըք/աւք
Ներգ.	ի մեծի աստեղ	ի մեծս աստեղս

Բարի այր

Ուղղ.	բարի այր	բարի արք
Հայց.	(զ)բարի այր	(զ)բարի արս
Մեռ.-տր.	բարի առն	բարի արանց
Բաց.	ի բարի առնէ	ի բարի արանց
Գործ.	բարի արամբ	բարի արամբք
Ներգ.	ի բարի առն	ի բարի արս

Հերադաս ածական որոշիչ

Քոյր առաքինի

Ուղղ.	քոյր առաքինի	քորք առաքինիք
Հայց.	(զ)քոյր առաքինի	(զ)քորս առաքինիս
Մեռ.-տր.	քեռ առաքինոյ	քերց առաքինեաց
Բաց.	ի քեռէ առաքինոյ	ի քերց առաքինեաց
Գործ.	քերք առաքինեալ	քերքք առաքինեալք
Ներգ.	ի քեռ առաքինի	ի քորս առաքինիս

ԹՎԱԿԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՋԱՐԳԱՅՈՒՄԸ

Հայ քերականագիտության մեջ թվականը երկար ժամանակ առանձին խոսքի մաս չի համարվել, դիտվել է որպես ածականի մի տեսակ: Առաջին անգամ Ս. Պալասանյանն է թվականը սահմանել իբրև ինքնուրույն խոսքի մաս: Նա գրում է. «Այն բառերը, որոնք ցույց են տալիս առարկաների թիվը, կոչվում են **թվական անուն**²⁰²»: Քանակական կամ բացարձակ թվականների միջուկը մեկից տասը թվերն են, որոնցից էլ

²⁰² Տե՛ս Ս. Պալասանյան, Քերականություն մայրենի լեզվի, էջ 69:

սերվել են մնացածները: Գրանք, լինելով լեզվի բառապաշարի հնագույն շերտերից մեկը, բոլորն էլ հնդեվրոպական ծագման են և չնչին փոփոխություններով հանդես են եկել հայերենի զարգացման բոլոր փուլերում: Հարևոր-ի ծագումն անհայտ է, *հազար* և *քեր* թվականները պարսկական փոխառություններ են, *միլիոն*, *միլիարդ*, *լորիլիոն* թվականները՝ եվրոպական: Ընդ որում, *քեր*-ը, որը գրաբարում նշանակում էր տասը հազար և թվական էր, ժամանակակից հայերենում դասվում է ամականների շարքը. նշանակում է *անասհիման*, *անթիվ*: Մինչև 16-րդ դարը որպես թվականներ օգտագործվել են նաև հայոց այբուբենի տառերը, այնուհետև կիրառության մեջ են մտել արաբական կոչվող թվանշանները:

Հին հայերենում ձևաբանորեն հստակ տարբերակվել է թվական անունների երեք տեսակ՝ քանակական, դասական և անձներական: Քանակական կամ բացարձակ թվականները հիմնական թվականներն են, որ ցույց են տալիս առարկաների քանակ: Գրաբարում մեկից տասը թվականները հետևյալներն են՝ *մի*, *երկու*, *երեք*, *չորք* (ըստ Հ. Աճառյանի՝ նախնական բուն ձևը *չորեք*-ն է, որը երևան է գալիս *չորեքրասսան* և *չորեքհարիր* բաղադրյալ ձևերում²⁰³), *հինգ*, *վեց*, *եւթն* (*եօթն*), *ութ*, *ինն*, *րասն*: Տասնյակների և միավորների միացումը կատարվում է հետևյալ կերպ. մինչև քսանը միավորը սկզբից է, իսկ *րասսան/րասն* բաղադրիչը՝ հետադաս, ինչպես՝ *մեւրասսան*, *երկուրասսան*, *երեքրասսան*, *չորեքրասսան*, *հնգեւրասսան*, *վեչրասսան*, *եւթնեւրասսան*, *ութեւրասսան*, *իննեւրասսան*, իսկ քսանից հետո տասնավորն է սկզբից, միավորը՝ հետադաս, ինչպես՝ *քսան եւ մի*, *քսան եւ երկու*, *երեսուն եւ չորք* և այլն: Տասնավորները հետևյալներն են՝ *քսան*, *երեսուն*, *քառասուն*, *հիսուն*, *վաթսուն*, *եւթանասուն*, *ութսուն*, *իննսուն*:

Հարյուրավորները՝ *հարեւր/հարիր*, *երկերիր*, *երեքհարիր*, *չորեքհարիր*, *հինգհարիր*, *վեցհարիր*, *եւթնհարիր*, *ութհարիր*, *իննհարիր*, ինչպես նաև *հազար*, *քեր/քիր* թվականները հոլովվում են անվանական հոլովմամբ:

²⁰³ Տե՛ս Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 1, էջ 244:

	Ո հոլ.	Ու հոլ.	Ի հոլ.	Ի հոլ.
Ուղղ.	մի	երկու	երեք	չորք
Հայց.	(զ)մի	(զ)երկուս	(զ)երիս	(զ)չորս
Սեռ.	միոյ, միոջ	երկուց	երից	չորից
Տր.	միում	երկուց	երից	չորից
Բաց.	ի միոջէ	յերկուց	յերից	ի չորից
Գործ.	միով	երկուք	երիւք	չորիւք
Ներգ.	ի միում, ի միոջ	յերկուս	յերիս	ի չորս

Մի-ն անհոգնական է, *երկու, երեք, չորք* ձևերն անեզական են: *Երկու* թվականը հոգնակի ուղղականում *ք* չունի, որովհետև ծագումով երկակի է, բայց հայցական հոլովից ստանում է գրաբարյան հոգնակերտները՝ *ս, ց, ց, ք*: *Հինգ, վեց, ութ, ինն, մեղասան, երկուրասան, երեքդասան, չորեքդասան, հնգեդասան, վեչդասան* թվականները և *քսան, երեսուն, քառասուն, հիսուն, վաթսուն, եփսանասուն, ութսուն, իննսուն* թվականները հոլովվում են *ի* վերջադրական հոլովմամբ՝ և՛ եզակի, և՛ հոգնակի: *Երեք*-ը *ս* ներդրական հոլովման է, *դաս*-ը և նրանից բաղադրված *երեսներասան, ութներասան, ինններասան* թվականները՝ *ի-ս* ներդրական խառը հոլովման: *Հազարը ի-ս* վերջադրական հոլովման է, *հարեր*-ը՝ *ո* հոլովման, *բեր*-ը՝ *ու*: Բնորոշ օրինակներով ցույց տանք հարացույցները:

	Ի հոլովում		Ի-Ա ներդրական		Ա ներդրական	
Ուղղ.	ինն	ինունք	տասն	տասունք	եփն	եփանք
Հայց.	(զ)ինն	(զ)ինունս	(զ)տասն	(զ)տասունս	(զ)եփն	(զ)եփանս
Սեռ.-տր.	ըննի	ըննից	տասին	տասանց	եփան	եփանց
Բաց.	յըննէ	յըննից	ի տասնէ	ի տասանց	յեփանէ	յեփանց
Գործ.	ըննիւ	ըննիւք	տասամբ	տասամբք	եփամբ	եփամբք
Ներգ.	յըննի	յինունս	ի տասին	ի տասունս	յեփան	յեփանս

	<i>Ի հոլովում</i>		<i>Ո հոլովում</i>	
Ուղղ.	քսան	քսանք	հարիւր	հարերք/հարիւրք
Հայց.	(գ)քսան	(գ)քսանս	(գ)հարիւր	(գ)հարերս/հարիւրս
Մեռ.-տր.	քսանի	քսանից	հարիւրոյ	հարիւրոց
Բաց.	ի քսանէ	ի քսանից	ի հարիւրոյ	ի հարիւրոց
Գործ.	քսանիւ	քսանիք	հարիւրով	հարիւրովք
Ներգ.	ի քսանի	ի քսանս	ի հարիւր	ի հարիւրս

	<i>Ու հոլովում</i>	
Ուղղ.	բիւր	բերք/ բիւրք
Հայց.	(գ)բիւր	(գ)բերս/բիւրս
Մեռ.-տր.	բիւրու	բիւրուց
Բաց.	ի բիւրէ	ի բիւրուց
Գործ.	բիւրու	բիւրուք
Ներգ.	ի բիւրու	ի բիւրս

Միջին հայերենում թվականները կրում են հնչյունական և բառակազմական փոփոխություններ: Ըստ այդմ՝ մեկից տասը թվականները հետևյալներն են՝ **մեկ/մէկ** (առաջացել է *մի+ակ* բառաձանցումից), **երկու/երկուք** (**երկու**-ն գործածվում է որպես ամական, օրինակ՝ երկու էրիկ, երկու քոյր, իսկ **երկուք**-ը՝ ինքնուրույն կիրառությունների դեպքում՝ երկուք ընդ իրար, երկուք ի ներքս), **երեք/իրեք**, **չորս** (գրաբարյան հայցականն է), **հինգ/կ**, **վեց**, **իօթն**, **ութ**, **ինն**, **տասն**: Տասնավորներն են՝ **քսան**, **երեսուն**, **քառասուն**, **յիսուն**, **վաթսուն**, **իօթանասուն**, **ութսուն**, **իննասուն**:

11-99 թվականների կազմության սկզբունքը փոփոխվել է. միավորիչ շաղկապ դարձել է **ու**-ն, իսկ միավորը բոլոր դեպքերում տասնավորից հետո է, ինչպես՝ *տասնումեկ*, *տասնվերկու/տասնվերկուք*, *տասնվերեք*, *տասնուչորս*, *տասնուհինկ/գ*, *տասնուվեց*, *տասնիօթն /տասնիօթն*, *տասնվութ/տասնութ*, *տասնըվինն/տասնինն*²⁰⁴:

²⁰⁴ Տե՛ս Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 247-249:

Թվականները միջին հայերենում հոլովվում են միայն ինքնություն կիրառության ժամանակ, բոլորը **ի** ընդհանրական հոլովման են, հոլովվում են միայն եզակիում՝ **մեկի, երկուքի, յերկուքեն**:

Արևելյան աշխարհաբարը ժառանգել է թվականների գրաբարյան արմատները, միայն **եսքն**-ի արմատական **ն**-ն է ընկել, դարձել **յոթ, տասն**-ը ունի նաև **տասը** ձևը՝ կախված նրանից, թե հաջորդ բառը ինչ հնչյունով է սկսվում:

11-99 թվականների կազմության սկզբունքը միջինհայերենյանն է՝ տասնավոր+միավոր: Շաղկապները դուրս են մղվել՝ **տասնհինգ, քսանյոթ, երեսունհինգ**: Հարյուրավորների և հազարավորների կազմությունը հարադրական է՝ երեք հազար երկու հարյուր: Թվականը չթեքվող խոսքի մաս է: Փոխանվանաբար կիրառվելիս թվականները, ստանալով **ը** հոդը, հոլովվում են **ի** արտաքին հոլովմամբ: **Երկու**-ն հոլովվելիս կամ հոդ ստանալիս դառնում է **երկուս**, արևմտահայերենում պահպանվել է հին ձևը՝ **երկուք**: Արևմտահայերենում *յրասն* թվականը, ի տարբերություն արևելահայերենի, կարող է գործածվել առանց վերջին *ը* կամ *ն* հնչյունի, իսկ *ուր*-ը, որը գրաբարում չունեի *ն* վերջնահնչյուն, արևմտահայերենում գործածվում է նաև *ը*-ով՝ ութը, քսանութը: Երբեմն տասնավորները կարող են պահպանել միավորիչ *և* շաղկապը՝ *յրասն և վեց/յրասնևեկեց, քսան և հինգ/քսան և հինգ*, բայց գրաբարատիպ այս ձևերը ոմանք համարում են հնացած: *Միլիարդ* և *գրո* թվականները արևմտահայերենում եվրոպական լեզուների հետևողությամբ ունեն *միլիարտ* և *գերո* ձևերը²⁰⁵:

ԴԱՍԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ

Գրաբարում դասական թվականները կազմվում էին քանակականներից: Հ. Աճառյանի դիտարկմամբ՝ հնագույն շրջանում դասական թվականների ձևայիններն էին **-ր** և **-որդ** մասնիկները: **-Ր**-ով կազմվում

²⁰⁵ Տե՛ս **Յ. Ավետիսյան**, Արևելահայերենի և արևմտահայերենի գուգադրական քննություն, Եր., 2007, էջ 93-98:

էին **երկիր/ երկրորդ, երիր/երրորդ, չորիր/չորրորդ** թվականները: **-Որդ**-ից կազմվում էին՝ **քառորդ, տասնորդ, քառասնորդ, հարիւրորդ** ձևերը: Գրաբարում արդեն այս մասնիկները ձևափոխվում են, միավորվում՝ դառնալով **-րորդ**: Այս ածանցը ստանում են միայն *երկրորդ, երրորդ, չորրորդ* թվականները, իսկ **-երորդ** ածանցը ստանում են մնացած բոլոր դասական թվականները՝ սկսած հինգից: Միայն **առաջին** բառն է, որ ունի տարբեր կազմություն, ըմբռնվում է ավելի շատ որպես ածական և ապա միայն որպես թվային կարգ²⁰⁶: Հետագայում այս ձևին ավելանում է **-երորդ** ածանցը՝ ստեղծելով **առաջներորդ** թվականը, որից էլ կազմվում էին **քսաներորդ առաջներորդ** կամ **քսաներորդ առաջնորդ**, որ նշանակում է 21-րդ: Բաղադրյալ թվականների դասականները կազմվում էին բոլոր բաղադրիչներին **-երորդ** ածանցը կցելով՝ **քառասներորդ չորրորդ - 44-րդ, յիսներորդ երկրորդ- 52-րդ, երկերիւրերորդ յիսներորդ երկրորդ՝ 252-րդ** և այլն: **Առաջին** թվականը հոլովվում է *n* հոլովիչով, ունի առանձին տրական՝ *ում* հոլովակերտով, որից էլ կազմվում է ներգոյականը: **-Րորդ** և **-երորդ** ածանցներով դասականները հոլովվում են *ի-ա* խառն վերջադրական հոլովմամբ, բայց դարձյալ ունեն առանձին տրական՝ *ում* հոլովակերտով, որից կազմվում են ներգոյականները:

	<i>Ո հոլ.</i>		<i>Ի-ա արտաքին հոլ.</i>	
Ուղղ.	առաջին	առաջինք	երկրորդ	երկրորդք
Հայց.	(զ)առաջին	(զ)առաջինս	(զ)երկրորդ	(զ)երկրորդս
Մեռ.	առաջնոյ	առաջնոց	երկրորդի	երկրորդաց
Տր.	առաջնում	առաջնոց	երկրորդի/ում	երկրորդաց
Բաց.	յառաջնմէ	յառաջնոց	յերկրորդէ	յերկրորդաց
Գործ.	առաջնով	առաջնովք	երկրորդաւ	երկրորդաւք
Ներգ.	յառաջնում	յառաջինս	յերկրորդում	յերկրորդս

Գրաբարում դասական թվականները միայն եզակի գոյականի հետ են կիրառվում և եթե նախադաս են, մեծ մասամբ չեն համաձայնում գո-

²⁰⁶ Տե՛ս 3. Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 279:

յականների հետ, բայց հանդիպում են մաս համաձայնության դեպքեր: Իսկ եթե հետադաս են, միշտ հոլովով և թվով համաձայնում են որոշյալ գոյականի հետ: Օրինակ՝ *աւուր երկրորդի, յաւրէն երկրորդէ, աւուրք երկրորդաւ, յաւուր երկրորդում* և այլն:

Միջին հայերենում պահպանվում է *առաջին* թվականը՝ *առջի* հնչյունափոխված տարբերակով, իսկ *-որդ, -երորդ* մասնիկներով դասականները գրեթե վկայված չեն: Միջին հայերենում դասական թվականները հիմնականում կազմվում են *-ում* ձևությոյով, որը Աճառյանը համարում է գրաբարյան տրական-ներգոյականի կազմիչ՝ *ում*-ից առաջացած: Օրինակ՝ *հնգում, չորսում, իօթում, իննում* և այլն:

Աշխարհաբարը գրաբարից ժառանգեց *-րորդ* և *-երորդ* ածանցները, որոնք կցվում են քանակական թվականների վերջին բաղադրիչին՝ *երկրորդ, երրորդ, չորրորդ, վաթսունմեկերորդ, հարյուրհիսուներկուերորդ* և այլն: Դասականները գոյականաբար կիրառվելիս հոլովվում են *ի* հոլովմամբ, օրինակ՝ *առաջինը, առաջինի/ն, առաջինից, առաջինով, առաջինում*:

Արևմտահայերենում, ըստ որոշ քերականների, հնարավոր է դասական թվականների կազմության հետևյալ յուրահատկությունը. եթե *երկու, երեք, չորս* թվականները դառնում են բարդ դասական թվականների վերջին բաղադրիչը, ապա նրանք կարող են պահպանել *-րորդ* ածանցը, ինչպես օրինակ՝ *տասներկրորդ-տասներկուերորդ, քսանչորրորդ-քսանչորսերորդ, հազարերրորդ-հազարերեքերորդ*²⁰⁷: Սակայն այս կազմությունները դիպվածային են, և պետք է արձանագրել՝ արդի հայերենի երկու տարբերակներում էլ դասական թվականների կազմության սկզբունքները ընդհանրական են:

²⁰⁷ Տե՛ս Ռ. Սարապետոյան, Արևմտահայերենի դասագիրք, Եր., 2006, էջ 136:

ԱՆՁՆԵՐԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ

Հին հայերենն ուներ անձներական թվականներ, որոնք արտահայտում էին միասնության գաղափար: Օրինակ՝ *երեքին եկին* նշանակում էր «երեքն էլ, երեքը միասին եկան»: Այս թվականները կազմվում էին քանակական թվականներից **-եքին/-եքեան** ածանցներով, անեզական էին, հոլովվում էին **ու** ներդրական հոլովմամբ, կիրառվում էին միայն հոգնակի գոյականների հետ՝ հոլովով և թվով միշտ համաձայնելով որոշյալ գոյականների հետ: Բերենք անձներական թվականի և նրանով կազմված կապակցության հոլովման մոուլներ:

Ու ներդրական հոլովում

Ուղղ.	չորեքին, չորեքեան
Հայց.	(զ)չորեսին, (զ)չորեսեան
Սեռ.-տր.	չորեցուն, չորեցունց
Բաց.	ի չորեցունց
Գործ.	չորեքումբք
Ներգ.	ի չորեսին, ի չորեսեան

Երկոքին արք

Ուղղ.	երկոքին արք
Հայց.	(զ)երկոսին արս
Սեռ.- տր.	երկոցուն/ց արանց
Բաց.	յերկոցունց արանց
Գործ.	երկոքումբք արամբք
Ներգ.	յերկոսին արս

Միջին հայերենում այս թվականները վերանում են, աշխարհաբարում ևս դրանք չկան: Անհրաժեշտության դեպքում ասվում է՝ *երկուսն էլ, հինգն էլ, վեցը միասին* և այլն: Միջին հայերենում **էլ**-ի փոխարեն կարող էր գործածվել **այլ**-ը կամ նրա հնչյունափոխված **ալ** ձևը, որը ժառանգել է արևմտահայերենը, օրինակ՝ *երկուքն այլ, երկուքն ալ*:

ԲԱՇԽԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ

Բաշխական թվականները ցույց են տալիս առարկաների բաշխումը հավասար քանակով: Կազմության սկզբունքը ընդհանուր է լեզվի զարգացման բոլոր փուլերի համար, այն է՝ թվականի կրկնություն, օրինակ՝ երկու-երկու, կամ՝ քանակական թվական+*սկան* ածանց: Դեռևս գրաբարում հանդիպում են *երկական*, *հնգական*, *միական* և այլ բաշխականներ²⁰⁸: Արևելահայերենի հետ համեմատած՝ արևմտահայերենը որոշ տարբերություններ է դրսևորում, այսպես՝ *յոթ* և *յասար* թվականների բաշխականը կազմելիս վերականգնում են գրաբարյան **ն** վերջնահնչյունը՝ *եօթնական*, *յասնական*, *երկու*-ի բաշխականը լինում է *երկուքական*, *մէկ*, *երկու* թվականների կրկնավորները լինում են *մէյ մէկ*// *մէյմէկ*, *երկ երկու* // *երկերկու*, որոնք գրվում են կա՛մ առանձին, կա՛մ միասին²⁰⁹:

ԿՈՏՈՐԱԿԱՅԻՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ

Կոտորակային թվականները ցույց են տալիս ամբողջի մասեր: Կազմված են երկու մասից՝ համարիչից, որը քանակական թվականով է արտահայտվում, և հայտարարից, որն արտահայտվում է դասական թվականով, օրինակ՝ *մեկ հինգերորդ*, *երկու երրորդ/ական*: *Մեկ չորրորդի* փոխարեն կիրառվում է նաև *քառորդ*, մեկ երկրորդի փոխարեն՝ *կես* բառը:

Միջին հայերենում կոտորակային թվականների հասկացությունները հիմնականում արտահայտվում էին նկարագրական կամ վերլուծական միջոցներով: Ս. Ղազարյանը բերում է հետևյալ օրինակները. «Չորս բաժնեն մեկն՝ 1/4, երեք բաժնեն երկուքն՝ 2/3, յերեքեն մեկ՝ 1/3, ի հինգեն մեկն՝ 1/5 և այլն: Կոտորակային թվերը արտահայտվում էին նաև **-ակ** վերջածանցով, ինչպես՝ հնկակ՝ 1/5, վեցակ՝ 1/6, տասնակ՝ 1/10

²⁰⁸ Տե՛ս Ս. Ղազարյան, Հայոց լեզվի համառոտ պատմություն, Եր., 2006, էջ 257:

²⁰⁹ Տե՛ս Յ. Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 96-97:

և այլն: Իբրև կոտորակային թվեր արտահայտելու բառեր գործածվում էին նաև **կէս** և **չարեք** (քառորդ) բառերը»²¹⁰:

Գրական լեզվի երկու տարբերակներում կոտորակային թվականները իմաստային և կառուցվածքային որևէ տարբերություն չեն դրսևորում:

ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՋԱՐԳԱՅՈՒՄԸ

Գրաբարում դերանվան տեսակներն են՝ անձնական, սրացական, ցուցական, անորոշ, որոշյալ, հարցահարաբերական, փոխադարձ:

ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՋԱՐԳԱՅՈՒՄԸ

Գրաբարի անձնական դերանուններն են՝ **ես, դու, նա, ինքն, իւր - մեք, դուք, նոքա, ինքեանք, իւրեանք**: Սրանք ունեն թվի, դեմքի, հոլովի քերականական կարգեր: Առաջին դեմք են ցույց տալիս՝ *ես, մեք*, երկրորդ դեմք՝ *դու, դուք*, երրորդ դեմք՝ *նա, նոքա* դերանունները: Վերջիններս նաև ցուցական դերանուն են:

Այս բոլոր դերանունները հնդեվրոպական ծագում ունեն. *ես*-ը ծագում է *egō ձևից, *մեք*-ը< *mes, *դու*-ն<tū, *դուք*-ը<γūs, որը պետք է հայտնաբերվում դառնար *ջուք, բայց *դու*-ի համաբանությամբ դարձել *դուք*: Այս դերանունների թեք հոլովաձևերը ևս հնդեվրոպական իրենց նախաձևերն ունեն՝ հնչյունական որոշ հավելումներով, ինչպես հոգնակի բացառականի ջ-ն՝ *ի մէնջ, ի չէնջ*:

Անձնական դերանունները դերանվանական հոլովման դասական օրինակ են՝ տարահիմքությամբ, եզակի թվում սեռական և տրական հոլովների տարբերակմամբ: Գրաբարում առաջին և երկրորդ դեմքի դերանուններն ունեն բացառականի հնագույն տարբեր ձևեր՝ *ինչէն, մեզէն*

²¹⁰ Ս. Ղազարյան, նշվ. աշխ., էջ 258:

/մեզոյն, քեզէն/քեզոյն, չեզէն/չեզոյն: Սակայն այդ ձևերում բացառականի իմաստն արդեն մթագնած էր. դրանք գործածվում էին առաջին և երկրորդ դեմքերի անձնական դերանունների հետ սաստկական նշանակությամբ՝ *ես ինչէն, մեք մեզէն*, որ նշանակում են՝ *ես ինքս, մենք ինքներս*: Կարող էին կիրառվել նաև առանձին, բայց ուղղականի իմաստով և սաստկական երանգով՝ «*Առցես քեզէն/ Դու ինքդ կրռնես*» (Բուզ., 4-րդ, ԾԳ, էջ 252):

Երրորդ դեմքի համար գործածվում են ոչ միայն *նա* ցուցականը, այլև *ինքն*, *իւր* դերանունները, որոնք երբեմն կոչվում են նաև անդրադարձ դերանուններ: *Ինքն*, *իւր* դերանունները հաճախ կիրառվում են *ես, դու, նա* դերանունների հետ սաստկական նշանակությամբ, օրինակ՝ *ես ինքն, դու ինքն, նա ինքն*: Սաստկական իմաստը նաև կարող է արտահայտվել *ինքնին* կամ *իւրովի* բառերի միջոցով: *Իւր* դերանունը չունի եզակի ուղղական և հայցական հոլովներ. պակասը լրացվում է *ինքն* դերանվան ձևերով:

Գրաբարում անձնական դերանունների իմաստ կարող էր արտահայտել նաև *անչն* գոյականը թեք հոլովաձևերով, օրինակ՝ «*Եկայք զանչինս անչամբք միւիթարեսցուք*», «*Եկեք մենք մեզ միւիթարենք*», (Բուզ., 3-րդ, ԻԱ, էջ 84)», «*Յանչն իւր տարաբերէր «Ինքն իր մեջ տարանվում էր»* (Եղիշե, 1):

Հոլովման հարացույցը գրաբարում

Ուղղ.	ես	մեք
Հայց.	(զ)իս	(զ)մեզ
Սեռ.	իմ	մեր
Տր.	իմձ	մեզ
Բաց.	յինէն	ի մէնջ
Գործ.	իմես	մեսք/մեօք
Ներգ.	յիս	ի մեզ

Ուղղ.	դու	դուք
Հայց.	(զ)քեզ	(զ)ձեզ
Սեռ.	քո	ձեր
Տր.	քեզ	ձեզ
Բաց.	ի քէն	ի ձէնջ
Գործ.	քեւ	ձեւք/ձեօք
Ներգ.	ի քեզ	ի ձեզ

Ուղղ.	նա	նոքա
Հայց.	(զ)նա	(զ)նոսա
Սեռ.	նորա	նոցա
Տր.	նմա	նոցա
Բաց.	ի նմանէ	ի նոցանէ
Գործ.	նովաւ	նոքաւք
Ներգ.	ի նմա	ի նոսա

Ուղղ.	ինքն	ինքեանք
Հայց.	(զ)ինքն	(զ)ինքեանս
Սեռ.	ինքեան	ինքեանց
Տր.	ինքեան	ինքեանց
Բաց.	յինքենէ	յինքեանց
Գործ.	ինքեամք	ինքեամքք
Ներգ.	յինքեան	յինքեանս

Ուղղ.	-	իւրեանք
Հայց.	-	զիւրեանս
Սեռ.	իւր	իւրեանց
Տր.	իւր	իւրեանց
Բաց.	յիւրմէ	յիւրեանց
Գործ.	իւրեւ, իւրեաւ, իւրեամք	իւրեամքք
Ներգ.	յիւր	յիւրեանս

Միջին հայերենում անձնական դերանունները նախ ենթարկվում են հնչյունական փոփոխությունների՝ *մեք>մենք, դու>դուն*, ապա կանոնավորվում է դերանվանական հոլովումը՝ բացառական և գործիական հոլովների նորակազմություններով: Բացառականի **նէ** վերջավորությունը ընդհանրանում է *ւ՝* եզակի, *ւ՝* հոգնակի քվերի հոլովածների համար: Ավելի ուշ *նէ>մէ* գոգաձևությունն է առաջանում, բացառականի կազմիչ **ի** նախիրն էլ սկսում է ընկնել, և առաջանում են *մեզմէ, չեզմէ, քեզմէ, իսմէ* ձևերը:

Հոլովման հարացույցը միջին հայերենում

Ուղղ.	ես	մենք
Հայց.	(զ)իս	(զ)մեզ
Սեռ.	իմ	մեր
Տր.	ինձ, ինձի, ինձիկ	մեզ, մեզի, մեզիկ
Բաց.	յիսմէ, յիսնէ, ինձէն	ի մեզնէ, ի մեզանէ, ի մենէ
Գործ.	իսմով, իսնով	մեզմով, մեզնով

Ուղղ.	դու, դուն	դուք
Հայց.	(զ)քեզ	(զ)ձեզ
Սեռ.	քո, քոյ, քու	ձեր
Տր.	քեզ, քեզի, քեզիկ, քէ/է	ձեզ, ձեզի, ձեզիկ
Բաց.	ի քեզնէ, ի քենէ, ի քեզանէ, ի քեզմէ	ի ձեզնէ, ի ձեզանէ ի ձեզմէ
Գործ.	քե(է)նով, քեզնով, քենով	ձեզմով, ձեզնով

Ուղղ.	նա	նոքա, նաքա
Հայց.	(զ)նա	(զ)նոքա, (զ)նաքա
Սեռ.	նորա, նարա, նրա	նոցա, նացա
Տր.	նորա, նարա, նմա	նոցա, նացա
Բաց.	ի նորմէ, ի նարմէ, ի նորանէ	ի նացմէ, ի նոցմէ
Գործ.	նովաւ	նացմով, նրանցմով

Ուղղ.	ինք	իրենք, իրենք
Հայց.	(զ)ինք	(զ)իրենք, (զ)իրեանք
Մեռ.	իր, իրեն	իրենց, իրենց, իրանց
Տր.	իր, իրեն	իրենց, իրենց, իրանց
Բաց.	յիրմէ, յինքմէ, յիրենցմէ,	յիրենցէ, յիրեանցմէ
Գործ.	իրմով, իրմով	իրենցմով

Արևելահայ աշխարհաբարում պահպանվում է *մեք* դերանվան միջինհայերենյան ձևը՝ *մեհնք*, մյուս դերանունները հիմնականում ժառանգում են գրաբարյան ուղիղ ձևերը, ինչպես նաև դերանվանական հոլովման հիմնական յուրահատկությունները՝ տարահիմքությունը, սեռականի ու տրականի առանձին հոլովածները: Նշենք, որ անձնական *ես*, *դու*, *նա*, *ինքը*, *մենք*, *դուք* դերանունները և ցուցական *սա*, *դա*, *նա* դերանունները, ընդհանուր թվով ութ բառ, պահպանել են դերանվանական հոլովումը:

Մ. Ասատրյանը դերանվանական հոլովման յուրահատկություններն արևելահայերենում բնութագրում է հետևյալ կերպ:

ա) Ի տարբերություն հայերենի մյուս բառախմբերի՝ վերոհիշյալ բառերն ունեն վեց հոլով՝ ուղղական, սեռական, տրական, բացառական, գործիական, ներգոյական, այսինքն՝ սեռականը և տրականը ձևաբանորեն տարբերակված են, անկախ հոլովածներ են: Հավելենք, որ արևմտահայերենում հոլովների թիվը հինգն է, որովհետև բացակայում է ներգոյականը, ինչպես միջին հայերենում:

բ) Ի տարբերություն անվանական հոլովման՝ սեռական և տրական հոլովները կազմվում են ոչ թե ուղղական հոլովից, այլ ուղղականից տարբեր, առանձին արմատներով կամ հիմքերով, որոնք անկախ բառեր են և չեն կարող տարրալուծվել հիմքի ու վերջավորության, ինչպես՝ *ես-իմ-ինձ*, *դու-քո-քեզ*, *նա-նրա-նրան*, *ինքը-իր-իրեն*, *սա-սրա-սրան*, *դա-դրա-դրան*: Բերվածներից միայն *սա*, *դա*, *նա* և *ինքը* դերանունների դեպքում է, որ սեռականի և տրականի միջև որոշ ձևային կապ է նկատվում:

գ) Դերանվանական հոլովման դեպքում ևս բացառական, գործիական և ներգոյական հոլովները կազմվում են *ից*, *ով* ում վերջավորու-

թյուններով, բայց դրանք անպայմանորեն դրվում են տրականի հիմքի վրա, ընդ որում *ես, դու, մենք, դուք* դերանունների դեպքում հոլովական վերջավորություններից առաջ երևան է գալիս *և* կամ *ան* բաղադրիչը, որի պատճառով ունենք գուգաձևություններ՝ *անից/նից, անով/նով, նույն/անույն*: Լեզվաբանի կարծիքով՝ *ան*-ով ձևերն ավելի հաստուկ են ժողովրդախոսակցական լեզվին²¹¹:

Արևմտահայերենի անձնական դերանուններն են՝ *ես, դու, ան* (*ան* < *նա* դրավոխություն է տեղի ունեցել), *ինք/ը, մենք, դուք, անոնք, իրենք*: Դրանց ուղիղ ձևերը հիմնականում ժառանգվել են միջին հայերենից՝ *ես, մենք, դու, դուք, ինք/ը, իրենք*, որոշ դեպքերում պահպանվել են գրաբարածն հայցականները՝ *զիս, զինք, զիրենք*: Տրական հոլովածները կազմվում են *—ի* մասնիկի հավելմամբ՝ *ինծի, քեզի, մեզի, չեզի*: Դերանունների բացառականները և գործիականները կազմվում են միջին հայերենից եկող *մէ, մուլ* ձևությամբով՝ *ինչմէ, ինչմուլ, քեզմէ, քեզմուլ, մեզմէ, մեզմուլ, չեզմէ, չեզմուլ*:

Արևմտահայերենում դերանվանական հոլովման են ենթարկվում՝ *ես, դու, մենք, դուք, ինք/ը, ան* դերանունները, իսկ *իրենք*-ը և *անոնք*-ը՝ *ք* < *ց* հերթագայությամբ են հոլովվում: Դերանվանական հոլովման դեպքում բացառականը և գործիականը կազմվում են հիմնականում տրականի հիմքից *մէ, մուլ/ուլ* վերջավորություններով: Անձնական դերանունների տրականները բառավերջում ունեն բարբառային ծագման *ի* մասնիկ՝ *ինծի, քեզի, մեզի, չեզի*: Ես, *ինք/ը, անոնք* դերանունների դեպքում պահպանվել է գրաբարածն հայցականը *զ* նախդրով՝ *զիս, զինք, զանոնք*²¹²:

²¹¹ Հմմտ. Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Բ, Եր., 1973, էջ 130-131:

²¹² Հմմտ. Յ. Ավետիսյան, Արևելահայերենի և արևմտահայերենի գուգադրական քննություն, Եր., 2007, էջ 109-113:

**Հոլովման հարացույցները արևելահայերենում և
արևմտահայերենում**

Արևելահայերեն

Ուղղ.	ես	մենք
Սեռ.	իմ	մեր
Տր.	իմձ	մեզ
Բաց.	իմձանից, իմձնից	մեզանից, մեզնից
Գործ.	իմձանով, իմձնով	մեզանով, մեզնով
Ներգ.	իմձանում, իմձնում	մեզանում, մեզնում

Ուղղ.	դու	դուք
Սեռ.	քո	ձեր
Տր.	քեզ	ձեզ
Բաց.	քեզանից, քեզնից	ձեզանից, ձեզնից
Գործ.	քեզանով, քեզնով	ձեզանով, ձեզնով
Ներգ.	քեզանում, քեզնում	ձեզանում, ձեզնում

Ուղղ.	նա	նրանք
Սեռ.	նրա	նրանց
Տր.	նրան	նրանց
Բաց.	նրանից	նրանից
Գործ.	նրանով	նրանցով
Ներգ.	նրանում	նրանցում

Ուղղ.	իմքը	իրենք
Սեռ.	իր	իրենց
Տր.	իրեն	իրենց
Բաց.	իրենից	իրենցից
Գործ.	իրենով	իրենցով
Ներգ.	իրենում	իրենցում

Արևմտահայերեն

Ուղղ.	ես	մենք
Հայց.	զիս	մեզ
Մեռ.	իմ	մեր
Տր.	իմծի	մեզի
Բաց.	իմձմէ	մեզմէ
Գործ.	իմձմով	մեզմով

Ուղղ.	դուն	դուք
Հայց.	քեզ	ձեզ
Մեռ.	քու	ձեր
Տր.	քեզի	ձեզի
Բաց.	քեզմէ	ձեզմէ
Գործ.	քեզմով	ձեզմով

Ուղղ.	ան/անիկա	անոնք
Հայց.	զայն	զանոնք
Մեռ.-տր.	անոր	անոնց
Բաց.	անկէ	անոնցմէ
Գործ.	անով	անոնցմով

Ուղղ.	ինք/ը	իրենք
Հայց.	զինք	զիրենք
Մեռ.	իր	իրենց
Տր.	իրեն	իրենց
Բաց.	իրմէ	իրենցմէ
Գործ.	իրմով	իրենցմով

ՍՏԱԳԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Ստացական դերանունները ցույց են տալիս, թե տվյալ առարկան կամ երևույթը երեք դեմքերից որին է պատկանում: Հայերենում, ինչպես և որոշ այլ լեզուներում, ստացականները անձնական դերանունների սեռական հոլովածներն են, որոնք ինքնուրույնաբար հոլովվում են: Գրաբարի ստացական դերանուններն են՝ *իմ, քո/քոյ, իւր, մեր, չեր*: Գրաբարում այս դերանունները ենթարկվում էին անվանական *n* հոլովման, սակայն ունեին տրականի առանձին հոլոված՝ *ում* հոլովակերտով, որից էլ կազմվում էին բացառական և ներգոյական հոլովները: Երկրորդ դեմքի համար վկայված են երկու ստացականներ՝ **քոյ** և **քո**, որոնք հոլովվում են տարբեր կերպ: **Քոյ** ձևը առանձին չունի հոգնակի ուղղական և հայցական հոլովները, փոխարենը գործածվում է *քոյք* միասնական ձևը:

Ուղղ.	իմ	իմք	քո	քոյք	քոյ	քոյք
Հայց.	(զ)իմ	(զ)իմս	(զ)քո	(զ)քոյս	(զ)քոյ	(զ)քոյս
Սեռ.	իմոյ	իմոց	քոյ	քոց	քոյոյ	քոյոց
Տր.	իմում	իմոց	քում	քոց	քոյում	քոյոց
Բաց.	յիմմէ	յիմոց	ի քումէ ²¹³	ի քոց	ի քոյոյ	ի քոյոց
Գործ.	իմով	իմովք	քով	քովք	քոյով	քոյովք
Ներգ.	յիմում	յիմս	ի քում	ի քոյս	ի քոյում	ի քոյս

Ուղղ.	մեր	մերք	ձեր	ձերք	իւր	իւրք
Հայց.	(զ)մեր	(զ)մերս	(զ)ձեր	(զ)ձերս	(զ)իւր	(զ)իւրս
Սեռ.	մերոյ	մերոց	ձերոյ	ձերոց	իւրոյ	իւրոց
Տր.	մերում	մերոց	ձերում	ձերոց	իւրում	իւրոց
Բաց.	ի մերմէ	ի մերոց	ի ձերմէ	ի ձերոց	յիւրմէ	յիւրոց
Գործ.	մերով	մերովք	ձերով	ձերովք	իւրով	իւրովք
Ներգ.	ի մերում	ի մերս	ի ձերում	ի ձերս	յիւրում	յիւրս

²¹³ Գործածվում է մաս *ի քումմէ* ձևը (*յիմմէ*- ի համաբանությամբ):

Գրաբարում ստացական դերանունները հոլովով և թվով համաձայնում էին իրենց որոշյալ գոյականների հետ, թեև անհամաձայնության հետքեր առկա էին: Այսպես՝ հոգնակի ուղղական և հայցական հոլովներում ստացականները թվով չէին համաձայնում որոշյալ գոյականների հետ՝ *քորք իմ, զեղքարս մեր*: Հոգնակի գործիական հոլովով դրված գոյականների հետ ստացականը կարող էր չհամաձայնել թվով, օրինակ՝ *խրով կամօք, քոյով կամօք* և այլն: Նշենք, որ ստացական դերանունները գրաբարում կարող էին դառնալ և՛ նախադաս որոշիչ, և՛ հետադաս: Երկու դեպքում էլ հոլովով և թվով համաձայնում էին որոշյալի հետ՝ բացի հոգնակի ուղղական-հայցականից, թեև շեղումներ հանդիպում էին: Բերենք *սրացական դերանուն* - *գոյական* կապակցության հոլովական հարացույցի օրինակ:

Ուղղ.	որդի	իւր	որդիք	իւր
Հայց.	(գ)որդի	իւր	(գ)որդիս	իւր
Սեռ.	որդւոյ	իւրոյ	որդւոց	իւրոց
Տր.	որդւոյ	իւրում	որդւոց	իւրոց
Բաց.	յորդւոյ	իւրմէ	յորդւոց	իւրոց
Գործ.	որդւով	իւրով	որդւովք	իւրովք
Ներգ.	յորդի	իւրում	յորդիս	իւրս

Միջին հայերենում ստացական դերանունների գրաբարատիպ հոլովման առանձին հետքերը պահպանվում են, սակայն քանի որ վերանում է հատկացուցիչ-հատկացյալի համաձայնությունը, ստացականն այլևս չի համարվում դերանվան առանձին ենթատեսակ՝ վերադառնալով ելման կետին՝ անձնական դերանուններին:

Արդի արևելահայերենում անձնական դերանունների սեռական հոլովաձևերը, փոխանվանաբար գործածվելով, եզակի թվում հոլովվում են *ի ընդհանրական հոլովմամբ՝ մերի, չերի, իմի, քոնի, մերից, չերից, իմից, քոնից, մերով, չերով, իմով, քոնով, մերում, չերում, իմում, քոնում*: Իսկ *մերոնք, չերոնք* հոգնակիները համարվում են գոյականներ²¹⁴: Նշենք,

²¹⁴ Որոշ լեզվաբանների կարծիքով՝ դրանք դերանուններ են:

որ սրանց կիրառությունը առավել բնորոշ է առօրյա-խոսակցական լեզվին:

Արևմտահայերենում անձնական դերանունների սեռական հոլովաձևերը ևս կարող են փոխանվանաբար գործածվել՝ եզակի թվում ենթարկվելով *ի* հոլովման, հոգնակիում՝ *ու*: Գրանք կոչվում են ստացական դերանուններ և, ի տարբերություն արևելահայերենի, ստանում են *ս*, *դ* հոդերը: Բերենք *իմս* և *քուկդ* դերանունների հոլովման հարացույցները:

Ուղղ.- հայց.	իմս/իմինս	իմիններս
Սեռ. - տր.	իմինիս	իմիններուս
Բաց.	իմինես	իմիններես
Գործ.	իմինով	իմիններովս

Ուղղ.- հայց.	քուկդ/քուկինդ	քուկիններդ
Սեռ. - տր.	քուկինիդ	քուկիններուդ
Բաց.	քուկինեդ	քուկիններեդ
Գործ.	քուկինով	քուկիններովդ

ՅՈՒՑԱԿԱՆ ԳԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՁԱՐԳԱՅՈՒՄԸ

Գրաբարի ցուցական դերանուններն են՝ **սա, դա, նա, այս, այդ, այն, սոյն, դոյն, նոյն**, որոնց մեջ առկա են **ս, դ, ն** արմատական հնչյունները: Բացի **սա, դա, նա** դերանուններից՝ մյուսները **պէս/պիսի/, քան, չափ** արմատների հետ մեկտեղ կազմում են մասն ալ ցուցականներ, օրինակ՝ **այսպէս, նոյնքան, այնչափ** և այլն:

Գրաբարի ցուցական դերանունները եռաշարք են և հնդեվրոպական ծագման՝ *so**, *do**, *no** հիմքերից տարբեր հնչյունափոխությունների միջոցով առաջացած: Բոլոր ցուցական դերանունները հոլովվում են դերանվանական հոլովմամբ: **Սա, դա, նա** դերանունները անձնանիշ կամ առարկայանիշ են, այսինքն՝ հարաբերակից են գոյականներին,

իսկ **սոյն, դոյն, նոյն** և **այս, այդ, այն** դերանունները նշանակում են և՛ անձ կամ առարկա, և՛ հատկանիշ, այսինքն՝ և՛ գոյական են, և՛ ածական:

Սա, դա, նա դերանունները հոլովվում են նույն սկզբունքով՝ եզակի սեռականում ունեն **ր**, տրականում՝ **մ** հոլովակերտը, բացառականը կազմվում է տրականից **է** հոլովակերտով, գործիականը՝ **ւ/վ**: Հոգնակիականությունը կատարվում է **ք/ա/ց** հոգնակերտների միջոցով: Հարացույցը ներկայացնենք **սա** դերանվան օրինակով՝

Ուղղ.	սա	սոքա
Հայց.	(գ)սա	(գ)սոսա
Մեռ.	սորա	սոցա
Տր.	սմա	սոցա
Բաց.	ի սմանէ	ի սոցանէ
Գործ.	սովաւ	սոքաւք
Ներգ.	ի սմա	ի սոսա

Միջին հայերենում այս դերանունները պահպանվում են նույնությամբ, հոլովման համակարգը մասամբ պարզեցվում է. եզակի սեռականը և տրականը նույնանում են, բացառականը կազմվում է սեռական-տրականի հիմքից՝ **մէ** կամ **նէ** հոլովակերտով, գործիականում ստանում են ընդհանրական դարձած **ով** կամ **մով** հոլովակերտը: Հոգնակի հոլովաձևերում հնդեվրոպական հիմքի **ո** ձայնավորը երբեմն սկսում է հնչյունավորվել **ա-ի**՝ **սաքա, դաքա, նաքա, սացա, դացա, նացա**:

Ուղղ.	սա	սոքա, սաքա
Հայց.	(գ)սա	(գ)սոսա, (գ)սաքա
Մեռ.	սորա, սարա	սոցա, սացա
Տր.	սորա, սարա	սոցա, սացա
Բաց.	ի սորանէ	ի սացմէ
Գործ.	սորանով	սացմով

Արևելահայ աշխարհաբարում այս դերանունները պահպանում են դերանվանական հոլովումը, բայց պարզեցված ձևով: Նրանք եզակի թվում ունեն առանձին սեռական և տրական հոլովներ, տրականից էլ կազմվում են բացառականը, գործիականը և ներգոյականը՝ **-ից, -ով, -ում** համապատասխան հոլովակերտներով, ինչպես՝ **սրանից, սրանով, սրանում**: Եզակի տրականին էլ հավելվում է **ք** հոգնակերտը՝ ստեղծելով **սրանք** հոգնակի ուղղականի ձևը, որը ենթարկվում է գրաբարատիպ **ց** հոլովման՝ **սրանց**: Հոգնակի սեռական-տրականից էլ կազմվում են բացառականը, գործիականը և ներգոյականը՝ **սրանցից, սրանցով, սրանցում**: Արևմտահայերենում այս դերանունները փաստացի միավորվում են *այս, այդ, այն* դերանունների հետ:

Այս, այդ, այն դերանունների գրաբարյան հոլովման հարացույցը ներկայացնենք *այս*-ի օրինակով: Հոլովումը կատարվում է կարճ և երկար ձևերի միջոցով. եզակի սեռականից հետո **այս, այդ, այն** դերանուններն ունեն երկար և կարճ ձևեր:

Ուղղ.	այս	այսք, այսոքիկ
Հայց.	(զ)այս	(զ)այս, (զ)այսոսիկ
Մեռ.	այսք, այսոքիկ	այսց, այսոցիկ
Տր.	այսմ, այսմիկ	այսց, այսոցիկ
Բաց.	յայսմ, յայսմանէ	յայսց, յայսոցիկ, յայսցանէ
Գործ.	այսու, այսուիկ	այսոքիւք, այսոքիմբք
Ներգ.	յայսմ, յայսմիկ	յայս, յայսոսիկ

Որպես կանոն, **-իկ** ածանցի միջոցով կազմված *այս, այդ, այն* ցուցականների երկար ձևերը գործածվում են գոյականների հետ միայն հետադաս կիրառության դեպքում, և որոշյալ գոյականը հոլովով, թվով և դեմքով համաձայնում է որոշիչ դերանվանը: Օրինակ՝ եզակի թվում՝ *գիւղդ այդ, զգիւղդ զայդ, գեղջդ այդորիկ, գեղջդ այդմիկ, ի գեղջէդ յայդմանէ, գիւղիդ այդուիկ, ի գեղջդ յայդմիկ*, հոգնակի թվում՝ *գիւղքդ այդոքիկ, զգիւղսդ զայդոսիկ, գիւղիցդ այդոցիկ, ի գիւղիցդ յայդցանէ/յայդոցիկ, գիւղիւքդ այդոքիւք/այդոքիմբք, ի գիւղսդ յայդոսիկ*: Նախադաս

որոշչի դիրքում գործածվում են կարճ ձևերը, որոնք պահանջում են համաձայնություն միայն հոլովով և թվով: Այսպես՝ եզակի թվում՝ *այդ գիւղ, զայդ գիւղ, այդր գեղջ, այդմ գեղջ, յայդմ գեղջէ, այդու գիւղիւ, յայդմ գեղջ, հոգնակի թվում՝ այդ գիւղք, զայդ գիւղս, այդց գիւղից, յայդց գիւղից, այդու կամ այդոքիւք գիւղիւք, յայդ գիւղս:*

Միջին հայերենում այս դերանունների հոլովումը պարզեցվում է. դրանք հոլովվում են **n** հոլովիչով, սեռականը և տրականը նույնանում են, հոգնակին կազմվում է **ոնք** կամ **ոք** հոգնակերտներով:

Ուղղ.	այս	այսոնք, այսոք
Հայց.	(զ)այս	(զ)այսոնք, այսոք
Մեռ.	այսոր/ասոր	այսոնց, այսոց/ասոնց, ասոց
Տր.	այսոր/ասոր	այսոնց, այսոց/ասոնց, ասոց
Բաց.	յայսոր/յասոր	յայսոնց, յայսոց/ յասոնց, յասոց
Գործ.	այսով/ասով	այսովք/ասովք

Արևելահայ աշխարհաբարում *այս, այդ, այն* դերանուններն այլևս չեն հոլովվում. նրանք հիմնականում ածականական կիրառություն ունեն, սակայն կարող են արտահայտել նաև գոյականների իմաստ: Արևմտահայերենում հիշյալ դերանունները ենթարկվում են հնչյունափոխության. *այ* երկբարբառը վերածվում է *ա* ձայնավորի, բացի այդ՝ դրանց կարող է գումարվել *-իկա* վերջավորությունը: Այսկերպ առաջանում են ցուցականների նոր ձևեր՝ *աս/ասիկա, ար/արիկա, ան/անիկա*, որոնք սեռական-տրականում հոլովվում են *-որ* մասնիկի միջոցով, ինչպես միջին հայերենում՝ *աս/ասիկա-ասոր, ար/արիկա-արոր, ան/անիկա-անոր*: Բացառական հոլովը հիմնականում կազմում են ուղղականի հիմքից *կէ* ձևությամբ՝ *ասկէ, արկէ, անկէ*: Գործիականը ևս ուղղականի հիմքից է՝ *ով* վերջավորությամբ, ունենք՝ *ասով, արով, անով*: Նշյալ դերանունների՝ *ասորմէ-ասորմով, արորմէ-արորմով, անորմէ-անորմով* ձևերն արդեն համարվում են հնացած: Նրանց հոգնակին կազմվում է *ոնք* ձևությամբ՝ *ասոնք, արոնք, անոնք*, որոնք հոլովվում են *p>g* հերթագայությամբ՝ *ասոնց, արոնց, անոնց*:

Սոյն, դոյն, նոյն դերանունների հոլովմանն անդրադառնանք *սոյն* դերանվան օրինակով: Գրաբարում այս դերանունները եզակի սեռականում ունեն **ք** հոլովակերտը, տրականում՝ **մ**, բացառականը կազմվում է տրականից **ի** նախդրի հավելմամբ՝ առանց **է** հոլովակերտի, գործիականում՝ **վ** և **բ**, այսինքն՝ կրկնակ հոլովակերտ ունեն: Ներգոյականի կազմությունը կանոնավոր է. եզակիում՝ **ի** + տրական, հոգնակիում՝ **ի** + հայցական: Հոգնակին կազմվում է **ք** հոգնակերտով, բայց վկայված է նաև վաղնջական **սո+ք+ին** կառույցը:

Ուղղ.	սոյն	սոքին, սոյնք
Հայց.	(զ)սոյն	(զ)սոսին, սոյնս
Սեռ.	սորին	սոցին, սոցուն, սոցունց
Տր.	սմին	սոցին, սոցուն, սոցունց
Բաց.	ի սմին	ի սոցունց
Գործ.	սովին, սովիմք	սովիմքք, սոքիմքք
Ներգ.	ի սմին	ի սոսին, ի սոյնս

Գոյականների հետ գործածվելիս *սոյն, դոյն, նոյն* դերանունները հոլովով և թվով համաձայնում էին իրենց որոշյալներին: Օրինակ՝ *նոյն քոյր, զնոյն քոյր, նորին քեռ, նմին քեռ, ի նմին քեռէ, նովին քերք, ի նմին քեռ, նոքին քորք, զնոսին քորս, նոցին քերց, ի նոցունց քերց, նովիմքք/ նովին քերքք, ի նոսին քորս*:

Միջին հայերենում այս դերանունները գրեթե դուրս են գալիս կիրառությունից, մնում է միայն *նոյն*-ը, բայց՝ որպես ածական. այն նշանակում է կրկնվող, արդեն հիշատակված անձ կամ երևույթ: Աշխարհաբարում *սույն* դերանունը մասամբ վերակենդանանում է, հատկապես գործառական ոճերում՝ *սույն թվականի հոկտեմբեր ամսին կամ սույնով հայրնում ենք* և նմանատիպ այլ կաղապարներում *սույն*-ը կիրառվում է որպես ցուցական դերանուն:

ԱՆՈՐՈՇ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՁԱՐԳԱՑՈՒՄԸ

Գրաբարի անորոշ դերանուններն են՝ **ոմն, ոք, իմն, ինչ, այլ, մեա / միա**: Անձերի անորոշությունն արտահայտվում է **ոմն, ոք** դերանունների միջոցով, առարկաների անորոշությունը՝ **իմն, ինչ**, իսկ հատկանիշի անորոշությունը՝ **այլ, մեա/միա**: Այս դերանունները գրաբարում հոլովվում էին. **ոմն, ոք**-ը եզակի թվում մինչև գործիականը դերանվանական հոլովմամբ, իսկ եզակի գործիականից՝ անվանական **ա** ներդրական հոլովմամբ: Նրանց հոգնակին միասնական է: **Իմն, ինչ** դերանունները պահպանել են հոլովման վաղնջական համակարգը և արդեն պակասավոր են. հոգնակի հարացույցն ընդհանրապես չի պահպանվել: Իսկ **այլ** և **միա** դերանունները հոլովվում են **ո** հոլովիչով, եզակի թվում ունեն սեռականից տարբերվող տրական հոլով՝ **ում** հոլովակերտով՝ *այլում, միսում*, որից կազմվում է եզակի ներգոյական հոլովը՝ *յայլում, ի միսում*: **Միա** դերանունը չունի հոգնակի թիվ:

Ուղղ.	ոմն	ոք	ոմանք
Հայց.	(զ)ոմն	(զ)ոք	(զ)ոմանս
Մեռ.	ուրումն	ուրուք	ոմանց
Տր.	ումենմն	ումեք	ոմանց
Բաց.	յումենմէ	յումեքէ	յոմանց
Գործ.	ոմամբ	ոմամք	ոմամբք
Ներգ.	յումենմն	յումեք	յոմանս

Ուղղ.	իմն	ինչ
Հայց.	(զ)իմն	(զ)ինչ
Մեռ.	իրիք	-
Տր.	իմիք	-
Բաց.	յիմենմէ	յիմեքէ
Գործ.	իւիք	-
Ներգ.	յիմիք	-

Ուղղ.	այլ	այլք	միս
Հայց.	(զ)այլ	(զ)այլս	(զ)միս
Մեռ.	այլոյ	այլոց	միսոյ
Տր.	այլում	այլոց	միսում
Բաց.	յայլմէ	յայլոց	ի միսմէ
Գործ.	այլով	այլովք	միսով
Ներգ.	յայլում	յայլս	ի միսում

Գրաբարում *մի* թվականը ետադաս կիրառությամբ սովորաբար արտահայտում էր անորոշության իմաստ, օրինակ՝ *այր մի, գայր մի, առն միոյ, առն միում, յառնէ միոջէ, արամբ միով, յառն միում*:

Միջին հայերենում այս դերանունները մեծ փոփոխությունների են ենթարկվում. **ոմն, որ**-ը գրեթե չեն գործածվում, նրանց հոլովված ձևերը ջնջվում են: Փոխարենը ստեղծվում են նոր անորոշ դերանվանաձևեր՝ **մէկ/ն** (առաջացել է **մի+ակ** կադապարով), **մէկումէկն, մէկայլ/մէկալ, իրք, մի**: Սրանց թեք հոլովաձևերը գրեթե վկայված չեն:

Արևելահայ աշխարհաբարում գրաբարյան որոշ ձևեր վերակենդանանում են, ինչպես **ոմն**-ի հոգնակի ուղղականը՝ **ոմանք**, և նրա սեռականը՝ **ոմանց**, որից էլ կազմվում են նոր բացառականը և գործիականը՝ **ոմանցից, ոմանցով**: Եզակի թվում, սակայն, **ոմն**-ն այլևս չի հոլովվում, ունի միայն ածականական կիրառություն հատկապես անձնանունների և անձ նշանակող բառերի հետ՝ *ոմն Հակոբ, ոմն Սիմոնյան, ոմն լրագրող*: **Ոք**-ն առանձին հանդես չի գալիս, այլ միայն **ոչ** ժխտական մասնիկի և **ամեն** արմատի հետ՝ **ոչ որ, ամեն որ**՝ կազմելով ժխտական և որոշյալ դերանուններ: **Ինչ** դերանունը **որ** դերանվան հետ ստեղծում է ընդհանրական անորոշություն արտահայտող կառույց՝ **ինչ-որ**: Միջին հայերենում առաջացած **մէկ** բառը ևս շարունակում է անորոշության իմաստ արտահայտել, առանձին կամ ինչ-որ կառույցի հետ, օրինակ՝ *մեկն ասաց, ինչ-որ մեկից լսեցի* և այլն: Արդի արևելահայերենի անորոշ դերանուններն են՝ **մի, ինչ, ինչ-որ, ինչ-ինչ, մի քանի, մի քանիսը, մեկը, ուրիշ/ը, այլ, որևէ, որևիցե, երբևէ, երբևիցե, ոմն, որոշ, այսինչ, այնինչ**: Արևմտահայերենում անորոշ դերանունները նույնն են, ինչ արևելա-

հայերենում՝ որոշ հնչյունական փոփոխություններով՝ մէկը, ուեւ, քանի մը, մէկ քանի, մէկ ալ, միւս, ուրիշ, ոմանք և այլն:

ՀԱՐՑԱՀԱՐԱՔԵՐԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՉԱՐԳԱՅՈՒՄԸ

Հնդեվրոպական մայր լեզվից հայերենը ժառանգել է հետևյալ հարցահարաբերական դերանունները՝ *n^o*, *n^oի*, *ի^o*, *զի^o*, *զի^oնչ*, *n^oր*, *քանի^o*: Այս բառերը պարույկի առկայության դեպքում հարցական դերանուններ են, իսկ նրա բացակայության դեպքում՝ հարաբերական:

Ո/ուի-ը նույն բառի տարբերակներն են, որ ծագում են հնդեվրոպական **k^wos* ձևից՝ նախաձայն *k^w*-ի անկմամբ: Նշված նախաձևից՝ **k^wó*, հայերենում առաջացել է նաև *որ* հարցահարաբերական դերանունը, որն արտահայտում է և՛ անձերի, և՛ իրերի իմաստ: Սկզբում *n*-ն ընդհանուր գործածություն ուներ, հետո ձայնավորից առաջ գտնվելու դեպքերում հորանջից խուսափելու համար նրան ավելանում է *ի*-ն, *n*-ն սկսում է գործածվել բաղաձայնով սկսվող բառերի հետ: Ինչպես օրինակ՝ *n^o զիտէ*, *n զայր* կամ *ուի տաւր*, *ուի է*: *Ո/ուի*-ն արտահայտում է միայն անձերի իմաստ, գրաբարում պատկանում է դերանվանական հոլովման, չունի գործիական հոլով, այն փոխարինվում է *որ* դերանվան եզակի և հոգնակի գործիականներով՝ *որուի/որովք*:

Ի/զի/զինչ ձևերը ծագում են հնդեվրոպական **k^wis* ձևից, *ի*-ն ուներ նաև *իք* ձևը՝ որպես անորոշ դերանուն: Հ. Աճառյանը նշում է, որ *ի* դերանունը դուրս է մղվում հայերենից իր գերկարծության և հատկապես *ի* նախդրի հետ շփոթից խուսափելու պատճառներով²¹⁵, վերանում է նաև նրա նշույթավոր ձևը՝ *իք*, թեև պահպանվում են նրա ժխտականը՝ *չիք*, և հնագույն թեք հոլովաձևերը՝ *իք > իրիք*: *Ի/զի/զինչ* դերանունները գրաբարում իրանիշ են: Այս դերանունների թեք հոլովաձևերն արդեն գրա-

²¹⁵ Տե՛ս Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. II, Եր., 1954, էջ 390:

բարում կորցրել էին իրենց բուն հոլովական իմաստները և արտահայտում էին՝ *իմչո՞ւ, ի՞նչ պատճառով, ինչի՞ համար, ինչպե՞ս* իմաստները:

Ներկայացնենք նրանց գրաբարյան հոլովման հարացույցները:

Ուղղ.	ո,	ով	ոյք
Հայց.	(զ)ո,	(զ)ով	(զ)ոյս
Մեռ.	ոյր		ոյց
Տր.	ում		ոյց
Բաց.	յումէ, յումմէ		յոյց
Գործ.	(որով)		(որովք)
Ներգ.	յում		յոյս

Ուղղ.	զի , զինչ
Հայց.	զի, զինչ
Մեռ.	էր
Տր.	իւր, հիւմ, էրում
Բաց.	յիմէ, առ իմէ, զմէ
Գործ.	իւ
Ներգ.	յիւմ, յէրում, ի հիւմ

Ուղղ.	որ	որք
Հայց.	(զ)որ	(զ)որս
Մեռ.	որոյ	որոց
Տր.	որում	որոց
Բաց.	յորմէ	յորոց
Գործ.	որով	որովք
Ներգ.	յորում	յորս

Ուղղ.	քանի	քանիք
Հայց.	(զ)քանի	(զ)քանիս
Մեռ.	քանոյ/քանոյ	քանեաց
Տր.	քանոյ/քանոյ	քանեաց

Բաց. ի քանոյ/ ի քանոյ ի քանեաց
 Գործ. քանեալ/քանով քանեալք
 Ներգ. ի քանի ի քանիս

Միջին հայերենում գործածվում են հետևյալ հարցահարաբերական դերանունները՝ *ո՞վ, ի՞նչ/զինչ, ո՞ր, քանի՞*։ Սրանց հոլովման հարացույցները բավական խառն են։

Ուղղ.	ով	ովք
Հայց.	(զ)ով	-
Սեռ.	ում	-
Տր.	ում	-
Բաց.	յումէ, յումնէ	-
Գործ.	ումով	-

Ուղղ.	որ	-
Հայց.	(զ)որ	-
Սեռ.	որոյ/որու	-
Տր.	որում/որու	-
Բաց.	յորմէ	-
Գործ.	որով	-

Ձինչ դերանունը հիմնականում անհոլով է կամ էլ պահպանում է գրաբարյան սեռականի ձևերը, *ինչ*-ը սեռականում հանդիպում է *ի* հոլովիչով՝ *ինչի*։ Բառասկզբի *ի*-ն կարող է հնչյունավորվել *ը*-ի՝ ինչի>ընչի։

Արդի հայերենում հարցահարաբերական դերանունները հետևյալներն են՝ *ո՞վ, ի՞նչ, ո՞ր, ինչպիսի՞, որպիսի՞, ինչպե՞ս, որպե՞ս, որքա՞ն, ինչքա՞ն, ինչչա՞նի, որչա՞նի, ինչպե՞ս, ինչո՞ւ, որտե՞ղ, ե՞րբ, ո՞ւր, քանի՞, քանի՞սը, ո՞րերորդ, քանի՞երորդ*։ Այս դերանունները չունեն ընդհանուր իմաստային, ձևաբանական և շարահյուսական հատկանիշներ, և, ըստ Մ. Ասատրյանի, նրանց միավորող միակ ընդհանուր հատկանիշը հնչե-

րանգն է²¹⁶: **Ով**-ը, ինչպես գրաբարում, արտահայտում է հարցում կամ հարաբերություն անձերի մասին. այն մասամբ պահպանել է դերանվանական հոլովումը. հոգնակի թեք հոլովածները կորցրել էր դեռ միջին հայերենում: Եզակի թվում չունի նաև ներգոյական հոլով: Ուղղ.՝ *ով*, սեռ-տր.՝ *ուս*, բացառ.՝ *ումից*, գործ.՝ *ումով*: Հոգնակի ուղղականն է՝ *ովքեր*: Սա յուրօրինակ կազմություն է կրկնակի հոգնակերտներով՝ նոր և հին (ով+ք+եր=ովքեր): Արևմտահայերենում այս ձևը գործածական չէ:

Ինչ-ն արտահայտում է հարցում կամ հարաբերություն իրերի մասին, միջին հայերենից սկսած՝ հոլովվում է *ի* ընդհանրական հոլովմամբ և՛ եզակի, և՛ հոգնակի թվերում:

Արևելահայերեն

Ուղղ.	ինչ/ը	ինչեր/ը
Սեռ.- տր.	ինչի/ն	ինչերի/ն
Բաց.	ինչից	ինչերից
Գործ.	ինչով	ինչերով
Ներգ.	ինչում	ինչերում

Արևմտահայերեն

Ուղղ.	ինչ/ը	ինչեր/ը
Սեռ.- տր.	ինչի/ն	ինչերու/ն
Բաց.	ինչէն	ինչերէ
Գործ.	ինչով	ինչերով

Որ դերանունն արդի արևելահայերենում արտահայտում է հարցում կամ հարաբերություն որակական հատկանշի վերաբերյալ, սակայն այն կարող է նաև արտահայտել առարկայական նշանակություն՝ հոլովվելով եզակի թվում *ի* հոլովիչով, իսկ հոգնակի թվում *ք/ց* հոլովմամբ, որովհետև նրա հոգնակին կազմվում է *ոնք* մասնիկով՝ *որոնք*:

²¹⁶ Տե՛ս **Մ. Ասատրյան**, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, հ. Բ, Եր., 1973, էջ 160:

Ուղղ.	որ/ը	որոնք
Հայց.	որ/ը, որին	որոնց
Մեռ. տր.	որի/ն	որոնց
Բաց.	որից	որոնցից
Գործ.	որով	որոնցով
Ներգ.	որում	որոնցում

Արևմտահայերենում *որ* և *ով* դերանունների միավորումը, որ սկսվել էր գրաբարում, գրեթե ավարտին է հասել: Բերենք հարացույցը:

Ուղղ.	ով	որոնք
Հայց.	գով/գոր	որոնք/գորս
Մեռ.-տր.	որու/ն	որոնց
Բաց.	որմէ	որոնցմէ
Գործ.	որով/որմով	որոնցմով

Արդի արևելահայերենում կարող են հոլովվել նաև *քանի* դերանվան փոխանվանական *քանիս*-ը ձևը, *որտեղ*, *երբ* բառերը: Այս դերանունները հոլովվում են միայն եզակի թվով, չունեն ներգոյական հոլովաձևեր: *Քանիս*-ը հոլովվում է *ի* ընդհանրական հոլովմամբ՝ *ի, ից, ով* հոլովակերտներով. *քանիսի, քանիսից, քանիսով*: Արևմտահայերենում *քանի*-ն թեքվելիս *ս* չի ստանում, բայց դարձյալ հոլովվում է *ի* հոլովիչով՝ *քանիի*: Հոգնակի թվում այն արդեն *ու* հոլովման է, ինչպես *եր/ներ* հոգնակերտներով բոլոր բառերը՝ *քանիները, քանիներուն, քանիներէն, քանիներով*: *Երբ*-ը արևելահայերենում ենթարկվում է *վա* հոլովման՝ *երբվա, երբվանից, երբվանով*: Արևմտահայերենում այն *ուսն* հոլովման է՝ *երբուսն, երբէն, երբուրնէ*. գործիականի ձևը չի հանդիպում: *Որտեղ* դերանունը արևելահայերենում ունի սեռական, բացառական և գործիական հոլովներ՝ *որտեղի, որտեղից, որտեղով*: Արևմտահայերենում ևս այն *ի* հոլովման է՝ համապատասխան հոլովակերտներով, օրինակ՝ *որտեղ, որտեղի, որտեղէն, որտեղով*:

ՈՐՈՇՅԱԼ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ

Որոշյալ դերանունները ցույց են տալիս առարկաների քանակական ամբողջություն կամ առանձին ամբողջություն և ունեն ընդհանրական իմաստ:

Գրաբարի որոշյալ դերանունները լինում են երկու տեսակի՝ հոլովովո՝ **ամենայն, ամենեքին, ամենեքեան, բոլորեքին, բոլորեքեան**, և անհոլով՝ **իւրաքանչիւր, անձնիւր/անցնիւր** (=յուրաքանչյուր) **համայն, հանուր/ց, ողջոյն** (=ողջ ամբողջ), **ամէն, բոլոր**: Նշենք, որ **բոլոր** դերանունը շատ հազվադեպ հանդիպում է հոլովված ձևերով: Հանդիպում են՝ **բոլորում** - եզակի տրական, **բոլորով** - եզակի գործիական ձևերը. այլ հոլովածներ վկայված չեն: Այս դերանունների հիմքում հնդեվրոպական ծագման **ամեն** և **բոլոր** արմատներն են՝ տարբեր ածանցներով: Նրանք կարող են ունենալ և՛ գոյականական կիրառություն՝ *բոլորեքին եկին, այսք էին ամենեքեան*, և՛ ածականական՝ *ըստ իւրաքանչիւր տեղեաց, համայն իշխանաց, ողջոյն մարդիկ* և այլն: Հոլովովո դերանունները երկարժեք են՝ թե՛ գոյական, թե՛ ածական: Որպես ածական՝ **ամենեքին, ամենեքեան, բոլորեքին, բոլորեքեան** ձևերը գործածվում են միայն հոգնակի գոյականների հետ նախադաս կամ ետադաս՝ հիմնականում համաձայնելով իրենց որոշյալ գոյականների հետ: **Ամենայն**-ը չունի հոգնակի թիվ և, որպես կանոն, չի համաձայնում իր որոշյալների հետ, թեև հետադաս կիրառությունների դեպքում վկայված են նաև հոլովական համաձայնության դեպքեր՝ *լեռնականաւքն ամենայնի, ի ժողովրդէն յամենայնէ* և այլն: Անհոլով որոշյալ դերանուններից **իւրաքանչիւր**-ը և՛ գոյական է, և՛ ածական: Մնացած դերանունները ընդհանրական իմաստի ածականներ են՝ *բոլոր մարմնոյս, հանուրց մարդկութեանս, բոլոր ընդհանաւքն* և այլն:

Եքին կամ *եքեան* ածանցով բաղադրված ձևերն անեզական են՝ ուներդրական հոլովման: Այս ածանցները մասնակցում են նաև անձներական թվականների կազմությանը՝ նրանց ևս հաղորդելով միասնության իմաստ՝ *եւքն - եւքնեքին / եւքնեքեան*- յոթն էլ միասին, *երկու- երկոքին/երկոքեան*- երկուսն էլ:

Ուղղ.	ամենեքին, ամենեքեան	բոլորեքին, բոլորեքեան
Սեռ.- տր.	ամենեցուն, ամենեցունց	բոլորեցուն, բոլորեցունց
Հայց.	(զ)ամենեսին, (զ)ամենեսեան	(զ)բոլորեսին, (զ)բոլորեսեան
Բաց.	յամենեցունց	ի բոլորեցունց
Գործ.	ամենեքումբբ	բոլորեքումբբ
Ներգ.	յամենեսին, յամենեսեան	ի բոլորեսին, ի բոլորեսեան

Ամենայն ձևը հոլովվում է *ի* վերջադրական հոլովմամբ, ունի միայն եզակի թիվ՝ **ամենայն, ամենայնի, (զ)ամենայն, յամենայնէ, ամենայնի, յամենայնի**: Որոշ կիրառություններում այն կարող է արտահայտել նաև անորոշ առարկայի իմաստ:

Միջին հայերենում այս ձևերը դուրս են գալիս գործածությունից. եթե անգամ գործածվում են, ապա իբրև գրաբարաբանություն: **Բոլոր**-ը և **ամեն/ամեն**-ը սկսում են հոլովվել հիմնականում **ի** հոլովիչով՝ **ամենի, բոլորի**, թեև **ամեն**-ը սեռական հոլովում վկայված է նաև *ոյ> ու* հոլովիչներով՝ **ամենոյ>ամենու**: Տարածված է նրանց գործիականը **ով** մասնիկով՝ **ամենով, բոլորով**, հոլովվում են միայն եզակի: **Ամեն** ձևը որոշ դեպքերում ստանում է **ք** հոգնակերտը՝ **ամենք**, որը հոլովվում է **ի** հոլովմամբ՝ **ամենքի**: **Ամեն** արմատը որոշյալության իմաստով կապակցություններ է ստեղծում **ոք, ինչ, մի, մեկ, բան** բառերի հետ՝ **ամեն մի, ամեն մեկ, ամեն ոք, ամեն ինչ** և այլն: Հանդիպում են նաև **իւրաքանչիւր** դերանվան **ի** հոլովմամբ ձևեր՝ **իւրաքանչիւրի**: Վկայված է նաև *ամեն մեկ* նորակազմ դերանունը, որը հոլովվում է **ի** հոլովիչով՝ **ամեն մեկ, զամեն մեկ, ամեն մեկի, յամեն մեկէ, ամեն մեկով**:

Աշխարհաբարը ժառանգում է հիմնականում միջինհայերենյան օրինակափությունները: Արևելահայ աշխարհաբարի որոշյալ դերանուններն են՝ *ամեն/ը, ամենքը, ամեն մի, ամեն ինչ, ամեն մեկը, ամեն ոք, բոլոր/ը, յուրաքանչյուր, յուրաքանչյուր ոք, ողջ/ը, ամբողջ/ը, համայն, ամենայն, հանուր*: Արևմտահայերենում գրեթե մույն ձևերն են՝ *ամեն ինչ, ամեն, ամեն ոք, իւրաքանչիւր, իւրաքանչիւր ոք, ողջ, ամբողջ* և այլն:

Գոյականական կիրառության դեպքում հոլովվող որոշյալ դերանունները արևելահայերենում անցել են *ի* ընդհանրական հոլովման: Հոլովման պատկերը հետևյալն է՝ *ամենքը, ամենքի/ն, ամենքից, ամենքով, բոլոր/ը, բոլորի/ն, բոլորից, բոլորով, յուրաքանչյուրը, յուրաքանչյուրի/ն, յուրաքանչյուրից, յուրաքանչյուրով* և այլն:

Արևմտահայերենում միայն *ամեն* որոշյալ դերանունն է *ու* հոլովման. մնացածը դարձյալ հիմնականում *ի* հոլովման են: Այսպես՝ *ամեն, ամենուն, ամենն, ամենով*: Նրա հոգնակին է *ամենք* ձևը, որն արդեն *ի* հոլովման է, ինչպես միջին հայերենում՝ *ամենքը, ամենքին, ամենքէն, ամենքով*:

ՓՈԽԱՊԱՐԶ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՋԱՐԳԱՑՈՒՄԸ

Փոխադարձ դերանունները ցույց են տալիս իրար հետ փոխադարձ հարաբերության մեջ գտնվող առարկաներ: Գրաբարի փոխադարձ դերանունները երկուսն են՝ *իրերաց, միմեանց*: Երկուսն էլ անեզական են, չունեն ուղղական հոլով, հոլովվում են անվանական հոլովմամբ. *իրեսարս*-ը՝ **ի-ա** վերջադրական, *միմեանս*-ը՝ **ա** ներդրական:

Ուղղ.	-	-
Սեռ./տր.	իրերաց	միմեանց
Հայց.	(զ)իրեսարս	(զ)միմեանս
Բաց.	յիրերաց	ի միմեանց
Գործ.	իրերաւք	միմեամբք
Ներգ.	յիրեսարս	ի միմեանս

Միջին հայերենում այս դերանունները կրում են հնչյունական և ձևաբանական որոշ փոփոխություններ, բացի այդ՝ ստեղծվում են նոր ձևեր՝ *մէկզմէկ, մէկմէկի*: *Մէկզմէկ*-ն ունի *ի* հոլովմամբ սեռական-տրական՝ *մէկզմէկի*, մյուս հոլովաձևերը վկայված չեն: Անենագործածական են մնում հնչյունափոխված *իրար/իրաց*-ը և անփոփոխ մնացած *մի-*

մեանց-ը: Վերջիններիս հոլովման վկայված հարացույցներն ունեն հետևյալ պատկերը:

Ուղղ.	-	-
Սեռ.-տր.	իրաց, իրար	միմեանց
Հայց.	(զ)իրար, իրուր	(զ)միմեանս
Բաց.	յիրացմէ, յիրարմէ	ի միմեանց, ի միմենց
Գործ.	իրով	-

Արդի արևելահայերենի փոխադարձ դերանուններն են՝ *միմյանց, իրար, մեկմեկու/մեկմեկի*: Այսինքն՝ *միմյանց*-ը պահպանվել է նույնությամբ, մյուսները միջինհայերենյան ժառանգություն են: Ինչպես գրաբարում, նրանք ունեն հոգնակիության իմաստ, ցույց են տալիս իրար հետ փոխադարձ կապված մեկից ավելի առարկաներ, ունեն չորս հոլով. գուրկ են ուղղական հոլովից, որովհետև ինքնին սեռական-տրականի նշանակություն են արտահայտում: Հարացույցը հետևյալն է.

Ուղղ.	-	-	-
Սեռ.-տր.	իրար	միմյանց	մեկմեկու
Բաց.	իրարից	միմյանցից	մեկմեկուց
Գործ.	իրարով	միմյանցով	մեկմեկով
Ներգ.	իրարում	միմյանցում	մեկմեկում

Արևմտահայերենում փոխադարձ դերանունները գրեթե նույնն են՝ *միմեանց, իրար, մեկզմեկ*: Դարձյալ հոլովվում են անվանական հոլովմամբ, բացառականում՝ *մէ* հոլովակերտով, գործիականում՝ *մով* կամ *ով*: Ներգոյական հոլով չունեն:

Ուղղ.	-	-	-
Հայց.	(զ)իրար	միմեանց	մեկզմեկ
Սեռ./տր.	իրարու	միմեանց	մեկզմեկու
Բաց.	իրարմէ	միմեանցմէ	մեկզմեկէ
Գործ.	իրարմով	միմեանցմով	մեկզմեկով

Փոխադարձ դերանունները հայերենի զարգացման բոլոր փուլերում արտահայտել են առարկայական նշանակություն, նախադասության մեջ կատարում են գոյականին բնորոշ շարահյուսական պաշտոններ, միայն ենթակա դառնալ չեն կարող, որովհետև արտահայտելով հարաբերության իմաստ՝ չունեն ուղղական հոլով:

ԺԽՏԱԿԱՆ ԳԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Գրաբարում չէին տարբերակվում առանձին ժխտական դերանուններ, որովհետև ժխտման կառույցը տարբերվում էր աշխարհաբարից: Կրկնակի ժխտում չկար, օրինակ՝ *ոք ոչ տեսանէր, ոչ ինչ գործէր*: Նման կաղապարներում *ոչ*-ը բայի ժխտմանն էր հիմնականում վերաբերում և դերանվան հետ միասնական չէր ընկալվում: Միջին հայերենից սկսած, երբ փոխվում է ժխտման սկզբունքը, **ոչ** մասնիկն արդեն կայուն կապակցություններ է ստեղծում անորոշ դերանունների հետ՝ **ոչ ոք, ոչ մի, ոչ մեկ, ոչ ինչ**: Աշխարհաբարում դրանք համարվում են ժխտական դերանուններ, թեև որոշ քերականներ, ինչպես օրինակ՝ Ս. Աբրահամյանը, առանձին ժխտական դերանուններ չի ընդունում. դրանք տեղաբաշխում է որոշյալ դերանունների մեջ՝ որպես նրանց բացասման ձևեր, այսպես՝ **ամեն ոք - ոչ ոք, ամեն ինչ - ոչինչ, ամեն մի - ոչ մի, ամեն մեկը - ոչ մեկը**:

Գրական արևելահայերենում սրանք, բացի **ոչ մի** ժխտականից, հոլովվում են անվանական **ի** հոլովմամբ՝ **ոչ ոք, ոչ ոքի/ն, ոչ ոքից, ոչ ոքով, ոչինչ/ը, ոչնչի/ն, ոչնչից, ոչնչով, ոչնչում, ոչ մեկը, ոչ մեկի/ն, ոչ մեկից, ոչ մեկով, ոչ մեկում**:

Արևմտահայերենում հոլովման պատկերը գրեթե նույնն է. ժխտական դերանուններն անցել են *ի* հոլովման, օրինակ՝ **ոչ ոք, ոչ ոքի, ոչ ոքէ, ոչ ոքով**, կամ՝ **ոչինչ, ոչինչի** (ինչյունավորություն չի կատարվում), **ոչինչէ, ոչինչով**: Ի տարբերություն արևելահայերենի՝ ժխտական դերանունները նախադասության մեջ հանդես են գալիս բայի՝ միայն դրական խոնարհման ձևերի հետ, ինչպես՝ *Ոչ ոք ըսավ...*:

ՉԹԵՔՎՈՂ ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐ ՄԱԿԲԱՅՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՁԱՐԳԱՅՈՒՄԸ

Մակբայ են կոչվում այն բառերը, որոնք արտահայտում են գործողության, ինչպես նաև հատկանշի հատկանիշ: Մակբայներն իրենց խոսքիմասային իմաստով խիստ մոտ են ածականներին, որոնք ևս հատկանիշ են արտահայտում: Ընդ որում՝ հայերենում, սկսած գրաբարից, ածականներն անմիջաբար կարող են արտահայտել և՛ առարկաների հատկանիշ, և՛ հատկանշի հատկանիշ: Հայերենում որակական ածականները երկարժեք են՝ համատեղելով մակբայական իմաստը ածականականի հետ: Բերենք մակբայական տարածված կիրառություն ունեցող ածականների օրինակներ գրաբարից՝ *քաջ խօսել, քաջ գիրել, ուղիղ առնել, ուղիղ ասել, քիւր առնել, քիւր գիրել, գեղեցիկ գործել, ասել մեծաշայն*: Միջին հայերենում և աշխարհաբարի երկու տարբերակներում էլ այսպիսի կապակցությունները հաճախադեպ են:

Իմաստային դասակարգմամբ՝ հայ քերականագիտության մեջ տարբերակվում են ժամանակի, տեղի, չափ ու քանակի և ձևի մակբայներ: Կան նաև ընդհանրական կոչվող մակբայներ. դրանք այն մակբայներն են, որոնք կարող են արտահայտել տարբեր տեսակների մակբայների նշանակություններ:

Գրաբարում կային *ս, դ, ճ* հոդերից բաղադրված կազմություններ, որոնք կոչվում էին դերանվանական մակբայներ՝ *ասւր* (այստեղ), *անդ* (այնտեղ, այն ժամանակ, այն կողմ), *այսր, անդր* (այնտեղ, դեպի այնտեղ, մի կողմ), *ասորի* (այստեղի), *անորի* (այնտեղից), *այդի* (այդտեղից, այդտեղ): Դրանք խոսքի մեջ կարող էին հանդես գալ և՛ որպես գոյականների լրացում (այս դեպքում նրանք թարգմանվում էին ցուցական դերանունների միջոցով), և՛ որպես բայերի լրացում, այսինքն՝ մակբայ: Օրինակ՝ *Գայր հասանէր ի տեղի անդր* = Գալիս հասնում էր այն տեղը կամ *Ածէ՛ք այսր* = Բերե՛ք այսպիսի:

Միջին հայերենում այս դերանուն-մակբայները կորցնում են որոշիչ դառնալու հատկանիշը, և դրանց պահպանված ձևերը՝ *ասւր, անդ, այրի, անդր*, վերածվում են տեղի կամ ժամանակի մակբայների:

Թվարկենք տարբեր իմաստներ արտահայտող մակբայների բնորոշ օրինակներ հայերենի զարգացման երեք փուլերից՝ գրաբարից, միջին հայերենից և աշխարհաբարի երկու ճյուղերից: Այսպես՝ տեղի մակբայները ցույց են տալիս գործողության կատարման տեղը: Բերենք օրինակներ՝

1. գրաբարից՝ *անդ, անդէն, ասոր, ասորէն, ասորի, այրի, անդի, աստանօր* (այստեղ), *առաջեալ* (առջևը, դիմացը), *ի վերուստ, ի ներքոյ, արտաքս* (դուրս, դուրսը), *քացուստ* (հեռվից), *յայնկոյս* (այնկողմ, այնտեղ), *ուսրեմն* (մի տեղից), *ուրէք* (մի տեղ) և այլն,
2. միջին հայերենից՝ *առջև, ասկից, անկից, հոս, հոն, հոս-հոն, կշրին, հեռի, յերոյառաջ, ի ներս, ի դուրս* և այլն,
3. արևելահայ աշխարհաբարից՝ *առաջ, դուրս, ներս, ետ, վերև, ներքև, ցած, արորև, հեռու, մոտ* և այլն,
4. արևմտահայ աշխարհաբարից՝ *անդին, ասդին, քովէ-քով, տուն առ տուն, ամէնուր, դռնէ-դուռ* և այլն:

Ժամանակի մակբայները ցույց են տալիս գործողության կատարման ժամանակը: Նշենք մի քանի օրինակներ՝

1. գրաբարում՝ *արդէն, այժմիկ, այգուն* (առավոտյան), *ամարայնոյ* (ամռանը), *վաղվաղակի* (շուտով), *տակաւին, երբեմն, վաղիւ, եռանդ* (երեկվան նախորդող օրը), *երբէք* (երբեմն), *հերոս* (անցյալ տարի) և այլն,
2. միջին հայերենում՝ *արդ, այժմ, առաւօտոց, թէգ-թէգ, կանուխ, հուսկ, հիմիկ, յամենայն արեւն, ցորեկով* և այլն,
3. արևելահայ աշխարհաբարում՝ *այսօր, երեկ, վաղը, այժմ, արդ, վաղուց, հավերժ, հետագայում, առաջիկայում, ներկայումս, շուրով, տակավին* և այլն,
4. արևմտահայ աշխարհաբարում՝ *ալ, առտու, հիմակուրնէ, հիմակուհիմա, արեն-արեն, արենօք, հիմակուրնէ, շարունգ, պգրիկուց, Էգուց, օրին մէկը* և այլն:

Ձևի մակբայները ցույց են տալիս գործողության կատարման ձևը: Բերենք մի քանի օրինակներ՝

1. գրաբարում՝ *դիրաւ, սկանայ, արմատաքի* (արմատով, արմատից), *ստրամնացի, վարկալարագի* (վայրիվներ), *բռնցի* (բռով), *ի տարապարտուց* (իգութ), *յանպարաստից, ուժգնակի* և այլն,
2. միջին հայերենում՝ *այլվի, աղէկ, բարով, խոլոր, միասին, մէկ բերան, նահախ, թէգ, տիքա-տիքա* և այլն,
3. արևելահայ աշխարհաբարում՝ *արագ, դանդաղ, հապճեպ, շտապ, սկանա, խտրիվ, հայրաբար, զանգվածաբար, որոշակիորեն, միտովի, ազգովի* և այլն,
4. արևմտահայ աշխարհաբարում՝ *գաղտնի, ի գութ, աղէկ, կամաց, մէկէն, արագաբար, հայրօրէն, զանգուածօրէն, պատահօրէն, որոշապէս* և այլն:

Չափ ու քանակի մակբայները ցույց են տալիս գործողության կամ հատկանշի դրսևորման չափն ու աստիճանը: Բերենք օրինակներ՝

1. գրաբարում՝ *քանիցս, երիցս, չորիցս, կրկին, հազ քան հազ* (քիչ-քիչ), *գամու գամու* (շատ անգամ), *քովանդակ, յովովակի* (շատ անգամ), *հանապազորդ* (միշտ), *ցանգ, ի սպառ* և այլն,
2. միջին հայերենում՝ *առաւել, այլ աւելի, լման, համակ, հեղ, հեղ մի, մէկ-մէկ, տուպլ, կարի, յոյժ* և այլն,
3. արևմտահայ աշխարհաբարում՝ *յոյժ, զգալաբար, ամբողջապէս, հեղ մը, քանիցս, կրկին* և այլն:
4. արևելահայ աշխարհաբարում՝ *կրկին, կրկնակի, քառակի, եռապարիկ, քառապարիկ, երիցս, քանիցս, շատ, քիչ, բավական, իսպառ, սաստիկ, չափազանց* և այլն:

Ըստ կազմության՝ բոլոր մակբայները լինում են հինգ տեսակի՝ ա) պարզ կամ արմատական, բ) բարդ, գ) ածանցավոր, դ) քերականական ձևերից առաջացած, ե) նկարագրական: Հայերենի զարգացման երեք փուլերում էլ առկա են մակբայների կազմության այս հինգ հնարավոր տարբերակները: Բայց արմատական մակբայներն ամենափոքրաթիվն են, ընդ որում՝ գրաբարում ածանցավոր կամ բարդ մակբայական կազմությունները հետագայում կարող են դառնալ անտրոհելի, այսինքն՝ արմատական, օրինակ՝ *երբէք, ուրէք, հապճեպ, իսպառ* և համանման մակբայներն արդի հայերենում գիտակցում են պարզ բառեր:

Բերենք գրաբարում կիրառվող պարզ մակբայների օրինակներ՝ *արդ, ասար, անդ, անդր, դեռ, կրկին, յոյով, յար, շոյով* շուր, նախ, սրեալ, վայր, վեր, վաղ, ուր և այլն: Գրաբարյան այս մակբայների մեծամասնությունը հանդիպում է նաև միջին հայերենում, սակայն 12-16-րդ դարերում առաջանում են նաև նոր արմատական մակբայներ, ինչպես՝ *աղէկ, հոս, հոն, եւր, լման, հիմա, հիմի, ոնց* և այլն: Արևմտահայ աշխարհաբարում միջինհայերենյան մակբայները գրեթե նույնությամբ պահպանվում են: Արևելահայ աշխարհաբարում դրանք ակնհայտ բարբառային կնիք ունեն. այստեղ առավել տարածված են գրաբարյան ձևերը, ինչպես՝ *արդ, իսպառ, հավեւր, հավերժ, հանկարծ* և այլն:

Բառաբարդման միջոցով մակբայներ կերտելու եղանակը կենսունակ է հայերենի զարգացման երեք փուլերում էլ: Բերենք որոշ օրինակներ՝ *յայնժամ, մինչեւ, մինչդեռ, զհարդ, միահաադոյն, այգուն այգուն, երբեմն երբեմն, յայնկոյս, օր ըստ օրէ* (գրաբար) *իդեհիդեհ, րկուրկուր, րակրակ, յերկան-յերկան, մէկ-մէկ, մէկրեդ, ինքնըստիքն, կիսկատար, խելագնաց* (միջին հայերեն) և այլն:

Հայերենի զարգացման երեք շրջաններում էլ ամենատարածվածը կրկնավոր բարդությունների միջոցով նոր մակբայների ստեղծման եղանակն է, ընդ որում՝ բաղադրիչներից մեկը կարող է հոլովաձև լինել: Մեծաթիվ են նաև գրաբարյան *առ, ի, ըստ, ց* նախդիրներից կազմված և կրկնավոր մակբայները՝ *մի ըստ միոջէ* (մեկառմեկ), *ամ ըստ ամէ, զամ քան զզամ, ուրէք ուրէք* (տեղ-տեղ), *ուսրէք ուսրէք* (այս ու այն կողմից), *յոյժ յոյժ* (գրաբար), *ծին-ծին, մաս-մաս, բարկ-բարկ, յերկան-յերկան, րարեւար, ուշիկ-ուշիկ* (միջին հայերեն), *խառնիխուռն, բառ առ բառ, կեւր առ կեւր, օրեցօր, րարեցրարի, վերջիվերջո, շուր-շուր, ուշ-ուշ* (աշխարհաբար) և այլն:

Ածանցավոր մակբայական կազմությունները բավական շատ են: Հայերենում զուտ մակբայական գործուն ածանցները հետևյալներն են՝ *-աբար, -պէս, -օրէն, -ագին, -ակի, -ովի(ն), -ին, -պարիկ*: Բերենք հայերենի բոլոր շրջաններում վկայված ածանցավոր մակբայների օրինակներ՝ *արիաբար, աստվածաբար, խոհեմաբար, հեզաբար, զեղեցկապէս, վայելչապէս, հոգեպէս, արքայորեն, նրբորեն, քաջորեն, սրբորեն, ար-*

տասավագին, ողորմագին, սաստկագին, տրտմագին, հանկարծակի, առանձնակի, գլխովին, հիմնովին, յուրովի, տնովի, կրկին, վերստին, ամենևին, բյուրասպարիկ, կրկնապարիկ, եռապարիկ, քառապարիկ և այլն:

Հայերենի զարգացման բոլոր փուլերում քերականական ձևերից ամենից շատ մակբայներ առաջացել են բացառական, գործիական հոլովների քարացած ձևերից, երբեմն՝ հայցականի և ներգոյականի հոլովաձևերից: Նախագրաբարյան բացառական հոլովաձևերից են ծագել հետևյալ մակբայները՝ *աստուար, այլուար, հեռուար, վերուար, երկնուար*: Բացառականի գրաբարյան և միջինհայերենյան ձևերից են ծագել այս կազմությունները՝ *առաւօտուց, երեսաց, (ի) տականց, հիմակուրնէ, քովէ-քով, պզտիկուց*: Արդի հայերենում ունենք *ի բնէ, ի սրտէ, ի ծնէ, ի վերջո, ի մոտո, փոքրուց, մանկուց (մանկութ), տնեպում, դռնեդուռ* ձևերը: Գործիականից են ծագում *սակալ, հազիվ, խստիվ, ճշտիվ, փութով* և նման այլ մակբայներ: Ներգոյական հոլովից առաջացել են *ներկայումս, հնում, հետագայում, հիմնականում* կազմությունները:

Նկարագրական եղանակով ստեղծված մակբայներ կան և՛ գրաբարում, և՛ նրան հաջորդած մյուս փուլերում՝ *սրտի մտօք, խղճի մտօք, հագար բերան, տնով-տեղով, բեռով-բարձով, դէմ յանդիման, էնտուց հեպ, մէկբերան, հեպ մի այլ, քնքուշ կերպով, մեղմ ձևով, հանդարտ եղանակով* և այլն:

ԳՐԱԲԱՐԻ ՆԱԽԳԻՐՆԵՐԻ ԵՎ ՆԱԽԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ

Նախդիրները՝ իբրև բառային միավորներ, ինքնուրույն նշանակություն չունեն. դրանք որոշակի իմաստ են արտահայտում միայն որևէ հոլովով դրված խնդրի հետ գործածվելիս: Դրանք և նախադրությունները, այսպես կոչված, սպասարկու բառեր են, կապեր: Կապերը նախադասության անդամ չեն կարող լինել, կիրառվում են գոյականների կամ գոյականի իմաստ արտահայտող բառերի հետ, որոնք կոչվում են կապի

խնդիր: Նախդիրները որոշակի հոլովներով դրված բառերի հետ արտահայտում են առարկաների միջև գոյություն ունեցող ամենաբազմազան հարաբերություններ, որոնց միայն մի մասն է հնարավոր արտահայտել բառերի հոլովման միջոցով: Երբեմն, կախված իրենց պահանջած խնդրի հոլովից, դրանք կարող են հակադիր նշանակություն ունենալ՝ *երթամ ի տուն/* գնում եմ տուն, *երթամ ի տանի/* գնում եմ տանից:

Հայերենը նախդիրներով հարուստ լեզու չի եղել. գրաբարն ուներ ընդամենը 6 նախդիր՝ **առ, գ, ի (յ), ընդ, ըստ, ց**: Միջին հայերենում դրանք աստիճանաբար վերածվում են կապերի կամ էլ բառահարաբերական, քերականական միավորներից վերածվում են բառակազմական միավորների:

Գրաբարի նախդիրները կարող էին գործածվել բոլոր հոլովներով դրված խնդիրների հետ՝ բացի ուղղականից՝ արտահայտելով տարբեր նշանակություններ: Միակ բացառությունը **ց** նախդիրն է, որը գործածվում է միայն հայցական հոլովի հետ՝ արտահայտելով ընդամենը երկու իմաստ՝ ասացական բայերի հետ՝ հանգում, ինչպես՝ *ասէ ցհայր իւր/* ասում է իր հորը, և ժամանակային հարաբերություն, օրինակ՝ *հասեալ առաւօրոյն երկնչիմ ցերեկոյն/* հասնելով առավոտին՝ երկնչում եմ մինչև երեկո:

Նախդիրները մասնակցում էին նաև հոլովակազմությանը, այսպես՝ **ի (յ)** (երբեմն նաև **առ, ընդ**) նախդիրը կազմում էր գրաբարի բացառական և ներգոյական հոլովները: Օրինակ՝ *ի քէն/* քեզանից, *ի քեզ/* քո մեջ, *յինէն/* ինձանից, *յիս/* իմ մեջ, *առ իմէ/* ինչից, *ընդ ահեկէ/* ձախից, *ընդ կողմանէ/* կողմից: **Չ** նախդիրը հայցական հոլովով դրված բառերին որոշյալության իմաստ էր հաղորդում՝ *չինէ գպում/* չինում է տունը, իսկ բացառական և գործիական հոլովով դրված բառերի հետ կազմում էր պատմական և պարառական կոչվող հոլովները՝ *զքէն/* քո մասին, *զքիւ/* քո շուրջ, *զինէն/* իմ մասին, *զինիւ/* իմ շուրջ:

Գրաբարյան նախդիրները, բացի *բայր* և *ց* նախդիրներից, բավական բազմիմաստ և գործածական միավորներ էին: Այսպես՝ *առ* նախդիրը միայն հայցական հոլովի հետ կարող էր արտահայտել շուրջ 15 իմաստ՝ ուղևորման, հանգման, վերաբերության, համեմատության,

նպատակի, պատճառի, տեղի և այլն, օրինակ՝ *հասուցանեին առ դուրս հնչանին*/ հասցնում էին հնձանի դռների մոտ, *եւրուն առ նա զաւակս իւրեանց*/ տվեցին նրան իրենց զավակներին, *առ սէր Քրիստոսի ընդունեին զամենայն չարչարանս*/ հանում Քրիստոսի սիրո ընդունեցին բոլոր չարչարանքները, *աղաթիւք առ Աստուած կարդային*/ աղոթքներով Աստծուն էին դիմում, *հանդերձ քո մի՛ լիցի առ ի պճնել, այլ միայն առ ի պէս մարմնոյ*/ թող քո հանդերձը չլինի պճնվելու համար, այլ միայն մարմնիդ պետքերի համար, *փոքր համարիմք զյարգանս զայս առ մեծ սէր Աստուծոյ*/ փոքր ենք համարում այս հարգանքը Աստծո մեծ սիրո համեմատ:

Նախադրությունները կամ հետադրությունները, ի տարբերություն նախդիրների, գործածվում էին միայն որոշակի հոլովով դրված խնդիրների հետ և արտահայտում մեկ իմաստ: Ընդ որում, եթե նախդիրներն ինքնին գուրկ են բառային իմաստից, ապա նախադրություններն ու հետադրությունները հիմնականում ունեն իրենց բառային նշանակությունները, թեև վերածվել են կապերի: Նախդիրները պարզ արմատներ են, որոնք չունեն բաղադրյալ ձևեր, իսկ նախադրությունները հաճախ բաղադրյալ կազմություններ են, որոնց բաղադրիչները հեշտությամբ վերականգնվում են, որովհետև առանձին գործածություն ունեն լեզվի մեջ, օրինակ՝ *առանց* = առ + անց (*անցանել* բայի արմատն է) կամ՝ *զկնի* (հետևից, հետո) = զ + կին(ք) > կնի (նշանակում է «հետք, ներքան») ²¹⁷:

Գրաբարյան նախադրություններն մեծաթիվ են, իսկ հետադրությունները՝ սակավաթիվ, որոշ կապեր էլ կարող են հանդես գալ և՛ նախադաս, և՛ հետադաս, ինչպես՝ *նոքօքն հանդերձ/հանդերձ նոքօք*: Վ. Առաքելյանը ենթադրում է, որ հայոց լեզվի վաղնջական շրջանում լրացյալների շարադասությունը նախադաս է եղել, այդ պատճառով էլ սպասարկու կապերը գերազանցապես նախադաս են: Սպասարկու բառերն առաջացել են ոչ թե որոշիչներից ու հատկացուցիչներից, այլ նրանց լրացյալ որոշյալներից ու հատկացյալներից, օրինակ՝ *զկնի դարեր իմոյ* նշանակել է *իմ դարեր հետքով*: Հետքով նշանակությունը դառնում է

²¹⁷ Տե՛ս Վ. Առաքելյան, Գրաբարի քերականություն, Եր., 2010, էջ 209-213:

կապ, նախադրություն: *Դէմ* կապը նշանակել է «դեմք», իսկ հետագայում՝ «ընդդէմ», այսինքն՝ «հակառակ», *դէմ Բելիարայ, դէմ մեղաք* կապակցությունների մեջ այլևս *դէմքի* իմաստը չկա. դրանք նշանակում են *ընդդէմ Բելիարի, ընդդէմ մեղքերի*²¹⁸:

Կապերը գրաբարում կարող էին գործածվել սեռական, հայցական, բացառական և գործիական հոլովների հետ: Ամենամեծաթիվը սեռական հոլովով խնդիր պահանջող նախադրություններն էին: Բերենք մի քանի օրինակ: Սեռական խնդրով կապերից են՝ *առանց, առաջի, ար-տաքոյ, զկնի, զհեպ, զօրէն, յաչս, յաչաց, ներհակ, վասն, յադագս, յե-րուսայ, ի վերայ, շնորհիւ, ի չեռն, ի մէջ*: Տրական խնդրով կապեր են՝ *առընթեր, առչեռն, կից, համեմատ, մման*: Հայցական խնդրով կապերից են՝ *թող, իբրեւ, կողմ, կոյս, հուպ ի, մերչ առ, մինչև ի, մինչև ց, մօր ի, մօր առ, քան*: Բացառական խնդրով կապերից են՝ *բաց, բայց, զադր, թեր, հեռի, մեկուսի, մերկ, ուրոյն, քաւ, օրար*: Գործիական խնդիր պահանջող կապերը ընդամենը երեքն են՝ *հանդերձ, շուրջ, չափ* (արևելահայերենում մնացուկային ձև է *կիսով չափ*, բայց՝ *կյանքի չափ*): Որոշ կապեր կարող են մի քանի հոլովներով դրված խնդիրներ պահանջել, օրինակ՝ *կարօր* նախադրությունը հանդիպում է տրական, բացառական և գործիական հոլովներով խնդիրների հետ՝ *կարօր յումեքէ, կարօր կա-թին, կարօր մրօք*: Բայց (բացի) նախադրությունը հանդիպում է բացառական և ուղղական հոլովով խնդիրների հետ՝ *բայց յինէն, բայց Որդին Միածին* և այլն:

Միջին հայերենում, ինչպես նշեցինք, նախդիրները՝ որպես առանձին խոսքի մաս, աստիճանաբար վերանում են՝ հիմնականում վերածվելով կապերի, երբեմն ձուլվելով բառարմատներին կամ կայուն կապակցություններ ստեղծելով: Բացի այդ՝ միջին հայերենը բարբառներից, նաև օտար լեզուներից վերցնում է նոր կապեր, իսկ գրաբարյան ձևերը հնչյունափոխում է: Բերենք գրաբարում չհանդիպող նոր կապերի օրինակներ՝ *չաք*=չափ, *շուր(ի)*=մինչև, *ճկրում*=ի հեճուկս, *(ի)խէջ*=մոտ, *ս-յրեն*=ժամանակ, *քով*=մոտ, *կեօրեալ*=համապատասխան, *վախարն*=

²¹⁸ Վ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 210:

պահին, ժամանակին, *փոխարէն*>փոխարեն, *հաւասար*>հաւասար, *զեպ*>զերպ:

Միջին հայերենի կապերը, ըստ իրենց նյութական իմաստի մթագմման և վերաբերական իմաստի խորացման աստիճանի, բաժանվում են երեք խմբի:

ա) Իրենց նախնական նյութական իմաստը կորցրած և բառահարաբերական ձևային արժեք ստացած իսկական կապեր: Այս խմբի մեջ առաջին հերթին գրաբարյան պահպանված նախադրւներն են և փոխառյալ կապերը կամ զուտ միջինհայերենյան կազմութիւնները՝ *առ, գ, ընդ, ըստ, ի, կեօրայ, սապաս, վախար(ն), արեւն, չաք, չուրի, իբր, զար, մինչ, զերդ, քով* և այլն:

բ) Բառեր, որոնք պահել են իրենց բուն խոսքիմասային իմաստը, սակայն դրա հետ մեկտեղ խոսքային որոշ կիրառություններում կարող են բառահարաբերական նշանակություն արտահայտել: Դրանք, այսպես կոչված, անիսկական կապերն են՝ *առաջ, դուրս, հակառակ, համեմար, հաւասար, ներքեւ, չափ, յեւ:*

գ) Կապական բառեր, որոնց նյութական իմաստը, անկախ կիրառությունից, գիտակցվում է, բայց դրա հետ մեկտեղ նրանք ունեն կապական կիրառություն, օրինակ՝ *քերականով, երեսաց, ժամանակ, չափով, սիրուն/սիրոյն* և այլն²¹⁹:

Արդի գրական երկու լեզուներում կապերը դարձյալ ընդունված է բաժանել վերոնշյալ երեք տեսակների՝ իսկական կապեր, անիսկական կապեր և կապական բառեր: Իսկ ըստ շարադասության՝ դրանք, ինչպես գրաբարում, բաժանվում են նախադրությունների, հետադրությունների և երկդրությունների: Իմաստային դասակարգմամբ տարբերակվում են տարածական, ժամանակի, ձևի և նմանության, փոխարինման, վերաբերության, պատճառի, հիմունքի, նպատակի, հակադրության հարաբերությունների իմաստ արտահայտող կապեր: Արդի հայերենի երկու տարբերակներում էլ նոր կապերի առաջացումը հիմնականում կապված է գրաբարյան կամ միջինհայերենյան քերականական ձևերի իմաստնե-

²¹⁹ Հմմտ. *Ալմարկների միջին գրական հայերենի պարունության*, Ա, էջ 430-431:

րի մթագնման և խոսքիմասային փոխանցման հետ. գոյականների, բայերի քարացած ձևեր, որոշ ածականներ դառնում են կապեր, օրինակ՝ *նպարակով, միջոցով, ուղղությամբ, գծով, երեսից, չեռքից, նայած, չնայած, նման, անկախ, համաչայն, հակառակ, համապարասխան, երեսէն, չեռքէն, չեռամբ, միջոցաւ, պարմառաւ, հանգույն* և այլն:

Աշխարհաբարյան, միջինհայերենյան կամ գրաբարյան կապերի միջև խնդրառության առումով ընդգծված տարբերություններ չկան. կապերի մեծ մասը պահպանել է իր սկզբնական հոլովառությունը, թեև պատմական զարգացման ընթացքում կրել է հնչյունական փոփոխություններ: Այսպես՝ *ի մէջ>մէջ/մեջ, ի վերայ> վերայ/վրա, պէս>պես, մօտ>մոտ, հանդէպ>հանդէպ, հեւր, յեւրոյ>հեւրո, դէմ>դեմ, ընդդէմ>ընդդէմ, ներհակ, առընթեր, կից, համեմատ, համեմատ, նման* կապերը հայերենի զարգացման երեք շրջաններում էլ սեռական-տրական հոլովով դրված խնդիր են պահանջում:

Պետք է նշել, որ կապերի միջինհայերենյան և բարբառային ձևերը արևմտահայ աշխարհաբարում առավել շատ են պահպանվել և գործածվում, քան արևելահայերենում: Օրինակ՝ *արեւն/արեւնին, եւրքը, քով, վար, ասդին անդին, երեսէն, չեռքէն* և այլն: Ունենք նաև զուտ գրաբարյան կազմություններ՝ դարձյալ միայն արևմտահայերենում գործածվող՝ *հանգույն, գերդ, միջոցաւ, պարմառաւ, սիրոյն, չեռամբ, կողմանէ/կողմէ*:

Այսպիսով՝ հայերենի կապերը մեր լեզվի զարգացման բոլոր շրջաններում ունեն ունեն հնչյունական, իմաստակիրառական մեծ ընդհանրություններ, իսկ տարբերությունները բավական մասնակի բնույթ են կրում՝ պայմանավորված պատմական հնչյունափոխությամբ, հոլովների կազմության փոփոխություններով և ոճական-իմաստային տեղաշարժերով:

ՇԱՂԿԱԳՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Շաղկապները նախադասության անդամներ և նախադասություններ կապակցող սպասարկու բառեր են, սակայն խոսքի մեջ շաղկապները ոչ միայն կապակցող դեր ունեն, այլև նախադասությանը հաղորդում են հնչերանգային և վերաբերական տարբեր իմաստներ, խոսքը դարձնում են գունեղ, հասցեական և արտահայտում են խոսողի զգացական ու մտածական վերաբերմունքը խոսքային միջավայրի հանդեպ: Վ. Առաքելյանը, այս տեսանկյունից վերլուծելով հայերենի լեզվական հնագույն մոտիվներից՝ Արտաշեսի և Սաթենիկի վիպասանքի հատվածները, այնտեղ մի քանի անգամ կրկնվող **և** շաղկապի արտահայտած իմաստները, նշում է, որ գրաբարում չափազանց տարածված **և** շաղկապն օժտված է հետաքրքրական և բազմազան նշանակություններով՝ առանձնացնող, թվարկող, եզրափակող, զուգադրահակադրական, մեկնական և այլն²²⁰: Այսպես.

Հեծաւ արի արքայն Արտաշէս ի Սեաւն գեղեցիկ,

Եւ հանեալ զոսկէօղ շիկափոկ պարանն,

Եւ անցեալ որպէս զարծուի սրաթել ընդ գետն,

Եւ ձգեալ զոսկէօղ շիկափոկ պարանն,

Ընկէց ի մէջք օրիորդին Ալանաց,

Եւ շատ ցաւեցոյց զմէջք փափոկ օրիորդին:

Առաջին երեք նախադասություններում **և** շաղկապը նախ՝ առանձնացնում է գործողությունները, ապա՝ ընդգծում դրանցից յուրաքանչյուրը, թվարկում, իսկ վերջին **և**-ը ուժեղ շեշտով և եզրափակող առոգանությամբ է օժտված:

Շաղկապների իմաստային դասակարգման ընդունված կադապարով հայերենի զարգացման երեք շրջաններում առանձնացվում են մեկ տասնյակից ավելի իմաստային խմբեր: Անդրադառնալով հիմնական տեսակներին, որոնք ներկայացված են եղել թե՛ գրաբարում, թե՛ միջին հայերենում, թե՛ աշխարհաբարի երկու ճյուղերում: Թեև պետք է նշել, որ

²²⁰ Տե՛ս Վ. Առաքելյան, Գրաբարի քերականություն, էջ 217:

համագործածական շաղկապների որոշ մասը բազմիմաստ է, և նույն շաղկապը միաժամանակ կարող է հայտնվել մի քանի իմաստային խմբերում:

ա) *Միավորիչ-հավելական*: Այս խմբի շաղկապները կապակցում են հավասարաթեք շարահյուսական միավորներ՝ *և, ու, նաև, ոչ...ոչ, թե'...թե', ոչ միայն...այլև*:

բ) *Ներհակական*: Նման շաղկապները կապակցում են իմաստով իրար հակադրվող լեզվական միավորներ՝ *իսկ, քայք, սակայն, այսուամենայնիվ, այնուամենայնիվ, այսուհանդերձ, այնուհանդերձ, ոչ թե ...այլ, ապա թե չէ, թե չէ, ապա թե ոչ, միայն թե, մինչդեռ, այնինչ*:

գ) *Տրոհական*: Այս շաղկապները կապակցում են այնպիսի լեզվական միավորներ, որոնց միջև ընտրություն է կատարվում, և մեկի ընտրության դեպքում մյուսը մերժվում է կամ բացառվում՝ *կամ, և կամ, կամ թե, կամ թե չէ, թե*:

դ) *Բացահայտման*: Այս շաղկապները կապակցում են այնպիսի միավորներ, որոնցից երկրորդն առաջինի բացատրությունն է՝ *այսինքն, այն է*:

ե) *Մեկնական*: Սրանք կապակցում են առաջին միտքը լրացնող, մեկը մյուսի մեկնաբանությունը հանդիսացող լեզվական միավորները՝ *որ, թե*:

զ) *Նպատակի*: Այս շաղկապները նպատակի պարագա երկրորդական նախադասությունները կապում են գլխավոր նախադասությանը՝ *որպեսզի, վասնզի, որ*:

է) *Պայմանի*: Սրանք պայմանի պարագա երկրորդական նախադասությունները կապում են գլխավոր նախադասությանը՝ *եթե, թե, թե որ, որ*:

ը) *Պատճառի և հիմունքի*: Այս խմբի շաղկապները պատճառի և հիմունքի պարագա երկրորդական նախադասությունները կապակցում են գլխավոր նախադասությանը՝ *քանզի, քանի որ, որովհետև, չէ՞ որ, մանավանդ որ, նամանավանդ որ, նայած, նայած թե*:

թ) *Ժամանակի*: Սրանք, որպես կանոն, ժամանակի պարագա երկրորդական նախադասությունները կապում են գլխավորին՝ *մինչ, մինչև որ, հենց, հենց որ, քանի դեռ, մինչդեռ, քե չէ*:

ժ) *Հեղինակի*: Այս շաղկապները առաջին նախադասությունից բխող եզրակացությունն են կապակցում՝ *ուստի, ուստի և, հեղևաբար, հեղևապես, ուրեմն*:

ժա) *Ձիջման*: Սրանք կապակցում են հետևությանը հակառակ կամ անհամապատասխան լեզվական միավորներ՝ արտահայտելով հակառակ հիմունք՝ *քեև, քեկուզ, քեպես, չնայած, չնայելով որ*:

ժբ) *Համեմատության*: Այս խմբի շաղկապներն արտահայտում են կապակցվող միավորների համեմատությունը՝ *քան, քանց, քան քե, ասես, ասես քե, իբրև, իբրև քե, կարծես, կարծես քե...*

Խոսքային միջավայրն իր կապակցական միջոցներով արտահայտում է մտքերի երկու տիպի հարաբերություններ՝ համադասության և ստորադասության, ուստի քերականագիտության մեջ ընդունված է շաղկապները բնութագրել նաև խոսքի մեջ իրենց արտահայտած հարաբերությունների բնույթով. ըստ այդմ՝ լեզվի մեջ տարբերակվում են համադասական և ստորադասական շաղկապներ: Համադասական շաղկապներն արտահայտում են համադասական հարաբերություններ, ուստի կապակցում են նախադասության համադաս անդամներն ու բարդ նախադասության համադաս բաղադրիչները: Բերենք աստվածաշնչյան «Երգ երգոցից» մի հատված. «Ամենեւին գեղեցիկ ես, մերձաւոր իմ, *եւ* արատ ինչ ոչ գոյ ի քեզ: Սրտակաթ արարեր զմեզ միով ակամբ քով *եւ* միով քառամանեկաւ պարանոցի քո»: Այստեղ *և* շաղկապը նախ կապում է համագոր երկու նախադասություններ՝ 1. «Ամենեւին գեղեցիկ ես, մերձաւոր իմ», 2. «արատ ինչ ոչ գոյ ի քեզ», ապա համագոր երկու անդամներ՝ 1. «միով ակամբ քով», 2. «միով քառամանեկաւ պարանոցի քո»:

Գրաբարի առավել գործածական համադասական շաղկապներից են՝ *եւ, եւ... եւ, իսկ, այլ, այլեւ, սակայն, բայց, նաեւ, մանաւանդ, մանաւանդ քե, նամանաւանդ, կամ, կամ քե, կամ... կամ, քե...քե*: Ստորադասական տարածված շաղկապներից նշենք հետևյալները՝ *զի, քանզի, վասն զի, փոխանակ զի, որովհետեւ, քեպէտ, քեև, իբրև քե, ուստի, քե, եթէ, եթէ... սպա և այլն*:

Միջին հայերենում այս շաղկապները պահպանվում են: Նրանց ավելանում է լայն կիրառություն ունեցող *ու* համադասական շաղկապը, որը կարող էր և՛ առանձին հանդես գալ, և՛ միանալ այլ շաղկապների հետ: Առաջանում են մասնոր այլ շաղկապներ՝ *ու կամ, համ...համ, հեմ...հեմ, այլ>ալ>էլ, ամա, կամ քէ չէ, կամ... կամ, ու ապա, ոչ...ոչ*: Չուտ միջինհայերենյան ստորադասական շաղկապներից բերենք հետևյալ կառույցները՝ *ոնց որ, քէ չէ նէ, քէ չէ, հանց...զինչ, հանց որ, քէ..., քանց որ, զերա* (պարսկ. *որովհետև, քանի որ, բայց*):

Արդի արևելահայերենում և արևմտահայերենում շաղկապները բնութագրվում են քերականական մույն հատկանիշներով. հնչյունական տեսանկյունից ևս դրանք մեծ փոփոխություններ չեն կրել: Մեր երկու գրական հայերեններում առավել գործածական են գրաբարյան շաղկապները և աշխարհաբարյան նորակազմությունները: Բերենք աշխարհաբարի երկու տարբերակներում էլ կիրառվող համադասական և ստորադասական շաղկապների օրինակներ: Համադասական՝ *և, ու, իսկ, քայց, սակայն, կամ, նաև, այլև, հետևաբար, հետևապես, այսինքն, ուրեմն, էլ* (արևելահայերենում), *ալ* (արևմտահայերենում), *և՛...և՛, ոչ...ոչ*: Ստորադասական՝ *որ, քե/քէ, եթե/եթէ, չնայած որ* (արևելահայերենում), *չնայելով որ* (արևմտահայերենում), *վասն զի* (արևմտահայերենում), *հենց, հենց որ* (արևելահայերենում), *որպեսզի, որովհետև, քեև, քեկուզ, քեպես, քանի դեռ, մինչև, մինչ*:

Ըստ կազմության՝ հայերենում շաղկապները ընդունված է դասակարգել հետևյալ կերպ՝ ա) պարզ շաղկապներ, բ) քերականական ձևերից առաջացած շաղկապներ, գ) բարդ շաղկապներ: Պարզ շաղկապները հիմնականում հնագույն կազմություններ են՝ դեռ վաղնջահայերենից եկող՝ *և, այլ/ալ/էլ, քայց, իսկ, քե, կամ, մանավանդ...*

Քերականական ձևերից առաջացած շաղկապներն ավելի սակավաթիվ են, այսպես՝ *որովհետև*=*որ*-ի գործիական հոլով+*հետև*-ի գործիական, *յորժամ*=*ի+որ+ժամ*, *այնուհետև*=*այն*-ի գործիական հոլով+*հետև*-ի գործիական, *ընդ որում*=*ընդ+որում* (*որ*-ի տրական հոլով), *ըստ որում*=*ըստ+որում* (*որ*-ի տրական հոլով), *չնայած* (հաբակատար դերբայ), *չնայելով* (անորոշի գործիական հոլով), *կարծես, ասես* (ընդա-

կան ապառնի): Կան երկարժեք շաղկապներ, որոնք մաս եղանակավորող բառեր են: Բարդության տիպերից շաղկապների մեջ հանդիպում են և՛ կցական, և՛ հարադրական, և՛ կրկնավոր կազմություններ: Կցական շաղկապներից են՝ *նաև, այլև, քանզի, թեև, այնինչ, թեկուզ, թեպետ, այսինքն, վասնզի, որպեսզի* և այլն: Ավելի մեծաթիվ են հարադրավոր շաղկապները, ընդ որում՝ հարադրավոր շաղկապների կազմության ժամանակ հատկապես գործում են *և, որ, թե, էլ* շաղկապները: Շաղկապների կազմության այս եղանակն առավել գործում է դառնում միջին հայերենում: Բերենք միջինհայերենյան հարադրությունների օրինակներ՝ *քայց միայն, կամ թե, և կամ, ու կամ, մանաւանդ թե, նոյնպէս և, այնպէս և, մանաւանդ որ, ապա որ, կամ թէ չէ, թէ չէ նե, թէպէտ որ, մինչեւ որ, մինչ որ, թող թէ* և այլն:

Արևելահայ աշխարհաբարում գործածական են՝ *մմանապես և, հեղուաբար և, ուսրի և, ինչպես և, այնպես որ, թե որ, հենց որ, քանի որ, չնայած որ, մամնամալանդ որ, մանավանդ որ, մինչև որ*, արևմտահայ աշխարհաբարում՝ *չնայելով որ, առանց որ, պայմանաւ որ* և այլ շաղկապներ:

Հայերենի զարգացման բոլոր շրջաններում շաղկապները, ըստ կիրառության եղանակի, լինում են մենադիր, կրկնադիր և գուգադիր: Մենադիր կոչվում են այն շաղկապները, որոնք գործածվում են միայնակ՝ *և, կամ, ու, քայց, սակայն, այլ, ուսրի, թե*: Մենադիր որոշ շաղկապներից էլ կազմվում են կրկնադիր շաղկապները՝ *թե՛...թե՛, և՛...և՛, կա՛մ...կա՛մ, ո՛չ...ոչ, էլ...էլ*: Զուգադիր կոչվում են սովորաբար գույգերով, միասին գործածվող շաղկապները, որոնք ապահովում են խոսքի շարահյուսական ամբողջականությունը, տրամաբանական կապը, որովհետև կապակցության սկզբում առկա շաղկապին կապակցության հաջորդ մասում համապատասխանում է նրա իմաստային ամբողջականությունն ապահովող երկրորդ շաղկապը, օրինակ՝ *քանի որ...ուսրի, ոչ միայն...այլև, թեև...քայց, ոչ թե...այլ, չնայած... այնուամենայնիվ, եթե...ապա, թեպետ...սակայն* և այլն:

Ամփոփելով նշենք, որ շաղկապները լեզվի մեջ համեմատաբար ուշ առաջացած խոսքի մաս են. այս առումով նրանք նման են կապերին:

Շաղկապներն ու կապերը ծագումնաբանորեն նյութական իմաստ ունեցող բառեր են եղել, որոնք դարերի ընթացքում խոսքի մեջ կորցրել են իրենց նյութական նշանակությունը՝ ձեռք բերելով տարաբնույթ հարաբերությունների իմաստ: Այսպես՝ *սակայն* շաղկապը ծագել է *սակ* «պայման» հնագույն բառից, *կամ*-ը՝ *կամք* գոյականից, *այլ*-ը *այլ* անորոշ դերանունից, *ուսրի*-ն ևս դերանվանական ծագում ունի (ուստի=որտեղից), *իսկ*-ը գրաբարում և՛ գոյական էր «իսկություն, բուն էություն» իմաստով, և՛ ածական՝ «ստույգ, ճշմարիտ»: Շաղկապները հիմնականում առաջանում են գոյականների, ածականների, դերանունների, բայերի ուղիղ կամ թեքված ձևերից, ինչպես նաև կապերից, մակբայներից և եղանակավորող բառերից: Խոսքի մասերը լեզվի պատմական զարգացման ողջ ընթացքում փոխներթափանցման և փոխանցումների բարդ ճանապարհ են անցնում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Աննարկներ միջին գրական հայերենի պատմության*, Եր., Բ, 1975:
2. Աբաջյան Ա., Անցյալ կատարյալ ժամանակը հայերենում, Եր., 2015:
3. Աբաջյան Ա., Հայերենի հոլովական համակարգի ըմբռնումը և պատմական զարգացումը հայ քերականագիտության մեջ, Եր., 2006:
4. Աբեղյան Մ., Երկեր Ձ, Եր., 1974:
5. Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965:
6. Աբրահամյան Ա., Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Եր., 1953:
7. Աբրահամյան Ա., Գրաբարի ձեռնարկ, Եր., 1976:
8. Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. I-IV, Եր., 1952-1961:
9. Այտընեան Ա., Զննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզուի, Վիեննա, 1866:
10. Անթոսյան Ս., Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. II, Եր., 1975:
11. Առաքելյան Վ., Գրաբարի քերականություն, Եր., 2010:
12. Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Ա, Բ, Գ, Եր., 1970, 1973, 1977:

13. Ավետիսյան Յ., Արևելահայերենի և արևմտահայերենի գուգադրական քերականություն, Եր., 2007:
14. Անտիքեան Գ., Քերականութիւն հայկական նորոգ քննութեամբ, Վենետիկ, 1792:
15. Բարսեղյան Հ., Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, Եր., 1953:
16. Բարսեղյան Հ., Խոսքի մասերի ուսմունքը, եր., 1980:
17. Դիլբարյան Ն., Անվան ըմբռնումը հայ լեզվաբանության մեջ, Եր., 2000:
18. Խաչատրյան Գ., Գրաբար, Եր., 2014:
19. Խաչատրյան Լ., Թոսունյան Գ., Գրաբարի դասագիրք, Եր., 2004:
20. Կարսո Յ., Կիլիկյան հայերենի պատմական քերականություն, Եր., 2002:
21. Համբարձումյան Վ., Գրաբարի գործառությունը որպես գրական լեզու, ԺԸ-ԺԹ դդ., Եր. 1990:
22. Համբարձումյան Վ., Հովհան Մամիկոնյանի «Տարոնի պատմության» լեզուն և ոճը, Եր., 2013:
23. Հովսեփյան Լ., ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանների լեզուն, Եր., 1997:
24. Ղազարեան Ս., Հայոց լեզուի պատմութիւն, Անթիլիաս-Լիբանան, 2007:
25. Ղազարյան Ս., Հայոց գրական լեզվի պատմություն, Եր., 1961:
26. Ղազարյան Ս., Հայոց լեզվի համառոտ պատմություն, Եր., 2006:
27. Մարգարյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1993:
28. Մեյե Ա., Հայագիտական ուսումնասիրություններ, Եր., 1978:
29. Մկրտչյան Դ., Գրաբարի դասընթաց, Եր., 2008:
30. Մկրտչյան Էդ., Խաչատրյան Լ., Հայոց լեզվի պատմության դասընթաց, Եր., 2016:
31. Շահվերդյան Թ., Գրաբարի դերբայները, ձևաբանություն եւ շարահյուսություն, Եր., 2001:
32. Պալասանեան Ս., Քերականութիւն մայրենի լեզուի, Տփլիս, 1894:
33. Պետրոսյան Հ., Գոյականի քվի կարգը հայերենում, Եր, 1972:
34. Պետրոսյան Հ., Ակնարկներ հայերենի պատմական ձևաբանության, Եր., 1976:
35. Ջահուկյան Գ., Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Եր., 1954:
36. Ջահուկյան Գ., Հին հայերենի հոլովման սխտեմը և նրա պատմական զարգացումը, Եր., 1959:
37. Ջահուկյան Գ., Գրաբարի քերականության պատմություն, Եր., 1974:

38. Ջահուկյան Գ., Հայոց լեզվի տեսության և պատմության հիմնահարցերը, Համազգային Վահէ Մեքեան տպարան, 2005:
39. Սաքապետոյան Ռ., Արևմտահայերենի դասագիրք, Եր., 2006:
40. Սուքիասյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1999:
41. Քոչյան Վ., Գրաբարի բառակապակցությունները, Եր., 1980:
42. Языки мира, Реликтовые индоевропейские языки Передней и Центральной Азии, М., 2013.
43. Туманян Э., Древнеармянский язык, М., 1971.

ՄԱՍ IV

ԱԿՆԱՐԿՆԵՐ ՊԱՏՄԱԿԱՆ ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ

Շարահյուսությունը լեզվի այն բաժինն է, որը զբաղվում է բառակապակցությունների և նախադասությունների իմաստային և կառուցվածքային առանձնահատկությունների քննությամբ: Շարահյուսական հիմնական իրողությունները լեզվի տարբեր փուլերում կտրուկ փոփոխություններ չեն կրում, բարդ և պարզ նախադասությունների տիպերը, կառուցվածքը հայերենի զարգացման բոլոր փուլերում ունեն ընդհանրական նկարագիր, ուստի ուսումնական ծրագրի շրջանակներում դասագրքի սույն բաժնում անդրադարձել ենք միայն սկզբունքային նշանակություն ունեցող փոփոխություններին և շարահյուսական այն իրողություններին, որոնք գրաբարում միջին հայերենից ու աշխարհաբարից կտրուկ տարբերվող դրսևորումներ ունեն: Այդպիսիք են կապակցության եղանակները, հատկապես համաձայնությունը, ենթակայի, ստորոգյալի արտահայտությունը, *որ* հարաբերական դերանվան դրսևորումները և շարադասությունը: Այս տեսանկյունից պետք է նշել, որ շարահյուսական փոփոխությունների ջրբաժանը 10-11-րդ դարերով է անցնում, այսինքն՝ գրաբարի՝ իբրև խոսակցական լեզվի նահանջի և նոր գրական հայերենի հաստատման ժամանակաշրջանով: Միջին գրական հայերենի և աշխարհաբարի շարահյուսական համակարգերի տարբերությունները ավելի քիչ են. դրանք մասնակի բնույթ են կրում:

Շարահյուսական իրողությունների տարածամասնակյա քննությունը ցույց է տալիս, որ լեզվի զարգացման ընթացքում դրանք փոփոխվում են ձևաբանական մակարդակում տեղի ունեցող մի շարք փոփոխությունների պատճառով: Այսպես, ածականը, թվականը, անորոշ և անցյալ դերբայները գրաբարում հոլովվել են ոչ թե փոխանվանական գործածության դեպքում, այլ հոլովման կարգը նրանց բուն խոսքիմասային հատկանիշն է եղել, և իբրև որոշիչ՝ նրանք հոլովով ու թվով համաձայնում էին որոշյալ գոյականին: Միջին հայերենում արդեն այս խոսքի մասերը սկսում են հոլովվել գոյականաբար գործածվելիս, ուստի վերա-

նում է որոշյալին հղովով ու թվով համաձայնելու իրողությունը, և ամրակայվում է որոշյալին առողությամբ կապակցվելու հատկանիշը, որը և ժառանգում է աշխարհաբարը:

Կապակցության եղանակները հայերենում երեքն են՝ առողություն, համաձայնություն, խնդրառություն, որոնք լեզվի զարգացման տարբեր փուլերում դրսևորման տարբեր նկարագիր ունեն:

1. *Առողությունը* կապակցության այն եղանակն է, որի դեպքում լրացում - լրացյալը, ինքնուրույնաբար կողք կողքի դրվելով, կազմում են տվյալ կապակցությունը: Այն գրաբարում բնորոշ է եղել մակբայով արտահայտված պարագաներին, օրինակ՝ Իսկ նոքա իբրեւ զայն ամենայն լուան, *փութապէս վաղվաղակի հասանէին* ի տեղին... (Եղիշէ, 156), ...աշխատութեամբ և քրտամբք երեսաց քոց կերիցես զհաց քո, մինչեւ լիցի քեզ դարձ *անդրէն յերկիր*, ուստի առար, զի հող էիր եւ ի հող դարձջիր (Եզնիկ, 58):

Այն առկա է նաև միջին և նոր գրական հայերեններում, քանի որ մակբայը չթեքվող խոսքի մաս է հայերենի զարգացման բոլոր շրջաններում: Օրինակ՝

Ասրէնս թէ բարի *գործես*, քեզ *յանդէնն* ի դէն կամի գալ,

Չայս կեանքս ուրացի՛ր, Ֆըրիկ, զանցաւոր, իսկի մի հոգալ (Ֆրիկ, 48):

Եվ ահա *նորից* նրա թարմ վերքի

Բերանն է *զոցվում*... (Սևակ, 159):

Իսկ թե կորնչի պիտի իմ հուսկ շունչ

Հոս մառախտոյի մեջ համր անշշունջ,

Այծիկն թո՛ղ որ շանք մ'ըլլամ դալկահար ... (Դուրյան, 62):

Գրաբարում առողությունը բնորոշ էր նաև որոշիչ-որոշյալ կապակցությանը միայն նախադաս որոշչի դեպքում: Այս կապակցությամբ Վարազ Առաքելյանը գրում է. «Դասական հայերենն արդեն գտնվում էր մի շրջանում, երբ ածականների ու գոյականների հոլովական համաձայնությունը խախտվում էր: Նախադաս ածականների վերաբերմամբ այդ ընթացքն ավելի էր առաջացել: Նախադաս հոլովվում են միավանկ և երկվանկ ածականները, դրանցից են՝ *մեծ, փոքր, սուրբ, բարի, նոր*,

բարձր, քաջ և այլն»²²¹: Լեզվաբանը իրավացիորեն այս երևույթը բացատրում է այն կարևոր հանգամանքով, որ նշված կարգի ածականներն իրենց որոշյալ գոյականների հետ կայուն կապակցություններ էին ստեղծում, այսինքն՝ այնքան էին միասին գործածվել և հոլովվել, որ ըստ ավանդույթի և սովորության՝ շարունակում էին միմյանց համաձայնել անգամ այն ժամանակ, երբ համաձայնության կանոնը վերացել էր նախադաս որոշչի դեպքում, օրինակ՝ *քաջ այր, բարի գործ, Սուրբ հոգի, չար սալրանա*: Անգամ այնպիսի բազմավանկ ածականներ, ինչպիսիք են՝ *ծածկազէր, ամենակալ, Աստուած* գոյականի հետ գործածվելով, նախադաս դիրքում հոլովվում են: Օրինակ՝ Ջարժանի զվրիժուց հատուցումն անդրեն յանձն իւր ընկալեալ *յամենակալէն Աստուծոյ* (Եսթեր, ԺԶ, 18) կամ Խոստովան լիցուք զգաղտնիս սրտից մերոց *ծածկազիւրին Աստուծոյ* (Հովմ. Ա, 23): Միաժամանակ գրաբարագետը նշում է նաև հետադաս ածականների՝ առդրությամբ հանդես գալու բազմաթիվ օրինակներ Աստվածաշնչում: Փաստորեն, գրաբարի քերականություններում ամրագրված այն կանոնը, ըստ որի՝ նախադաս ածականը գոյականին հոլովով չի համաձայնում, իսկ հետադասը, ընդհակառակը, համաձայնում է, 5-րդ դարում արդեն ուներ բազմաթիվ բացառություններ, որոնք վկայում էին հայերենում ածականի և գոյականի համաձայնության՝ լեզվի զարգացման ընթացքում վերացման մասին: Իսկ միջին և մոթ գրական հայերեններում որոշիչն այլևս չի համաձայնում իր որոշյալին՝ անկախ իր խոսքիմասային պատկանելությունից և դիրքից: Բերենք բնագրային օրինակներ: Քանզի բագումք յագգէ *ի մեծ նախարարացն* էին, և՛ եղբարք, և՛ որդիք, և՛ դստերք, հանդերձ ամենայն սիրելեօք իւրեանց ի մէջ *ամրական վայրացն*, ոմանք *յանլոյս երկիրն* Խաղտեաց, և այլ բագումք ի կողմանս հարաւոյ՝ *յանմարոյց ամուրսն*՝ Տմորեաց, և կէսքն *ի բանչրախիւր մայրիսն* Արձախոյ, և այլ ոմանք անդէն ի միջոց աշխարհին բռնացան *ի վերայ բագում ամրոցացն* (Եղիշէ, 252): Եւ յարջառ, զոր ասեն՝ եթէ *ի բարոյ արարչէ* արարեալ (Եզնիկ, 54): ...Ձի

²²¹ Վ. Առաքելյան, Գրաբարի քերականություն, Յեր., 2010, էջ 87:

մեծաւ երդմամբ և մեմգութեամբ կոչել կարասցէ (Բուզանդ, 184):
...գորոց ասեն՝ թէ *ի չարէ արարչէ* եղեալ են (Եզնիկ 52):

Աստուած յերկնից ի վայր կու գայ,

Ի սուրբ կուսէն գայ մարմնանայ... (Ֆրիկ, 40):

Կոշոր կոպակն ու *վայրի գունան*

Քնքուշ երգից ամաչելով

Ետ են քաշվել ու տեղ տվել,

Որ կարկաչեն դափ ու դուդուկ (Սևակ, 117):

Աստղերն ի՞նչ են որ, եթե ոչ *անբիծ*

Եվ *թըշվառ հոգվոց անեծք ողբազին*,

Որք թըռին այրել ճակատն երկնքին (Դուրյան, 62):

2. *Խնդրառությունը* կապակցության այն եղանակն է, որի դեպքում բառակապակցության գերադաս անդամը պահանջում է, որ լրացումը դրված լինի որոշակի հոլովով: Գրաբարում խնդրառությունը հասկապես բնորոշ է եղել մախադրություններին և բայերին: Բերենք տարբեր հոլովներով խնդիր պահանջող մախադրությունների օրինակներ՝ Ոմն *նախ քան զմեզ* (հայցականով խնդիր) իմաստասիրեաց (Խորենացի, 359), *Յեւր այսորիկ* (սեռականով խնդիր) իբրեւ ետես զօրավար գնդին Պարսից... (Եղիշէ, 230), *Վասն միաբանութեան* (սեռականով խնդիր) սուրբ ուխտին եկեղեցոյ (Եղիշէ, 108), ... հառաչէր *ի վերայ* մերձատր *սիրելիաց իրոց*... (սեռականով խնդիր) (Եղիշէ, 252)..., Հարին զնա սրով սուսերի յառնէ մինչեւ ցկին՝ *բայց ի տղայոց սրնդիոց* (բացառականով խնդիր) (Խորենացի, 289), *հանդերձ* ամենայն *սիրելեալք*... (գործիականով խնդիր) (Եղիշէ, 252):

Միջին և մոր գրական հայերեններում մախադրությունները վերածվում են կապերի, որոնց խնդրի հոլովը դարձյալ թելադրվում է կապի կողմից, օրինակ՝ *իմ մեջ, ինչ համար, առանց քեզ, դեպի քաղաք, բացի քեզանից* և այլն: Բերենք կապերի և կապական խնդիրների բնագրային օրինակներ միջինհայերենյան և աշխարհաբարյան շրջանների հեղինակներից: Այսպես՝ Ողբ *ի վերայ մահու՝ Յաղագս զգուշանալոյ* մարդկան... (Ֆրիկ, 23):

Եվ *երազիս մեջ* ես դառն լացի,

Ու ցավից զարթնած՝ լաց եղա անքուն.-

Ա՛խ, որքա՛ն մայրեր՝ խեղճ, *առանց հացի*,

Մեր շուրջն են դողում, ու մենք չենք գգում... (Բահասկյան, 130):

Ինչո՞ւ զիս հոս բերիք... Մի՞թե զիս բանտարկել կուզեք, որպեսզի *փողոցներուն մեջ* այսպես աստանդական թշվառությունս չը նվագեմ ողբաձայն... (Դուրյան, 133): Ես ալ երբեմն այդ *զահիճն վրա* էի, շոթա-յակապ թագավորներ, հաղթության ճոխություն, փառք ու գեղեցկություն կը պատեին զիս, կը ցոլայի *լուսնո մը պես* անթիվ *աստղերու մեջ*... (Դուրյան, 205-206):

Նախդիրները, ի տարբերություն նախադրությունների, կարող են հանդես գալ տարբեր հոլովներով դրված բառերի հետ: Ընդամին, մույն նախդիրը տարբեր հոլովների հետ, հաճախ մաս միևնույն հոլովի հետ կարող է արտահայտել շարահյուսական տարբեր իմաստներ, օրինակ՝ *զ* նախդիրը հայցական հոլովի հետ կարող է արտահայտել առկայացման կարգի իմաստ (որոշյալության իմաստ)՝ *յրեսի գլուխն քո*, բացառական հոլովի հետ՝ վերաբերության խնդրի իմաստ՝ *խօսե՛իճն զնմանե՛* (խոսում էին նրանից, նրա մասին), գործիական հոլովի հետ՝ տեղի պարագայի իմաստ, օրինակ՝ շրջե՛ին *զքաղաքաւ* (շրջում էին քաղաքի շրջակայքով) և այլն: Նախդիրները գրաբարում բազմիմաստ էին և շարահյուսական տարարժեք միավորներ էին ձևավորում, օրինակ՝ Իսկ մի ոմն ի *նախարարացն* (բացառական հոլովի հետ), որ անդր դիպեցաւ, էր *ի նոցա խորհրդի* (տրական հոլովի հետ), և ոչ միաբանեաց ընդ մոսա *ի մեծ վկայութիւնն* (հայցական հոլովի հետ) և անդէն առժամայն ի մոցունց *ի տեղուջն* (ներգոյականի իմաստով) քարկոծեցաւ և ահ մեծ անկաւ ի վերայ ամենեցուն (Եղիշէ, 132): *Յայնմ ժամանակի* (տրականի հետ) դարձեալ յարձակեցան ի վերայ բերդիցն և աւանաց, զոր ունէին պարսիկքն *ի տեղիս տեղիս* (հայցականի հետ), *յամրոցն* (հայցականի հետ) աշխարհին. տապալէին, քանդէին զբնակութիւնս նոցա (Եղիշէ 136):

Նախդիրների բազմիմաստությունը գալիս է հնդեվրոպական նախալեզվից: Հնդեվրոպական վերականգնված նախդիրներին ևս բնորոշ են եղել «բազմիմաստությունն ու համանունությունը, հոմանիշությունն

ու նույնանիշությունը²²²», ինչը, ի թիվս այլ լեզուների, իր դրսևորումն է գտել նաև հայերենում²²³:

Նրանց մասնակցությունը հոլովական տարբեր իմաստների արտահայտման, հետևաբար շարահյուսական տարբեր միավորների ձևավորման համար այնքան էական էր, որ քերականագիտության մեջ նրանք համարվել են նաև մասնիկներ՝ նրանց հոլովական ձևությային գործառնության պատճառով՝ համարժեք հոլովական վերջավորություններին: Ուստի գրաբարում՝ իբրև կապակցության միջոցներ, հոլովական և խոնարհման վերջավորությունների հետ պիտի նշենք նախադրյունները և նախադրությունները: Միջին հայերենում նախադրյունների գործառնությամբ որոշակի հոլովների հետ պահպանվում է, օրինակ՝ գրաբարատիպ ներգոյականի կազմության դեպքում, ուղևորման հայցականի դեպքում *q* նախդրի գործածությունը ուղղական-հայցականի հետ, *h* նախդրի գործածությունը բացառական հոլովի հետ և այլն: Դիտենք բնագրային օրինակներ. Նա կերակուրն *h* *սրսմոքն* անհալ մնայ (ԱՄՕԲ, 36), ...և պատճառն այն է, որ *h* *լերդէն* գոլն պակաս գայ (ԱՄՕԲ, 36):

Միջին հայերենում ուղղական և հայցական հոլովների նույնացման պատճառով ուղղականը ևս ստանում էր *h* նախդրով գործառնությամբ ներգոյականի իմաստի ձևավորման համար, օրինակ՝ ...որպէս որ գոլ *h* *սրսմոքն* լինի՝ և մարտողութիւնն *h* *լերդն* լինի և քաշողութիւնն *h* *թոքն* լինի (ԱՄՕԲ, 36): Նկատելի է *h* նախդրի կրկնակ գործառնությ, որ բնորոշ է հատկապես ձայնավորով սկսվող բառերին, օրինակ՝ ...ի ստամոքէն *h* *յաղիքն* կուղարկէ (ԱՄՕԲ, 36): ...և փոշի և մոխ *h* *յինքն* չի հասնի (ԱՄՕԲ, 36): Միջին հայերենում առկայացման կարգի համար հաճախ *q* նախդրի հետ գործածվում էր նաև *n* որոշիչ հոլով՝ գաշքն, գունքն և այլն:

Նախադրյունները նոր գրական հայերենում պահպանվել են գրաբարատիպ որոշ կառույցներում, օրինակ՝ *ըստ* նախդրի գործածությունը տրական հոլովի հետ հիմունքի պարագայի իմաստի ձևավորման համար, օրինակ՝ Նա հեռացավ՝ ըստ իր դիմումի, կամ *ստ* նախդրի գործածությունը հանգման խնդրի ձևավորման համար, օրինակ՝ Մարդու աղոթքն

²²² Գ. Զահուկյան, Շարահյուսական ուսումնասիրություններ, Եր., 2003, էջ 112:

²²³ Մանրամասն տե՛ս Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 103-135:

առ Աստված: Արևելահայերենում նախդրային տարբեր բառեր, որ գալիս են գրաբարից, օրինակ՝ հանձին / հանձինս (յ + անձին / յ+անձինս՝ գրաբարում *անձն* բառի եզակի և հոգնակի թվի ներգոյականի կառույց), կապեր են և ունեն համաձայնության որոշակի կանոններ, որ բացատրվում է նրանց ծագումնաբանական հիմքով՝ *հանձին երեխայի, հանձինս երեխաների*:

Խնդրառությունը, ինչպես արդեն նշվեց, բնորոշ է նաև բայերին, որոնք հանդես են գալիս ուժեղ և թույլ խնդրառությամբ. այս երևույթը հատուկ է բայական կապակցություններին հայերենի զարգացման բոլոր փուլերում: Բայերի խնդրառությունը մեր լեզվի զարգացման երեք փուլերում ունի ինչպես ընդհանրություններ, այնպես էլ տարբերություններ: Նշենք նաև, որ նույն շարահյուսական հարաբերությունը հնարավոր է արտահայտել տարբեր ձևաբանական միջոցներով: Օրինակ՝ վերաբերության անուղղակի խնդիրը արդի հայերենում, բացի *վերաբերյալ, մասին* կապերի միջոցով արտահայտվելուց, կարող է դրվել բացառական հոլովով: Համեմատենք գրաբարի հետ՝ *պարմէին զքէն* (պատմական հոլով)=*պարմէին յաղագս քո* կամ *վասն քո*: Արևելահայերենում՝ *պարմում էին քեզնից* կամ *քո մասին*: Կամ գործիական հոլովով տեղի պարագայի արտահայտությունը՝ *շրջէին զքաղաքաւ* (պարառական հոլով) = *շրջէին առ քաղաքաւ*: Արևելահայերենում՝ *շրջում էին քաղաքով*:

Ուժեղ խնդրառությամբ, որպես կանոն, կապակցվում են ուղիղ և ներգործող խնդիրները, իսկ թույլ խնդրառությամբ՝ հանգման, անջատման, միջոցի, վերաբերության, սահմանափակման անուղղակի խնդիրները: Մ. Աբեղյանը ուղիղ և ներգործող խնդիրները կոչում է սեռի խնդիրներ, որովհետև նրանց գործածությունը պայմանավորված է բայասեռով, իսկ մնացածը՝ բնության խնդիրներ, որովհետև նրանք պայմանավորված են բայիմաստներով, բայի բնույթով²²⁴:

Ուղիղ խնդիր ունենում են միայն ներգործական սեռի բայերը, իսկ ներգործող խնդիր՝ կրավորական բայերը: Համեմատենք՝ *Սիրեմ զքեզ*

²²⁴ Տե՛ս Մ. Աբեղյան, Գրաբարի քերականություն, Յեր., 1936, էջ 146:

(ուղիղ), *Սպանաւ ի զօրաց* (ներգործող), *Հասարակ քիզ* (հանգման), *Ապարանքէին յարքայէ* (անջատման): Արդի արևելահայերենում՝ *Սիրում եմ քիզ* (ուղիղ), *Վիրավորվեցի քեզնից* (ներգործող), *Սպասում եմ քիզ* (հանգման), *Բաժանվեցի քեզնից* (անջատման) և այլն: Գրաբարում բացի ներգործական, կրավորական և չեզոք սեռի բայերից, որոնցից ամեն մեկին բնորոշ էին խնդրառության տարբեր իրողություններ, կային նաև հասարակ (ընդհանուր) անվանումը ստացած բայեր, որոնք միևնույն ձևով արտահայտում էին ներգործական և չեզոք սեռի իմաստներ. սրանք ի լծորդության բայեր էին, օր.²²⁵ *ծնաւ* բայաձևը նշանակում է *ծնեց* և *ծնվեց*: Հետագայում *վ* կրավորական ածանցի ձևավորմամբ ավելի հստակեցվում են բայասեռի կարգի դրսևորումները հայերենում. հմմտ. ծնեց-ներգ. սեռ, ծնվեց-կրավորակերպ չեզոք սեռ: Բայերի խնդրառությունը ուղղակիորեն կապվում է բայիմաստի և բայասեռի հետ, որոնք լեզվի զարգացման ընթացքում ենթակա են փոփոխությունների, ինչը և տեղաշարժեր է առաջացնում բայ + խնդիր կապակցություններում²²⁵: Օրինակ՝ աշակերտել բայը գրաբարում հանդես է եկել ներգործական և չեզոք սեռերի իմաստներով, քանի որ *աշակերտել* նշանակել է *ուսանել* և *ուսուցանել*. Օրինակ՝ ...կարծեմ թե և աշակերտեք զիս ի ձեր յամառութիւնդ (Եղիշէ Ը) և Որ յառաջն աշակերտեալ էր աղանդին Վաղենտինաւնոսի (Խորենացի, 2-րդ ԿԶ):

Արդի հայերենում այն չեզոք սեռի բայ է, քանի որ նրանում ամրակայվել է *ուսանել* իմաստը: *Բարբախել* բայը գրաբարում ուներ *բախել* իմաստը, օրինակ՝ *Աղքատն զգուռն բարբախէր երկիւղիւ* (ՆՀԲ), նոր գրական հայերենում նշանակում է *տրուփել*, օրինակ՝ *Սիրտը բարբախում է*. ուստի այն չեզոք սեռի է: Սեռային տեղաշարժեր կատարվում են ոչ միայն լեզվի տարբեր շրջաններում, այլև տվյալ շրջանի շրջանակներում ևս, օրինակ՝ *ծափահարել* բայը Ս. Մալխասյանցի բառարանում վկայված է իբրև չեզոք սեռի բայ, այնինչ ունենք ներգործական սեռի իմաստով բազմաթիվ գործածություններ, օր.²²⁶ *Դահլիճը ծափահարում է* հոտնկայա: Ունկնդիրները *ծափահարում* էին նրա ամեն մի միտքը:

²²⁵ Մանրամասն տե՛ս Ա. Արքահամյան, Բայը ժամանակակից հայերենում, Եր., 1962, էջ 681-722: Օրինակները բերվում են սույն աշխատությունից:

Խնդրառու բայի հատկանիշը խոսքային տիրություն է դրսևորվում, օրինակ՝ *լրեսնել* բայը աշխարհաբարում երկսեռ է, և դրանից բխող խնդրառությունը երևում է տվյալ նախադասության մեջ, օրինակ՝ Վիրահատությունից հետո ծերունին լավ էր *լրեսնում* (չեզոք սեռ), Ես *լրեսնում եմ* քո աչքերում թաքնված թախիծը (ներգործական սեռ) կամ Ես *ուրում եմ*: Ես հաց *եմ ուրում*: Նա *խմում է*: Նա գինի է *խմում*:

3. *Համաձայնությունը* կապակցման այն եղանակն է, որի դեպքում գերադաս անդամը և լրացումը տվյալ կապակցության կառույցում ունենում են միևնույն քերականական հատկանիշները, օրինակ՝ բացահայտիչը համաձայնում է բացահայտյալին հոլովով, թվով և հոդառնությամբ, կամ ետադաս որոշիչը գրաբարում թվով, հոլովով, հոդով համաձայնում է որոշյալին: Բերենք բնագրային օրինակներ՝... Աւանդեցին հարքն մեր առաջինք՝ զօրութեամբ գալստեան *Տեսնն մերոյ Յիսուս Քրիստոսի...* (Եղիշէ, 134), Եւ եղև ի վաղիւ ետ հրաման Շապուի արքայ, ամել զառաջեալ իւր *զՎասակ Մամիկոնեան զգորավարն սպարապետն Հայոց Մեծաց ...* (Բուզանդ, 260): Եւ տեսեալ, ասեն, աստուծոյն, բարոյ եւ օտարին, որ մատէր յերրորդ յերկինս... ցաւեաց վասն անկելոցն.... (Եզնիկ, 200):

Համաձայնությունը՝ իբրև կապակցության եղանակ, գրաբարում հատուկ է.

- ա) բացահայտիչ-բացահայտյալ կապակցությանը, որի անդամները համաձայնում են դեմքով, հոլովով, թվով, հոդով:
- բ) Հետադաս, երբեմն մաս նախադաս որոշիչ-որոշյալ կապակցությանը, որի անդամները համաձայնում են հոլովով, թվով:
- գ) Ենթակային և ստորոգյալին, որոնք համաձայնում են դեմքով և թվով:

Միջին և նոր գրական հայերեններում համաձայնությամբ կապակցվում են՝

- ա) բացահայտիչ-բացահայտյալը՝ համաձայնելով հոլովով, թվով և հոդով,
- բ) ենթական և ստորոգյալը՝ համաձայնելով դեմքով (եթե ենթական անձնական դերանուն է) և թվով:

ՈՐՈՇԻՉ-ՈՐՈՇՅԱԼ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱԲԱՐՈՒՄ ԵՒ ՆՐԱ ՀԵՏԱԳԱ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ածական որոշչի առանձնահատկությունները գրաբարում

Հետադաս որոշիչը հոլովով ու թվով համաձայնում է որոշյալին, եթե այն արտահայտված է ածականով, թվականով, դերբայով և դերանվամբ, ըստ որում՝ համաձայնության առանձնահատկությունները դրսևորվում են ոչ միայն ըստ խոսքի մասերի, այլև անգամ տվյալ խոսքի մասի շրջանակներում: Ածական որոշիչը գրաբարում նախադաս գործածության դեպքում հոլովով ու թվով չի համաձայնում որոշյալին. սա գրաբարի տարբեր դասագրքերում ամրագրված կանոն է, որն ունի բազմաթիվ բացառություններ, ինչպես վերևում նշվեց: Վարագ Առաքելյանը փաստում է, որ գրքից գիրք անգամ տարբերություններ են նկատվում. հինգերորդ դարում արդեն հայերենի լեզվական մոր օրինաչափություններ էին ուրվագծվում. «Մեր հաշվարկներով Աստվածաշնչի Սողոմոնի առակների 84 ածականներից հետադաս դիրքում համաձայնում են 62-ը, չեն համաձայնած 4-ը, նախադաս անհամաձայն են 17-ը և միայն 1-ն է համաձայնել»²²⁶:

Ածական որոշչի առանձնահատկությունները հանգում են հետևյալին. նախադաս դիրքում փաստացի համաձայնում են միայն որոշակի ածականներ, որոնք կայուն կապակցություններ են ստեղծում, ինչպես՝ Եւ ոչ է արարիչ *չարաց իրաց* (Եզնիկ, 8), ... իբրեւ ճրագ մի *ի մեծի տանն* (Եզնիկ, 11), *մեծաց հարուածոց* (Բուզանդ, 87), *ի բարոյ արարչէ* (Եզնիկ, 8), *երկնադիգօք հասակօք* (Խորենացի, 34): Գործիական հոլովով դրված որոշյալների դեպքում ածականը երբեմն համաձայնում է հոլովով, բայց ոչ թվով, հատկապես եթե անեզական գոյականների հետ է կապակցություններ կազմում՝ *մեծաւ բշմամանաւք* (Բուզանդ, 15), *մեծաւ կոծովք* (Բուզանդ, 41), *մեծաւ անարգանօք* (Եղիշէ, 19)²²⁷: Մեծ ածականը հիմնականում համաձայնում է իր որոշյալներին, այստեղից

²²⁶ Վ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 88:

²²⁷ Տե՛ս Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Եր., 1976, էջ 60-61:

էլ արդի հայերենում ունենք *մեծավ մասամբ* մակբայը՝ որպէս քարացած որոշիչ-որոշյալ:

Հետադաս դիրքում ածականը, որպէս կանոն, որոշյալին համաձայնում է հոլովով և թվով, օրինակներ՝ *Աղբերք մշտաբարողիք* հանապազ բղխեն եւ ոչ պակասեն (Եզնիկ, 8), ...զի *չկունս մեծամեծս ծովածինս* վիշապս կոչեն Գիրք (Եզնիկ, 84), *Տղայոցն անմեղաց* ընդէ՞ր տիրիցեն դէք (Եզնիկ, 66), Եւ այլ ինչ ոչ են վիշապք՝ բայց կամ *օջք մեծամեծք ցամաքայինք*, կամ *չկունք անարիք ծովականք* (Եզնիկ, 84), ...և նշանակ եթող յեգեր *ծովուն մեծի...* (Խորենացի, 134): Էր ինձ, ասէ, ո՛վ սիրելիք, լինել այսօր *յերկրի անծանօթում...* (Խորենացի, 88):

Վերացականը թանձրացականի փոխարեն

Գրաբարում որոշիչը կարող էր արտահայտվել ոչ միայն ածականներով, այլև այդ ածականից կազմված գոյականներով: Նման կառույցներն ավանդաբար կոչվում են վերացականը թանձրացականի փոխարեն: Որոշիչ ածականը հաճախ ստանում էր *-ութիւն* ածանցը՝ վերածվելով վերացական գոյականի և շարահյուսական մակարդակում կազմում հատկացուցիչ- հատկացյալ կառույցներ, որոնք իրականում որոշիչ-որոշյալի իմաստ էին արտահայտում, այսինքն՝ այդ հատկացուցիչ գոյականները աշխարհաբար պետք է թարգմանել որպէս ածական որոշիչ, այսպէս՝ Սի՛ գործէք *զիրս պղծութեանդ* = Սի՛ արեք այդ պիղծ գործերը... (Երեմիա, ԽԴ, 5), *Ապաքէն զայդ կամիս, զի ծածկեացի խորհուրդ զամբարշտութեանդ* (Եղիշէ, 20) = *Չէ որ դա ես կամենում, որ ծածկվի ամբարիշտ խորհուրդդ*: Երբեմն այդ գոյական դարձած ածականները նախադասության մեջ դրվում էին ուղղական հոլովով, իսկ նրանց հատկացյալները՝ սեռական հոլովով, բայց դարձյալ արտահայտում էին ածական որոշչի իմաստ, իսկ հատկացյալները՝ որոշյալների, օրինակ՝ ..եթե յո՞ թափեցից *զղառնութիւն թունաւոր*, կամ ո՞ր բացատրեցից *զբազմութիւն նկրիցն* (Եղիշէ, 14) = *Թե ում վրա բափեմ դառը թույներս կամ ուր արչակեմ բազմաթիվ նկրերս*: Այսպիսի կառույցները գրաբարում բավական տարածված էին և, ըստ ամենայնի, հունաբանու-

թյուններ էին: Նրանք հաճախադեպ են հիմնգերորդ դարի մատենագրության մեջ, ի մասնավորի՝ հունական կրթություն ստացած պատմիչների՝ Եղիշեի և Մովսես Խորենացու երկերում: Բերենք այլ օրինակներ՝ *Եւ մինչև ի մուրս արեգական անդադար լինէր գործ դառնութեանն* = Սինչև արեգակի մայր մտնելը չէր դադարում դառը գործը (Եղիշէ, 119), *Բնակեցեր, ասէ, ի մէջ ցրտութեան սառնամանեաց, այլ ջեռուցեալ մեղկեա՛ զցրտութիւն սառուցեալ քո հպարտացեալ բարուց...* = Բնակվեցիր, ասում է, ցուրտ սառնամանիքների մեջ, ջերմացնելով փափկեցրո՛ւ քո ցուրտ, սառը և հպարտ բարքը (Խորենացի, 42):

Հայոց լեզվի զարգացման հետագա շրջաններում որոշչային իմաստ արտահայտող այսպիսի կառույցներ չեն հանդիպում:

Դերանուն որոշչի առանձնահատկությունները գրաբարում

Դերանուն որոշիչը ունի համաձայնության որոշակի առանձնահատկություններ, որոնք կրճնարկենք ըստ դերանունների տեսակների, քանի որ դերանուններից յուրաքանչյուրը համաձայնության՝ իրեն բնորոշ կանոններն ունի: Ցուցականներից *այս, այդ, այն* դերանունները ունեն կարճ և երկար հոլովածներ: Դառնալով նախադաս որոշիչ՝ որպես կանոն, հոլովվում են կարճ ձևով, նախդիրը դրվում է միայն դերանվան վրա, որոշյալը համարժեք հոդ չի ստանում, օրինակ՝ *Յայսմ* մատենէ Մար Աբաս Կատինայ զմերոյ ազգիս միայն հանեալ զպատմութիւն հաւաստի (Խորենացի, 36-37), *...յայնմ* գաւակէ գտցեն զառաջնորդութիւն (Բուզանդ, 108), Զի ընդ նորոգել *այնր* արոռոյ... (Բուզանդ, 108), իսկ *այսր* երանելոյ (Կորիւն, 100):

Հետադաս դիրքում *այս, այդ, այն* դերանունները հոլովվում են երկար ձևով, նախդիրը դրվում է և՛ դերանվան, և՛ գոյականի վրա, գոյականը ստանում է դերանվանը համարժեք հոդ: Օրինակ՝ *Եւ էր ի ժամանակին յանմիկ* երիարն Մուշեղի ճերմակ ձի մի (Բուզանդ, 290), Որպէս առ ջրիեղեղան ասէ. եղիցին ատուրք կենաց *մարդկանս այսորիկ* հարիւր եւ քսան ամ (Եզնիկ, 12), Քանզի երկիր, որ համբաւուցն անգամ օտար էր *կողմանցն այնոցիկ* (Կորիւն, 104):

Ինքնուրույնաբար և հատկապես նախադրությունների հետ կիրառվելիս այս դերանունները երկար ձևերով են հանդես գալիս: Բերենք բնագրային օրինակներ՝ ... ապա *յևր այնորիկ* ձեռն արկանէր (Կորիւն, 116): ...և բազում անգամ մարտնչէր *ընդ այնոսիկ*» (Եղիշէ, 12), ...որպէս և երևի ինձ և քեզ և այնոցիկ, որ դեգերեցին յիմաստասիրութեանն (Եղիշէ, 8): *Այսպիսի* դերանունը ևս հոլովով և թվով համաձայնում է գոյականին, օր.՝ Եւ յայտնեալ *այսպիսոյ չարութեան* ոչ ինչ էր այնուհետև բան և խորամանկութիւն (Խորենացի, 96):

Սոյն, նոյն, դոյն դերանունները գոյականների հետ գործածվում են նախադաս և համաձայնում են նրանց հոլովով ու թվով, օրինակ՝ ...եւ *նովին* հոգեկրօն *արուեստին* հանէր աւուրս բազումս ..իսկ եթէ *ի նմին յամառութեանն* կացցեն (Եզնիկ, 24), ...*ըստ նմին օրինակի* (Կորիւն, 136): Գործիական հոլովի դեպքում դերանունը հաճախ թվով չի համաձայնում գոյականին, օրինակ՝ ... նովին կապանօք անցուցին ի տեղիս արգելան (Եղիշէ, 40), ...եւ սովին հաւատովք թողուս (Եղիշէ, 80):

Ստացական դերանունները գոյականների հետ գործածվում են և՛ նախադաս, և՛ հետադաս՝ համաձայնելով հոլովով ու թվով, այսպես՝ ...եւ տուն *հաւր իմոյ* (Կորիւն, 110), ...եւ շուք *մերոց դիմաց*... (Նարեկացի, 632): *Քո* ստացական դերանունը հաճախ նախադաս գործածվելիս հոլովվում է երկար, իսկ հետադաս գործածվելիս՝ կարճ ձևերով: Օրինակ՝ *Քոյովդ* ցողով յոգի աճեցեալ (Նարեկացի, 600), Եւ քեզ միայնոյ փրկողի եւ *հոգւոյդ* քում Հաւր իսկակցի (Նարեկացի, 600):

Հարցական դերանուններից համաձայնում է միայն *որ* դերանունը, այսպես՝ Որով արինակաւ զինչ կամիս առնել, կատարեա՛... (Եղիշէ, 94):

Գրաբարում *որ* հարաբերական դերանունը, որը հանդես է գալիս երկրորդական նախադասության կազմում, ունի ինքնատիպ և ոչ միօրինակ գործածություններ: Դիտարկենք դրանցից մի քանիսը:

ա) Այն կարող է դրվել երկրորդական նախադասության թելադրած հոլովով, օրինակ՝ Եւ հրաժարեալ ի նոցանէն հանդերձ օգնականօքն, *որոց* առաջնումն Տիրայր անուն ի Խորենական գաւառէ և երկրորդին Մուշէ անուն ի նահանգէ Տաթոնոյ, *որք* էին սուրբք և զուարթագոյնք,

հանդերձ այլովք ևս սպասաւորք ւտետարանին *գոր* չենք բավական ըստ անուանցն նշանակել (Կորին, 108):

Հաճախ միևնույն կառուցույցում *որ-ը* կարող է դրվել տարբեր հոլովներով, օրինակ՝ ...յանձն առնէր սրբոյ եպիսկոպոսին քաղաքին, *որ* Ակակիոսն կոչէին, և գլխաւոր աշակերտացն թողոյր զայն, *որում* Ղևոնդէոսն կոչէին այր հաւատարիմ և ճմարտաշատ (Կորին, 114): Նման դեպքերում ավելի շատ տարածված է տրականով ձևը:

Հոլովով և թվով *որ* հարաբերական դերանունը համաձայնում է գլխավոր նախադասության իր որոշյալին, օրինակ՝ ...և նոցին ռոճիկս կարգել *ի* պատեհագոյն *յրեղիս*, յորս և երանելին զվարդապետութիւնն իւր ի գործարկեալ, և ժողովելոցն քաղցրացուցանէր (Կորին, 116):

Այս դեպքում այն կարող է հոլովով համաձայնել, բայց թվով՝ ոչ, օրինակ՝ Դարձեալ ասեն. «*Ջբարսմոսն գոր* ի ձեռին ունէր, ցորդին իւր ցՈրմիզդ ետ...» (Եզնիկ, 104):

Բացակայող հարաբերյալի պատճառով երբեմն *որ* հարաբերական դերանունը կարող է դրվել գլխավոր նախադասության պահանջած հոլովով, օրինակ՝ *Որում* խնդրէ ի քէն՝ տո՛ւր (Մատթ., Ե, 48) =այնմ որ խնդրէ: *Որոց* մտանեն՝ չտայք թոյլ մտանել (Մատթ., ԽԳ, 13) =այնոցիկ, որք մտանեն²²⁸:

Որ հարաբերական դերանունը արևելահայերենում ազատ գործառույթ ունի, օրինակ՝ ...շուտ է տալիս գեղեցիկ վիզը և իր հրացայտ *աչքերով*, *որ* (փոխանակ որոնք) կայծկլտում են նույնիսկ հաստ քողի տակից... (ՊՄԱ, 12):

Այն կարող է հող չստանալ՝ անկախ գլխավոր նախադասության իր լրացյալի առկայացված լինելուց. համեմատենք՝ ...բայց իբրև մի *սպառնալիք*, *որ* հետաձգվում է անորոշ ժամանակով (ՊՄԱ, 13): Դարբին *Հովակիմը*, *որ* (փոխանակ որը) առանձին բավականություն էր զգում որսկանի հետ վիճելուց (ՊՄԱ, 9):

Նշենք, որ սկսում է օրինաչափ գործառույթ ստանալ *որ-ի* փոխարեն *ու* հարաբերական դերանունը: Օրինակ՝ Չի կոտրվում *նա*, *ու* (փո-

²²⁸ Վերջին երկու օրինակները բերված են ըստ Հ. Ավետիսյան, Ռ. Ղազարյան, Գրաբարի ձեռնարկ (Եր., 2007) գրքի, տե՛ս նշվ. աշխ., էջ196:

խանակ *որ*) ունի բարոյապես բարձր արժեհամակարգ: Չեն կարող կոտրել *նրան, ով* (վոխանակ *որ*) ունի բարոյապես բարձր արժեհամակարգ: Չեն կոտրվում *նրանք, ովքեր* (կամ *որ, որոնք*) ունեն բարոյապես բարձր արժեհամակարգ: Չեն կարող կոտրել *նրանց, ովքեր* (կամ *որոնք*) ունեն բարոյապես բարձր արժեհամակարգ: Անշուշտ, մախրմտրելի են թվային համաձայնությամբ կառույցները:

Անորոշ դերանունները որոշչի պաշտոնում դրսևորում են հետևյալ հատկանիշները:

1. *Ոմն, որ* դերանունները գոյականների հետ դրվում են հիմնականում հետադաս և համաձայնում նրան հոլովով ու թվով, օրինակ՝ ...*գրիչ ոմն* հելլենական դպրութեան (Կորին, 96), ...ընդունայնախօս աւանդութիւնք *առն ուրումն* հռոմի, որում Թէոդորոս անուն (Կորին, 134), ...լինի սպասատր արքայատուր հրամանացն առ հազարապետութեամբն աշխարհիս Հայոց՝ *Առաւանայ ուրումն* (Կորին, 84), ...ի ձեռն պատուատրի ուրուք (Եղիշէ, 88):
2. *Իմն, ինչ* դերանունները դրվում են գոյականից հետո, համաձայնում նրան հոլովով միայն եզակի թվում, քանի որ չունեն հոգնակի հոլովման հարացույց, թեև երբեմն կարող են չհամաձայնել նաև եզակի թվում, օրինակ՝ «Քանզի չմարթի *քնութան իմիք* առանց կամաց մերթ բարի լինել, մերթ չար» (Եզնիկ, 50), ...*դարչեալ յեւր ժամանակի ինչ* ընդ մէջ անկելոց (Կորին, 110): Հոգնակի թվում չեն համաձայնում:
3. *Այլ* դերանունը սովորաբար գոյականից առաջ է դրվում և համաձայնում նրան հոլովով ու թվով, բացի ուղղական և հայցական հոլովներից, օրինակ՝ ..*իսկ յայլոց դպրութեանց* թաղեալք եւ յարուցեալք ղիպեցան (Կորին, 94), *Այլովք վարթարօքն* վեհ երևի (Եղիշէ, 58):

Որոշյալ դերանուններից *ամենեքին-ամենեքեան, բոլորեքին-բոլորեքեան* դերանունները գործածվում են գոյականի հետ մախադաս և հետադաս՝ հոլովով և թվով համաձայնելով գոյականին, իսկ *ամենայն* դերանունը հիմնականում չի համաձայնում գոյականին: Օրինակ՝ ...առ *ամենայն ազգս* երկնածնաց մատակարարին (Կորին, 100): ... եւ քարո-

զեցի աւետարանս ընդ *ամենայն տիեզերս* (Կորին, 104): Եւ լուեալ զայս *ամենայն իօսս...* (ՂՓ, 82): Յայնժամ ի մի վայր ժողովեալ *նախա-րարացն ամենեցուն*, որք էին յերեցունց աշխարհացն *Հայոց, Վրաց և Ադուանից...* (ՂՓ, 114):

Թվական որոշի առանձնահատկությունները գրաբարում

Թվական որոշիչը որոշյալին կապակցվում է՝ համաձայնելով հոլովով և թվով, բայց թվականներից յուրաքանչյուրը դրսևորում է համաձայնության տարբեր հատկանիշներ: Թվական որոշիչը դրվում է որոշյալից և՛ առաջ, և՛ հետո:

1. Քանակական թվականները հետադաս գործածվելիս համաձայնում են գոյականներին, որոնք դրվում են միայն հոգնակի թվով: Ըստ որում՝ *մի* քանակական թվականը բացառություն է, քանի որ այն ցույց է տալիս մեկ անձ կամ առարկա, ուստի *մի* թվականի հետ գոյականը դրվում է միայն եզակի թվով, հետադաս գործածվելիս այն մասն անորոշ դերանվան իմաստ է արտահայտում: Օրինակ՝ *Ջի նախ երկուց արարչաց՝ զբարոյ եւ չարի ի միոջէ ի հօրէ* զծնունդսն համբաւէ (Եզնիկ, 14), ... եւ գտեալ *զայր մի* թարգման վրացերէն լեզուին, որ անուանեալ կոչէր *Ջաղայ* (Կորին, 110):
2. *Երկու, երեք, չորք* թվականների հետ գոյականները դրվում են միայն հոգնակի թվով. նրանց հետ թվականը համաձայնում է թե՛ նախադաս, թե՛ հետադաս գործածվելիս: Այսպէս՝ ... *նսեւ գղանկաց երկուց* ընծայելոց գովէ... (Կորին, 78),... որ *զչորս կազեցողսն* ի միմեանս ... (Եզնիկ, 14):

Ծանոթություն: Ուղղական և հայցական հոլովներում հետադաս քանակական թվականները հոլովով կարող են մասն չհամաձայնել գոյականին (հարք հինգ և ոչ թե հարք հինգք)՝*քազաւորեալ Կրմանայ Պարսից արքայի ամսս վեց, եւ Հագկերտի ամսս քսան եւ մի...* (Կորին, 146):

3. Դասական թվականների հետ գոյականը դրվում է միայն եզակի թվով և հետադաս դիրքում համաձայնում է հոլովով, երբեմն նախադաս դիրքում էլ կարող է համաձայնել: Օրինակ՝ ...*և յառաջնումն ամի երկրորդ Յազկերորի...* (Կորիւն, 146), ...*և դարութեան Հայոց յութերորդ ամէ Հազկերորի* առեալ սկիզբն ... (Կորիւն, 146):
4. Անձներական թվականների հետ գոյականները դրվում են հոգնակի թվով և հոլովով ու թվով համաձայնում են հետադաս գործածության դեպքում, օրինակ՝ ...*նախարարքն երեքեան* (Եղիշէ, 160), ...*միաբան լինէր ամբաստանութին երկոցունց կողմանցն* (Եղիշէ, 162), Այլ Սրբոյն Պապոսի չորեքտասանեքումբք թղթով պատմէ... (Կորիւն, 80): Նշենք, որ գործիական հոլովով կապակցություններում հաճախ կարող է թվային անհամաձայնություն լինել:

Միջին և նոր գրական հայերեններում որոշիչը, ինչպես նշել ենք, առդրությամբ է կապակցվում որոշյալին: Որոշչի հետադաս գործածությունը ոճական միջոց է հատկանիշը ավելի ընդգծուն դարձնելու նպատակով: Օրինակ՝

Սիրեն գայո *սիրուն* երեսդ, որ լուսին ի մոտն է գերի.
 պագնեն գայո *բարկուկ* պռկունքդ, որ շաքարն ի մոտն է լեղի
 (Քուչակ, 77):

Զքոյ խըլմեթդ ես գիտենմ, որ չիկերս ի փորս եփեր է.
 Սրտիկս ի յաղեղ յաղեղ մման. գիրկդ լար է *սալորշումե* (Քուչակ, 72):

Ճառագայթի ու վարդի
 Փըթթումներով *վեհապանծ*
 Ես չը սիրեն սա դեմքը՝
 Սիրո ժպիտով մը *օծած* (Դուրյան, 49):

Եվ ծարավուտ անապատում *հրավառ*,
 Տատասկներում, արևի տակ *քոցափայլ*,
 Փնտրում է մա՛նրան անվերջ, անդադա՛ր
 Եվ մեռնում է վեհ սիրո մեջ *հոգեզմայլ* (Իսահակյան, 108):

Արևելահայերենում որոշիչ-որոշյալ կապակցությունների առումով կարելի է առանձնացնել նրանց թվային առնչության հետևյալ առանձնահատկությունները²²⁹:

1. Որոշյալը հոգնակի թվով է դրվում.
 - ա) երբ որոշիչը արտահայտված է կրկնավոր բարդությամբ, օրինակ՝ սուր-սուր փշեր, անուշ-անուշ խոսքեր, տեսակ-տեսակ մվերներ և այլն:
 - բ) Եթե բազմակի որոշիչները վերաբերում են տարբեր որոշյալների, օրինակ՝ լավ ու վատ գործեր, բարի ու չար մարդիկ, մեծ ու փոքր երեխաներ և այլն:
2. Սի/մեկ թվականի հետ որոշյալը դրվում է եզակի, օրինակ՝ մի մարդ, մեկ օրում և այլն, ավելի բարձր թվականների հետ՝ եզակի և հոգնակի, օրինակ՝ հինգ գիրք և հինգ գրքեր. եզակի որոշյալի դեպքում շեշտվում է անձերի կամ իրերի միասնությունը, իսկ հոգնակի ձևերում՝ նրանց առանձնությունը:
3. Չափ ու քանակի միավորների հետ որոշյալը դրվում է եզակի թվով, օրինակ՝ տասը թև հավ, հինգ տակառ գինի և այլն:
4. Թվական որոշչի հետ, երբ որոշյալը դրվում է եզակի թվով, շեշտվում է որոշչի իմաստը, իսկ երբ շեշտվում է որոշյալը, այն դրվում է հոգնակի թվով. համեմատենք՝ Ուներ *քառասուն* աշակերտ, որոնց պիտի կյանք ճանապարհեր (շեշտված է *քառասուն* որոշիչը): Հինգ *երեխաներն* էլ առանձնանում էին բնավորությունների ինքնատիպությամբ (շեշտված է *երեխաներն* որոշյալը):

²²⁹ Մանրամասն տե՛ս **Մ. Ասատրյան**, Ժամանակակից հայոց լեզու, Շարահյուսություն, Եր., 1987, էջ 192-204:

ՀԱՏԿԱՑՈՒՑԻՉ-ՀԱՏԿԱՑՅԱԼ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱԲԱՐՈՒՄ ԵՒ ՆՐԱ ՀԵՏԱԳԱ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հատկացուցիչը գոյականական անդամի լրացում է, որը ցույց է տալիս այն անձը կամ առարկան, որին պատկանում, վերաբերում է կամ որից սերում և ծագում է հատկացյալը: Հատկացուցիչը հայերենի բոլոր շրջափուլերում դրվում է հիմնականում սեռական հոլովով: Գրաբարում հատկացուցիչը ունի արտահայտության մաս այլ դրսևորումներ, որոնք պիտի համարել գրաբարին բնորոշ նախադասության կառուցման օրինաչափ կառույցներից շեղումների արդյունք, որը ստեղծում է մտքի արտահայտության բազմաձևություն: Այս առումով ճիշտ է նկատել Մ. Մինասյանը. «Գրաբարում անհետևողականությունը միայն յատկացուցչին յատուկ չէ»²³⁰: Հատկացուցիչը արտահայտվում է գոյականով և առարկայական իմաստ արտահայտող այլ միավորների միջոցով. դերանունների համար հատկացուցչի շարահյուսական պաշտոնն ամենատարածվածն է, իսկ այլ խոսքի մասերը հատկացուցիչ կարող են դառնալ փոխանվանական կիրառության դեպքում: Այժմ անդրադառնա՞նք տարբեր խոսքի մասերով արտահայտված հատկացուցիչների բնորոշ կառույցներին:

Ա. Գոյական հատկացուցիչը հիմնականում դրվում է սեռական հոլովով. Առաջին *գազարություն եկեղեցոյն* արկաներ ի ծառայութիւն (Եղիշէ, 44): Եւ արդ լինի համար ամաց *հաւարոց երանելոյն* ամբ քառասուն և հինգ (Կորիւն, 246): Գոյական հատկացուցիչը ունի մաս այլ դրսևորումներ: Գրաբարում այն կարող է դրվել մաս *ուղղական և հայցական* հոլովներով: «Տունն գոր շինեաց արքայ Սողոմոն Տեառն, վաթսուն կանգուն երկայնութիւն նորա են քսան կանգուն լայնութիւն նորա, և քսան կանգուն բարձրութիւն նորա» (Գ Թագ, 2, 2)²³¹: Օրինաչափ կա-

²³⁰ Մ. Մինասեան, Յատկացուցիչ-յատկացեալ կապակցութիւնը գրաբարում, Երուսաղէմ, 1974, էջ 25: Աշխատությունը ներկայացնում է հատկացուցիչ-հատկացյալ կապակցության առանձնահատկությունների և հատկացուցչի՝ գրաբարում ունեցած բոլոր դրսևորումների գիտական ամբողջական քննություն: Այսուհետ օրինակները կրեմլեն նշված աշխատությունից:

²³¹ Մ. Մինասեան, նշվ. աշխ., էջ 26:

ռույցը պիտի լիներ. Երկայնություն *տանն* ... էր վաթսուն կանգուն... Ուղղականով դրված *տուն* բառի՝ հատկացուցչի իմաստը լրացվում է նորա սեռականով դրված դերանվամբ:

Հայցականով դրված հատկացուցիչը սովորաբար հանդիպում է ընդ և ի նախդիրների հետ, օրինակ՝ «Նշանէր ընդ *արեւելս կոյս*» (էջ 28) (պետք է լիներ կոյս արեւելից):

«Ինքն անցանէր հարուստ մի ի քաղաքէն ի կողմն մի հիւսիսոյ, ի տեղի մի յարեւելս կոյս» (էջ 28) (պիտի լիներ ի կողման և յարեւելից): Չափի պարագայի իմաստով կառույցում ևս կարող է հատկացուցիչը դրվել հայցականով, օրինակ՝ «Կոտորեցին ... ամենեքին *քեռն մի փայլոյ*» (էջ 29) (պիտի լինի բեռն մի փայտի):

Ավելի քիչ հանդիպում են բացառական և գործիական հոլովով դրված հատկացուցիչներ. «Պտուղ նորա կորիցէ, եւ զաւակ նորա յորդոյ *ի մարդկանէ*» (էջ 29) (պիտի լինի մարդկան): «Հաստատեա՛ զսիրտ քո պատուով միով *հացի*» (էջ 30) (պիտի լինի հացի):

Բ. Ստացական դերանունների մեջ ընդգծված է պատկանելության իմաստը, որը նրանց բառիմաստային հատկանիշն է: Նրանք համաձայնում են գոյականին հոլովով և թվով, ուստի նրանց քննությունը ներկայացրել ենք դերանուն որոշչի համաձայնության հատկանիշների վերլուծության ժամանակ²³²: Մնացած դերանուններով արտահայտված հատկացուցիչները գործառական առանձնակի հատկանիշներ չեն դրսևորում... և եղծեալ ապականէին զամենայն խեղաթիւր կամս *նորա* (Եղիշէ, 100): Թէպէտ և հայէին *յիւրեանց* սակաւութիւն (Եղիշէ, 100):

Որ հարաբերական դերանվամբ սկսվող որոշիչ երկրորդական նախադասության մեջ, նրանով արտահայտված հատկացուցիչը դրվում էր տրականով, որը տարածված կառույց էր գրաբարում. Սա էր իշխան և հրամանատար ամենայն տէրութեանն Պարսից, *որում* անուն էր Սիիրներսեի, և չէր ոք ամենեկին... (Եղիշէ, 178): Նկատելի է նաև այն

²³² Նշված աշխատության մեջ ստացական դերանվամբ կառույցները արժևորվում են իբրև հատկացուցիչներ: Մենք հետևում ենք այն մոտեցմանը, որ դրանք որոշիչներ են և կապակցվում են որոշյալին համաձայնության համապատասխան կանոններով: Հատկացուցչին բնորոշ պատկանելության իմաստը ներամփոփված է ստացական դերանվան բառիմաստի մեջ:

իրողությունը, որ դերանունով արտահայտված հատկացուցիչը ստանում է հատկացյալի հոդը, օրինակ՝ Յետ այնորիկ ուշ եղեալ երկոցունց երանելեաց, *գիրքսանց* ազգին գոպրութիւն առաւել յարգել և դիւրացուցանել (Կորիւն, 122):

Հատկացուցիչը հատկացյալի հետ գրաբարում ունի քերականական համաձայնության տարբեր դրսևորումներ, օրինակ՝ հատկացյալի որոշյալ առման դեպքում հատկացուցիչը ստանում է *և* որոշիչ հոդը, օրինակ՝ ...**գ**իարկ **աշխարհին** առաւել ծանրացոյց (Եղիշէ, 44); ...**գ**ովստն եկեղեց**ոյն** ցրուեսցէ (Եղիշէ, 46): Կամ հատկացուցիչը կարող է ստանալ հատկացյալի հոդը, օրինակ՝ **գնորա** բարերարութիւնն (Եղիշէ, 58); ...**գ**ի ընկալցի **գմեր** մահն իբրև գանմահից» (Եղիշէ, 82); ...գտիեգերական գիւր իշխանութիւնն... (Եղիշէ, 88):

Գրաբարում, ի հակադրություն արևելահայերենի, հատկացյալը կարող է ստանալ դերանունով արտահայտված հատկացուցչի համարժեք հոդը: Օրինակ՝ ...և ասէ թագաւորն. «Առ ի՞նչ է *քո* այդ մեծ *դրփումքինդ* (Եղիշէ, 84):

Արևելահայերենում այս գործառնություն համարվում է սխալ. *իմ գիրքը* կամ *գիրքս*, բայց ոչ՝ *իմ գիրքս*:

Միջին և նոր գրական հայերեններում հատկացուցիչը դրվում է սեռական հոլովով: Հատկացուցչի իմաստ են արտահայտում **ս-ին**, **մեր** (գիրքս, գրքերս), **դ-քո**, **ձեր** (գիրքդ, գրքներդ) ստացական հոդերը: Դիտենք բնագրային օրինակներ.

Միրտ *իմ*, ընդէ՞ր ես խռովել,
Աչք *իմ* ընդէ՞ր ես խաւարել...
Յաստուծոյ յէ՞ր ես հեռացել
Ձիր պատուիրանն ես մոռացել,
Դիմաց *հոգւոյդ* ես քարացել.
Տուն և տաճար ես դուն շինել
Գանց ու դումաշ ես ժողովել
Վերայ *գլխոյդ* մոխիր մաղել (ՀՀՄՔ, 193):

Լուսավորի՛ր *մեր* մութ ճամփան դեպի աշխարհն երջանիկ (ՀԹ, 209):

Սիրում եմ աչքերիդ տխրությունը խորին,
Անաղմուկ խոսքերիդ դաշմակները հիվանդ,
Կուսական ամոթխած փայփայանքդ, որ *իմ*
Սև օրերն է օրորում խնդրոթյամբ հնազանդ (ՎՏ, 42):

ԲԱՅԱՀԱՅՏԻՉ- ԲԱՅԱՀԱՅՏՅԱԼ ԿԱՊԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱԲԱՐՈՒՄ ԵՒ ՆՐԱ ՀԵՏԱԳԱ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայերենում բացահայտիչն ունի երեք տեսակ՝ բուն, մասնական և մասնավորող պարագայական: Գրաբարում բուն բացահայտիչը կարող էր արտահայտվել գոյականով, դերանվամբ, հոլովովոլ այլ խոսքի մասերով, ինչպես նաև կապական կապակցություններով և երկրորդական նախադասություններով: Գրաբարում այն հետադաս կիրառություն ուներ: Բերենք տարբեր խոսքի մասերով, ինչպես նաև երկրորդական նախադասություններով արտահայտված բացահայտիչների բնորոշ օրինակներ՝ *Որդիք* Իսահակայ՝ Սառուղ եւ Մովլե *իշխանք*: *Որդիք* Քերբոնի՝ Յերիա *իշխան*, *Ամարիա* երկրորդ, եւ *Ոգիեղ* երրորդ, եւ *Յեկեմիաս* չորրորդ: *Որդիք* Ոգիելի՝ Միքիա *իշխան*, եւ *Յեսիաս* երկրորդ.. (Մնացորդաց, ԻԳ, 19-21): Իսկ *զԱնոյշ, զառաջին կինն Աժդահակայ...* (Խորենացի, 98), *Արարաագդ որդի Տիգրանայ* (Խորենացի, 158), Այս *Կդեոպարայ դուստր* Պտղոմէոս Դիոնիսի, *թոռն* Պտղոմայիդ Կդեոպատրեայ, *յոյժ սիրելի* Հերովդի (Խորենացի, 156), Իսկ *դշիտյն* Հրեից *Ադեքսանդրիայ*, որ և *Մեսաղինայ*, որ էր լեալ *կինն Ադեքսանդրի*, որդւոյ Յոհաննու, որդւոյ Շմատնի, *եղբայր* Յուդայ Մակարէի, որ *գայնու ժամանակաւ ունէր զբազաւորութիւնն հրեից...* (Խորենացի, 146):

Այսպիսով, գոյականին կամ գոյականաբար գործածված բառին հաջորդող գոյականը և թեքվող այլ խոսքի մասերը, երկրորդական նախադասությունը, որոնք բացահայտում են նրա իմաստը, կոչվում են

բուն բացահայտիչ: Գրաբարում բուն բացահայտիչը բացահայտյալից կարող է ընդմիջարկվել տարբեր կառույցներով ու կապակցություններով, բայց դրանք համաձայնում են դեմքով, թվով և հոլովով:

Գրաբարում մասնական բացահայտիչը արտահայտվում է *իբրև* կամ հազվադեպ *որպէս* նախադրություններով և նրանց՝ հայցական հոլովով դրված խնդիրներով՝ *Աչք* նորա *իբրև զաղաւնիս* ի վերայ լիութեան ջրոց, լուացեալ կաթամբ... *ծնօղք* նորա *իբրև զփաշիս* խնկոց բուրեն զանուշահոտութիւն իւղագործաց... (Երգ երգոց, Ե, 11-13): Եւ եղիցի *ժողովուրդն իբրև զքահանայն*, եւ *ծառայն իբրև զփէրն*, եւ *աղախինն իբրև զփիկինն*, եւ եղիցի *զնօղն իբրև զվաճառականն* եւ *փոխաւորն իբրև զփոխառն*, եւ *պարտապանն իբրև զպարտաւերն* (Եսայեայի, ԻԴ, 2-3):

Մասնավորող պարագայական բացահայտիչը, որպէս կանոն, գործածվում է ժամանակի և տեղի պարագաների պաշտոն կատարող բացահայտյալների հետ: Ինչպէս օրինակ՝ Եւ զՇարաշան ի տանէ Սարայսարայ հաստատէ բղեաշխ մեծ եւ կուսակալ *յարեմարից հարաւոյ, յեզերս սահմանացն Ասորեսարանի, առ ափն Տիգրիս գետոյ...* (Խորենացի, 130), Խնդիր արասցես *ի Գեղարքունի, ի գաւառին Սիւնեաց*, եւ գտցես յառաջին հազներգութեանն, *յերեքուրասաներորդ թուին, ...առաջնոց թագաւորաց մերոց մինչեւ ցԱրգար...* (Խորենացի, 120):

Ինչպէս նկատելի է վերոբերյալ օրինակներից, գրաբարին բնորոշ էր միևնույն բացահայտյալի մի քանի բացահայտիչներով կապակցությունը, որը ստեղծում է ենթաստորադասական շղթա, որտեղ բացահայտիչներից յուրաքանչյուրն իր նախորդի համար գերադաս, իսկ հաջորդի համար ստորադաս դեր էր կատարում: Ինչպէս փաստում է Գ. Խաչատրյանը. «Ոճական այս հնարքը գործադրվում է հատկապէս որևէ անձի սերումը, ծագումը ներկայացնելու անհրաժեշտությունից ելնելով՝ Թագաւորեաց Խոսրով Կոտակ՝ *թոռն* Խոսրովու, *որդի* քաջի եւ առաքինոյն Տրդատայ արքայի, *թոռն* քահանայապետին Յուսկան՝ *որդոյ* Վրթանայ՝ *որդոյն* Գրիգորի մեծին առաջնորդ քահանայապետին: Ընդ որում, այստեղ միաժամանակ բացահայտվում է ոչ միայն Խոսրով կուտակի, այլև Յուսիկ և Վրթանես քահանայապետերի ով լինելը: Այս

ոճական հնարքը հատկապես հաճախադեպ է Աստվածաշունչում»²³³։ Ենթաստորադաս շղթա կարող են կազմել նաև մասնավորող պարագայական բացահայտիչները։ Ակնհայտ է, որ մման կառույցները բնորոշ էին գրավոր խոսքին, հատկապես գիտական և տեղեկատվական բնույթի. բանավոր հաղորդակցման ժամանակ մման երկարաշունչ կառույցներ չէին կարող գործածվել։

Միջին գրական հայերենում և աշխարհաբարում բացահայտչի տեսակները չեն փոխվում, պահպանվում է նաև բացահայտիչ-բացահայտյալի համաձայնությունը։ Աշխարհաբարի շրջանում կանոնակարգվում է բացահայտիչ-բացահայտյալի տրոհումը համապատասխան կետադրությամբ, ինչպես նաև նրանց շարադասությունը. «Բացահայտիչը կանոնավորապես դրվում է բացահայտյալի ետևից և թվով, հոլովով ու դեմքով համաձայնում է նրա հետ։ Դեմքով համաձայնությունը բացահայտյալի հետ լինում է *ս, ղ* դիմորոշ հոդերով։ Օրինակ՝ Բագրատունյաց մեծագործության ամենամեծ արդյունքը եղավ **Անին**՝ հազար ու մեկ եկեղեցիների **քաղաքը**.- Հայկը յուր շինած դաստակերտները տալիս է յուր **թոռանը**՝ **Կադմոսին** ժառանգություն (Պալ.)։ Ինչո՞ւ չեք մոտենում **մեզ**՝ սակավաթիվ **գինվորներիս** (Մուր.)»²³⁴։ Բացահայտյալի և մի շարք բացահայտիչների ենթաստորադասական շղթան, որպես ոճական հնարանք, այլևս կիրառական չէ։

ԵՆԹԱԿԱՅԻ ԵՎ ՍՏՈՐՈԳՅԱԼԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱԲԱՐՈՒՄ ԵՒ ՆՐԱ ՀԵՏԱԳԱ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայերենում ենթական ստորոգյալին համաձայնում է դեմքով, եթե դերանուն է, և թվով։ Գրաբարում ենթական արտահայտվում է ոչ միայն ուղղական հոլովով, այլև սեռական, տրական, երբեմն նաև հայցական հոլովներով։ Միջին և նոր գրական հայերեններում այն արտահայտվում է միայն ուղղական հոլովով։

²³³ **Գ. Խաչատրյան**, Գրաբար, Եր., 2014, էջ 368-369։

²³⁴ **Մ. Աբեղյան**, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 509։

1. Գրաբարում ենթական դրվում է ուղղական հոլովով և թվով համաձայնում ստորոգյալին: Ըստ որում՝ անեզական և հավաքական գոյականների դեպքում ստորոգյալը դրվում է հոգնակի թվով, օրինակ՝

Պատրասխանի եր մոզպեյրն եւ ասէ (Եղիշէ, 126):

Ոսրի չարիքն աշխարհ մտին (Եզնիկ, 96):

Եւ *գունդն* Հայոց *եկին հասին* յաշխարհն Հայոց... (Եղիշէ, 116):

2. Ենթական կարող է դրվել սեռական հոլովով, եթե ստորոգյալն արտահայտված է անցյալ դերբայով և օժանդակ բայով, օրինակ՝

Ասացեալ է քո - ասացեալ եւ դու:

Գրեալ է իմ - գրեալ եմ եւ:

Յայնժամ պատմէր նոցա արքայն վասն առն ուրումն ասորոյ եպիսկոպոսի ազնուականի՝ Դանիէլ անուն կոչեցելոյ, որոյ յանկարծ ուրեմն *գրեալ* նշանագիրս աղփաբետաց հայերէն լեզուի (Կորիւն, 90): Այս դեպքում ստորոգյալը դեմքով չի համաձայնում ենթակային և դրվում է III դեմքով. հաճախ այն կարող է նաև զեղչվել:

Ենթական դիմային առումով կարող է արտահայտվել բայի վրա դրվող **ս** (ես, մենք, սա, սոքա), **դ** (դու, դուք, դա, դոքա), **ն** (նա, նոքա) հոդերի միջոցով, որ կարելի է կոչել հոդային ենթակա, ըստ որում՝ այս իրողությունը բնորոշ է միայն գրաբարին, երբ խոնարհված բայը կարող է հոդ ստանալ՝ *Քաղցրութեամբ լո՛ւր գոր ասելոցս եմք* (Եղիշէ, 45): Այլ վասն իմ որ *ստեքդ* ... (ԳՓ, 50): Նշված կառույցը համարվել է օտարամուտ, չնայած լեզվաբանները համակարծիք չեն²³⁵: Այս կիրառությունը սովորաբար հանդիպում է *որ, ինչպես, զի, յորժամ, որպէս, ուր* շաղկապներով և հարաբերական դերանուններով կապակցվող երկրորդական նախադասությունների ստորոգյալների դեպքում:

Պակասավոր բայերի դեպքում մույնպես ենթական կարող է արտահայտվել սեռական հոլովով, ընդ որում՝ սեռական հոլովով ենթակայի հետ դրվելիս **եմ** պակասավոր բայը ստանում է *ունենալ* իմաստ, օրինակ՝ *Առն միոջ էին երկու որդիք* (Մի մարդ **ունեք** երկու որդի), իսկ

²³⁵ Մանրամասն տե՛ս Թ. Շահվերդյան, Դասական գրաբարի շարահյուսական ոճաբանություն, Եր., 2007, էջ 56-57:

ուղղականի դեպքում նշանակում է *լինել, գոյություն ունենալ՝ Էին արք երկու ի քաղաքի միում* (Մի քաղաքում **կային** երկու մարդ):

3. Գրաբարում ենթական կարող է դրվել նաև տրական հոլովով. այս դեպքում այն պարտադիր հանդես է գալիս հետևյալ կառույցում՝ *եղանակիչ (կամ միադիմի բայ) + ենթակա+ անորոշ դերբայ*, օրինակ՝ *Չէր մարթ մարմնաւորի անմահ կալ* (Եզնիկ, 58): Թեք հոլովներով ենթակաները հատկապես վկայված են դերբայական կառույցներում: Գրաբարում անորոշ, անցյալ դերբայները կարող էին ստորոգումային կառույցների ստեղծել, այդ կառույցներում ենթակաները սեռական, տրական կամ հայցական հոլովներով են արտահայտված: Բերենք տրականով ենթակաների բնորոշ օրինակներ նախ անցյալ դերբայի հետ:

Բագում զօրդ որ ընդ քեզ է, առ ի *չմարմնելոյ ինչ* զՄաղիամ ի ձեռս դոցա (Դատաւորք, Է, 2):

Ի բանակելն Իսրայէլի յԵսեբոն եւ ի դստերս նորա... եւ յամենայն քաղաքս որ առ եզերք Յորդանանու ամս երեք հարիւր (Դատաւորք, ԺԱ, 26):

Ի դառնալն ինում խաղաղութեամբ յորդոցն Ամոնայ, եղիցի՝ զի մատուցից գնա Տեառն յողջակէզ (Դատաւորք, ԺԱ, 31):

Եւ *ոչ բաւական լինելոյ* խօսել *ունեք* բան մի յերկրի գանձուցն ժառանգաւորի... (Դատաւորք, ԺԸ, 7):

Եւ ի *գուարբանալ սրտից* նոցա... (Դատաւորք, ԺԹ, 22):

Կամին *զչեզ իմաստունս լինել* ի բարիս և անմեղս ի չարիս (Հռով., ԺԶ, 19):

...քե նմա *ոչ է հնար* յանձն առնուլ և հաւանել այսպիսի խորհրդոյ (ՂՓ, 114):

4. Անորոշ դերբայի մոտ ենթական դրվում է հայցական հոլովով: Օրինակներ՝

Ածել ի վերայ նորա *զանհրատութիւն* եւթանասնից որդոցն յԵրուբաաղայ. եւ *հասուցանել զարիւն* նոցա ի վերայ Աբիմէլեբայ եղբօրն իւրեանց.. (Դատաւորք, Թ, 24): Եւ ոչ կամեցաւ Սեհոն *զԻսրայէլ անցանել* ըստ սահմանս իւր... (Դատաւորք, ԺԱ, 20):

Գրաբարում անցյալ դերբայը ևս կարող էր ստորոգում արտահայտել, այդ դեպքում ենթական դրվում է սեռական, հայցական մաս ուղղական հոլովներով: Բերենք անցյալ դերբայի ստորոգումային կառույցների բնորոշ օրինակներ:

1) Անցյալ դերբայը դառնում է մախադասության ստորոգյալ, որը կարող է հանդես գալ՝

ա) գլխավոր մախադասության կազմում՝

Ահաւաղիկ դու ամուլ ես եւ ոչ է *քո ծնեալ* (Դատաւորք, ԺԳ, 3):

Եւ ազդ եղեւ Գաղացոցն եւ ասեն, *եկեալ* է այսք *Սամփսոն* (Դատաւորք, ԺԶ, 2):

բ) Երկրորդական մախադասության կազմում՝ միայնակ կամ *եւ* բայի հետ՝

Եւ տեսին պահապանքն *զայր մի ելեալ* ի քաղաքէ անտի (Դատաւորք, Ա, 24):

Մի՛ երկնչիք յաստուածոց ամուրիացոցն, յորոց միջի *դուք քնակեալ* էք յերկրի նոցա (Դատաւորք, Զ, 10) :

Իբրեւ տեսին որդիքն Բենիամինի՝ եթէ ի պարտութիւն *մարմեալ* են, տեղի ետուն այր Իսրայէլեան Բենիամինի (Դատաւորք, Ի, 36):

2) Այն ստորոգյալ է կազմում *կայ* պակասավոր բայի հետ հարակատարի նշանակությամբ՝

Եւ առին զբանալին եւ բացին, եւ ահա տէրն իւրեանց *անկեալ կայր մեռեալ* ի գետնի (Դատաւորք, Գ, 25):

Մեծամեծ *յարուցեալ կան* հետազօտութիւնք սրտից (Դատաւորք, Ե, 16):

Եւ ահա Սիսարա *կայր անկեալ մեռեալ*՝ եւ ցիցն ի ծամելոջ նորա (Դատաւորք, Դ, 22):

Եւ բուռն եհար Սամփսոն զերկուց սեանցն միջնոց, յորոյ վերայ *յուռն հասրալորեալ կայր* (Դատաւորք, ԺԶ, 29):

Եւ վեց հարիւր *արքն վառեալք* պատերազմական զինու իւրեանց *արշանացեալք կային* առ մուտս դրանն (Դատաւորք, ԺԸ, 16):

Միջին հայերենում արդեն այս և մնան կառույցները գրաբարաբանություններ են, քանի որ վերանում են նրանց ձևավորման ձևաբանա-

կան հիմքերը. անցյալ դերբայը վերանում է, նրանից առաջնում է կախ-
յալ վաղակատար դերբայը՝ *եւ* և *եք* վերջավորություններով, որն այլևս
միայնակ ստորոգում չէր կարող արտահայտել, այլ *եւմ* բայի հետ
կազմում էր սահմանական ներկա և անցյալ ժամանակները: Պակասա-
վոր *եւմ*, *կամ* բայերը կորցնում են «ունենալ» նշանակությունը և սեռա-
կան հոլովով ենթակա արդեն չէին կարող ունենալ: Միադիմի եղանակիչ
բայերով կառույցները ևս աստիճանաբար գործածությունից դուրս են
մղվում, քանի որ միջին հայերենում ձևավորվում էր ընթական, պայմա-
նական և հարկադրական եղանակների հարացուցային համակարգը:

Միջին հայերենում և աշխարհաբարում ենթական արտահայտվում
է միայն ուղղական հոլովով և ստորոգյալին, որպես կանոն, համաձայ-
նում է դեմքով և թվով:

1. Եզակի ենթակայի դեպքում ստորոգյալը դրվում է եզակի թվով,
իսկ հոգնակիի դեպքում՝ հոգնակի.

Խոր եւն քո հուր աչքերը,

Հուրդ իմ հուրն է այրում (ՎՏ, 58):

2. Դիմային համաձայնությունը բազմակի ենթակաների դեպքում
կառուցվում է՝ ըստ դիմային հաջորդականության.

*Ես, Արամը և մեր ընկերները գնալու ենք այդ միջոցառմանը: Դու,
Արամը և չեր ընկերները գնալու եք այդ միջոցառմանը: Ես, դու և Արա-
մը գնալու ենք նրան այցելության: Դու և Արամը գնալու եք նրան այցե-
լության:*

Պետք է խուսափել բակառություն կոչվող սխալ գործածությունից.
Աշակերտների մի մասը գնաց և ոչ թե՝ *գնացին*, քանի որ քերականա-
կան ենթական եզակի թվով է դրված, և իմաստային համաձայնությունը
սխալ է: Թեև գրաբարում հավաքականության իմաստ արտահայտող
ենթակաների հետ ստորոգյալը դրվում է հոգնակի թվով, երբեմն էլ բազ-
մակի ենթակաների հետ ստորոգյալը դրվում էր եզակի թվով: Օրինակ՝
իսկ ի միում աուր *աչք* կուրացեալ *եղեն* գողոցն.....(Բուզանդ, 170)
*Ապա կարգեցան, կազմեցան յօրինեցան խաղաղացան աշխարհն Հա-
յոց ի մեջ երկուց քազաւորացն* (Բուզանդ, 104):

ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱԲԱՐՈՒՄ ԵՒ ՆՐԱ ՀԵՏԱԳԱ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Շարադասությունը բառերի դասավորության կարգն է նախադասության, խոսքի տարբեր միավորների կազմում: Գրաբարյան շարադասությունը բավական տարբերվում է արդի հայերենի շարադասությունից: Այսինքն՝ եթե արդի հայերենում կանոնավոր է լրացում+լրացյալ կադապարով կապակցությունը, և լրացյալ-լրացում կառույցը համարվում է շրջում, ապա գրաբարում օրինաչափ է լրացյալ-լրացում կադապարով կառույցը: Գրաբարում առավել տարածված են որոշյալ-որոշիչ, հատկացյալ-հատկացուցիչ, բացահայտյալ-բացահայտիչ կապակցությունները, որոնք գրաբարից աշխարհաբար թարգմանելիս պետք է սկսել վերջից: Բերենք ասվածը հաստատող բնագրային օրինակներ: Ա) *Հարկացյալ - հարկացուցիչ՝ ի ժամ բազմականացն* (Եղիշե, 308), *ուխարին քրիստոնեության* (Եղիշե, 146), *պարսունքին վարուց* (Կորին, 70), *մահուան առն* (Կորին, 70), *գունդքն դիսաց* (Եզնիկ, 68), *պարճառ չարեաց* (Եզնիկ, 132), *որդի նորա* է (Եզնիկ, 92):

Բ) *Որոշյալ-որոշիչ՝ ըստ Աստուծոյ ողորմելոցն* (Եզնիկ, 136), *անօրս կազմեալս* (Եզնիկ, 136), *գովէ գիտարոցն ճշմարտութիւն* (Կորին, 78), *գարս և զկանայս փափկասունս* (Եղիշե, 162), *ի փղին յայնիկ* (Բուզանդ, 216) և այլն:

Գ) *Որոշիչ-որոշյալ*: Այս կապակցությունը առանձնացվում է այն հատկանիշով, որ որոշիչը գործածվում է և՛ նախադաս, և՛ հետադաս՝ դրսևորելով համաձայնության որոշակի առանձնահատկություններ (տե՛ս «Համաձայնություն» բաժինը): Օրինակներ՝ *զբազում գաւառս* (Եղիշե, 162), *սուրբ եպիսկոպոսացն* (Եղիշե, 162), *ամենայն աջողութիւն* (Եղիշե, 168), *երկոցունց կողմանցն* (Եղիշե, 162), *ի միում ատուր* (Եզնիկ, 126): Որոշիչ-որոշյալ կապակցությունների այս գործառույթը հիմք է դառնում, որ միջին հայերենում ամրակալվի որոշչի նախադաս գործածությունը: Ենթակայի և ստորոգյալի շարադասության տարածված կադապարը *սրորոգյալ+ ենթակա* կադապարն է մանավանդ դերբայական նախադասություններում: *Ենթակա+ սրորոգյալ* կադապարը նույնպես գործա-

ծական է, ինչը և պիտի հիմք դառնա միջին և նոր գրական հայերեններում այդ կաղապարի ամրապնդման համար²³⁶: Դիտարկենք բնագրային օրինակներ՝ *Սկսաւ սպարապետն խօսել միաբանութեամբ նախարարացն ընդ զօրսն և ասէ...* (Եղիշէ, 202): *Սորա ամենեքեան համագունդք հասանէին ի զործ պարերագմին...* (Եղիշէ, 202): *Ի բազում պարերագմունս մտեալ է իմ, և չեր ընդ իս...* (Եղիշէ, 202): *Ջոր առեալ Վահանայ և Հմայակի կազմութեամբ վահանակելոյ...* (Կորիւն, 142)

Միջին հայերենում ամրակայվում է լրացում+լրացյալ կաղապարը, որը ժամանակի ընթացքում օրինաչափության արժեք է ստանում, և լրացյալ+լրացում կապակցությունը արժևորվում է իբրև շրջուն շարադասությամբ գործածություն, որը ոճական արժեք է ձեռք բերում: Օրինակ՝

– *Կարմիր և սպիտակ երես*, սիրու տեր արիւր զիս ի քեզ.
 Ծոցիկդ է պաղչի մման, *գույնզգույն վարդեր* կա ի ներս:
 Ծոցուդ ես հավաս ունիմ, գամ մտնում ի պաղչա ի ներս.
 Քաղեմ *գույնզգույն ծաղկունք*, խնձորով մտնեմ դեպ ի քեզ
 (Քուչակ, 117):

Որ գնոյն *սիրովն ճշմարտական*
 Վառեալ այժմոյս տէրըն Յոհան
 Կանգնեաց *լիանարըն հրաշագան*
 Թովմայ առաքելոյ անուան (ՀՀՄՔ, 208):
 Բերեմ քեզ ոսկի սինի՝ *արծաթե մլողն ի վերայ*.
 Բերեմ քեզ նռան զինի ու *Հալսայ կթիան ի վերայ*.
 Չգեմ քեզ զարպապ տոշկիկ՝ *զարիֆա բարձիկն ի վերայ*.
 Դեղեմ զիմ ծով-ծով աչերն՝ զիմ *կամար ուներն ի վերայ*
 (Քուչակ, 121):

Ինչպես երևում է օրինակից, հետադաս ծավալում որոշիչները երկրորդ հայրենում ոճական կարևոր միջոց են, որ մեծ հմտությամբ գործածել է Քուչակը՝ ասելիքը դարձնելով տպավորիչ և ներագրող:

²³⁶ Մանրամասն տե՛ս Թ. Շահվերդյան, նշվ. աշխ., էջ 277:

Նոր գրական հայերենում շարադասությունն ունի կայուն և ազատ դրսևորումներ: Կայուն է այնքանով, որ ի հակադրություն գրաբարի՝ ունի լրացում-լրացյալ կառուցվածքային կադապարը, այսինքն՝ որոշիչ-որոշյալ, հատկացուցիչ-հատկացյալ, ազատ է այնքանով, որ ցանկացած միավոր լրացում-լրացյալ կառուցվածքում կարող են հանդես գալ լրացյալ-լրացում շրջուն շարադասությամբ, որը խոսքին հաղորդում է ոճական առանձնակի երանգ՝ պատեհ խոսքային տիրույթին (համեմատենք՝ *իմ մայր/մայր իմ, իմ անուշ ու անգին մայր/մայր իմ անուշ ու անգին*):

Միջին հայերենում իր կայուն տեղն ունի նաև *մի* անորոշ դերանունը, որը միշտ դրվում է որոշյալից հետո, օրինակ՝ *Պաղչա մի* տնկեր եմ ես, թե ինչ աղեկ մորճեր կա ի ներս (Քուչակ, 208): *Մի-մը* անորոշ դերանունը և հոդը արևմտահայերենում ևս միշտ հետադաս գործածություն ունեն: Օրինակ՝ Յանցառ կպատահի, որ գացող *հարսնուկ մը* սիրտի *կապով մը* շահագրգռված մնա իր մերանցը տունին կամ փողոցին, ուր արեւեն այրած բայց կրակի պես *երկրասարդ մը*, հագվի դուրս ելած պատանեկության դուռնեն, ամեն կիրակի կսպասե դուռին առջև անոր անցքին, անտես *դողով մը* թոթվըվելու (Օշական, 231): Ի դեպ, պայմանավորված այն հանգամանքով, որ արևմտահայերենում սեռական հոլովը կարող է ստանալ որոշիչ հոդ՝ ի հակադրություն արևելահայերենի, հատկացուցիչը ևս ունի որոշիչ հոդով գործածություն, ինչպես՝

Անոնք Մաղաքը կտանեին իր *կնկանը* տուն (Օշական, 209):

Ու գլուխը կախ, մերկ ոտքերը *քարեքուն* վրա պչրանքով մը զարնելով ու զարնելով կչափեր *փողոցներուն* ամայությունը (Օշական, 230):

Ինչպես տեսնում ենք, սեռականով կապի խնդիրն էլ դրված է որոշյալ առումով՝ պայմանավորված արդեն նշված հանգամանքով: Միջին հայերենում *կու-*ով կառույցների ժխտական խոնարհման դեպքում իր կայուն տեղն ունի օժանդակ բայը, որը միշտ դրվում է նախադաս, օրինակ՝

Երանի, որ գայն ահեղ օրըն *չի՛ մօռնայ*,

Հերիք ասե՛ մեղայն և շուտով դառնայ:

Յան է դըժար, որ այլ *չի՛ լաւնայ*,

Չայն ցաւն զենեհար միտքըդ *չի մոռնայ* (Երզնկացի, 72):

Գրաբարում ստորոգման ժխտումը կազմվում է *ոչ չ չի մի* ձևույթների միջոցով, *ոչ* և *մի* ձևույթները դրվում են դերբայից (բաղադրյալ ժամանակաձևերում) և խոնարհված բայից (պարզ ժամանակաձևերում) առաջ՝ հաճախ ընդմիջվելով նախադասության այլ միավորներով, որը գրաբարով մատենագրության ոճական կարևոր դրսևորումներից մեկն է: Դիտարկենք բնագրային հատվածներ. Հաճոյ թուեցաւ բանն առաջի թագաւորին. եւ անդէն վաղվաղակի կոչէր զառաջեաւ յամենայն ազգացն որ ունէին զքրիստոնէութիւնն, որ ի գօրու նորա էին, եւ բռնաբար արգելեալ էր զնոսա, զի *մի՛* որ իշխան *լիցի յանդիման* պաշտել զԱստուած (Եղիշէ, 170): Ձի *մի՛* զքոյոյ *քանեցից* ի վերջին աւար լեռնում հատուցմանն (Նարեկացի, 316): Ոչ եթէ իբրեւ յետոյ իմացաւ և արար, այլ մինչ *չի արարեալ* էր նորա՝ ի կանուխ գիտութեանն իւրում տեսանէր զարարածս. որպէս և այժմ մինչ *չի գործեալ* մարդոյ բարի ինչ կամ չար, Աստուծոյ յայտնի են գործք մարդկան: Սոյնպէս և յայնժամ մինչ *չի էր արարեալ*, ոչ խառն ի խոռն ինչ ճանաչէր զանեղսն, այլ կարգեալ և յարմարեալ կային առաջին նորա իւրաքանչիւր մասանացն տեսակքն. իսկ մարդկան և հրեշտակաց՝ և տեսակքն և որ տեսակին լինելոց էին (Եղիշէ, 60):

Արևելահայերենում բաղադրյալ ստորոգյալի հանգույցը ժխտական խոնարհման դեպքում միշտ հետադաս է, և եզակի երրորդ դեմքում է>ի հնչյունափոխություն չի կատարվում, ինչը բնորոշ է բաղադրյալ դիմավոր ժամանակաձևով արտահայտված պարզ ստորոգյալին, ընդ որում՝ վերջին դեպքում օժանդակ բայը միշտ նախադաս է՝ ի հակադրություն արևմտահայերենի: Օրինակ՝ *գեղեցիկ է - գեղեցիկ չէ, լսում է - չի լսում*:

Արևմտահայերենում եթե այն արտահայտված է ապառնի և հարակատար դերբայներով և օժանդակ բայով, ապա ժխտում արտահայտող օժանդակ բայը կարող է դրվել դերբայից և՛ առաջ, և՛ հետո, օրինակ՝ *կանգնած է - կանգնած չէ // չէ կանգնած, լսելու է - լսելու չէ // չէ լսելու*: Օրինակ՝ Չորս քայլ **չէր ըրած**, երբ մացառին տակեն չորս ասպատակ ցցվեցան ուղիդ: **Չէին զիջած** նույնիսկ սովորական ժպտումին (Օշական, 261): Ըստ որում՝ ենթական արևմտահայերենում եթե արտահայտվում է ժխտական դերանվամբ, ստորոգյալը չի ժխտվում, օրինակ՝ *ոչ որ*

ըսաւ, ոչ ոք չի տեսներ ինչ որ ըսաւ, ոչ ոք չի տեսներ և այլն, իսկ արևելահայերենում կրկնակի ժխտում է տեղի ունենում, օրինակ՝ *ոչ ոք չի տեսներ, ոչ ոք չի տեսներ*:

Բնագրային օրինակներ.

Ոչ ոք ըսավ - «Սա տղին

Պատռենք սիրտը տրտմագին» (Դուրյան, 49):

Թե ինչ հանգանք, ոչ ոք կոնկրետ չի կարող ասել (ՊՍԱ, 84):

Եթե հանգույցը բաղադրյալ ստորոգյալի կազմում ժխտման դեպքում հետադասվում է, որոշակի ոճական արժեք է ձեռք բերում. տրամաբանական շեշտը դրվում է ժխտվող հատկանիշի վրա: Հմմտ.

Էակ չ'էր նե, այլ սեր, հուր, շունչ, ժրպիտ, ցավ,

Գոհար աչեր, վարդ այտ, այլ ինքն էր թախիժ (Դուրյան, 26):

Հայեր, Հայեր, դեռ Հայաստան չէ՛ կործան...

Հուր ներշնչողք չե՛ն ասողեր,

Եղբայրություն է հուր, ձայն,

Հայը սիրող Հայն է: (Դուրյան, 27):

Հին, միջին ու նոր գրական հայերեններում բարդ նախադասության կառուցվածքային տիպերը և կապակցության եղանակները ունեն միևնույն դրսևորումները. այն է՝ համադասական և ստորադասական նախադասությունները կապակցվում են հնչերանգով (շարահարական կապակցություն, որ անվանում են մասն աննշույթ կապակցություն) և շաղկապող բառերով, որոնք են շաղկապները և հարաբերական դերանունները (գողվածով կամ նշույթավոր կապակցություն), խոսքում դրանց ընտրությունը ազատ է²³⁷: Այս առումով հայերենի զարգացման որևէ շրջանի համար առանձնակի տարբերակումներ չենք կարող անել: Միայն գրաբարի համար առանձնացվում են դերբայական նախադասությունները, որոնցում ենթական արտահայտվում է սեռական հոլովով:

²³⁷ Մանրամասն տե՛ս *Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության*, Հ. Բ, Եր., 1975, էջ 130-290:

Դերբայով արտահայտված ստորոգումն իր եղանակաժամանակային դաշտով համապատասխանում է տվյալ խոսքային տիրույթում դիմավոր բայով արտահայտված ստորոգմանը: Օրինակներ՝ *Իսկ երանելոցն զհւր վարդապետութեանն պայման արարեալ սակեալ եւ վճարեալ: Եւ բազում շնորհագիր մատեանս զհարցն եկեղեցոյ սրացեալ ծովացուցանէր զվարդապետութեանն զխորութիւն եւ լցեալ զեղոյր ամենայն բարութեամբբ* (Կորիւն, 116): *Իսկ երանելին իր ուսուցչական գործը կարգավորեց և ավարտեց: Եվ եկեղեցու հայրերի շատ շնորհագիր մատյաններ չեռք բերելով՝ իր վարդապետությունը խորացրեց և լցրեց ամեն բարություններով* (Յուզբաշյան): *Յայնմ ժամանակի եկեալ դիպէր նմա այր մի երէց աղուան ազգաւ Բենիամէն անուն, եւ նորա հարցեալ, եւ քննեալ զբարբարոսն զբանս աղուաներէն լեզուին, առնէր ապա նշանագիրս ըստ վերնապարգեւ կորովի սովորութեան իւրում եւ յաջողութեամբ Քրիստոսի շնորհացն կարգեալ և հաստատեալ կշռէր* (Կորիւն, 116): *Այն ժամանակ եկաւ, հանդիպեց նրան մի երեց մարդ՝ ազգով աղվան, անունը՝ Բենիամին: Եվ նա հարցրեց ու քննեց աղվաններէն լեզվի բարբարոս խոսքերը, ապա վերուստ պարզեաժ իր սովորական կորովամտությամբ նշանագրեր հորինեց և Քրիստոսի շնորհքի աջողությամբ՝ կշռադարեց, կարգավորեց, հաստատեց* (ըստ Աբելյանի):

Անցյալ դերբայով կառույցները գործածվում էին ոչ միայն ստորոգում արտահայտելու համար, այլև ստորոգման արտահայտած իմաստը շեշտելու նպատակով, որի դեպքում անցյալ դերբայը կարող էր թարգմանվել անորոշ դերբայի գործիական հոլովով կամ հոմանիշ բայերի դեպքում՝ չթարգմանվել: Օրինակ՝ «*յայնմ ժամանակի եկեալ դիպէր նմա այր մի երէց աղուան*» նախադասությունը կարող ենք թարգմանել՝ «*այն ժամանակ զալով հանդիպեց նրան...*» կամ պարզապես՝ «*հանդիպեց նրան*»: Դերբայական այս կառույցները տիրապետող են գրաբարում: Նման կառույցների հետաքրքիր վերլուծություն է կատարում Թ. Շահվերդյանն իր «Դասական գրաբարի շարահյուսական ոճաբանություն» աշխատության մեջ, որտեղ այդ կառույցները հեղինակի կողմից արժևորվում են ոչ միայն իրեն շարահյուսական, այլև ոճական միավոր-

ներ²³⁸: Դրանք լեզվի պատմական զարգացման ընթացքում աստիճանաբար վերանում են:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբեղյան Մ., Երկեր Զ, Եր., 1974:
2. Աբրահամյան Ա., Բայր ժամանակակից հայերենում, Գ. I, Եր., 1962:
3. Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, Բ., Եր., 1975:
4. Առաքելեան Վ., Գրաբարի քերականություն, Եր., 2010:
5. Աւետիքեան Գ., Քերականություն հայկական նորոգ քննութեամբ, Վենետիկ, 1792:
6. Խաչատրյան Գ., Գրաբար, Եր., 2014:
7. Կարստ Յ., Կիլիկյան հայերենի պատմական քերականություն, Եր., 2002:
8. Ղազարյան Ս., Հայոց լեզվի համառոտ պատմություն, Եր., 2006:
9. Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ., Գրաբարի ձեռնարկ, Եր., 2007:
10. Մինասեան Մ., Յատկացուցիչ-յատկացեալ կապակցութիւնը գրաբարում, Երուսաղէմ, 1974, էջ 25:
11. Շահվերդյան Թ., Դասական գրաբարի շարահյուսական ոճաբանություն, Եր., 2007:
12. Պալասանեան Ս., Քերականություն մայրենի լեզուի, Տփլիս, 1894:
13. Զահուկյան Գ., Շարահյուսական ուսումնասիրություններ, Եր., 2003:

Սկզբնաղբյուրներ՝ համառոտագրություններով

1. Աստվածաշունչ Մատեան, Հայաստանի Աստուածաշնչային ընկերություն, 1997:
2. ԱԱՕԲ - Ամիրդովլաթ Ամասիացի, Օգոստ բժշկութեան, Եր., 1940:
3. Բուզանդ - Փաւստոսի Բիւզանդացոյ Պատմութիւն Հայոց, Եր., 1987:
4. Նարեկացի - Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, Եր., 1985:
5. Դուրյան - Պետրոս Դուրյան, Երկեր, Եր., 1947, 1981:
6. Եզնիկ - Եզնիկայ Վարդապետի Կողբացոյ, Եղծ աղանդոց, Եր., 1994:

²³⁸ Մանրամասն տե՛ս Թ. Շահվերդյան, նշվ. աշխ., էջ 34-54:

7. Եղիշէ - Եղիշէ Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Եր., 1989:
8. Երզնկացի - Հովհաննէս Երզնկացի, Բանք չափաւ, Եր., 1986:
9. Իսահակյան - Ավետիք Իսահակյան, Երկեր, Եր., 1987:
10. Խորենացի - Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, Եր., 1981:
11. Կորիւն - Կորիւն, Վարք Մաշտոցի, Եր., 1981:
12. ՀՀՄՔ - Հայ հին և միջնադարյան քնարերգութիւն, Եր., 1986:
13. ՀԹ - Հովհաննէս Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու 10 հատորով, հ. I, Եր., 1988:
14. ՂՓ - Ղազարայ Փարպեցոյ, Պատմութիւն Հայոց, Եր., 1982:
15. Սևակ - Պարույր Սևակ, Երկերի ժողովածու 6 հատորով, հ. IV, Պոեմներ, Եր., 1973:
16. ՎՏ - Վահան Տերյան, Սիրո երգեր, Եր., 2007:
17. ՊՍԱ - Պարույր Սևակ, Ամանեջ, Եր., 2014:
18. Քուչակ - Նահապետ Քուչակ, Հայրենի կարգաւ, Եր., 1957:
19. Օշական - Հակոբ Օշական, Երկեր, Եր., 1979:
20. Ֆրիկ - Ֆրիկ, Տաղեր, Եր., 1982:

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**ԱՆՆԱ ԱԲԱԶՅԱՆ, ՆԱԲԻՆԵ ԴԻԼԲԱՐՅԱՆ,
ԱՆԱՀԻՏ ՅՈՒԶԲԱՇՅԱՆ**

**ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**

*(դասագիրք բանասիրական ֆակուլտետների
ուսանողների համար)*

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. խմբագրումը՝ Մ. Հովհաննիսյանի

Տպագրված է «Գևորգ-Հրայր» ՍՊԸ-ում:
ք. Երևան, Գրիգոր Լուսավորչի 6

Ստորագրված է տպագրության՝ 20.06.2017:
Չափսը՝ 60x84 ¹/₁₆: Տպ. մամուլը՝ 27,75:
Տպաքանակը՝ 300:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.am